ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

(ԽՈՍՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ուսումնաօժանդակ ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1990

Գրախոս՝ բանաս. գիտ. դոկտ. պրոֆ. Բ. Վերդյան

ԵՊՀ Գրադարան

Պողոսյան, Պ. Մ.

Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները (խոսքի տեսություն)։ Ուսումնաօժանդակ ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետների համար, Գիրք I, Երևանի պետ. համալս.—Եր.։ Երևանի համալս. հրատ., 1990.—424 էջ։

Ձեռնարկի առաջին գրքում տահմանվում է խոսքն իբրև երևույթ, համառոտ ակնարկով ներկայացվում է խոսքի մասին եղած ըմբռնումների պատմությունը, քննվում են խոսքի կառուցվածքային առանձնահատկությունները, նրա դրսևորման տարատեսակությունները, լեզվի կառուցվածքային տարրերի՝ հնչյունային կազմի, բառապաշարի և քերականական համակարգի՝ խոսքի մեջ ունեցած դերի ու ոճական արժեքների հարցերը։

Պ $\frac{4602020100}{704\ (02)-90}$ 12—90

ISBN 5—8084—0108—9

ПОГОСЯН ПОГОС МИКАЕЛОВИЧ

ОСНОВЫ КУЛЬТУРЫ РЕЧИ И СТИЛИСТИКИ
(теория речи)
Книга первая
Учебно-вспомогательное пособие
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1990

© Պողոսյան Պ. Մ., 1990

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լեզվաբանական գիտությունների համակարգում ամենաերիտասարդ գիտաճյուղերից մեկը խոսքի մշակույթի հիմունքներն է, որ ոմանք կոչում են խոսքի մշակույթ, ոմանք էլ օրթոլոգիա (օրթո—հուն. ուղիղ, լոգոս—բան, խոսք)։ Այն բուհական դասավանդման պլանների մեջ է մտել մեր դարի 70-ական թվականներին՝ շուրջ մեկ տասնամյակ առաջ և կյանքի է կոչվել իբրև արդյունք ժամանակակից լեզվագիտության մեջ խոսքի նկատմամբ առաջ եկած բուռն հետաքրքրության։ Ճիշտ է՝ խոսքի նկատմամբ հետաքրքրությունը նոր երևույթ չէ, գիտական միտքը նրանով զբաղվել է դեռևս վաղ անցյալից սկսած, սակայն այն նոր բովանդակություն է ձեռք բերել հատկապես մեր դարի առաջին տասնամյակներից հետո, երբ հրապարակ եկան նորագույն լեզվաբանության ռահվիրա Ֆերդինանդ դե Սոսյուրի հանրահռչակ դասախոսությունները։ Նա լեզվի գիտությունը բաժանում է երկու բնագավառների՝ արտաքին լեզվաբանություն, որն ուսումնասիրում է լեզվի ծագման, զարգացման, մահացման արտաքին հանգամանքներն ու պայմանները, և ներքին լեզվաբանություն, որն ուսումնասիրում է լեզվի ներքին կառուցվածքը և իր առարկայի առանձնահատկությունները։ Ներքին լեզվաբանության սահմաններում Սոսյուրն առանձնացնում

է երկու հակադիր հասկացություններ՝ լեզուն (langue) և խոսքը (parole), իբրև երկհակադրություն (դիխատոմիա)։ Համապատասխան այս հակադրության նա ներքին լեզվաբանությունն էլ բաժանում է երկու մասի՝ լեզվի տեսության և խոսքի տեսության։ Բայց քանի որ անվանի լեզվաբանը դասախոսություններ կարդացել է միայն լեզվի տեսության մասին, այդ պատճառով էլ մնում է անհայտ, թե նա ինչպես է պատկերացրել լեզվի և խոսքի հակադրությունը, դրանց փոխհարաբերությունը։ Նորագույն լեզվաբանությունը հենվում է Սոսյուրի գաղափարների վրա, որոնց մեջ առանցքային տեղ է գրավում լեզվի ու խոսքի երկհակադրությունը։ Ստեղծվել է հարուստ գրականություն լեզվաբանական այս երկու հասկացությունների փոխհարաբերության մասին ինչպես՝ մեր երկրում, այնպես էլ արտասահմանում։ Գիտական հետաքրքրություն ներկայացնելուց բացի մեր ժամանակներում, երբ աշխարհի ժողովուրդների միջև օրավուր ծավալվում և ամրապնդվում են քաղաքական, գիտական, տեխնիկական ու մշակութային կապերը, երբ հասարակական կյանքում հզոր գործոն են դարձել հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլն ու գրականությունը, համաշխարհային ինֆորմացիայի ներկա պայմաններում խոսքը ձեռք է բերել բացառիկ կարևոր գործնական նշանակություն։ Ուրեմն լեզվագիտության մեջ աճող հետաքրքրությունը խոսքի նկատմամբ պայմանավորված է ոչ միայն սոսկ գիտական, այլև գործնական հրատապ խնդիրներին պատասխան տալու պահանջով։

Լեզուն բարդ հասարակական երևույթ է, և այնուամենայնիվ նրա ուսուցումը, որ նպատակ է հետապնդում հասարակության բոլոր անդամներին սովորեցնել գրական լեզվի օրինաչափությունները, միջնակարգ դպրոցում և բուհերի բանասիրական ֆակուլտետներում, առ այսօր կատարվում է գրական լեզվի հնչյունային համակարգի, բառապաշարի և քերականական կառուցվածքի քննությամբ ու վերլուծությամբ։ Ժամանակակից լեզվագիտության ըմբռնումով լեզվի կառուցվածքային այս տարրերը կազմում են լեզվի համակարգը։ Խոսքն այսպիսով դուրս է թողնվում լեզվի կառուցվածքից ու համակարգից և դիտվում իբրև լեզվի համակարգի ու կառուցվածքի անհատական իրացում։ Այս է պատճառը, որ խոսքին պատշաճ տեղ չի տրվում ո՛չ դպրոցում, ո՛չ էլ բուհերի բանասիրական ֆակուլտետներում։ Ահա նկատելի այս բացը վերացնելու խնդրին է կոչված խոսքի

մշակույթի հիմունքները, որը մեր ըմբռնումով տեսական դասընթաց է խոսքի մասին, խոսքի տեսություն: Խոսքի տեսությունը համընդհանուր կողմերով քննում է խոսքը իբրև հասարակական երևույթ, հետևաբար նրա ուսումնասիրության առարկան խոսքն է:

Ուսումնասիրելով խոսքը, այս գիտաճյուղը նպատակ ունի հաստատել գրական խոսքի ընդհանուր օրինաչափությունները և դրա միջոցով հասնել գրական լեզվի նորմավորմանը (կոդիֆիկացիա)՝ հասարակության լայն խավերի մեջ գրական խոսքի բարձր ճաշակ մշակելու համար: Ուրեմն՝ գրական խոսքի ընդհանուր օրինաչափությունների հաստատումն ու գրական լեզվի նորմավորումը հասարակության լայն խավերի մեջ գրական խոսքի բարձր ճաշակ մշակելու նպատակով խոսքի տեսության ուսումնասիրության նպատակն է:

Ուսումնասիրելով գրական խոսքը, լեզվաբանական այս գիտաճյուղը խնդիր է դնում պարզել մի կողմից՝ նրա հասարակական դերը և նշանակությունը, նրա դրսևորման առանձնահատկությունները՝ կապված հաղորդման նպատակի, իրադրության, խոսողի կամ գրողի և ունկնդրի կամ ընթերցողի փոխադարձ կապի, խոսողի կամ գրողի անհատականության, ժամանակաշրջանի գեղագիտական ըմբռնումների հետ, մյուս կողմից՝ այն փոխհարաբերությունները, որ գոյություն ունեն լեզվի և խոսքի, լեզվի տեսության և խոսքի տեսության, խոսքի տեսության և ոճագիտության, խոսքի տեսության և գրականագիտության, խոսքի տեսության և հռետորական արվեստի, խոսքի և մտածության միջև: Այս զուգահեռ երևույթների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների պարզաբանումը, ինչպես և խոսքի մեջ լեզվի նյութական միավորների ու տեխնիկական հնարավորությունների ունեցած դերերի ու արժեքների, այլև խոսքի առանձնահատկությունների, նրա արժանիքների ու թերությունների բացահայտումը խոսքի տեսության գիտաճյուղի ուսումնասիրության խնդիրներն են:

ԽՈՍՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՈՉ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոսքի տեսությունը սերտորեն առնչվում է ինչպես լեզվաբանական, այնպես էլ ոչ լեզվաբանական մի շարք գիտություն-

ների ու արվեստների և առաջին հերթին լեզվի տեսությանը, գրականագիտությանը, թարգմանության տեսությանը, հռետորական արվեստին, բարոյագիտությանը, հոգեբանությանը և տրամաբանությանը։ Իր ուսումնասիրած նյութով, այսինքն՝ ուսումնասիրության առարկայով, խոսքի տեսությունն ընդհանրություններ է հանդես բերում լեզվի տեսության հետ, որի ուսումնասիրության առարկան նախադասությունն է՝ իր բաղադրիչ տարրերով հանդերձ՝ լեզվի հնչյունային համակարգով, բառապաշարով և քերականական կառուցվածքով։ Քանի որ նախադասությունը խոսքի նվազագույն միավոր է, այդ պատճառով էլ նախադասությունն իր բաղադրիչ տարրերով դառնում է նաև խոսքի տեսության ուսումնասիրության նյութ։ Լեզվաբանական գիտությունների ուսումնասիրության նյութը լեզուն է, սակայն դրանցից յուրաքանչյուրը յուրովի է մոտենում լեզվի հարցերին՝ ունենալով երևույթների քննության ու դիտարկման իր մասնավոր եղանակները, ուսումնասիրության իր խնդիրներն ու նպատակները։ Ի տարբերություն լեզվի տեսության, որը լեզվական նյութը քննում է խոսքից անկախ, հետևաբար և ոչ թե հաղորդակցական գործառության մեջ, այլ դրանից կտրված, արհեստականորեն բաժանված, խոսքի տեսությունը լեզվական նյութն ուսումնասիրում է ձևի և բովանդակության միասնության, խոսքի կենդանի գործընթացում լեզվական տարրերի փոխադարձ կապակցության մեջ։ Ուսումնասիրությունները կատարելով նախադասության ոլորտում՝ լեզվի տեսությունը գործ է ունենում ձևի և բովանդակության մի կարգի մակարդակի հարաբերությունների հետ, խոսքի տեսությունը, լեզվական երևույթները քննելով խոսքի ոլորտում՝ գործ է ունենում ձևի և բովանդակության մի ուրիշ կարգի հարաբերությունների հետ։ Խոսքի տեսությունն ուսումնասիրում է խոսքի կառուցվածքային տարրերը և սրանց գործառության օրինաչափություններն ու առանձնահատկությունները, այդ կառուցվածքը բաղադրող նյութական ու տեխնիկական կողմերի փոխհարաբերությունները՝ կապված հաղորդման և ընկալման հակադարձ պրոցեսներում մարդու մտավոր ու հոգեկան ակտիվ-գիտակցական և պասսիվ-ենթագիտակցական գործունեության հետ։ Միևնույն լեզվական երևույթը դառնում է լեզվի տեսության և խոսքի տեսության համար քննության նյութ միանգամայն տարբեր հայեցակետերից։ Այսպես, օրինակ, բառն ու նախադասությու-

նը լեզվի տեսության տեսակետից միջոց են միտքը ճիշտ հաղորդելու համար, այդ պատճառով էլ նրան հետաքրքրում են բառերի ճիշտ կազմություններն ու նախադասության մեջ դրանց ճիշտ կապակցությունները։ Դրանով լեզվի տեսությունը հետապնդում է մի նպատակ՝ բառերի կազմության և կապակցության մեջ առավել համապատասխանություն լեզվի տվյալ փուլին հատուկ քերականական համակարգի պահանջներին։ Բառերն ու նախադասությունները խոսքի տեսությանը հետաքրքրում են ոչ միայն բառերի օրինաչափ կապակցության, ոչ միայն մտքի ճիշտ հաղորդման, այլև տվյալ մտքի արտահայտման և զանազան զգայությունների ու ապրումների հաղորդման առավել նպատակահարմար ձևերի ու եղանակների տեսակետից, հաղորդողին, ունկնդրին կամ ընթերցողին, տվյալ իրադրությանը, այլև իրականությանը համապատասխան կամ հարիր լինելու տեսակետից։ Խոսքի տեսության խնդիրն է պարզել, թե ինչպիսի զգացական-հոգեկան տպավորություններ ու ապրումներ է առաջ բերում տվյալ լեզվական հաղորդումը, թե միտքն ու զգացական-հոգեկան մտապատկերն արտահայտելու մեջ ինչ դեր ունի լեզվի յուրաքանչյուր տարր, խոսքի յուրաքանչյուր տեխնիկական հնարավորություն, թե ինչ փոխհարաբերության մեջ են գտնվում մի կողմից՝ լեզվական նյութն ու նրա տեխնիկական ձևավորումը և մյուս կողմից՝ այդ նյութով ու տեխնիկական հնարավորություններով արտահայտված միտքն ու զգացումը։ Միևնույն միտքը կարելի է արտահայտել տարբեր կառուցվածքների նախադասություններով (և՛ բարդ, և՛ պարզ, և՛ միակազմ, և՛ երկկազմ, և՛ պատմողական, և՛ հրամայական, և՛ հաստատական, և՛ ժխտական և այլն), միևնույն մտքի արտահայտման համար լեզուն ստեղծել է զուգահեռ այլ միջոցներ։ Ընդհանրապես լեզվի տեսության խնդիրը չէ զբաղվել ինչպես մտքի արտահայտման զուգահեռ ու հոմանիշ միջոցների գոյության, նախադասությունների ձևային և իմաստային կողմերի փոխհարաբերությունների, այնպես էլ նախադասությամբ արտահայտված մտքի և հույզերի ու զգայական այլ տպավորությունների փոխհարաբերության հարցերով, այնինչ դրանք խոսքի տեսության կարևոր խնդիրներից են։

Խոսքի տեսության կարևոր խնդիրներից մեկն էլ բառապաշարի և քերականական կարգերի հիմնական և երկրորդական նշանակություններով խոսքի մեջ կիրառվելու ու գործածվելու

երևույթի բացահայտումը, արժեքավորումը և գնահատումն է, մի բան, որը դարձյալ դուրս է լեզվի տեսության ուսումնասիրության ոլորտից։ Խոսքի տեսությունը քննության նյութ է դարձնում նաև լեզվական այնպիսի երևույթներ, որոնք դրսևորվում և ճանաչելի են լինում միայն ու միայն խոսքի մեջ։ Խոսքի մեջ է, որ լեզվակոն տարրերը, առնվելով կիրառության լայն ոլորտի մեջ, հանդես են բերում գործածության մեծ ակտիվություն ու իմաստային բազմերանգություն և լեզուն դարձնում արտաքին աշխարհն ու մարդու ներքինն արտացոլող ու արտապատկերող զուգահեռ և հոմանիշ միջոցների համապարփակ մի համակարգ։ Հետևաբար՝ իր առջև դրված խնդիրներով, ուսումնասիրության եղանակով ու նպատակով, ուսումնասիրության առարկայով, երևույթների ընդգրկման ոլորտներով խոսքի տեսությունը, լեզվի տեսության հետ որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ՝ նրանից որոշակիորեն տարբերվում է և լեզվաբանական գիտությունների շարքում գրավում շատ կարևոր տեղ ու դիրք։ Խոսքի տեսությունն ավելի սերտ առնչություններ ունի ոճագիտության հետ, մինչև այն աստիճան, որ այժմ խոսքի մշակույթի հիմունքներն ու ոճագիտությունը միացվել են մեկ ուսումնական առարկայի մեջ։ Իբրև առանձին լեզվաբանական դիտաճյուղ ոճագիտությունը սկսել է ձևավորվել անցյալ դարի 30-ական թվականներից, սակայն զգալի զարգացում չի ունեցել, և դեռ այսօր հատկապես չեն որոշված ո՛չ նրա ուսումնասիրության առարկան ու խնդիրները և ո՛չ էլ նրա առնչությունները լեզվաբանական այլ գիտությունների հետ։ Լեզվաբաններից ոմանք (Վ. Վ. Վինոգրադով) ոճագիտությունը բաժանում են երեք բնագավառների՝ լեզվի ոճագիտություն, խոսքի ոճագիտություն և գրականագիտական ոճագիտություն, ոմանք ոճագիտությունը համարում են սոսկ լեզվաբանական գիտություն, իսկ ոմանք էլ՝ գրականագիտական։ Ոմանք ոճագիտության հիմնական խնդիրն են համարում ինչպես գործառական, այնպես էլ իրադրական ու անհատական ոճերի ուսումնասիրությունը, ոմանք ոճագիտության խնդիրն են համարում լեզվի հոմանիշ ու համարժեք ձևերի ուսումնասիրությունը, իսկ ոմանք էլ՝ լեզվական այն միջոցների ուսումնասիրությունը, որոնցով խոսողը կամ գրողն արտահայտում է հույզեր ու զգացումներ, այսինքն՝ լեզվի հուզաարտահայտչական (աֆեկտիվ) միջոցները (Շ. Բալլի)։ Տարբեր կողմերից, տարբեր նպատակներով ու հայեցակետերով քննելով

նրա ընդհանուր և մասնավոր հարցերը և յուրովի ըմբռնելով ոճագիտության առարկան ու խնդիրները, ժամանակակից ռուս և եվրոպացի որոշ լեզվաբաններ ինքնուրույն լեզվաբանական գիտաճյուղեր են համարում ոճագիտության առանձին բաժիններն ու օժանդակ գիտելիքները՝ այսպես կոչված վերծանական ոճագիտությունը (стилистика декодирования), համադրական ոճագիտությունը (сопоставительная стилистика), գործառական ոճագիտությունը (функциональная стилистика), վիճակագրական ոճագիտությունը (статистическая стилистика) և այլն։

Ժամանակակից լեզվաբանության պատկերացումով լեզուն բաղկացած է երեք համակարգերից՝ հնչյունային, բառային և քերականական, միաժամանակ հանդիսանալով այդ համակարգերի համակարգը։ Լեզվաբանների մի մասի պատկերացումով (Սկվարցով) լեզուն ունի ոչ թե երեք, այլ չորս համակարգ՝ նախորդ երեքից բացի նաև ոճաբանականը, որը լեզվի համակարգերի ստորակարգության մեջ գրավում է ամենաբարձր դիրքը։ Ըստ այս ըմբռնման խոսքի մշակույթի հիմունքները գիտաճյուղը քննության նյութ է դարձնում լեզվական բոլոր մակարդակների, այդ թվում նաև ոճաբանականի ուսումնասիրության բնագավառները, իր խնդիրների տեսակետից, իր հայեցակետից մոտենալով քննվող երևույթներին և իրակություններին։

Ուրեմն՝ այս ըմբռնումով խոսքի մշակույթի հիմունքներն իր ոլորտի մեջ է առնում ոճագիտությունն՝ իբրև լեզվի մի մակարդակի մասին լեզվաբանական ուսմունք։

Կան լեզվաբաններ էլ (Ռ. Գալովին), որոնց պատկերացումով խոսքի մշակույթի հիմունքները գիտաճյուղը պետք է բաղկացվի խոսքի արժանիքների (հարստություն, տեղինություն, ճշտություն, տրամաբանականություն, մաքրություն և այլն) քննությամբ։ Այսպես դատելու դեպքում էլ խոսքի մշակույթի հիմունքները գիտաճյուղը դառնում է ոճագիտության բնագավառներից մեկը, քանի որ կան լեզվաբաններ, որոնք հիշյալ հարցերը քննում են ոճագիտության մեջ։ Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ նման պարագաներում, երբ դեռևս հստակորեն չեն որոշված ոճագիտության սահմանները, դժվար է խոսել խոսքի տեսության և ոճագիտության առնչությունների մասին՝ իբրև երկու ինքնուրույն լեզվաբանական գիտաճյուղեր։ Թե՛ լեզվի զուգահեռ ու հոմանիշ միջոցների ընտրությունը, թե՛ հուզաարտա-

հայտչական միջոցների քննությունը, թե՛ գործառական, իրադրական և անհատական ոճերի ուսումնասիրությունը, թե՛ խոսքի արժանիքների վերհանումն ու թերությունների բացահայտումը այն կարևոր խնդիրներից են, որոնցով զբաղվում է նաև խոսքի տեսությունը։ Այդ նշանակում է, որ պետք է խոսել ոչ թե խոսքի տեսության ու ոճագիտության առնչությունների, այլ նրանց ընդհանրությունների մասին։

Խոսքի տեսությունն ընդհանրություններ ունի նաև գրականագիտության հետ։ Գրականագիտության մի բաժինը նվիրված է գեղարվեստական խոսքի առանձնահատկություններին, որոնք վաղ անցյալում քննվում էին պոետիկայի համակարգում։ Գեղարվեստական խոսքն ընդհանրապես, այդ թվում և բանաստեղծական խոսքը, աչքի է ընկնում իր կառուցվածքի և լեզվական նյութի գործածության առանձնահատկություններով։ Այն պատկերավոր, արվեստավոր մտածողության արտահայտություն է, ի տարբերություն խոսքի մյուս տարատեսակների, որոնք բնական, սովորական, ոչ պատկերավոր մտածողության արտահայտություններ են։ Այս առանձնահատկությունն էլ պայմանավորում է գեղարվեստական խոսքի պատկերավորությունը, հուզականությունն ու արտահայտչականությունը, որոնց գրողը հասնում է բառերի և քերականական որոշակի ձևերի խստագույն ընտրությամբ, խոսքի տեխնիկական հնարավորությունների՝ փոխակերպությունների և ձևերի, նպատակամղված գործածությամբ և խոսքային այլ միջոցների դիպուկ գործադրմամբ։ Գեղարվեստական խոսքը տիպական պատկերների և կերպարների համակարգ է, որին գրողը հասնում է նախ խոսքի յուրահատուկ կառուցվածքի ու բանակարգի ընտրությամբ և այնուհետև ոճական զանազան հնարանքների առավել նպատակահարմար օգտագործումով, լեզվական յուրաքանչյուր միավոր, յուրաքանչյուր ձև խոսքի մեջ առավել մեծ ճշտությամբ իր տեղում գործածելու, դրանց առավել մեծ դիպուկություն, կշիռ ու գործունություն հաղորդելու, առավել մեծ հնչեղություն տալու միջոցով։ Այս երևույթների ուսումնասիրությունը գրականագիտության համար անժխտելի անհրաժեշտություն է, քանի որ գեղարվեստական խոսքը խոսքի արվեստ է, իսկ նրա նյութը լեզուն է՝ իր բաղադրիչ տարրերով հանդերձ։ Սակայն պետք է իմանալ, որ գեղարվեստական խոսքը խոսքի տարատեսակներից մեկն է։ Բացի դրանից, վերոհիշյալ հանգամանքներից և ոչ մե-

կը բացառապես միայն գեղարվեստական խոսքի առանձնահատկություն չէ, այդ պատճառով էլ ինչպես լեզվական միջոցների (բառերի ու քերականական ձևերի), այնպես էլ խոսքի տեխնիկական հնարավորությունների (փոխակերպությունների ու ձևերի) ընտրության և նպատակահարմար գործածության երևույթների քննությամբ զբաղվում է առաջին հերթին խոսքի տեսությունը։ Ահա այս պատճառով էլ առաջ է գալիս մի շարք երևույթների զուգահեռ ուսումնասիրության անհրաժեշտություն խոսքի տեսության և գրականագիտության մեջ։

Խոսքի տեսությունը սերտ առնչության մեջ է նաև տրամաբանության հետ։ Խոսքը մտածության լեզվական արտահայտությունն է։ Մտածությունը հիմնականում տեղի է ունենում լեզվի միջոցով և այլ բան չէ, եթե ոչ որևէ նյութի շուրջը կապակցված և կազմակերպված դատողությունների ու մտքերի ամբողջություն։ Հետևաբար խոսքի ներքին, բովանդակային կողմը այն տրամաբանականն է, որն իբրև անհատական արտացոլում արտահայտում է մեզ շրջապատող աշխարհի իրերի ու երևույթների ամենաբազմազան հարաբերությունները և դրանց մասին մեր պատկերացումները։ Խոսքի ներքին, բովանդակային կողմի և արտաքին՝ լեզվական ձևավորման միջև գոյություն ունի փոխադարձ կախվածություն։ Մտքերն ու դատողությունները պատկանում են ձևական տրամաբանության բնագավառին, որն ուսումնասիրում է հասկացությունները, դատողությունները, սրանց կազմը, հասկացություններից դատողությունների և սրանցից՝ մտահանգումների ձևավորման օրենքներն ու օրինաչափությունները։ Ձևական տրամաբանության հիմնական գիտակարգերը (կատեգորիաները) համեմատական են լեզվի կառուցվածքային այնպիսի գիտակարգերի, ինչպիսիք են բառը (որ համեմատական է հասկացությանը) և նախադասությունը (որ համեմատական է դատողությանը)։ Բառը և նախադասությունը, լինելով լեզվի գիտակարգեր, համեմատական են և ոչ ամենևին նույնական հասկացությանն ու դատողությանը։ Եվ թեև սրանք միանգամայն տարբեր բնագավառների երևույթներ են, սակայն ձևական տրամաբանության գիտակարգերը ձևավորվում են լեզվական թաղանթով, և լեզվական գիտակարգերը խարսխվում են տրամաբանական գիտակարգերի վրա, դրանցով բովանդակավորվում։ Ձևական տրամաբանությունը հարաբերակից գիտություն է քերականու-

թյանը։ Այն վեր չի բարձրանում դատողությունների ու մտահանգումների սահմանից, այնպես ինչպես քերականությունը՝ նախադասությունից և նախադասություն հանդիսացող պարբերությունից։ Սակայն ձևական տրամաբանության և լեզվի գիտակարգերի փոխհարաբերությունը խոսքի մեջ հանդես է բերում առանձնահատկություններ, որոնցով առայժմ զբաղվող որևէ գիտություն չկա։ Խոսքի մեջ տրամաբանական մեկ գիտակարգի բովանդակությունը կարող է արտահայտվել լեզվական տարբեր միջոցներով, տարբեր գիտակարգերով, և տարբեր տրամաբանական գիտակարգերի բովանդակությունները կարելի է արտահայտել լեզվական մեկ գիտակարգով։ Խոսքի մեջ է (հետևաբար և մտածության մեջ), որ առանձին դատողություններ (ուստի և նախադասություններ), կապակցվելով միմյանց, փոխազդում են միմյանց վրա, նորովի բովանդակավորվում, ստանում իրենց իմաստավորումը, դառնում միանշանակ, ճիշտ այնպես, ինչպես բառն ու հասկացությունը նախադասության և դատողության մեջ։ Սակայն ձևական տրամաբանությունը չի թափանցում մտածության բնագավառը, չի զբաղվում դատողությունների փոխհարաբերությունների հարցերով, և դա նրա խնդիրը չէ։ Միայն դիալեկտիկական տրամաբանությունն է, որ հավակնում է դրան, սակայն այն դեռևս չի դարձել ուսմունք մտածության մասին։ Միմիայն այս մակարդակին բարձրանալու դեպքում հնարավոր կլիներ խոսել խոսքի տեսության և մտածության տեսության փոխհարաբերությունների և առնչությունների մասին։

Խոսքի տեսությունն առնչվում է նաև հոգեբանությանը։

Ըստ էության թերի է այն պատկերացումը, համապատասխան որի նախադասության մեջ արտահայտվում է միտք կամ դատողություն, և համապատասխանաբար էլ՝ խոսքի մեջ բովանդակություն, հաղորդվող ինֆորմացիա։ Լեզուն կոչված է ոչ միայն արտացոլելու և արտապատկերելու օբյեկտիվ աշխարհի իրերն ու երևույթները, արտահայտելու այդ իրերի ու երևույթների հարաբերությունները, այլև արտահայտելու խոսող անհատի զանազան վերաբերմունքները աշխարհի իրերի ու երևույթների, նրանց հարաբերությունների, խոսակցի և անձամբ իր նկատմամբ, որովհետև աշխարհի բոլոր իրերը, երևույթները

և սրանց հարաբերությունները արտացոլվում, արտապատկերվում և լեզվի միջոցով արտահայտվում են՝ անցնելով խոսող կամ գրող անհատի մտավոր և հոգևոր աշխարհների պրիզմայի միջով։ Խոսքի բովանդակային կողմը միատարր չէ. այն մարդու իմացական-մտավոր ու հոգեկան գործունեությունների արգասիքն է։ Այդ պատճառով էլ խոսքի բովանդակային կողմը կազմում է ոչ միայն հաղորդվող ինֆորմացիան, այլև խոսքի նյութի և խոսակցի նկատմամբ խոսողի զանազան վերաբերմունքների արտահայտումը, խոսողի կամ գրողի հույզերը, զգացումները, հոգեկան ապրումները, կամքը և այլն։ Մտածելու պրոցեսը միշտ նոր, միշտ ինքնատիպ, միշտ ինչ-որ չափով ստեղծագործական և միշտ էլ բարդ պրոցես է։ Այն մի կողմից կապված է գիտակցության, իմացության և աշխարհըմբռնման, մյուս կողմից՝ հիշողության, դատելու կարողության, երևակայության, կամքի, ճաշակի, տվյալ իրադրության, անհատի հոգեբանական տիպի ու խառնվածքի և զանազան հոգեբանական այլ հանգամանքների հետ, որոնք էլ պայմանավորում են խոսքի տիպը, ձևն ու տեսակը, նրա որակը, անհատական ոճը և այլն։

Խոսքի տեսությունը առնչություններ ունի բոլոր այն գիտությունների հետ, որոնց համար խոսքը դառնում է քննության նյութ։ Այսպես, օրինակ, ամենևին չլինելով լեզվաբանական գիտություն, բժշկագիտությունը խոսքը քննում է իբրև գլխուղեղի կարևոր ֆունկցիաներից մեկը, բացահայտելու համար այն փոխադարձ կապը, որ գոյություն ունի մտավորի, ֆիզիոլոգիականի և ֆիզիկականի, ինչպես և խոսքի և մարդու հոգեկանի միջև։ Բժշկագիտությունն աշխատում է պարզել ոչ միայն մարդու հոգեկանի վրա խոսքի թողած ներգործության հետևանքները, խոսքի միջոցով հիպնոսացման և ուրիշի կամքի ենթարկման պատճառները, այլև գտնել այն մեխանիզմը, որով խոսքն անգրագարձորեն դառնում է հոգեկան հիվանդությունները բուժելու միջոց։

Ներքին կապ կա նաև մյուս արվեստների ու խոսքի միջև, սակայն խոսքի տեսությունը մեծ առնչություններ ունի առավելապես հռետորական արվեստի հետ, որը խոսքի արվեստ է։

Հռետորական արվեստը (ճարտասանությունը կամ պերճախոսությունը) ձևավորվել է հին Հունաստանում մեզնից շուրջ 2500 տարի առաջ։ Մինչ այդ գոյություն ուներ մի ընդհանուր

գիտություն՝ բնափիլիսոփայությունը։ Հին բնափիլիսոփայությունը զարգանալով՝ մ. թ. ա. 5-րդ դարի սկզբներում բաժանվեց ինքնուրույն գիտությունների, որոնց մեջ հասարակականները հին Հունաստանում արվեստ էին կոչվում։ Այսպիսին էին ֆեռականությունը, որ արվեստ էր նախադասության և նրա բաղադրիչների մասին, տրամաբանությունը, որ արվեստ էր դատողության և նրա կազմիչների մասին, մնեմոնիկան, որ հիշողության արվեստն էր, էրիստիկան, որ բանավեճի ավեստն էր, էվրիստիկան, որ սովորեցնում էր, թե ինչպես պետք է ճանաչված ու ճանաչելի իրերի ու երևույթների բնագավառից մտովի թռիչք կատարել դեռևս չճանաչված ու անճանաչելի երևույթների բնագավառը, էրոտետիկան, որ ճիշտ հարցեր առաջադրելու արվեստն էր, դիալեկտիկան, որ արվեստ էր հակառակորդի կարծիքների ու տեսակետների հաղթահարման մասին, հռետորիկան՝ պերճախոսության արվեստը և այլն։ Ճարտասանությունը խոսքի արվեստ էր և խոսելու արվեստ։ Նրա ուսումնասիրության նյութը խոսքն էր և խոսքը պայմանավորող մյուս հանգամանքները, իսկ նպատակը՝ գեղեցիկ, գրավիչ ու իմաստալից խոսքով ունկնդիրներին համոզելը, հուզելը և հաճույք պատճառելը, ինչպես անցյալի շատ անվանի ճարտասաններ էին կարծում (Արիստոտելի կարծիքով ճարտասանությունը գիտություն էր կարծիքի մասին)։

Հռետորիկան բարդ արվեստ էր. այն ներկայացնում էր բազմաթիվ գիտելիքների մի՛ ամբողջություն և բաղկացած էր հինգ բաժնից։

Առաջին բաժինը կոչվում է գյուտ։ Այստեղ քննվում են մտածողության պրոցեսի հետ կապված հարցեր, և առաջին հերթին՝ մտքի մեջ կարևոր գաղափարի ծագման հարցը։ Մտքի մեջ ծագած կարևոր գաղափարը, որի շուրջը պետք է հյուսվի խոսքը, գյուտն է։ Այստեղ կարևոր է երկու բան, նախ՝ ինչ արժեք ունի գյուտը, այնուհետև՝ ինչու ոմանք ընդունակ են արժեքավոր մտքեր արտահայտելու, իսկ ոմանք այդ ընդունակությունը չունեն. արդյոք այդ ընդունակությունը բնածի՞ն է, թե ձեռքբերովի։ Ամեն մի արժեք ներկայացնող խոսքի համար կարևոր գաղափարն անհրաժեշտություն է, սակայն գյուտը դեռևս խոսքի առանցքն է։ Որպեսզի այն խոսք դառնա, պետք է ընդլայնել։ Ընդլայնումը խոսքի կարևոր երևույթներից է։ Թե ով ինչպես գյուտը կընդլայնի, կախված է բազմազան հանգամանքներից՝ գիտելիքներից, գրական սովորույթից ու ավանդույթից, կենսափորձից, ճաշակից ու

շնորհքից, կրթությունից ու վարժվածության աստիճանից, տվյալ պահին խոսողի կամ գրողի շահագրգռվածությունից, տրամադրությունից ու տրամադրվածությունից, նպատակադրումից, իրազեկությունից և այլն։ Խոսքի ձևի (չափածո թե արձակ), տեսակի (գիտական, գեղարվեստական և այլն), ոճի (լուրջ, երգիծական, մտերմական և այլն), ծավալի ու կառուցվածքի ընտրությունը ևս գյուտի բաղադրիչներ են։ Սրանց ավելանում են այն գյուտերը, որոնք խոսքին տալիս են բանաստեղծականություն, հետաքրքրականություն, սրություն, դիպուկություն, փայլ և այլն։ Ինչպես տեսնում ենք, այս բաժնում քննվում են խոսքի և՛ բովանդակությանը, և՛ ձևին վերաբերվող կարևոր հարցեր։

Հռետորիկայի երկրորդ բաժինը կոչվում է տրամադրություն։ Այստեղ ևս քննվում են մտածողության պրոցեսի հետ կապված կարևոր հարցեր։ Նախ՝ ինչպես է մարդ խոսում և, այնուհետև՝ ինչն է դառնում դատողության համար աղբյուր։ Այստեղ քննության նյութ են դառնում ճարտասանական տեղերը (ներքին և արտաքին), որոնք դատողությունների աղբյուրներն են, և դատողություններն ու մտահանգումները, որոնք «ճառի» մեջ դառնում են փաստարկ որևէ բան հերքելու և որևէ բան հաստատելու համար։ Այս հարցերը սերտորեն առնչվում են տրամաբանության գիտությանը։ Այս բաժնի կարևոր խնդիրներից է սովորեցնել հակառակորդի փաստարկները հերքելու և իրենը համոզիչ դարձնելու լեզվական ու տեխնիկական միջոցները, հակառակորդին հաղթելու տակտիկան ու ստրատեգիան։ Այս հարցերն ամբողջովին կապված են էրիստիկայի և էրոտետիկայի արվեստների հետ։ Այս բաժնի խնդիրներից է խոսքի շարակարգությունը, այսինքն՝ մտքերի հաջորդական դասավորությունը խոսքի մեջ։ Նայած այն բանին, թե խոսքն ինչ բնույթ ունի, ինչ նպատակ է հետապնդում, պաշտպանական է, թե մեղադրական, գովասանական է, թե պարսավական և այլն, համապատասխան դրան էլ խոսքի շարակարգությունը կարող է փոխվել ըստ ժամանակագրության, իրերի ու դեպքերի հաջորդականության, ըստ խոսքի առարկայի կարևորության և այլն։ Ճարտասաններից ոմանք խոսքը բաժանում են երեք (նախաբան, պատում, վերջաբան), ոմանք՝ չորս, ոմանք էլ՝ հինգ, նույնիսկ վեց բաղադրիչ մասերի։

Հռետորական արվեստի երրորդ՝ ամենածավալուն և ամենակարևոր բաժինը նոխաբանությունն է։ Այստեղ քննվում են խոսքի զանազան տիպերում լեզվական նյութը գործածելու և խոսքա-

յին միջոցներից արվեստով օգտվելու հարցերը։ Այս նպատակով ուսումնասիրվում են նախ բառերի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, այնուհետև բառերի ու նախադասությունների ինքնաբանական (բուն նշանակությամբ) և փոխաբանական (ոչ սեփական նշանակությամբ) գործածությունները, ինչպես և ճարտասանական ձևերը, ցույց տրվում սրանց դերը խոսքի գեղագիտության մեջ։ Ճոխաբանության մեջ քննվում են նաև խոսքի դրսևորման շարուն և պարբերավոր եղանակները, խոսքի տիպերն ու ոճերը։ Հռետորական արվեստի այս բաժինը, որի ընդերքում էլ ծնունդ է առել ոճագիտությունը, առավել չափով է առնչվում խոսքի տեսությանը։ Հին ժամանակներից մինչև նոր ժամանակների բազմաթիվ խոշորագույն մտածողների գիտական նվաճումներն այս բնագավառում պետք է ամբողջովին և նորովի յուրացվի ժամանակակից խոսքի տեսության կողմից։

Հռետորական արվեստի չորրորդ բաժինը հիշողությունն է՝ մնեմոնիկան՝ (հուն. Մնեմոզինեի անունից, որ հին հունական աստվածների պանթեոնում համարվում էր ինն մուսաների մայրը)։ Հիշողությունը խոսքի տարր չէ, բայց նրա համար կարևոր նախապայման է։ Առանց հիշողության ոչ միայն չեն կապվի խոսքի սկիզբն ու վերջը, այլև անհնար կլինեն փաստարկումը, ապացույցը, հերքումն ու հաստատումը, որոնք խոսողի առաջ դրված էական խնդիրներից են։ Այս պատճառով էլ հռետորը պետք է տիրապետի հիշողության արվեստին, հնարավորության սահմաններում ընդլայնի իր հիշողության դիապազոնը։ Հույների ստեղծած հիշողության արվեստի հիմքում ընկած էր տեղագրական (տոպոնիմիական) սկզբունքը, որի օգնությամբ հին աշխարհի շատ մտածողներ հասան զգալի նվաճումների[1]։

Հռետորական արվեստի վերջին՝ հինգերորդ բաժինը կոչվում է արտասանություն։ Հին Հունաստանում գոյություն ուներ զար-

---

[1] Պատմությունը հիշում է հույն և հռոմեացի մի շարք նշանավոր մարդկանց անուններ (Գորգիաս, Հուլիոս Կեսար, Հուստոս Լեպիտոս, Սենեկա, Ցիցերոն և ուրիշներ), որոնք օժտված էին արտակարգ մեծ հիշողությամբ։ Այսպես, օրինակ, Սենեկան կարողանում էր Հռոմի սենատում լսած ճառերը գրի առնել տուն վերադառնալուց հետո՝ այնպես, որ ճառի տեքստի և գրի առածի միջև տարբերություն չէր լինում։ Նա կարող էր 2000 իրարից անկախ, չկապակցված բառեր լսելուց հետո կրկնել ոչ միայն նույն հաջորդականությամբ, այլև վերջից սկիզբ։

գացած թատրոն, որտեղ առաջին կարևոր գործոնը դերասանի խոսքն էր։ Այս հանգամանքը զգալիորեն նպաստեց ձայնի մասին եղած գիտության զարգացմանը, որ ստեղծել էին Պյութագորասն ու իր փիլիսոփայական դպրոցի մյուս ներկայացուցիչները։

Ձայնի ելևէջումները, տոնը, տեմբրը, արտասանության տեվողությունը և ձայնային այլ երևույթներ ոչ միայն կապված են խոսքի բովանդակության հետ, այլև արտացոլում են խոսողի հուզական աշխարհը, ունկնդրին տոգորում համանման հույզերով ու ապրումներով։ Հնչերանգի, առոգանության, տոնի, տեմբրի, դադարի և այլ հնչաարտասանական երևույթների և խոսքի բովանդակության հետ սրանց ունեցած փոխհարաբերությունների քննությունը և ուսուցումը կազմում էր արտասանության մի ենթաբաժինը, որ կոչվում էր ձայնի արտասանություն։ Մյուս ենթաբաժինը կազմում են խոսքին ուղեկցող շարժումները և դիմախաղը, որոնք պատկերավոր ձևով կոչվում էին մարմնի արտասանություն։ Մարմնի զանազան կեցվածքները, նրա առանձին մասերի ու անդամների շարժումներն ու այլևայլ դիրքերը, ինչպես և առոգանական, ձայնային երևույթները խոսքի բովանդակությանը ճիշտ զուգակցվելու դեպքում առաջ են բերում զանազան զգայական մտապատրանքներ, դառնում ունկնդրի վրա ազդելու և ներգործելու կարևոր գործոն։ Հռետորիկայի այս բաժինը, ինչպես դժվար չէ կռահել, կապված է բանավոր խոսքի հետ, ուստի այստեղ քննվող հարցերը մեծ մասամբ վերաբերում են բանավոր խոսքին։

Թե ինչու այս հինգ բաժնից է բաղկացած հռետորական արվեստը, ճարտասաններն այս հարցին պատասխանում են հետևյալ կերպ. ճառ արտասանելու համար նախ անհրաժեշտ է որևէ կարևոր միտք ունենալ և դա ընդլայնել (գյուտ), այնուհետև այդ մտքերը պետք է նպատակահարմար ձևով դասավորել՝ շարակարգել (տրամադրություն), ասելիքը հնարավորին չափ զարդարել ու գեղեցկացնել (ճոխաբանություն), ամբողջը հիշել (հիշողություն) և ապա անհրաժեշտ վարպետությամբ արտասանել (արտասանություն)։

Հռետորական արվեստի մեջ արծարծված վերոհիշյալ հարցերին անցյալի յուրաքանչյուր դարաշրջանում ճարտասանությունը տվել է ժամանակի գիտական մակարդակին համապատասխան բացատրություններ, որոնք ամբողջությամբ չէ, որ ան-

դունելի են ժամանակակից գիտության տեսակետից, սակայն փաստը մնում է փաստ, որ խոսքի տեսության բազմաթիվ հարցեր ու խնդիրներ դրվել և իրենց լուծումն են ստացել հռետորական արվեստի տեսության մեջ, ուսումնասիրության նյութ դարձել դեռևս վաղ անցյալում։

Անժխտելի են խոսքի տեսության և հռետորական արվեստի ընդհանրությունները, և պատահական չէ, որ ռուս լեզվաբաններից ոմանք (Բ. Գոլովին և ուրիշներ) խոսքի մշակույթի հիմունքները դիտում են մի աստիճան, որ լեզվի տեսության մակարդակից մեզ վեր է բարձրացնում դեպի խոսքի կատարելության մասին գիտության՝ հռետորական արվեստի մակարդակը։

ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Վերը շարադրվածից պարզ դարձավ, որ խոսքի ուսումնասիրությամբ գիտական միտքն սկսել է զբաղվել դեռևս վաղ անցյալում։ Խոսքի կառուցվածքի ու ծավալի, ձևի և բովանդակության փոխհարաբերության, հասարակական կյանքում նրա ունեցած դերի, խոսքի տեխնիկական հնարավորությունների, նրա արժանիքների ու թերությունների, ունկնդրի և ընթերցողի վրա նրա թողած զանազան տպավորությունների և այլ հարցերով առաջին անգամ զբաղվել են հին հույները, որոնք ստեղծել են ոչ միայն քերթողության արվեստը՝ պոետիկան, որ բանաստեղծական խոսքի տեսությունն է, այլև ճարտասանությունը, որն սկզբում ձևավորվեց իբրև առավել արվեստ դատաստանական խոսքի մասին, բայց հետագայում վերաճեց խոսքի մասին ուսմունքի ընդհանրապես։ Ճիշտ է՝ հին հրեաներն առաջին ժողովուրդներից մեկն էին, որ ծանոթացան վիպասանական արվեստին, և հռետորական արվեստը վաղ ժամանակներից ի վեր հայտնի է եղել Եգիպտոսում, Ասորեստանում, Բաբելոնում, Պարսկաստանում, Չինաստանում և հին աշխարհի առավել զարգացած այլ երկրներում, սակայն խոսքի արվեստի տեսական հարցերի մասին առաջին ուսմունքը մշակել են հին հույները։

Ճարտասանության ստեղծման և նրա վերելքի գործում առանձնապես նշանակալից դեր ունեցան հին Հունաստանի փիլիսոփայական երեք դպրոցներ՝ միլեթյան, պյութագորյան և էլեական (սոփեստական)։

Միլեթյան փիլիսոփայական դպրոցի խոշորագույն ներկա-

յացուցիչ Անաքսիմենը (մ. թ. ա. 588—525) գրել է «Հռետորիկա» վերնագրով գիրք, որի մեջ նա առաջին անգամ անդրադառնում է խոսքի մի շարք առանձնահատկությունների։ Ցանկացած նյութի մասին, գրում է նա, կարելի է երեք տեսակ արտահայտվել՝ կարճ, երկար կամ ընտրելով միջին ճանապարհ։ Սրանցից յուրաքանչյուրին հարմարում են համապատասխան բառեր ու կապակցություններ։ Ծավալուն խոսքին հարմար են նույն նշանակությունն ու բովանդակությունն ունեցող բառերից ու արտահայտություններից ավելի երկարները, բառերի փոխարեն նույն իմաստն արտահայտող կապակցությունները։ Կարճ արտահայտվելու համար պետք է գործածել այնպիսի բառեր, որոնք միանգամից ընդգրկեն խոսքի առարկան, ըստ որում հոմանիշ բառերի մեջ էլ պետք է ընտրվեն ամենակարճերը։ Խոսքի համառոտությանը նպաստում են անշաղկապության և կամրջակապի ճարտասանական ձևերը։ Միջին ծավալի դեպքում բառերի և արտահայտությունների ընտրության մեջ պետք է լինել չափավոր և խուսափել ինչպես բառերի փոխարեն կապակցություններ, այնպես էլ հոմանիշների մեջ կարճ բառեր ու արտահայտություններ գործածելուց։ Խոսքի այս երեք տեսակներն իրարից տարբերվում են նաև ներքին կառուցվածքով։ Ծավալուն խոսքի մեջ գործածվում են այնպիսի կառույցներ, որոնք թույլ են տալիս նույն միտքը միաժամանակ արտահայտել զուգահեռ միջոցներով ու եղանակներով։ Համառոտությունը պահանջում է, որ խոսքի մեջ չլինեն այնպիսի կառույցներ, որոնք ընդլայնման կարիք են զգում։ Միջին ծավալի դեպքում պետք է գործածվեն չափավոր կառույցներ, սակայն կարելի է դիմել նաև նախորդ երկու հակադիր տեսակների կառույցներին, բայց չափավոր համադրությամբ ու համամասնությամբ։ Ըստ Անաքսիմենի մտքերը խոսքի մեջ երկու եղանակով են շարակարգվում. մի դեպքում, որ սովորական եղանակն է, մտքերը միմյանց հաջորդում են ըստ դեպքերի ու եղելությունների բնական ընթացքի, մյուս դեպքում խախտվում է այդ հաջորդականությունը՝ առանց խաթարելու բովանդակությունը, և դրանից խոսքը դառնում է հետաքրքրական կամ առեղծվածային։ Անաքսիմենը ոճի արժանիք է համարում հասկանալիությունը և նրբագեղությունը։ Հասկանալիության համար նա առաջարկում է երկու միջոց. նախ՝ առարկաները պետք է կոչել իրենց անուններով և խուսափել երկիմաստություններից, և երկրորդ՝ ընտրել բառերի այն-

պիսի շարադասություն, որ մտքի մեջ խառնաշփոթություն առաջ չգա։ Ավելի շատ են նրբագեղության պայմանները։ Նրբագեղ խոսել, ասում է նա, նշանակում է այնպես արտահայտվել, որ նրա կեսն առանց ասելու էլ հասկանալի լինի։ Խոսքը նրբագեղ է լինում հատկապես այն ժամանակ, երբ նրա մեջ լինում են իմաստալից արտահայտություններ ու ասույթներ, երբ արտահայտության ձևերի ու եղանակների փոփոխության միջոցով խոսքը դառնում է բազմազան, և երբեք նույն միտքը կամ մոտիկ մտքերը չեն կրկնվում միևնույն բառերով։ Խոսքի նրբագեղության կարևոր պայմաններից մեկն էլ բառերը և կապակցությունները անհրաժեշտ ձևով գործածելն է։ Նա խոսքի մեջ հնարավոր է համարում բառերի և կապակցությունների գործածության հետևյալ դեպքերը.

ա. Իմաստով մոտ (այսինքն՝ հոմանիշ) բառերը կարող են անհրաժեշտության թելադրանքով դրվել իրար կողքի, բայց և կարող են ցրվել խոսքի մեջ։

բ. Նույն իմաստի համար կարելի է միշտ նույն բառին դիմել, բայց կարելի է այն արտահայտել նաև այլ բառերով։

գ. Նույն իմաստը կամ նշանակությունը կարելի է արտահայտել մեկ բառով, կարելի է արտահայտել նաև կապակցությամբ։

Անաքսիմենն առաջինն է նկատել պարբերությունն իբրև մտքի արտահայտման յուրահատուկ ձև, նշելով նրա բնորոշ և պարտադիր հատկանիշներից կարևորները՝ անդամների (կոլոն) հավասարությունը և նմանությունն ու հակադրությունը անդամների միջև։

Պյութագորասի *(571—497 մ. թ. ա.)* և պյութագորյան փիլիսոփայական դպրոցի մյուս ներկայացուցիչների համար տիեզերքում ամեն ինչի հիմքում իբրև ելակետային գաղափար ընկած է թիվը։ Թիվը նաև մարդու հոգեկանի ու բարոյականի մեկնակետային սկիզբն է։ Վերլուծելով խոսքը, պյութագորյանները նրա նվազագույն տարրը համարում էին ձայնը, որ շատ կողմերով նման է երաժշտական ձայնին, բայց և որակապես տարբերվում է նրանից։ Ինչպես երաժշտական գործիքների և մարդու երաժշտական ձայները, այնպես էլ խոսքը ներկայացնում է ձայնային միավորների զանազան զուգորդություններ, որոնց հիմքում ընկած թիվը դրանք դարձնում է չափելի ու համեմատելի։ Դրանք իրենց կազմություններում ունեն ընդհանրություններ, մասամբ այդ է պատճառը, որ մարդու հոգու վրա թող-

նում են համանման ազդեցություններ։ Պյութագորյանների նպատակն էր պարզել, թե ինչպես է ձայնը մարդու հոգու վրա թողնում այս կամ այն տպավորությունն ու մարդուն համակում ուրախ կամ տխուր զգացումներով։ Պյութագորական Պոլիկլետեսը (մ. թ. ա. 5-րդ դարի մտածող) զբաղվել է ներդաշնակության (հարմոնիա), իսկ մ. թ. ա. 4-րդ դարի մեխանիկ և մաթեմատիկոս Արքիտաս Տարենտացին՝ ձայնի ուժի, երկարության և բարձրության հարցերով։

Թե՛ միլեթյան և թե՛ պյութագորյան փիլիսոփայական դպրոցների ներկայացուցիչներն իրենց որոնումների ճանապարհին զգալի բան են արել խոսքի առանձնահատուկ երևույթներն ըմբռնելու համար, սակայն խոսքի արվեստի էական հարցերն ամբողջական քննության առարկա են դարձրել էլեական (սոփեստական) փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչները։ Սոփեստների ջանքերով է, որ ստեղծվում է հռետորական արվեստը։ Արիստոտելը Դիոգինեսի վկայությամբ ճարտասանության առաջացումը կապում է էլեական փիլիսոփա Էմպեդոկլեսի (490—430 մ. թ. ա.) անվան հետ, որից ոչինչ չի հասել նույնիսկ Արիստոտելին։ Նրանից հետո հիշվում են Կորաքսն ու Թիզիաս Սիրակուզացին։ Կորաքսն առաջին անգամ հռետորական խոսքը բաժանել է մասերի (նախաբան, շարադրություն, ապացույց կամ պայքար և եզրակացություն)։ Նա ճարտասանությունը համարել է համոզման արվեստ, որի հիմքում պարտադիր չէ, որ լինի ճշմարտությունը։ Հետևաբար, ճարտասանության մեթոդ կարող է լինել ոչ թե դիալեկտիկան, այլ սոփեստությունը։ Նույն բանն է հաստատում և Պլատոնը, որ իսկապես Կորաքսն ու Թիզիասը ապացուցման նախադրյալ առնում են ոչ թե ճշմարիտ, այլ հավանական դատողությունները։

Խոսքի մասին սոփեստների տեսակետները խարսխված են հենց իրենց՝ սոփեստների փիլիսոփայական ըմբռնումների վրա։ Սոփեստ Պրոտագորասը (481—411 մ. թ. ա.), հենվելով իր ուսուցիչ Դեմոկրիտի լավ հոգեվիճակի մասին ուսմունքի վրա, իր «Ճշմարտություն» աշխատության մեջ առաջ է քաշել այն դրույթը, որ մատերիան, հետևաբար և մարդը, ժամանակի մեջ անընդհատ փոփոխության է ենթարկվում, ըստ որում մարդը փոփոխության է ենթարկվում ոչ միայն ֆիզիկապես, այլև իր զգայություններով ու ճանաչողությամբ։ Մարդու զգայությունները փոխվում են ոչ միայն տարիքի փոփոխության համապատաս-

խան, այլև հանգամանքների (տեղի, միջավայրի, առողջական վիճակի և այլն) փոփոխության հետ։ Մարդու հոգին կարող է գտնվել իրար հակադիր երկու վիճակներում՝ լավ կամ վատ, որոնց համեմատ փոխվում են նաև մարդու կարծիքները երևույթների մասին։ Եվ քանի որ կարելի է փոխել մարդու հոգեվիճակը, համապատասխան դրան էլ կարելի է փոխել նրա ունեցած կարծիքը վատից լավի և լավից՝ վատի։ Մարդիկ լավ կարծիքն ընդունում են իբրև ճշմարտություն, իսկ վատ կարծիքը՝ իբրև կեղծիք կամ սուտ։ Նշանակում է՝ ճշմարտությունը հարաբերական հասկացություն է և կախված է մարդու սուբյեկտիվ ըմբռնումից, հետևաբար և կեղծ կամ սխալ և ճշմարիտ համարված ըմբռնումների միջև չկա անանցանելի անջրպետ. ցանկացած դրույթը կարելի է հաստատել, կարելի է և մերժել։ Սոփեստների կարծիքով չկա օբյեկտիվ ճշմարտություն, այլ կան միայն սուբյեկտիվ կարծիքներ նրա մասին։ Եթե կարծիքը «թույլ» է, ապա այն կարելի է ուժեղացնել դիալեկտիկայի և հռետորիկայի օգնությամբ. տրամաբանությունն ու լեզուն ունեն դրա համար զգալի թվով միջոցներ, որոնց գործադրությամբ էլ կարելի է հասնել ցանկացած նպատակին։ Սոփեստներն ունեին այն պատկերացումը, որ գոյություն ունեն բովանդակությունից անկախ ճարտասանական միջոցներ, որոնք օժտված են ինքնուրույն, ինքնաբավ արժեքներով։ Ահա այս ըմբռնումներով էլ նրանք սկսեցին ուսումնասիրել խոսքը բաղադրող տարրերը, աշխատելով բացահայտել դրանցից յուրաքանչյուրի դերն ու արժեքը խոսքի մեջ։

Գորգիաս Լևոնացին (մ. թ. ա. 488—379), որը սոփեստական դպրոցի ամենակարկառուն դեմքն էր և ստրկատիրական դեմոկրատիայի ներկայացուցիչ, Պլատոնի վկայությամբ գրել է ճարտասանության ձեռնարկ, սակայն այն մեզ չի հասել։ Ուրիշ մտածողների վկայություններից հայտնի է, որ նա խոսքի ուսումնասիրության բնագավառում հասել է անհերքելի նվաճումների։ Նա հնչյունների կրկնության միջոցով առաջացող համահնչյունության և ներդաշնակության (առձայնույթ և բաղաձայնույթ) երևույթների առաջին բացահայտողն է։ Նրան է պատկանում խոսքի տեխնիկական հնարավորությունների՝ փոխակերպությունների (տրոպ) և ձևերի (ֆիգուրա) գյուտը, երևույթներ, որոնք խոսքի մասին ամեն մի գիտության ու արվեստի համար հիմնադրույթ հասկացություններ են։ Զարգացնելով Անաքսիմենի ուսմունքը պարբերույթի կառուցվածքի մասին, նա տվել է

անդամների (կոլոն) հակադրության, համամասնության (պարիսոս), հավասարության (իսոկոլ) ու պարիզների (անդամների հավասարություն, որ առաջ է գալիս մի անդամում վանկերի քանակի, իսկ մյուսում՝ վանկերի երկարության գումարով) երևույթների էության առաջին բացատրությունը։ Գորգիասն է առաջին անգամ բացահայտել բառային կրկնությունների դերը, կիրառել շրջասությունը, իր ճառերում գործածել բառերի անսովոր կապակցություններ։ Ցիցերոնի վկայությամբ պարբերավոր խոսքի մեջ կշռույթի դերի գնահատումը ևս գալիս է Գորգիասից, որ հետագայում մշակում ու զարգացնում են Թրասիմաքոսն ու Իսոկրատեսը։ Գորգիասի փիլիսոփայական դպրոցում է մշակվում ու ձևավորվում դիալեկտիկային ու էվրիստիկային բավական մոտ մի արվեստ՝ էրոտետիկան, որի օգնությամբ նորավարժը արագորեն տիրապետում էր բանավեճի արվեստին։ Պատկերացում տալու համար, թե ինչ դեր է ունեցել Գորգիասի փիլիսոփայական դպրոցը հռետորական արվեստի զարգացման գործում, բավական է ասել, որ հին Հունաստանի ամենամեծ հռետորները, որ կոչվել են «տասը ատտիկյաններ» (Անտիփոն, Անտոկեդես, Լիսիաս, Իսոկրատես, Իսեոս, Էսքինես, Լիկուրգոս, Դեմոսթենես, Հիպերիդես և Դինարքոս), Գորգիասի աշակերտները կամ նրա աշակերտների աշակերտներն էին, իսկ ինքը՝ Գորգիասը, որ բազմաթիվ անգամ օլիմպիադաների ժամանակ ճարտասանական մրցություններում հաղթանակ է շահել, մահից հետո արժանացել է ամենամեծ փառքին. նրա ոսկե արձանը դրվել է Դելփոսի Ապոլլոնի տաճարում. Ցիցերոնի վկայությամբ հին Հունաստանում ուրիշ ոչ ոք մահից հետո ոսկե արձանի չի արժանացել։

Սոփեստական դպրոցի ներկայացուցիչ Պրոտագորասը (մ. թ. ա. 481—411) բացահայտեց եղանակավորությունը և համապատասխան դրան էլ խոսքը դասակարգեց ըստ արտահայտման չորս եղանակի՝ հարց, պատասխան, խնդրանք և հրաման։ Թեև մտահանգման երևույթներով զբաղվել էր նաև Գորգիասը, սակայն ինչպես ընդհանուր տեղերի, այնպես էլ մտահանգման օրինաչափությունների բացահայտումը պատկանում է Պրոտագորասին, որն այս երևույթների քննությունը, Ցիցերոնի վկայությամբ, կատարել է իր «Վիճելու արվեստը» գրքում և «Բանավեճ» երկհատորանոց աշխատության մեջ, հիմք դնելով մի կողմից՝ էրիստիկային, մյուս կողմից՝ տրամաբանությանը, որն իր

հետագա զարգացումը գտավ Զենոնի ուսումնասիրություններում։ Մ. թ. ա. 5-րդ դարի մտածող Պրոդիկոսը բացահայտեց լեզվական միջոցների հոմանշության երևույթը և տվեց խոսքի կառուցվածքում նրա ունեցած դերի ճիշտ գնահատությունը։ Պրոդիկոսը և Հիպպիասը զբաղվել են մարդու զգայությունների վրա լեզվական տարբեր միջոցների թողած ազդեցությունների հարցերով։ Սոփեստ Թրասիմաքոսը (մ. թ. ա. 5-րդ դար), Արիստոտելի վկայությամբ, գրել է ուսումնասիրություններ՝ նվիրված ճարտասանության շատ հարցերի, որոնց մեջ առավել արժեքավոր են «Հռետորական արվեստ» և «Հռետորական միջոցներ» աշխատությունները։ Այս աշխատություններում նա մշակել է խոսքի կշռույթի (ռիթմ) տեսությունը, իսկ «Կարեկցություն հայցելու մասին» տրակտատում՝ առաջին անգամ խոսում է այն կապի մասին, որ գոյություն ունի մի կողմից զանազան զգայությունների ու կրքերի (վախ, բարկություն, ատելություն, սեր, կարեկցանք և այլն) և մյուս կողմից՝ խոսքի ինչպես արտաքին արտահայտության, այնպես էլ ներքին ձևավորման ու կառուցվածքի միջև։ Զայնային այս կամ այն միջոցների գործածությունը կախված է խոսողի հոգեկան վիճակից և խոսքի բնույթից։ Վախեցած մարդը մի ձևով է արտահայտվում, բարկացածն՝ այլ, խնդրողը՝ մի ձևով, վշտացածը՝ մի ուրիշ և այլն։ Սրանից նա այն ճիշտ եզրակացությանն է հանգում, որ ունկնդրի մեջ անհրաժեշտ հոգեկան ապրում առաջ բերելու համար պետք է դիմել լեզվական համապատասխան միջոցների։ Սրան զուգահեռ Թրասիմաքոսը հետաքրքրվում է հոգեբանական այնպիսի հարցերով, թե ինչն է ընդհանրապես հուզում մարդուն, ինչպես կարելի է զայրացնել, տխրեցնել, ուրախացնել, խղճահարությամբ, կարեկցությամբ համակել և այլն։ Այլ կերպ ասած՝ Թրասիմաքոսին են պատկանում խոսքի հոգեբանական հիմունքների մասին առաջին գաղափարները։

Մ. թ. ա. 5-րդ դարի վերջի և 4-րդ դարի սկզբի նշանավոր հռետոր և լոգոգրաֆ (ուրիշների պատվերով ճառ հորինող) Լիսիասը բացահայտեց համապատասխանության երևույթը, համաձայն որի համապատասխանություն պետք է լինի խոսքի ձևի, արտաքինի, բովանդակության և խոսողի սոցիալական դիրքի ու վիճակի և անձնական ու սոցիալական հոգեբանության միջև։ Նա անում է դիտողություն այն մասին, որ միևնույն խոսքում լեզվական միավորներն ու արտահայտման ձևերը չպետք է նը-

կատելի չափով մոտ-մոտ գործածվեն, քանի որ այդ լսելիքի վրա տհաճ տպավորություն է թողնում։ Լիսիասն առաջինն է, որ խոսում է խոսքի հաճելիության համար հնգանքի ունեցած դերի մասին։ Գործ ունենալով գրավոր խոսքի հետ, նա նկատում է բանավոր և գրավոր արտահայտաձևերի տարբերություններ և առաջարկում է գրավոր խոսքին աշխուժություն, կենդանություն և բնականություն տալու համար դիմել բանավոր խոսքի համապատասխան տարրերին։

Սոփեստ Իսոկրատեսը (մ. թ. ա. 436—338) զարգացրել է Գորգիասի և Թրասիմաքոսի ուսմունքը պարբերության մասին՝ ուշադրություն դարձնելով նրա կառուցվածքային ու հնչերանգային առանձնահատկությունների վրա։ Նա այն տեսակետին էր, որ պարբերություններ պետք է գործածվեն ոչ միայն գրավոր, այլև բանավոր խոսքում։ Նա էր, որ առաջին անգամ իր պանեգիրիկներում (գովասանական ճառեր) առաջին անգամ դիմեց լիրիկական շեղումների հնարանքին՝ իբրև խոսքը հետաքրքրական դարձնելու միջոց։ Իր պատրաստած ճառերում նա գործնականորեն առաջին անգամ սկսում է կիրառել նաև ճարտասանական տեղերն՝ իբրև ապացուցման նախադրյալներ։ Իսոկրատեսն ուշագրավ դիտողություններ ունի գյուտի մասին։ Նա գտնում էր, որ կարևորը սեփական գյուտ ունենալը չէ, այլ գյուտը ամենալավ ձևով ընդլայնելն ու գեղեցիկ արտահայտվելը։ Միևնույն բանի մասին, գրում է նա, կարելի է արտահայտվել ամենաբազմազան եղանակներով. մեծն ու վեհը կարելի է դարձնել անարժեք ու չնչին, հինը ներկայացնել իբրև նոր, իսկ նորը այնպես, որ թվա թե վաղուց է հայտնի և այլն։ Ուրեմն՝ կարևորը արտահայտման այնպիսի ձև գտնելն է, որ խոսքին տա նորության պատրանք, և խոսքը հնչի թարմ ու ինքնատիպ։ Ուշագրավ են Իսոկրատեսի դիտողություններն արձակ խոսքի կշռույթի մասին։ Արձակ խոսքը Իսոկրատեսի կարծիքով չպետք է կշռույթից զուրկ լինի, բայց և այն չպետք է չափական ոտքերով կազմված լինի։ Կշռույթից զուրկ լինելու դեպքում խոսքը չոր կլինի, իսկ չափական ոտքերով կազմված լինելու դեպքում այն կվերածվի ոտանավորի. երկու դեպքում էլ այսպիսի արձակը կունենա թերություններ։ Իսոկրատեսը կարևոր դիտողություն ունի նաև բառերի փոխաբերաբար գործածությունների մասին. փոխաբերությունը գեղեցիկ կարող է լինել այն դեպքում, երբ փոխաբերաբար գործածված բառերն այնպիսին են, որ ոչ ամենագործա-

ծականներն են, ոչ ամենագեղեցիկները, ոչ էլ ծանրակշիռները։

Սոփեստական դպրոցի փիլիսոփա Իսեոսը (մ. թ. ա. 4-րդ դարի առաջին կես) մեծ ներդրում ունի հռետորական արվեստի տերմինաբանության մշակման մեջ։ Հունահռոմեական ճարտասանությունը ժառանգել է նրա տերմինները՝ համապատասխան սահմանումներով։

Խոսքի տեսության զարգացմանն իրենց նպաստն են բերել նաև գործնական հռետորները՝ Դեմոսթենեսը, Էսքինեսը, Հիպերիդեսը, Լիկուրգոսը և ուրիշներ, որոնց ճառերն աչքի էին ընկնում ճոխ ու փարթամ ոճով, իմաստալից արտահայտություններով, սրամտությամբ ու հնարագիտությամբ, ժողովրդական իմաստությունների և նշանավոր պոետների ու իմաստունների մտքերի ու ասույթների օգտագործումով, խոսքի ինքնատիպ կառուցվածքով ու հորինվածքով։

Քանի որ սոփեստները խոսքն ուսումնասիրում էին գործնական խնդիրների պատասխան տալու նպատակով ու պահանջով, խոսքի տեսության մշակման մեջ հասան զգալի նվաճումների։ Նրանք առավել խոսքի մեջ որոնում էին այն միջոցներն ու տարրերը, որոնցով հնարավոր լիներ հասնել ունկնդրի վրա ցանկալի ներգործության։ Հատկապես կրտսեր սերնդի սոփեստները սկսում են ավելի շատ տեղ տալ լեզվական այն միջոցներին, որոնք կոչված են ծառայելու հույզեր ու կրքեր առաջ բերելու խնդրին՝ ոչ էական համարելով բովանդակությունը։ Խոսքի տեխնիկական հնարավորությունների և լեզվական նյութի նպատակահարմար գործածությամբ ունկնկդրի վրա ներգործելը և այդ եղանակով նրա համակրանքը շահելը աստիճանաբար դառնում է սոփեստների հիմնական նպատակը. նրանց համար առավել կարևոր է դառնում ոչ այնքան ինքը՝ ճշմարտությունը, ճշմարտության բացահայտումը, որքան որ ճշմարիտ համարվելին, ընդունելի ճշմարտանմանը։ Այսպես ահա սկսում է կարևոր դառնալ ոչ այնքան այն, թե ինչ պետք է ասվեր, որքան որ այն, թե ինչպես պետք է ասվեր։

Սոփեստների այս միակողմանիությունը քննադատության ենթարկվեց նրանց քաղաքական հակառակորդների՝ Սոկրատեսի ու Պլատոնի և այնուհետև Արիստոտելի փիլիսոփայական դպրոցների ներկայացուցիչների (ակադեմիականների և պերիպատիկյանների) կողմից։ Պլատոնը (մ. թ. ա. 427—347) «Ֆեդրոս» տրամախոսության մեջ սոփեստներին քննադատում է այն պատ-

ճառով, որ նրանք նպատակ են հետապնդում ոչ թե բացահայտելու ճշմարտությունը, բարին ու գեղեցիկը, այլ ձգտում են ներևալու ճշմարտացի, բարի ու գեղեցիկ։ Պլատոնը խոսքի գեղեցկությունն անբաժան է համարում գեղեցկի գաղափարից ընդհանրապես։ «Խնջույք» տրամախոսության մեջ նա զարգացնում է այն տեսակետը, որ գեղեցկի ըմբռնման մեջ կա աստիճանականություն. կա մասնավոր, անհատ գեղեցիկ իր կամ առարկա, բայց կա մասնավոր իրերից ու երևույթներից վեր, նրանցից անկախ գեղեցկության իդեալ։ Մարդկային մտածողությանը հատուկ է ճանաչողության աստիճանականություն, որը տանում է այդ մասնավորից դեպի իդեալական գեղեցկության կամ գեղեցկի իդեալի ճանաչումը։ Այս ճանաչողական աստիճանականությունը՝ գեղեցկի իդեալի որոնման ճանապարհին լիովին վերաբերում է նաև խոսքի գեղեցկությանը։ Գեղեցկի իդեալը Պլատոնի կարծիքով անփոփոխ է, հավերժական բոլոր ժամանակների համար, այնինչ մասնավոր գեղեցիկը փոփոխական է, անցողիկ։ Ունենալով գեղեցկի իդեալն իր հոգում, յուրաքանչյուրը ձգտում է մասնավոր գեղեցկի պատկերացումից բարձրանալ դեպի իդեալի մակարդակը։ Այսպես է բանը բոլոր արվեստներում, այսպես է և խոսքի արվեստում։ Գեղեցիկ խոսքն ըստ Պլատոնի պետք է նման լինի կենդանի արարածի, և նրա բոլոր մասերը պետք է լինեն միմյանց համապատասխան, ենթարկված ամբողջին։ Պլատոնին է պատկանում ոճի համապատասխանության գաղափարը, ըստ որում ոճը համապատասխան է լինում այն դեպքում, երբ արտահայտված բովանդակությունն ու զբաղմունքը համապատասխան են լինում առարկային կամ երևույթին, երբ կարևոր բաների մասին չի խոսվում թեթևակիորեն, և երբ ցածր ու հասարակ հասկացությունները չեն զարդարվում գեղեցիկ մակդիրներով։ Ոճի համապատասխանությունը խախտվելու դեպքում կարող է առաջ գալ երգիծանք կամ հեգնանք։ Խոսքի տեսության պատմության մեջ Պլատոնն առաջին անգամ աշխատում է տալ կոմիկականի, հեգնականի և ծիծաղելիի գիտական բացատրությունը։ «Ֆիլեբ» և «Խնջույք» տրամախոսություններում և «Օրենքներ» աշխատության մեջ առաջին անգամ գիտական բացատրություն է ստանում կշռույթը (ռիթմը), որը Պլատոնը համարում է ներդաշնակության (հարմոնիա) բաղադրիչ տարր, որը առաջանում է և չափվում մատերիայի պարբերական շարժումով։ Կշռույթը և ներդաշնակությու-

նը ոչ միայն անհրաժեշտություն են խոսքի համար, այլև այնպիսի բաներ, որոնց կարիքն զգում է մարդ իր ամբողջ կյանքում։ Կշռությամբ ու ներդաշնակությամբ է որոշվում խոսքի շատ կարևոր մի արժանիքը՝ դուրեկանությունը, որը բոլոր մուսաների ընդհանուր հատկությունն է կազմում։

Պլատոնի աշակերտ Արիստոտելը (մ. թ. ա. 384—322) խոսքի արվեստի հարցերին անդրադարձել է իր մի քանի աշխատություններում, բայց առավել «Պոետիկայում» և «Հռետորիկայում»։ Խոսքի տրամաբանական նախադրյալներին նա անդրադառնում է իր «Տրամաբանություն» և «Սոփեստական հերքումներ» աշխատություններում։ Ճշմարտության ու կեղծիքի առաջացման պատճառները նա տեսնում է դատողությունների բնույթի մեջ, ըստ որում ճշմարտություն կամ կեղծիք կարող են լինել այնտեղ, որտեղ կան հասկացությունների կապ ու բաժանում, հասկացությունների հաստատում ու ժխտում։ Մտահանգումների չորս տեսակներից՝ ապացուցական (ապոդիկտիկ), դիալեկտիկական (էպիքերեմա), սոփեստական (էրիստիկական) և ապորեմա (դիալեկտիկական մտահանգում հակասության հիման վրա), սոփեստականը նա համարում է կեղծ մտահանգում, որովհետև այն հանվում է այնպիսի նախադրյալներից, որոնք թեև բոլորի կողմից թվում են հավանական, ընդունելի, սակայն այդպիսին չեն։ Սակայն կեղծ մտահանգման պատճառ կարող է դառնալ նաև բառը։ Քանի որ առարկաների և հասկացությունների համար գործածում ենք «անուններ և նշաններ, ապա մենք սկսում ենք մտածել, որ այն, ինչ վերաբերում է անուններին, արդարացիորեն վերաբերում է իրերին», սակայն այնպես ինչպես տարբեր են առարկան և առարկա նշանակող բառը կամ արտահայտությունը, նույն ձևով էլ «իմացության առարկան և ինքը իմացությունը տարբեր են կարծիքի առարկայից և կարծիքից»։ Եթե Պլատոնը հռետորիկան համարում էր կարծիքի գիտություն, սահմանազատման գիծ էր դնում կարծիքի և գիտության միջև՝ իրև անհաշտելի գիտակարգեր (կատեգորիաներ), ապա Արիստոտելը զգացմունքի ու կարծիքի՝ մի կողմից, և իմացության ու գիտության միջև՝ մյուս կողմից, տեսնում էր համատեղելիություն՝ զգացմունքն ու կարծիքը դիտելով իբրև մի աստիճան, որ տանում է չիմացությունից դեպի իմացություն և գիտություն։

Արիստոտելը խոսքի մի շարք երևույթներ քննում է իր «Պոե-

տիկա» աշխատության մեջ, սակայն այստեղ առավելապես քննված են բանաստեղծական խոսքի առանձնահատուկ կողմերը (հատկապես հիշյալ աշխատության 19—22 գլուխներում)։ Այստեղ Արիստոտելին զբաղեցնում է մտածելակերպը, որը պատճառ է դառնում արտահայտության տարբեր եղանակների գոյության։ Խոսքի բանաստեղծականության կարևոր միջոցներից են հնաբանությունները, փոխաբերություններն ու մակդիրները, որոնք պոեզիայի գեղեցկություններից են և խոսքը դարձնում են ազնիվ, նրան տալիս վեհություն։ Իր «Հռետորիկա» աշխատության մեջ նա քննում է ոճի բազմաթիվ հարցեր։ Արիստոտելը ոճը համարում է մի բան, որն անխուսափելի է յուրաքանչյուր բանավոր թե գրավոր խոսքի համար, որովհետև անհնար է, որ խոսողը կամ գրողը չդիմի լեզվական այս կամ այն միջոցին, ինչ-որ ձևով չհամապատասխանեցնի ասելիքի բովանդակությունը ձևին։ Սակայն այլ բան է բնական ոճը, և այլ բան նպատակադրված ընտրությունը, որն առաջ է բերում անհատական հեղինակային ոճերը։ Տարբերելով չափածոյի, արձակի, առօրյա խոսքի և հռետորական ճառերի ոճերը միմյանցից, Արիստոտելը հանգում է գործառական (ֆունկցիոնալ) ոճերի գաղափարին, ոճի հիմքում տեսնելով երկու՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ։ Լեզվի նյութական և խոսքի տեխնիկական հնարավորությունների գործածությունը պայմանավորված է մի կողմից անհատի ճաշակով, նախասիրություններով ու կարողություններով, իսկ մյուս կողմից՝ խոսքի իրադրությամբ, տվյալ ժամանակաշրջանի ըմբռնումներով ու գրական ավանդույթներով։ Սրանով հանդերձ Արիստոտելն առաջին անգամ դնում է ոճի պատմական լինելու խնդիրը. լեզվական զանազան միջոցների ընտրությունը պայմանավորված է նաև ժամանակաշրջանի ավանդույթներով։ Զարգացնելով հնչերանգության մասին Թրասիմաքոսի միտքը, Արիստոտելը, սակայն, անում է դիտողություն այն մասին, որ հնչերանգությունը խոսքի բոլոր տիպերի համար հավասար արժեք ներկայացնել չի կարող։ Եթե այն կարևոր դեր ունի, օրինակ, ճառերում կամ գեղարվեստական ընթերցանության մեջ, ապա նույն դերը չի կարող ունենալ գիտություններ ուսուցանելիս։ Ոչ միայն հնչերանգով, այլև լեզվական նյութով և հորինվածքով (կոմպոզիցիա) միմյանցից տարբերվում են բանավոր և գրավոր խոսքերը. բացի այդ, եթե գրավոր խոսքը ձգտում է ճշմար-

տության, ապա բանավոր խոսքը, հատկապես բանավեճը, աչքի է ընկնում դրամատիկությամբ։

Արիստոտելն իր այս աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձնում հռետորական խոսքի առանձնահատուկ կողմերի վրա։ Նախ նա իր նախորդների նման խոսքը բաժանում է երկու արտահայտաձևերի՝ պարբերավորի և ոչ պարբերավորի, որը նա կոչում է շարուն։ Արիստոտելը զարգացնում է պարբերույթի մասին ուսմունքը, որը դժբախտաբար ճիշտ չեն ըմբռնում հետագա ժամանակների շատ մտածողներ։ Նա նշում է պարբերույթի երկու տեսակ՝ պարզ և բազմանդամ։ Պարզ է միանդամ պարբերույթը, որը ճանաչելի է միայն խոսքի մեջ՝ բանահյուսվածքում (կոնտեքստ)։ Բազմանդամ պարբերույթն իր հերթին նա բաժանում է երկու ենթատեսակի՝ բաժանական և հակադրական։

Թեև Արիստոտելն ընդունում է խոսքի միայն մեկ արժանիք՝ հասկանալիությունը կամ պարզությունը, սակայն նա արժեքավոր դիտողություններ է անում խոսքի այնպիսի արժանիքների մասին, ինչպիսիք են խոսքի համառոտությունը, առարկայականությունը, նրբագեղությունը, չափավորությունը, համապատասխանությունը և այլն, ցույց տալիս լեզվական այն միջոցները, որոնց օգնությամբ կարելի է խոսքն այս կամ այն առումով դարձնել կատարյալ։ Արիստոտելին զբաղեցրել է նաև բանավոր խոսքն իր տարատեսակություններով։ Իբրև բանավոր խոսքի տեսակ հռետորական խոսքը պետք է տարբերվի առօրյա խոսակցականից ոչ միայն իր կառուցվածքով, այլև լեզվական նյութով։ Հռետորական խոսքը, ի տարբերություն առօրյա խոսակցականի, պետք է փայլի անսովոր արտահայտություններով, նորաստեղծ և օտար բառերով, որոնք պետք է գործածվեն չափավոր ձևով և ճաշակով։ Ըստ էության Արիստոտելն է առաջին անգամ դնում մայրենի խոսքում օտար բառերի ըստ պատշաճավորության գործածության անհրաժեշտության և թույլատրելիության հարց։ Նա է նաև առաջին հեղինակը, որը քննության է առել հռետորական արվեստի՝ մյուս արվեստների ու գիտությունների շարքում գրված տեղի հարցը։

Արիստոտելի «Հռետորիկան» ուներ խիստ գիտական շարադրանք և առավել վերլուծական քան ուսուցողական բնույթ ուներ. այն ավելի շուտ ուսուցանում էր խոսքը վերլուծել, քան սովորել խոսել ու գրել պահանջված ձևով։ Այս է պատճառը, որ

ոչ մի ժամանակ՝ ո՛չ իր օրերում և ո՛չ էլ հետագայում, այս աշխատությունը ձեռնարկ չդարձավ։

Արիստոտելի աշակերտ Թեոֆրաստոսը (մ. թ. ա. 4-րդ դարի երկրորդ կես—3-րդ դարի առաջին կես) խոսքի չորս արժանիք է ընդունում՝ մաքրություն, հասկանալիություն, տեղինություն կամ համապատասխանություն և զարդարունություն, ըստ որում առանց մաքրության (եթե մաքուր հունարեն չէ,—Պ. Պ.) խոսքը դառնում է «բարբարոսական», առանց հասկանալիության՝ մութ, առանց տեղինության՝ անճաշակ և առանց զարդարունության՝ մերկ։ Սրանից պետք է եզրակացնել, որ Թեոֆրաստոսը խոսքի չորս տեսակ թերություն է ընդունում։ Հետևելով իր ուսուցչին, Թեոֆրաստոսը տալիս է գիտական բացատրություն այն հարցին, թե ինչպես են առաջանում փոխաբերությունները լեզվում։ Նա փոխաբերությունների ծագման հիմքում դնում է ոչ թե հին ժամանակների մարդկանց իբրև թե պատկերավոր մտածողություն ունենալը, այլ այն, որ հասկացություններն ավելի շատ են, քան բառերը, որի պատճառով էլ բառերի մի մասն ստանձնում է լրացուցիչ գաղափարներ արտահայտելու պաշտոնը, որով և առաջ է գալիս փոխաբերություն, ինչպես և պատկեր՝ խոսքի մեջ։ Այլ հեղինակների վկայությամբ իր «Ոճի մասին» աշխատության մեջ, որը մեզ չի հասել, նա քննության է ենթարկել այսպես կոչված կապակցությունները (հնչյունների հանդիպադրումները կից բառերից նախորդի վերջում և հաջորդի սկզբում, արտասանական հատվածների սկիզբներն ու վերջերը, կառուցիկ խոսքի մեջ բառերի դասավորություններն ըստ թվի, այսինքն՝ ըստ վանկերի երկարության կամ ըստ վանկերի քանակի)։ Իր «Բառերի մասին» աշխատության մեջ Թեոֆրաստոսը գաղափար է տալիս խոսքի տիպերի մասին, ընդունելով վերամբարձ, միջին և հասարակ ոճեր։

Ստոկատիրական կարգերի քայքայման ժամանակաշրջանում ոճի հարցերով զբաղվել են նաև ստոիկյան փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչները, որոնք առավել ուշադրություն դարձրին խոսքի տրամաբանական կառուցվածքի և արտասանական տեխնիկայի հարցերին։ Հատկապես կրտսեր սերնդի ստոիկները գերագնահատում էին արտասանական տեխնիկայի դերը՝ խոսքի արժանիքը չափելով լսողության վրա նրա թողած տպավորության աստիճանով։ Սրանց հակառակ էպիկուրյանները, ժխտելով ձայնահնչական գործոնի դերը, առաջ քաշեցին խոսքի

տրամաբանական կողմի գնահատման անհրաժեշտության հարցը։

Ստոկատիրական դեմոկրատիայի անկումը և Ալեքսանդր Մակեդոնացու միապետության հաստատման հետևանքով Հունաստանի քաղաքական պայմանների փոփոխությունը խզում առաջացրին ճարտասանության տեսության և պրակտիկայի միջև. ճարտասանության հարցերով առավել սկսեցին զբաղվել քերականները։ Մ. թ. ա. երկրորդ դարի պերգամյան քերականական դպրոցի ներկայացուցիչները, որոնք գտնվում էին ստոիկյան փիլիսոփայական դպրոցի ազդեցության տակ, զբաղվելով գրական տեքստերի ուսումնասիրությամբ, տարբերակեցին խոսքի փարթամ, միջակ և աղքատ ոճերը. սրանց հետագայում պերիպատիկյան Դեմետրիոսն ավելացրեց ծաղկուն և հզոր ոճերի ըմբռնումը։ Պերգամի նշանավոր հռետոր Ապոլլոդորոսը զբաղվել է այն հարցով, թե ինչ դեր ունեն ոգևորությունն ու հափշտակվածությունը գեղարվեստական ստեղծագործության և հռետորական խոսքի մեջ։ Հելլենիզմի շրջանում խոսքի տեսության հարցերով զբաղվել են հույները ոչ միայն բուն Հունաստանում, այլև Պերգամից բացի Փոքր Ասիայի այլ քաղաքներում և Հռոմում ու Սիցիլիայում։ Այս ժամանակներում են ձևավորվում ատտիկյան, ասիական և հռոդոսյան ոճերի կողմնակցությունները։ Եթե ատտիկյանները մերժում էին արտաքին զարդերի ու պաճուճանքների առաջնային դերը և առաջնությունը տալիս խոսքի բովանդակությանը, ճշտությանը և ուժին (ատտիկյաններին էին հարում նաև կլասիցիստները, որոնք ապրում էին Հռոմում), սրանց հակառակ ասիականները կարևորություն էին տալիս խոսքի կշռույթին, բարեհնչյունությանը և փոխակերպություններով ու ձևերով խոսքը զարդարելուն, ապա հռոդոսյան ոճի ներկայացուցիչները ձգտում էին չափավոր կերպով զուգակցել ատտիկյան ուղղության տրամաբանականությունը ասիական ուղղության պաթետիկության, գեղեցկազարդության ու արհեստականության հետ։

Հետագայում խոսքի առանձնահատուկ կողմերի քննության մեջ նկատելի ներդրում ունեցան միայն ատտիկյան ուղղության հետևողները, որոնք փիլիսոփայության մեջ ներկայացնում էին Արիստոտելի ստեղծած դպրոցը (պերիպատիկյան)։

Մ. թ. առաջին դասի գործիչ Դիոնիսիոս Հալիկառնասցին խոսքի առանձնահատկություններին է նվիրել մի քանի աշխա-

տություններ։ «Անունների կապակցության մասին» աշխատության մեջ նա անդրադառնում է այն հարցին, թե ինչով է մեկի ոճը տարբերվում մյուսի ոճից։ Խոսքի մեջ նա տեսնում է երկու կարևոր կողմ՝ բառերի ընտրությունը և խոսքի փոքր ու մեծ բաղադրիչների կապակցությունը։ Բառերի ընտրության և կապակցությունների մեջ են թաքնված այն առանձնահատկությունները, որոնցով տարբերվում են ոճերը միմյանցից։ Ըստ Դիոնիսիոսի, կապակցության մասին ուսմունքը կոչված է լուծելու երեք խնդիր՝ ա. որոշել, թե խոսքի մեջ ինչը ինչի հետ է առաջ բերում գեղեցիկ կապակցություն, բ. ինչը ինչի հետ և ինչպես պետք է դնել, որ թողնի ամենամեծ տպավորությունը և գ. իմանալ, թե գործածված լեզվական նյութը կարիք չի՞ զգում վերափոխության։ Քանի որ մեր լսողությունն ու տեսողությունն ամեն բանի մեջ փնտրում են հաճելիություն և գեղեցկություն, ուստի պետք է ձգտենք խոսքը դարձնել գեղեցիկ ու հաճելի։ Խոսքը, ըստ Հալիկառնասցու, հաճելի ու գեղեցիկ է դառնում մեղեդիականության, կշռույթի, բազմապիսության և համապատասխանության շնորհիվ։

Դիոնիսիոս Հալիկառնասցին մշակում է կապակցությունների տեսությունը, դրանք բաժանում երեք խմբի՝ խիստ, սահուն և համաչափ։ Խիստ տեսակի կապակցությունը պահանջում է, որ բառերը լինեն երկար, կշռույթը՝ վսեմ ու ծանր, անդամներն՝ անհավասար և իրար ոչ նման, ընտրված լինեն համարձակ ու հանդուգն բառեր։ Այստեղ քիչ տեղ ունեն շաղկապները, խոսքն անտարբեր է անհետևողականության նկատմամբ, ոճը ծաղկուն չէ, բայց վերամբարձ է, ունի հնության փայլ, և միաժամանակ այն հասարակ է, չխորամանկված։ Սահուն կապակցության մեջ տեղ ունեն համեմատաբար համեստ բառեր, որոնք ունեն միջին երկարություն և իմաստային առումով չեն ընդգծվում։ Սրանք պետք է միահյուսվեն այնպես, որ խոսքի մեջ միմյանց հետևից գնան անընդհատ հոսքով, առանց դադարների։ Այստեղ անդամները ևս պարբերությում պետք է լինեն համաչափ, ո՛չ շատ երկար և ո՛չ էլ շատ կարճ։ Խոսքի ձևերից այսպիսի կապակցության համար հարմար են այնպիսիները, որոնք խոսքին չեն տալիս ուժ ու կշիռ, բայց իրենց մեջ ունեն խաբուսիկություն ու թատերականություն։ Կապակցության համաչափ տեսակն իր մեջ համատեղում է նախորդ երկուսի լավ կողմերը և նախորդներից գերադասելի է, քանի որ համաչափությունը խոսքին տալիս է

չափավորություն, իսկ չափավորությունն ամեն ինչում առաքինություն է։

Առաջին դարի պերիպատիկյան Դեմետրիոսը իր «Ոճի մասին» աշխատության մեջ նորովի է մեկնաբանում խոսքի տեսության մի շարք հարցեր։ Նախ նա խոսքի տեսության պատմության մեջ առաջին անգամ խոսքը բաժանում է երկու տիպի՝ ընդհատավոր և կապակցված։ Ընդհատավոր նա կոչում է խոսքի այն տիպը, որի մեջ մտքերը հանդես են գալիս միմյանցից կտրտված, ոչ իբրև մտածության շղթայի կապակցված օղակներ, թեև դրանց կապն ըմբռնվում է բանահյուսվածքի մեջ։ Այսպիսի խոսքում շաղկապները համարյա տեղ չունեն, այդ պատճառով էլ ընդհատավոր խոսքը պիտանի լինելով բանավեճին, միաժամանակ պահանջում է հատուկ հնչերանգ, որով և խոսքը որոշ չափով ձեռք է բերում հուզականություն։ Կապակցված խոսքի տիպը առավել հատուկ է գրավոր և մշակված խոսքին և մտքերի արտահայտման սովորական եղանակն է։ Այս աշխատության մեջ Դեմետրիոսը անդրադառնում է խոսքի գեղեցկության հարցերին և անում ուշագրավ դիտողություններ։ Խոսքի գեղեցկությունը բարձրանում է երկու հիմքի վրա։ Մեկը բառերի հընչյունների զուգորդություններն ու բառի կազմվածքի (ֆիզիկական) առանձնահատկություններն են, մյուսը՝ բառերի նշանակությունները։ Հույն երաժիշտները դեռևս Դեմետրիոսից առաջ բառերը բաժանել են չորս խմբի՝ սահուն (հարթ), անհարթ, համաչափ և ծանրակշիռ, հետևաբար խոսքի արտաքին՝ հնչական կողմի համար կարևոր է այն, թե բառերն ինչպես են զուգակցվում նրա մեջ։ Խոսքի ներքին գեղեցկությունը պայմանավորված է բառերի իմաստներով։ Ըստ Դեմետրիոսի ինչի վրա հաճելի է նայել, նրա անվանումն էլ հաճելի է լսել։ Բացի սրանից, նորաստեղծ բառերը թվում են ավելի խորիմաստ, իսկ բարդ բառերը խոսքին տալիս են վեհություն։ Խոսքին վեհություն և գեղեցկություն են տալիս նաև փոխակերպությունները, որոնք սակայն բազմանշանակ են։

Խոսքի տեսության պատմության մեջ դարձյալ առաջին անգամ Դեմետրիոսը արձակ խոսքը վերածում է կառուցվածքային բաղադրիչների։ Ինչպես որ չափական խոսքը բաժանվում է տողի, կիսատողի և ոտքերի, այնպես էլ արձակը, ըստ Դեմետրիոսի, բաժանվում է սահմանավոր մասերի, որ նա կոչում է պարբերության բաղադրիչների անվանումներով՝ անդամներ և հատ-

վածներ։ Ըստ երևույթին միանման անվանումներն են պատճառը, որ Դեմետրիոսի այս բավական հետաքրքրական միտքը հետագա դարերում մնում է չհասկացված։ Դեմետրիոսը զարգացնում է նաև պարբերույթի ըմբռնումը՝ պարբերավոր խոսքը բաժանելով երեք տիպի՝ խոսակցական, պատմական և հռետորական։ Դեմետրիոսի ժամանակներում խոսքի տեսության կարևոր հարցերից մեկն էլ խոսքի տիպերի (վսեմ, նրբագեղ, հզոր և աղքատ) առաջացման պատճառների բացահայտումն էր։ Անցյալի մտածողների շարքում Դեմետրիոսը աչքի է ընկնում ոչ միայն այս հարցերի քննության խորությամբ, այլև մտածողության ինքնատիպությամբ, անսպասելի համեմատություններով իր առածը հաստատելու վարպետությամբ։

Խոսքի տիպերի մասին ուսմունքը հետագայում փոխարինվում է խոսքի որակների մասին, իսկ սա էլ այսպես կոչված գաղափարների մասին ուսմունքով, որն իր կատարյալ տեսքն է ստանում Հերմոգենեսի «Գաղափարների մասին» վերնագրով աշխատության մեջ։ Այս աշխատության հիմնական մասը նվիրված է խոսքի դրական հատկանիշների բնութագրությանը, այն միջոցների քննությանը, որոնք խոսքը դարձնում են հասկանալի, գեղեցիկ, հանդիսավոր, վսեմ, ծանրակշիռ, ազդու, նրան տալիս փայլ, կենդանություն, շեշտակիություն, խստություն, կրքոտություն ու խանդավառություն և այլն։ Խոսքի դրական հատկանիշների քննությանը զուգահեռ Հերմոգենեսը մեկ առ մեկ ցույց է տալիս խոսքի արատների առաջացման աղբյուրները և պատճառները։ Նրա գրչին են պատկանում «Վեճի մասին» չորս գրքից բաղկացած աշխատությունը, որոնցից երեքը նվիրված են խոսքի կառուցվածքին, իսկ մեկը՝ նրա քերականական արտահայտությանը։

Մեր թվականության առաջին դարերից սկսած խոսքի մասին ուսմունքները Հունաստանում այլևս զարգացում չունեցան։ Այս բնագավառում Հունաստանին փոխարինելու եկավ Հռոմը։ Ճարտասանական արվեստը թեև մուտք էր գործել Հռոմ մ. թ. ա. 3-րդ դարում, սակայն բուռն զարգացում ունեցավ հռոմեական հանրապետության վերջին դարում (մ. թ. ա. 1-ին դար), երկրում ծագած դասակարգային կատաղի պայքարի հետևանքով։ Քաղաքական պայքարի այս անհանգիստ ժամանակների ծնունդ են հռոմեական հռետորական արվեստի երկու փայլուն աստղերը՝ Հորտենզիուսը և Ցիցերոնը։ Սակայն խոսքի տեսության

հարցերով զբաղվել է Ցիցերոնը (մ. թ. ա. 106—43), որն իր ուսումնառությունն ստացել է Հունաստանում։ Նա գրել է ճարտասանական երեք աշխատություններ, որոնցից մեկում շարադրել է հռետորական արվեստի զարգացման պատմությունը Հռոմում, դառնալով ճարտասանության պատմության առաջին հեղինակ։ Ցիցերոնն իր մյուս աշխատություններում քննում է հատկապես խոսքի հոգեբանության հարցերը։ Նա խոսքի մեջ կարևոր է համարում տեղինությունը կամ պատեհությունը, որ արդյունք է համապատասխանության,— ընդգծում տակտի դերը, քննում այն միջոցները, որոնցով ունկնդրի մեջ առաջ են բերվում «հոգեկան շարժումները» (սերը և ատելությունը, բարկությունը և կարեկցությունը, հույսը և երկյուղը, ուրախությունն ու տխրությունը)։ Քանի որ դրանք ներհակ՝ դրական ու բացասական զգացումներ են, այդ պատճառով էլ մեկի հարուցումը նշանակում է մյուսի մարում։ Ցիցերոնը կարևոր է համարում թե՛ զգայությունների հարուցման և թե՛ դրանց մարման տեխնիկայի իմացումը։ Զգայությունների հարուցման ու մարման լեզվական միջոցների հոգեբանական ներգործության ուղիների քննության հետ միաժամանակ նա վեր է հանում այնպիսի երևույթների էությունները, ինչպիսիք են սրամտությունը, հեգնանքը, կատակը, ծիծաղը, ծաղրը և այլն։ Ցիցերոնը ավելի խոր վերլուծության է ենթարկում ճարտասանական խոսքի գեղեցկության պատճառներն ու ուղիները, քան հույները։ Գեղեցկությունը ենթադրում է կատարելություն, որին պետք է ձգտի ամեն ոք։ Կատարելությունը գեղեցկության էությունն է, և գովեստի արժանի է այն խոսքը, որը կատարյալ է իր տեսակի մեջ։ Կատարելության կարող է հասնել միայն նա, ով գիտելիքին ու ճաշակին կմիացնի անխոնջ աշխատանքը։ Այսպիսի մարդը կկարողանա արտահայտվել նրբագեղորեն զազրելիի, բովանդակալից՝ դատարկ բաների և միանգամայն նոր ձևով՝ հանրահայտ բաների մասին։ Գեղեցկության պայմաններից մեկն էլ հաճելիությունն է, որը կապված է չափի զգացման հետ։ Հաճելին խոսքի մեջ պետք է լինի չափավոր, կապված խստության ու ամրության, բայց ոչ թուլության ու քաղցրմեղցրության հետ։ Այն պետք է զերծ լինի ավելորդությունից, որովհետև հաճախ մի բանի պակասն այնքան չի վնասում հաճելիությանը, որքան ավելորդությունը։ Հաճելին հաճույք է պատճառում, իսկ խոսքում հաճելիի պատճառը թաքնված է լինում ճիշտ ընտրված բառերում, դրանց

հիշտ կապակցություններում և այն փոխակերպություններում, որոնք կոչված են ոչ թե բառի պակասության, այլ խոսքի գեղեցկության պահանջով։ Խոսքի կառուցվածքի և առանձնահատկությունների մասին խոսելիս Ցիցերոնն իր աչքի առաջ է ունեցել ատենական պերճախոսությունը, որի տեսության մշակման գործում ինքն անժխտելի դեր է ունեցել։

Հռոմեացի նշանավոր բանաստեղծ Հորացիոսը (մ. թ. ա. 65—8) և՛ իր ժամանակներում և՛ հետագայում, հատկապես Վերածննդի դարաշրջանում, ճանաչվել է իբրև խոսքարվեստի տեսության մեծ հեղինակություն իր «Պոեզիայի գիտությունը» պոեմի համար, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ չափածո մի կանոնագիրք գեղարվեստական խոսքի (հիմնականում պոեզիայի և դրամատուրգիայի) բառագործածության և կառուցվածքային առանձնահատկությունների մասին։ Իրականում Հորացիոսի բերած նորությունը ոչ թե նոր մտքեր արտահայտելու, այլ խոսքի արվեստի հարցերը առաջին անգամ չափածո շարադրելու և իր մտքերը գեղեցիկ համեմատություններով և իմաստալից դատողություններով արտահայտելու մեջ է։

Խոսքի առանձին հարցերին անդրադարձել են Հուլիոս Կեսարը, Սենեկան, Տակիտոսը և ուրիշներ, սակայն հռետորական արվեստի տեսության մշակման գործում ինչ արել է Մարկոս Ֆաբիոս Կվինտիլիանոսը (42—122), մնում է իբրև եզակի մի երևույթ ամբողջ ճարտասանության պատմության մեջ։ Իր «Հռետորության ուսուցում» 12 գրքից բաղկացած հանրագիտական բնույթի ուսումնասիրության մեջ նա ամփոփում է հռետորական արվեստի տեսական ու գործնական հարցերի ուսումնասիրության բնագավառում անցյալի մտածողների նվաճումները՝ ավելի հարստացնելով ու խորացնելով նրանց ըմբռնումները խոսքի բոլոր կողմերի մասին իր արժեքավոր դիտողություններով և եզրակացություններով, տալիս հռետորական արվեստի ուսուցման մեթոդիկան, որն իր հերթին նորություն էր հռետորական արվեստի պատմության մեջ, շարադրում հունական և հռոմեական հռետորության պատմությունը՝ դառնալով այս արվեստի ծագման ու զարգացման ակունքների առաջին հետազոտողը։ Կվինտիլիանոսն է, որ հռետորական արվեստը բաժանում է հինգ բաժինների, գյուտի, շարակարգության, շարադրման (որ հետագայում վերանվանվեց ճոխարանություն), հիշողության և արտասանության։ Նրա հետաքրքրական ու օգտակար շատ մտքեր ու դիտողություններ

գյուտի, բանավեճի արվեստի (էրիստիկա), խոհի ու մտորման (էվրիստիկա), շարակարգության և ընդլայնման, բառերի առանձնահատկությունների և նրանց գործածությունների (կապակցություններ), փոխակերպությունների ու ձևերի կիրառություններ (ի միջի այլոց ասենք, որ Կվինտիլիանոսն է քերականական ձևերի առաջին ուսումնասիրողը), խոսքի ձևի և բովանդակության փոխհարաբերության մասին այսօր էլ՝ շուրջ 2000 տարվա հնություն ունենալով հանգերձ, շնչում են թարմությամբ ու այժմեականությամբ։

Հռետորական արվեստը Հռոմում իր ծաղկմանը հասավ Ցիցերոնի ժամանակներում, սակայն նրա սպանությունից հետո այլևս չհասավ այն բարձունքին, որին հասել էր Ցիցերոնի շնորհիվ։ Հռոմեական միապետությունը ամեն մի բանապետության նման ազատ խոսքի ուստի և հռետորական խոսքի թշնամի էր։ Հռոմեական սենատը մ. թ. ա. 161 և 92 թվականներին որոշումներ ընդունեց փակել հռետորական և փիլիսոփայական դպրոցները, որպեսզի Հռոմում տեղ չունենա հունական ազդեցությունը, ազդեցություն, որը խարխլում էր հռոմեական կարգերի հիմքերը։ Մեր թվականության առաջին դարերում մի կողմից՝ Հռոմը եվրոպական վայրագների հարձակումներին ենթարկվելու և մյուս կողմից՝ քրիստոնեական կրոնի տարածման պատճառով մեկընդմիշտ լռեց հին ճարտասանությունը նաև Հռոմում։

Ճարտասանական արվեստի տեսությունն ու պրակտիկան ունեցել են իրենց վերելքներն ու վայրէջքները՝ իրենց մեջ յուրովի արտացոլելով հին Հունաստանի և Հռոմի հասարակական-քաղաքական կյանքի էական տեղաշարժերը։

Ճարտասանական արվեստը նոր նշանակություն է ձեռք բերում քրիստոնեական կրոնի գաղափարների տարածման ժամանակներում։ Քրիստոնեական պերճախոսության զարգացման համար մեծ խթան հանդիսացավ Հին կտակարանի թարգմանությունը և՛ հունարեն, և՛ լատիներեն, և՛ հայերեն լեզուներով։ Քրիստոնեական ճարտասանությունն իր գագաթին է հասնում մեր թվականության 4-ից 6-րդ դարերի եկեղեցու մի շարք նշանավոր գործիչների շնորհիվ, որոնցից առավել աչքի ընկան հռոմեացիներից՝ Մինուսիուս Ֆելիքսը, Լակտանտիոսը, Հերոնիմոսը, Տերտուլիանոսը, Ամբրոսիոսը, Գրիգոր Մեծը, Սավրելիա Ավգուստինոսը (Օգոստոս Երանելի), իսկ հույներից՝ հայ մեծ հռետոր Պրոեբեսիոսի (Պարույր Հայկազն) աշակերտ-

ներ Բարսեղ Կեսարացին (Բարսեղ Մեծ), Գրիգոր Նազիանզացին (Գրիգոր Աստվածաբան), ինչպես և Գրիգոր Նյուսացին (Բարսեղ Մեծի եղբայրը), Հովհան Ոսկեբերանը (ազգությամբ ասորի) և Կյուրեղ Ալեքսանդրացին։

Քրիստոնեական կրոնն իբրև հին աշխարհի մայրամուտին ծագած մի թարմ և առաջադիմական գաղափարախոսություն մեր թվականության առաջին դարերում առաջ է բերել մտավոր շարժման մեծ ալիք և իշխել ժամանակի մեծատաղանդ մարդկանց մտքերի վրա, սակայն հետագա դարերում այն կորցրեց իր առաջադիմական նշանակությունը։ Միջնադարյան սխոլաստիկան ոչինչ թույլ չէր տալիս դնել բանականության քննության առաջ, նա չէր հանդուրժում ոչ մի ապացույց. նրա պահանջն էր հավատ եկեղեցու դոգմաների նկատմամբ և հրնազանդություն կրոնական հեղինակությունների առաջ։ Այդ էր պատճառը, որ ողջ միջնադարը չտվեց ո՛չ Դեմոսթենես, ո՛չ Ցիցերոն, ո՛չ էլ Հովհան Ոսկեբերան. դասական ճարտասանությունը շուրջ հազար տարի որևէ զարգացում չունեցավ։

Եթե հին Հունաստանում և Հռոմում ճարտասանության մեջ զարգացավ դատաստանական և քաղաքական պերճախոսությունը, քրիստոնեության տարածման ժամանակներում՝ կրոնականը, ապա սկսած 11—12-րդ դարերից Եվրոպայի մի քանի քաղաքներում հիմնադրված նորաստեղծ համալսարաններում սկսում է զարգանալ համալսարանական պերճախոսությունը, որը, սակայն, իր վրա կրում էր սխոլաստիկայի ծանր կնիքը։ Ամենուրեք խոսքի մեջ իշխում էր դոգմատիզմը և քաղվածքաբանությունը։ Այդ պատճառով, որ գիտական աստիճան ստացողը կարգի համաձայն պարտավոր էր բանավեճի մեջ հաղթանակ տանել ընդդիմախոսների դեմ, Փարիզի, Օքսֆորդի և եվրոպական այլ համալսարաններում զարգացում է ապրում բանավեճի արվեստը՝ էրիստիկան։ Փիլիսոփայության հարցերի շուրջը նոմինալիստների և ռեալիստների միջև միջնադարում բռնկված վեճը պատճառ դարձավ այնպիսի նշանավոր հռետորների ասպարեզ գալուն, ինչպիսիք էին Թոմաս Աքվինացին, Անսելմա Քենտեներբերացին, Դունս Սկոտը, Վիլհելմ Օկկոմացին և ուրիշներ։ Սկսում է ծավալվել պայքար եկեղեցու դոգմաների և կրոնավորների այլասերված բարքերի դեմ. իրենց կրակոտ ելույթների համար խարույկ հանվեցին Պրագայի համալսարա-

նի ռեկտոր Յան Հուսը (1369—1415) և Ֆլորենցիացի Սավոնարոլան։

Սկսած 16-րդ դարից Իտալիայում և այնուհետև Եվրոպայի այլ երկրներում զարգանում են տնտեսական նոր հարաբերություններ, հանդես է գալիս բուրժուական տարրը, առաջ է գալիս նոր աշխարհայացք՝ հումանիզմը, որի առաջադիմական էության մի կողմն էլ դրական հետաքրքրությունն էր հին աշխարհի մշակույթի ու գիտության նկատմամբ (այստեղից էլ Վերածընունդ տերմինը)։ Հումանիզմը և Վերածնունդը ազատագրում են հռետորական խոսքը կրոնական սխոլաստիկայի կապանքներից։ Այս բանում մեծ դեր խաղացին ռեֆորմացիայի առաջնորդները՝ Մարտին Լութերը, Կալվինը, Ցվինգլին և ուրիշներ։ Կրկին մեծացավ հետաքրքրությունը հռետորական արվեստի նկատմամբ։ Առանձնապես մեծ էր հետաքրքրությունը հռետորական արվեստի նկատմամբ Իտալիայում, որտեղ 17—18-րդ դարերում գրվում են ճարտասանության նոր ձեռնարկներ հատկապես Հռոմի հոգևորական Ուրբանյան դպրոցի սաների համար, որոնք պատրաստվում էին այլ ժողովուրդների մեջ քարոզելու կաթոլիկություն։

Հետագա ժամանակներում, հատկապես 17—19-րդ դարերում, ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում քաղաքական ու դիվանագիտական պերճախոսության հետ զարգանում է ռազմական և կրոնական պերճախոսությունը։ Այլ հանգամանքների հետ սրան նպաստում են նախ՝ Պետրոս Մեծի կողմից 1721 թ. հրատարակված «Духовный регламент»-ը, որը կանոնների ժողովածու էր այն մասին, թե ինչպես պետք է քարոզ կարդալ, այնուհետև՝ ճարտասանական մի շարք աշխատություններ ու հրահանգներ, ինչպես՝ Լոմոնոսովի «Հռետորիկան», «Պերճախոսության համառոտ ձեռնարկը», Մ. Մ. Սպերանսկու «Բարձրագույն պերճախոսության կանոնները», Ա. Ֆ. Մերզլյակովի «Համառոտ ճարտասանությունը», Կոշանսկու «Հռետորիկան», հետագայում Ա. Ֆ. Կոնիի «Խորհուրդներ դասախոսին» և այլն։

Եթե հունահռոմեական և իտալական ճարտասանության համակարգում խոսքի տեսությունն ու գործնական ուսուցումը ընթանում էին միասնական ճանապարհով, ապա Փարիզի Գիտությունների ակադեմիայի ստեղծումից հետո (1666 թ.) խոսքն իբրև դասավանդման առարկա և խոսքն իբրև գիտության ուսումնասիրության առարկա որոշակիորեն սահմանազատվում են

միմյանցից և բոնում զարգացման տարբեր ուղիներ։ Այս հարցում վճռական դեր ունեցավ Փարիզի ակադեմիայի հանձնարարությամբ Անտուան Արնոյի և Կլոդ Լանսլոյի ստեղծած «Համընդհանուր և բանական քերականությունը», որը գիտության մեջ ճանաչվում է «Պոր-Ռոյալի քերականություն» անվանումով։ Ակադեմիայի կողմից հաստատված այս քերականությունը ունեցել է նորմատիվ բնույթ, և նրա կանոնների համաձայն են կազմվել թե՛ բառարանները, թե՛ դպրոցական քերականության դասագրքերը և թե՛ ճարտասանության ու պոետիկայի ձեռնարկները։ Հետագայում Փարիզի ակադեմիայի օրինակով ստեղծվում են ակադեմիաներ այլ երկրներում, որոնք նույնպես ձեռնարկում են համանման գործունեության՝ ազգային լեզուների ու խոսքի ուսումնասիրության և ուսուցման գործում։

«Պոր-Ռոյալի քերականության» հեղինակները մի շարք կարևոր այլ գաղափարների հետ առաջ են քաշում այն դրույթը, ըստ որի ամեն մի նախադասություն տրամաբանորեն կազմակերպված ամբողջություն է, որը կազմված է հասկացություններից և արտահայտում է դատողություն։ Հետևաբար այն, ինչ հին մտածողները վերագրել են միայն խոսքի մի ձևին կամ տեսակին, այժմ նոր մեկնաբանությամբ դառնում է խոսքի ցանկացած ձևի կամ տեսակի համար ընդհանուր օրենք։ Անցյալում խոսքի մասին եղած յուրաքանչյուր գիտություն ուներ խոսքի ուսումնասիրման իր բնագավառը։ Այսպես, պոետիկան զբաղվում էր միայն պոետական խոսքի առանձնահատկություններով, և նրան չէր հետաքրքրում ո՛չ գեղարվեստական արձակը և ո՛չ էլ գիտական խոսքը. հռետորիկան զբաղվում էր արձակ խոսքի առանձնահատկություններով, առավելապես դատաստանական ու քաղաքական ճառերի, և նրան չէր հետաքրքրում ո՛չ պոեզիան և ո՛չ էլ գիտական խոսքը. տրամաբանությունն զբաղվում էր գիտական խոսքով, և նրան չէր հետաքրքրում ո՛չ պոեզիան և ո՛չ էլ գեղարվեստական արձակը. քերականությունն զբաղվում էր գրական-գեղարվեստական տեքստերի լեզվով և այլն։ Այժմ խոսքի մասին գոյություն ունեցող այս գիտաճյուղերը ելնում են բառերի միջոցով մտքեր հաղորդելու մեկ ընդհանուր սկզբունքից։ Խոսքի մասին նոր տեսությունն իր կնիքն է դնում խոսքի բոլոր տարատեսակությունների ու դրսևորումների վրա։ Սա զուգադիպում է այն ժամանակներին, երբ սկսում է լայն տարածում ստանալ տպագիր խոսքը, և այնուհետև տպագիր խոսքում, ան-

կախ Ն-ից տեսակից, խոսքի մասին եղած ընդհանուր պատկերացումներին համեմատ, նկատվում է ոճի միասնություն։ Այս-
ինչ է գրական-գեղագիտական այնպիսի հոսանքների տիրապետության ժամանակներում, ինչպիսիք են կլասիցիզմը, սենտիմենտալիզմը, ռոմանտիզմը և այլն։ Եթե անցյալում լեզվագործածության մեջ հին աշխարհից եկած ավանդույթն էր ուղեցույց, ապա այժմ՝ ավանդույթի ուժ ձեռք բերած այն կանոնները, որ մշակվում էին գիտության հեղինակավոր հիմնարկների ու հեղինակավոր անձանց կողմից։

Ինչպես լեզվի էության, նրա զարգացման ու փոփոխության, հասարակական կյանքում ունեցած նրա դերի, այնպես էլ խոսքի մասին պատկերացումներն էապես փոխվում են պատմահամեմատական մեթոդի հայտնագործման և լեզվի մասին հատուկ գիտության՝ լեզվաբանության առաջացման հետ միաժամանակ։ Արդեն 19-րդ դարի 30-ական թվականներից ձևավորվում է ոճաբանությունն իբրև ինքնուրույն լեզվաբանական գիտաճյուղ (ոուս իրականության մեջ առաջին անգամ լեզվաբան Զիմովը 1838 թ. հրատարակում է «Ռուսաց ոճաբանության հիմունքները» վերնագրով աշխատությունը, որից սկսած գիտական շրջանառության մեջ է մտնում ոճա անությունը (стилистика) տերմինը)։ Առաջ է գալիս խոսքի ուսումնասիրության մի նոր բնագավառ, որը թեև զգալի զարգացում չունեցավ, սակայն իր մեջ ներառեց հիմնական այն բոլոր լեզվաբանականը, որ կար հռետորիկայի մեջ՝ դուրս թողնելով վերջինից այն բոլորը, ինչ ուղղակիորեն չի արտացոլում լեզվական իրողություններ։

Անցյալ դարում բնական և հասարակական գիտությունների զարգացման հետևանքով լեզվաբանությունը թևակոխում է նոր շրջան, ինքը միաժամանակ օգնելով պատմագիտությանը և հասարակական այլ գիտությունների՝ պարզելու հասարակական կյանքի զարգացման մի շարք երևույթների էությունը։ Առաջ են գալիս լեզվի զարգացումը բացատրող լեզվափիլիսոփայական կոնցեպցիաներ հատկապես Գերմանիայում։ Իր «Մարդկային լեզուների կառուցվածքների տարբերության և մարդկային ցեղի հոգեկան զարգացման վրա նրանց ունեցած ազդեցության մասին» աշխատության մեջ լեզվի զարգացման պատճառ համարելով ժողովրդի ոգին, Վ. Հումբոլդտը դնում է մի քանի հակադրամիասնությունների (ասինոմիա) հարաբերությունների հարց։ Այդպիսի հակադրամիասնություններից են լեզվի մեջ ան-

հատականն ու հասարակականը, սուբյեկտիվն ու օբյեկտիվը, պայմանավորվածությունն ու չպայմանավորվածությունը և այլն։ Սրանց հետ մեկտեղ նա առաջ է քաշում լեզվի ու խոսքի հակադրամիասնության հարցը։ Հումբոլդտի ըմբռնումով լեզուն իր էությամբ անընդհատ զարգացող ու փոփոխվող, մշտական և միաժամանակ ամեն մի տվյալ պահի անցողիկ երևույթ է, որի «նույնիսկ գրային փաստագրությունը ամենևին էլ կատարյալ մումիակերպ վիճակ չէ, որը ենթադրում է վերակերտում կենդանի խոսքում»[2]։ Այնուհետև, Հումբոլդտի ըմբռնումով «լեզուն գործունեության արդյունք չէ (ergon), այլ գործունեություն (energeia)», և նրա բաղադրիչ տարրերը (նա կոչում է բառեր և կանոններ) յուրաքանչյուր խոսքային անհատական գործունեության մեջ ամբողջությամբ չեն կարող վերակերտվել։ «Բառերի և կանոնների անկարգ քաոսի մեջ, որ մենք կոչում ենք լեզու, գոյություն ունեն միայն առանձին տարրեր, որոնք խոսքային գործունեության կողմից վերակերտելի են, այն էլ ոչ լրիվ, այդ պատճառով էլ «որպեսզի ճանաչելի դառնա կենդանի խոսքի էությունը, և կարողանանք ստեղծել կենդանի լեզվի իրական պատկերը, պետք է քննենք ամբողջ կրկնողական գործունեությունը»[3]։ Այսպիսով, Հումբոլդտը խոսքը դիտում է իբրև լեզվի կրկնողական գործունեություն, որի ընթացքում լեզուն ո՛չ կոնկրետ խոսքային տվյալ ակտի և ո՛չ էլ բոլոր ակտերի մեջ իր բաղադրիչ բոլոր տարրերով լիովին հանդես չի գալիս։ Ուրեմն՝ թե՛ լեզուն և թե՛ խոսքը կենդանի՝ միշտ շարժուն և միշտ միմյանց անհավասար իրակությունններ են։

Լեզվագիտության մեջ նոր հայտնագործությունները, ինչպես և լեզվի զարգացման մեխանիզմի բացատրության հարցում առաջ քաշված իդեալիստական, պոզիտիվիստական, հոգեբանական, բնագիտական և այլ կոնցեպցիաները պատճառ դարձան, որ խոսքի մասին մասնավոր գիտությունները վերակառուցվեն կամ ճշտեն իրենց տեղերը լեզվագիտության մեջ, պարզեն իրենց առնչությունները միմյանց հետ։ Եթե դեռևս ոչ վաղ անցյալում քերականությունը, տրամաբանությունը և ճարտասանությունը հանդես էին գալիս իբրև մի եռամիասնություն՝ կազմե-

---

[2] В. А. Звегинцев, История языкознания XIX—XX веков в очерках и извлечениях, ч. I. М. 1964, էջ 91։

[3] Նույն տեղում, էջ 91։

լով այսպես կոչված գեղեցիկ դպրության երեք բաժինները, ապա այժմ տրամաբանությունը որոշակիորեն սահմանազատվում է լեզվագիտությունից, իսկ պոետիկան պատմահամեմատական լեզվաբանության ազդեցությամբ ավելի է մոտենում լեզվագիտությանը։ Ռուս լեզվաբան Ա. Ա. Պոտեբնյան, քննելով բառիմաստի զարգացման լեզվահոգեբանական մեխանիզմը, եկավ այն եզրակացությանը, որ լեզվի զարգացման պատճառով բառը կորցնում է իր նախնական առարկայական նշանակությունը և ձեռք բերում նոր իմաստ, որի հետևանքով բառի հին՝ առարկայական նշանակությունը մնում է բառի մեջ իբրև «ներքին ձև», որ ըմբռնվում է իբրև պատկեր։ Այստեղից բխում է այն հատեվությունը, որ պատկերավորության, հետևաբար և պոետական ամենակարևոր փոխակերպությունների՝ փոխաբերության, փոխանունության և խելամտության արմատները թաղված են բառիմաստի զարգացման ու փոփոխության, հետևաբար և լեզվի զարգացման ու փոփոխության պատմության մեջ։ Ահա պատմական այս հիմքի վրա էլ պոետիկան ընդհանրություններ է հանդես բերում լեզվաբանական գիտությունների հետ։ Այնինչ հռետորիկան իբրև ուսումնական առարկա դուրս է մղվում դպրոցներից (չհաշված ԱՄՆ-ը, Անգլիան և Հնդկաստանը), մասամբ իր տեղը զիջելով ոճագիտությանը, մասամբ էլ իր գոյությունը պաշտպանելով բուհերի իրավաբանության ֆակուլտետներում

Հռետորական արվեստի տեսությունը Հայաստան մուտք է գործել մեր թվականությունից առաջ՝ առաջին դարում, Տիգրան Մեծի ժամանակներում։ Հայոց արքունիք հրավիրված հույն հռետորներ Ամֆիկրատես Աթենացու և Մետրոդորոս Սկեպսիացու հետ միաժամանակ հռետորական արվեստով էին զբաղվում նաև հայերը։ Օտար աղբյուրների վկայությամբ ճարտասանական երկեր է հորինել Տիգրանի որդի Արտավազդը, իսկ Լուկուլլոսի կողմից գերի տարված Տիրանը, որ հմուտ քերական էր և ճարտասան, Հռոմում համարվում էր «իր գիտության համար բարձր պատվի արժանի» մարդ (Ցիցերոն)։ Սակայն գրավոր աղբյուրների բացակայության պատճառով մեզ մնում է անհայտ, թե մեր մեջ հռետորական արվեստն ու նրա տեսությունն ինչ զարգացում ու տարածում են ունեցել այդ ժամանակներում։ Օտար աղբյուրներից հայտնի է, որ դեռևս մեր նոր դպրության սկզբնավորումից առաջ, չորրորդ դարում Հունաստանում մեծ հռետորի համբավ էր ձեռք բերել Պարույր Հայկազնը (Պրոերեսիոս),

որն իր մեծ գիտելիքների և բարձր ճարտասանական արվեստի համար ստացել է «խոսքի թագավոր» մականունը, և մահից հետո նրա արձաններն են կանգնեցվել ինչպես Աթենքում, այնպես էլ Հռոմում։ Արդեն հայերեն աղբյուրներից հայտնի է, որ ոչ միայն հինգերորդ դարի սկզբներից ճարտասանությունը հայոց նորաբաց դպրոցների կարևոր առարկաներից մեկն էր, այլև ունեցել ենք նշանավոր հռետորներ և ճարտասանության տեսաբաններ։ Այդպիսիներից էին Մովսես Խորենացին, որը գրել է ճարտասանության նախակրթության (Պետք)) ձեռնարկ, նրա կրտսեր եղբայրը՝ Մամբրեն (որը Վերծանող մականունն ստացավ ճարտասանության այս բաժնի մեջ խորանալու շնորհիվ), սրանց քրոջ որդի Դավիթ Անհաղթը, որը նույնպես հետևնակել է պետքի ձեռնարկ, Աբրահամ Հռետորը, որի մականունը հենց ցույց է տալիս նրա ինչ լինելը և այլն։ Սակայն ոչ միայն V—VI դարերում, այլև հետագա հարյուրամյակներում ստեղծված հայերեն ճարտասանական աշխատությունները, որոնց գոյության մասին կան վկայություններ Մաշտոցի անվան Մատենադարանում, ոչնչացել են ժամանակի ավերիչ ձեռքով, մանավանդ որ միջնադարում տասնյակ հազարավոր ձեռագիր մատյանները արևելյան նվաճողների կողմից հափշտակվել և տարվել են Սամարղանդ և այլ քաղաքներ։ Այնուամենայնիվ ինչպես Հունաստանում և Հռոմում, այնպես էլ Հայաստանում հռետորական արվեստը մոտ հազար տարի (VII—XVII դարեր) լուրջ առաջընթաց չապրեց։

Խոսքի արվեստի նկատմամբ հետաքրքրությունը կրկին մեծանում է իտալական Վերածննդի ժամանակներում, նախ Իտալիայում և ապա Ֆրանսիայում, իսկ այնուհետև՝ եվրոպական մյուս երկրներում։

Հայ նոր ճարտասանությունը ձևավորվում է իտալականի ազդեցության տակ, 17-րդ դարում։ Մեր նոր ճարտասանության սկզբնավորողը եղավ Հովհաննես Հոլովը (Կոստանդնուպոլսեցի), որն ապրել է 17-րդ դարի երկրորդ կեսում։ Նա իր «Համառոտութիւն ճարտասանականի արուեստի» (1674 թ., Մարսել) հարց ու պատասխանի ձևով գրված փոքրածավալ աշխատության մեջ մշակում է մեր ճարտասանական-ոճաբանական տերմինաբանությունը և տալիս մեր լեզվի ու խոսքի ոճական համակարգի առաջին գիտական պատկերացումը։ Նա է առաջին անգամ դասակարգում և նկարագրում խոսքի տեխնիկական այնպիսի հնա-

բանքներ, ինչպիսիք են փոխակերպությունները (որ նա կոչում է այլափոխություններ) և ձևերը։ Նրան է պատկանում մեր մեջ պարբերության առաջին բացատրությունը, «ճառի» (իմա՝ խոսք ընդհանրապես) բաժանումը կառուցվածքային մասերի (սկսած, համահաւաստում, վիպում և համաւճարում), գաղափարը խոսքի արժանիքների մասին (համառոտություն, հավաստիություն, պարզություն և վայել(ու)չություն)։

Հովհաննես Հոլովի՝ հայերենի ոճական համակարգի ըմբռնումը, առանց էական փոփոխությունների, որդեգրում են 18-րդ դարի առաջին կեսերի նշանավոր մտածողներ Խաչատուր Էրզրումեցին, Մխիթար Սեբաստացին և այնուհետև Ստեփանոս Ադոնցը, որոնցից հատկապես առաջինը իր շատ արժեքավոր «Ճարտասանութիւն» աշխատության մեջ (1713 թ.) զարգացնում է խոսքի մասին մեր մեջ եղած գիտելիքները։ Նա առավել բազմակողմանիորեն, քան ժամանակի և հետագայի հայ հեղինակներից որևէ մեկը, քննում է փոխակերպություններն ու ձևերը, տալով բառերի փոխակերպությունների 7 տեսակ, «ասածուածների» փոխակերպությունների 5, բառերի ձևերի 22 և «ասածուածների» ձևերի 36 հիմնական և 47 «մնացորդաց» տեսակների նկարագրություն, դասակարգում դրանք ըստ առաջացման եղանակների և ըստ կիրառության ոլորտների, նշում խոսքի մեջ դրանցից լավագույն ձևով օգտվելու ուղիները, բացահայտում խոսքի այն թերությունները, որոնք արդյունք են փոխակերպությունների և ձևերի անհաջող գործածությունների։ Հովհաննես Հոլորին են հետևում նաև Մխիթար Սեբաստացին, Ստ. Ադոնցն ու Եփրեմ Սեթյանը (վերջինս՝ 19-րդ դարի առաջին կեսի հեղինակ)։ 19-րդ դարում ուժեղանում է ֆրանսիական գրական ազդեցությունը հայ գիտության վրա, և այս դարում խոսքի արվեստով զբաղվող հայ հեղինակների համար (Էդուարդ Հյուրմյուզ, Ա. Գարագաշյան, Եղ. Մուրատյան, Ս. Գանթարյան, Մ Ասքանազյան և ուրիշներ) ընդհանուրը դառնում է այն, որ նրանց աշխատություններում ~~ոճագիտական~~ ամենակարևոր երկու գիտակարգերը՝ փոխակերպությունները ու ձևերը, որ խոսքական ճարտասանության համակարգում սահմանազատված էին միմյանցից, խառնվում են իրար՝ հանդես գալիս ձև ընդհանուր հասկացության տակ, մի բան, որ մեր կարծիքով, գիտության մեջ ոչ հազվադեպ պատահող, հետընթաց երևույթ պետք է համարել։

Ավելացնենք նաև, որ մինչև XX դարը հայ մտածողները չեն

գրել խոսքի և ոճի տեսությանը նվիրված որևէ ուսումնասիրություն, չեն ունեցել տեսական հարցադրումներ, բնականաբար չեն դրել լեզվի և խոսքի փոխառնչությունների հարց, իսկ խոսքի հարցերը քննության նյութ դարձնող գիտությունները՝ ճարտասանությունը, տրամաբանությունը, պոետիկան, իսկ հետագայում նաև գրականագիտությունը («գրագիտություն») աղատ մուտք ունեին միմյանց բնագավառներ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԽՈՍՔՆ ԻԲՐԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ. ՆՐԱ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ԽՈՍՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

1. Լեզու և խոսք. Ինչպես արդեն ասվել է, Սոսյուրին է պատկանում լեզվի և խոսքի երկհակադրության հիմնադրույթի հաստատումը լեզվաբանության մեջ, որի հիմքի վրա էլ նա առաջ է քաշել արտաքին և ներքին լեզվագիտությունների, լեզվի և խոսքի լեզվագիտությունների, համաժամանակյա և տարաժամանակյա լեզվագիտությունների անհրաժեշտությունը։ Այս սահմանազատման հիմքի վրա նա եկել է այն կարևոր եզրակացություններին, որ լեզուն ունի համակարգային և նշանային բնույթ, որ լեզվի մեջ գործում են իրարամերժ երկու վիճակներ՝ դինամիկան և ստատիկան։ Սոսյուրի կողմից առաջ քաշված այս հարցերը եղել են մեր դարի լեզվագիտության համար կենտրոնական պրոբլեմներ և նշանավորում են լեզվաբանության զարգացման հատուկ փուլի սկիզբը։ Սոսյուրի առաջ քաշած այս պրոբլեմների հիմնահարցը լեզվի և խոսքի երկհակադրությունն է, որն ուղենշել է 20-րդ դարի լեզվաբանության զարգացումը և որին անդրադարձել են աշխարհի շատ անվանի լեզվաբաններ (Օ. Եսպերսեն, Է. Բենվենիստ, Լ. Ելմսլև, Ա. Գարդիներ, Կ. Բյուլեր, Ն. Խոմսկի, Է. Կոսերիոս, Տ. Սիրեոկ, Ն. Տրուբեցկոյ, Ա. Սմիրնիցկի, Պ. Կուզնեցով, Տ. Լոմտև, Վ. Զվեգինցև, Գ. Ջահուկյան և ուրիշներ)։

Սոսյուրյան այս երկհակադրության հիմքը կազմում է այն ըմբռնումը, որ «խոսքային գործունեությունը, որը և՛ անհատի, և՛ հասարակության կյանքում ամենակարևոր գործոնն է, բազմակողմ երևույթ է, որի մեջ հակադրվում են անհատականն ու սոցիալականը, որոնցից մեկն առանց մյուսի անհնար է հասկանալ»։ Ըստ որում «լեզու հասկացությունը ընդհանրապես չի համընկնում խոսքային գործունեությանը. լեզուն միայն խոսքային գործունեության որոշակի մասն է, ճիշտ է՝ կարևորագույն մասը։ Այն հասարակական ձեռքբերում է (պրոդուկտ), կոլեկտիվի կողմից ընդունված անհրաժեշտ պայմանականությունների ամբողջություն և կոչված է ապահովելու լեզվի յուրաքանչ-

յուր կրողի մեջ գոյություն ունեցող խոսքագործունեության կարողության իրացումն ու իրականացումը» (Ф. де Соссюр, Труды по языкознанию, М., 1977, стр. 47)։ Մեծ լեզվաբանն իր միտքը հասկանալի դարձնելու համար լեզուն շատ դիպուկ կերպով համեմատել է շախմատի խաղի հետ, ըստ որում լեզուն խաղի կանոնների ամբողջությունը, խաղակարգն է, լեզվի նյութը՝ շախմատի ֆիգուրները (որոնցից յուրաքանչյուրն ունի իր արժեքն ու արժույթը), և խոսքագործունեության կարողության իրացումն ու իրականացումը՝ ցանկացած ամեն մի խաղ։ Ժնևի համալսարանում դասախոսական կարճ տարիների ընթացքում (1906—1913 թթ.) Սոսյուրը հասցրեց կարդալ միայն լեզու դասընթացը, և երբ նա պատրաստվում էր կարդալ նաև խոսք դասընթացը, հանկարծամահ եղավ։ Այնուհետև պարզվեց, որ իր կարդացած դասընթացից ոչինչ գրի չի առել։ Նրա աշակերտները իրենց ձեռագրերի հիման վրա հրատարակեցին հետագայում լեզվաբանության համար այնքա՜ն մեծ դեր խաղացած «Դասընթացը», որի մեջ սակայն խոսքի մասին ասվածն այնքան կակոնիկ է, որ ուսումնասիրողներին թույլ է տալիս լեզու և խոսք երկհակադրությունը մեկնաբանել իրենց համար ցանկալի կամ նպաստավոր ձևով։ Եվ ահա մեր դարի լեզվաբանության մեջ այդ երկհակադրությունն ըմբռնվել է իբրև սոցիալականի և անհատականի, ընդհանուրի և մասնավորի, վերացականի և թանձրացականի, սխեմայի և ուզուսի, նորմայի և նրանից շեղման, այլ կերպ ասած՝ «նորմայի և ոճի» էության և նրա արտահայտության, փոփոխականի և անփոփոխականի, մշտականի և անցողիկի, կանոնակարգի (установление) և կատարման (процесс), սերող կառույցի (порождающее устройство) և սերման (порождение), համաժամանակության (синхрония) և տարաժամանակության (диахрония), կոդի և հաղորդման, համակարգի և բանահյուսվածքի (текст), հարացույցի (парадигматика) և շարակարգության (синтагматика), հնարավորության և իրականացման, (բնածին) կարողության (compotence) և նրա իրացման (խոմսկու ըմբռնած ձևով), իրավասության (компотенция) և գործածության (употребление), սահմանափակի և անսահմանափակի հակադրություններ։ Ոմանք այդ երկհակադրությունը կապել են Հումբոլդտի energeia-ergon անտինոմիայի, ոմանք էլ՝ Հ. Պաուլի և Գաբելենցի Sprache-Rede հակադրության հետ։

Մեր խնդիրը չհամարելով այս ըմբռնումների լուսաբանությունը, բերենք միայն մեկ-երկու տեսակետ։ Օտտո Եսպերսենը իր «Մարդկությունը, ազգությունը և անհատը լեզվաբանության տեսակետից» (1925, Օսլո) աշխատության մեջ լեզվի և խոսքի տարբերությունը տեսնում է հասարակության և նրան պատկանող անհատի լեզվաբանական սովորությունների, «ժողովրդական» կամ «կոլեկտիվ» բանականության տարբերության մեջ։ Յուրաքանչյուր անհատ տիրապետում է իր «խոսքի» նորմային, որ նա ձեռք է բերում ուրիշների «խոսքերից» քաղած դիտողություններից։ Այս առումով, ըստ Եսպերսենի լեզուն այլ քան չէ, քան բազմաքանակ խոսքեր, ճիշտ այնպես, ինչպես ձի վերացական հասկացությունն է հարաբերում ձիեր հոգնակի հասկացությանը, որոնց հակադրության մեջ տեսնում ենք բոլոր ձիերի ընդհանրությունն ու նմանությունը, իբրև տեսակային հատկանիշ և, միաժամանակ՝ բոլոր ձիերի անմանությունը, յուրաքանչյուր կոնկրետ ձիու տարբերությունը մյուսներից՝ իր եզակի հատկանիշների շնորհիվ։ Այլ կերպ ասած՝ գոյություն ունեն անհատական լեզուներ, որոնց համահավաքությունը տալիս է «ազգային լեզու» հասկացությունը։ Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ Եսպերսենը լեզվի և խոսքի երկհակադրությունը պատկերացնում է իբրև ընդհանուրի և մասնավորի (հնարավոր է նաև՝ վերացականի և թանձրացականի) հակադրություն։

Մոտավորապես այս տեսակետին էր հայ մեծ լեզվաբան Մանուկ Աբեղյանը, միայն այն տարբերությամբ, որ նրա համար գոյություն ունեն միայն ազգային, գրական լեզուներ ու բարբառներ և հասարակական համապատասխան խմբերին պատկանող անհատների անհատական լեզուներ։ Աբեղյանի համար խոսքն իբրև այդպիսին գոյություն չունի. գոյություն ունի անհատի խոսքագործունեությունն, որ նա կոչում է անհատական լեզու։ Այս է պատճառը, որ Աբեղյանը խոսք տերմինը գործածում է ոչ թե անհատի խոսողության, այլ նախադասության իմաստով։

Ա. Գարդինները 1935 թ. լեզվաբանների 3-րդ համաշխարհային կոնգրեսում կարդացած «Խոսքի» և «լեզվի» տարբերությունը վերնագրով զեկուցման մեջ[4] այն միտքն է հայտնում, որ

---

[4] **В. А. Звегинцев**, История языкознания XIX и XX веков в очерках и извлечениях, ч. II. М. 1960, էջ 13—20)

Սոսյուրը ոչ միայն տարբերություն է տեսնում հասարակության լեզվի և նրա յուրաքանչյուր անդամի խոսքի միջև, այլև անհատական «լեզվի» և «խոսքի» միջև։ Բացի դրանից, ինչպես անհատն է ունենում լեզվական սովորույթ, այնպես էլ անհատների խմբերը՝ ըստ աշխարհագրական ոլորտի (Ամերիկայի անգլերեն, Օքսֆորդի անգլերեն և այլն) և ըստ ժամանակահատվածի։ Քննադատելով Եսպերսենին, նա այն միտքն է առաջ քաշում, որ «լեզվական ամեն մի համահավաք նյութ» լեզու չէ, որ լեզվականը և խոսքայինը «տրամաչափորեն հակադիր են միմյանց» և բնորոշվում են իրենց առանձնահատուկ կողմերով։ Այսպես, լեզուն այն է, ինչ կրկնելի է և փոփոխական, այնինչ խոսքը պատմականորեն անկրկնելի, միանգամյա գործողություն է։ Ամեն մի բանահյուսվածքի (տեքստ) մեջ բոլոր այն տարրերը, որոնք կապված են բառերում և դրանց կապակցություններում եղած ավանդականին և օրգանականին, վերաբերում են լեզվին, իսկ այն տարրերը, որոնք պայմանավորված են կոնկրետ հանգամանքներով, արտահայտում են խոսողի մտադրությունը, կապ ունեն իմաստի հետ, խոսքային են։ Գարդինները կարևոր է համարում այս երկու տարբեր բնագավառների երևույթների սահմանազատումը նրա համար, որ լեզվաբանության մեջ տարբերակվեն խոսքային և լեզվական գիտակարգերը միմյանցից, քանի որ դրանք փոխադարձորեն միմյանց բացառող գիտակարգեր են։ Հաճախ է պատահում, որ լեզվաբանության մեջ թյուրիմբռնումների և թյուրիմացությունների պատճառը խոսքային և լեզվային երևույթների ոչ ճիշտ սահմանազատումն ու ոչ ճիշտ տարբերակումն են լինում։ Այսպես, օրինակ. ովքեր նախադասությունը լեզվական գիտակարգ են համարում, այն սահմանում են իբրև բառերի այնպիսի կապակցություն, որն ունի ենթակա և ստորոգյալ կամ դիմավոր բայ, իսկ նրանք, ովքեր նախադասությունը խոսքի միավոր են համարում, ինչպես ինքը՝ Գարդինները, այն սահմանում են իբրև բառ կամ բառերի կապակցություն, որն արտահայտում է հաստատում, հարց, պահանջ կամ բացականչություն։ Եթե առաջին դեպքում նախադասություն դառնում են միայն երկկազմ նախադասությունները, և շարահյուսության ոլորտից դուրս են մնում այսպես կոչված միակազմ նախադասությունները, ապա երկրորդ դեպքում ոչ միայն դատողությունները, այլև այնպիսի միավորներ, ինչպիսիք են իհարկե, իսկապե՞ս, ուշադրությո՛ւն, ափսո՛ս նույնպես դառնում

են նախադասություն և խոսքի համար ունենում են հավասարազոր արժեք և կարևորություն։

Չանդրադառնալով լեզվի և խոսքի փոխհարաբերության շուրջն արտահայտված մյուս տեսակետներին, ասենք, որ լեզվաբանական գրականության մեջ բերվում են խոսքի և լեզվի տարբերակիչ հետևյալ հատկանիշները.

1. Խոսքը բնութագրվում է իբրև անհատական երևույթ, իսկ լեզուն՝ վերանհատական, ընդհանուր երևույթ։

2. Խոսքը հոգեբանական երևույթ է, իսկ լեզուն՝ սոցիալական։

3. Խոսքը շարժուն, դինամիկ երևույթ է, իսկ լեզուն ձգտում է կայունության, անշարժության։ Լեզվի շարժումը արդյունք է խոսքի շարժունության։

4. Խոսքը պատմական երևույթ է, իսկ լեզուն՝ «ոչ պատմական», ապաժամանակային։ Խոսքն անմիջապես կապված է իրացման հանգամանքներից, իր վրա կրում է պատմական և հասարակական միջավայրի ներգործությունը։ Լեզուն այդ ներգործություններից պաշտպանվում է իր նորմայով, որով նա ձգտում է վեր բարձրանալ պատմական և հասարակական անցուդարձի հոսունությունից։

5. Խոսքի տարրերի հարաբերությունները ձևավորվում են պատճառակցական կախվածության, իսկ լեզվի տարրերի հարաբերությունները՝ գործառական (ֆունկցիոնալ) կախվածության հողի վրա։ Միայն ժամանակի մեջ է, որ կարելի է տեսնել այն պատճառները, որ առաջ են բերում խոսքի անընդհատ փոփոխությունները, և այդ փոփոխություններից միայն այն, ինչ ունի գործառական բնույթ, կարող է անցնել լեզվի մեջ։

6. Խոսքը, քանի որ կապված է հոգեբանական, պատմական, սոցիալական և այլ գործոններին, չի կարող արտահայտվել բանաձևերի լեզվով, այնինչ լեզուն կարող է արտահայտվել՝ իբրև տրամաբանական ձևական համակարգ, իբրև բովանդակությունից զուրկ ձևերի հարաբերություններ։

7. Խոսքը լեզվագիտորեն ունի սպորադիկ (պատահական, ոչ կանոնավորապես կրկնվող) բնույթ, այնինչ լեզուն լեզվագիտորեն օրինաչափ երևույթ է՝ կանոնավորապես կրկնվող։ Լեզվում օրինաչափականը արդյունք է կառուցվածքային կազմակերպվածության, իսկ խոսքի «անօրինաչափականությունը»՝ արտալեզվական հանգամանքների։

8. Խոսքին միշտ հատուկ է նյութականությունը, այնինչ լեզուն միշտ հանդես է գալիս իբրև վերացական համակարգ (այս մասին տե՛ս В. А. Звегинцев, Теоретическая и прикладная лингвистика, М., 1968, էջ 104—106):

Լեզվի և խոսքի փոխհարաբերության հարցին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը նախ իր «Լեզվաբանության պատմություն» (հտ. 2-րդ, 1962) և ապա մեծարժեք «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները (1974) աշխատություններում։ Նա լեզուն և խոսքը դիտում է իբրև փոխադարձորեն միմյանց պայմանավորող երևույթներ, որոնք դիալեկտիկական միասնության մեջ բնութագրվում են իրենց որոշակի տարբերություններով։ Նա լեզվի և խոսքի գլխավոր տարբերությունը համարում է այն, որ խոսքը որոշ պրոցես է, իսկ լեզուն՝ այդ պրոցեսի նախադրյալն ու արդյունքը։ Խոսքի երկրորդ գլխավոր տարբերությունը լեզվից անմիջականությունն է։ «Կարելի է ասել, որ այն ամենը, ինչ հանդես է գալիս որպես անմիջական պրոցես, վերաբերում է խոսքին. այն ամենը, ինչ զրկվում է անմիջականությունից, դադարում է պրոցես լինելուց և դառնում հիշողության պահեստային փաստ, վերաբերում է լեզվին։ Լեզվականը խոսքայինն է՝ զրկված անմիջականությունից և պահեստավորված, խոսքայինը լեզվականն է՝ ստացած անմիջական բնույթ և առնված պրոցեսի մեջ։ Այս առումով էլ լեզուն և խոսքը չի կարելի պատկերացնել որպես կողք-կողքի դրված երևույթներ՝ լեզու-խոսք, խոսք, խոսք... հաջորդականությամբ, այլ խոսքի հետ միահյուսված և նրան փոխհաջորդող՝ լեզու-խոսք-լեզու-խոսք... հաջորդականությամբ։ Խոսքի մեջ շատ կրկնվողը և հիշվողը դառնում է լեզվի համար բնորոշ, քիչ կրկնվողը՝ անցողիկ։ Այլ կերպ ասած՝ լեզուն հնարավորություն է տալիս մարդուն խոսել, խոսելը հարստացնում և հաստատում է լեզուն. լեզվական միավորը, ստանալով անմիջականություն, դառնում է պրոցես և հանդես է գալիս որպես խոսքի միավոր, խոսքի միավորը զրկվելով անմիջականությունից՝ վերածվում է լեզվական միավորի» (Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 20—21)։ Սրանից էլ բնականաբար բխում է այն հետևությունը, որ լեզուն կոդ և կառուցվածք կարելի է համարել միայն պայմանականորեն, քանի որ «լեզուն միայն կոդ չէ, այլ նաև հաղորդելի միավորների անընդհատ փոփոխվող և հարստացող ամբողջություն. լեզուն

կառուցվածք չէ, այլ նաև կառուցվող տարրերի անընդհատ փոփոխվող ամբողջություն»։ Բացի դրանից, եթե խոսքը պրոցես է և ծավալվում է ժամանակի որոշ հատվածում, դինամիկ և անցողիկ երևույթ է, զուրկ պատմականությունից, ապա լեզուն «պատմության իսկական կրողն է» (նույն տեղը, էջ 21)։ Գ. Ջահուկյանը լեզվի և խոսքի տարբերիչ կողմեր է համարում «լեզվի կառուցվածքայնությունը (ծավալայնություն) և խոսքի գծայնությունը», «լեզվի ընդհատականությունը և խոսքի անընդհատականությունը» և այլն։

Ինչպես տեսնում ենք, Գ. Ջահուկյանը ևս լեզվի և խոսքի հարաբերությունը քննում է մտածողության պրոցեսից կտրված, թեև ելնելով լեզվի վիճակայնության և խոսքի պրոցեսայնության իրողությունից, Գ. Ջահուկյանը անց է կացնում զուգահեռ լեզվի և գիտակցության և համապատասխանաբար՝ խոսքի և մտածողության միջև։ «Մտածողությունը, ինչպես խոսքը,— գրում է նա,— անմիջական և պրոցեսային բնույթ ունի, գիտակցությունը՝ ոչ. այն ոչ այլ ինչ է, եթե ոչ որոշ առկա վիճակ» (նույն տեղը, էջ 22)։

Բայց ոչ միայն Ջահուկյանի, այլև մյուս լեզվաբանների վերը բերված խոսք-լեզու հակադրությունների մեջ լիովին մոռացության է տրված այն ամենակարևորը, որով պետք է բնութագրվեր ինչպես լեզուն, այնպես էլ խոսքը։ Այդ մտածողությունն է և նրա արդյունքը, որի հաղորդումն էլ կազմում է լեզվի գործառության էությունը։

Եվ, իսկապես, տեսնելով, որ այս տարբերակումների հաշվառման հիման վրա իր գործունեությունը ծավալող կիրառական լեզվաբանությունը մեքենական թարգմանության ասպարեզում բնականաբար որևէ զգալի արդյունքի չի հասել, լեզվաբաններից ոմանք հանգեցին այն եզրակացությանը, որ «նախադասության մակարդակում» խոսքը լեզվից տարբերող հիմնական գործոնն այն է, որ խոսքը միշտ նպատակադրում ունի և միշտ իրավիճակային է։ Ավելի ճիշտ՝ խոսքը և լեզուն բնորոշվում են մտքի նկատմամբ ունեցած իրենց հարաբերությամբ, ըստ որում «լակուսի թղթի նման» միտքն է որոշում՝ գործ ունենք խոսքի, թե լեզվի երևույթի հետ (տե՛ս В. А. Звегинцев, Язык и лингвистическая теория, М., 1973, стр. 238—243)։ Այստեղից այն հետևությունն է արվում, որ լեզվի և խոսքի փոխկապվածության հարցը պետք է լուծվի ոչ միայն լեզվի և խոսքի, այլև սրանց

հետ մեկտեղ նաև մտքի՝ եռամիասնության հաշվառումով (նույն տեղը, էջ 243)։

Լեզվի և խոսքի փոխհարաբերությունը մտածողության հետ ունեցած կապի մեջ է քննել Գ. Սևակը։ Նա գրում է. «Ի՞նչ է լեզուն և ի՞նչ է խոսքը։ Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է նմանակություն անցկացնել լեզվի-խոսքի և մտածողության-մտածության միջև, մանավանդ եթե չմոռանանք, որ այդ երկու երևույթները հանդես են գալիս միասնաբար, անանջատորեն» (Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 28)։ Մտածողությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «մարդու մտածելու պոտենցիալ կարողություն», իսկ մտածությունը՝ «այդ պոտենցիալի դրսևորումը, նրա կիրառումը», երևույթներ, որոնք փոխադարձաբար պայմանավորում են միմյանց, փոխադարձաբար միմյանց հարստացնում և անջատաբար գոյություն չունեն։ Միանգամայն նման փոխհարաբերություն գոյություն ունի լեզվի և խոսքի միջև։ «Մտածողությանը և մտածությանը համապատասխանում են լեզուն և խոսքը իբրև նրանց դրսևորում, նյութական բազա։ Լեզուն վերացական առումով ոչ այլ ինչ է, քան ազգի (տոհմի) խոսելու կարողություն, որը տեղավորվում է բառարանի և քերականության մեջ՝ իհարկե, ոչ լրիվ կերպով և առանց կյանքի։ Խոսքը այդ քերականության և բառարանի օգտագործումն ու կենդանացումն է օբյեկտիվ իրականության արտացոլման պրոցեսում» (նույն տեղում, էջ 28)։ Լեզուն լինելով խոսելու կարողություն, «խոսողություն», չունի նյութական կեցություն, նրա կոնկրետությունը, իսկական գոյը խոսքն է, որ հանդես է գալիս ոչ միայն խոսելու և գրելու ժամանակ, այլև կարդալու, այլև լուռ մտածելու ժամանակ։ Խոսքն «անընդհատ պրոցես է, հոսանուտ գետ, որի մեջ նրա առանձին տարրերը» գտնվում են «անընդհատ փոխազդեցության մեջ» և փոխադարձորեն պայմանավորում են միմյանց։ Հետևաբար, եթե լեզուն երևույթի մեջ ընդհանուրն է, ապա խոսքը՝ մասնավորը, եթե լեզուն վերացականն է, ապա խոսքը՝ թանձրացականը։ Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ Գ. Սևակը խոսքն ըմբռնում է իբրև խոսողության, խոսելու կարողության իրացում, գործառություն, պրոցես, ճիշտ այնպես, ինչպես մտածությունն է ըմբռնում պրոցես, մտածողական կարողության գործադրում, գործառություն իմաստով։

Սակայն իր «Հայոց լեզվի շարահյուսություն» դպրոցական

դասագրքում նա խոսք տերմինը գործածում է այլ նշանակությամբ։ Նա խոսք ասելով այստեղ ըմբռնում է ոչ թե գործառություն, այլ այդ գործառության արդյունքը։ «Բանավոր կամ գրավոր արտահայտված ամեն մի մտածություն կոչվում է խոսք»,— գրում է նա հիշյալ աշխատության 3-րդ էջում (1961 թ. հրատարակություն)։ Զուգահեռաբար այստեղ մտածությունն էլ նա ըմբռնում է նյութական իմաստավորումով, այնքանով որքանով որ մտածությունն առնվում է իբրև մտքերի գումար։ «Եթե հեղինակի կամ խոսողի նպատակն է շատ մտքեր հաղորդել, նա այդ կատարում է ծավալուն խոսքով, որը պարունակում է բազմաթիվ մտքեր (օրինակ, վեպ, պոեմ, զեկուցում և այլն)» արտահայտությունից երևում է, որ խոսքն էլ նա դիտում է իբրև մտքերի գումար ,իրար մոտ դրված մտքեր։ Այսուհանդերձ լեզուն մտածողության, խոսքը մտածության հետ ունեցած կապի և խոսքն իբրև մտածության նյութական արտահայտություն երևույթների ըմբռնումները առաջընթաց կարևոր քայլեր էին լեզվի և խոսքի էությունների ըմբռնման հարցում, նոր տեսակետ լեզվաբանության պատմության մեջ։

Լեզվի և խոսքի փոխհարաբերության ըմբռնման հարցում համանման տեսակետ է պաշտպանում Էդ. Աղայանը, միայն այն տարբերությամբ, որ հստակորեն տարբերակում է լեզու, խոսողություն և խոսք հասկացությունները, ըստ որում նա բնութագրում է լեզուն իբրև «յուրաքանչյուրի մոտ մի ներքին ունակություն, պոտենցիա, որ նրան հնարավորություն է տալիս հաղորդակցվելու ուրիշների հետ», խոսողությունը՝ «լեզվական պոտենցիալի կարողության գործադրությունը» և խոսքը՝ խոսողության՝ լեզվական այդ ունակության գործադրման արդյունքը» (Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1963, էջ 67—71)։

Նկատենք նաև, որ լեզվի և խոսքի հակադրամիասնությանը նվիրված լեզվաբանական գրականության մեջ հստակորեն չի պարզաբանված խոսքային գործունեության էությունը։ Սոսյուրի «լեզու հասկացությունը ընդհանրապես չի համընկնում խոսքային գործունեությանը, լեզուն միայն որոշակի մասն է, ճիշտ է՝ կարևորագույն մասը խոսքային գործունեության» արտահայտությունից պարզ երևում է, որ նա լեզվի և խոսքի հակադրամիասնությունը տեսնում է մի երրորդ երևույթի առկայությամբ և նրա շրջանակներում։ «Խոսքագործունեությունը,— գրում է

նա,— ամբողջությամբ առած բազմաձև և բազմատեսակ է։ Այն դրանից բացի միաժամանակ վերաբերում է և՛ անհատականի և՛ սոցիալականի ոլորտներին» (Սոսյուրի հիշյալ աշխատ. էջ 48)։ Ինչպես Եյմսլևն է ճիշտ նկատել, Սոսյուրը լեզու տերմինի մեջ այլ իմաստ է դնում և լեզվաբանական ավանդույթի հետ կապը չխզելու համար է այդ տերմինը գործածում, այնինչ Սոսյուրին մեկնաբանողները լեզու տերմինն ըմբռնում են ավանդական իմաստով՝ նրա մեջ ներառելով նաև խոսքային գործունեությունը։

Սակայն բանը միայն Սոսյուրի ըմբռնման ճիշտ մեկնաբանելը չէ։ Շատ ավելի կարևոր է լեզվի էության և կառուցվածքի ճիշտ ըմբռնումը, որի լույսի տակ էլ հնարավոր կլիներ պարզել խոսքի էությունը։

Ժամանակակից լեզվաբանության ըմբռնումով, ինչպես արդեն ասվել է, լեզու հասկացությունը դուրս է բերվում նախադասություններից, այսինքն՝ նախադասությունը բաղադրող տարրերից և այդ տարրերի լեզվական հարաբերություններից։ Այս ըմբռնումով «նախադասությունն է լեզվական ստորակարգության և լեզվական գործառության բարձրակետը կամ գագաթը»[5],— ինչպես պնդում են շատ լեզվաբաններ։ «Նախադասությունը այն միավորն է, որի մեջ հանդես են գալիս լեզվական բոլոր իմաստները և ձևերը» (Գ. Ջահուկյան, հիշ. աշխատ., էջ 22)։ Այսպիսի ըմբռնման դեպքում բնական է, որ լեզվաբանները լեզու ասելով հասկանան լեզվի քերականական կառուցվածքը, որն էլ այլ բան չէ, քան լեզվի հարացուցային և շարակարգային հարաբերությունների ամբողջությունը, և նրա տրամադրության տակ դրված բառապաշարը՝ իր կազմության օրինաչափություններով։ Ի վերջո արտաքին-նյութական առումով նախադասությանը և ներքին-կերպավորման առումով հարացուցային և շարակարգային հարաբերություններին է հանգեցվում ամեն ինչ, ինչ որ գոյություն ունի լեզվում։ Այսպիսի ըմբռնումով մարդու լեզվական գործունեությունն սպառվում է նախադասություններ կազմելով, իսկ խոսքը դառնում է ոչ այլ ինչ, եթե ոչ ստեղծվող կամ վերարտադրվող նախադասությունների տնվերջ շարաններ։

---

[5] Տե՛ս, օրինակ, А. Кондратов, Звуки и знаки, изд. 2-е, М. 1978, էջ 174։

Մեր ըմբռնումով այնքանով, որքանով որ լեզուն միջոց է մտածողության գործընթացի և մտածողության գործընթացի արդյունքը ուրիշներին հաղորդելու համար, «խոսքային գործունեության» էությունը ճիշտ հասկանալու համար այն պետք է քննել մտածողական գործունեության հետ ունեցած անխզելի կապի մեջ։ Վերկենդանական՝ մարդկային մտածողությունը լեզվական մտածողություն է։ Չկա մարդկային մտածողություն, մտածողական գործառություն առանց լեզվական կերպավորման, և չկա լեզվական գործառություն, լեզվական կերպավորում առանց մտածողական գործառության։ Մարդու բանական գործունեությունը բարդ ու բազմակողմ գործունեություն է, որը ներառում է և՛ մտածողությունը՝ իր դրսևորումներով, և՛ լեզուն՝ իր դրսևորումներով։ Այն բաղկացած է դատողական, զգայական-հուզական և կամային կողմերից։ Սրանք երեք՝ տարբեր կարգի երևույթներ են, որոնք կազմում են մարդու իմացական և հոգեկան աշխարհը։ Լեզուն միջոց է ոչ միայն ճանաչելու և արտացոլելու աշխարհի իրերն ու երևույթները, այլև դրսևորելու մարդու զգայական-հուզական աշխարհը և նրա գիտակցական ամենաբազմազան ռեակցիաները աշխարհի իրերի ու երևույթների նկատմամբ, նրա ամեն րոպե և ամեն հանգամանքում հանդես եկող վերաբերմունքները, նրա կամքն ու ցանկությունները։ Համապատասխան դրան լեզվում գոյություն ունեն միջոցներ, որոնք ծառայում են մտքի դատողական գործունեության արտահայտմանը, և կան միջոցներ, որոնք ծառայում են զգայական-հուզական և կամային երևույթների արտահայտմանը։

Եթե մի պահ անտեսենք վերջիններս և հարցը քննենք միայն լեզվի այն միջոցների տեսակետից, որոնք ծառայում են ուղեղի դատողական գործունեությանը, ապա կտեսնենք, որ մտածողությունը մարդու մտածելու կարողությունից վերածվում է մտածողական գործընթացի, այսինքն՝ իրականանում է այն դեպքում, երբ որևէ բան (առարկա, երևույթ, խնդիր, հարց) ծառանում է նրա առաջ, դառնում մտածողության նյութ, առարկա։ Այդ նյութի, առարկայի շուրջը որոշակի օրինաչափությամբ հյուսվում են դատողությունները ու մտքերը, դառնում գիտակցորեն կազմակերպված ու ձևավորված ավարտուն ամբողջություն։ Մտածելու

կարողության ամեն մի իրացում մտածություն է: Մտածությունը միշտ երկնշանակ է: Այն մի դեպքում մտածողության իրացումն է, գործառություն, պրոցես, ուղեղի գիտակցական գործունեություն, սակայն միաժամանակ մտածությունը մտածողական գործողության արդյունքն է, դատողությունների այն ամբողջությունը, որը վերաբերում է մտածողության տվյալ նյութին, առարկային: Այս միաժամանակ նշանակում է, որ երկրորդ իմաստով գործածելիս մտածությանը տալիս ենք նյութական նշանակություն, քանի որ այն առնում ենք դատողությունների ամբողջություն իմաստով: Այս իմաստով մտածությունը կարող է ունենալ ֆիզիկական չափումներ (կարող է բաղկանալ քիչ դատողություններից և կարող է բաղկանալ շատ դատողություններից և այլն):

Համապատասխանաբար միանգամայն մտածողության նման լեզուն ևս կարողություն է, տվյալ լեզվին տիրապետող մարդու խոսելու կարողություն: Խոսելու կարողության իրացումը այլ բան չէ, քան մտածելը, որը միշտ լեզվական ձևավորում ունի և դառնում է խոսք: Ուրեմն լեզվի՝ խոսելու կարողության իրացումը, առարկայացումը, նյութականացումը, նրա գոյը խոսքն է, որը մտածության նման երկակի նշանակություն ունի: Այն մի իմաստով խոսելու գործընթացն է, պրոցես, «խոսողություն», խոսելը (եթե բանավոր է), գրելը, խորհելը՝ մտքում խոսելը, խոսելն ընդհանրապես և տվյալ պահին խոսելը: Սակայն մյուս նշանակությամբ խոսք ասելով հասկանում ենք մտածության արդյունքի լեզվական արտահայտությունը, այսինքն դատողություն հանդիսացող նախադասությունների գիտակցորեն կապակցված և կազմակերպված ավարտուն ամբողջությունը, որը ձևավորում է մտքի աշխատանքի շնորհիվ, երբ մտածողական գործողությունը կանգ է առնում կոնկրետ նյութի վրա: Հետևաբար մտածողությունն ու լեզուն, մտածողությունն ու խոսքը և դատողությունն ու նախադասությունը ոչ միայն համանման (անալոգ) հասկացություններ են, այլև հասկացություններ, որ կարելի է ասել՝ միևնույն երևույթներն են՝ տարբեր հայեցակետերի տակ առնված: Այս երկու կարգի, երկու տարբեր բնագավառների երևույթների հարաբերությունը գծապատկերով արտահայտելու դեպքում կունենա հետևյալ տեսքը.



Սրանից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Մտածողությունը և լեզուն թեև տարբեր բնագավառների երևույթներ են, սակայն նրանց իրացումը տեղի է ունենում իբրև միմյանցով պայմանավորված մեկ լեզվամտածական գործառություն՝ իր երկու (մտածական և լեզվական) կողմերով հանդերձ։ Հենց սրա մեջ է թաքնված մտածողական և խոսողական գործունեության բարդությունը։

2. Ինչպիսի ստորակարգությամբ դատողությունն է ստորակարգված մտածությանը, և մտածությունը՝ մտածողությանը, նույնպիսի ստորակարգությամբ նախադասությունն է ստորադասված խոսքին, և խոսքը՝ լեզվին։ Հետևաբար ճիշտ չէ նախադասությունից բխեցնել ողջ լեզուն (այն էլ հաճախ սոսկ դատողություններ հանդիսացող նախադասություններից, ինչպես անում են որոշ լեզվաբաններ, ինչպես սրվել է վաղ անցյալում), նախադասության նյութական և կառուցվածքային բաղադրիչները դարձնել լեզվի բացարձակ համանշանակ։ Ճիշտ է՝ երբեմն նախադասությունը կարող է բարձրանալ խոսքի մակարդակ, բայց սա այնպիսի երևույթ է, ինչպիսին խոսքի մեջ բառի բարձրացումն է նախադասության մակարդակ, սակայն ինչպես բառի երբեմն նախադասության մակարդակ բարձրանալը չի ժխտում նրա՝ նախադասության բաղադրիչ լինելու փաստը, այնպես էլ նախադասության՝ երբեմն խոսքի մակարդակ բարձրանալը չի ժխտում նրա՝ խոսքի բաղադրիչ լինելու իրողությունը։

3. Լեզվի և նախադասության միջև ստորակարգության աստիճանում միջին դիրք է գրավում **խոսքը, որը որևէ** նյութի կամ խնդրի շուրջը կառուցվածքորեն ձևավորված, հոգեբանական հանգամանքներով պայմանավորված, տրամաբանորեն կազմակերպված և որոշակի նպատակի ուղղված մտքերի ամբողջություն է։ *Այդ միաժամանակ ցույց է տալիս, որ* **լեզուն իր բոլոր**

գործառություններ կատարում է ոչ թե նախադասության, այլ խոսքի միջոցով։ Հետևաբար ճիշտ չէ այն պատկերացումը, թե իբրև հաղորդակցումը կատարվում է նախադասության միջոցով։ Մենք հաղորդակցվելիս՝ խոսելիս թե գրելիս, ոչ թե մտքեր ենք հաղորդում, այլ մտածություն, մտածություններ, այսինքն հաղորդակցումը կատարվում է խոսքի միջոցով։ Նախադասությունը հաղորդակցման նպատակին ծառայում է իբրև խոսքի բաղադրիչ, իբրև ոչ հաղորդակցական անկախ միավոր, այլ իբրև մի միավոր, որն իր գոյությամբ պայմանավորված է այլ՝ իր նման և ոչ նման, լեզվական և արտալեզվական միջոցներով ու հանգամանքներով։

4. Լեզվամտածական մի կարգի օրինաչափություններ են իշխում լեզվի կառուցվածքի ստորին մակարդակում, այսինքն՝ յուրաքանչյուր լեզվում գոյություն ունեն նախադասությունը կազմելու որոշակի օրինաչափություններ։ Պետք է ասել, որ թեև նախադասության մակարդակը «ստորին» ենք կոչում, սակայն այնուամենայնիվ այն շատ կարևոր և շատ էական դեր ունեցող մակարդակ է։ Նախադասություն կազմելը մարդու մտավոր գործունեության իսկական թռիչքն է եղել։ Սակայն լեզվամտածական գործառության մեջ այդքան մեծ դեր ունենալով հանդերձ նախադասություն կազմելը դեռևս հաղորդակցում չէ, և դրանով չի ավարտվում մարդու լեզվամտածական գործունեությունը։ Հաղորդակցումը, որ լեզվի կարևոր գործառությունն է, իրացվում, տեղի է ունենում խոսքի միջոցով, որի համար նախադասությունը բաղադրիչ միավոր է։ Այդ նշանակում է, որ այլ կարգի օրինաչափություններ են իշխում լեզվի կառուցվածքի երկրորդ՝ ավելի բարձր մակարդակում, այսինքն՝ առանձին նախադասություններից այլ օրինաչափություններով է ձևավորվում ավարտուն խոսքը, այլ օրինաչափություններ են կառավարում հաղորդակցումը։ Ահա այս օրինաչափությունների ուսումնասիրությունն էլ հենց խոսքի տեսության խնդիրն է։

5. Ի հակադրություն ժամանակակից լեզվաբանության այն ըմբռնմանը, համաձայն որի լեզու ասելով հասկացվում է նախադասությունը և նախադասությունը բաղադրող լեզվական տարրերը ու նրանց քերականական-լեզվիմաստային հարաբերությունները, մենք լեզու ասելով ըմբռնում ենք և՛ նախադասության հիշյալ մակարդակը, և՛ դրան գերադաս լեզվական առավել բարձր՝ խոսքի մակարդակը միասնաբար։ Հետևաբար այն,

ինչ որ կոչվում է լեզվի տեսություն, ոչ թե լեզվի տեսություն է, այլ նախադասության տեսություն։ Այստեղից հետևում է, որ մենք այլ բովանդակություն ենք դնում լեզվի տեսություն հասկացության մեջ։ Մեր ըմբռնումով լեզվի տեսությունն իր մեջ ընդգրկում է տեսության երկու մակարդակներ՝

ա. Նախադասության տեսություն, որ ստորին մակարդակն է, և

բ. Խոսքի տեսություն, որ նրա բարձր մակարդակն է։

Լեզվի կառուցվածքի մեր ըմբռնումից հետևում է, որ մեզ համար այլ բան է նշանակում լեզու և խոսք հասկացություններ-ի հակադրությունը։

Սակայն մինչև այժմ մենք մեր քննությունը կատարում էինք՝ նկատի ունենալով սոսկ ուղղի դատողական գործունեությունը։ Բայց չէ՞ որ մեր մտավոր գործունեությունը միայն դատողական կողմից չի բաղկացած։ Ինչպես արդեն ասվել է, մարդու բանական գործունեության մեջ կարևոր տեղ ունեն նաև զգայությունները, հույզերը և կամքը, որոնք ևս իրենց արտացոլումն ու արտահայտությունն ունեն մտածողության և լեզվի մեջ։ Սրանց արտահայտման համար լեզուն ունի իր միջոցները և հնարավորությունները։ Սրանք անհրաժեշտության դեպքում (կախված խոսքի իրազրությունից, խոսողի հոգեվիճակից, հաղորդման նպատակից և նյութից, խոսակցի և խոսքի նյութի նկատմամբ խոսողի զանազան վերաբերմունքներից և այլն) հյուսվում են դատողական նախադասություններին, որի հետևանքով էլ խոսքը դառնում է մի բարդ համակարգ՝ իր բազմաթիվ երևույթներով։ Հետևաբար և լեզուն ավելի բարդ երևույթ է, քան նրա մասին եղած պատկերացումն է։

2. Լեզվագործածություն, նորմա և նորմավորում։ Յուրաքանչյուր լեզու, լեզվի յուրաքանչյուր տարատեսակ (գրական լեզու, բարբառ, խոսվածք և այլն) ունի լեզվագործածության իր որոշակի կանոններն ու օրինաչափությունները, համապատասխան որոնց էլ տեղի է ունենում հասարակական անհատների հաղորդակցումը։ Լեզվագործածությունը գիտությանը հետաքրքրում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով։ Տեսական առումով այն գիտությանը հետաքրքրում է այնքանով, որքանով որ նրա մեջ է թաքնված ինչպես լեզու և խոսք, այնպես էլ լեզվի համակարգի կայունություն և լեզվի զարգացում ու փո-

փոխություն երկհակադրությունների լուծման հանգույցը[6]։ Դոբծնական առումով այն գիտությանը հետաքրքրում է այնքանով, որքանով որ, նախ՝ նրանով են պայմանավորված գրական լեզվի զարգացման, ինչպես և լեզվական քաղաքականության հարցերը, և այնուհետև, քանի որ գեղարվեստական ու գիտական, պաշտոնական ու մտերմական, հանդիսավոր ու գործարարական, վերամբարձ ու գռեհիկ և այլ կարգի ոճեր արդյունք են միևնույն լեզվի համակարգից տարբեր եղանակներով, տարբեր ձևերով, տարբեր չափերով և տարբեր նպատակներով օգտվելու, ապա նշանակում է, որ լեզվագործածության մեջ է թաքնված ոճ հասկացությունը, որն առանցքային խնդիր է խոսքի մասին ամեն մի գիտության, և առաջին հերթին խոսքի տեսության համար։

Լեզվագործածությունը հաղորդակցվելու, մտածություններն արտահայտելու համար տվյալ լեզվի նյութական ու խոսքի տեխնիկական միջոցներից գիտակցաբար և ենթագիտակցաբար անհատորեն օգտվելն է։ Այն տեղի է ունենում երկու հակասական օրենքների թելադրությամբ և ունի երկու կողմ։ Առաջինն այն է, որ խոսողը կամ գրողը պետք է ենթարկվի այն կանոններին, օրենքներին և օրինաչափություններին, որոնք պարտադրվում են հանրության լեզվական ղդացողության կողմից, որպեսզի հասկանալի լինի ուրիշներին, այսինքն՝ նրանց, ում համար ասվում է, ում ուղղված է խոսքը (անմիջական ընկալողին, ընթերցողին և այլն)։ Այս ավանդապահության օրենքն է, որի պահանջն է պահպանել լեզվական ավանդույթը, սովորույթը և չշեղվել նրա կանոններից։ Երկրորդ օրենքը հակառակ է առաջինին։ Այն լեզվական ավանդույթից ու սովորույթից շեղվելու, ընդհանուր կա-

---

[6] Լեզվաբանական գրականության մեջ լեզվագործածության, լեզվի նորմայի և լեզվի կառուցվածքի մասին առաջ են քաշվել զանազան տեսություններ, որոնք այլ կերպ են մեկնաբանում այդ երևույթների առնչություններն ու փոխհարաբերությունները։ Այս տեսություններին կարելի է ծանոթանալ հետևյալ աշխատություններում ու հոդվածներում. **Ֆ. դե Սոսյուր**, Труды по языкознанию. М. Ф 977, **В. А. Звегинцев**, История языкознания XIX и XX веков в очерках и извлечениях, ч. II, М. 1960, նույն հեղինակի, Теоретическая и прикладная лингвистика, М. 1968, նույն հեղինակի, **Язык и лингвистическая теория**, М. 1973, **П. С. Кузнецов**, О языке и речи (Вестник МГУ, 1961, № 4, стр. 59—65), **Т. П. Ломтев**, Язык и речь (Вестник МГУ, 1961, № №4, стр. 65—70)։

նոնից տարբերվելու միտումն է՝ ավանդախախտությունը[7]։ Պետք է ասել, որ ավանդախախտությունն ընդհանրապես կամայական ձգտման արտահայտություն չէ, թեև գիտակցական ավանդախախտությունը ևս նկատվող երևույթ է։ Ավանդախախտության բուն պատճառները պետք է փնտրել նախ մարդ-անհատի հոգեբանական կերտվածքում. ոչ մի անհատ ո՛չ մտավոր և ո՛չ էլ ֆիզիկական հատկանիշներով մյուսի կրկնությունը չէ. ոչ ոք ոչ մեկի նման չի մտածում, ոչ մեկի նման չի տիրապետում լեզվին, և ոչ ոք չունի լեզվական այն ընկալումն ու արտաքին աշխարհը և իր հոգեկանն արտացոլելու և արտապատկերելու այն կարողությունը, ինչ որ ունի մի ուրիշը։ Ուրեմն այստեղից էլ պետք է եզրակացնել, որ նույնիսկ միևնույն բանի մասին երկու անհատ երբեք նույն ձևով չեն արտահայտվում։ Այնուհետև, զանազան հոգեվիճակներում գտնվելիս մարդ միանման չի արտահայտվում, իսկ մարդու հոգեվիճակները ամբողջ կյանքի ընթացքում երբեք չեն կրկնվում։ Չեն կրկնվում նաև այն իրադրությունները, որոնց պայմաններում տեղի է ունենում խոսքագործունեությունը։ Դրանք միշտ նոր են և միշտ տարբեր միմյանցից։ Եվ քանի որ խոսքը միաժամանակ հոգեվիճակի և իրադրության արտահայտություն է, այդ պատճառով էլ նույնիսկ մեկ անհատի խոսքը երբեք միանման չի լինում։

Ահա լեզվական գործունեության վրա իշխող այս երկու հակադրական օրենքների գործունեությունն էլ որոշում է և՛ լեզվի կայունությունն իբրև համակարգ, և՛ նրա շարժումը, զարգացումն ու փոփոխությունը։

Լեզվի նորման (լատ. norma—ղեկավար սկզբունք, կանոն, օրինակ) լեզվական միջոցների ընտրության և պատմականորեն պայմանավորված ընդհանուր գործածության կանոններն են, որոնք հասարակության կողմից գիտակցվում են իբրև առավել ճիշտ և ընդունելի տվյալ ժամանակաշրջանի համար։ Նորման որոշակի կանոնների ամբողջություն է, որը պարտադրականության ուժ է ձեռք բերում որոշակի ժամանակներում, որոշակի միջավայրում, որոշակի հանգամանքներում։ Նորմաները երբեք տեսակ են լինում։ Կան նորմաներ, որոնք հավաքվում-ամ-

---

[7] Ավանդություն և ավանդախախտություն տերմինները գործածել է Գ. Սևակն իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթացում», իբրև լեզվի զարգացման օրենքներ։ Տե՛ս հիշյալ աշխատության 33 էջը։

փոփվում են օրենսգրքերում, իշխանությունների կողմից ստանում են իրավական ուժ, դառնում պարտադիր հասարակության բոլոր անդամների համար։ Կան նորմաներ էլ, որոնք չեն արձանագրվում օրենսգրքերում և օրենքի ուժ չեն ունենում։ Սրանք կարող են իշխանության կողմից հովանավորվել, կարող են և չհովանավորվել։ Այսպիսի նորմաները սովորույթներ ու ավանդույթներ են և ունեն միայն բարոյական ներգործության ուժ։ Լեզվի նորման այս երկու կարգի նորմաների միջին տեղն է գրավում։ Ի տարբերություն բարոյական նորմաների, ավանդույթների ու սովորույթների, որոնց կանոնները սովորաբար չեն ժողովվում հատուկ աշխատություններում և չեն ուսուցանվում դպրոցներում, լեզվագործածության կանոններն ուսումնասիրվում են մասնագետ գիտնականների կողմից, շարադրվում են գիտական աշխատություններում, դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում, ավանդվում են դպրոցներում և բուհերում, և հանրության անդամն ստանում է անհրաժեշտ ցուցում այն մասին, թե տվյալ լեզվական միավորը, երևույթը և այլն ինչ հանգամանքում, ինչ դեպքում կարելի է գործածել, և որ դեպքում, որ հանգամանքում՝ չի կարելի։ Ի տարբերություն օրենքի ուժ ունեցող կանոնների, լեզվագործածության կանոնները իրավական ուժ չունեն, իշխանությունը չի պատժում նրանց, ովքեր գիտակցաբար զանց են առնում լեզվի նորման կամ անգիտակցաբար սխալվում են և շեղվում նրա կանոններից։

Լեզվական նորման երկու մակարդակ ունի՝ քերականական կամ նախադասության մակարդակի նորմա և խոսքի մակարդակի նորմա։ Սրանք միանգամայն տարբեր բաներ են, և խոսողն ու լսողը տարբեր կարգի պահանջներ են ներկայացնում այդ նորմաներին։

✓ Քերականական կամ նախադասության մակարդակի նորման բաղկացած է հետևյալ ենթանորմաներից.

1. Արտասանության
2. Ուղղագրության
3. Բառերի ճիշտ գործածության
4. Բառաձևերի ճիշտ գործածության
5. Նախադասության կառուցվածքի ճշտության։

Բոլոր այս ենթանորմաներին խոսողն ու լսողը, մասնագետն ու ոչ մասնագետը ներկայացնում են միատեսակ պահանջ. այդ պահանջի չափանիշն է՝ ճի՞շտ է, թե սխալ, թույլատրելի՞ է, թե

ոչ: Ոչ մի ենթամակարդակում սխալն ու ոչ թույլատրելին տեղ չպիտի ունենա նախադասության մեջ: Բարբառային արտասանությունը, շեշտադրությունը և այլն, բարբառային բառերն ու բառաձևերը, նախադասության բարբառային կառուցները տեղ չպիտի ունենան գրական լեզվով խոսողի ու գրողի կազմած նախադասության մեջ, իբրև գրական լեզվին խորթ երևույթներ: Առավել ևս տեղ չպիտի ունենան օտար բառերն ու օտար կառուցները, իբրև տվյալ լեզվին խորթ երևույթներ:

Խոսքի մակարդակի նորման նույնպես ունի իր ենթանորմաները: Դրանք են.

1. Արտասանության

2. Բառերի առավել նպատակահարմար ընտրության և գործածության

3. Հոմանիշ բառերի և հոմանիշ քերականական ձևերի առավել նպատակահարմար ընտրության և գործածության

4. Նախադասության տեսակների ու նրանց կառուցվածքային տիպերի առավել նպատակահարմար ընտրության և գործածության

5. Խոսքի բանակարգի և ծավալի ընտրության

6. Արտահայտման ոճի և ձևի ընտրության

7. Եղանակավորության ընտրության

8. Ձևի և բովանդակության համապատասխանության ենթանորմաները:

Խոսողն ու լսողը, մասնագետն ու ոչ մասնագետը խոսքի ենթանորմաներին ներկայացնում են նախորդից միանգամայն տարբեր պահանջներ և խոսքն էլ գնահատելիս առաջնորդվում են միանգամայն այլ չափանիշներով, որոնք տարբեր են տարբեր հանգամանքներում: Այդ չափանիշներն են.

Վա՞տ է, թե լավ, իսկ ո՞րն է ամենալավը.

Անհարմա՞ր է, թե հարմար, իսկ ո՞րն է ամենահարմարը.

Տգե՞ղ է, թե գեղեցիկ, իսկ ո՞րն է ամենագեղեցիկը:

Այս ձևով չափանիշ են դառնում պա՞րզ է, թե մթին, վերամբա՞ռձ է, թե հասարակ, տեղի՞ն է, թե տեղին չէ, հուզակա՞ն է, թե ոչ, օգտակա՞ր է, թե ոչ, համառո՞տ է, թե ծավալուն և այլ հակադրական գաղափարներ, որոնք առնվում են հակադրության ամենաստորին և ամենավերին աստիճաններով:

Թեև նախադասության մակարդակի նորման ստորադասված է խոսքի նորմային, ուստի և նախապայման է դառնում վերջի-

նիս համար, սակայն նախադասության նորման հեշտությամբ տեղի է տալիս խոսքի նորմային, երբ հակասության մեջ է մտնում նրա հետ։

Որպեսզի ցույց տանք, որ տարբեր են լեզվի այս երկու մակարդակների նորմաները, համեմատության մեջ դնենք այնպիսի ենթանորմաներ, որ գոյություն ունեն երկու մակարդակներում էլ։ Վերցնենք վեց նախադասությունից բաղկացած հետևյալ խոսքը.

Որսորդը գնաց որսի։ Որսորդն ուզում էր մի նապաստակ որսալ։ Որսորդը շատ փնտրեց նապաստակ։ Որսորդը տեսավ մի նապաստակ։ Որսորդն սպանեց նապաստակը։ Որսորդը շալակեց նապաստակը և բերեց տուն։

Այս բոլոր նախադասություններն էլ քերականորեն ճիշտ են կազմված։ Բոլոր նախադասություններում բառերը ճիշտ են ընտրված, և ճիշտ են բառերի կապակցությունները։ Սակայն խոսքի տեսակետից ամենևին էլ այդպես չէ։ Նախադասության կառուցվածքի ճշտությունը առանձին նախադասության տեսանկյունից կարող է բավարարել մեզ, սակայն ամբողջ խոսքի տեսանկյունից՝ չբավարարել, ինչպես այստեղ է. միևնույն բառը միևնույն հոլովով, նախադասության միևնույն անդամի դերում, նախադասության մեջ միևնույն դիրքում գործածվելիս առաջ է բերում կրկնարանություն (տավտոլոգիա), որը խոսքի համար մեծ թերություն է։ Նշանակում է խոսքի տեսանկյունից այստեղ բառերը ճիշտ չեն ընտրված։ Ճիշտ չեն ընտրված նաև բառաձևերը, ուստի կարիք է զգացվում արտահայտման այլ միջոցների, որպեսզի խոսքը բավարարի վերը հիշված պահանջներին։

Դժվար չէ նկատել նաև, որ խոսքի նորման ունի ենթանորմաներ, որոնք հատուկ են միայն խոսքին (խոսքի բանակարգի և ծավալի, արտահայտման ոճի և ձևի, եղանակավորության, ձևի և բովանդակության ենթանորմաները և այլն)։

Ասվածին պետք է ավելացնենք նաև այն, որ եթե նախադասության մակարդակի նորմայի տեսակետից խոտելի են ոչ գրական և օտար բառերն ու քերականական կառույցները, ապա խոսքի նորմայի տեսանկյունից դրանք զանազան նպատակներով թույլատրելի են, իսկ երբեմն էլ՝ անհրաժեշտ։

Նորմավորում։ Լեզվի նորման ձևավորվում է լեզվի զարգացման հետ միաժամանակ և տարբերայնորեն։ Թե պատմական

զարգացման տվյալ ժամանակահատվածում լեզուն ինչ պատկեր կունենա, այդ ոչ այնքան մարդկանց սուբյեկտիվ ցանկություններից է կախված, որքան օբյեկտիվ հանգամանքներից. այդ պայմանավորված է նրա ներքին զարգացման օրինաչափություններով և պատմական այն իրավիճակով, որ դրսից պարտադրվում է հասարակությանը (այլ ժողովրդի կողմից քաղաքական ու տնտեսական ստրկացումն ու նրանից կախվածությունը, մշակութային ազդեցությունները և այլն)։ Այսպես ձևավորվում և այսպես տարերայնորեն զարգանում են ինքնուրույն պետականությունից և ինքնավարությունից զուրկ ժողովուրդների լեզուները, նաև բարբառները, որոնց ձևավորված լեզվական նորմաները ձեռք են բերում ավանդույթի ուժ և հարաբերական կայունություն։ Ինքնուրույն պետականություն և գիր ու գրականություն ունեցող ժողովուրդների գրական լեզուները օտար ազդեցությունների համեմատաբար քիչ են ենթակա, սակայն իշխանությունները անտարբեր չեն գրական լեզվի ճակատագրի նկատմամբ և վարում են լեզվական քաղաքականություն, որի մի հարցն էլ գրական լեզվի նորմավորումն է։

Նորմավորումը գիտակցական միջամտություն է, որով կանոնավորվում է անհատների լեզվագործունեությունը այնպիսի սկզբունքներով, որոնց հիմքում ընկած են արդյունավետությունը, գիտականությունն ու տրամաբանականությունը, խնայողականությունը, պարզությունը և հասկանալիությունը։

Գրական լեզվի նորմավորումը երկու ուղիով է կատարվում։ Առաջինը գրականությունն է, այն լինի գեղարվեստական, գիտական, կրոնական, քաղաքական, թե այլ բնույթի, միևնույն է։ Գրական լեզուն խոշոր մտածողների գրչի տակ կանոնավորվում է, միօրինականում, մշակում ավելի գեղեցիկ, ավելի հաճելի և ավելի կիրթ արտահայտաձևեր, այսպես ասած՝ լեզուն քաղաքակրթության է ենթարկվում։ Կանոնավորվում է նաև նրա ուղղագրությունն ու կետադրությունը, համակարգվում բառերի կապակցության օրենքները և օրինաչափությունները։ Սակայն լեզվում գործում են հակասական օրենքներ. այսպես, օրինակ, դեպի միօրինակություն շարժմանը հակադրվում է բազմազանության ձգտումը, մենիմաստությանը՝ բազմիմաստությունը, համառոտությանը՝ ընդարձակաբանությունը, պարզությանը՝ խրթնաբանությունը, հասարակին՝ վերամբարձությունը և այլն։ Բացի դրանից, գրական լեզուն միշտ գոյություն ունի բարբառի և

գրական լեզվի ժողովրդական տարբերակի առկայության պայմաններում, որոնց ազդեցությունը այս կամ այն կերպ իր վրա է կրում նա։ Եթե սրան էլ ավելացնենք օտար ազդեցությունները, որոնցից, մանավանդ մեր ժամանակներում, համարյա ոչ մի լեզու ի վիճակի չէ խուսափելու, ապա սխալված չենք լինի, եթե ասենք, որ գրական լեզվում միշտ լինում են զուգահեռ ձևեր, զուգահեռ միջոցներ, ուստի և իրացման զուգահեռ հնարավորություններ, որոնք պատճառ են դառնում հետագա արհեստական միջամտությունների։ Այս միաժամանակ նշանակում է, որ նորման պատմական կատեգորիա է և գտնվում է անընդհատ զարգացման ու փոփոխության մեջ, քանի դեռ կենդանի է լեզուն։

Երկրորդ ուղին արհեստական միջամտությունն է։ Այս դեպքում քննարկման առարկա է դառնում այն, ինչ որ վերոհիշյալ պատճառներով դառնում է կամ թվում է անտեղի, ավելորդ, անհեթեթ, անտրամաբանական, կամ ժողովրդի լեզվական ղդացողությանը խորթ։ Իրենց այս գործում մասնագետ համարող մարդիկ, ինչպես և լեզվաբանական հաստատությունները խնդիր են դնում երկրի կառավարության առաջ լեզվի գործող կանոններում այս կամ այն վերափոխությունը կատարել և դրան տալ պարտադրականության ուժ։

Հայոց գրական լեզուն անցել է երկարատև զարգացման ճանապարհ։ Նրա առաջին արտահայտությունը՝ գրաբարը, հենց 5-րդ դարի սկզբից մեզ ներկայացնում է իբրև կանոնակարգված, նորմավորված, գրական մշակման նկատելի ճանապարհ անցած լեզու։ Այդ են հաստատում 5-րդ դարի սկզբի գրականության մեջ ոչ միայն բառերի ուղղագրության միօրինակությունը, բառերի իմաստաբանության որոշակիությունը, այլև արտահայտման կիրթ եղանակների, մի շարք ճարտասանական ձևերի ու փոխակերպությունների և խոսքի բանաստեղծականության մի քանի միջոցների առկայությունը (և համապատասխանաբար դրանց չգոյությունը բարբառներում), երևույթներ, որոնք միայն գրական լեզվի մենաշնորհներ են։ Եվ այսուհանդերձ մեր առաջին գրական լեզուն տալիս է արհեստական ճանապարհով նորմավորելու օրինակ։ Եվ գրաբարի առաջին նորմավորողները եղան Մաշտոցն ու Սահակը։

Գրաբարի բախտին չարժանացավ միջին հայերենը, որի զարգացման ժամանակ թեև ունեինք Կիլիկիայի հայկական թագավորությունը, սակայն գրական լեզվի նորմավորման նշանակալի

առաջընթաց չկատարվեց, իսկ ժամանակներն այնքան անընպաստ էին, որ տարերային նորմավորումն էլ անհամեմատ դանդաղ էր տեղի ունենում։

Գրական լեզվի բախտը անխզելիորեն կապված է ժողովրդի ճակատագրի, նրա բախտի հետ։ Գրական լեզվի զարգացումը կապված է երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական, գիտական, տեխնիկական ու մշակութային կյանքի զարգացման հետ։ Լեզվի նորմավորման գիտակցական միջամտությունը պահանջում է կյանքի դեմոկրատացում, ժողովրդի կյանքի բազմակողմանի առաջընթաց։ Այսպես, սկսած անցյալ դարի կեսերից, երբ կազմավորվում էր մեր նոր գրական լեզուն, թե՛ արևմտահայերենի և թե՛ արևելահայերենի նորմավորման բազմաթիվ առաջարկություններ եղան ուղղագրության, բառերի քերականական ձևերի, բառերի կապակցության ու խնդրառության վերաբերյալ։ Բայց այդ ժամանակ Հայաստանը չուներ ինքնուրույնություն, հայ ժողովուրդը չուներ պետականություն, և այս պատճառով էլ գոյություն չուներ պետական միջամտություն լեզվի նորմավորման գործին։ Այս ժամանակներում մեր լեզվի նորմավորումն ընթանում էր գեղարվեստական ու գիտական գրականության, հրապարակախոսության և մամուլի էջերում։ Սակայն Հայաստանի մի մասում խորհրդային իշխանության հաստատման հետևանքով մեր գրական լեզվի նորմավորման գործը բարձրացավ պետական հովանավորության մակարդակի և դարձավ մեր մինիստրների խորհրդի, լուսավորության մինիստրության, ակադեմիայի, տերմինաբանական կոմիտեի ու տերմինաբանական խորհրդի հոգածության ու հոգատարության առարկա։ Մեր գրական լեզվում անցած վեց տասնամյակների ընթացքում ճշտվել են բազմաթիվ բառերի իմաստներ, վերացվել են 1922 թ. վերափոխությամբ մեր ուղղագրության մեջ առաջ եկած թերությունները, կանոնավորվել է մի շարք տեղանունների, անձնանունների և բաղադրյալ հասարակ ու հատուկ անունների ուղղագրությունը, մշակվել են կանոններ օտար բառերի տառադարձության և շեշտադրության, ինչպես և հայերեն բառերի արտասանության, սահմանվել են գիտության բազմաթիվ բնագավառների վերաբերող տերմինների ուղղագրության և գործածության կանոններ, որոշվել մի շարք բառերի գործածության սլորտներ, գործածությունից մերժվել օտար անհարկի փոխառություններ և այլն։

Նորմավորման խնդիրներից մեկն էլ լեզվաշինությունն է, որ մեր երկրում նույնպես պետական հոգատարության ենթակա գործ է։

3. Խոսքի տրամաբանական և հոգեբանական հիմունքները։ Խոսքը, անկախ նրա ծավալից ու բովանդակությունից, կառուցվածքորեն ձևավորված, հոգեբանական հանգամանքներով պայմանավորված, տրամաբանորեն կազմակերպված ու որոշակի նպատակի ուղղված ավարտուն լեզվական ամբողջություն է։ Խոսքը կազմվում է ուղեղի դատողական աշխատանքի արդյունքից՝ դատողություններից ու մտահանգումներից, որոնք հյուսվում են որևէ հարցի, խնդրի շուրջը՝ մտածելու ընթացքում, կոնկրետ նպատակի պահանջով։ Արդ, ինչպես են հյուսվում մտքերը, ինչպես են կապվում դատողությունները միմյանց։ Դատողությունների կապի երկու եղանակ գոյություն ունի՝ շղթայակցական և զուգադրական։

Շղթայակցական կապ է առաջանում դատողությունների միջև այն դեպքում, երբ մտքերից հաջորդը ծագում է նախորդից, այսինքն երբ հաջորդ դատողությունը նախորդի որևէ գաղափարի ծավալումն է։ Ըստ այսմ նախ առնվում է որևէ նախադրյալ դատողություն՝ իբրև սկիզբ, ապա նախադրյալի որևէ գաղափար (իսկ եթե նախադրյալը մեկ գաղափարից է բաղկացած՝ հենց այդ գաղափարը) ծավալվում-բացատրվում է հաջորդ դատողության մեջ՝ իբրև մտքի ընթացքի համար կարևոր, բայց և մեկնելի գաղափար, այս դատողության որևէ գաղափար էլ՝ իրեն հաջորդող դատողության մեջ և այլն։ Այսպես, օրինակ.

«Այդ խառն աղմկալի միջոցում Սամվելի ասպախումբը անցնում էր Տարոնից դեպի Ռշտունիք տանող ճանապարհով։ Նրա առջևից տանում էին Մամիկոնյան տան դրոշը։ Այդ դրոշը, որ միշտ պահպանել էր յուր անարատությունը, այժմ և պատսպարում էր նրան, և մատնում էր նրան։ Պատսպարում էր, որովհետև ամեն ոք սովոր էր հարգանքով վերաբերվել դեպի նա։ Մատնում էր, որովհետև նույն դրոշի գլխավոր ներկայացուցիչը այժմ անցել էր «ուրացողների» գլուխը։ Դա Սամվելի հայրն էր՝ Վահան Մամիկոնյանը»։ (Ռաֆֆի)։

Այս հատվածի առաջին նախադասությունը նախադրյալ միտքն է, որի ասպախումբը գաղափարի հետ է կապվում հաջորդ միտքը (դրոշը տանողներն այդ ասպախմբից էին)։ Հա-

չորդ նախադասության դրոշ գաղափարը ծավալվում է երրորդ նախադասության մեջ, որի պատսպարել և մատնել գաղափարները ծավալվում են 4-րդ և 5-րդ նախադասություններում, իսկ 5-րդ նախադասության ներկայացուցիչ գաղափարը՝ վերջին նախադասության մեջ։ Բերենք մի ուրիշ օրինակ.

«Մեսրոպի և Հայոց գրերի գյուտի վրա խոսող աղբյուրները կարող ենք բաժանել երկու գլխավոր կարգի. առաջին՝ հին աղբյուրներ և երկրորդ՝ նոր աղբյուրներ։

Հին աղբյուրներ ենք կոչում այն բոլոր մեծ ու փոքր գրությունները, որոնք գտնվում են մեր հին մատենագրության մեջ այս ու այնտեղ ցրված. սրանցից միայն երկուսը կամ առ առավելն երեքը (Կորյուն, Ղազար, Խորենացի) կարող են ժամանակակից կամ մոտավոր աղբյուրներ համարվել և այս պատճառով բանասիրական տեսակետով ամենից ավելի արժանահավատ ու վստահելի աղբյուրներ են։ Մնացյալ գրությունները այնքան վելի հեռու են վավերական համարվելուց, որքան մոտենում են նորագույն ժամանակներին։ Եթե խիստ քննադատական աչքով նայենք այս համեմատաբար հետին գրությունների վրա, ստիպված պիտի լինենք կասկածել նրանց արժանահավատությանը» (Հ. Աճառյան)։

Այստեղ ևս հետևողականորեն բացահայտվում են աղբյուրները, ապա՝ հին աղբյուրները, ապա՝ գրությունները և այլն։

Երբեմն էլ հաջորդ նախադասության մեջ ծավալվում է նախորդում զեղչված, բայց հասկանալի գաղափարը։ Օրինակ՝ Նա մտավ տուն, բայց տանը ոչ ոք չկար (հասկացվում է, որ տուն մտավ մեկին հանդիպելու համար)։

Շղթայակցական կապի միջոցով մտքերի ծավալումն ու զարգացումը մտածելու սովորական եղանակն է։ Այն միաժամանակ համեմատաբար ազատ եղանակ է, չի կաշկանդված պայմանականություններով և կարող է հանդես գալ բազմազան տարբերակներով։ Բերենք մի երկու օրինակ՝

Գովերգում եմ այն երաշտը, որ մղում է ջրանցք շինել,
Այն ջրանցքը, որ չի շինվում արյան գնով,
Այն արյունը, որ թափվելիս զուր չի թափվում,
Այն թափվելը, որ վերստին հավաքելու հնար ունի,
Այն հնարը, որ չի խաբում,
Այն խաբելը, որ մղում է չեղած ճիշտը որոնելու,
Որոնումը, որ ի վերջո չի հասցնում մոլորումի,

Մոլորումը, որ ակամա վերջանում է մի նոր գյուտով... (Պ. Սևակ):

Դժվար չէ նկատել, որ այս բանաստեղծական հատվածը ստեղծված է բացահայտվող գաղափարի կրկնումով, որոնք էլ կազմում են մտքերի կապակցման օղակները։ Հետևյալ օրինակում մտքերը զարգանում են այնպես, որ կապվող օղակներում հանդես են գալիս հանգիտությամբ կապված գաղափարներ.

Ես վիճում եմ զավակի հետ,
Այն զավակի,
Որ իր մորը փող է տալիս դատարանով...
Ես վիճում եմ ավագի հետ,
Այն ավագի,
Որ կրտսերից ինքը պիտի խելք հավաքի,
Մինչդեռ նրան իր ետևից
Քարշ է տալիս հաստ պարանով...
Պիտի վիճեմ
Եվ երգի դեմ,
Թե բռնի են երգել տալիս խեղճ երդողին.
Եվ բերքի դեմ,
Թե չի սնում բերք ու բարիք հավաքողին.
Եվ վերքի դեմ,
Թե չի բուժում, այլ վարակում,
Եվ ճերկի դեմ,
Թե ծածկում է, չի նորոգում... (Պ. Սևակ)

Գոյություն ունեն շղթայակցական կապի մի շարք տարատեսակություններ, որոնք արդյունք են հասկացությունների զուգորդումների (ասոցիացիա) տարբեր տեսակների գոյության, հատկապես նմանության, առընթերության, կցորդման, ընդլայնման, նեղացման, հակադրության, պատճառահետևանքային կապի և այլն։

Զուգադրական կապով են զարգանում մտքերն այն դեպքում, երբ հաջորդ դատողությունը կամ միտքը նախորդի որևէ գաղափարի ծավալումը, մեկնումը չի հանդիսանում, այսինքն դատողությունների կապը միմյանց բառային կապով չի արտահայտված։ Զուգադրական կապով են զարգանում մտքերը հետևյալ բանաստեղծության մեջ.

Գարուն

Դաշտը զմրուխտ է հագել,
Ճամփան կանաչ է կապել,
Ծառն է փթթել, ճերմակել,
Ի՞նչ սիրուն ես, գարո՛ւն։

Կանաչ բարդին է նազում,
Առուն հեքիաթ է ասում,
Եղեգներն են երազում,
Ինչքա՞ն խորն ես, գարո՛ւն։

Հին աշխարհն ես նորոգում
Ու կիսավեր իմ հոգում
Սիրո նոր հուր բորբոքում...
Ա՜խ, ի՜նչ խենթն ես, գարո՛ւն։ (Պ. Պողոսյան)

Կապը դարձյալ զուգադրական է, եթե որևէ գաղափար կրկնվում է, սակայն նրա ընդլայնումը, ծավալումը չէ, այսինքն՝ եթե այդ գաղափարը միշտ առնչվում է նոր նշանակությամբ։ Այսպես, օրինակ՝

Ուրիշ ձկներ են ջրում,
Ուրիշ ջրով են ջրում
Սիրած մարգերս։

Ուրիշ աչքեր են լալիս,
Ուրիշ ձեռքեր են գալիս
Սեղմում ձեռքերս։

Ուրիշ հավքեր են թռչում,
Ուրիշ ցողեր են թրջում
Հոգնած ոտքերս։

Ուրիշ լավեր են քայլում,
Ուրիշ ցավեր են այրում
Ուրիշ վերքերս...

(Հ. Սահյան)

Դժվար չէ նկատել, որ ի տարբերություն շղթայակցական կապի, մտքերի զարգացման զուգադրական եղանակն ինչ-որ չափով արվեստական է և պահանջում է մտքի ավելի մեծ բևեռում՝ առանձին դատողությունները տրամաբանական ընդհանուրի բերելու համար։

Մտքերի զարգացման հիշյալ երկու եղանակներով էլ կարող են կազմվել առանձին ամփոփ խոսքեր, սակայն առավել հաճախ խոսքի մեջ դրանք հանդես են գալիս միասնաբար։ Այսպես է, օրինակ, հետևյալ հատվածներում.

Բարի նախանձով նրան եմ հիշում,
Որ չի մոլորվում անթափանց մութում,
Ով չի վհատվում երկար վերելքից,
Չի հուսահատվում վայրի տարերքից,
Ով ստի հանդեպ բերան չի փակում,
Ով հոտած ջրում ուռկան չի ձգում,

Չի նայում կյանքին իրրև բոստանի,
Որտեղից պիտի չաղ բաժին տանի... (Պ. Սևակ)

Այս հատվածի մեջ առաջին տողի նրան գաղափարը ծավալված է հաջորդ վեց նախադասություններում, որոնք միմյանց կապված են զուգադրական կապով։ Շղթայակցական կապով են կապված ոչ միայն առաջինին հաջորդ վեցը, այլև վերջին՝ յոթերորդ միտքը վեցերորդին։ Նույն բանն ենք տեսնում նաև հետևյալ հատվածում.

Ինչպես չհոգամ աշխարհի մասին,
Եթե նա իմն է, իմն է, իմպեսին,
Թե նրա վատը նաև իմ վատն է,
Նրա հավատը և իմ հավատն է,
Նա իմն է եղել և իմն է մնում.
Նա էր մոր նման ինձ երեկ սնում,
Նա է ինձ տվել քնքշանք ու գորով,
Նա է ներշնչել ինձ ուժ ու կորով,
Նա է ինձ ազնիվ-անազնիվ դարձնում... (Պ. Սևակ)

Այս հատվածի 2—9-րդ տողերի մտքերը մեկնում են առաջին նախադասության աշխարհ գաղափարը, որը և շղթայակցական կապի արտահայտություն է, իսկ հաջորդ ութ մտքերը միմյանց կապվում են զուգադրական կապով։

Քանի որ մտքերի զուգադրական կապը բառ-հասկացությունների անմիջական կապ չէ, այդ պատճառով էլ շղթայակցական կապը կարող է ընդհատվել զուգադրականով։ Օրինակ՝

Զինվորները խուռն բազմությամբ հավաքվում էին հանդիսատես լինելու։

Հայտնվեցավ մովպետան-մովպետը, շրջապատված յուր ճերմակազգեստ մոգերով։ Տիրեց ընդհանուր լռություն: *Անցավ նա հրապարակի վրա, ձեռքը բարձրացրեց և, դառնալով դեպի կանանց շարքերը, խոսեց.*

— *Ձեր ամուսինների համառությունը ձեզ այդ նախատական վիճակի մեջ դրեց։ Դուք քավում եք նրանց մեղքերը։* Մեծ է արյաց արքայից արքան, և անբավ է նրա գթությունը: *Նա ձեզ ներումն կշնորհե, և դուք վերստին կվայելեք ձեր նախկին փառքն ու պատիվը, եթե կկատարեք նրա բարձր հրամանը։* (Ռաֆֆի):

Այստեղ «Տիրեց ընդհանուր լռություն» նախադասությունը բաժանում է իրենց առաջ և հետ գտնվող նախադասություններ-

ր միմյանցից, որոնք կապված են միմյանց շղթայակցական կապով։ Նույն ձևով զուգադրական կապով է կապված Մեծ է արյաց արքայից-արքան, և անբավ է նրա գթությունը։ Նա ձեզ ներումն խնդրեսցե *մտքերը զուգադրական կապով են կապված և բաժանում են իրենցից առաջ և ետ գտնվող մտքերը միմյանցից, որոնք կապված են շղթայակցական կապով։*

Անկախ նրանից, թե խոսքի մեջ դատողություններն ինչ ձևով են զարգանում, նրանք գտնվում են մեր մտքի գործունեության՝ գիտակցության հսկողության տակ։ Այդ հսկողության հետևանքով մենք ճիշտ ենք ըմբռնում ոչ միայն ամփոփ խոսքի մեջ միմյանցից առանձնաբար հանդես եկող մտքերի ներքին օրգանական կապը, այլև նույնիսկ բառերի ոչ սովորական շարադասության հետևանքով միմյանցից կտրված գաղափար-հասկացությունների կապը նախադասության մեջ։ Ճիշտ չէ այն պատկերացումը, թե խոսողության գործընթացն ունի երկու կողմ՝ խոսող և ընկալող։ Այս պատկերացումը բավարար չէ, որովհետև խոսողի (գրողի) գործունեությունը երկակի գործունեություն է՝ ստեղծման և վերահսկման, *այսինքն՝ յուրաքանչյուրն իր խոսքի առաջին ընկալողն ու վերծանողն է, անկախ այն բանից, որ իր ունկնդիրն ու ընթերցողը ևս ընկալում և վերծանում են։ Մտքի գործունեությունը գիտակցության միջոցով վերահսկում է մեր մտածողության և խոսքի գործունեությունը՝ դրանք միմյանց համապատասխանեցնելու համար, քանի որ մտածությունը և խոսքը տարբեր բնագավառների երևույթներ լինելով՝ նույնական չեն։*

Գիտակցությունն ունի մի շատ կարևոր հատկություն։ Այդ ընկալելիս լեզվական արտահայտությունը, լեզվական կառույցը տրամաբանական կառույցի վերածելու և արտահայտվելիս տրամաբանական կառույցը լեզվական կառույցի, լեզվական կաղապարի վերածելու հատկությունն է, տրամաբանական ուղղակին լեզվական փոխակերպությամբ արտահայտելու և լեզվական փոխակերպությամբ արտահայտվածը տրամաբանական ուղղակիի վերածելու հատկությունը։ Ահա մի օրինակ՝

Նադիր Շահը զորք հավաքեց — Հե՜յ, քաջ Թաթո՛ւլ, կանչեց շահը,
Զորք հավաքեց անհամար, Անմա՞հ էիր քեզ կարծում.
Ծկավ Թըմկա բերդը պատեց Ծ՛կ, բերել եմ ես քո մահը,
Ինչպես գիշերն էն խավար։ Ի՞նչ ես թառել ամրոցում։

(Հ. Թում.)

Այստեղ տրված լեզվական կառույցը չի համապատասխանում տրամաբանականին։ Տրամաբանական պարզ կառույցով արտահայտելու դեպքում այն կլինի՝ Նադիր շահը մեծ զորքով ամուր շրջապատեց Թմկաբերդը և հոխորտալով Թաթուլին կռվի հրավիրեց։

Սկսած ամենապարզ կազմություն ունեցող նախադասություններից և վերջացրած ծավալուն խոսքով՝ յուրաքանչյուր լեզվականի հիմքում տրամաբանականն է, այսինքն՝ լեզվական ամեն մի կառույց իր հիմքով տրամաբանական է։

Գիտակցությունը խոսքի նկատմամբ իր հսկողությունն իրականացնում է՝ ելնելով նրանից, թե տվյալ խոսքն ինչ բավարարություն է տալիս իր մտավոր պահանջներին, որոնք են՝ ինֆորմացիայի հարստությունը և թարմությունը, հասկանալիությունը, որոշակիությունը, ճշտությունը, տեղինությունը, անհակասականությունը, պատճառակցությունը, հետևողականությունը և այլն, որոնք միաժամանակ մտքի չափանիշներն են խոսքի գնահատման համար։

Գիտակցությունն իր հսկողությունն իրականացնում է ուղեղի մտապահման ու հիշողության կենտրոնի օգնությամբ։ Մտապահումն ու հիշողությունը օգնում են ոչ միայն միմյանց կապելու խոսքի սկիզբը, մեջն ու վերջը, այլև կարգ են մտցնում ամբողջ խոսքի մեջ, մտածողությանը տրամադրում ինչպես լեզվական համակարգերի ու բառապաշարի ողջ հարստությունը, այնպես էլ մեր պատկերացումների, տպավորությունների և գիտելիքների գանձարանը։

Թե ինչու տվյալ խոսքի համար հենց այս բառերը, արտահայտման հենց այս ձևերը, խոսքի հենց այս կառուցվածքը, արտահայտման հենց այս եղանակը, այս հաջորդականությունը, այս տոնը, այս չափն է ընտրվում և ոչ թե մի ուրիշը, կախված է մի շարք հանգամանքներից, որոնց մեջ կարևոր են խոսողի կամքը, նպատակադրումը, ինքը՝ խոսքի առարկան, խոսքի առարկայի նկատմամբ խոսողի վերաբերմունքը, այն ամենաբազմազան հանգամանքները, որոնց առկայությամբ և ուղեկցությամբ տեղի է ունենում խոսքը։ Այս բոլորը դառնում են հոգեբանական հիմունք խոսքի համար, ըստ որում, խոսքի կառուցվածքն ու բովանդակությունը իրենց վրա կրում են հիշյալ հանգամանքների կնիքը՝ որքան իբրև պատասխան խոսողի գիտակցական ռեակցիայի, այնքան էլ՝ իբրև արտահայտություն ենթա-

գիտակցականի։ Մարդը հոգեկան արարած է, հոգեբանական մի շարք հանգամանքներ միշտ ուղեկցում են մարդուն՝ թե՛ իբրև խոսողի կամ գրողի և թե՛ իբրև ունկնդրողի կամ ընթերցողի։ Թե՛ խոսելիս ու գրելիս, թե՛ ունկնդրելիս ու կարդալիս մարդ միշտ առաջնորդվում է իր անձնական և հասարակական (դասային, ազգային և այլն) պահանջմունքների ու շահերի թելադրանքով։ Այդ պահանջմունքների մի մասը խոսքից ստացած օգուտն է՝ նյութական թե բարոյական, իսկ մյուս մասը՝ գեղագիտական պահանջմունքներին ու հետաքրքրասիրություններին բավարարություն տալը։ Խոսքը միշտ անմիջական կամ հեռավոր նպատակ է հետապնդում, պաշտպանում շահեր, ծառայում շահերի։ Եթե խոսքը չի ծառայում մարդուն հետաքրքրող պահանջմունքներին, շահերին ու նպատակներին, դադարում է հետաքրքրություն ներկայացնելուց, այդ շահերին խանգարելու դեպքում՝ դառնում վնասակար։ Ուրեմն խոսողը (գրողը) իր միջավայրի ու շրջապատի հետ փոխկապվածության մեջ է գտնվում։ Մարդը միաժամանակ և հասարակական (սոցիալական) արարած է և անհատականություն։ Սոցիալականը անհատից պահանջում է ենթարկվել ընդունված կարգին, հասարակական սովորույթներին ու ավանդույթներին, բայց նրա անհատականությունն էլ պահանջում է յուրովի վարքագիծ հանդես բերել ամեն տվյալ հանգամանքում, երբեմն էլ խախտել ընդհանուր ներդաշնակությունը։ Ոչ մի անհատ իր մարմնական ու մտավոր տվյալներով, նյարդային համակարգի անհատական առանձնահատկություններով և հոգեկան կերտվածքով ու բնավորությամբ նման չէ մի ուրիշ անհատի։ Խոսքի անհատականության համար կարևոր են հենց այս առանձնահատկությունները։ Մյուս կողմից էլ խոսքը մարդու հոգեբանական խառնվածքի ու բնավորության դրսևորումներից է։ Հոգեբանական յուրաքանչյուր խառնվածքի համապատասխանում է խոսքի որոշակի տիպ։ Հոգեբանական խառնվածքի հիմքը կազմում են զգացմունքների դրսևորման արագությունը, չափը, ուժը, տևականությունն ու կայունությունը։ Դեռևս Հիպոկրատի ժամանակներում խառնվածքները բաժանվել են չորս տիպ՝ սանգվինիկ, խոլերիկ, մելանխոլիկ և ֆլեգմատիկ։ Թեև սանգվինիկն աչքի է ընկնում զգացմունքների արագ դրսևորումով, արտաքին գրգիռներին տրվող պատասխանների անմիջականությամբ, մի հոգեվիճակից մի այլ հոգեվիճակի կտրուկ անցումներով, սակայն նրա զգացումները թույլ են, ան-

կայուն և ոչ տևական։ Այդ պատճառով էլ սանգվինիկի խոսքը լինում է զգացմունքային, արտահայտիչ, բայց մեծ մասամբ չկշռադատված, չհավասարակշռված։ Խոլերիկ հոգեբանական տիպին պատկանող մարդիկ արտաքին գրգիռներին տալիս են անմիջական, ուժեղ պատասխաններ, ունենում են անկուսակ վարք, բռնկվող են և հանդուգն։ Այս տիպին պատկանող մարդկանց խոսքը լինում է կտրական, զգացմունքային, հուզական, արտահայտիչ, սակայն չհավասարակշռված, հանդուգն։ Մելանխոլիկը դրսևորում է ուժեղ ապրումներ և հույզեր, որոնք հանդես են գալիս ոչ անմիջապես, սակայն դրանք տևական են և կայուն։ Նրա զգացմունքները մի վիճակից մյուսին արագ չեն փոխվում։ Մելանխոլիկի խոսքը զգացմունքային, հուզական չէ, սակայն դատողական է, չափավորված ու հավասարակշռված։ Ֆլեգմատիկը դանդաղաշարժ է, արտաքին ազդակներին տալիս է թույլ պատասխաններ, ինքնամփոփ է, քիչ է ոգևորվում և քչախոս է։ Նրա խոսքը տեղի է ունենում դադարներով, դժվարությամբ։ Նրա խոսքն անարտահայտիչ է, միապաղաղ, սակայն խոհուն է, հետևողական։

Ոչ միայն անհատները, այլև ժողովուրդներն ունեն հոգեբանական կերտվածքներ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում ինչպես անհատների հոգեբանության, այնպես էլ նրանց խոսքի մեջ։ Մեր ազգային բնավորության աչքի ընկնող կողմերից մեկը ամեն ինչի նկատմամբ արագ դրսևորվող անմիջականությունն է, երևույթների նկատմամբ անտարբեր չմնալը։ Անցյալում լակոնացիք հայտնի էին իրենց ոճի համառոտությամբ (լակոնական ոճ), արևելյան որոշ ժողովուրդներ՝ իրենց մանվածապատ ոճով և այլն։ Ազգային ոճերի արտացոլման հիանալի օրինակներ են տալիս հայ գրողներից Ե. Աբովյանը («Վերք Հայաստանի» վեպում), Պ. Պռոշյանը («Հունսյում»), Շիրվանզադեն («Քառասում»), Բաֆֆին («Սամվելում») և ուրիշներ։

Խոսքի համար կարևոր գործոն է մարդու հոգեվիճակը։ Տարբեր հոգեվիճակներում մարդու հոգեկան կարողությունները կարող են փոխվել։ Սովորական հոգեվիճակում գտնվելիս մարդ կարող է սովորական գործեր կատարել, նրա խոսքն էլ սովորականի սահմաններից այն կողմ չի անցնում։ Մարդ կարող է գրտնվել նաև հոգու վերացման, հափշտակվածության անսովոր վիճակի մեջ։ Այս դեպքում, երբ նա ապրում է մեծ ոգևորություն, խանգավառության պահերին նրա միտքն ընդունակ է դառնում

ստեղծագործական թռիչքների։ Այնպես ինչպես լուսնոտը կարող է քայլել տների քիվերի վրայով, իսկ առողջ մարդն անընդունակ է նման բանի, այդպես էլ ոգևորության և խանդավառության մեջ միտքն ընդունակ է դառնում անսպասելի թռիչքների։ Գեղարվեստական ու գիտական արտասովոր մեծ ստեղծագործությունները ծնունդ են մտքի հափշտակվածության, խանդավառության ու ոգևորության այդպիսի պահերի։ Այս ճանապարհով է խոսքը սովորական ինֆորմացիայից բարձրանում արվեստի ու գեղարվեստի մակարդակի և դառնում կյանքն արտացոլելու ու կյանքի վրա ներազդելու հզոր միջոց։

Մարդու հոգեկանն անընդհատ փոփոխվող երևույթ է՝ կապված տարիքի, դաստիարակության, կրթության, գեղագիտական ըմբռնումների, միջավայրի և այլ արտաքին ազդակների փոփոխության ներգործության հետ։ Դրա հետ միաժամանակ ամեն տարիք իր գեղագիտական պահանջմունքներն ունի։ Պատանիներին ու երիտասարդներին ընդհանրապես գրավում է զարդարուն, հուզական, արտահայտիչ, բանաստեղծական, թեթև, առավել այլաբանական խոսքը, այնինչ մեծերին, հատկապես բարձրը մտավորականությանը՝ տրամաբանական-խոհական, ծանրակշիռ, լուրջ և այլաբանություններից զուրկ վսեմ խոսքը։ Այնուհետև, մարդկությունը հոգեկանական տարբեր հանգամանքների համար մշակել է արտահայտման տարբեր ձևեր։ Ուրախ պահերին (խնջույք, հարսանիք և այլն) արտահայտման մի տեսակ է պատշաճում, հանդիսավոր պահերին (միտինգ, համագումար և այլն)՝ մի տեսակ, մի այլ տեսակ՝ տխրության սեղանին, բարեկամի կամ թշնամու հետ վիճաբանելիս՝ ուրիշ տեսակ և այլն։ Այս բանում կարևոր դեր ունեն մեր հույզերն ու զգացումները, որոնք շատ հաճախ իրենք են թելադրում, թե լեզվական ինչ միջոցներով պետք է արտահայտվի ասելիքը։ Մեր և՛ դրական հույզերն ու զգացումները (սեր, գորով, ուրախություն, հիացմունք, զարմանք, նախանձավառություն և այլն), և՛ բացասական հույզերն ու զգացումները (ատելություն, զայրույթ, վախ, ամոթ, տխրություն, տառապանք և այլն) ոչ միայն հիմք են դառնում խոսքի այս կամ այն կառուցվածքի և ձևի համար, այլև դրանք թթաններ են արտահայտման և ինքնարտահայտման համար։ Այնուհետև, փոխադարձ համապատասխանություն և կապ գոյություն ունի մի կողմից լեզվական ձևերի ու միջոցների և մյուս կողմից կրքերի, կամքի և զգայությունների միջև,

այսինքն՝ համապատասխան ապրումներ, զգայություններն ու հույզերը մեզ թելադրում են լեզվական այս կամ այն միջոցի, խոսքի այս կամ այն տեխնիկական հնարավորության ընտրությունը, արտահայտման այս կամ այն եղանակին դիմելը, բայց և մյուս կողմից՝ համապատասխան լեզվական միջոցները, խոսքային կառույցները և այլն մեր մեջ առաջ են բերում համապատասխան զգայություններ ու հույզեր:

Մարդու հոգեկան աշխարհն ունի խոսքի նկատմամբ իր գեղագիտական պահանջմունքները՝ չափավորությունը, համաչափությունը, ուժը, քնքշությունը, ճոխությունը, շքեղությունը, հաճելիությունը, բազմազանությունը և այլն, որոնք և այն չափանիշներն են, որոնցով գնահատվում է խոսքի գեղագիտական կողմը:

Այս բոլոր երևույթների հիմքն ու աղբյուրը մեր ուղեղն է՝ մեր մտավոր ու հոգևոր գործունեության կենտրոնը, որը գործելիս (իսկ այն գործում է, քանի դեռ չի քնած)՝ խոսելիս ու գրելիս, ունկնդրելիս ու կարդալիս միաժամանակ բազմաթիվ գործողություններ է կատարում, որոնց մեջ կա և՛ նպատակադրում ու պատճառաբանում, և՛ վերաբերմունք ու գնահատություն, և՛ ընտրականություն ու կողմնորոշում, և՛ զատորոշում ու մեկնաբանում, և՛ համեմատություն ու հակադրություն, և՛ տարրալուծում ու համադրում, և՛ վերլուծություն ու եզրահանգում, և՛ հիշողության մեջ ամրագրում ու հիշողության զտում և այլն:

4. Արտահայտություն և բովանդակություն: *Լեզուն կոչված է արտահայտելու և արտացոլելու նյութական աշխարհի իրերի ու երևույթների առնչություններն ու հարաբերությունները: Յուրաքանչյուր ժողովուրդ դարերի ընթացքում մշակում է լեզվական արտահայտամիջոցներ ու եղանակներ, ստեղծում աշխարհի լեզվական ընկալման իր ձևերը, որոնք ձեռք են բերում պարտադրական բնույթ տվյալ լեզվով խոսող անհատների համար: Այսպես, օրինակ, գոյականների բաժանումը երեք քերականական սեռերի՝ արական, իգական ու չեզոք, և սրան համապատասխան էլ բայերի և գոյական վերադիրների՝ գոյականի հետ սեռային համաձայնությունը ռուսաց լեզվում վերապրուկ են հին ժամանակների լեզվամտածողության, մտածողական կաղապարներ, աշխարհի ըմբռնման ձևեր, որ այսօրվա յուրաքանչյուր ռուսերեն խոսողի համար պարտադիր օրենք են, թեև*

գոյաբանական սեռերի ըմբռնումը խիստ տարբեր է քերականականից։ Ուրեմն՝ մի բան է աշխարհի լեզվական ընկալումը, մի այլ բան՝ իրական աշխարհի իրերն ու երևույթները, նրանց միջև գոյություն ունեցող առնչություններն ու հարաբերությունները։ Դարերի ընթացքում լեզուն ստեղծում է աշխարհի իրերի ու երևույթների արտացոլման ու արտահայտման բազմազան միջոցներ ու հնարավորություններ, որոնց արտաքին վերաբերությունների տակ ըմբռնում ենք իրական աշխարհի իրերն ու երևույթները և նրանց առնչություններն ու հարաբերությունները։ Այս նշանակում է, որ յուրաքանչյուր խոսքի մեջ գործ ունենք երկու կարգի երևույթների հետ՝ նյութական կյանքը և նրա արտացոլումը, որ կազմում է խոսքի **բովանդակությունը**, և նյութական կյանքի լեզվական դրսևորումը, որ կազմում է խոսքի **արտահայտությունը**:

Արտահայտությունը և բովանդակությունը երկու տարբեր երևույթներ են։ Սրանք մի կողմից փոխադարձորեն պայմանավորված են միմյանցով, մյուս կողմից էլ հակադրվում են միմյանց, քանի որ միևնույն արտահայտությունը կարող է տարբեր բովանդակություններ ունենալ, և միևնույն բովանդակությունը կարող է ունենալ տարբեր արտահայտություններ։ Մենք արդեն տեսանք, որ մտածության լեզվական արտահայտությունը միշտ չէ համատեղվում մտքի տրամաբանական կառույցին։ Այդ ոչ միշտ համատեղելիության պատճառը մի կողմից իր՝ լեզվի բնույթի մեջ է, իսկ մյուս կողմից լեզվագործածությունն է։ Սովորական առտնին զրույցում, ուսուցողական ու գիտական խոսքերում ընդհանրապես աշխատում ենք լեզվական արտահայտությունը հնարավորին չափով մոտեցնել մտքի տրամաբանական կառույցին, սակայն գեղարվեստական խոսքի որոշ տեսակներում արտահայտությունն ու բովանդակությունը կարող են միմյանցից տարբեր լինել։ Արտահայտության և բովանդակության չհամատեղվելու դեպքում առաջ է գալիս երկու կարգի բովանդակություն՝ արտաքին և ներքին։ Բերենք մի օրինակ.

Կարծիք

Հրաշքով փրկված հովվի շներից,
Հոգնատանջ գայլը սրտի մեջ լալով՝
Լեռան կատարն էր բարձրանում նորից,
Սովից ոտքերը հազիվ քարշ տալով։

Իսկ հեռվից նրան տեսնող մարդիկ էլ
Ահա թե ինչպիսի վճիռ են հանում.
— Մի տես անտերը ինչքան է կերել,
Որ տեղից շարժվել չի կարողանում։ (Պ. Պողոսյան)

Այս առակի ներքին բովանդակությունը՝ բավական է որ մեկի անունը մի բանում դուրս գա, անմեղ լինելու դեպքում էլ նրան դարձյալ հանցավոր կհամարեն, հասկանում ենք մեր գիտակցության օգնությամբ։ Ուսումնառությամբ ու կենսափորձով ձեռք բերած մեր գիտելիքները, մեր մտքի դատողականությունը մեզ օգնում են ըմբռնելու այլաբանական եղանակով ասված խոսքերի՝ առակի, հեքիաթի, հանելուկի, առասպելի և այլն, ներքին բովանդակությունը։

Արտահայտությունը ներքին և արտաքին բովանդակություններ է ունենում նաև բանաստեղծական խոսքում, ինչպես, օրինակ, Վ. Տերյանի հետևյալ բանաստեղծության մեջ է.

Սարի հետևում շողերը մեռան.
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ.
Տխուր երեկոն զարկել է վրան.
— Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ ե՛կ։
Խորհրդավոր է երկինքն երազուն.
Վարսաթափ ուռի, դողդոջուն եղեգ.
Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում.
Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ ե՛կ։
Ծաղիկներն ահա քնքուշ փակվեցին,
Բացվեցին երկնի ծաղիկներն անհաս.
Սև տագնապներն իմ սիրտը լցրին.
— Արդյոք ո՞ւր ես դու, իմ անուշ երազ։
Սիրտ իմ, այդ ո՞ւմ ես դու իզուր կանչում,
Տես՝ գիշերն անցավ, աստղերը մեռան,
Մենավոր իմ սիրտ, մոլորված թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան...

Բանաստեղծական խոսքում ներքին բովանդակությունը երբեմն այնքան նուրբ ու անորոշ է լինում, որ դատողություններին, տրամաբանական կառույցի վերածելու դեպքում կարող է իր իմաստը լիովին կորցնել։

Այս նշանակում է, որ բանաստեղծական խոսքում երբեմն

կարող է կարևորություն ստանալ ոչ այնքան այն, թե ինչ է ասվում, այլ այն, թե ինչպես է ասվում։ Սրան պետք է ավելացնենք այն, որ որոշ հասունացումից հետո մարդ ամեն ինչի մեջ այլաբանություն է տեսնում։

Բացի սրանից, լեզուն միջոց է ոչ միայն մտքեր, մտածություններ, այլև զգացումներ և ապրումներ, հույզեր և նույնիսկ կրքեր արտահայտելու համար։ Տերյանը մեր այն եզակի բանաստեղծներից է, որը մեր լեզվի ամենասովորական ու ամենաառօրեական բառերով ստեղծեց զգացմունքային ու հուզական բովանդակություն ունեցող բանաստեղծություններ, մինչև այն աստիճան հուզական, որ որոշ դեպքերում անհնար է լինում տրրամաբանական կառույցի վերածել։

Ներքին բովանդակությունը տարբեր է լինում գաղտնախոսություններում (թարսերեն, մնջերեն, հծծերեն, ծտի լեզու և այլն) և գաղտնագրերում ու ծածկագրերում։ Ի տարբերություն նախորդների, գաղտնագրերն ու ծածկագրերը վերաբերում են միայն գրավոր լեզվին և ունենում են վերծանման բանալի, առանց որոնց իմացության շատ դժվար, երբեմն էլ անհնար է լինում ներքին բովանդակության ըմբռնումը, իսկ արտաքին բովանդակությունը, եթե այն կա, կարող է լինել և անիմաստ։

Եթե բանաստեղծական խոսքում ներքին և արտաքին բովանդակությունների գոյությունն արդյունք է մտածողության հատուկ եղանակի, ապա գաղտնախոսություններում և գաղտնագրություններում այն արդյունք է միտումնավորության, խոսքի միտումնավոր կառուցվածքի։ Միտումնավոր են լինում հորինված նաև այն քաղաքական, գիտական, գեղարվեստական խոսքերը, որոնց ոչ թե ամբողջ բովանդակությունը, այլ առանձին մտքեր քաղաքական անազատության պատճառով և գրաքննությունից խուսափելու նպատակով անց են կացված լինում գաղտնաբար և միայն կարող են կռահվել. այս դեպքի համար է, որ ասվում է՝ մտքերը կարդացվում են տողերի արանքում։

5. **Խոսքի դրսևորումները:** Նախադասությունից մեծ լեզվաբանական միավորի հարցը հետաքրքրել է շատերին, առավել նրանց, ովքեր զբաղվել են ոճի հարցերով։ Ռուս լեզվաբանության մեջ այդպիսի միավորի մասին առաջին անգամ խոսել է Պոտեբնյան։ Նա այդ միավորը կոչում է խոսք (речь)։ Պեշկովսկին առաջ է քաշում ենթյունարանական նախադասու-

թյան գաղափարը, որը կազմվում է շեշտային առանձին հատվածների սիստեմատիկ կրկնություններից, որով խոսքի մի հատված տարբերվում է մյուսներից՝ իբրև արտասանական մի ամբողջություն։ Պեշկովսկին այն անվանում է նաև ասվածք (сказ), Օվսյանիկո-Կուլիկովսկին՝ շարահյուսական ամբողջություն (синтаксическое целое), Գիպպիուսը՝ դարձվածք (фраза), Ն. Ս. Պոսպելովը՝ բարդ շարահյուսական ամբողջություն (сложное синтаксическое целое), նաև՝ պարբերություն (абзац), գրականագետ Լ. Ի. Տիմոֆեևը այդպիսի միավոր է համարում բանահյուսվածքը (контекст)։ Ոմանք անորոշ ձևով գործածում են կապակցված խոսք (связная речь), արձակ տուն (прозаическая строфа) և այլն։ Արտասահմանյան լեզվաբաններից Ջ. Ֆիրսը այն կոչում է գերշարահյուսական միավոր, որն այլ բան չէ, քան բանահյուսվածքի անդամատումից ստացված տրամաբանական-իմաստաբանական ամբողջություն կազմող միավորը, այլ կերպ ասած՝ պարբերությունը, Դ. Ս. Ուորտը՝ արտահայտություն, որով նա հասկանում է այնպիսի շարահյուսական ամբողջությունը, որը համատեղում է նախադասության հարացուցային և շարակարգային հայեցակետերը[8]։ Ռուս իրականության մեջ այժմ հաճախ են գործածում բանահյուսվածքի լեզվաբանություն (текстуальная лингвистика) հորջորջումը[9]։

Հայ իրականության մեջ այս մասին առաջին անգամ խոսում է Սալլանթյանը։ Նա գրում է. «Ըստ տարածութեան նիւթոյն մտածեալ խօսակցութիւն մարդոյ բաժանի յերիս տեսակս՝ որք են նախադասութիւն, պարբերութիւն և ճառ»։ Նա նախադասությունը կոչում է նաև «տուն խօսից» և սահմանում իբրև «հիմն և բաղադրիչ ամենայն ընդ արձակ խօսակցութեանց մանաւանդ թէ նոյն իսկ էական խօսակցութիւն», «պարբերությունը» (իմա պարբերույթ)՝ «խօսակցութիւն բաղկացեալ յերկուց կամ յերից նախադասութեանց զմիմեանց կախելոց և ընդ իրեարս յօդիւ և թուով շաղկապելոց», իսկ «ճառը»՝ «ընդարձակ խօսակցութիւն բաղկացեալ ի բազում պարբերութեանց ըստ

---

[8] **Ю. В. Ванников**, Синтаксис речи и синтаксические особенности русской речи, М., 1979, էջ 35:

[9] Филологические науки, 1985, № 3.

իրեարս կապելոց և ի մի նպատակ ուղղելոց»[10]։ Եթե նկատի չունենանք պարբերության ոչ ճիշտ ըմբռնումը (համարյա յուրաքանչյուր բարդ նախադասություն մի «պարբերություն» է համարվում), ապա Սալլանթյանի մտքերը հետաքրքրություն են ներկայացնում այն առումով, որ նա նախադասությունը համարում է «տուն խօսից» և հիմք ու բաղադրիչ» ամեն մի ընդարձակ խոսքի, «ճառը» դիտում մի նպատակի ուղղված «ընդարձակ խօսակցութիւն», որը բաղկացած է պարբերություններից, իսկ սրանք էլ՝ նախադասություններից։ Սալլանթյանի այս ուշագրավ միտքը մեր գիտության մեջ մնացել է աննկատ։ Մեր դարի 30-ական թվականներին նախադասության և նրան դերադաս լեզվական միավորի փոխհարաբերության հարց է դրել Գ. Սեակը իր «Շարահյուսության մի քանի հարցեր մարքս-լենինյան իմացաբանության լույսի տակ» հոդվածում (Ն. Մառի անվան Լեզվի ինստիտուտի Աշխատությունների ժողովածու, հտ. IV, 1939)։ Այստեղ նա նախադասությունը համարում է խոսքի միավոր, խոսքի բաղադրիչ, իսկ խոսքը՝ առանձին մտքերից միահյուսված՝ արտահայտված կամ հաղորդված մտածություն։ Այստեղ խոսքի կարևոր հատկանիշ Գ. Սեակը համարում է այն, որ մտքերը հանդես են գալիս իբրև ավարտուն, ամբողջական մտածություն որևէ նյութի մասին։ Այդ պատճառով էլ խոսքը բնութագրվում է ոչ թե իր ծավալով, այլ ավարտվածությամբ։ Ըստ այսմ «մի ընդարձակ վեպ և մի փոքրիկ ոտանավոր, մի ընդարձակ դասախոսություն և մի փոքրիկ հաղորդում հավասարապես դիտվում են իբրև ինքնուրույն անկախ խոսքեր»։

Քանի որ խոսքը կառուցվածքորեն ձևավորված, հոգեբանական հանգամանքներով պայմանավորված, տրամաբանորեն կազմակերպված ու որոշակի նպատակի ուղղված ավարտուն լեզվական ամբողջություն է, որ արտահայտում է մեկ մտածություն, հետևաբար թե՛ իր արտահայտության և թե՛ իր բովանդակության դրսևորումներով միանման լինել չի կարող։ Այս ձևակերպումից երևում է, որ խոսքը արտահայտված մտածություն է։

Կան գիտնականներ, որ խոսքը բաժանում են արտաքին և ներքին խոսքերի (արտաքին և ներքին լեզուների, ինչպես Հր. Աճառյանը)։ Չարտահայտված մտածությունը մտածություն է,

---

[10] Մ. Սալլանթյան, Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց, Մոսկվա, 1827 թ., էջ 3։

մտորում է, խոհ է, բայց ոչ խոսք։ Խոսքն այն մտածությունն է, որ արտահայտվում է՝ անկախ արտահայտության ձևից, տեսքից, չափից և այլն։

Բուն արտահայտման եղանակի կամ կերպի խոսքը լինում է բանավոր, գրավոր և ձայնագրված։ Բանավոր խոսքն աչքի է ընկնում իր անմիջականությամբ և կենդանությամբ։ Այն գրավորի համեմատությամբ անմշակ է, ավելի ենթակա վրիպումների, բայց գրավորի նկատմամբ ավելի հարուստ է հնչերանգի ու ձայներանգի տվյալներով, ունի առոգանական լիակատար հագեցվածություն։ Բանավոր խոսքն ուղղված է անմիջական ունկընդրին, անկախ նրանից ունկնդիրն իր դիմաց է, թե ռադիոյի կամ հեռուստացույցի առաջ, հետևաբար այն չի նախատեսվում կրկնվելու, վերարտադրվելու համար։ Բանավոր խոսքը կարող է ընդմիջվել անմիջական ունկնդրի կողմից, ուստի և կարող է շեղվել իր սովորական ընթացքից, ավելի շատ է ենթակա շրջապատի հանգամանքներին։ Այն ավելի իրադրական է, այդ պատճառով էլ հաճախ ավելի հուզական է լինում, երբեմն էլ՝ զեղչական (էլիպտիկ)։ Բանավոր խոսքը համեմատաբար թույլ է փաստարկված լինում, որովհետև նախապատրաստված խոսք չէ, թեև կարող է լինել նաև նախապատրաստված, կարող է նաև փաստերով հագեցված լինել։ Գրավոր խոսքը ավելի մշակված է, նախապատրաստված, համեմատաբար քիչ վրիպումներով ու սխալներով։ Կառուցվածքով էլ այն գերազանցում է բանավորին, չունի սրա հնարավոր ավելորդաբանությունները և խորդուբորդությունները։ Գրավոր խոսքը կարող է ուղղված լինել ինչպես իր ժամանակակցին (սովորաբար այսպես էլ լինում է), բայց կարող է ուղղված լինել գալիքի մարդկանց։ Այն կրկնելի է, երկարատև կյանք կարող է ունենալ, եթե օժտված է խոսքի արժանիքներով։ Գրավոր խոսքը չունի բանավորի հնչերանգային հագեցվածությունը, որի հետևանքով կարող է երկիմաստությունների տեղիք տալ։ Այն համեմատաբար քիչ իրադրական է, համեմատաբար քիչ է ենթակա միջավայրի ազդեցությանը, առավել ազատ է ունկնդիրների՝ ընթերցողների միջամտությունից, սակայն ավելի մեծ պատասխանատվություն է պահանջում գրողից։ Գրավոր խոսքը ձգտում է փաստացիության և ճշտության, այն լեզվական առումով ավելի բազմազան է և հարուստ։ Գրավոր խոսքը (չհաշված բացառությունները) կա-

ռուցվում է գրական լեզվի կանոններին ու օրինաչափություններին համապատասխան, գործածում է վերջինիս ոչ միայն բառերն ու քերականական ձևերը, այլև այնպիսի արտահայտամիջոցներ ու կաղապարներ, որոնք տեղ չունեն բանավոր խոսքում։ Գայնագրված խոսքը ունի և՛ գրավորի և՛ բանավորի առանձնահատուկ կողմերը։ Այն մի կողմից կենդանի խոսք է՝ իր ձայնային-առոգանական հարուստ տվյալներով, մյուս կողմից էլ գրավոր խոսքի պես կրկնելի է, երկարակյաց, եթե ունի արժանիքներ։

Ըստ պատկանելության խոսքը լինում է սեփական, հեղինակային, ուրիշի և ներքին։

Սեփական խոսքը արտահայտում է խոսողի կամ գրողի խոհերը, մտածությունները, հույզերն ու ապրումները։ Սա մտածության արտահայտման, բանավոր և գրավոր հաղորդակցման հիմնական ձևն է։ Այն արտաբերվում է առաջին դեմքի կողմից, և աշխարհը նրա մեջ ներկայանում է խոսողի կամ գրողի եսի դիրքերից։ Անկախ նրանից, թե ում կամ ինչին է վերաբերում խոսքը, խոսող կամ գրող անձը ներկայացվող երևույթների, իրադարձությունների կենտրոնում է, կամ նրա հայեցակետից են ներկայանում աշխարհի իրերն ու երևույթները, նրանց առնչությունները ու հարաբերությունները, որոնք անցնում են նրա ըմբռնումների պրիզմայով, կերպավորվում ըստ նրա ընկալումների, արժեքավորվում նրա գնահատանքով։

Խոսքը սեփական է ոչ միայն այն դեպքում, երբ մեկն է խոսում կամ գրում (գիտական ուսումնասիրություն, ճառ, դասախոսություն, հոդված, գեղարվեստական ստեղծագործություն և այլն), այլև այն ժամանակ, երբ հաղորդակցվում են երկու և ավելի անհատներ։ Այս դեպքում ևս յուրաքանչյուրի խոսքը ձևավորվում է իբրև սեփական խոսք։ Այսպես է, օրինակ, դրամատիկական երկերում։

Սեփական խոսքի տարատեսակ է հեղինակային խոսքը, որն այսպիսին է դառնում գեղարվեստական ստեղծագործության որոշ տեսակներում (պոեմ, պատմվածք, վեպ և այլն), որոնց մեջ հանդես են գալիս գրական կերպարներ։ Այսպիսի խոսքերում հեղինակը հանդես է գալիս ոչ միայն սյուժետային գործողության զարգացման ընթացքի, երևույթների և իրադարձությունների պատկերողի, այլև դրանց և կերպարների գործողությունն-

ներին միջամտողի դերով։ Սրանով միմյանց հետ հանդես են գալիս երկու կարգի սեփական խոսքեր՝ միևնույն խոսքի մեջ՝ հեղինակի և գրական կերպարների։ Հեղինակային խոսքը դրամատիկական ստեղծագործության մեջ համարյա լիովին կորցնում է իր առաջատար դերը և վերածվում հիմնականում սյուժետային գործողության զարգացման հետ չկապված որոշ իրավիճակների, դրությունների, արտաքին ձևավորումների, գործող անձանց նկարագրերի պատկերման միջոցի։ Դրամատիկական ստեղծագործությունների մեջ հեղինակային խոսքը կոչվում է ռեմարկ։

Ուրիշի խոսքը ասված կամ գրված համառոտ խոսք է կամ միտք, մտքեր, որոնք քաղվածաբար բերվում են սեփական խոսքում զանազան նպատակներով։ Ուրիշի խոսքը երկու ձևով է հյուսվում սեփականին. ա) անկախորեն, նույնությամբ, ինչպես ասված կամ գրված է, առանց իմաստի և արտահայտման ձևի փոփոխության (սա կոչվում է ուրիշի ուղղակի խոսք), և բ) արտահայտման ձևի փոփոխությամբ՝ սակայն իմաստի պահպանումով (սա կոչվում է ուրիշի անուղղակի խոսք)։ Ուրիշի ուղղակի խոսքի դիմում ենք այն մեր ասելիքի նախադրյալը դարձնելու կամ խոսքին դիպուկություն, իմաստնություն, գեղեցկություն, շուք ու փայլ տալու համար։ Ե՛վ մեկ, և՛ մյուս նպատակներով է, օրինակ, Հ. Թումանյանը գործածել Ֆիրդուսու հետևյալ ասույթը «Թմկաբերդի առումը» պոեմում.

Էսպես է ասել հնուց էդ մասին
Ֆարսի բյուլբյուլը՝ անմահ Ֆիրդուսին.
Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,
Թե չինին
Կինն ու գինին։

Ուրիշի խոսքի դիմում ենք նաև այն դեպքում, երբ որևէ գաղափար անհրաժեշտ է հաստատել, հավաստել, համոզիչ դարձնել, մանավանդ եթե դա միակ փաստարկն է, արժեքավոր է իր հավաստիության պատճառով, կամ մեր փաստարկները բավարար համոզիչ չեն։ Նարեկացին հաճախ է դիմում Աստվածաշնչում արտահայտված մտքերին՝ իր ասածը հավաստելու նպատակով, ինչպես.

Ավելի լավ չէ՞ր, ինչպես որ Գիրքն է ասել
Նախօրոք,

Ո՛չ սաղմնավորվել բնավ արգանդում,
Ո՛չ ձևավորվել որովայնի մեջ,
Ո՛չ ծնունդ անել, ո՛չ լույս աշխարհ գալ
Ո՛չ մարդկանց թվում երբևէ գրվել,
Ո՛չ հասակ առնել, աճել, զարգանալ,
Ո՛չ գեղապատկեր դեմքով զարդարվել,
Ո՛չ օժտվել խոսքով, բանականությամբ,
Քան թե ենթարկվել այսքան սաստկագույն
Ու սարսափելի տառապանքների,
Որոնց դիմանալ կարծրակոփ ժայռերն անգամ
չեն կարող,
Ո՞ւր մնաց տկար մարմինները լույծ։

Այսպես են նաև բոլոր քաղվածքները, մեջբերումները, վկայակոչումները, վկայաբանությունները հատկապես գիտական, քաղաքական, փիլիսոփայական, դավանաբանական գրականության մեջ։ Վերոհիշյալ նպատակներով մեջբերումներ կատարում ենք հեղինակավոր գրողներից, բանաստեղծներից, մեծ մըտածողներից, հեղինակություն դարձած գրքերից և այլն։ Սակայն ուրիշի խոսքի ենք դիմում նաև այն ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում վերլուծություններ կատարել, նաև ուրիշների մտքերը հերքել, նրանց մեղադրել, դատապարտել և այլն։ Այս դեպքում պարտադիր չէ, որ առնենք հեղինակավոր անձանց մտքեր, ընդհակառակն, նման դեպքերում մեծ մասամբ գործ ենք ունենում ոչ յուրայինի, հակառակորդի կամ թշնամու հետ, որոնք մեզ համար (կամ տվյալ հարցում) հեղինակություն համարվել չեն կարող։

Ուրիշի խոսքը կարող է դառնալ բնաբան, որը հեղինակավոր աղբյուրից քաղված միտք է, որ գրողը դարձնում է իր համար ուղեցույց գաղափար, և կամ այն միտքն է, որ խթանիչ դեր է ունեցել տվյալ խոսքի համար։

Ներքին խոսքը միայն գրավոր խոսքում հանդես եկող երևույթ է, այն էլ բացառապես գեղարվեստական գրականության մեջ հանդես եկող։ Ներքին խոսքն արտաքուստ հեղինակային խոսքի բաղադրիչ տարր է, իսկ ներքուստ գրական կերպարի մտքերն ու խոհերն են, նրա չարտասանված մտորումները։ Սա ռուս լեզվաբանական գրականության մեջ կոչվում է несобственная прямая речь, որ թարգմանաբար կնշանակի ոչ սեփական

ուղիղ խոսք, բայց մենք հարմար ենք գտնում կոչել ներքին խոսք, քանի որ այն հանդես է գալիս իբրև չարտաբերված մտորում։ Ահա ներքին խոսքի մեկ-երկու օրինակ.

Միայն մայրական զգաստ աչքերն էին, որ նկատում էին աղջկա հետզհետե նիհարելը, գունատվելը։ Ինչո՞ւ, տե՛ր աստված, չէ՞ որ Շուշանիկը այժմ ավելի լավ է ապրում, քան առաջ՝ քաղաքում, չէ՞ որ նրանք այժմ կուշտ ճաշ էլ ունին, տաք բրճակարան էլ, մինչև անգամ ծառա էլ։

Շուշանիկը դառնորեն ժպտում էր. լա՛վ է ապրում, այո՛, ի՞նչ ասել կուզի։ Ո՞րն է այդ ապրուստը. հիվանդ հոր ավելի կծու մրմունջնե՞րը, նորեղբոր ավելի կոռացած մե՞ջքը, թե այն շրջապատող ամայությունը, ուր թառամում է Շուշանիկի ծաղիկ կյանքը։ Ո՛չ, նա այլևս անկարող է դիմանալ այս միատեսակ կյանքին, նրա հոգին որոնում է ազատություն մանր-մունր հոգսերից, առօրյա կարիքներից և ձգտում դեպի անծանոթ աշխարհ։

— *Ա՛խ, մամա՛, մամա՛, ի՞նչ կլիներ, որ ինձ թողնեիք գոնե մի ամսով հեռանալ այս տնից։* (Շիրվանզադե)

Այս հատվածում ընդգծված մտքերը (նախ Շուշանիկի մոր, ապա Շուշանիկի) ասվում են իբրև խոհեր, որ չեն արտասանվել, սակայն դրանք այնպես են հյուսված հեղինակային խոսքին, որ ձևականորեն հեղինակային խոսքից չեն տարբերվում։ Ահա մի օրինակ էլ Ն. Զարյանի «Հացավան» վեպից, որտեղ ընդգծվածը գրական կերպարի մտքերն են.

Վարդանն սկզբում ակամա, հետո հետաքրքրությամբ լսում էր Յոթծովիմերանի տեղեկանքները գյուղի անցուդարձի և հարաբերությունների մասին։

Եթե այդ կնոջ պատմածների մի քառորդն էլ ճիշտ դուրս գա, Վարդանը մի լավ հուպ կտա կոլխոզի «օրինակելի» նախագահին։

Ներքին խոսքը մեր գրականության մեջ համեմատաբար նոր երևույթ է և նկատվում է անցյալ դարի երկրորդ կեսից հետո հանդես եկած արձակ ստեղծագործություններում, ըստ երևույթին իբրև արդյունք հոգեբանական վեպի զարգացման։ Հնարավոր է, որ այն կապված է ստեղծագործելու պահին գրողի ունեցած հոգեկան ապրումների հետ։ Բանն այն է, որ մեր բոլոր արձակագիրները չէ, որ դիմում են ներքին խոսքի, իսկ դիմողներն էլ ոչ բոլոր ստեղծագործությունների մեջ են դիմում։ Այսպես,

օրինակ, մեր գրողներից Նար-Դոսն ու Ստ. Զորյանը տալիս են մեկ-երկու օրինակ, մյուս գրողները ամենևին չեն տալիս, Ն. Զարյանն իր «Հացավան» վեպի յուրաքանչյուր 100 էջում շուրջ 26 անգամ դիմում է ներքին խոսքի, իսկ Շիրվանզադեն «Քառասում»՝ շուրջ 42 անգամ, և այս գրողները ներքին խոսքի ամենևին չեն դիմում իրենց մյուս երկերում կամ հազվադեպ են դիմում։

Ըստ արտահայտման ձևի խոսքը լինում է մենախոսություն կամ երկխոսություն (տրամախոսություն)։ Դիտական ուսումնասիրությունները, ճառերը, զեկուցագրերը, գանազան հաղորդումները, հաղորդագրությունները, բանաստեղծությունները մենախոսություններ են։ Մենախոսությունը տեղ ունի նաև դրամատիկական ստեղծագործություններում։ Առտնին խոսքը, մտերիմների հետ ունեցած զրույցը, ասուլիսը, դրամատիկական ստեղծագործությունները, բազմակերպար գեղարվեստական երկերը՝ վեպերը, պոեմները և այլն, կամ երկխոսություններ են, կամ էլ մենախոսություններ և երկխոսություններ։ Երկխոսություններն առավել հակված են դեպի բանավոր խոսքի, իսկ մենախոսությունները՝ գրավոր խոսքի առանձնահատկությունների կողմը։

Տրամախոսությունը ավելի բնական արտահայտությունն է մարդու լեզվական գործունեության, բան մենախոսությունը։ Տրամախոսությունն ավելի իրադրական է, կենդանի է ու շարժուն, իր բնույթով՝ սինկրետիկ, այնինչ մենախոսությունը անհատի ներքին խոհի հետ է կապվում, այդ պատճառով էլ չունի նրա դրամատիզմը։ Ավելի ճիշտ՝ տրամախոսությունն արտահայտում է արտաքին դրամատիզմը, իսկ մենախոսությունը՝ ներքին դրամատիզմը։

Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների խոսքը լինում է արձակ կամ չափածո։ Արձակ խոսքը բնորոշվում է իր կառուցվածքի ու ծավալի ազատությամբ, լեզվական ամենաբազմազան միջոցների գործածության լայն հնարավորություններով։ Այն աչքի է ընկնում իր բնականությամբ, որովհետև մտածողության բնական եղանակի արտահայտություն է, լեզվական միջոցների ու հնարավորությունների ուղղակի՝ ինքնաբանական գործածությամբ։ Չափական խոսքն արդյունք է մտածողության մի այլ՝ արհեստական, ոչ բնական եղանակի և աչքի է

ընկնում բառերի, քերականական ձևերի և արտահայտությունների ընտրողականությամբ, լեզվի նյութական ու խոսքի տեխնիկական միջոցների ու հնարավորությունների առավել փոխաբանական գործածությամբ։ Այն, ի տարբերություն արձակի, ճշգրված է որոշ պարտադրական ձևերի ու պայմանականությունների շրջանակներում (չափ, հանգ, կշռույթ և այլն)։ Այս առանձնահատկությունների պատճառով չափածո խոսքի բաղադրիչ յուրաքանչյուր տարր արձակի համապատասխան տարրի նկատմամբ ավելի շատ ինֆորմացիոն հագեցվածություն ունի։

Ըստ կազմության տեխնիկայի խոսքը լինում է շարուն և պարբերավոր։ Շարուն խոսքը չունի կառուցիկություն։ Այսպիսի խոսքը բաղադրող նախադասությունները կապվում են միմյանց առանց հնչերանգային կշռույթավոր միություններ կազմելու։ Շարունությունը խոսքը կազմելու բնական եղանակն է։ Իբրև կանոն միմյանց հետ զրուցելիս, գիտական ուսումնասիրություն շարադրելիս, նույնիսկ բանաստեղծություն հորինելիս մտածում ու արտահայտվում ենք այս եղանակով։

Պարբերավոր խոսքը, նախորդին հակառակ, ունի արվեստավոր կառուցվածք և բնորոշվում է մտքերի զարգացման հատուկ եղանակով։ Խոսքը պարբերավոր է, եթե բաղկացած է մեկ պարբերությից, կամ կազմված է պարբերություններից, ըստ որում պարբերավոր կարող է լինել թե՛ արձակ խոսքը և թե՛ չափածոն։

Պարբերույթ։ Պարբերույթը ներդաշնակ կառուցվածք է, միմյանց հակադրվող մասերի մի այնպիսի միություն, որի մեջ գրլխավոր գաղափարը, որ զարգանում է ամբողջի մեջ, մինչև վերջ մնում է առկախ և ամփոփվում է միայն պարբերույթի ավարտով։ Պարբերույթը բնորոշվում է երկու հիմնական, երկուսն էլ ձևային, հատկանիշներով։ Դրանցից առաջինը կառուցվածքն է՝ ներքին կառուցիկությունը, իսկ մյուսը՝ կշռույթը (ռիթմ)։ Սրանց ոմանք ավելացնում են նաև ձայնային ելևէջումները, որ ուղեկցում են պարբերույթին, սակայն սա էական հատկանիշ չէ։

Կառուցվածքային առումով պարբերույթը բաղկացած է երկու մասերից, սակայն այնպիսի մասերից, որոնցից գոնե մեկը իր հերթին բաղկացած լինի առնվազն երկու նույնակերպ կազմիչներից։ Այսպես, օրինակ.

Էն՝ որ կիսահալ սառույցի տակից
Ժիր վտակներ են հեհհև լողում, 1
Էն՝ որ ձյունների վերջին հալոցքից
Թավիշ, աղվամազ կանաչն է շողում, 2
Էն՝ որ արևի կենսատու շողքից
Գարնան առաջին ծաղիկն է ծլում
Եվ մանուկի պես արթնացած քնից
Աչքերը ճմլում՝ || 3
Ես այն եմ սիրում։ (Հ. Հակոբյան)

Այս հատվածը մի պարբերություն է՝ բաղկացած երկու մասից։ Առաջին մասը կազմում են 1, 2 և 3 համարներով նշված նախադասությունները, իսկ երկրորդ մասը՝ սրանց հակադրվող Ես այն եմ սիրում նախադասությունը։ Առաջին մասը կազմող նախադասությունները միակերպ կամ նույնակերպ են, որովհետև սկսվում են միևնույն բառազուգորդումով (էն՝ որ) և միանման շարահյուսական հարաբերությամբ են կապված երկրորդ մասին։ Այսպիսի պարբերության առաջին մասը կոչվում է նախընթաց (հուն. προτασις—պրոտազիս), իսկ երկրորդ մասը՝ վերջընթաց (հուն. αποδοσις—ապոդոզիս)։ Նախընթացի կամ վերջընթացի յուրաքանչյուր բաղադրիչ կազմիչը կոչվում է անդամ։ Իբրև պարտադիր կանոն պարբերության կա՛մ նախընթացը պետք է ունենա առնվազն երկու անդամ, կա՛մ վերջընթացը։ Վերը բերված պարբերությունում նախընթացն ունի երեք անդամ։ Պարտադիր պահանջ է նաև, որ անդամներն սկսվեն կամ վերջանան միևնույն բառով, կապակցությամբ, բառախմբով կամ նախադասությամբ, այսինքն՝ պարբերության անդամները պետք է ունենան միևնույն սկիզբը կամ վերջը։ Անդամների սկզբում կրկնվող բառերն ու բառախմբերը կոչվում են նախաբերություն, իսկ վերջում կրկնվողները՝ վերջաբերություն։ Նախաբերությունը և վերջաբերությունը պարբերության պարտադիր բաղադրիչներ են և չպետք է շփոթվեն կրկնության այլ ձևերի հետ, մի բան, որին ոճաբանական գրականության մեջ հաճախ ենք հանդիպում։ Այդպիսի շփոթության հետևանքով սխալմամբ պարբերություն են համարվում ճարտասանական մի քանի ձևեր և շարահյուսական կառույցներ, որ պարբերություն չեն։

Կառուցիկության այս առանձնահատկություններից բացի պարբերության համար կարևոր պայման է նաև կշռույթը։ Կշռույթը, որ առաջին անգամ Պլատոնը ձևակերպել է իբրև գործո-

ղության ընթացք, որի մեջ չափ է մտցնում լարման և թուլացման կանոնավոր հաջորդականությունը, պարբերության մեջ հանդես է գալիս իբրև անդամների արտասանության ելևէջումների պարբերականություն։ Պարբերության անդամները պետք է բառերի այնպիսի կազմ ու դասավորություն ունենան, որ արտասանվեն կանոնավորապես ձայնի միանման լարումով ու թուլացումով՝ հավասար ժամանակամիջոցի ընթացքում, անկախ վանկերի քանակից։ Մեր բերած օրինակում հավասար կշռույթ գոյություն ունի նախընթացի առաջին և երկրորդ անդամներում։ Այդպիսին չէ երրորդ անդամը, որը կազմված է ոչ թե բանաստեղծական, այլ հռետորական կատարյալ պարբերության հիմունքով, որը պահանջում է, որ անդամներից վերջինը նախորդների համեմատությամբ երկար լինի (երկու, մեկուկես անգամ, կիսով չափ և այլն)։ Այս օրինակում երրորդ անդամը 1,75 անգամ մեծ է նախորդներից, որի հետևանքով պարբերությունն ստացել է հռետորական շունչ։ Պարբերության պայման համարվող ձայնի ելևէջումը, այսինքն՝ ձայնի բարձրանալը նախընթացում և անկումը վերջընթացում, պարտադիր է միայն այնպիսի պարբերություններում, որոնք ունեն սովորական շարադասություն։ Հ. Հակոբյանից բերված հատվածում պարբերությունն ունի սովորական շարադասություն, այդ պատճառով էլ նախընթացում՝ սկզբից մինչև երրորդ անդամի վերջը, ձայնը գնալով բարձրանում է և վերջընթացում՝ մարում։ Սակայն այս պայման չէ շրջուն շարադասություն ունեցող պարբերության համար, որի մասին կխոսվի ստորև։

Կշռույթը պարտադիր պայման է ոչ միայն չափական, այլև արձակ պարբերության համար։ Բերենք մի օրինակ.

Երբ թախծալի հուսահատությունը պաշարում է ինձ (1), երբ կանխահաս արհավիրքը թուլացնում է իմ ուժերը (2), դու ես ոգևորում ինձ fn աստվածային ներշնչությամբ (1), դու ես կենդանացնում մեռած եռանդը և fնած հավատը (2): (Բաֆֆի)

Այս արձակ պարբերության և՛ նախընթացն է բաղկացած երկու անդամներից, և՛ վերջընթացը (ընդգծված է)։ Պահպանված է կառուցիկության պահանջը, քանի որ նախընթացի անդամներն ունեն երբ նախաբերությունը, իսկ վերջընթացի անդամները՝ դու ես բառախումբը։ Այստեղ պահպանված է նաև կշռույթավորության պահանջը, քանի որ թե՛ նախընթացի և թե՛ վերջընթացի անդամները արտասանվում են հավասար ժամանակամիջոցում,

թեև նախընթացի առաջին անդամը բաղկացած է 15, իսկ երկրորդ անդամը՝ 16 վանկից. նույն ձևով վերջընթացի առաջին անդամը բաղկացած է 16, իսկ երկրորդ անդամը՝ 17 վանկից։ Թեև այս պարբերությունը բանաստեղծական չէ, այնուամենայնիվ բառերն այնպես են ընտրված ու դասավորված, որ առաջ են բերել ռիթմական ներդաշնակ միություն։ Ահա թե ինչի մեջ է թաքնված այս հատվածի վերամբարձության, հռետորականության և բանաստեղծականության գաղտնիքը։

Պարբերությունը շրջուն շարադասություն է ունենում, երբ վերջընթացը նախորդում է նախընթացին, այսինքն՝ երբ իմաստային առումով ամփոփող մասը լինում է ոչ թե պարբերության վերջում, այլ սկզբում։ Ահա մի օրինակ.

Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ,
Երբ ամեն ինչ, խորհրդավոր ու խոհուն,
Ցնորում է կապույտ մութի աշխարհում։

(Վ. Տերյան)

Այս պարբերության առաջին տողը վերջընթացն է, իսկ հաջորդ երկու նախադասությունները՝ երկու անդամներից կազմված նախընթացը։

Շրջուն շարադասություն ունի նաև հետևյալ պարբերությունը.

Կարծես թե փոքրանում մի տարով,
Դառնում եմ մի կորած մայիս էլ,
Քանի որ աշխարհում ինչ-որ տեղ
Ինչ-որ մեկն անունս տալիս է,
Քանի որ աշխարհում ինչ-որ տեղ
Ինչ-որ մեկն ինձ համար լալիս է։ (Հ. Սահյան)

Կա պարբերության մասերի շարադասության մի երրորդ տեսակ էլ, երբ նախընթացը միջադաս դիրք ունի, այսինքն՝ պարբերությունն սկսվում է վերջընթացի մի կտորով (որը կարող է լինել նախադասության անդամ, կոչական և այլն), ապա սրան հաջորդում է նախընթացը, որին էլ՝ վերջընթացի իմաստային առումով կարևոր մասը։ Օրինակ.

Այդ բոլորից հետո, երբ կորչում է կրոնը, երբ կորչում է լեզուն, երբ ոչնչանում են ազգային ավանդությունները, և երբ, վերջապես, հայը սկսում է պարսից ավանդություններով ապրել և պարսից լեզվով աղոթել, այլևս ի՞նչ հայություն կմնա։

(Ռաֆֆի)

Այստեղ ընդգծվածը վերջընթացն է, որի ժամանակի պարագան բաժանվել և ընկել է նախընթացից առաջ։ Հետևյալ օրինակում վերջընթացից անջատվել և նախընթացից առաջ է ընկել կոչականը.

— Միստեր Ռոչեստեր, *եթե երբևիցե մի բարի գործ կատարել եմ, եթե երբևիցե ինձ լուսավորել է մի լավ միտք, եթե աղոթել եմ անկեղծ ու ազատ, եթե երբևիցե ձգտել եմ արդարությանը,* այժմ ես վարձատրված եմ: (Շ. Բրոնտե)

Հնարավոր է նաև, որ վերջընթացի անջատված մասը բովանդակության զարգացման թելադրանքով կրկնությամբ հանդես գա՝ միմյանց միացնելով նախընթացի անդամների խմբեր կամ դրանք բաժանելով՝ տրոհելով խմբերի։ Ահա այդպիսի պարբերության մի օրինակ.

Տարվա այս ուշ ժամանակին,
Երբ դեռ վաղուց՝ աշնան տաքին
Հարկավորը աղել,
Մաղել,
Ավելցուկը հորում թաղել,
Սարքավորել,
Կարգավորել,
Կժի ճաքին,
Շորի ծակին
Կիր են դրել ու կարկատան.
Երբ տանիքի ծուռվիզ դեզի
Անգամ տեսքից մարդ է մրսում,
Մինչդեռ այդ նույն դեզի ներսում,
Ձյուն-սառցի տակ
Այնպես է տաք,
Ինչպես մարմինն անթև ճուտի,
Կարծես վաղուց՝ ամռան մուտին,
Դրսում գերել,
Այստեղ բերել
Ու պահում են ձմռան համար
Մի պատառիկ ջերմին ամառ
Եվ մի բաժին անուշ գարուն՝
Միածանի գույներ պահած իր խոտերով,
Իր զմռսված ծաղիկների ծով հոտերով.
Տարվա այս ուշ ժամանակին,

Երբ կոշտապատ ձեռք ու բազուկ
Հանգստանում փոքրիշատե
Ու դառնում են մի քիչ նազուկ.
Տարվա այս ուշ ժամանակին,
Երբ բահը թանկ, եղանն անգին,
Լուծը երկար, սամին թզուկ՝
Մի անկյունում,
Իրար գլխի,
Պարապ-սարապ՝
Վերևից են հիմա նայում խեղճ թիակին,
Որով անվերջ պետք է բակի
Ու կտուրի ձյունը սրբել,—
Տարվա այս ուշ եղանակին
Էլ գյուղացուն ի՞նչ է մնում,
Թե ոչ երգել, պարել, հարբել... (Պ. Սևակ)

Ըստ անդամների քանակի պարբերությունները լինում են միանդամանի կամ պարզ և անդամական, որ լինում է երկանդամ և բազմանդամ։ Երկանդամ կամ բազմանդամ են պարբերություններն այն ժամանակ, երբ նրանց մասերից մեկում կամ երկուսում միաժամանակ կազմիչ անդամների քանակը երկուս է կամ ավելին։ Քանի որ վերն արդեն տրվել են երկանդամ և եռանդամ պարբերությունների օրինակներ, այժմ տանք բազմանդամ պարբերության մի օրինակ ևս.

Պետք չէ, սիրելիս,
Զուր ես երդվում։
Առանց երդման էլ ես հավատում եմ,
Որ հիմա օրդ մի դար է տևում,
Որ փուշ կարոտը քեզ ծվատում է,
Որ գիշերն ի լույս չես քնում հաճախ,
Որ իմ անունն ես կրկնում հաճախ,
Որ աղջկական քո մաքուր բարձին
Թեքված ես տեսնում մի ծերուկ արծիվ
(Անգղ էլ լինի՝ արծիվ է թվում),
Որ քեզ աշխարհում ոչինչ չի թողում,
Որ առանց սիրուս կյանքդ կորած է,
Որ...
Գիտեմ, գա՛նս,
Զուր ես կրկնում։ (Պ. Սևակ)

Այս պարբերության նախընթացը բաղկացած է յոթ անդամից. ութերորդն սկսվում է, բայց չի ավարտվում։ Ընդհանրապես հազվադեպ է լինում, երբ վերջընթացն է լինում բազմանդամ։ Սովորականն այն է, որ նախընթացն ունենա երկուսից ավել անդամներ։ Բացի դրանից, սովորական են այն պարբերությունները, որոնք ունեն երկանդամ, եռանդամ և քառանդամ մասեր։ Երկանդամությունը, եռանդամությունը և քառանդամությունը ինչպես որ սովորական կարգ է հայերենի ամեն տեսակ լեզվական բաղադրություններում (բառակազմության մեջ՝ մինչև չորս ածանցի կուտակում մի բառում, մինչև չորս արմատի կուտակում մի բարդության մեջ, մինչև չորս հարադրական միավորի կուտակում մեկ հարադրության մեջ, շարահյուսության համակարգում՝ մինչև չորս համադաս կազմիչների միավորում մեկ բարդ համադասական նախադասության մեջ, մինչև չորս աստիճանի ստորադասություն ենթաստորադասության մեջ և այլն), այնպես էլ կարգ է պարբերությում։ Հինգ և ավելի անդամներով պարբերությը սովորական չէ և ոչ խրախուսելի՝ անկախ խոսքի տեսակից, մանավանդ եթե անդամները ծավալուն են։

Անդամներով կազմված պարբերությը կոչվում է անդամական։

Ի տարբերություն երկանդամ ու բազմանդամ պարբերությների, միանդամանի կամ պարզ պարբերության մեջ նախընթացի և վերջընթացի բաժանումը ոչ թե իմաստի հաշվառումով է կատարվում, այլ բացարձակապես ձևի, քանի որ պարզ պարբերությը բաղկացած է լինում մեկ պարզ նախադասությունից։ Օրինակ.

Քեզ՝ մեր հայկական ու արամական,
Ձկարոզացան քեզ խլել մեզնից
Ո՛չ խարդավանքով արամեական,
Ո՛չ բյուզանդական սիրով անազնիվ,
Ո՛չ Ահրիմանի ահեղ նետերով,
Ո՛չ Քրիստոսի մարդ-չմարդությամբ,
Ո՛չ Մահումեդի ճմլիչ ոտերով,
Ո՛չ ճշմարտությամբ,
Ո՛չ էլ ստերով։ (Պ. Սևակ)

Այս հատվածը, որ մի պարզ ընդարձակ նախադասություն է, պարբերություն է այն պատճառով, որ ունի ոչ նախաբերության

կրկնությամբ կազմված կազմիչներ և դրանցով ձևավորված նախընթացին հակադրվող մյուս մասը՝ առաջին երկու տողը, որ վերջընթացն է։ Քանի որ իմաստային ինքնուրույնությունից զուրկ են պարբերության երկու մասերն էլ, այդ պատճառով պարբերության կազմիչները կոչվում են ոչ թե անդամ, այլ հատված։ Հետևաբար այստեղ ոչ-ով սկսվող յուրաքանչյուր կազմիչ մի հատված է. պարբերությունն էլ այս հիման վրա կոչվում է հատվածական։

Կատարյալության տեսակետից պարբերությունը կարող է լինել անթերի և թերի։

Պարբերությունն անթերի է, եթե անդամները կամ հատվածները կանոնավորապես սկսվում կամ կանոնավորապես վերջանում են միևնույն բաղադրիչով։ Վերը բերված օրինակներում և՛ անդամական, և՛ հատվածական պարբերություններն ունեն պահանջված կարգը, ուրեմն անթերի պարբերություններ են։ Պարբերությունը դարձյալ անթերի է, եթե նախաբերությունը կշռության պահանջով զեղչված է։ Այսպես, օրինակ.

Եկեք միասին չհարգենք նրանց,
Ովքեր սերտում են և ոչ թե դատում,
Ճառում են—բնավ չեն կշռադատում.
Ովքեր չեն ջոկում ոչ թացը չորից,
Ոչ էլ տարբերում անդունդը ձորից.
Ովքեր գրածի տառն են ընթերցում,
Ովքեր քնածին մեռած են կարծում,
Ովքեր կարծում են
Ծուխը՝ հրաբուխ,
Իսկ լացը՝ հարբուխ... (Պ. Սևակ)

Այս պարբերության ընդգծված երկրորդ անդամի ովքեր նախաբերությունը զեղչված է, սակայն դա չի փոխում պարբերության կառուցվածքը, ուստի այս պարբերությունը անթերի է։ Նույն ձևով կարող է զեղչվել նաև վերջաբերությունը։ Այս դեպքում ևս պարբերությունը կլինի անթերի։

Պարբերությունը թերի է լինում այն դեպքում, երբ անդամներից մեկն ու մեկն ունի այլ կառուցվածք, որի պատճառով էլ նույն նախաբերությունը չունի։ Այսպես, օրինակ.

Թող մոտենա իմ սեղանին
Նա, ում ձեռքը կոշտացել է
Մուրճից, բահից, ու եղանից.

Ով տանջանքից կշտացել է
Ու փնտրում է սպեղանի.
Ով կրում է խոցերն անանց
Աղջիկների ու գեղանի
Հարս ու կանանց։ (Գ. Սևակ)

Այս պարբերությունը կլինի անթերի, եթե ընդգծված անդամն ունենար այնպիսի կառուցվածք, որ կապվեր նա-ի հետ ով նախաբերությամբ։

Թող աշխարհի մեջ մի անարգ նշավակ դառնամ ես, թող ապագայի համար հավիտենական դատապարտության առարկա դառնամ ես, թող ամեն ոք անեծքով արտասանե իմ անունը, բայց ես սիրում եմ և կսիրեմ։ (Բաֆֆի)

Այս պարբերությունը նախաբերության տեսակետից անթերի է, սակայն իմաստային կենտրոնացումը նախաբերության կողմը չէ, այլ վերջաբերության՝ ես։ Պարբերության առաջին երկու անդամները վերջանում են ես վերջաբերությամբ, սակայն երրորդ անդամը ունի այլ կառուցվածք, որի հետևանքով էլ պարբերությունը վերջաբերության առումով թերի է։

Պարբերությունը թերի է լինում նաև այն դեպքում, երբ կառուցում հանդես են գալիս տարբեր նախաբերություններով կամ տարբեր վերջաբերություններով անդամների կամ հատվածների խմբեր։ Ահա այդպիսին է հետևյալ հատվածական պարբերությունը.

Հայրենի իմ գյուղ, ոտքերիս վրա
Աշխարհի բոլոր ճանապարհների
Փոշոտված փոշին
Եվ գլխիս վրա ժամանակից շուտ
Հանգած աստղերի մոխիրը ճերմակ,
Եվ սրտիս վրա քարանձավային
Մութ մենակության մրսած գոլորշին,
Եվ շրթիս վրա ապերախտ որդու
Խոստովանության բառերն ուշացած,
Եվ ականջիս մեջ
Մաշվող աշունքվա շշուկը դեղին,
Եվ աչքերիս մեջ
Անվերծանելի մի երանության
Խոնավությունը ծիածանային,—

Մտնում եմ ահա
Կրունկի վրա իմ առաջ բացված
Քո դռներից ներս... (Հ. Սահյան)

Այստեղ առաջին չորս հատվածներն ունեն վրա բառով կազմված նախաբերությունը, իսկ վերջին երկուսը՝ մեջ բառով կազմված նախաբերությունը, որով և խախտված է պարբերության կանոնավորությունը։

Քանի որ պարբերությունը սոսկ ձևային հիմունքով ստեղծվող կառույց է, այդ պատճառով էլ նրա անկատարությունը ոչ մի նշանակություն չունի բովանդակության համար, իհարկե, ցանկալի է, որ ձևն էլ բովանդակության հետ կատարյալ լինի, սակայն կատարյալ պարբերությունը պահանջում է նպատակադրված աշխատանք։ Վերը բերված օրինակներում ոչ Պ. Սևակի և ոչ էլ Հ. Սահյանի մտքերը ոչնչով չեն տուժում, բայց ավելի լավ կլիներ, եթե դրանք կատարյալ պարբերություններով արտահայտված լինեին։

Պատահում է, որ պարբերավոր խոսքի մի մասը անթերի պարբերություն է, իսկ մի մասն էլ՝ առանձնաբար անթերի, և կամ հենց թերի, բայց նախորդից տարբեր, որով թերի է դառնում ամբողջ պարբերությունը։ Այդպիսին է հետևյալ բանաստեղծությունը.

Հարցում

Տեր, եթե ինձ այսուհետ էլ չես տալու
Բոցի հրաշքն ու հրաշքը խենթանալու,
Թե չես տալու գլխապտույտն այն արարող,
Որ իրար է խառնում հանկարծ երկինք ու հող,
Կավս խլում, իմ մեջ թողնում միայն ոգի,
Վայրկյանի մեջ ինձ վերածում ասես մոգի,
Վայրկյանի մեջ ինձ դարձնում այնքան արդար,
Որ կարող եմ ճակատագիրն անգամ կարդալ,
Թե չես տալու, թող որ լինի կամքդ վերին,
Հաշտ եմ քեզ հետ, եկ ու ինձ տար քո թևերին։

Թե չես տալու ինձ կարոտի աստղը ծավի,
Որ դողում է թարթիչներին մթնշաղի,
(Թե չես տալու) Պահերն այն սուրբ, երբ մաղում է անձևը տաք, դեմ
Կինը փխրում, ծվարում է թևերիդ տակ,

Բուրում հանկարծ, բուրում իբրև անհայտ եղեմ,
(թե չես տալու) Պահերն այն սուրբ, երբ կանգնում ես փակ դռան դեմ

Ու այնպիսի դողով թակում դուռն այդ թաքուն,
Որ թվում է, թե հենց բախտիդ դուռն ես թակում,
Թե չես տալու, թող որ լինի կամքդ վերին.
Հաշտ եմ քեզ հետ, եկ ու ինձ տար քո թևերին։

Թե չեմ կարող էլ տեսիլքի լույսն ստանալ,
Հեռու գետի իմ արծաթով հարստանալ,
Հարստանալ մի ծվենով կապույտ մեգի
Ու հեկեկալ ցավով, իմ չէ, ուրիշ մեկի,
Թե այսուհետ սիրտս լույսից չի նվալու,
Տերևի դողն ինձ մոգություն չի թվալու,
Շշուկն աստղի չի թվալու հմայություն,
Ու բոնկումն արշալույսի՝ սուրբ հարություն,
Հաշտ եմ քեզ հետ, թող որ լինի կամքդ վերին,
Եկ ու ինձ տար քո թևերին... (Վ. Դավթյան)

Երեք պարբերություններից կազմված այս բանաստեղծության վերջին պարբերությունը թերի է և նախորդներից տարբեր, որովհետև իր անդամների կառուցվածքով նման չէ նախորդ երկու պարբերություններին, որոնք միանման կազմություն ունեն։ Այս անկանոնությամբ էլ ամբողջ պարբերությունը դառնում է թերի։

Մինչև այստեղ քննված բոլոր պարբերություններն էլ մի առանձնահատկությամբ նման էին իրար։ Այդ առանձնահատկությունն այն է, որ պարբերությունը ամփոփվում է մի բարդ կամ պարզ նախադասության մեջ, այսինքն՝ այնպես, որ նախընթացն ու վերջընթացը միմյանցից առանձնանալով՝ հակադրվում են միմյանց։ Այս հատկանիշի հիման վրա էլ այսպիսի պարբերությունները կոչվում են հակադրական։ Սրան հակառակ գոյություն ունի պարբերության մի այլ տեսակ, որ կոչվում է տրոհական կամ բաժանական։ Տրոհական պարբերությունները կազմվում են պարբերության մասերից մեկի անդամների բաժանման, տրոհման և մյուս մասի կրկնությամբ առանձին նախադասություններ կազմելու սկզբունքով։ Այդ ցույց տանք օրինակով.

Անկեղծորեն ուրախացնում է սոցիալիստական երկրների երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների այսքան ներկայացուցչական հանդիպում անցկացնելու փաստը։ Ու-

բախացնում է այն պատճառով, որ դրանում ակնբախորեն երևվան են գալիս մեր կուսակցություններին, պետություններին, ժողովուրդներին շաղկապող բարեկամության ու համագործակցության ամուր, անխախտելի կապերը: *Ուրախացնում է այն պատճառով,* որ երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների տարբեր մակարդակներում անցկացվող կոնտակտները ծանրակշիռ նախադրյալ են այդ կապերի ամրապնդման ու բազմապատկման համար:

Այս հատվածի չընդգծված մասը մի վերջընթաց է, որի կարևոր գաղափարն արտահայտող կապակցությունը կրկնվել է երկու անգամ՝ կազմելով երկու նախադասություններ ևս, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ ընդհանուր նախընթացի իրարից բաժանված անդամները։ Բավական է երկրորդ նախադասության վերջընթացի ուրախացնում է այն պատճառով *հատվածը հանել, և առաջ կգա սովորական հակադրական պարբերություն, որի անդամները կլինեն ընդգծված նախադասությունները* որ *նախաբերությամբ։*

Տրոհական պարբերությունները ևս կարող են լինել անթերի և թերի։

Ըստ անդամների ձևավորման առանձնահատկությունների պարբերությունները բաժանվում են երեք տեսակի՝ **բանաստեղծական, ճարտասանական** *և* **պատմողական** *(անցյալում կոչվել է պատմական)։ Բանաստեղծական է այն պարբերությունը, որի անդամները կամ հատվածները կազմում են ռիթմական հավասար միավորներ։ Օրինակ՝*

Մենք բարով դուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն։
Մենք ետ կգանք ձեզ նորեկ գարունքին,
Երբ զարթնեն ուրախ երգերը կրկին,
Երբ որ սարերը զուգվեն կանաչով,
Երբ որ ջրերը վազեն կարկաչով... (Ֆ. Շիլլեր)

Այստեղ նախընթացի ընդգծված անդամները հավասար կշռույթ ունեն, հետևաբար պարբերությունը բանաստեղծական է։

Ճարտասանական պարբերության անդամներն ունենում են անհավասար կշռույթ, ըստ որում, հաջորդ անդամը նախորդից, կամ միայն վերջինը՝ բոլորից, երկար է լինում, ինչպես, օրինակ՝

Մաքրություն է պե՞տք,
1. Որ քարերն անգամ
Ներքնապես զգան
Իրենց երբեմնի հեղուկ վիճակում,
2. Որ արտաշնչեն բույսերն էլ... արև՞
Եվ ոչ թե միայն անտես թթվածին,
3. Որ մարդն էլ իրեն լավ զգա այնպես,
Ինչպես մեղեդին՝ վսեմ տաճարում,
Գույնը՝ հանճարեղ կտավի վրա,
Եվ խաղալիքը՝ մանկան ձեռներին...

(Պ. Սևակ)

Այս պարբերության նախընթացը բաղկացած է երեք անդամներից, որոնցից առաջին երկուսը հավասար են միմյանց, իսկ վերջինը կրկնակի անգամ երկար է նրանցից։ Հետևաբար այս պարբերությունը ճարտասանական է։

Պատմողական պարբերությունը երկու առանձնահատկությամբ տարբերվում է նախորդներից։ Նախ՝ և՛ բանաստեղծական և՛ ճարտասանական պարբերությունները կշռույթավոր այնպիսի միություններ են, որոնք պետք է արտաբերվեն մեկ շնչով, այնինչ պատմողականի անդամները կարող են նաև կշռույթից զուրկ լինել, ուստի և ռիթմական միություն չդառնալ։ Եվ, այնուհետև, եթե բանաստեղծական ու ճարտասանական պարբերությունների համար պարբերականություն ստեղծողը կրկնվող բառը, կապակցությունը կամ բառախումբն է, ապա պատմողականի համար նման դեր կարող է ստանձնել նաև միևնույն քերականական ձևը։ Օրինակ՝

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը և Եմենի արաբական հանրապետությունը,

ելնելով իրենց միջև ստեղծված բարեկամության, փոխադարձ հարգանքի, փոխշահավետ համագործակցության հարաբերություններից, ինչպես նաև հեգեմոնիզմի ու գաղութատիրության դեմ՝ դրանց բոլոր ձևերով հանդերձ, միջազգային խաղաղության ու անվտանգության ամրապնդման համար մղվող պայքարում համերաշխության ավանդական հարաբերություններից,

գտնելով, որ 1928 թվականի նոյեմբերի 1-ի (որ համապատասխանում է Հիջրայի 1347 թվականի Ջումադի ալ Ավալի 17-ին) բարեկամության և առևտրի պայմանագիրը և 1964 թվականի մարտի 21-ի (որ համապատասխանում է Հիջրայի

1383 թվականի զու լ քա՝ դայի 7-ին) բարեկամության պայմանագիրը, հիմք են դրել ՍՍՀՄ-ի և ԵԱՀ-ի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների համար,

համոզված լինելով, որ ՍՍՀՄ-ի և ԵԱՀ-ի բարեկամության ու համագործակցության հետագա ամրապնդումը համապատասխանում է երկու պետությունների ժողովուրդների շահերին,

հավաստելով իրենց հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և կանոնադրության սկզբունքներին, պայմանավորվեցին հետևյալի շուրջը... (մամուլ)։

Այս պարբերության նախընթացը, որ ընկել է վերջընթացի (ընդգծված է) միջև, բաղկացած է չորս անդամից, որոնք միավորվում են ոչ թե բառի կրկնությամբ, այլ քերականական նույնաձևությամբ (անորոշ դերբայի գործիական հոլով)։ Նախընթացի անդամները միաժամանակ չունեն ռիթմական կազմակերպվածություն, որի հետևանքով պաթետիկությունը և հռետորականությունը, որ պարբերության առանձնահատուկ կողմերից են, ետ են մղվում, իրենց տեղը թողնելով հանդիսավորությանը։ Եթե բանաստեղծական և ճարտասանական պարբերությունները կոչված են մեծացնելու ասվածի տպավորությունը, այն դարձնելու արտահայտիչ ու ներազդու, ապա պատմողականը ծառայում է մտքի ճշտությանը, բազմապատճառ և բազմախընդիր մտքերը համաձույլ ամբողջությամբ արտահայտելուն, այդ պատճառով էլ այն առաջին հերթին տեղ ունի հատկապես քաղաքական բնույթի փաստաթղթերում (պայմանագրեր, հայտարարություններ և այլն)։

Պարբերության զանազան տեսակներն ու կառույցները միմյանցից տարբերվում են իրենց արտասանական առանձնահատկություններով՝ հատվածների, անդամների ու մասերի միջև ընկնող դադարներով, նախընթացի անդամների բարձրացող և վերջընթացի իջնող ելևէջումներով և այլն, սակայն բոլոր դեպքերում էլ արտասանվելով իբրև հնչերանգային միություն՝ պարբերավոր խոսքը դառնում է պաթետիկ, հռետորական, հանդիսավոր, ազդու և տպավորիչ։

Ըստ ծավալի խոսքը կարելի է բաժանել երկու տեսակի՝ համառոտ և ծավալուն։ Ամենահամառոտ խոսքերը մեկ պարզ կամ բարդ նախադասությամբ արտահայտված մտածություններն են։

Այսպիսի խոսքեր են բոլոր առածաբանությունները (ասացվածքները, առածները, անեծքները, օրհնանքները և այլն), կոչերը, լոզունգները, հայտարարությունները, ազդերը, լրագրային հաղորդումները, գեղարվեստական ստեղծագործության որոշ տեսակներ (քառյակ, հայրեն, ռուբայի, դիստիքոս, տրիոլետ, սոնետ, բեյթ, գազել, բալլադ, լեգենդ, բանաստեղծություն, առակ, արձակ բանաստեղծություն և այլն), զանազան փաստաթղթեր, երկտողներ, նամակներ, ընծայագրեր, տապանագրեր, հաղորդագրություններ և այլն։ Բոլոր համառոտ խոսքերի համար ընդհանուրն այն է, որ ունեն պարզ բովադակություն և չեն վերածվում մանրաթեմաների։

Ծավալուն խոսքերը (վեպ, վիպակ, գիտական ուսումնասիրություն, ճառ, զեկուցում, վիպերգ, պոեմ, օրենսգիրք, դրամատիկական ստեղծագործություն և այլն) թեև հյուսված են լինում մեկ ընդհանուր թեմայի շուրջը, սակայն բաղկանում են ենթաթեմաներից, ավելի մանր թեմաներից և կամ առանձին մասերից, վիպումից բացի կարող են ունենալ նախաբան և վերջաբան, վիպումն էլ կարող է կազմել մասեր, հատորներ, բաժիններ, սրանք էլ իրենց հերթին կարող են վերածվել գլուխների, պարագրաֆների, կետերի, ենթակետերի և այլն։

Լրագրական ոճում (թերթերում և ամսագրերում) նոր երևույթ է **սկզբնաբանի** գործածությունը։ Սկզբնաբանը հոդվածի, լրագրային հաղորդման բովանդակության հետ կապված, այդ բովանդակությունն ազդարարող, դրա մասին որոշ հետաքրքրություն շարժող համառոտ ծանուցում է՝ նյութի հետ ընթերցողին կապելու համար գործածվող մի խայծ, որ դրվում է վերնագրից անմիջապես հետո և հոդվածից կամ հաղորդումից առանձնացված է լինում կա՛մ տառատեսակով, կա՛մ շարվածքի ձևավորումով։

Խոսքն ըստ բաղկացության (խոսքի ելակետային միավորները): Ըստ բաղկացության խոսքը կամ մեկ նախադասություն է, կամ նախադասությունների ամբողջություն։ Զափական **խոսքի ելակետային միավոր տողն է**։ Տողերից կազմվում են տները, որոնք կարող են բաղկացած լինել երկու, երեք, չորս և ավելի տողերից, ըստ որում ո՛չ տողը և ո՛չ էլ տունը համանշանակ չեն միտք հասկացությանը։ Զափական ծավալուն ստեղծագործությունները կարող են կազմված լինել տներից ավելի մեծ բա-

գաղրություններից. դրանք կարող են բաղկանալ նախերգից, վերջերգից և հատվածներից (ինչպես գրված է Հ. Թումանյանի «Անուշը»), սուրահներից (ինչպես գրված է Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին»), գլուխներից (ինչպես գրված է Գր. Նարեկացու «Մատյանը»), մասերից (ինչպես գրված է Գյոթեի «Ֆաուստը»), ճյուղերից (ինչպես ստեղծված է «Սասունցի Դավիթը») և այլն։ Դժվար չէ նկատել, որ բոլոր այս բաժանումների հիմքում ընկած է լինում բովանդակությունը, որով ձևավորվում՝ կերպարանք է ստանում խոսքի կերտվածքը։ Այսպես, օրինակ, Ավ. Իսահակյանն իր խոհերն ու խորհրդածությունները աշխարհի, մարդկային ապականված բարքերի, մարդու կոչման, սիրո, փառքի, հարստության, դավանանքի, ազատության, քաղաքական հաստատությունների՝ օրենքի, իշխանության մասին և այլն «Աբու-Լալա Մահարի» պոեմում բաժանել է յոթ սուրահի, որոնցից յուրաքանչյուրում աշխարհի անարդարությունների դեմ ըմբոստացած բանաստեղծը դրանք վերլուծում և գնահատում է առանձին-առանձին։ Ապա պոեմն ավարտվում է վերջին սուրահով, որը հնչում է իբրև վերջերգ՝ ի հակակշիռ նախերգի։

Բնական է, որ ծավալուն խոսքն ունենա ընդարձակ բովանդակություն, որը միանգամից հաղորդվելու անհնարինության պատճառով բաժանվի մասերի, կտրոնների, որոնք էլ չափական խոսքում ստանան զանազան ձևավորումներ (արտահայտվեն տարբեր չափերով, ունենան տարբեր եղանակավորություններ և այլն)։

Արձակ խոսքը ևս կարող է բաղկացած լինել մեկ և ավելի նախադասություններից։ Ծավալուն լինելու դեպքում արձակ խոսքը մտքերի ընթացքին համեմատ կարող է բաժանվել հատորների, մասերի, պրակների, բաժինների, գլուխների, ենթագլուխների, պարագրաֆների, կետերի, պարբերությունների, կարող է ունենալ ներածություն կամ նախաբան և վերջաբան և այլն։ Կան լեզվաբաններ, որոնք արձակ խոսքի նվազագույն բաղադրյալ կազմիչ, այսինքն՝ ելակետային միավոր են համարում **արձակ տունը**, ոմանք էլ **պարբերությունը**:

Եթե չափական խոսքի ելակետային միավորի՝ տողի, ինչպես և տան ձևավորման համար հիմք է դառնում ձայնաբանական հանգամանքը, ապա արձակի ելակետային միավորի՝ պարբերության համար կշռույթը աննշան դեր ունի, մանավանդ որ նրա

(պարբերության) սահմաններն էլ խիստ անորոշ են։ Մտածությունը հյուսվում է իրրև միմյանց կապակցված ու կապված առարկաների ու երևույթների ու սրանց հարաբերությունների մասին հաջորդական հաղորդումների ամբողջություն։ Հաջորդական հաղորդումները, լինելով մի նպատակի ուղղված մտքեր, ընդհանուր շղթայի մեջ միմյանց հակադրվում են իրենց մտքի առարկայով և ձևավորման ինքնուրույնությամբ։ Այդ ցույց տանք օրինակով.

Երկու սուրհանդակներ

Լոնսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե լեռան ետևում, և Տարոնը ընկղմեցավ գիշերային խավարի մեջ։ Ոչ մի աստղ այդ գիշեր չէր երևում։ Երկինքը պատած էր մոխրագույն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը և, այնտեղ կուտակվելով, թանձրանալով, միգային-սև կերպարանք էին ստանում։ Այդ կողմերից երբեմն փայլատակում էր կայծակը, և լսելի էր լինում որոտման խուլ դղրդյուն, որ գուշակում էր հորդ անձրև։

Գիշերային այդ տագնապալի պահին երկու ձիավորներ անցնում էին Մուշի դաշտով։ Նրանք գալիս էին հեռվից, շատ հեռվից։ Մի ամիս առաջ դուրս եկան Տիզբոնի երկաթյա քաղաքադռնից, անցան Խուժիստանի անապատները, անցան հայկական Միջագետը և մի օր առաջ ոտք դրեցին Մուշի դաշտի վրա։ Դրանք երկու սուրհանդակներ էին։

Երկու սուրհանդակներից մեկի ձին սևագույն էր, մյուսինը՝ կապուտակ։ Կապուտակ ձիավորը առաջինի ուղևորության մասին տեղեկություններ ուներ, ամենայն զգուշությամբ հետևում էր նրան և երբեք յուր նկատողությունից բաց չէր թողնում։ Իսկ առաջինը չգիտեր, որ իրան հետևում են։ Այդ էր պատճառը, որ նրանք, երկու մոլորակների նման, թեև գնում էին միևնույն ուղղությամբ, բայց այնպիսի զուգահեռական գծերով, որ բնավ միմյանց չէին հանդիպում։ Երկուսն էլ ճանաչում էին միմյանց։

Բաֆֆու «Սամվել» վեպի առաջին գլխի նյութը երկու սուրհանդակների ժամանումն է Տարոն։ Այս նյութը բաղադրված է մտքի բազմաթիվ առարկաներից, որոնցից այստեղ բերված են առաջին երեքը՝ գիշերը Տարոնում, երկու ձիավորներ, ովքեր են նրանք։ Մտքի այս երեք առարկաների մասին մտքերի յուրաքանչյուր ամբողջություն կազմել է մեկ պարբերություն, որի

սկիզբն ազդարարվում է գրության մեջ նոր տողի խորքից գրությամբ, իսկ արտասանության դեպքում զգալի դադարով՝ նախորդի վերջում.

Արձակ տուն և պարբերություն: Արձակ տունը բանաստեղծական շունչ ունեցող արձակի (արձակ բանաստեղծություն, ռիթմական արձակ և այլն) ելակետային միավոր է, որի ձևավորման հիմքում ընկած են լինում մի կողմից իմաստային, մյուս կողմից հնչյունային-առոգանական սահմանազատումները: Արձակ տունը ևս պարբերության նման սկսվում է նոր տողից. տների միջև լինում են զգալի դադարներ, սակայն ի տարբերություն պարբերության, արձակ տունը կարող է համատեղել մեկից ավելի մտքի առարկաներ, ինչպես հետևյալ հատվածում է.

Վաղուց, շատ վաղուց, մի տեղ, մի անգամ ես մի ոտանավոր եմ կարդացել: Վաղուց էլ մոռացել եմ էն ոտանավորը... բայց մտքիս մեջ մնացել է առաջին տողը.

«Ի՜նչ լավն էին, ի՜նչ թարմ էին վարդերը...

Ձմեռ է հիմի. ցուրտը սառեցրել է լուսամուտներիս ապակիները. մի մոմ է վառվում մութը սենյակում: Քաշվել, նստել եմ մի անկյունում, իսկ գլխիս մեջ հնչում է ու հնչում.

«Ի՜նչ լավն էին, ի՜նչ թարմ էին վարդերը...

Ու իբրև թե քաղաքիցը դուրս մի ռուսական տան ցած պատուհանի առջև կանգնած եմ ես: Ամռան երեկոն մեղմիկ հալվում, փոխվում է գիշերի: Գաղջ օդը լիքն է հափրուկի ու լորենու բուրմունքով, իսկ լուսամուտում, լուսամուտին տված ձեռքին հենված՝ գլուխը ուսին թեքած, նստած է մի աղջիկ ու լուռ, անթարթ նայում է երկնքին, ասես թե մնում է առաջին աստղերի երևալուն: Ինչքա՜ն պարզորեն ոգևորված են նրա մտախոհ աչքերը, ինչքա՜ն հուզիչ-անմեղ են կիսաբաց, հարցավոր շրթունքները, ի՜նչ հավասար շնչում է դեռ լիովին չփթթած, դեռ ոչ մի բանով չալեկոծված կուրծքը, ի՜նչ մաքուր ու քնքուշ է ջահել դեմքի տեսքը: Սիրտ չեմ անում խոսեմ, բայց ինչքա՜ն թանկ է նա ինձ համար, ո՜նց է զարկում սիրտս...

«Ի՜նչ լավն էին, ի՜նչ թարմ էին վարդերը...» (Ի. Ս. Տուրգենև)

Արձակ բանաստեղծության այս հատվածի մեջ կա երեք արձակ տուն, որոնք վերջանում են միևնույն «Ի՜նչ լավն էին, ի՜նչ

թարմ էին վարդերը» նախադասությամբ, որն ավելի է ընդգծում արձակ տների ամբողջականությունը։

Արձակ տունը կարող է կազմվել նաև բանաստեղծական տան սկզբունքով, այսինքն՝ տողերով, սակայն այս դեպքում, ի տարբերություն բանաստեղծական տողերի, տող կազմելու սկզբունքը դառնում է նախադասությունը։ Այդպես է, օրինակ, Վ. Փափազյանի «Լուր-դա-լուր» պոեմի հետևյալ հատվածը.

Շարժվեցին ոչխարները, գլորվեցին շատերը։
Շարժվեց և Հասոն, կռացավ, տեսավ բացվածքը։
Հասկացավ ամեն ինչ, նայեց աղային։
Զգաց, որ Զալխեն կորած էր իր համար, ինքն էլ
աշխարհի համար։

2 Շարժվեց Զալխեն էլ, նայեց աղային, նայեց Հասոյին։
Զգաց, որ Հասոն կորել է իր համար, ինքն էլ
աշխարհի համար։

Եվ լռեց ամեն ինչ...

3 «Լուր-դա-լուրը» դադրեց, նրա խաղի վերջին թրթռումը
գնաց մեռնելու օդի մեջ...
Հետո... լսվեց մի ճիչ։

4 Ու երկու մարմիններ արագ պտույտ գործելով օդի մեջ՝
գնացին միասին ջախջախվելու անդունդի խորքում... և
միմյանց գրկում։
Հասոն ու Զալխեն էին դրանք...

Այս հատվածը բաղկացած է արձակ չորս տներից, որոնց սկիզբները նշված են թվանշաններով։ Սրանցից յուրաքանչյուրը բաղկացած է տող-նախադասություններից։ Արձակ տան տողը (տող տերմինը գործածում ենք պայմանականորեն. պարտադիր չէ, որ այն մի տողում տեղավորվի), ինչպես որ այս հատվածում էլ է, միշտ սկսվում է նոր տողից, հնչերանգով զատվում է նախորդից և հաջորդից, կրում է որոշ շեշտվածություն, որի հետևանքով էլ հուզական լիցք է հաղորդում խոսքին։ Ինչպես չափական խոսքի տունը, այնպես էլ արձակի տունը ենթադրում է կառուցվածքային և կշռութային ամբողջություն, ներքին թեմատիկ ավարտվածություն, բանաստեղծականից տարբերվելով միայն չափական միասնությամբ, որն արձակի համար ո՛չ պարտադիր է, ո՛չ էլ բնորոշ։ Թե՛ չափածոյի և թե՛ արձակի տները, լինելով պոետիկական ստեղծագործության ճար-

տարարվեստի գեղարվեստական ձև, զգալիորեն նպաստում են խոսքի արտահայտչականությանը և օգնում դրսևորելու ստեղծագործության ներքին հոգեբանությունը։

Եթե գեղարվեստական արձակում կարևոր դեր ունեն պարբերությունները ու արձակ տները, ապա գիտական խոսքում, հրապարակախոսության մեջ և գործարարական ոճի խոսքերում (օրենքներ, հաշվետվություններ, որոշումներ, արձանագրություններ, պայմանագրեր և այլն) պարբերությունների հետ մեկտեղ հաճախ են հանդես գալիս այնպիսի նվազագույն բաղադրյալ կազմիչներ, ինչպիսիք են պարագրաֆը և կետը, որոնց բաժանումը կատարվում է բացառապես բովանդակության հիման վրա։ Կետերը, սրանց ստորադասվող ենթակետերը և պարագրաֆները իրենց ձևավորումով քերականական կախման մեջ են լինում նախորդող մի ընդհանուր մտքից, այնինչ պարբերությունները և արձակի տները նման կախումով կապված չեն լինում ընդհանուր մտքից։

Խոսքի ավելի մեծ բաղադրիչները անկախ գոյություն և ինքնուրույնություն ունենալով հանդերձ՝ ընդհանուր բովանդակությամբ կապված են լինում միմյանց։ Այդ անկախությունն ու ինքնուրույնությունը պատճառ են դառնում այդպիսի բաղադրիչների բաժանման, ինչպես, օրինակ, մասերի է բաժանված Հ. Թումանյանի «Անուշը» կամ «Թմկաբերդի առումը»։ Սակայն մյուս կողմից էլ դրանք լիակատար անկախ և ինքնուրույն չեն, ուստի և ենթարկվում են մի ընդհանուր գաղափարի, այդ ընդհանուրի մասն են, որի հետևանքով էլ կապված են լինում միմյանց անցումով։

Անցումը մտքի առարկայի փոփոխության հետևանքով առաջացող խոսքի ընդհանուր շղթայի խզումը վերացնելու միջոցառումն է։ Այն մի տեսակ կամուրջ է խոսքի նախորդ բաղադրիչից հաջորդին կամ հաջորդներից որևէ մեկին անցնելու համար։ Անցումն իրականացվում է մի շարք միջոցներով։ Կապի միջոցներից մեկը թեմայի բաժանումն է հատվածների, ավելի փոքր մասերի (գլուխներ, վերնագրեր, ենթավերնագրեր, պարագրաֆներ և այլն), ըստ որում որտեղ ազդարարվում է բաժանումը, թաքնված ձևով ազդարարվում է նաև նրանց միավորումը։ Այս դեպքում անցումը մեծ մասամբ իրացվում է վերնագրերով, պարագրաֆներով և այլն։ Սրանց բացակայության դեպքում, ինչպես և սրանց հետ մեկտեղ, հատկապես գիտական խոսքում,

անցումը կարող է իրացվել այդ նպատակին ծառայող հատուկ բառերով, բառակապակցություններով ու նախադասություններով։ Ահա դրանցից մի քանիսը. նախ..., այնուհետև..., ի վերջո կամ վերջապես..., ինչպես տեսնում ենք..., վերն ասվածից հետևում է..., ասվածից երևում է..., այժմ դառնանք..., գալով (այսինչ խնդրին)..., ամփոփելով ասվածը..., դժվար չէ տեսնել..., ակնհայտ է, որ..., եթե մի հայացք ձգենք..., սակայն այլ է բանը..., որպսեզի համոզվենք..., ինչպես հայտնի է..., անհրաժեշտ է նշել..., ավելորդ է ասել, թե..., ավելորդ չենք համարում ասել նաև... և այլն։

Ըստ գործառության խոսքերը լինում են գեղարվեստական (բանաստեղծական, գրական), գիտական, պաշտոնական, առօրյա-առտնին, բեմական, հրապարակախոսություն, ուսուցողական, հռետորական, դատաստանական (մեղադրական, պաշտպանական) և այլն, որոնց մասին խոսք կլինի ոճի տեսության բաժնում։

Բանահյուսվածք.—Մինչև այժմ խոսում էինք խոսքի ձևային կամ իմաստային կողմերի հիման վրա կատարվող բնական բաժանումների, խոսքի բնական բաղադրիչների մասին։ Սակայն շատ հաճախ բառի, քերականական որևէ կարգի, ընդհանրապես լեզվական երևույթի իմաստը, նրա գործածության հետ կապված իրողությունները նախադասության մեջ ըմբռնելի չեն լինում, և դրանք լիովին դրսևորվում են միայն ամբողջական խոսքում կամ խոսքի հատվածում։ Բանասիրության ասպարեզում ուսումնասիրության և ուսուցողական նպատակներով ծավալուն խոսքից ընտրությամբ կտրված՝ առնված այդպիսի հատվածը (համառոտ լինելու դեպքում նաև ամբողջ խոսքը), որ քննարկվող երևույթի տեսակետից բավարարում է ուսումնասիրողի կամ ուսուցանողի պահանջները, կոչվում է **բանահյուսվածք** (**կոնտեքստ**, *լատ.* con—*հետը, միասին,* textum—*հյուսվածք, գործվածք*)։ Բանահյուսվածքի գաղափարը մի կողմից արդյունք է բանասիրության մեջ նախադասությունից մեծ և նախադասությունից վեր լեզվական միավորի անհրաժեշտության զգացողության, մյուս կողմից էլ հաստատում է, որ այդ միավորի որոնումը ճիշտ ճանապարհով չի գնացել, թեև այնուամենայնիվ, դա ինչ-որ չափով բավարարել է հետազոտողներին։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԽՈՍՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Խոսքը, առանձնապես մշակված խոսքը, կերտվածք է։ Նման ամեն մի նյութական կերտվածքի, այն ևս երկու կողմերի ամբողջություն է՝ նյութականի և տեխնիկականի։ Խոսքի նյութական կողմն են կազմում խոսքը բաղադրող լեզվական բոլոր տարրերը՝ հնչյունային համակարգը, հնչերանգը, բառապաշարը, բառը բաղադրող լեզվական տարրերը, բառակապակցությունները, քերականական համակարգը՝ ձևաբանական թեքույթներով ու մասնիկներով, ինչպես և շարահյուսական կառույցներով, և լեզվում պատրաստի գոյություն ունեցող համառոտ խոսքերը՝ առածաբանությունը։ Խոսքի նյութական բաղադրիչները կազմում են խոսքի ատաղձը, որից ստեղծվում է խոսքի շենքը։ Այնպես ինչպես նյութական ատաղձից ճարտարապետն ընտրում է կառույցին հարմար և անհրաժեշտ նյութ և կառուցելով՝ նրան տալիս է համապատասխան կերտվածք, այնպես էլ խոսողը կամ գրողը, ընտրելով համապատասխան լեզվական նյութ և գործադրելով անհրաժեշտ տեխնիկա՝ կերտում է իր խոսքը, տալիս նրան արտաքին և ներքին պահանջված ձևավորումը։ Այնպես ինչպես ճարտարապետը պարտավոր է իմանալ մի կողմից՝ գործածվելիք շինանյութը և նրա հատկանիշները, մյուս կողմից՝ կառուցելու տեխնիկան, միջոցներն ու եղանակները, որոշել կառուցվելիք շենքի չափերը, արտաքին և ներքին ձևավորումները, այնպես էլ խոսողը պետք է իմանա ոչ միայն խոսքի նյութական բաղադրիչները, նրանց առանձնահատկությունները, այլև խոսքի կառուցման տեխնիկան, նրա ճարտարապետությունն ու ճարտարարվեստը, կերտվելիք խոսքի ներքին բովանդակության և արտաքին կառուցվածքի ու ձևի համապատասխանությունը։

Լեզվի նյութական յուրաքանչյուր բաղադրիչ յուրովի է մասնակցում խոսքի կերտվածքին, ունի իր առանձնահատուկ տեղն ու դերը խոսքում, իր մասնակցությամբ պայմանավորում է խոսքի այս կամ այն առանձնահատկությունը, խոսք բերում

իր իմաստային ու ոճական այս կամ այն երանգը: Այս առումով էլ կարող ենք ասել, որ լեզվական ցանկացած տարր, ցանկացած տեխնիկական միջոց խոսքում հանդես է գալիս իրեն հատուկ ոճական երանգով:

ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀՆՉԵՐԱՆԳԸ ԽՈՍՔՈՒՄ

Լեզվի նյութական նվազագույն միավորները հնչյուններն են, որոնք ոչ միայն լեզվի մյուս՝ ավելի մեծ միավորների ատաղձն են, այլև միջոց են արտահայտելու հնչերանգի, ելևէջումների, հնչարտաբերական երևույթների (ձայնի բարձրություն, ուժգնություն, երկարություն, շեշտ, հարցում, հրաման, զարմանք, վրդովմունք և այլն) ամբողջ գամման: Նրանք են այն տարրերը, որոնցով ձևավորվում են խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը:

Խոսքն ըստ ֆիզիկական կազմվածքի և ըստ արտաքին տրպավորության հնչյունների հյուսվածք է, հնչյունային զանազան մտապատկերների մի շղթա: Ունենալով շատ սահմանափակ թվով հնչյուններ, լեզուն դրանց զանազան զուգորդումներով և հնչարտաբերական զանազան երանգավորումներով դրսևորում է արտահայտման անհրաժեշտ մեծ հնարավորություններ:

Աշխարհի լեզուներում հնչյունների քանակը տատանվում է 12-ից 84-ի միջև: Մեզ հայտնի ամենաքիչ հնչյուններ ունեցող լեզուներից են հավայերենը, որն ունի 5 ձայնավոր և 7 բաղաձայն (12 հնչյուն), ավստրալիական արանտա ցեղի լեզուն, որն ունի 3 ձայնավոր և 10 բաղաձայն, Օվկիանյան տահիթե լեզուն, որն ունի 5 ձայնավոր և 8 բաղաձայն, Օվկիանյան սամոա լեզուն, որն ունի 5 ձայնավոր և 9 բաղաձայն և պոլինեզյան լեզուն, որն ունի 5 ձայնավոր և 10 բաղաձայն: Շատ չեն այն լեզուները, որոնց հնչյունների քանակն անցնում է մի քանի տասնյակից: Աշխարհի ամենաշատ հնչյուններ ունեցող լեզուները հիմնականում տեղադրված են Հյուսիսային Կովկասում և Սև ծովի հյուսիս-արևելյան ափերին: Այսպես, օրինակ, ադիգեերենում միայն 66 բաղաձայն կա, աբազիներենում կա 70 հնչյուն, աբխազերենի Բզբիի բարբառն ունի 80 հնչյուն, իսկ ագուլերենը (Դաղստան) ունի միայն 80 բաղաձայն: Հնչյուններով ա-

մենահարուստ լեզուն ուբիխերենն է[11], որն ունեցել է 82 բաղաձայն և 2 ձայնավոր (ա և սրա տարբերակը)։ Իբերո-կովկասյան լեզուներն աչքի են ընկնում ոչ միայն բաղաձայնների հարստությամբ, այլև արտասանությամբ միմյանց շատ մոտ հնչյունների մեծ քանակությամբ, մի բան, որ այլ լեզուներում հազվադեպ նկատվող երևույթ է։ Այսպես, օրինակ, ավարերենում կա 14 տեսակ Կ հնչյուն, ագուլերենում՝ 2 տեսակ Թ և 4 տեսակ Տ, 8 տեսակ Ք, և 11 տեսակ Կ։ Կովկասյան տաբասարաներեն լեզվում կա 3 տեսակ Խ, 3 տեսակ Գ, 4 տեսակ Կ, 3 տեսակ Ժ, 4 տեսակ Զ և 2 տեսակ Շ։ Սակայն պետք է նկատել, որ 60 և ավելի հնչյուն ունեցող լեզուներով խոսող ժողովուրդներից և ոչ մեկի քանակը մեկ միլիոնի չի հասնում։

Այնինչ աշխարհի շատ ժողովուրդների լեզուներում բաղաձայնների քանակը 30-ի չի հասնում։ Այսպես, օրինակ, հունարենն ունի 15, լատիներենը՝ 17, թուրքերենը՝ 22, եբրայերենը՝ 23, արաբերենը 27 բաղաձայն և այլն։

Հայերենը հնչյունների քանակով աշխարհի լեզուների մեջ միջին դիրք է գրավում (6 ձայնավոր և 30 բաղաձայն)։ Ինչպես հնչյունների քանակը, այնպես էլ դրանց հնչաարտասանական առանձնահատկությունները (ձայնի և աղմուկի պարունակություն, արտասանության տեղ, եղանակ, ժամանակ և այլն), այլև լեզվի մեջ դրանց զուգորդումները (վանկ և բառ կազմելու օրինաչափություններ) և շեշտը այն նախադրյալներն են, որոնք պայմանավորում են լեզվի և խոսքի երկու կարևոր արժանիքները՝ բարեհնչյունությունը և նվագայնությունը։

ԲԱՐԵՀՆՉՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Բարեհնչյունությունը որոշվում է մի շարք գործոններով, որոնցից կարևոր են հատկապես երկուսը՝ ձայնավոր և բաղաձայն հնչյունների հաճախականությունը և դրանց զուգորդումները։ Գոյություն ունեն ձայնավոր և բաղաձայն հնչյունների հաճախականության օբյեկտիվ տվյալներ, որոնք տարբեր են տարբեր լեզուներում։ Եթե մի լեզվում մի հնչյունն ավելի հաճախական

---

[11] Ուբիխները ապրել են Սև ծովի հյուսիս-արևելյան ափերին, անցյալ դարի 2-րդ կեսին գաղթել են Թուրքիա և ծուլվել նրանց։

է, ապա մի ուրիշ լեզվում հաճախական է մի ուրիշ հնչյուն։ Այս պատճառով էլ հնչյունների հաճախականության առումով լեզուները տարբեր պատկերներ են ներկայացնում, մանավանդ որ ինչպես ձայնավոր, այնպես էլ բաղաձայն հնչյուններն իրենց որակային առանձնահատկություններով լեզվից լեզու զգալիորեն տարբերվում են (մի լեզվում ետնալեզվային և կոկորդային հնչյուններն են զգալի, մի ուրիշում՝ ռնգայինները, մի երրորդում ձայնորդ որոշ հնչյուններ օժտված են թե՛ ձայնավորի և թե՛ բաղաձայնի հատկանիշներով և այլն)։ Այս տարբերություններով հանդերձ լեզուները համեմատելի են դառնում ձայնավոր և բաղաձայն հնչյունների հակադրականության հիմունքով։ Լեզվաբանները բարեհնչյունության առաջին պայման են համարում բաղաձայնների նկատմամբ ձայնավորների հարաբերությունը, ըստ որում առավել բարեհնչյուն է համարվում այն լեզուն, որի բանահյուսվածքներում բաղաձայնների համեմատությամբ ձայնավորներն ավելի մեծ տոկոս են կազմում։

Հր. Աճառյանն իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության ներածական հատորում (էջ 255) բերում է հետևյալ տվյալները, որ քաղել է անգլերեն մի գրքից։ Այդ տվյալների համաձայն «Հայր մեր» աղոթքի թարգմանությունները մի քանի լեզուներում ունեն ձայնավորների ու բաղաձայնների հետևյալ հարաբերությունները.

Լեզուներ	հնչյունների քանակը	որից	
		ձայնավորների %-ը	բաղաձայնների %
ճապոներեն	150	52	48
իտալերեն	103	52	48
ֆրանսերեն	79	48	52
հին հունարեն	107	48	52
թուրքերեն	106	46	54
պարսկերեն	118	45	55
ռուսերեն	102	43	57
վրացերեն	144	42	58
հին հայերեն	117	40	60
անգլերեն	97	36	64
գերմաներեն	106	32	68

Աղյուսակից երևում է, որ այս 11 լեզուների մեջ ձայնավորների քանակային հարաբերությամբ առաջին տեղերում են ճապոներենն ու իտալերենը, իսկ վերջին տեղերում են գերմանե-

բենն ու անգլերենը, հետևաբար վերջիններս ավելի նվազ բարեհնչյուն են, քան առաջինները։ Այս տվյալների համաձայն համեմատված լեզուների մեջ գրաբարը բարեհնչյունությամբ առաջին տեղերում չէ։ Ժամանակակից հայոց գրական լեզվի մեր քննությունը տալիս է ավելի բարձր բարեհնչյունության տոկոս՝ շուրջ 42:58 հարաբերությամբ։ Եվ թեև 2 %-ով բարձր, այնուամենայնիվ ձայնավորների և բաղաձայնների մեխանիկական հարաբերությամբ ժամանակակից հայոց լեզուն աշխարհի բարեհնչյուն լեզուների շարքում չէ։ Սակայն բարեհնչյունությունը ձայնավորների և բաղաձայնների քանակով և դրանց սոսկական տոկոսային հարաբերությամբ չի կարելի որոշել։ Եթե լեզուն այնպիսին է, որ նրա բառերում ձայնավորներն ընկնում են միմյանց մոտ, և բաղաձայններն էլ միմյանց մոտ են կուտակվում, ապա այսպիսի լեզուն ձայնավորների բարձր տոկոս ունենալով հանդերձ կլինի անբարեհնչյուն։ Հետևաբար պետք է հաշվի առնել բարեհնչյունության մյուս պայմանները ևս, և առաջին հերթին լեզվի մեջ հնչյունների զուգորդումների կանոններն ու օրինաչափությունները, որոնց համաձայն էլ կազմվում է վանկը։

Հայերենի բոլոր ձայնավոր հնչյուններն առանձնաբար վանկ են. այս դեպքում վանկը կազմված է լինում մեկ հնչյունից (ա, ո, օ, ու, ի, ե, է, ը)։ Առանձնաբար վանկ են կազմում նաև երկհնչյունները (այ, յա, ոյ, օյ, յո, ույ, յու, յե, եյ, էյ, յի, յը)։ Բաղաձայնների հետ զուգորդվելով՝ ձայնավորներն ու երկհնչյունները վանկ են կազմում հետևյալ կերպ.

ա. Ձայնավորից և երկձայնից առաջ՝ վանկի սկզբում, կարող է լինել միայն 1 բաղաձայն, ինչպես՝ կա, սո, բու, գե, լի, հայ, խոյ, լույ, դյու և այլն։

բ. Ձայնավորից և երկձայնից հետո՝ վանկի վերջում, կարող է լինել 1 կամ 2 բաղաձայն, ինչպես՝ ակ, ուր, այր, արտ, անձ, կյանք և այլն։ Միայն մի երկու վանկերում, իբրև բացառություն, վերջում զուգորդվում են 3 բաղաձայն, ինչպես՝ պարտք, կուրծք, անցք, վարձք և փոխառյալ՝ Մարքս, վերստ։

Ձանազան զուգորդումները նկատի ունենալով՝ կարող ենք ասել, որ հայերենում վանկն անհամեմատ պարզ պատկեր է ներկայացնում. այն քանակով տատանվում է 1-ից մինչև 5 հնչյունների միջև (ըստ որում 5 հնչյուն ունեցող վանկերը բացառություն են), և վանկարար միավորից (ձայնավոր և երկ-

հնչյուն) առաջ կարող է ունենալ միայն մեկ, իսկ հետո՝ առավելը երկու բաղաձայն, հետևյալ օրինակով՝

ա	անձ
այ	հա-մայնք
յա	կյանք
կա	անցք, պարտք
ակ	
այն	
նյա	

Վանկի այսպիսի պարզ կառուցվածքը ժամանակակից հայերենի բարեհնչյունության պայմաններից մեկն է։ Արդի հայերենը իրավունք ունենք այս տեսակետից բարեհնչյուն համարելու մանավանդ եթե նկատի ունենանք հետևյալը.

ա. Կան լեզուներ, որոնք վանկի սկզբում մի քանի բաղաձայնների կուտակումներ ունեն։ Այսպես, օրինակ, ռուսերենը, որ հայերենի համեմատությամբ ձայնավորների ավելի բարձր տոկոս ունի, վանկի սկզբում թույլ է տալիս մինչև չորս բաղաձայնի կուտակում (օրինակ, круг—*2*, брать—*2*, страна—*3*, встряпать—*4*, встряхнуть—*4*, взгляд—*4*, встреча—*4 և այլն), որոնք արտաբերվում են միանգամից, որով և արտասանությունը դառնում է դժվար։ Ավելի բարդ պատկեր են ներկայացնում աբխազաադիգեական լեզուները, նաև վրացերենը, որտեղ մինչև 8 բաղաձայն կարող է կուտակվել վանկի սկզբում։ Օրինակ, վրացերենում* մմծղնվելի *(հովիվ) բառում կա 6, իսկ* կվրծրքվնիս *(մեզ կրթում է) բառում՝ 8 բաղաձայն՝ վանկի սկզբում, հայերենի մեկ բաղաձայնի դիմաց։*

Ծանոթություն. Սա չպետք է շփոթել բաղաձայնների այն կուտակումների հետ, որ հայերենի գրավոր խոսքում է լինում։ Բառի սկզբում հայերենում հնարավոր է մինչև 9 բաղաձայն գրի կուտակում, ինչպես՝ **կզրնգզրնգա, կչրխկչրխկա,** սակայն մենք դրանք արտասանում ենք չգրվող, բայց արտասանվող Ը-երով՝ հայերենի վանկի կազմության օրենքի համաձայն (կը-զը-ըընգ-զը-ըն-գա), այնինչ ուրիշ լեզուներում այս բարեհնչյունության Ը-ն գոյություն չունի։

բ. Վանկի վերջում բաղաձայնների արտասանությունը հայերենում միջին դժվարություն է ներկայացնում։ Կան լեզուներ, օրինակ՝ ճապոներենը և չինարենը, որոնք վանկի վերջում միայն

մեկ բաղաձայն են ունենում, այնինչ հայերենը թույլ է տալիս նաև երկու բաղաձայն։ Սակայն կան լեզուներ էլ՝ օրինակ, անգլերենը, վրացերենը, որոնք վանկի վերջում թույլ են տալիս 3 բաղաձայնի կուտակում, իսկ ռուսերենը՝ մինչև չորս բաղաձայնի կուտակում (օրինակ՝ чувство—чувств, лекарство—лекарств)։

գ. Բարեհնչյունության տեսակետից կարևորություն է ներկայացնում վանկարար հնչյունը։ Կան լեզուներ, որ քիչ ձայնավորներ ունեն։ Օրինակ, արաբերենն ունի 3 ձայնավոր (ա, ի, ու), իսկ ուբիխերենը՝ միայն ա և սրա տարբերակը (ընդամենը 2 ձայնավոր)։ Քիչ ձայնավորների պատճառով առաջացող նույնահնչյունությունը կարող է վերածվել անբարեհնչյունության։ Կան լեզուներ էլ, որոնց մեջ ձայնավորները շատ են։ Այսպես, օրինակ, կովկասյան ճամալ լեզվում կա 17 ձայնավոր, որոնց մեջ՝ 4 տեսակ ա, 4 տեսակ ու և 3 տեսակ է, մի բան որը ևս անբարեհնչյունության պատճառ է։ Անբարեհնչյունության պատճառ կարող են դառնալ նաև այն ձայնորդները, որոնք վանկարար արժեք ունեն։ Այսպես, օրինակ, խորվաթերենում վանկարար է r-ն (trg—հրապարակ, vrt—պարտեզ), իսկ չեխերենում՝ r-ն և l-ն (brk—փետուր, vrch—գագաթ, prst—մատ, vlk—գայլ և այլն)։ Ձայնավորների համեմատությամբ կարճ լինելով՝ ձայնորդները դժվարացնում են արտասանությունը և խանգարում բարեհնչյունությանը։

դ. Եվրոպական ժամանակակից մի քանի լեզուներում գոյություն ունեն երկբարբառներ, մի հանգամանք, որը ևս արտասանական դժվարության պատճառ է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ բառակազմության և ձևակազմության ժամանակ երկբարբառներին կարող են միանալ և այլ ձայնավորներ՝ էլ ավելի դժվարացնելով արտասանությունը։ Արդի հայերենը չունի երկբարբառ, սակայն ունի 10 երկհնչյուններ, որոնց 1 բաղադրիչը երկհնչյունին տալիս է մեղմություն և հաճելիություն։

ե. Վանկի կազմության մյուս առանձնահատկությունը հնչյունների քանակն է և նրանց շարադասությունը։ Այն լեզուներում, որոնց մեջ ձայնավորի հետ զուգորդվում է միայն մեկ բաղաձայն, ամենաերկար վանկն էլ կարող է բաղկացած լինել 3 հնչյունից։ Ձայնավորը նշանակելով 0 իսկ բաղաձայնը՝ I, վանկի կառուցվածքը այդպիսի լեզուներում կարող ենք արտահայտել հետևյալ ձևով՝ 0, 0I, I0, I0I։ Այսպիսի լեզուներ են, օրի-

նակ, չինարենը, թուրքերենը, պարսկերենը, ճապոներենը (վերջինս չունի 01 վանկի տիպը) և այլն։

Հայերենում քանի որ վանկը վերջում կարող է ունենալ նաև 2 բաղաձայն՝ 011 և 1011 կազմություններով, այդ պատճառով էլ ունենք բազմաթիվ վանկեր՝ կազմված 3 (101, 011) և 4 (1011, նաև 0111) հնչյուններով (5 հնչյունով՝ 10111 կազմված վանկերը, ինչպես ասվել է, բացառություն են)։

Հայերենում վանկերի տեսակների հաճախականության պատկերը պարզելու համար մենք ուսումնասիրել ենք Շիրվանզադեի «Արամբին» վեպը։ Շուրջ 1150 վանկերը ներկայացնում են հետևյալ պատկերը.

1 հնչյունով կազմված վանկերի թիվն է	8
2 » »	215
3 » » » »	765
4 » » »	157
5 » »	5

Այնուհետև՝

Զայնավորով վերջացող վանկերի թիվն է	170
Երկհնչյունով » » »	37
1 բաղաձայնով	790
2 » » »	150
3 » » »	3

Այս համեմատական տախտակը ցույց է տալիս, որ արդի հայերենի համար ամենահաճախականը 3 հնչյունից կազմված և 1 բաղաձայանով վերջացող 101 տիպի (օրինակ՝ սար) վանկն է, որից հետո՝ 2 հնչյունով կազմված ձայնավորով վերջացող 10 կառուցվածքի (օրինակ՝ սա) վանկը, այնուհետև՝ 4 հնչյունից կազմված երկու բաղաձայնով վերջացող 1011 կառուցվածքի (օրինակ՝ գործ) վանկը։

Վանկի հնչյունների քանակով հայերենն աշխարհի լեզուների մեջ միջին դիրք է գրավում. եթե կան լեզուներ, որոնց վանկերը համեմատաբար պարզ կազմություն ունեն, ապա կան լեզուներ էլ, որոնց վանկը վանկերի սկզբի և վերջի բաղաձայնների կուտակումների հետևանքով հայերենի վանկի համեմատությամբ կրկնակի անգամ երկարում է (այսպիսին են վանկերը հատկապես կովկասյան լեզուներում)։ Մոտավոր հաշ-

վումներով արդի հայերենում յուրաքանչյուր 100 վանկերից մեկ հնչյունով կազմված է լինում 5 վանկ, 2 հնչյունով՝ 50, 3 հնչյունով՝ 39, իսկ 4 հնչյունով՝ 6։ Հայերենի առանձնահատկությունն այն է, որ ամենահաճախական երկու տիպի վանկերը՝ բաղաձայն+ձայնավոր (10) և բաղաձայն+ձայնավոր+բաղաձայն (101) կառուցվածքի, ամենահեշտ արտասանվող վանկերն են ոչ միայն հայերենում, այլև լեզուներում ընդհանրապես, և դրանք միասին կազմում են հայերենի ամբողջ վանկերի ավելի քան 80 %-ը։ Այս անշուշտ հայերենի բարեհնչյունության լավագույն վկայություններից մեկն է։ Խոսքի շղթայում ամենահեշտ արտասանվող վանկը բաղաձայն+ձայնավոր (10) տիպն է (օրինակ՝ բա սա գա.... յե–սու–ղու), որը նույնիսկ ավելի հեշտ է արտասանվում, քան 1 ձայնավորով կազմված վանկը (հմմտ. ռուսերեն а и у...)։ Սրան հակառակ 01 կառուցվածքի վանկը, որ անհամեմատ դժվար է արտասանել (հմմտ. եկ, ատ իր... եթե առանձին-առանձին արտասանենք), հայերենում շնչին հաճախականություն ունի (շուրջ 5 %)։

զ. Բարեհնչյունության պայմաններից մեկն էլ հնչյունների կազմությունն ու արտաբերության տեղն է՝ կապված ժողովրդի արտասանական կարողության։ Կան լեզուներ, որոնցում զգալի տեղ ունեն հետնալեզվային և կոկորդային հնչյունները։ Այսպես, օրինակ, ավարերենն ունի 14 տեսակ Կ, իսկ ագուլերենը՝ 8 տեսակ Ք և 11 տեսակ Կ։ Կան լեզուներ, որոնք ունեն ռնգային բարդ հնչյուններ. օրինակ՝ բանտու լեզուներում կան նտ, նդ, նկ, սպ, մփ, նտf, նկf, մպս, մպժ, իսկ աֆրիկյան դահոմե լեզուն ունի բարդ պայթականներ՝ գբ, կպ, գբլ, կպլ։

Հայերենում կա միայն 1 կոկորդային հնչյուն՝ հ, որ ձայնագետների վկայությամբ հաճելի ու մեղմ հնչյուն է։ Հայերենի 36 հնչյուններից 27-ը պարզ հնչյուններ են, իսկ 9-ը՝ բարդ։ Բարդ հնչյուններից 3-ը՝ փ, f, թ-ն շնչեղացված պ, կ, տ են, իսկ 6-ը՝ ունեն բարդ կազմություն. ձ-ն դ-զ է, ջ-ն՝ դ–ժ, ծ-ն՝ տ–ս, ճ-ն՝ տ–շ, իսկ ց-ն՝ տ–ս–հ, չ-ն՝ տ–շ–հ։ Բարդ հնչյուններից դժվար արտասանություն ունեն ձ, ծ, ց, ջ, ճ, չ հնչյունները, հատկապես երբ դրանք ընկնում են միմյանց մոտ (ինչպես, օրինակ՝ չճչա, չճաճաչեցի), պարզ հնչյուններից դժվար են արտասանվում ղ և խ հնչյունները, երբ իրար մոտ են։ Անցյալում ունեցել ենք մի քանի բառ ղ և խ հնչյունների զուգորդումով (աղխել, բղխել, ծղխնի, ուղխ և այլն), որոնց մեջ ղ-ն ընկել է մեր ժողովրդի արտասա-

նական կարողության փոփոխության հետևանքով (այժմ միայն ուղիղ բառն է, որ նույնությամբ գործածվում է պոեզիայի լեզվում)։ Որոշ չափով տհաճ են արտասանվում նաև շչական ու սուլական հնչյունները, հատկապես երբ զուգորդվում են, սակայն այս կարգի անպատեհություններ ամեն մի լեզվում էլ լինում են։ Սրան հակառակ հայերենի բաղաձայնները եռյակներով կամ զույգերով կազմում են լծորդություններ, որոնք կարևոր դեր ունեն խոսքի բանաստեղծականության մեջ, քանի որ դրանցով են կազմվում բաղաձայնույթն ու հանգիտությունը։ Մեր բաղաձայնները կազմում են լծորդական այսպիսի շարքեր.

Բ—Պ—Փ	Վ—Ֆ	Մ—Ն
Գ—Կ—Ք	Ղ—Խ	Լ—Ր—Ռ
Դ—Տ—Թ	Զ—Ս	Հ—Յ
Ձ—Ծ—Ց	Ժ—Շ	
Ջ—Ճ—Չ		

Ընդհանրապես լեզուներում բարեհնչյուն են ճանաչված բաղաձայններից ն-ն, ր-ն և մ-ն, հենց այն հնչյունները, որոնք հայերենում վ-ի և յ-ի հետ միասին ամենահաճախական բաղաձայն հնչյուններն են (տե՛ս հայերենի հնչյունների հաճախականության համեմատական աղյուսակը հաջորդ էջերում)։

Բարեհնչյունությունը մի կողմով լեզվի օբյեկտիվ իրողության արդյունք է. նրանում կարևոր դեր ունի ժողովրդի արտասանական կարողությունը, որը նույնպես օբյեկտիվ երևույթ է, անհատի կամքից անկախ, զարգացող ու փոփոխվող երևույթ։ Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր լեզվին հատուկ հնչյուններ (օրինակ, վրացիներն ունեն կոկորդային Ղ՝, ռուսները՝ Щ), իր լեզվին հատուկ բառակառույցներ (օրինակ՝ ռուսերենում А-ով ըսկըսվող բառ չի եղել անցյալում. արդի ռուսերենում А-ով սկսվող բոլոր բառերը փոխառություն են։ Հայերենում Ր-ով սկսվող բառ չենք ունեցել, և մեր մի երկու Ր-ով սկսվող բառերը ևս փոխառություն են, ինչպես և փոխառություն են բոլոր այն բառերը, որոնց մեջ Ֆ կա։ Քանի որ սեմական լեզուներում՝ արաբերենում, Ներայերենում, ասորերենում, եթովպերենում բառը երկու և ավելի բաղաձայնով չի կարող սկսվել, այդ պատճառով էլ այսպիսի կազմ ունեցող փոխառյալ բառի սկզբից այդ լեզուները հավելում են Ա և այլն)։ Մեր լեզվի զարգացման մի փուլում սովորական են եղել երկբարբառները և եռաբարբառները, սակայն այժմ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ԸՍՏ 10 ԱՌԲՅՈՒՐՆԵՐԻ*

Հնչյուն-ները	Ռադիոյի «Դա-կիա բեռ»	Ռադիոյի «Սամվել»	Ավել Բա-կունց «Երգիչ ընկուզե-նիներում»	Ռ. Դեմիրճ-յան «Վանդանամ»	Հայր-Դոս «Ոսկեմատեան արտասվանքի»	Սեր. Զորյան «Սասա դպիր»	Հր. Մաթևոս-յան «Հոգեղեն հաշտ»	ԽՍՀԿ պատմու-թյան դասա-գիրք	«Խորհրդային Հայաստան» օրաթերթ	Էդ. Աղայան «Ընդհանուր և հայկական բարդագիտություն»	Ընդամենը	Տոկոսը (մոտավոր հաշվով)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Ա	161	165	169	166	165	152	136	178	172	181	1645	15.
Բ	12	7	15	11	12	12	7	10	4	23	113	1.
Գ	10	16	12	13	23	9	9	15	17	9	133	1,2
Դ	17	21	15	11	22	11	7	13	18	13	148	1,3
Ե (Է)	76	117	93	95	96	100	96	74	75	101	923	9.
Զ	3	2	5	17	10	3	8	6	5	3	62	0,5
Ը	30	19	11	24	13	24	26	15	17	21	200	1,9
Թ	12	9	7	12	11	7	11	16	16	15	116	1.
Ժ	5	3	1	2	7	2	9	4	10	2	45	0,4
Ի	71	73	63	37	71	58	53	55	54	45	580	5,2
Լ	19	25	24	8	17	15	22	29	13	22	194	1,7
Խ	9	9	6	11	7	11	14	9	9	—	85	0,7
Ծ	6	9	13	12	11	13	15	17	7	3	106	0,9
Կ	36	38	21	41	34	40	39	58	31	48	360	3,5
Հ	14	17	19	36	5	13	6	18	25	15	178	1,5
Ձ	1	10	8	—	10	12	2	—	3	—	46	0,4
Ղ	8	14	15	12	10	15	13	16	16	9	130	1,2
Ճ	2	2	3	2	2	6	9	4	3	5	38	0,3
Մ	43	31	36	30	39	49	31	40	31	35	365	3,3
Յ	86	126	87	106	42	34	115	35	101	125	857	7,6
Ն	103	93	97	83	99	115	72	86	106	118	972	9,2
Շ	13	10	10	12	3	10	7	5	8	3	91	0,8
Ո (Օ)	34	39	31	51	35	35	33	35	45	34	372	3,2
Չ	6	4	13	5	23	9	12	1	4	9	86	0,7
Պ	15	13	8	16	12	12	18	23	12	3	132	1,2
Ջ	1	3	6	5	7	8	8	3	5	2	48	0,4
Ռ	7	11	15	5	13	19	20	4	6	8	108	0,9
Ս	30	19	22	22	37	29	9	34	22	22	246	2,2
Վ	63	70	68	88	41	32	67	60	75	60	624	5,9
Տ	28	25	28	33	31	30	27	43	28	28	299	2,6
Ր	92	86	82	104	83	91	75	75	93	98	879	7,9
Ց	25	22	23	19	23	16	23	14	13	19	197	1,7
Ու	43	40	45	33	43	51	47	55	33	55	445	4.
Փ	5	5	7	4	3	3	4	4	7	—	42	0,4
Ք	9	16	17	12	14	10	8	7	15	5	103	0,9
Ֆ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	0.
											11914	98,6

* Աղյուսակում արտացոլված են պատահականորեն առնված հատվածի 1000 տառերի տվյալները։

մեր ժողովրդի արտասանական կարողության փոփոխության հետևանքով երկբարբառներին ու եռաբարբառներին փոխարինելու են եկել երկհնչյունները, և մենք օտար բառերի երկբարբառներն ու եռաբարբառներն արտասանում ենք հորանջով (հիատուս)։

Քննելով մեր լեզվի բարեհնչյունության և անբարեհնչյունության բոլոր օբյեկտիվ տվյալները՝ այլ լեզուների համեմատությամբ, գալիս ենք այն եզրակացությանը, որ արդի հայերենը իր բարեհնչյունությամբ ետ չի մնում բարեհնչյուն ճանաչված մյուս լեզուներից։

Սակայն պետք է իմանանք, որ բարեհնչյունությունը մյուս կողմով էլ արդյունք է լեզվագործածության, որ սուբյեկտիվ երևույթ է։ Շատ հաճախ խոսքի բարեհնչյունությունը պայմանավորված է լինում խոսողի կամ գրողի նպատակադրված ընտրությամբ (այսպես է լինում հատկապես քնարական բանաստեղծություններում)։

ՆՎԱԳԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսքի արտաքին տպավորության մյուս կողմն են կազմում նվագայնությունն ու ներդաշնակությունը։ Մեծ նվագայնությամբ ու ներդաշնակությամբ օժտված խոսքն ավելի ուժեղ, հաճելի և տևական տպավորություն է թողնում մեր լսողության զգայնության վրա, քան քիչ նվագայնությամբ ունեցողը։

Նվագայնության տարրերը գտնվում են լեզվի կառուցվածքի մեջ և օբյեկտիվ (խոսողի ցանկությունից անկախ) երևույթ են։ Ըստ ձայնագետ մասնագետների երաժշտական ձայնով, թեև տարբեր չափերով, օժտված են թե ձայնավոր և թե բաղաձայն հնչյունները, որոնք բնորոշվում են չորս հատկանիշներով՝ ուժգնությամբ, բարձրությամբ, երանգով (տեմբր) և տևողությամբ։

Նախ ասենք, որ արդի հայերենի 6 ձայնավոր հնչյունները մաքուր՝ անխառն ու պարզ հնչյուններ են և չունեն զանազան կարգի տարբերակներ (երկար ու կարճ, փակ և բաց, շեշտված, ռնգայնացված և այլն), որ դիտվում են շատ լեզուներում։ Հայերենի ձայնավորները ձևավորվում են բերանի խոռոչում՝ լեզվի զանազան դիրքերի հետևանքով առաջացած համեմատաբար թույլ նեղվածքներում և ունեն հետևյալ տեղաբաշխումը.

ա, օ (ո), ու ձայնավորները հետնալեզվային են, ը-ն՝ միջնալեզվային, իսկ է (ե)-ն և ի-ն՝ առաջնալեզվային։ Ա-ն ստորին բարձրացման ձայնավոր է, օ (ո)-ն, ը-ն և է (ե)-ն՝ միջին բարձրացման, իսկ ու-ն և ի-ն՝ վերին բարձրացման։

Ըստ ձայնագետների (Հելմհոլց, Հերման, Լերմոյե և ուրիշներ) ձայնավորների արտասանությունը առնչություն և համապատասխանություն ունի երաժշտական ձայների հետ, թեև պետք է խոստովանել, որ նրանք համաձայն ու միաձայն չեն այդ համապատասխանությունների հարցում։ Հայերենի հնչյունների նվագայնության որոշման հարցով զբաղվել է երաժիշտ-լեզվաբան Գրիգոր Վանցյանը[12]։ Հայերենն այս տեսակետից համեմատելով Եվրոպական և մի քանի այլ լեզուների հետ, նա գալիս է այն եզրակացության, որ հայերենն ունի երաժշտականության բարձր տվյալներ, և եթե նվագայնությամբ զիջում է իտալերենին ու ճապոներենին, ապա առաջ է գերմանական և սլավոնական լեզուներից (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, լեհերեն և այլն)։

Հայերենի բարձր նվագայնության գաղտնիքը թաքնված է հնչյունների արտասանական առանձնահատկությունների մեջ։ Հնչյունի նվագայնության չափը որոշվում է նրանով, թե ինչպիսի արտասանության ժամանակ է այն ամենից պայծառ հնչում։ Այս տեսակետից հայերենում գոյություն ունի հետևյալ օրինաչափությունը։ Ցածր տոներում ամենապայծառ հնչող ձայնավորը ու-ն է։ Մի քիչ ավելի բարձր տոներում պայծառ հնչող ձայնավորը օ-ն է։ Միջին տոներում պայծառ է հնչում ա-ն։ Միջինից մի քիչ բարձր տոներում պայծառ է հնչում ը-ն, ավելի բարձր տոներում՝ է-ն, իսկ ամենաբարձր տոներում՝ ի-ն։ Հետևաբար հայերենի ձայնավորների նվագայնությունն ունի այսպիսի պատկեր.

ի, է, Ը — պայծառ են հնչում բարձր տոներում

Ա — պայծառ է հնչում միջին տոներում

---

[12] Գ. Վանցյանի «Հայերենի նվագայնությունը» վերնագրով հոդվածը լույս է տեսել «Մուրճ» ամսագրի 1897 թ. 6-րդ համարում (էջ 829—847)։

Օ
Յի } *պայծառ են հնչում ցածր տոներում*

Այս պատկերը ցույց է տալիս, որ ու և օ հնչյունները հարմար են ցածր տոներում, իսկ ի-ն և է-ն՝ բարձր տոներում երգվելու համար։ Սրանից կարելի կլիներ եզրակացնել, որ առավել նվագային են այն լեզուները, որոնց մեջ ի-ն և է-ն ունեն մեծ հաճախականություն։ Եվ դա իսկապես այդպես է։ Բայց կա մի վերապահություն։ Անշուշտ երգելիս ի-ն և է-ն նվագայնությամբ առաջին տեղում են, սակայն բարձր տոներում պայծառ հնչելով հանդերձ մեծ լարում են պահանջում ինչպես երգողից, այնպես էլ լսողից և շուտ հոգնեցնում թե՛ երգողին և թե՛ ունկնդրողին։ Բացի դրանից, բանավոր խոսքի սովորական տոնը համապատասխանում է երաժշտական միջին տոներին: *Ա-ն, որ պայծառ է հնչում միջին տոներում։ Վանցյանի արտահայտությամբ «մի տեսակ ոսկի միջինն է կազմում ձայնավորների մեջ»։ Հետևաբար բանավոր խոսքը նկատի ունենալով՝ պետք է առավել նվագային համարել այն լեզուն, որի մեջ ա-ն առավել հաճախական է։ Այստեղ էլ արդի հայերենը լավագույն դիրքում է շատ այլ լեզուների համեմատությամբ։ Ա-ն հայերենի ոչ միայն ձանյավորների, այլև բոլոր հնչյունների մեջ ամենահաճախականն է։ Համեմատաբար մեծ հաճախականություն ունեն նաև ե-ն, ի-ն և ը-ն (տե՛ս համեմատական աղյուսակը 124—125 էջերում), որտեղ, սակայն, ը-ն մեծ մասամբ գրով չարտահայտվելու պատճառով փոքր ցուցիչով է հանդես եկել)։*

Նույն ձևով որոշվում է նաև բաղաձայնների նվագայնության չափը։ Արդի հայերենի բաղաձայններն ըստ ձայնի և աղմուկի պարունակության հետևյալ պատկերն ունեն.

Ձայնորդ	Ձայնեղ		Խուլ		Շնչեղ խուլ
Մ	Բ	Վ	Պ	Ֆ	Փ
Ն	Գ	Ղ	Կ	Խ	Ք
Լ	Դ	Ջ	Տ	Ս	Թ
Ր	Զ	Ժ	Ծ	Շ	Ց
Ռ	Ջ	—	Ճ	Հ	Չ
Յ					

Բաղաձայն հնչյուններից ձայնորդներն ու ձայնեղները պայծառ են արտասանվում ցածր տոներում, միջին տոներում պայծառ են արտասանվում խուլերը, իսկ բարձր տոներում՝ շնչեղ

խուլերը։ Այս աղյուսակը ցույց է տալիս, որ առավել նվագային են այն լեզուները, որոնց մեջ շատ են և հաճախական շնչեղ խուլ և խուլ հնչյունները։ Այս բանում մենք կարող ենք հեշտությամբ համոզվել, եթե համեմատենք արևելահայերենը արևմտահայերենի հետ։ Արևմտահայերենը նվագայնությամբ ու երաժշտականությամբ գերազանցում է արևելահայերենին (արևմտահայերենը մեր ականջին շատ ավելի քաղցր ու հաճելի է հնչում)։ Սրա պատճառն այն է, որ արևմտահայերենը բ, գ, դ, ձ, ջ ձայնեղ հնչյունները վերածել է շնչեղ խուլերի։ Արևելահայերենում էլ, քանի որ այս հնչյունները r-ից (մասամբ ն-ից հետո) վերածվել են փ, f, թ, ց, չ հնչյունների, որոշ չափով բարձրացել է նվագայնությունը խոսքի տոնում։

Հայերենի բոլոր հնչյունների հիշյալ օբյեկտիվ տվյալների ընդհանուր գումարը սալիս է բարձր երաժշտականություն և նրվագայնություն երգելիս, որի հետևանքով էլ մասնագետների կարծիքով հայերենը մրցում է երաժշտական համարված այնպիսի լեզուների հետ, ինչպիսիք են իտալերենն ու իսպաներենը։ Վերոհիշյալ պատճառներով հայերենը բարձր տվյալներ է հանդես բերում նաև խոսքի տոներում, որի հետևանքով էլ այն դասվում է դուրեկան լեզուների շարքը։

Միաժամանակ պետք է ասենք, որ լեզվի դուրեկանության օբյեկտիվ այս չափանիշից բացի գոյություն ունի սուբյեկտիվ չափանիշ։ Այսպես, օրինակ, կան լեզվաբաններ, որոնք աշխարհի ամենադուրեկան լեզուներից մեկը համարում են չինարենը, բայց շատ լեզվաբաններ և երաժիշտներ համաձայն չեն այս տեսակետին։ Ռուսի համար սովորական մի հնչյուն է Щ-ն, հայի համար՝ Խ-ն, սակայն դրանք անտանելի են հնչում իտալացու ականջին։ Այսպես և ուրիշ հնչյուններ։

Խոսքի նվագայնության և ներդաշնակության մեջ կարևոր դեր ունի շեշտը։ Տարբեր լեզուներ ունեն շեշտադրության իրենց օրինաչափությունները։ Շատ լեզուներում շեշտը կայուն դիրք ունի։ Մի շարք լեզուներում (լատիշերեն, ֆիններեն, հունգարերեն, չեխերեն և այլն) շեշտվում է բառի առաջին ձայնավորը։ Գերմաներենում շեշտվում է արմատի ձայնավորը, այս պատճառով էլ շեշտը կարող է ընկնել բառի թե՛ սկիզբը, թե՛ մեջը և թե՛ վերջը։ Ավելին, բառի բարդության հետևանքով նրա մեջ կարող են երկու և ավելի շեշտեր համատեղվել։ Վրացերենում, լեհերենում և հայերենի արևելյան բարբառներում շեշտվում է բառի նախա-

վերջին վանկի ձայնավորը (այսինքն՝ վերջընթեր է)։ Հայոց գրական լեզվում, ֆրանսերենում և թուրքերենում շեշտվում է բառի վերջին ձայնավորը։ Կան լեզուներ էլ, որոնց շեշտը կայուն դիրք չունի։ Այդպիսին է, օրինակ, ռուսերենը, որի շեշտը կարող է բառի բոլոր դիրքերում էլ հանդես գալ։ Բոլոր այս դեպքերից մասնագետների վկայությամբ լսողության վրա ծանր տպավորություն է թողնում շեշտը, երբ այն դրվում է բառի առաջին վանկի վրա։ Այնինչ հաճելի տպավորություն է լինում այն դեպքում, երբ շեշտվում է վերջին վանկի ձայնավորը։ Առաջին խմբի լեզուներից են, օրինակ, գերմաներենը և անգլերենը։ Հայերենը երկրորդ խմբի լեզուների մեջ է։ Սակայն հայերենն ունի մի առավելություն, որ չունեն որոշ լեզուներ. այդ այն է, որ հայերենում շեշտադրության միակերպությունը բարեխառնվում է հարաշեշտությամբ (մի քանի բառեր ինքնին հարաշեշտ են. օրինակ, զոնե, որպեսզի, գրեթե, մանավանդ, նամանավանդ, միմիայն, գուցե, միգուցե, որևէ, ինչևէ, իհարկե, որերորդ, քանիերորդ, չէ՞ որ, ինչ-որ. այսպես են նաև մի շարք հարադրավոր բայեր, ինչպես՝ թափ տալ, վազ տալ, պար գալ, ցույց տալ, խույլ տալ և այլն։ Հարաշեշտ են լինում այն բառերը, որոնք վերջանում են Ը հոդով։

Բանավոր խոսքի համար կարևոր են նաև հնչյունների ու բառերի արտասանության տևողությունը և արագությունը։ Եթե նկատի չունենանք առանձին անհատների, պետք է ասենք, որ լեզուները տարբերվում են նաև այս հատկանիշներով։ Այսպես, օրինակ, եթե հույները շատ արագ են խոսում, ֆրանսիացիների խոսքն աշխույժ է և արագ, անգլիացիներինն անհամեմատ ցածր է, խուլ և դանդաղ, ռուսներինը միջինից մի քիչ արագ, ապա մեր՝ հայերիս խոսքը միջին տեղ է բռնում[13] (նկատի ունենք գրական լեզուն, այնինչ բարբառները և խոսվածքները զգալիորեն տարբերվում են։ Այսպես, լեռնային գավառներում համեմատաբար բարձր են խոսում, Լոռվա խոսվածքներում օժանդակ բայը հարցական նախադասություններում նկատելիորեն երկարաձգվում է և այլն)։

Վերոհիշյալ բոլոր փաստերը գալիս են հաստատելու մի բան, որ հայերենը իր օբյեկտիվ տվյալներով բարեհնչյուն ու նվա-

---

[13] Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, Ներածություն հտ. 1955, էջ 279։

գային լեզու է, և որ այդ արժանիքներն արդյունք են մեր լեզվի հնչյունների ոչ միայն հարստության, այլև նրանց արտասանության, վանկի մեջ նպաստավոր զուգորդությունների, հայերենի մեղմ շեշտադրության։

Թե հայերենի ընձեռած այսքան մեծ հնարավորություններից ով ինչպես է օգտվում, կախված է լեզուն գործածող անհատից, նրա լեզվամտածողությունից, լեզվական ըմբռնումներից ու սովորություններից, ճաշակից, շնորհքից, նպատակադրումից, այսինքն՝ խոսքի արտաքին, գեղագիտական կողմը, թեև իր հիմքում ունենում է լեզվի օբյեկտիվ տվյալները, սակայն պայմանավորված է լինում սուբյեկտիվ գործոններով։

ՀՆՉԵՐԱՆԳ ԵՎ ԵԼԵՎԷՋՈՒՄ

Հ ն չ ե ր ա ն գ (*ինտոնացիա—լատ.* Intonare—*բարձր արտասանել*) *բանավոր խոսքի անբաժանելի տարրերից մեկն է, լեզվաբան Շարլ Բալլի արտահայտությամբ՝ խոսքի մշտական մեկնաբանը։ Հնչերանգը ոմանք համարում են բառի, ոմանք էլ՝ նախադասության անկապտելի հատկանիշ (ատրիբուտ), այնինչ հնչերանգն անբաժան է ոչ միայն բառից ու նախադասությունից, այլև խոսքից։ Մի կողմ թողնելով բառի և նախադասության հետ կապված հնչերանգը, համառոտակի անդրադառնանք հնչերանգի այն երևույթներին, որոնք կապված են հատկապես խոսքի հետ։ Ռուս լեզվաբան Պեշկովսկին, որն առաջինն է ռուսերենի շարահյուսության երևույթների նկարագրության հետ մեկտեղ տվել հնչերանգի դերի գնահատականը, իր* «Вопросы методики русского языка, лингвистики и стилистики» *աշխատության մեջ այն հետաքրքրական միտքն է արտահայտել, որ քերականությունն ու բառապաշարը և հնչերանգն ու խոսքի իրադրությունը զուգահեռ գոյություն ունեցող միմյանց պայմանավորող երևույթներ են, որ փոխադարձաբար լրացնում են միմյանց, ըստ որում, եթե թույլ արտահայտություն ունի քերականությունը կամ բառապաշարը, ապա ուժեղ է լինում արտահայտված հնչերանգը կամ խոսքի իրադրությունը, և ընդհակառակը։*

Խոսքի հնչերանգը պայմանավորված է խոսողի հոգեբանությամբ, խոսքի կառուցվածքով, իրադրությամբ, այն բանով, թե ում է ուղղված խոսքը և այլն։ Այսպիսի հանգամանքներով է

պայմանավորված ձայնի տոնը: Ձայնի բարձրության պատճառ կարող է լինել հաղորդակցվող անհատների հեռավորությունը, աղմուկը, խոսակցի վատ լսելը, սովորությունը, լսարանի մեծությունը, իրադրության հանդիսավորությունը, խոսողի բարկությունը և այլն: Սրան հակառակ ցածր ձայնի պատճառ կարող է լինել գաղտնիությունը, նվաստության զգացումը, վախը, խոսքին կարևորություն տալու և աղմկող ունկնդիրներին այդ ձևով կարգի հրավիրելու ձգտումը, հիվանդությունը, խոսակցի նկատմամբ ունեցած քնքշալից վերաբերմունքը և այլն:

Նույն բանը վերաբերում է խոսքի տեմպին: Բառերի արտասանությունը նախադասության մեջ և նախադասության արտասանությունը խոսքում կարող են լինել արագ կամ դանդաղ, ընդհատումներով և առանց ընդհատումների՝ համապատասխան այն բանի, թե ինչ հանգամանքներում ենք խոսում և ինչ հոգեբանության մեջ ենք: Արագ են խոսում բանավիճողները՝ հակառակորդին խոսելու նախաձեռնություն չտրամադրելու կամ նրան խոսքակոխ անելու համար: Խոսքի արագ տեմպի պատճառ կարող է դառնալ շտապելը (օրինակ՝ ելույթ ունենալիս), սովորությունը և այլն: Ընդհակառակն, բառերը հատիկ-հատիկ և նախադասությունները ընդհատումներով, նաև դանդաղ ենք արտասանում այն ժամանակ, երբ անհրաժեշտ է ընդգծել, ունկնդրին ավելի պարզ ու հասկանալի դարձնել, այլև թելադրելու, ուսուցանելու ժամանակ, խոսքին հանդիսավորություն տալու համար, հուզվածության դեպքում (բոլորը նկատած կլինեն, որ բարկացած մարդիկ բառերն արտասանում են վանկատելով) և այլն:

Ելևէջումը խոսքի ոգու իսկական արտահայտիչն է, որն անբաժան է նրա բաղադրիչ տարրերից: Այն լինում է երկու տեսակ՝ տրամաբանական և զգայական:

Տրամաբանական ելևէջման մեջ են մտնում տրամաբանական շեշտը և նախադասությունների այն ելևէջումները, որոնցով ձևավորվում են մտքերն իբրև կա՛մ պատմողական, կա՛մ հարցական, կա՛մ բացականչական և կա՛մ հրամայական նախադասություններ:

Տրամաբանական շեշտով որոշվում է հաղորդման համար կարևոր գաղափարը կա՛մ ըստ իմաստի, կա՛մ ըստ հաղորդման նորության: Օրինակ, Երեկոյան մենք հասանք քաղաք նախադասության յուրաքանչյուր անդամ բանահյուսվածքից դուրս կարող

է տրամաբանական շեշտ ստանալ և դառնալ կարևոր ըստ հիշյալ երկու հանգամանքների.

Երեկոյան մենք հասանք քաղաք։
Երեկոյան մենք հասանք քաղաք։
Երեկոյան մենք հասանք քաղաք։
Երեկոյան մենք հասանք քաղաք։

Սակայն բանահյուսվածքի մեջ տրամաբանական շեշտը միշտ նախադասության որոշակի անդամ է կրում և այսպիսի տարբերակներ չի թույլ տալիս։

Պատմողական նախադասությունների տրամաբանական ելևէջումը մի բարդ պատկեր է ներկայացնում, և դա պայմանավորված է պատմողական նախադասության կառուցվածքային բազմազանությամբ ու բարդությամբ։ Պատմողական նախադասության տրամաբանական ելևէջման ինչպիսին լինելը կախված է նախադասության կազմից, կառուցվածքից, տեսակից, նախադասության անդամների շարադասությունից։ Մի տեսակ ելևէջում ունի պարզ համառոտ նախադասությունը, մի այլ տեսակ՝ ընդարձակները, մի տեսակ՝ միավորյալները, մի ուրիշ տեսակ՝ համադասականները, միանգամայն այլ տեսակ՝ բարդ ստորադասականները՝ նաև իրենց կազմի մեջ մտնող երկրորդականների շարադասության համեմատ։ Բացի դրանից, մի տեսակ ելևէջում կունենա անդամների սովորական շարադասություն ունեցող պարզ նախադասությունը, մի այլ տեսակ՝ անդամների շրջուն շարադասությամբ նախադասությունները։ Տրամաբանական ելևէջումով տարբերվում են միմյանցից նաև չափական և արձակ, կշռույթավոր և ոչ կշռույթավոր խոսքերը։

Պատմողական նախադասությունները լինում են երկու տեսակ՝ պատասխան և հաղորդում։ Պատասխան հանդիսացող նախադասությունները, հարցմանը համապատասխան, բաժանվում են երկու խմբի։ Մի խումբ են կազմում այն նախադասությունները, որոնք հարցական նախադասությունների պատասխան են։ Քանի որ հարցական նախադասության հարցում արտահայտող բառը մտքի համար որոնելի գաղափարն է, այդ պատճառով էլ պատասխան նախադասության մեջ այդ գաղափարն արտահայտող բառը կրում է տրամաբանական շեշտ՝ անկախ այն բանից հարցումը գլխավո՞ր նախադասությամբ է արտահայտված, կողմնակի՞ հարցում է, գլխավո՞ր անդամին է վերաբերում, թե՞ երկրորդականին։ Օրինակ՝

— Ո՞ւր ես գնում, այ ճամփորդ,— հարցրեց չոր ծառը։
— Գնում եմ աստծու մոտ։ (Հ. Թումանյան)
— Ախ, դու Կկու, հիմար Կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Երեք հատ ձագ, աղա Աղվես։ (Հ. Թումանյան)
— Գնացեք տեսեք՝ ի՞նչն է կերել այգին։
— Գնացին տեսան՝ այծն է կերել այգին։ (Ժողովրդական)

Մի խումբ էլ կազմում են ներքին հարցման պատասխան հանդիսացող նախադասությունները, որոնց մեջ ևս որոնելի գաղափարն արտահայտվում է տրամաբանական շեշտ ունեցող բառով (նման նախադասություններում ներքին հարցումը չի արտահայտվում)։ Օրինակ՝

Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցեք,
Որ խաղաղ ու հանդարտ մահանան.
Ինձ անլաց թաղեցեք, ինձ անխոս թաղեցեք,
Լռություն, լռություն, լռություն անսահման...
(Վ. Տերյան)

Այստեղ ընդգծված անլաց ու անխոս հասկացությունները, որովհետև ներքին հարցման պատասխաններ են, կրում են տրամաբանական շեշտ։ Նույն ձևով տրամաբանական շեշտ են ունենում գլխավոր նախադասության ձևական անդամները, որոնք արտահայտված են լինում հարաբերական բառերով և դարձյալ ներքին հարց են ենթադրում։ Օրինակ՝

Ես վիճում եմ զավակի հետ,
Այն զավակի,
Որ իր մորը փող է տալիս դատարանով...
(Պ. Սևակ)

Պատմողական բնույթի նախադասության մեջ տրամաբանական ելևէջումը մի շարք գործառություններ ունի։ Այն միջոց է խոսքի զանազան իմաստային-տրամաբանական երանգներ արտահայտելու համար։ Նայած թե խոսքն ինչ նպատակ է հետապնդում, լրացուցիչ ինչ հանգամանքներով է ուղեկցվում, համապատասխան դրան էլ ելևէջումը կարող է լինել թվարկման, ուսուցողական, խրատական, մեկնական, բաղդատական և այլն։

Տրամաբանական ելևէջումն անբաժան է նախադասության կառուցվածքից. նրանով են ձևավորվում ոչ միայն նախադասու-

թյուններն ըստ բնույթի, այլև նրանց ավարտվածությունն ու չավարտվածությունը, իսկ միակազմ նախադասություններում այն փոխարինում է ստորոգմանը՝ դրանով ստանձնելով շատ կարևոր դեր։

Տրամաբանական ելևէջումը յուրահատուկ դեր ունի կոչականը ձևավորելու մեջ։ Կոչական բառն արտասանելիս ձայնի մի տեսակ ելևէջում է լինում, երբ մեկին դիմում ենք մի բան հաղորդելու կամ հարցնելու համար, մի այլ ձևով ենք այն արտաբերում հանդիմանելիս (Աշո՜ղ), արգելելիս (Աշո՛տ) և այլն։ Այդպես էլ կոչական ելևէջները կարող են լինել մեղմական-խնդրական (Միքայե՛լ, բալի՛կս, մի՛ գնա), զայրացական (Մա՛յր, հանգցրու կրակը), կտրական (Ընկե՛ր հրամանատար, թույլ տվեք...), հանդիսավոր (Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք) և այլն։

Տրամաբանական ելևէջումը հարցական, հրամայական և բացականչական նախադասություններում անհեմատ պարզ պատկեր է ներկայացնում։ Ընդհանրապես հարցական նախադասություններում տրամաբանական շեշտը կրում է հարց արտահայտող բառը։ Օրինակ՝

Հազար անգամ դու ընկնելով՝ ինչպե՞ս ելար,
Ո՞նց ապրեցիր՝ հազար անգամ երբ դու մեռար։
Ի՞նչ հրաշքով չմարեցիր, ինչպես նրանք,
Որ մեծ էին, հրդեհ էին, իսկ դու՝ կրակ։ (Պ. Սևակ)

Միևնույն բառի մեջ տրամաբանական և հարցական ելևէջումների համատեղության հետևանքով շեշտվածության ուժն ու բարձրությունն անհամեմատ մեծ է լինում, սակայն այն զգալիորեն ցածրանում ու թուլանում է կողմնակի հարցման դեպքում, ինչպես այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում՝

Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար.... (Վ. Տերյան)

Չեմ իմանում ինքս էլ սակայն,
Թե ինչը ինձ այսպես փոխեց... (Ե. Չարենց)

Տրոհական բնույթի բարդ համադասական նախադասություններում առաջին կազմիչի հարցում արտահայտող բառն ստանում է ուժեղ շեշտ, այնինչ երկրորդ կազմիչի համապատասխան բառը զրկվում է տրամաբանական շեշտից. այդ այն պատճառով,

որ հարցումն անցնում է թե շաղկապին, իսկ սա տրամաբանական շեշտ չի կարող ստանալ, որովհետև նախադասության անդամ չէ։ Այսպես, օրինակ՝

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Ե՞վ խոցում է, և՛ այրում,
Արդյոք բոցե վարդերդ են վառ,
Թե վերքերն իմ հրահրուն։ (Վ. Տերյան)

Տրամաբանական ելևէջումը բացականչական նախադասության մեջ համեմատաբար թույլ է, քան հարցականում։ Եթե ձայնի ոլորումը հարցական նախադասության մեջ գնալով բարձրացող աղեղ է կազմում, ապա բացականչականում այն համեմատաբար ցածր է, բայց երկար։ Հրամայական նախադասության մեջ ձայնի ավելի շեշտվածություն և ուժգնություն կա և միանգամից բարձրացում ու անկում։

Այնպես, ինչպես հարցական նախադասություններում, այնպես էլ բացականչական ու հրամայական նախադասություններում տրամաբանական ելևէջումը և բացականչական ու հրամայական ելևէջումներն իբրև կանոն համատեղվում են։

Տրամաբանական ելևէջումը, ինչպես ասվել է, նախադասությունը ձևավորող արժեք ունի և քննվում է քերականության մեջ։ Այդ պատճառով էլ մենք դրան անդրադարձանք միայն թռուցիկ կարգով։

Զգայական ելևէջումը շատ հաճախ խառն է լինում տրամաբանական ելևէջման հետ։ Այդ պատճառով էլ այն դժվար է բաժանել տրամաբանականից։ Այսպես, բացականչական և հրամայական, իսկ հաճախ նաև հարցական, ելևէջումները համարյա միշտ էլ զգայական են և այնքանով են տրամաբանական, որքանով որ կազմում են այդ կարգի նախադասություններ։ Այսուամենայնիվ թե՛ բացականչական ու հրամայական և թե՛ պատմողական ու հարցական նախադասություններով արտահայտվում են մարդու հուզական աշխարհում տեղի ունեցող երևույթները՝ հույզերը, զգացումները, ապրումները և կամքը։

Մարդու հոգեկան աշխարհի երևույթները կազմում են ուղեղի բանական գործունեության մի գործառույթը և փոխկապվածության մեջ են լեզվի հետ։ Հույզերն ու զգացումները, ինչպես ասվել է, բաժանվում են երկու խմբի՝ դրական և բացասական։ Դրական հույզերն ու զգացումները (ուրախություն, ոգևորու-

թյուն, հաճույք, գորով, հույս, սեր, համակրանք, բավականություն և այլն) մի ձևով են ներգործում մարդու վրա, մի այլ ձևով՝ բացասական հույզերն ու զգացումները (երկյուղ, տխրություն, ափսոսանք, նախանձ, բարկություն, զզվանք, հուսալքում, ատելություն, անբավականություն, հակակրություն և այլն)։ Հույզերից ու զգացմունքներից յուրաքանչյուրի ժամանակ, համապատասխան նրա չափի և տևողության, ժամանակավորապես փոփոխություններ են տեղի ունենում ամբողջ օրգանիզմի ֆիզիոլոգիական պրոցեսների մեջ. տեղի է ունենում շնչառության և արյան շրջանառության արագացում կամ թուլացում, արյունն ուժգնությամբ մղվում է դեպի գլուխ և կամ դադարում է նրա հոսքը դեպի գլուխ, փոխվում է նույնիսկ արյան բաղադրությունը, սիրտն սկսում է սովորականից արագ և կամ սովորականից դանդաղ աշխատել, մկանները լարվում են կամ թուլանում, փոխվում է դեմքի և աչքերի արտահայտությունը, զանազան օրգաններում տեղի է ունենում ջերմաստիճանի փոփոխություն, արագանում է քրտնարտադրությունը և այլն։

Հույզերի և զգացումների փոփոխությունների հետ միասին փոխվում են նաև խոսքի արագությունը, բարձրությունը (տոն), ուժգնությունը, տևողությունը, դադարները, նույնիսկ խոսքի կառուցվածքը։ Ուժեղ հույզերի ժամանակ խոսքն ստանում է հուզական կառուցվածք. նախադասությունները մեծ մասամբ վերածվում են հարցականի, հրամայականի կամ բացականչականի, հաճախական են դառնում համառոտ և միակազմ նախադասությունները, ինչպես և այն փոխակերպություններն ու ձևերը, որոնք կոչված են հույզեր ու զգացմունքներ արտահայտելու համար, բարձրանում է ձայնի տոնը, փոխվում է ձայնի ուժգնությունը, իսկ ելևէջը համեմատաբար բարձր աղեղ ու ոլորում է կազմում։

Զգայական ելևէջով արտասանված խոսքը խոր ներգործություն է ունենում ունկնդրի վրա և նրա մեջ էլ առաջ բերում ֆիզիոլոգիական փոփոխություններ՝ համապատասխան այն բանի, թե ինչպիսի հոգեբանական տիպի է պատկանում նա՝ քաղաքակիրթ մարդ է, թե ոչ, մանուկ է, թե չափահաս, կին է, թե տղամարդ և այլն։ Սակայն այս բոլորը վերաբերում է ոչ միայն բանավոր խոսքին։ Գրավոր խոսքը, որ կառուցված է լինում բանավորի համեմատ, զգալիորեն կորցնում է զգայական ելևէջից շատ բան, քանի որ անհնար է ելևէջը գրավոր խոսքում արտահայտել

(մի երկու կետադրական նշաններ՝ պարույկը կամ հարցական նշանը, երկարը կամ բացականչական նշանը, կախման կետը, շեշտը, բազմակետը շատ աղոտ պատկերացում են տալիս իրական ելևէջի մասին), այնուամենայնիվ խոսքի ընդհանուր բովանդակությունից ու բնավորությունից հասկանալի է լինում նաև ելևէջը։ Վաղ անցյալում ,սկսած V դարից, քերականությանը և ճարտասանությանը զուգահեռ գոյություն է ունեցել վերծանություն կոչվող արվեստը, որի խնդիրն է եղել գրածը ճիշտ կարդալ սովորեցնելը, ճիշտ առոգանությամբ, ճիշտ ելևէջումով բարձրաձայն կարդալը, հատկապես Աստվածաշունչը և կրոնական այլ գրքեր պահանջված ձևով կարդալը։

Պատմողական նախադասությունների զգայական ելևէջը տրրամաբանականի նման բարդ պատկեր է ներկայացնում։ Այն փոխվում է համեմատ այն բանի, թե ինչ տրամադրության մեջ է խոսողը՝ տխուր է, թե ուրախ, սքանչացած է, զարմացած, թե վախեցած, խոսքի առարկայի նկատմամբ սիրով է համակված, թե ատելությամբ, իրենից մեծի հետ է խոսում, թե փոքրի, լուրջ է խոսում, թե կատակով, խրախուսում է, թե հեգնում, մի խոսքով՝ այնքան շատ ու տարատեսակ է այն, որքան շատ ու տարատեսակ են մեր զգայություններն ու հույզերը։ Բոլոր դեպքերում էլ ընդհանուրն այն է, որ պատմողական նախադասության զգայական ելևէջը սուր շեշտ, մեծ ոլորում չունի. այն անհամեմատ մեղմ է մյուս բնույթի նախադասությունների զգայական ելևէջների համեմատությամբ։ Այսպես, օրինակ, Դե բա–վա–կա՛ն է վրդովմունք արտահայտող նախադասությունն արտասանվում է վանկերով, առանձին՝ դեպի վերջն ուժգնացող, իսկ վերջում ընկնող շեշտերով։

Հարցական նախադասություններով ևս բազմազան հույզեր ենք արտահայտում։ Վեճի և բանակռվի ամենասովորական լեզվական կառույցը հարցական նախադասությունն է։ Մեծ հուզականություն ունի իր մեջ նաև ճարտասանական հարցը։ Զգայական ելևէջը համեմատաբար մեղմ է տարակուսություն և հանդիմանություն արտահայտող հարցական նախադասություններում։ Ահա տարակուսություն արտահայտող նախադասության օրինակ՝

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի,
Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի։ (Վ. Տերյան)

Ոչ միայն այս դեպքերում, այլև սովորական հարցման միջոցով ևս, բայց առավել ճարտասանական հարցման միջոցով, կարելի է արտահայտել ամենանուրբ զգացումներ։ Այսպես, օրինակ,

— Էդ ի՞նչ ես էլէլ, Գիքոր ջան,— մղկտալով վրա ընկավ Համբոն։

Համբոյի հարցումը ցնցող տպավորություն է թողնում հենց այն պատճառով, որ այն ուղղված է անտերության մեջ մահացող որդուն։ Աննկարագրելի խոր հույզ է դրված ոչ միայն հարցման մեջ, այլև «Գիքոր ջան» կոչականում։ Տեղն է նկատել, որ կոչականի, մանավանդ ջան բառի հետ հանդես եկող կոչականի միջոցով խոսողը կարող է ամենաբազմազան նուրբ զգացմունքներ արտահայտել։

Հուզականության արտահայտման մեջ կարևոր դեր ունեն նաև հարցական բառերն ու մի քանի վերաբերականներ (չէ՞ որ, մի՞թե, ը՞ը, ա՞ա, ո՞ռ, է և այլն)։ Ահա մի երկու օրինակ «Գիքորը» պատմվածքից.

— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում հա՞

Հենց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել անդադար կրկնելով. «Բալը թանգ էր, հը՞»։

— Չե՞ս իմանում, տո՛, ո՞րտեղ էիր է՛, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր, որ մեռնեի՝ հետո՞

— Կսովորի, ռո էդպես չի մնալ,— ասում էր նա կնոջը։

Հրամայական նախադասությունները ևս հուզականություն արտահայտելու մեծ հնարավորություն ունեն։ Դրանցով կարելի է արտահայտել ամենամեղմ խնդրանք և աղաչանք, ամենամեղմ պահանջ և ամենակտրական հրաման։ Հրամայականը նաև բարկություն արտահայտելու միջոց է։ Ինչպես ասվել է, հարցական նախադասությունների հետ միասին հրամայականը բանավեճի ու բանակռվի քերականական կառույց է։ Հարցական և հրամայական նախադասությունները խոսակցի հետ հաղորդակցման կապի քերականական միջոցներ են, ըստ որում հարցականը խոսակցից ստանալու, իսկ հրամայականը՝ խոսողից խոսակցին անցնելու ուղղվածություններով։ Այս է պատճառը, որ այս երկու բնույթների նախադասություններն ավելի շատ սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտմանն են ծառայում։ Սրանց հակառակ պատմողական և բացականչական նախադասություններն

այսպիսի կապի միջոց չեն ծառայում ո՛չ խոսողի ու խոսակցի և ո՛չ էլ խոսողի ու խոսքի առարկայի միջև։

Բացականչական նախադասությունները կոչված են արտահայտելու թե՛ դրական և թե՛ բացասական ամենաբազմազան հույզեր (ուրախություն, զարմանք, ափսոսանք, վիշտ, ցավ, խորշանք, զզվանք և այլն), որոնցից յուրաքանչյուրն ունի զգայական համապատասխան ելևէջումը։

Տրամաբանական և զգայական ելևէջումները ծառայում են ոչ միայն հույզերի ու զգացումների արտահայտմանը, այլև մտքի լեզվական արտահայտման միջոցների բազմազանությանը։ Այսպես, օրինակ, եթե Ջ և ՈՉ ժխտականները բայի դիմավոր ձևի հետ դրվելով՝ մտքի ժխտում են արտահայտում, ապա հեգնական հնչերանգը նույն դերն է կատարում, այսինքն ասածը ժխտում է, սակայն հեգնանքի դեպքում արտահայտվում է նաև խոսողի հեգնական վերաբերմունքը։ Միևնույն բառը, կապակցությունն ու նախադասությունը զանազան հնչերանգներով կարող են այլևայլ նրբիմաստներ և իմաստներ արտահայտել։ Բերենք մի երկու օրինակներ.

Հա՛— հաստատում

Հա՛՛— հեգնանք (ասացիր՝ պրծար)

Հա՞— հարցում ճիշտ լինելու մասին

Հա՞՞— սպառնալիք (դե որ այդպես է...)

Հա՛՛— ասվում է մի բան դժվարությամբ հիշելուց հետո

Հա՛ — պնդում (վաղը հետ կվերադարձնես, հա՛)։

Հարությո՛ւն— սովորական կոչական (Այս էլ քեզ, Հարությո՛ւն)

Հարությո՞ւն— զարմանք (Այ տղա, այս դո՞ւ ես)

Հարությո՛ւն— մեղմ հանդիմանություն

Հարությո՛ւն— հրաման, որով պահանջվում է վերջ տալ մի բանի։

Ի՞նչ մարդ է— սովորական հարցում իմանալու համար, թե ով է։

Ի՛նչ մարդ է— անտանելի մարդ է։

Ի՛նչ մարդ է— շատ լավ մարդ է։

Ի՛նչ մարդ է— մարդ չէ (հեգնանք, արհամարհանք)։

Ի՞նչ ես ասում— հարցում

Ի՞նչ ես ասում— զարմանք
Ի՞նչ ես ասում— ափսոսանք
Ի՞նչ ես ասում— անկարելի է
Ի՞նչ ես ասում—վրդովմունք և այլն[14]։

Սրանից պետք է եզրակացնել, որ հնչերանգը խոսքի մեջ բառիմաստի հարստացման միջոցներից մեկն է։ Բերնարդ Շոուն իրավացիորեն էր ասում, որ այո *ասելու համար կա հիսուն եղանակ,* ոչ *ասելու համար կա հիսուն եղանակ, իսկ* այո *և* ոչ *գրելու համար կա միայն մեկ եղանակ։ Խոսքի մեջ հնչերանգի ունեցած դերի գիտակցման վկայություն են ժողովրդական «Հո կա, կալ կբերա, հո կա՝ կալեն կհանա» և «Հորն օղորմի կա, որ շան որդի ասելուց վատ է» դարձվածները։*

Խոսքի մեջ տրամաբանական և զգայական ելևէջումները միահյուսվելով՝ ստեղծում են խոսքի կամ նրա առանձին հատվածների ընդհանուր տոնը, որը սակայն արդյունք է ոչ միայն ելևէջումների, այլև ձայնային այլ երևույթների։ Այդ տոնը շատ կարևոր է հատկապես արձակ խոսքի համար. այն մի տեսակ կշռույթ է, ներքին թաքնված չափ՝ անսայթաք առաջ ընթանալու համար (հատկապես արձակ խոսքը կարդալիս)։ Ճիշտ էր Դ. Դեմիրճյանը, որը գրում էր, թե «արձակի ռիթմը ավելի հարուստ է, ավելի նուրբ, բազմալար և խոր, քան երբեմն ոտանավորների ռիթմը... (և) գտնել ռիթմը ուրիշի գրվածքի մեջ, ընկնել իր գրվածքի ռիթմի մեջ—դա նշանակում է բռնել նրա կենդանի շունչը, բանաստեղծությունը»[15]։

Ինչպես որ թվերի շարքում 0-ն նյութական է և նյութական չէ, բայց իմաստավորում է թվերի շարքը, ինքն էլ կոնկրետ բովանդակություն ստանում թվերի մեջ, այնպես էլ հնչերանգը առանձնաբար գոյություն չունենալով հանդերձ գոյություն ունի լեզվում և իմաստավորում-բովանդակավորում է լեզվական նյութը։

---

[14] **Բ. Զախավան** «Вахтангов и его студия» գրքում (М. 1930, էջ 59) գրում է, թե ժամի քանի՞սն է հարցով կարելի է արտահայտել նաև՝ Ինչո՞ւ ես ուշանում, Ինչո՞ւ տնից դուրս չես գալիս իմաստները։ Հեղինակի ասածին կարելի է ավելացնել բազմաթիվ իմաստներ ևս՝ ընդհանրապես հեգնանք, հանդիմանություն բանն ուշացումով կատարողին, անժամանակ որևէ բան անողին (ուշ քնողին, տնից ուշ ժամի զբոսանքի գնացողին, ուշ ժամի ծաշ ուզողին, ուշ արթնացողին և այլն)։

[15] **Դ. Դեմիրճյան**, Երկ. ժող., հտ. 8, 1963, էջ 74—79։

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԽՈՍՔՈՒՄ

Բառապաշարը լեզվի բաղադրիչ տարր է, լեզվի պատրաստի հիմնական շինանյութը։ Լեզվաբանները բառապաշարի մեջ մտցնում են ինչպես բառերը, այնպես էլ բառերի կայուն կապակցությունները, իսկ որոշ լեզվաբաններ՝ սրանց հետ մեկտեղ նաև առածաբանությունը (պարեմիալոգիա), սակայն մենք դրանք համարելով լեզվի բաղադրիչ տարբեր շերտեր՝ քննում ենք առանձնաբար՝ նախ բուն բառապաշարը, ապա կայուն կապակցությունները և այնուհետև առածաբանությունը՝ իբրև պատրաստի նախադասություններ։

Մի լեզվի ամբողջ գոյության ընթացքում գործածված բոլոր բառերը կազմում են այդ լեզվի բառապաշարը կամ բառագանձը, որն արտացոլում է տվյալ ժողովրդի կյանքը, կենցաղը, սոցիալական վիճակը, հավատն ու հոգևոր զարգացման մակարդակը, նրա տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ձեռքբերումները, դասային ու դասակարգային հարաբերությունները, հարևան և ոչ հարևան ժողովուրդների հետ ունեցած առնչությունները, բնական, կլիմայական ու աշխարհագրական այն հանգամանքները, որոնք պայմանավորել են տվյալ լեզվով խոսող ժողովրդի գոյությունը՝ նրա ամբողջ կյանքի ընթացքում։ Եվ քանի որ սրանք անընդհատ զարգացող ու փոփոխվող երևույթներ են, այդ պատճառով էլ դարերի ու հազարամյակների ընթացքում կուտակվում են հսկայական թվով բառեր, որոնք տարբեր քանակներ ունեն տարբեր լեզուներում։ Լեզվաբանության մեջ ընդունված տեսակետ է լեզվի հարստության չափանիշ համարել բառապաշարի հարստությունը։

Հայ ժողովուրդը աշխարհի հին գիր ու գրականություն ունեցող ժողովուրդներից մեկն է։ Արդեն 1500 տարի անընդմեջ մեր գրականությունը գոյատևում է ու զարգանում, և միանգամայն օրինաչափ է, որ մշակութային մեծ կյանք ապրած մեր ժողովուրդը ստեղծել է հարուստ բառապաշար, որը լիովին բավարարում է մեր այսօրվա կյանքի բոլոր պահանջներին։ Մեզ հայտնի լեզուներից ամենահարուստ բառապաշար ունեցող լեզուներից են անգլերենը և հունգարերենը, որոնց լիակատար բառարաններն ընդգրկում են կես միլիոն բառեր, և ռուսերենը, որի նոր (այժմ կազմվող) բառարանը պետք է ընդգրկի 450.000 բառ։ Արդի հայերենի բառապաշարը զիջում է այս լեզուների բառաքանակնե-

րին։ Մոտավոր հաշվով հայերենն ունի շուրջ 200.000 բառ (մենք առայժմ չունենք մեր լեզվի լիակատար բառարան, ուստի և չգիտենք մեր բառագանձի ճիշտ քանակը), և սա մի պատկառելի թիվ է, որը զգալիորեն գերազանցում է շատ զարգացած ժողովուրդների լեզուների բառաքանակը։ Բայց բանը միայն սոսկական քանակը չէ։ Բառապաշարն անխզելիորեն կապված է քերականության հետ, և մեկը լրացնում է մյուսին։ Հայոց լեզուն ունի շատ հարուստ քերականություն, և մեր քերականությունը հնարավորություն է տալիս արտահայտելու տասնյակ հազարների հասնող հասկացություններ, որոնք այլ լեզուներում արտահայտվում են առանձին բառույթներով, ուստի և մտնում են այդ լեզուների բառապաշարների մեջ՝ իբրև ինքնուրույն բառային միավորներ, այնինչ հայերենում դրանք բառաձևեր են և բառային միավորներ չեն համարվում։ Մեր միտքը պարզելու համար բերենք մի երկու համեմատություններ հայերենից և ռուսերենից։

1. Ռուսերենում կան հազարավոր ածականներ, որոնք բառեր են և մտնում են ռուսերենի բառապաշարի մեջ, այնինչ դրանց համարժեք գաղափարները հայերենում արտահայտվում են կա՛մ հարակատար և կա՛մ ենթակայական դերբայներով, որոնք բառույթներ չեն, այլ բայի քերականական ձևեր, այդ պատճառով էլ մեր բառարաններում իբրև առանձին բառային միավորներ չեն գրանցվում։ Ահա մի երկու օրինակներ.

кипячённый	— եռացրած	красящий	— ներկող
копанный	— փորված	курящий	— ծխող
крашенный	— ներկված	летучий	— թռչող
купленный	— գնված	мучительный	— տանջող
лежалый	— հնացած	нисходящий	— իջնող
меренный	— չափված	нержавеющий	— չժանգոտող
мытый	— լվացած	обрабатывающий	— մշակող
навощённый	— մոմած	образующий	— առաջացնող
навязанный	— գործած, հյուսած	отсутствующий	— բացակայող
надоенный	— կթած	отталкивающий	— վանող

Ռուսերենում կան զգալի թվով ածականներ, որոնց իմաստները հայերենում արտահայտում ենք ոչ թե մեկական բառով, այլ երկու կամ ավելի բառերի կապակցություններով, որոնք հայերենում, իհարկե, բառարան մտնել չեն կարող։ Ահա հազարավոր այդպիսի բառերից միայն մի քանիսը, որոնց իմաստներն արտահայտում ենք կա՛մ հարակատար և կա՛մ ենթակայական դերբայների կապակցություններով։

копанный — փորելով հանած
ляпанный — անշնորհք արված, մի կերպ արած
малоезжанный — քիչ վարժեցրած, քիչ բանեցրած
малоподготовлённый — քիչ պատրաստված
мездрённый — կավիճ քսած
молнированный — կայծակ հեռագրով հայտնված
мраморированный — մարմարի գույն տված
наволочённый — քարշ տալով բերված
навранный — սուտ ասված, սխալ կատարված
наговорённый — շատ բան ասված, շատ խոսված
надмоченный — թեթև թրջած, երեսանց թրջած
накачанный — պոմպով քաշված, պոմպով լցրած. թունդ հարբեցրած
накуренный — ծխախոտի ծխով լցված
настигнутый — հետևից հասնելով՝ բռնած
наслоённый — շերտ-շերտ կտրտած
наткнутый — ծայրին հագցրած
обваленный — շուրջը կիտած
обезвреженный — անվնաս դարձրած
отговорённый — մտադրությունից հետ կանգնեցրած
отдарённый — փոխադարձ նվեր ստացած
кровоостанавливающий — արյունը կանգնեցնող
малоговорящий — քիչ բան ասող
мимоезжий — մոտից (կողքից) անցնող
многоговорящий — շատ բան ասող
многообещающий — շատ բան խոստացող
нисходящий — վայր իջնող
нецеремонный — իրեն հասարակ պահող
неохочий — ձգտում չունեցող
обделистый — իր գործերը լավ տարող և այլն:

Մենք բերինք միայն К, Л, М, Н, О *տառերով սկսվող ռուսերենի հազարավոր բառերից մի քանիսը, մի բան, որ շատ աղոտ պատկերացում կարող է տալ այն բառերի քանակի մասին, որոնց համարժեքները արտահայտվում են հայերենում բառույթ չհանդիսացող հարակատար և ենթակայական դերբայներով կամ սրանց կապակցություններով։*

2. Նույն ձևով՝ ռուսերենում հսկայական թիվ են կազմում не *ժխտականով այն ածականները, որոնց համապատասխան գաղափարները հայերենում արտահայտվում են ոչ ժխտական բառով և մի այլ ածականով, որոնք միասնաբար մեկական բառույթ չեն կազմում, ուստի և բառարանային միավոր չեն դառնում։ Բերենք մի քանի օրինակ.*

неахтительный — ոչ այնքան լավ
небезнадёжный — ոչ անհուսալի
небезопасный — ոչ անվտանգ
небезосновательный — ոչ անհիմն
небезразличный — ոչ անտարբեր
небезрассудный — ոչ անխոհեմ
неблестящий — ոչ փայլուն
невнятный — ոչ պարզ
невысокий — ոչ բարձր
несложный — ոչ երկար
незатейливый — ոչ բարդ
неземной — ոչ երկրային
необязательный — ոչ պարտադիր
непитательный — ոչ սննդարար
непохожий — ոչ նման
непродолжительный — ոչ տևական, ոչ երկարատև
неземной — ոչ բարդ և այլն:

3. Ռուսերենում զգալի թիվ են կազմում մի քանի ածանցներով կազմված այն բայերը, որոնց անածանց և ածանցավոր զուգահեռներին հայերենում համապատասխանում է միայն մեկ բառ։ Հազարավոր օրինակներից բերենք միայն մի երկուսը.

ехать—проехать — անցնել (գնալ)՝
— փոխադրամիջոցով
калить—прокалить — շիկացնել
кормить—прокормить — կերակրել
лететь—пролететь — թռչել
читать—прочитать—прочесть — կարդալ
кивать—кивнуть — գլխով անել
кидать-кнуть — գցել
прокисать—прокиснуть — թթվել
прыгать—прыгнуть — ցատկել
проколотить-проколоть — կոտրել, ջարդել
прокармливаться—прокормиться — կերակրվել
ослабевать—ослабеть — թուլանալ

Ռուսերենում նկատելի թիվ են կազմում նաև ние, нье *ածանցներով կազմված այն բայանունները, որոնց հայերենում համապատասխանում են գոյականաբար առնված անորոշ դերբայները։ Սրանք ևս հայերենում առանձին բառային միավորներ չեն, քանի որ մեր քերականության համաձայն դիտվում են բայի քերականական ձև։ Բազմաթիվ օրինակներից բերենք մի երկուսը,*

голодание — սովելը
вязание — գործելը
засыхание — չորանալը
низанье — շարելը
порженіе — խփելը
состовленіе — կազմելը և այլն:

4. Հայերենում որոշ թիվ են կազմում որակական այն ածականները, որոնք առանց փոփոխություն կրելու գործածվում են նաև մակբայաբար, այսինքն՝ դառնում են ձևի պարագա։ Այդպիսի ածականներից են, օրինակ, լավ *(լավ գիրք, լավ նվագել),* դժվար *(դժվար աշխատանք, դժվար ապրել), այդպես էլ՝* ամուր, բարձր, թեթև, աղոտ, տխուր, ծանր, մաքուր, քաղցր, ուրախ, ուժեղ, դառն, թանկ, գեղեցիկ *և այլն։*

Ռուսերենում այս իմաստներն արտահայտող ածականների հետ հավասարապես գոյություն ունեն նույն բառերի մակբայական ձևերը, որոնք, ի տարբերություն հայերենի, առանձին բառույթներ են և մտնում են բառարան իբրև առանձին բառային միավորներ։ Օրինակ՝ хороший-хорошо, крепкий-крепко, высокий-высоко, обратный-обратно, трудный-трудно, *որպիսի զույգերի դիմաց հայերենն առանց իմաստի կորստի ունի միայն մեկական բառային միավոր*[16]*։*

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, հայոց լեզուն իր քերականության ընձեռած հնարավորությունների ու միջոցների շնորհիվ ընդունակ է արտահայտելու ռուսերենի հազարավոր բառերի արտահայտած իմաստները՝ չունենալով հանդերձ բառապաշարի մեջ համապատասխան բառույթներ։ Սակայն չպետք է կարծել, թե մեր ասածը վերաբերում է միայն բային կամ ածական խոսքի մասին։ Այդ վերաբերվում է, թեև տարբեր չափերով, նաև մյուս խոսքի մասերին, առանձնապես գոյականին, որը նույնպես բնութագրվում է հարուստ քերականական կարգերով։

Համեմատական քննություն չկատարելով հանդերձ, մեր ասածին ավելացնենք, որ լեզուները միմյանցից տարբեր են նաև բառերի արտահայտած իմաստների քանակով։ Մի լեզվի որևէ բառ

---

[16] Մակբայական իմաստ ունեն որակական ածականներից կազմված կրկնավորները, ինչպես՝ մեծ-մեծ (բրդել), ծուռ-ծուռ (նայել), տաք-տաք (փիծել) և այլն, որոնք համապատասխանում են ռուսերենի մակբայների, բայց բառարանում բառային միավոր չեն։

կարող է ունենալ տասնյակ իմաստներ, որոնցից յուրաքանչյուրը մի ուրիշ լեզվում կարող է արտահայտվել մի առանձին բառով։ Բացի սրանից, լեզվի բառապաշարը՝ կապված ժողովրդի կյանքի յուրահատկությունների հետ, կարող է հանդես բերել տեղայնացված զարգացում, այսինքն՝ կարող է ունենալ այնպիսի բառ-հասկացություններ, որ չունենան այլ ժողովուրդների լեզուներ։ Բերենք մի երկու օրինակ միայն։ Հին հնդկերենում (սանսկրիտ) կար 11 անուն լույսի համար, 15 անուն՝ ամպի համար, 20 անուն՝ լուսնի համար, 26 անուն՝ օձի համար, 33 անուն՝ մարդասպանի համար, 35 անուն՝ կրակի և 37 անուն՝ արևի համար։ Այժմ նենեցները ձյուն հասկացության համար ունեն 40 անվանում, արգենտինյան գաուչո հովիվները ձիու գույնի համար՝ 200 բառ, իսլանդական հովիվների և ձկնորսների բառապաշարում կա 500 բառ՝ կապված եղանակի հետ, իսկ ըստ Ռընանի բառարանի արաբերենում մեղր հասկացությունն արտահայտվում է 80, օձ հասկացությունը՝ 200, առյուծ հասկացությունը՝ 500, սուր (թուր) հասկացությունը՝ 1000, իսկ ուղտ հասկացությունը՝ 5000 բառերով։

Մեր ասածից արդեն բխում է, որ բառապաշարի հարստություն հասկացությունն ինքնին հարաբերական հասկացություն է, և բառերի սոսկական քանակով լեզվի հարստություն որոշելը ոչ բացարձակ չափանիշ։

Այստեղ արժե խոսել մի հանգամանքի մասին ևս։ Ժողովրդի համահավաք ուժերով դարերի ու հազարամյակների ընթացքում ստեղծված բառերի մի զգալի մասը հասարակության լայն խավերին հայտնի չէ, մի մասն էլ հայտնի է միայն կյանքի այս կամ այն բնագավառին առնչվող մասնագետին։ Ոչ մի անհատ չի կարող իմանալ մայրենի լեզվի բոլոր բառերը, առավել ևս ոչ ոք չի գործածում իր իմացած և մայրենի լեզվի բոլոր բառերը։ Ընդհանրապես մեծ գրողների ու մտածողների գործածած բառերի քանակը դեռևս լայն քննության նյութ չի դարձել, սակայն այս բնագավառում եղած ուսումնասիրությունները հաստատում են, որ ամենաշատ բառեր գործածած հեղինակների բառաքանակը տատանվում է մինչև երկու տասնյակ հազարի սահմաններում։ Ավելորդ չենք համարում տալ մի քանի տվյալներ համաշխարհային և հայ գրականությունից. Հին կտակարան՝ 5642 բառ, Նոր կտակարան՝ 4802, Հոմերոսի «Իլիականում» և «Ոդիսականում»՝ 9000 բառ, Տորկվադո Տասսոն «Կատաղի Օռլեանում» գործածել

է 8470 բառ, Դանթեն «Աստվածային կատակերգության» մեջ՝ 5860 բառ, Պուշկինն իր բոլոր ստեղծագործություններում՝ 21290 բառ, իսկ Շեքսպիրը՝ շուրջ 28000 բառ է գործածել։ Հայ հեղինակներից Փ. Բուզանդը իր «Պատմության» մեջ գործածել է 5600 բառ, Ագաթանգեղոսը՝ 6800, Մ. Խորենացին՝ 7031, Նարեկացին «Մատյան ողբերգության» մեջ՝ 6962, Բաֆֆին «Սամվել» վեպում՝ 7718, Դ. Դեմիրճյանը՝ «Վարդանանքում»՝ 9400 և այլն։ Առավել շատ բառ գործածած հեղինակների մեջ մեզ հայտնի տվյալների համաձայն ռեկորդը պատկանում է ամերիկյան գրող Ջեյմս Ջոյսին, որն իր միայն «Ուլիսու» վեպում գործածել է շուրջ 30 000 բառ։ Անշուշտ բառերի քանակով չի կարելի որոշել երկի գեղարվեստական արժանիքները, սակայն դա հեղինակային լեզվի հարստության վկայություն է, մանավանդ եթե համեմատությունը ոչ թե տարբեր լեզուներով ստեղծագործած հեղինակների, այլ միևնույն լեզվով գրող մեծությունների միջև է կատարվում[17]։ Ինչևէ, երկու կամ երեք տասնյակ հազար բառը այն սահմանն է, որին հասնում կամ մոտենում են հատուկենտ անհատներ։ Սովորական մահկանացուն ո՛չ կարող է այդքան բառ գործածել, և ո՛չ էլ այդ նրան պետք է։ Միջին գրագիտություն ունեցող մարդը կարող է կառավարվել մայրենի լեզվի բառապաշարի նույնիսկ միայն 1 %-ով։ Բանն այն է, որ առօրյա կյանքում հաղորդակցվելու համար անհրաժեշտ բառերը միաժամանակ ամենագործածական, ամենահաճախական բառերն են։ Լեզվաբանների հաշվումներով հնդեվրոպական լեզուներում առավել հաճախական գործածություն ունեցող հազար բառը կազմում է խոսքի հիմնական շինանյութը։ Այսպես, օրինակ, ռուսերենում առաջին 1000 բառը կազմում է բանահյուսվածքում գործածված բոլոր բառերի ավելի քան 67 %-ը, անգլերենում՝ գեղարվեստական բանահյուսվածքի 70 և գիտական բանահյուսվածքի 80 %-ից ավելի, իսկ ֆրանսերենում՝ գեղարվեստական բանահյուսվածքի 80 և գիտական բանահյուսվածքի 90 %-ից ավելի[18]։ Ընդհանուր առումով առաջին 1000 բառը լեզուներում կազմում է խոսքի (նաև գրավոր) մեջ գործածված բառերի 80 %-ը, երկրորդ հա-

---

[17] Հետաքրքիր կլիներ համեմատել հայ և օտար հեղինակներին՝ փոխադարձ երկլեզվյան թարգմանությունների հիման վրա, սակայն այդպիսի բան առայժմ չի արված։

[18] *Տե՛ս* **А. Кондратов**, Звуки и знаки, М., 1978, էջ 23—24։

զարյակը՝ 6 %-ը, երրորդ հազարյակը՝ 3 %-ը, չորրորդը ավելացնում է 2 %, հինգերորդ հազարյակն ավելացնում է 1 %։ Այս նշանակում է, որ ըստ հաճախականության առաջին 1000—2000 բառը, որ լեզվի բառապաշարի շուրջ մեկ տոկոսն է կազմում, լիովին բավական է ամբողջ կյանքում կառավարվելու համար։ Ահա այս ֆոնի վրա էլ պետք է պատկերացում կազմել մի լեզվի հարստության մասին, որի բառապաշարը հարուստ քերականությամբ հանդերձ հասնում է 200 000-ի։

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԱՏՈՒՄԸ

Լեզվի ամբողջ բառապաշարը միանման արժեք չունի ո՛չ լեզվի և ո՛չ էլ խոսքի համար։ Բառերն իրենց իմաստաբանական, քերականական և ոճական առանձնահատկությունների համապատասխան կազմում են խմբեր և ունեն իրենց որոշակի տեղը և դերը ինչպես լեզվում, այնպես էլ խոսքի մեջ։ Բառապաշարի ոճաբանական շերտատումով հետապնդում ենք մի նպատակ՝ պարզել, թե այս կամ այն հիմունքներով խմբավորված բառախմբերն ինչ առանձնահատկություններ ունեն և ինչ դեր կարող են խաղալ խոսքի մեջ։

Բառապաշարի ոճաբանական շերտատումը կատարվում է երկու հայեցակետով՝ տարաժամանակյա և համաժամանակյա։ Առաջին դեպքում մեր լեզվի բառապաշարը զանազան շերտերի ենք բաժանում՝ նկատի ունենալով նրա պատմական զարգացման ընթացքը, մյուս դեպքում՝ նրա ներկա վիճակը։

I. Տարաժամանակյա հայեցակետից առաջին հերթին խնդիր է դառնում բառերի գոյատևության հարցը։ Բառերի մի մասը գոյատևում է դարեր ու հազարամյակներ, մի մասն էլ ունենում է կարճ կյանք՝ պատմական մի ժամանակամիջոց ապրելուց հետո կորցնում է իր կենսունակությունը։ Ստեղծվում են նոր բառեր, որոնց մի մասը կարճ կյանք է ունենում, մի մասն էլ ապրում է երկար։

Ըստ գոյատևության բառերը բաժանում ենք հետևյալ երկու խմբերին՝ գործածական և անգործածական։

1. Գործածական բառեր։ Սրանք այն բառերն են, որոնք գոյություն ունեն վաղ ժամանակներից, ստեղծվել են նաև հետա-

գայում, նաև նոր ժամանակներում և հարատևում են մինչև մեր օրերը։ Այսպիսի բառեր են, օրինակ, ես, դու, նա, սա, դա, նույն, մեկ, երկու, տասն, հարյուր, տուն, մարդ, հայր, մայր, քույր, եղբայր, հաց, ջուր, օդ, հող, լույս, կրակ, ժամանակ, ծառ, քար, սար, դար, ոտք, ձեռք, միտք, գործ, փորձ, երես, աչք, լեզու, գլուխ, կենդանի, թռչուն, հավ, կով, ձի, վանք, դպրոց, կարմիր, կանաչ, կապույտ, գեղեցիկ, լավ, բարձր, լսել, տեսնել, խոսել, գնալ, կարդալ, իմանալ, հեռանալ, բերել, տանել, օգնել, հասնել, կառուցել, սիրել, արագ, հանախ, դանդաղ, երբեմն, մեջ, վրա, տակ, առ, և, ու, բայց, իսկապես, անշուշտ, ախ, վախ, ջան և այլն։ Այս խմբի բառերը արտացոլում են մեր կյանքի բոլոր այն բնագավառները, որոնք ժողովրդի համար ունեն կենսական նշանակություն։ Սրանով էլ պայմանավորված է այս բառերի գոյատևումն ու հարատևումը։ Այդ չի կախված այն բանից, բնիկ հայերեն բառեր են, թե փոխառություն։

Այս խմբի բառերը պայմանականորեն կարելի է երեք ենթախմբի բաժանել՝ հին բառեր, համեմատաբար ուշ շրջանում կազմված կամ մեր լեզուն մուտք գործած փոխառյալ բառեր և նոր բառեր։

Հին բառերը, որոնք մեծ մասամբ գալիս են վաղ ժամանակներից, աչքի են ընկնում երեք առանձնահատկությամբ։ Նախ՝ դրանք մեծ մասամբ կազմությամբ պարզ բառեր են (նաև պարզ ածանցավորներ), որի հետևանքով էլ աչքի են ընկնում իրենց կարճությամբ։ Հենց այդպիսին են վերը թվարկված բառերից շատերը, որոնք մեր լեզվում գոյություն ունեն ամենավաղ ժամանակներից։ Երկրորդ, դրանք աչքի են ընկնում բառակազմական ակտիվությամբ (եթե այդպիսի խոսքի մաս են)։ Բերենք մեր ասածը հաստատող մի երկու փաստեր։ Ըստ ակադեմիկոս Է. Աղայանի բացատրական բառարանի քար բառով, իբրև առաջին բաղադրիչ, կազմված է շուրջ 250 բառ (չենք տալիս նախածանցավորները), ըստ մեր խմբագրությամբ լույս տեսած «Հանգաբառարանի»՝ իբրև բաղադրյալ բառի վերջին բաղադրիչ՝ 150 բառ (օրինակ՝ քարակերտ, քարակոփ, քարանձավ—հանքաքար, կշռաքար, հղկաքար)։ Նույն ձևով՝ գործ բառը ըստ հիշյալ բառարանների բառասկզբում հանդես է եկել 176 բառում, իսկ վերջում՝ շուրջ 140, գիր բառը բառասկզբում՝ շուրջ 200 բառում, իսկ վերջում՝ ավելի քան 160 բառում, բան (խոսք և գործ իմաստներով) բառասկզբում՝ շուրջ 100 և նույնքան էլ բառավերջում։ Այստեղ

չենք խոսում այս բառերի բառակազմական և իմաստակազմական այլ հնարավորությունների մասին։ Բավական է միայն ասել, որ, օրինակ, աչք, գլուխ, ոտք *բառերից յուրաքանչյուրով ունենք շուրջ 100-ական դարձվածներ և բազմաթիվ հարադրավորներ, իսկ* անել *և* տալ[19] *բայերով կազմված հարադրությունների քանակը հազարների է հասնում։*

Երրորդ, դրանք մեծ մասամբ (բայերը, գոյականները և ածականները) աչքի են ընկնում բազմիմաստությամբ։ Այսպես, օրինակ՝ տալ *բայը ըստ է. Աղայանի հիշյալ բառարանի ունի 62 իմաստ,* խաշել *բայը՝ 55,* պահել *բայը՝ 45,* տանել *բայը՝ 44,* հանել *բայը՝ 40,* թև *բառը՝ 37,* թույլ *բառը՝ 33,* բարձր *բառը՝ 26,* երես *բառը՝ 25 և այլն։*

Ընդհանուր առմամբ նկատելի է, որ փոխկախվածություն կա բառի կառուցվածքի ու կազմվածքի և նրա տարիքի միջև. որքան բառը հին է, այնքան նա պարզ կառուցվածք ունի և պարզ է կամ ունի քիչ բաղադրիչներ, միաժամանակ աչքի է ընկնում իր բազմիմաստությամբ, և ընդհակառակն, բազմաբաղադրիչ բառերը համեմատաբար ուշ ժամանակներում ստեղծված բառեր են, երկար են և քիչ իմաստներ ունեն։

Մի խումբ էլ կազմում են այն բառերը, որոնք մեր նոր գրական հայերենում են ստեղծվել։ Այսպիսի բառերից են՝ ականաձիգ, ականանետ, ակտիվանալ, աղմկամարիչ, ամբարձիչ, անկշռելիություն, ապախոշորացում, ապառազմականացում, առերեսում, առնմանություն, արդիականություն, առնակատում, աշխատաժամանակ, ասեղնաբուժում, ապագացուցիչ, արտադրամաս, արտահաստիճային, արտապլանային, աստղաֆիզիկա, բամբակազտիչ, բանահավաք, բետոնագործ, բազմազգ, բոնցֆամարտիկ, գազաեռակցում, գավաթակիր, գերամուր, գերիզոր, գերնշգրիտ, գիտակարգ, գիշերօթիկ, գիտափորձ, գործընթաց, գործընկեր, գոյակցում, դատահոգեբանություն, դերակատարում, դիմակայում, երթուղի, երկաթբետոնե, երկրամերձ, երկարաժամկետ, զարթուցիչ, զուգաձևություն, էլեկտրազոդում, էլեկտրաեռակցում, ընդդիմախոս, թատերացում, թունելագործ, ժամանակավրեպ, ժամավճար, ժողովրդագրություն, ինֆնագնաց, ինֆնա-

---

[19] Կարելի է ասել, որ այս երկու բայերն իրենց բառային իմաստները պահելով հանդերձ՝ միաժամանակ վերածվել են բառակազմական-բարակազմական բառ-մասնիկների՝ անել-ը չեզոքի, իսկ տալ-ը՝ ներգործականի իմաստով։

գովություն, ինքնակառավարում, իրապաշտական, լուսնահող, լուսնանավ, լեզվանոգերանություն, խաղացանկ, խնամառություն, խոշորամասշտաբ, ծանրորդ, ծավալունություն, կանույթագործ, կարճամետրաժ, կինոհամերգ, կինոճանապարհորդություն, կիսահաղորդիչ, կիրարկություն, կոորդինացում, հաղորդավար, հատույթ, հարցազրույց, հնոուստացույց, հյուսվածքաբանություն, հրթիռամիջուկային, ձայնագրություն, ձևակազմություն, մարզադպրոց, միջբրիգադային, մոբիլիզացնել, նավթագործ, ներտաշ, նպատակասլաց, շաբաթօրյակ, շարասյուն, շարժասանդուղք, շարքացան, որականիշ, որսագող, չեմպիոնուհի, չվերթ, պատմաշրջան, պարախումբ, ջերմամիջուկային, ջրացատկ, ռադիոհաղորդում, ռազմահայրենասիրական, ռենտգենատեխնիկա, ռուսաբանություն, սպառողականություն, ստորակարգություն, ստուգայց, սրտաբանություն, վաթսունհինգ, վանկատում, վարակազերծում, տանկաշինական, տեսագրություն, տեսահեռախոս, տիեզերագնաց, տրակտորաշինական, ցուցադրական, ցուցամոլություն, ցուցափեղկ, ուլտրամանիշակագույն, ուղեծրային, ուրախարիք, փոխատեղում, փոխգործողություն, փոխհամաձայնություն, փոխօգնություն, քիմիագործ, քսանվեց, օրախնդիր, օրգանական, ֆեոդալական, ֆինանսական *և այլն։*

Մեր լեզվում զգալի թիվ են կազմում նոր և նորագույն փոխառությունները։ Հազարավոր նոր փոխառություններից բերենք միայն մի քանի օրինակ. ագիտացիա, ալպինիստ, անսամբլ, ասպիրանտ, ասֆալտ, ավտոմատ, արտել, բալետ, բանկա, բետոն, բիոնիկա, բյուջե, բիտ, բրիգադ, բուլկի, բուրժուա, գլոբալ, գրիմ, գրիպ, դեմոկրատիա, դիալեկտիկա, դիպլոմ, դիսերտացիա, դիվիզիա, դիրեկտոր, դոցենտ, զոնա, էկոլոգիա, էկրան, էներգիա, էսկալացիա, էքսկավատոր, էքսպեդիցիա, թեմա, ժանր, իներցիա, ինտերնացիոնալ, լաբորատորիա, կոլեկտիվ, կապիտալ, կապիտան, կիբեռնետիկա, կոմունիստ, կոմիսար, կոմիսարիատ, կոնյուկտուրա, կոնսպեկտ, կոնսուլտացիա, կոնտակտ, կոոպերատիվ, կուրս, մագնիտոֆոն, մայոր, մասշտաբ, մատերիալիզմ, մարգարին, մեդալ, մեթոդ, մետրո, միլիցիա, միտինգ, մոտոցիկլետ, մորատորիում, մուլտիպլիկացիա, նեյլոն, շտաբ, չեմպիոն, պարտիզան, պլան, պլաստիկատ, պլենում, պոլիտեխնիկ, պրոֆեսոր, ռասա, ռեակտիվ, ռեակցիա, ռեգիոն, ռեգիոնալ, ռեզերվ, ռեժիմ, ռելս, ռիթմ, սիլոս, սխեմա, սոդա, սովխոզ, սոցիալիզմ, սպորտ, ստաժ, վագոն, տակտիկա, տանկ, տաքսի,

տեխնիկ, ցեմենտ, ցիստեռն, ··գան, օրգանիզմ, ֆեոդալիզմ, ֆինանս *և այլն։*

Նոր փոխառությունների մեջ զգալի թիվ են կազմում արմատական կամ այդպես գիտակցվող բառերը, որոնք կարճ են և հեշտությամբ մասնակցում են նոր բաղադրությունների (բետոնագործ, մեդալակիր, էկրանացում, ռասայական, վագոնաշինական *և այլն)։ Ընդհանրապես իրենց երկարությամբ աչքի են ընկնում հատկապես պատճենված բառերը, ինչպես՝* հեռուստահաղորդում, հեռուստակառավարում, հիդրոօդերևութաբանական, էլեկտրաջերմաօդափոխիչ, աշխարհագրահոգեբանություն *և այլն։*

2. Անգործածական բառեր։ *Սրանք այն բառերն են, որոնք պատմական մի ժամանակահատվածում գործածվել են, սակայն զանազան պատճառներով դարձել են անգործածական և ասպարեզից դուրս եկել։ Այսպիսի բառերի մի մասը գործածվել է գրաբարում, մի մասն՝ ավելի ուշ ժամանակներում, մի մասն էլ՝ ոչ վաղ անցյալում, նույնիսկ մեր օրերում, և այժմ տրվել մոռացության։ Ահա մի քանի օրինակներ, նախ գրաբարյան շրջանից.*

Ահոկ — վնաս
Աղաբողոն — վերարկու
Աղամող — այլևայլ
Աղցաւոր — կարիքավոր
Անխայեմ — խնայել, գթալ. արգահատել. զգուշանալ
Բալախ — անպիտան
Բաղալք— պատժառանք (մահանա). հանցանք
Բանկն — անպիտան խոսք, ոչ ծրագմարիտ խոսք՝ զառանցանք
Գրենոյ — գիր, տառ
Դալապր — սուր (դաշույն)
Երիթ — տեպ
Երիթացեալ — մաշված, կեղտոտ. խեղծ
Զովող — ընկեր, մասնակից, բաժանորդ
Զօշոտ — անմառակ
Էականամ — բնական լինել
Ըստգիւտ — մեղադրանք, հանցանք
Թոժիւն — տխմար. արջի քոթոթ
Ժանուար — գահավորակ՝ փղի կամ ձիու մեջքին, տալլի վրա ամրացնելու համար
Իշտրեմ — արհամարհել
Լեստամ — ծեծել՝ մանրել
Լործեմ — ատամն առնել
Խարբ — սուր (դաշույն)
Կանդ — արու արծիվ (ընդհանրապես գիշակեր թռչունների արուն)
Կարվուրայ — նավակ
Հրշտեմ — վախենալ
Հրոսող — հարձակվող
Զրձիտ — հափշտակող, բզկտող
Ղօղեմ — փակել, պատել, թաքցնել
Ճակգարան — ձայն հանող խաղալիք
Մրգուզ — ստոր, չնչին
Յաշտ — զոհ, նվեր
Ներ — 600 տարվա շրջան

Նկահ — անգետ, տգետ
Նուսխալ — գրված կանոն, օրինակ
Նրան — տուր (դաշտուլն)
Շար — 3600 տարվա շրջան
Շարագիր — հեղինակ, գիրք գրող
Որոջ — էգ գառ (նաև գառ ընդհանրապես)
Չքոտի — չնչին, ստոր, փուչ
Պախիմ — սատտիկ վախենալ, սոսկալ
Ջամբ — երեխաներին տալիք ուտելիք
Ռայ — դրոշակ, հաղթության նշան
Սաբա — ծեր, մեծ
Սոս — 60 տարվա շրջան
Վսեր — հանդգնություն
Տառատոկ — զինվորական վերարկու
Փաղանգ — զորագունդ
Քառալծորդ — չորսը միասնաբար
և այլն:

Միջին հայերենում գործածված և հետո մոռացության տրված բառերից են գունդստաբլ, դատաստանագիրք, դուքար, խաթուն, ճապուկ, ճորտ, մարաջախտ, պայլ, սեթայ *և այլն, իսկ նոր շրջանից՝* աբեզդչի, ակցիզչի, ատելիե, բեգյառ, գզիր, գլավա, լիկկայան, կոնստիտուցիա, կուլակ, մոմենտ, նեպման, ստարշինա, տանուտեր, ֆյոխվա *և այլն։*

Այս և տասնյակ հազարավոր այլ բառեր, որոնք ժամանակի ընթացքում գործածությունից դուրս են եկել, պահվել են մեր գրականության էջերում, որտեղից էլ, իհարկե ոչ լրիվ, մուտք են գործել մեր բառարանները։ Այս բառերի մի զգալի մասը մնում է անծանոթ ոչ միայն հասարակությանը, այլև ինչ-որ չափով նաև մասնագետներին։ Հ. Թումանյանից ընդամենը կես դար հետո ապրած սերնդին արդեն հասկանալի չեն թովչի *(էն օրն եկան թովչի արին),* կոռ, բեգյառ *(Ի՞նչ տամ կոռին ու բեգյառին),* թավադ *(Մեր գյուղում մի քանի թավադներ ունենք), և մի շարք այլ բառեր, որ մեծ բանաստեղծը գործածում է իր ստեղծագործությունների մեջ։ Այս ցույց է տալիս, թե ինչպիսի արագությամբ են բառերը «մահանում»։ Որպեսզի պատկերացում կազմենք, թե քանակային ինչ հարաբերություն գոյություն ունի գործածությունից դուրս եկած և գոյատևող բառերի միջև, վերցնենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (Ն. բ. հ. լ.) բառարանի* ապ (ապա) *բաղադրիչով սկսվող առաջին 50 բառերի ցանկը և համեմատենք Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (Ա. հ. բ. բ.) նույն բաղադրիչով սկսվող առաջին 50 բառի հետ։ Ահա դրանք.*

Ն. բ. հ. լ.	Ա. հ. բ. բ.	Ն. բ. հ. լ.	Ա. հ. բ. բ.
Ապ (ապա)	**Ապ (ապա)**	Ապախտ	Ապադասային
Ապաբան	Ապաբախտ	Ապախտանամ	Ապազգային
Ապաբանեմ	Ապաբարձիչ	Ապախտարար	Ապազգայնանալ
Ապաբանութիւն	Ապաբարո	Ապախտարք	Ապազգայնացնել
Ապաբնակութիւն	Ապաբնեռացում	Ապախտաւոր	Ապազգայնացվել
Ապագայ	Ապաբյուրեղանալ	Ապախտաւորագոյն	Ապազգայնացում
Ապագնալ	**Ապագա**	Ապախտաւորիմ	**Ապազեն**
Ապագով	Ապագաբեր	Ապախտաւորութիւն	Ապազոդել
Ապագովանք	Ապագաղութացում	Ապախտել	Ապազոդվել
Ապագովեմ	Ապագայապուշտ	Ապախտիք	Ապազոդում
Ապագովութիւն	Ապագայապաշտական	Ապակագործ	**Ապաթարց**
Ապագործ	Ապագայապաշտություն	Ապակագործութիւն	**Ապաթույն**
Ապադարձութիւն	Ապագապաշտ	Ապականաբեր	**Ապաժամ**
Ապադէմ	Ապագապաշտական	Ապականգիր	**Ապաժամանա**
Ապազէն	Ապագապաշտություն	Ապականագործ	**Ապաժամյա**
Ապաթարց	Ապադաշն	Ապականագործութիւն	Ապաժամություն
Ապաթույն	Ապադաշնել	Ապականալոյծ	Ապաժառանգ
Ապաժամ	Ապադաշնվել	Ապականալուծութիւն	**Ապաժոյժ**
Ապաժամեան	Ապադաշնություն	Ապականածնութիւն	**Ապալեր(կ)**
Ապաժամանութիւն	Ապադաշնում	Ապականակիր	Ապախոշորացնել
Ապաժամեան	Ապադաշնություն	Ապականակից	Ապախոշորացվել
Ապաժոյժ	Ապադասակարգային	Ապականահալած	Ապախոշորացում
Ապաժուժախոհ	Ապադասակարգայնանալ	Ապականամիտ	Ապակազմավորել
Ապալեր(կ)	Ապադասակարգայնացնել	Ապականասէր	Ապակազմավորվել
Ապախուրեմ	Ապադասակարգայնացում	Ապականաբար	Ապակայունացնել

Եթե նույնիսկ անտեսենք այն հանգամանքը, որ բառարան կազմելիս մեխանիկորեն նոր բառարան են անցնում նաև չգործածվող բառեր, ինչպես այս ցանկի մեջ են ապազեն *(անզեն),* ապաթույն *(առանց թույնի),* ապաժամա *(չժամանած),* ապալեր(կ) *(ամայի), ապա վստահորեն կարող ենք ասել, որ 50 բառից միայն 5-ը* (ապա, ապագա, ապաթարց, ապակեգործ, ապակեգործություն), *այսինքն՝ 10 %-ը գոյատևել է առ այսօր, իսկ 90 %-ը դուրս է եկել գործածությունից, իսկ դրա փոխարեն մեր բառապաշարը համալրվել է նոր բառերով (ընդհանուր նը-*

շում ունեցող վերջին՝ ապալերկ բառը Հայկազյան բառարանում 24-րդն է, այնինչ է. Աղայանի բառարանում՝ 44-րդը։ Մենք այս տոկոսային հարաբերությունը չենք ընդհանրացնում ամբողջ հայերենի բառապաշարի վրա, սակայն որ գործածությունից դուրս եկած բառերը զգալի թիվ են կազմում, այդ ապացուցման կարիք չի զգում։

Գործածությունից դուրս եկած բառերն անխտիր ոմանց կողմից անվանվում են մեռած բառեր, ոմանց կողմից էլ՝ հնացած բառեր, նաև հնաբանություններ։ Գործածությունից դուրս եկած բառերն անխտիր մեռած համարել չի կարելի։ Պ. Սևակը մի առիթով ասել է, որ բառերի մի մասը քնած է, մի մասն էլ լռում է։ Քնածին արթնացնող է պետք, լռածին՝ խոսեցնող։ Այս բանաստեղծական պատկերի մեջ գիտական ճշմարտություն կա։ Իսկապես մեռած են այն բառերը, որոնք չեն անցել գրականություն և անդառնալիորեն կորել են։ Այնինչ գործածությունից դուրս եկած բառերը մեռած չեն, քանի որ նրանց կարելի է «արթնացնել» և «լռոսել տալ», այսինքն անհրաժեշտության դեպքում գործածել ու վերակենդանացնել։ Անցյալում գործածված, ապա մոռացության տրված, իսկ արդի հայերենում նոր կյանք ստացած բազմաթիվ բառերից հիշենք միայն մի երկուսը։ Հեռուստ բառը, որ գործածական էր Շնորհալու ժամանակներում և մոռացության էր տրվել հետագա դարերում, կրկին կյանք առավ մեր օրերում իբրև բառաբաղադրիչ՝ հիմք դառնալով մի քանի նոր բառերի համար։ Օդաչու բառը գործածված ենք տեսնում ոչ ավելի ուշ, քան Նարեկացին, սակայն մոռացության է տրվել և կրկին կյանքի կոչվել 19-րդ դարում. նախ հին նշանակությամբ, իբրև ածական (օդում թռչող իմաստով), և ապա իբրև գոյական։ Ընկալուչ բառն ավանդված է V դարից՝ մարդ իմաստով (ընկալող, ընդունող նշանակությամբ), և երկար ժամանակ մոռացության տրվելուց հետո մեր օրերում գործածության մեջ մտավ իբրև հեռախոսի մաս (հեռախոսափող)։ Օդապարիկ բառը ևս գործածվել է շատ դարեր առաջ, մոռացության տրվել, ապա կյանքի կոչվել օդապարիկի գյուտից հետո։ Գնացք բառը, որ գործածական է եղել V դարում բայանվանական նշանակությամբ և դարձյալ մոռացության մատնված վերջին դարերում, կրկին կյանք առավ անցյալ դարում՝ գնացքի գյուտից հետո։ Գործառություն բառը, որ մեզ հանդիպել է 1749 թ. Վենետիկում լույս տեսած մի գրքում (Կարլոս Բերմուտ, Գիրք, որ կոչի վարժումն կտակագրութեան.

իսպաներենից թարգմ. Գաբրիել Երևանցի) և հետագա ժամանակներում չի գործածվել, միանգամայն վերջերս մտավ շրջանառության մեջ, համարյա նույն նշանակությամբ։ Միանգամայն հասկանալի է, որ այսպիսի բառերի մի մասը նոր կազմություններ են, որոնք զուգադիպել են հին բառերին, սակայն սրանք պատահականություն են, իսկ օրինաչափն այն է, որ գործածությունից դուրս եկած բառերի մի մասը կարող է կրկին կյանք ստանալ։

Հնաբանություններ։ *Խոսքը ոճավորելու համար կարևորություն են ներկայացնում անցյալում գործածված այն բառերը, որոնք արդի հայերենում կյանք չստանալով հանդերձ՝ գործածվում են ըստ անհրաժեշտության։ Սրանք հնաբանություններն են, որոնք երկու ենթախմբի են բաժանվում՝ պ ա տ մ ա բ ա ռ ե ր և հ ն ա բ ա ռ ե ր։*

Պ ա տ մ ա բ ա ռ ե ր են բոլոր այն բառերը, որոնք անվանում են ժողովրդի կյանքի ընթացքում պատմության գիրկն անցած հասկացություններ ու գաղափարներ։ Այսպիսի բառերը մեզ պետք են անցյալի կյանքը վերարտադրելիս (պատմական ուսումնասիրություններում ու գեղարվեստական երկերում), երբ համապատասխան հասկացությունների համար արդի հայերենը բառ չի ունենում, և մենք կամա թե ակամա ստիպված ենք լինում դիմել գործածությունից դուրս եկած բառերին։ Այսպես, օրինակ, մեր ժողովրդի պատմական հեռավոր անցյալի կյանքը պատկերելու համար մեր վիպասանները գործածում են **ավագանի, ատրուշան, բդեշխ, գառագիղ, գահնամակ, գումարտակ** *(զարդ),* **դենիմազդեզ, դրանիկ, հազարապետ, մարզպան, մոգ, հայրապետ, մայրապետ, նախարար, սենեկապետ, տապար, փիին, քելլեֆ** *և բազմաթիվ այլ բառեր, որոնք արդի հայերենի բառեր չեն, բայց առնում ենք մեր հին լեզվից և գործածում ըստ անհրաժեշտության։ Արտացոլելով պատմական անցյալի կյանքը և ծառայելով խոսքի ճշտության նպատակին, պատմաբառերը կատարում են տերմինի դեր և, իբրև կանոն, ոճական լիցքավորում չեն ունենում*[20]։

Հ ն ա բ ա ռ ե ր ը նեղ առումով հնաբանությունների մյուս

---

[20] Պատմաբառերին պետք է ավելացնել այն կայուն կապակցությունները, որոնց արտահայտած գաղափարներն այժմ չկան ինչպես, օրինակ, **թագադիր արքեպիսկոպոս, հայր-մարդապետ, տիկնանց տիկին** և այլն։

տեսակն են։ Սրանք այն բառերն են, որոնց նշանակած գաղափարներն այժմ էլ կան, գոյություն ունեն, սակայն արտահայտվում են այլ բառերով և կամ մեր լեզվի զարգացման ներքին օրենքներին համապատասխան ձևափոխվել են, և ներկա ձևն ու հին ձևը տարբեր ոճական երանգավորումներ ունեն։ Այս պատճառով էլ հնաբառերը երկու ենթախմբի ենք բաժանում։

ա. Հնաբառերի մի ենթախմբում դնում ենք այն բառերը, որոնց իմաստներն այժմ այլ բառերով ենք արտահայտում, այսինքն՝ ունենք արդի հայերենում նույն իմաստներն արտահայտող այլ բառեր, սակայն անցյալի պատրանք կամ պատմական բներանգ ստեղծելու նպատակով դիմում ենք հին՝ գործածությունից դուրս եկած բառերին։ Այսպես, օրինակ, Դ. Դեմիրճյանն իր «Վարդանանք» և Ստ. Զորյանն իր «Պապ Թագավոր» վեպերում գործածում են դստովել, անգոսնել, զենուլ, ամիճ, մելան, անյակ, հավախոս և շատ այլ բառեր, որոնց իմաստները կարելի կլիներ արտահայտել արդի հայերենում նույն գաղափարներն արտահայտող բառերով, բայց դիմել են հնաբառերի ոճական նպատակով։

բ. Հնաբառերի մյուս ենթախմբում դնում ենք այն բառերը, որոնք քերականական, հնչյունային և կամ ձևաիմաստային փոփոխություններ են կրել, և դարձյալ ոճավորման նպատակով գեղարվեստական ստեղծագործության մեջ հանդես են բերվում իրենց հին ձևով։ Այսպես, օրինակ, Ստ. Զորյանն իր «Պապ Թագավոր» պատմավեպում գործածում է ամարանի, այսու, զրոց, ելանել, զավակաց, նախարարաց, ոչ գիտե, սատակել, frիստոնեից և այլ բառեր, որոնց համարժեք ձևերն ունի արդի հայերենը։

Հնաբանություններ են նաև այն բոլոր կապակցությունները (կայուն կապակցություններ, դարձվածներ և այլն) և առածաբանությունները, որոնց գաղափարները կան, մնում են և արտահայտվում են մեր նոր գրական լեզվի կառույցներով։ Այսպիսի կապակցություններ են, օրինակ, ձայն բարբառ հանապատի, հաց հանապազօրյա. ակն ընդ ական, ատամն ընդ ատաման. ոչ միայն հացիվ կեցցե, այլև բանիվ տեառն. որ սուր առցե, սրով մեռցի. հովիվ fաջ զանձն յուր դիցե ի վերա ոչխարաց և այլն։

Գրաբարը մեր գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցների հարստության հուսալի գանձարանն է, և ամեն դեպքում, երբ արդի հայերենը որևէ դժվարություն է հանդես բերում, դիմում ենք նրան՝ իբրև անսպառ մի աղբյուրի։ Եվ դա ոչ միայն

ոճական նկատառումներով։ Երբեմն գրաբարյան ձևերին ենք տալիս նախապատվությունը գեղարվեստական խոսքի յուրահատկությունների թելադրանքով։ Ահա բանաստեղծական խոսքի մի օրինակ, որի մեջ ընդգծված հնաբառերի գոյությունը պայմանավորված է բառի կազմվածքի առանձնահատկությամբ՝ տրվյալ դեպքում գրաբար բառերի կարճությամբ.

— Թերթն ինչո՞ւ քեզ դուր չի գալիս։
— Քանզի օրվան է տուրք տալիս։
— Հապա ինչո՞ւ թերթ ես կարդում։
— Որովհետև միայն թերթում
Կարես գտնել, թե բառն ինչքան
Հեռու է կյանքից իրական։ (Գյոքե)

Այս ընդգծված բառերի աշխարհաբարյան համանիշները (քանի որ, որովհետև, այն պատճառով, որ, նրա համար, որ և, այնուհետև, կարող ես, կկարողանաս, հնարավոր է, կարելի է և այլն) երկար են, և թարգմանիչը դիմել է մեր հին լեզվի բառերին, որոնք կարճ են և հեշտ են հյուսվում բանաստեղծության ռիթմին։

Բոլոր հնաբանություններն ընդհանրապես ունեն ոճական լիցքավորում։ Դրանք խոսքին կարող են տալ կարևորություն, հանդիսավորություն, հռետորականություն, հնության փայլ, եթե գործածված են ճիշտ տեղում և ճաշակով։ Հնաբանություններն ստեղծում են բնականության պատրանք, ընթերցողին մղտովի տանում վաղ ժամանակների միջավայր և դրանով արտահայտման եղանակը դարձնում հետաքրքրական։

Տարաժամանակյա հայեցակետով նայելիս լեզվի բառապաշարում տեսնում ենք ներհակ անընդհատ շարժում՝ մի կողմից բառերի մարում, մյուս կողմից՝ նոր բառերի ծնունդ ու մուտք գործածության ասպարեզ։ Քանի որ վերջին 1500 տարիների ընթացքում մեր ժողովուրդը 3 անգամ գրական լեզու է ձևավորել, այդ պատճառով էլ տարաժամանակյա առումով մեր բառապաշարը կարելի է բաժանել 3 շերտի՝ գրաբարյան, միջին հայերենյան և նոր գրական հայերենի։ Բառապաշարի հարստացումը, որ լեզվի կենդանության պայմաններից մեկն է, անընդհատ գործընթաց է, որը ոչ մի տեղ կանգ չի առնում, քանի դեռ ժողովուրդը կենդանի է։ Այս գործընթացը շատ ավելի խոր արմատներ ունի գրական լեզվում։ Մեր նոր գրական լեզուն իր գոյության շուրջ հարյուրամյա պատմության ընթացքում, առավելապես Հայաս-

տանի մի մասի խորհրդայնացումից հետո, բառապաշարը հարստացրել է աներևակայելի չափերով։ Բավական է ասել, որ եթե գրաբարի ամբողջ բառապաշարը (ըստ Առձեռն բառարանի) շուրջ 56000 միավորի է հասնում, ապա արդի հայերենի բառագանձը 4 անգամ գերազանցում է գրաբարից։ Բայց սա սոսկ քանակական առումով։ Եթե նկատի ունենանք, որ գրաբարի տասնյակ հազարավոր բառեր դուրս են եկել գործածությունից, այսինքն՝ այդ 56000 բառերը լիովին չեն մտնում արդի հայերենի բառապաշարի մեջ, ինչպես վերը կատարած համեմատությունն է ցույց տալիս, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի վիթխարի տեղաշարժ է տեղի ունեցել մեր բառապաշարի մեջ։ Սրան պետք է գումարենք նաև բառերի իմաստային նոր համալրումը, որը բառաստեղծման ու փոխառության հետ բառապաշարի հարստացման մի երրորդ աղբյուր է։ Էդ. Աղայանն «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության մեջ բերում է 15 բառերի՝ անցնել, թև, թույլ, խոսել, կտրել, հանել, մնալ, նստել, պահել, պատմություն, պատրաստել, ջախջախում, վերցնել, տալ և օղակ, իմաստների քանակների բաղդատությունը ըստ Ստ. Մալխասյանցի և իր կազմած բառարանների տվյալների։ Այդ բառերը միասնաբար ըստ Մալխասյանցի բառարանի տալիս են ընդամենը 224 նշանակություն, իսկ ըստ իր բառարանի տվյալների՝ 491 նշանակություն։ Իհարկե, սա չի նշանակում, թե ցանկացած 15 բառը մեր լեզվում կտա իմաստների քանակի այսպիսի հարաբերություն, սակայն այնուամենայնիվ առանց վարանելու կարող ենք ասել, որ մեր լեզվի բառապաշարը զգալիորեն հարստացել է նաև այս ուղիով։ Այս նշանակում է, որ բառային նորաբանությունների մեջ առանձին տեղ պիտի հատկացվի բառերի ձեռք բերած նոր իմաստներին։

Բառային նորաբանություններ. Նորաբանությունը լայն առումով ընդգրկում է ինչպես բառերն ու բառերի նոր կապակցությունները, այնպես էլ քերականական կաղապարներն ու արտահայտամիջոցները։ Թողնելով վերջիններս, մենք այստեղ համառոտակի անդրադառնալու ենք միայն բառային նորաբանություններին։ Բառային նորաբանությունները նոր ստեղծված կամ նոր փոխառված բառեր են և կամ նոր իմաստներ են՝ դրված մեր հին բառերի մեջ։ Քանի դեռ այսպիսի բառերը չունեն ընդհանուր տարածում և զգացնել են տալիս իրենց նոր լինելը, նորաբանություն են, բայց ընդհանուր ճանաչում գտնելուց հետո դադարում

են նորաբանություն լինելուց։ Այս պատճառով էլ նորաբանությունների հիմքը խախուտ է. բավական է, որ դառնան ընդհանուր գործածական, անցնում են սովորական բառերի շարքը, իսկ եթե ընդհանուր գործածության չեն արժանանում, անցնում են գործածությունից դուրս եկած բառերի շարքը։ Այսպիսի բախտ է վիճակված դիպվածական բառերին, օտարամուծություններին և հեղինակային նորաբառերին։

Դիպվածական բառերը սովորաբար գեղարվեստական երկում բովանդակության ներքին թելադրանքով ստեղծված այն միավորներն են, որոնք խոսքային տվյալ միջավայրում ծառայում են հաղորդակցական գործառությանը, ունենում են երբեմն նաև գեղագիտական լիցքավորում, սակայն ոչ մի տվյալ չունեն դառնալու ընդհանուր գործածական բառ։ Այսպես, օրինակ, Նար-Դոսը իր պատմվածքներից մեկում, գեղարվեստական կերպարի խոսքում, գործածում է գրողություն, Ստ. Զորյանը՝ անախրիշտ (անարխիստ իմաստով), Հ. Սահյանը՝ ստեղծաբան, բանաերգիծ, կայծակնագանգուր և այլ դիպվածական բառեր, որոնց մեջ դրված է հեղինակների հեգնական վերաբերմունքը հենց այդ և նման բառեր գործածողների նկատմամբ։ Դիպվածական բառերի մեջ աչքի է ընկնում շինծուությունը։ Ահա մի օրինակ.

Ուստի ասեմ ձեզ՝ բարեկամներիս,
Որ այսու և ետ բացառված հաշվեք
Հիվանդությունը երիկամների՝
Կապ կոչվի, թե մապ,
Քար կոչվի, թե մար,
Մե՞կ չէ ձեզ համար։ (Պ. Սևակ)

Հեգնական վերաբերմունքը մի կողմից և շինծուության գիտակցումը մյուս կողմից թույլ չեն տալիս, որ սրանք անցնեն համագործածական բառերի շարքը։

Օտարամուծություններ են այն բառերը, որոնք առնվում են օտար միջավայրից և տվյալ պահի թելադրանքով գործածվում խոսքում՝ միջավայրի անմիջականությունը ընդգծելու կամ տրվյալ գաղափարն այլ կերպ արտահայտելու հնարավորություն չունենալու պատճառով։ Օտարամուծություններով առատ են լինում առավելապես թարգմանական երկերը (հատկապես գեղարվեստական)։ Բերենք մի երկու օրինակներ։ Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» ստեղծագործության թարգմանության մեջ հանդի-

պում ենք վիգվամ, վավա, մոկասի, մոնոֆ, շոֆթով, շոշո, պոն, օմոնոն *օտար, ինչպես և թարգմանիչի (Հ. Թումանյան) պատճենած* շեմամոդ, կարմրալանջ, լուսափերի, գետափերի, լոռենաձյուս, եղջրաջիղ, ծիծաղաջուր, տերևամիս, ագռավարֆա, գետընթրքի, գետեղնուտ, *Բոլեսլավ Պրուսի «Փարավոն» վեպում՝* պիլոն, պարասխիտ, էպիֆ, նոմ, նոմարֆոս, մորգ, պերիստիլ, հիպոստիլ *և այլ բառերի։ Օտարամուծությունների դիմում են նաև այն գրողները, որոնց ստեղծագործության բովանդակությունը դուրս է գալիս հայրենի երկրի միջավայրից և ընդգրկում տարաշխարհիկ սոցիալական ու աշխարհագրական միջավայր։ Այսպես, օրինակ, Ավ. Իսահակյանն իր «Աբու Լալա-Մահարի» պոեմում գործածել է* սուրաճ, ֆասիդ, շեմս, վուռուդի, շյուֆր, ջեննեթ, խալիֆ, ֆյոշֆ *արաբերեն բառերը, Շիրվանզադեն «Քաոսում» գործածում է ադրբեջաներեն, ռուսերեն, ֆրանսերեն բառեր ու արտահայտություններ, որոնք ոչ կարող են ընդհանուր գործածություն գտնել հայերենում և ոչ էլ մտնել մեր բառապաշարի մեջ։*

Օտարամուծությունների մի խումբն էլ կազմում են զանազան անվանումները (աշխարհագրական անուններ, կենդանիների, բույսերի անվանումներ, իրերի, հիմնարկների անուններ և այլն), ինչպես՝ «Զինգեր» *(կարի մեքենայի տեսակ),* «Մոսկվիչ» *(ավտոմեքենայի տեսակ),* «Լենինգրադ» *(սայրի տեսակ),* «Վեհա», «Միր», «Սոյուզ» *(տիեզերանավերի անվանումներ),* «Գեոէֆս» *(գիտափորձի անվանում),* ռուփի, դինար, ֆեն, կրոն *(դրամի անվանումներ) և այլն։*

Հեղինակային նորաբառերը *իսկապես բառեր են, ստեղծված խոսքի բովանդակության պահանջով՝ իրերի ու երևույթների հարաբերությունները ճիշտ արտահայտելու համար։ Այս պատճառով էլ հեղինակային կարող են և չդառնալ խիստ մասնագիտական, վերամբարձ, խիստ այլաբանական լինելու և այլ պատճառներով։ Ահա հեղինակային նորաբառերի մի քանի նմուշներ մեր դարի հայ գրականությունից։ Վ. Տերյանն ստեղծել է* ցավածին, ոսկեշրթա, մոգվել, նաիրյան, լուսե, տխրաշյա, լեռնադուստր, վշտածրար, նրբակապույտ, լուսաթև, լուսակատար, հրապսակ, անխաբ, ձյունապայծառ, հրախանդ, խավարակուռ, աղմկահյուս, *Ավ. Իսահակյանը՝* սալասմբակ, տրտմասուգ, լուսաբարբառ, լուսարբած, վիպերգել, ֆաղցրամրմունջ, աշխարհաջան, ոսկեփրփուր, խավարաճիրան, հազարահանդես, ծիածա-

նաթև, արշավասույր, Դ. Դեմիրճյանը՝ ազատամարտ, ահեղրնթաց, աղֆատահոգի, ամպաշարք, առանձնյակ, ավազաբախ, արյունողող, բարձրաբլուր, դանդաղամարտ, կովավարձ, համրատատան, մանրաժպիտ, Ե. Չարենցը՝ հրակարմիր, հրանման, հրաշուշան, հրաբոսոր, կարմրակեզ, կարմրածուփ, հեզաճկուն, արնավառ, ողբանվագ, Պ. Սևակը՝ գետություն, իլիկություն, սիրասաթափվել, արարատություն, բացխուփիկ, գաղտնաբացություն, ֆեզազուրկ, բնաբարձել, Հ. Սահյանը՝ ֆարասապատ, ֆարաշխարհ, ձյունագեղ, հոգնաշնորհ, հոգնաշահ, երդաշեն, սերմրնկալ, հայրենահամ և այլ շատ բառեր։

Գիտական խոսքում հեղինակային նորաբառերը մեծ մասամբ լինում են տերմիններ, այդ պատճառով էլ հեշտ են մտնում գիտական շրջանառության մեջ և ընդհանուր ճանաչում գտնում, եթե դրանք ստեղծված են բանիմացությամբ, ճաշակով, եթե տեղին են և բավարարում են ժամանակի գիտության պահանջներին։ Արդի հայերենում պատկառելի թիվ են կազմում ամենաբազմազան գիտություններին, տեխնիկային ու արվեստին վերաբերող նորաբառերը։ Միայն հայ լեզվաբանության բնագավառում հարյուրավոր նորաբառեր են ստեղծվել հատկապես Մ. Աբեղյանի, այլև Հր. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի, Գ. Ջահուկյանի, Է. Աղայանի և ուրիշների կողմից, բառեր, որոնց մի զգալի մասը հաստատապես մտել է գիտական շրջանառության մեջ։

Իբրև ընդհանուր դիտողություն ասենք, որ նորաբանությունները խոսքում չունեն հնաբանությունների նման ոճական լիցքավորում, բացառությամբ այն օտարաբանությունների, որոնք բարձր միջավայրի բառեր են (հատկապես այսպես կոչված «միջազգային» բառեր) և խոսքի մեջ փայլում են իրենց նորությամբ ու թարմությամբ, զարմանք են պատճառում, այնքանով որքանով որ դրանց իմաստները «սովորական մահկանացուներն» արտահայտում են հայերեն սովորական բառերով և կամ շրջասություններով, որի հետևանքով էլ չեն ունենում օտար բառի գրավչությունը։

II. Համաժամանակյա հայեցակետից բառապաշարի դասդասման համար հիմք են դառնում նրա գործածության ու գործառության ոլորտները, բառերի ծագումը, գործածության հաճախականությունը, իմաստներն ու իմաստային ա-

որնչությունները, ձևերն ու ձևային առանձնահատկությունները և բառերի միջոցով խոսողի արտահայտած վերաբերմունքները։

1. Ըստ գործածության ոլորտների արդի հայերենի ամբողջ բառերի՝ ենթաշերտերի բաժանման հիմքը մեր ժողովրդի լեզվագործածությունն է, որը պայմանավորված է արտալեզվական մի շարք հանգամանքներով։ Այդ հանգամանքների հետևանքով մեր ժողովուրդն ունի երկու գրական լեզու՝ արևելահայերեն և արևմտահայերեն, գրական լեզվի վերբարբառային խոսակցական տարբերակ (ժողովրդախոսակցական հայերեն), դարերի ընթացքում ձևավորված շուրջ վեց տասնյակի հասնող բարբառներ, որոնք կազմում են մեր լեզվաոլորտները։ Որովհետև մեր լեզվաոլորտներն արդյունք են մեր ժողովրդի կյանքի պատմական մի շարք տեղաշարժերի, բառապաշարն իր հիմքով ընդհանուր է բոլոր լեզվաոլորտների համար։ Այս նշանակում է, որ ծագումնաբանորեն ընդհանուր լինելով հանդերձ՝ արդի հայերենի բառերը կարող են հանդես գալ կամ առանց տարբերակի և կամ երկու և ավելի տարբերակային ձևերով՝ արևելահայ գրական, արևմտահայ գրական և բարբառային ու ժողովրդախոսակցական։ Այսպես, օրինակ, հայր բառը գրական լեզուներում հայր է, ժողովրդախոսակցականում՝ հեր, իսկ բարբառներում՝ հար, խեր։ Եղբայր բառը արևելահայ գրականում եղբայր է, արևմտահայերենում՝ աղբար, արևելահայ ժողովրդախոսակցականում՝ ախպեր, նաև ապեր, արևմտահայ ժողովրդախոսակցականում՝ ախպար։ Հաց ձևն ընդհանուր է գրական լեզուների և ժողովրդախոսակցական հայերենի համար, սակայն ունի բարբառային տարբերակներ՝ խաց, հոց և այլն։ Երես բառը հանդես է գալիս բարբառային իրես, տուն բառը՝ տոն, դուն, ճակատ բառը՝ ջագադ, դուռ բառը՝ թուռ, տներ, տներեր, ութ բառը՝ օթ, կարմիր-ը՝ գարմիր, կարմիր, հասնել-ը՝ հասնել, հրսնել, բանալ-ը՝ պանալ, փանալ տարբերակներով և այլն։

Լեզվաոլորտային տարբերակները, ինչպես տեսնում ենք, նոր բառեր չեն, այլ միևնույն բառի հնչյունափոխական տարբերակներ, ուստի և դրանք սխալ է համարել բարբառային կամ ժողովրդախոսակցական բառեր։ Սրանք միևնույն բառի անփոփոխակներն են (գրական տարբերակը) և փոփոխակները (ժողովրդախոսակցական կամ բարբառային տարբերակները)։

Նկատելի է, որ մեր բառապաշարի մի զգալի մասը հանդես է գալիս լեզվաոլորտային տարբերակներով, որոնք ունեն ընդ-

գծված ոճական լիցքավորում. գրական տարբերակները (անփոփոխակները) ըստ մեր լեզվական ճաշակի այն բառերն են, որոնք սովորաբար գործածվում են հաղորդակցման բարձր մակարդակում, ժողովրդախոսակցականները՝ միջին մակարդակում, իսկ բարբառայինները՝ ցածր մակարդակում։ Բառերի գրական տարբերակներով են ստեղծվում այն խոսքերը, որոնք հարիր են պաշտոնական հարաբերություններին, հանդիսավոր իրադրություններին, հոգեբանորեն բարձր բովանդակություն ունեցող քրոնություններին։ Այդ պատճառով է, որ նրա համակարգում միանգամայն կոպիտ, անվայելուչ կամ գռեհիկ է հնչում բարբառային տարբերակը։ Բարբառային մակարդակում էլ ականջ է ծակում, իսկ երբեմն էլ ծիծաղելի է հնչում գրական տարբերակը։ Ժողովրդախոսակցականը երկուսի միջին տեղն է գրավում, հնչում է հասարակ և անմիջական։

Բացի հիշյալ բառերից մեր լեզուն հարուստ է այնպիսի բառերով, որոնք պատկանում են այս լեզվաոլորտներից միայն մեկին կամ մյուսին, այսինքն՝ կան բառեր, որ միայն գրական են, կան բառեր, որ պատկանում են ժողովրդախոսակցական ոլորտին, և կան բառեր, որոնք միայն բարբառներում են գործածվում, կան միայն արևելահայերենում գործածվող, և կան միայն արևմտահայերենում գործածվող բառեր։ Այսպես, օրինակ, հոս, հոն, ատդիհ, անդիհ, սանկ, ասանկ, աղու, աղվոր, ատեն, խել (խել մը-մի քանի), ինքզինքը, շախել, ֆովնտի, պզտիկություն, վասն զի, լմնցունել, ցցունել, պոռալ, կարգել, մեկդի, կոնակ, շատկեկ, կից (ամացի), էրիկ, ստակ, հրասայլ, ձայնասփյուռ, հեռացույց, նախարարություն և այլն միայն արևմտահայերենին հատուկ բառեր են, որ գործածվում են ոչ միայն գրական լեզվում։ Արևմտահայերենում մի փոքր շեղտ էլ կազմում են այն բառերը, որոնք թեև կան արևելահայերենում, սակայն այլ իմաստներ ունեն։ Օրինակ՝ անուշ բառը արևմտահայերենում գոյական է (ուտելիք), իսկ արևելահայերենում՝ ածական, մանչուկ բառը արևմտահայերենում նշանակում է մատուցող, այնինչ արևելահայերենում՝ մանուկ բառի փաղաքշականն է։ Նույն ձևով՝ կան բառեր, որոնք հատուկ են միայն արևելահայերենին։ Այսպիսի բառերի մի մասը փոխառություն է ռուսերենից, մի մասն էլ նոր կազմություններ են՝ ռուսերենից փոխառյալ և հայերեն բաղադրիչներով, ինչպես և զուտ հայերեն բաղադրություններ։ Ահա մի քանի օրինակներ հազարավոր այսպիսի բառերից՝

ամնիստիա, անսամբլ, անտենա, արտել, բանկա, բոնիկա, բրիգադ, բրիգադիր, բունտ, էկրան, էկզոտիկա, էկոլոգիա, էմուլսիա, թեմա, թեմատիկա, ժանր, ինտերվենցիա, լաբորանտ, լաբորատորիա, կոնսպեկտ, կոնսպիրացիա, կոնսուլտանտ, կոնսուլտացիա, կուրս, մատերիալիստ, մեթոդ, միլիտարիզմ, մինիստր, միտինգ, նատուրալիզմ, պլան, պլենար, պլենում, ռեժիմ, ռեպարացիա, սիլոս, սխեմատիզմ, տակտ, տակտիկա, տանկ, տրանսպորտ, ցեխ *(արտադրամաս)*, ցիստեռն, օկրուգ, օկուպացիա, օպերատիվ, օպերացիա, օրգան *(օտար բառեր)*, արտելային, բազմականալ, բազմասերիանոց, բազմատիրաժ, բարձրավոլտ, բրիգադավար, էվակուացնել, խոշորապանել, կարճամետրաժ, կենտկոմ, կուրսային, մատերիալիստական, միլիտարիստական, մինիստրական, միտինգային, նատուրալիստական, շրջկոմ, պաթոլոգիական, պանելային, պլակատային, պլանային, ռադիոհաղորդում, ռասիստական, ռեալիստական, տանկային, օպտիմիստական, օրգանական *(օտար և հայերեն բաղադրիչներով կազմված)*, նավթագործ, թունելագործ, ճակնդեղագործ, գիտատեսական, ուսումնափորձնական, կաթնապրանքային, լեռնահրաձգային, հարվածային, հրթիռամիջուկային, դարբնոցամամլիչ, ինքնաբեռնաթափիչ, հրթիռափորձարկիչ, ջերմաօդափոխիչ, կաղապարող, հորատող, բազմամրցորդ, լեռնադահուկորդ, չմշկասահորդ, դատարանակազմություն, ինքնաթիռաշինություն, հաշտվողականություն, պահպանողականություն, ստիպողականություն, ուղևորաշրջանառություն, գործիքավորում, ծրագրավորում, մասնիկավորում, հեռուստակառավարում, հրթիռափորձարկում, *այլև* գործընթաց, երաշտադիմացկուն, երգեհոնահարուհի, խոպանանվան, խուսանավել, կրակահերթ, հարցազրույց, ձեռքբերում, ձյունահավաք, մակնիշ, մանրակերտվածք, մարգափոր, մեծոլորտ, ներտաշ, ստուգայց, ուղևորատար, փոխանցիկ, փորձաթռիչք *(սոսկ հայերեն բաղադրիչներով կազմված)*։

Արևելահայերենի բառերն իրենց հերթին բաժանվում են գրականի, ժողովրդականի և բարբառայինի։

ա. Գրական լեզվի բառապաշարի առանցքն են կազմում բոլոր այն բառերը, որոնք մեր նոր գրական լեզուն ժառանգել է գրաբարից։

Գրական բառերի մեջ զգալի թիվ են կազմում նոր կազմությունները ու նոր փոխառությունները ռուսերենից (մեծ մասամբ ռուսերենի միջոցով եվրոպական այլ լեզուներից)։ Սրանց պետք

է ավելացնել նաև այն բաղադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ է (այսպիսի օրինակներ տրվել են վերը)։ Բաղադրյալ բառերն ըստ ոլորտների դեռևս չեն շերտատված։ Մենք այստեղ այսպիսի շերտատման փորձ ենք անում միայն, այսինքն՝ մենք տալիս ենք շերտատման ուրվագիծ և ոչ ուսումնասիրություն։ Հայերենի բաղաբաղադրիչները մենք բաժանում ենք երեք խմբի։ Մի խմբի մեջ ենք դնում այն բառաբաղադրիչները (բառեր, արմատներ և ածանցներ), որոնք իբրև կանոն ստեղծում են միայն գրական բառեր։ Մյուս խմբի մեջ էլ՝ սոսկ այն բառաբաղադրիչները, որոնք կազմում են ժողովրդախոսակցական ոլորտի բառեր։ Երրորդ խմբում դնում ենք այն բառաբաղադրիչները, որոնք կազմում են և՛ գրական, և՛ ժողովրդական ոլորտների բառեր։ Բերենք յուրաքանչյուրից միայն մի քանի օրինակներ։ Նախ՝ բոլոր այն բառերը, որոնց կազմում կան գրաբարյան նախդիրներ, անխտիր գրական բառեր են։ Օրինակ՝ առայժմ, առայսօր, առհասարակ, ժամառժամ, ընդդեմ, ընդդիմախոս, ընդհանուր, ընդօրինակել, ընտանիք, մերթընդմերթ, անընդհատ, գույնզգույն, հետզհետե, հանուն, հօգուտ, հոտնկայս, վայրիվերո, փոքրիշատե, տարեցտարի, օրեցօր։ *Գրական բառեր են կազմում մի շարք արմատներ ու արմատական բառեր, որոնցից բերում ենք մի երկու օրինակ.*

Գունդ.— ազատագունդ, գունդագունդ, կիսագունդ, համագունդ, հողագունդ։

Երգ.— այգերգ, գիշերերգ, դերերգ, խմբերգ, կրկներգ, հանգերգ, մեներգ, նախերգ, պարերգ, սիրերգ, վիպերգ, տաղերգ, քայլերգ։

Զարդ.— աղամանդազարդ, գմբեթազարդ, դրվագազարդ, թագազարդ, սգազարդ։

Է.— երբևէ, ինչևէ, մանրէ, ովևէ, որևէ։

Խույզ.— բնախույզ, հետախույզ, հնախույզ, քննախույզ։

Կարգ.— անկարգ, առաջնակարգ, ենթակարգ, իրավակարգ, համակարգ, միջնակարգ, վարչակարգ, օրակարգ։

Կեզ.— կարոտակեզ, հրակեզ, ողջակեզ, սրտակեզ, տոքակեզ։

Կիրք.— անկիրք, բարեկիրք, դժվարակիրք, կիսակիրք, քաղաքակիրք։

Հար.— ամոթահար, ապշահար, դալկահար, դաշունահար, դողահար, թմբկահար, խայթահար, խուճապահար, կաթվածահար, կայծակնահար, հողմահար, մտրակահար,

շանթահար, ջուրթակահար, սրահար, սվինահար, սրընգահար, փողահար:

Հույզ.— խռովահույզ, մշտահույզ, մրրկահույզ, փոթորկահույզ:

Ձիգ.— հեռաձիգ, հրաձիգ, ներքնաձիգ, ոմբաձիգ, ուղղաձիգ:

Նենգ.— դրամանենգ, խաղանենգ, մամսանենգ, չարանենգ:

Նյութ.— անտառանյութ, բջջանյութ, եղջերանյութ, թելանյութ, հականյութ, հանքանյութ, հղկանյութ, ներկանյութ, սընրընդանյութ, վառելանյութ:

Նվագ.— միանվագ, ողբանվագ, ցայգանվագ:

Շուրթ.— բարակաշուրթ, նախաշուրթ, կլորաշուրթ, նրբաշուրթ:

Վառ.— աստղավառ, արևավառ, զինավառ, խանդավառ, ծիրանավառ, ճանանչավառ:

Վճար.— անդամավճար, կանխավճար, հավելավճար, փայավրճար:

Ուղի.— արտուղի, գետնուղի, երթուղի, խաչուղի, խնուղի, խրամուղի, նոպանուղի:

Նույն ձևով՝ մի շարք ածանցներ կազմում են միայն գրական բառեր: Ստորև տալիս ենք դրանցից մի քանիսն իբրև օրինակ:

Ապա.— ապակենտրոնացնել, ապամոնտաժում, ապառազմականացում:

Արտա.— արտաբերություն, արտագնա, արտադրամաս, արտաճանություն, արտահատիֆային, արտապլանային:

Գեր.— գերազանց, գերածախս, գերակատարել, գերբնական, գերհաղորդիչ, գերհզոր, գերմարդ, գերոլորտ:

Տար.— տարաբախտ, տարաշխարհիկ, տարրնթացություն, տարօրինակ:

Ցա.— անձնյա, ապակյա, առափնյա, առօրյա, արտաժամյա, բազմամյա, դժնյա, եղեգնյա, ընդծովյա, ընդհատակյա, կիսամյա, կնյա, հնգամյա, հակոտնյա, հանապազօրյա, մետաղյա, միամյա, շուրջերկրյա, ստորգետնյա, սևաչյա:

Ցան.— ազգամիջյան, բազմաբուրյան, բազմադարյան, հետպատերազմյան, երկդասյան, էոլյան, ինֆրստինֆյան, մայիսյան, մինչմարքսյան, նոբելյան:

Ո.— բրածո, կոփածո, կոռածո, հանածո, չափածո:

Ոդ.— առաջնոդ, ժառանգոդ, լծոդ, լոդոդ, հավակնոդ, հեծանվոդ:

Ումի.— գեղումի, դիցումի, դշխումի, իտալումի, կախարդումի,

կթվորումի, կռունկավարումի, մեբեենագրումի, պարմանումի:

Ում(ն).— **առում, առևանգում, բառաբարդում, բերում, եզրահանգում, զուգադրում, զուգորդում, ժամանում, լրում(ն), խզում, ծագում, կախում, կանխում, հարցապնդում, հետապնդում, նշանավորում(ն), ոգորում, ոգևորում, չափում, պնդում, ջախջախում, ստուգում, վտարում, փոխանակում:**

Ույթ.— **բառույթ, դրույթ, ելույթ, երեկույթ, զայրույթ, լուծույթ, կշռույթ, հանույթ, հասույթ, հավաքույթ, հատույթ, հաշկերույթ, նկույթ, մշակույթ, նորույթ, շահույթ, պարբերույթ, սովորույթ, վարույթ:**

Ծանոթություն. Հիշյալ բաղադրիչներով կազմված բառերի մի մասն անցել է ժողովրդախոսակցականին, ինչպես, օրինակ, **քրիստոնյա, թագուհի, ուսում** և այլն:

Մեր բերած օրինակներով չի սպառվում այն բաղադրիչների ցանկը, որոնցով կազմված բառերը (հին թե նոր) պատկանում են գրական ոլորտին, և ոչ էլ սա միակ ուղին է, որով կազմվում են այս ոլորտի բաղադրյալ բառերը։ Իբրև կանոն, շրջուն շարադասությամբ կազմված բաղադրությունները (օրինակ՝ միջաղաքային, միջբուհական, միջերկրական, մերձմոսկովյան, շուրջերկրյա), *բառի լիարժեք ձևի դիմաց հիմքով կամ արմատով կազմությունները (օրինակ՝* խոսք *և* խոս *բաղադրիչներով՝* հեռախոս, **խոսափող** *գրական են, այնինչ* խոսքակոխ, խոսքաշար, խոսքաշեն *ժողովրդական են), գրաբարյան քերականական ձև ունեցող բաղադրիչներով կազմված բառերը (օրինակ՝* իրավասու, հագիվհագ, յուրային, յուրովի, անանցանելի, անտեսանելի, հասանելիք *և այլն) միայն գրական ոլորտի բառեր են։*

բ. Ինչպես ասվել է, կան բառաբաղադրիչներ էլ, որոնք կազմում են ժողովրդախոսակցական ոլորտի բառեր։ Ահա այդպիսի բաղադրիչներով կազմված բառերի մի փոքրիկ ցանկ։ Բառերով և արմատներով կազմված՝

Երես.— **անեռես, արևերես, բացերես, լուսերես, կակուղերես, լայներես, խնդումերես, ծիծաղերես, կլորերես, հաստերես, պարզերես, պնդերես, սևերես, վարդերես** (մակե-

rես և առերես բառերը գրական են, որովհետև մակ և առ բաղադրիչները միայն գրական բառեր են կազմում)։

Կոթ.— ածխակոթ, ականջակոթ, գերանդակոթ, խզակոթ, կարճակոթ, շերեփակոթ, վզակոթ, տանձակոթ։

Մազ.— թխամազ, կարճամազ, ճերմակամազ, սևամազ, փափկամազ։

Վիզ.— բարակավիզ, երկարավիզ, ծուռվիզ, կարճավիզ, հաստավիզ։

Ածանցներով կազմված՝

Աց (անց).— գիշերանց, նորմեկանց, շապկանց, ձեռաց։

Ի.— արծաթի, բրդի, երկաթի, կաշվի, փայտի։

Ինք.— հարկինք, փորահարինք։

Ոնք.— խնամոնք, մերոնք, ձերոնք, պապոնք։

Ովի.— ածովի, առնովի, գյուղովի, դնովի, թակովի, կծովի, շափովի, ջոկովի, ջրովի, սարքովի, քաշովի։

Ոց.— բխկոց, դմբդմբոց, դզզոց, զոզոց, թշշոց, լխկլխկոց, խշշոց, ծկլթոց, ծվծվոց, ճռռոց, մրթմրթոց, շրթշրթոց, շփշփոց, վզվզոց, վշվշոց, տզտզոց, փսփսոց, քլթքլթոց։

Ուկ.— ականջաբռնուկ, ամանկոտրուկ, աչքակապուկ, առաջկրտրուկ, ավելցուկ, ավելուկ, թափթփուկ, թելուկ, թեփուկ, թրթնջուկ, թևանցուկ, խաչմերուկ, խզուկ, խոզուկ, կաթնուկ, կաթուկ, կապուկ, կծղուկ, կուժկոտրուկ, հանելուկ, ձեռնաբռնուկ, մազմզուկ, մնացուկ, ճոռելուկ, շնթելուկ, շուտասելուկ, շռռուկ, պարկապզուկ, պզուկ, սուտմեռուկ, սևուկ, վազվզուկ, տալացուկ *(գրական կազմություններ են՝* դիպուկ, երեքնուկ, երիցուկ, հեղուկ, վերապրուկ)։

Ուք (ունք).— արարմունք, գզվոտուք, թոնրուք, ծեծկոտուք, կոչունք, հանկոտուք, մանրուք, ստիպմունք, սրտխառնուք, վարմունք, փսփսուք *(գրական կազմություններ են՝* ըզբաղմունք, վերաբերմունք)։

Այս օրինակներով էլ չեն սպառվում ժողովրդախոսակցական ոլորտի բաղադրություններ կազմելու միջոցները։

գ. Երրորդ խումբն են կազմում այն բաղադրիչները, որոնք կազմում են միաժամանակ և՛ գրական և՛ ժողովրդական բաղադրություններ։ Օրինակի համար բերում ենք գլուխ *բառով և* վոր (ավոր) *ածանցով կազմված բառեր։*

Գրական		Ժողովրդախոսակցական	
բարձրագլուխ	գոգավոր	ամսագլուխ	կոթավոր
դարագլուխ	դարավոր	դունագլուխ	հնձվոր
դրամագլուխ	դրվագավոր	կախագլուխ	ճիավոր
ենթագլուխ	եղջերավոր	հաստագլուխ	ծտքավոր
ինքնագլուխ	թաղանթավոր	ճորագլուխ	մազավոր
կորագլուխ	խորհրդավոր	մեծագլուխ	շատվոր
քաղաքագլուխ	կալանավոր	ոտուգլուխ	չքավոր
ականավոր	կամավոր	անցվոր	պոզավոր
ահավոր	հանգավոր	բախտավոր	ջրվոր
աղանդավոր	հավելավոր	գերանդավոր	տարվոր
աղեղնավոր	մենավոր	դարձվոր	տնվոր
աղետավոր	նշանավոր	կալվոր	փափախավոր
բանավոր	վտանգավոր	կարդացվոր	փոթավոր
բլուրավոր	տաղանդավոր	կենվոր	քաղվոր
գմբեթավոր		կթվոր	

Բերված ցանկից էլ երևում է, որ այս ածանցի **ավոր** *տարբերակը (ա հոդակապով), որով հարյուրավոր բառեր կան կազմված, առավել գրական բառեր է կազմում, այնինչ* **վոր** *տարբերակով՝ առավել ժողովրդախոսակցական բառեր։ Նկատենք նաև, որ հիշյալ կարգի բաղադրիչները գրական և ժողովրդական բառեր կազմում են ոչ հավասար արդյունավետությամբ։ Այսպես, օրինակ,* **ական** *և* **ություն** *ածանցներով գրական լեզվում ունենք հազարավոր բառեր, այն դեպքում երբ ժողովրդախոսակցականում այսպիսի ածանցներով անհամեմատ քիչ բառեր են ստեղծվել։ Այնուհետև, բառերն անանցանելի պատնեշներով չեն պարփակված հիշյալ ոլորտներում։ Ժողովրդախոսակցականից գրականին և հակառակ անցումները սովորական երևույթ են։ Այսպես, օրինակ, եթե նույն ածանցով կազմված* **եղջերավոր** *և* **պոզավոր** *բառերը մնացել են իրենց ոլորտներում, ապա* **թագավոր** *բառը սկզբնապես գրական միջավայրի բառ է եղել և հետագայում անցել է ժողովրդախոսակցականին, այնինչ* **ճիավոր** *և* **կթվոր** *բառերն սկզբնապես ժողովրդական միջավայրում են գործածվել, ապա անցել են գրականին։*

Գրական բառերը չեզոք են գրական խոսքում, ժողովրդականը՝ ժողովրդախոսակցական միջավայրում, իսկ բարբառային բառերը՝ բարբառներում։ Երբ մի ոլորտի բառը գործածվում է մի այլ ոլորտում, իր հետ բերում է միջավայրի ոճական երանգը, այսինքն՝ ժողովրդախոսակցականը գրականում հնչում է հասարակ, երբեմն մտերմիկ, բարբառայինը գրականի մեջ հնչում

է ցածր, հաճախ՝ գռեհիկ, և ընդհակառակն, գրականը բարբառում կարող է հնչել շատ բարձր, հաճախ դառնալ ծիծաղելի՝ միջավայրին ոչ հարիր լինելու պատճառով։

գ. Բառերի բարբառային տարբերակներից պետք է տարբերել բուն բարբառային բառերը, որոնք կամ համարժեքները չունեն մյուս ոլորտներում և կամ այնպիսի բառեր են, որոնց իմաստներն այլ բառերով են արտահայտվում գրականում։ Բարբառային բառերի մեջ մի խումբ են կազմում բարբառներում նոր իմաստներ ստացած բառերը։ Բերենք բարբառային բառերի մի քանի օրինակներ։ Գորիսի բարբառում գործածական են ջվար (մարդ), ջնել (պատահել), կոֆ (հավաք), ցէտ (արտերի արանքում չմշակված տարածություն), փար (ընձյուղի փափուկ միջուկը, որ հեշտությամբ միջից հանվում է, հիլ (թելից կամ փալասից պատրաստված խաղագնդակ), ազկինֆ (դարբնի երկար ունելի), նոխսանդ (կաղ), ունգատին (բարեբախտաբար), կոմզան (սենդրիկ), բլբուլ (ռանդայի հանած բարակ տաշեղ), Ղափանի բարբառում՝ ոյուզն (սոված), հռածած (սպաս), Սիսիանի բարբառում՝ վարբազագի (դաշտում ընկած-չորացած թրիք, որ հավաքում գործածում են իբրև վառելիք), հիլաթ (սպաս), Կարմիրի բարբառում՝ հանուր (շունչ), Ախալքալաքի բարբառում՝ պրոկոշ (շուրթը կախ), Լոռու բարբառում՝ բալբա (փիփերտ) և այլն։ Հատուկ իմաստավորում ստացած բառերից են՝ պարկ, որ Գորիսի բարբառում նշանակում է միայն ոչխարի կամ այծի մորթուց պատրաստած ամանը, (ի տարբերություն մեշոկ փոխառյալ բառի, որ գործածվում է կտորեղենից պատրաստված տոպրակի համար), թոփալ՝ ցածրահասակ ճյուղաշատ ծառ կամ թուփ, բայց ոչ կաղ, ախոռ՝ միայն կենդանիներին կերակրելու մսուրը և այլն։

2. Ըստ գործառության ոլորտների բառերի շերտատումը կատարվում է համապատասխան այն բանի, թե գրական լեզվում դրանք ինչ գործառություն ունեն, ինչպիսի խոսքում են գործածվում։ Գրական լեզվի գործառական ոլորտներն են կազմում գեղարվեստական գրականությունը, գիտությունը և գիտատեխնիկական գործավարությունը, հրապարակախոսությունը և հասարակական-քաղաքական գործավարությունը, գործարարական և վարչա-գործարարական գործավարությունը, առօրյա-կենցաղային գործավարությունը, համապատասխան որոնց էլ ոճագիտության համակարգում գոյություն ունեն գեղարվեստական գրակա-

նության լեզու կամ ոճ, գիտության լեզու կամ ոճ հասկացությունները և այլն։ Գրական լեզվի բառապաշարի մեծ մասը ընդհանուր է գործառական բոլոր ոճերի համար։ Այսպիսի բառեր են ընդհանրապես դերանունները, թվականները, գոյականների, ածականների և բայերի ճնշող մասը, շաղկապները, կապերը, վերաբերականները։ Զայնարկությունները տեղ չունեն գիտական խոսքում (եթե դրանց քննությունը չի վերաբերվում), ինչպես և տեխնիկական գործավարության մեջ, այնինչ մեծ տեղ ունեն գեղարվեստական խոսքում և առօրյա-կենցաղային գործավարության մեջ։ Ընդհանուր կամ համագործածական բառերին հակադրվում են այն բառերը, որոնք գործածվում են հիշյալ գործառական ոլորտներից յուրաքանչյուրում միայն։

ա. Գեղարվեստական գրականության մեջ ընդհանուր կամ համագործածական բառերի շերտին հակադրվում են երկու ենթաշերտի բառեր՝ գրքային և բանաստեղծական։ Սրանք այնպիսի բառեր են, որոնք չեն գործածվում ո՛չ առտնին կենցաղավարության և ո՛չ էլ գիտական ու պաշտոնական գործառության մեջ։ Գրքային բառերը մեծ մասամբ գրաբարից են գալիս։ Այսպիսի բառեր են, օրինակ՝ անյակ, (ձախ), աղերս, այր, արյունռուշտ, բազմել, գահավիժել, գանգիծել, գարշապար, զի, թույր, կրռվան, հանապազ, հեստ, սադրել, տիվ և այլն։ Գրքային բառերը խոսքին տալիս են վերամբարձություն ու հանդիսավորություն, այդ պատճառով էլ չեն պատշաճում գործածվելու հասարակ, ոչ հանդիսավոր խոսքային իրավիճակներում։ Խոսող ու գրող անհատը ինչպես որ հագնում է իր տարիքին, հասարակական դիրքին ու հանգամանքներին պատշաճ ձևով, նույնպես և իր խոսքում չի գործածում այնպիսի բառեր, որոնք իր տարիքին, դիրքին և խոսքի բովանդակությանն ու իրադրությանն անհարիր են։ Նույն ձևով է վարվում նաև հասարակությունը. իր համար վերամբարձ բառերը նա մերժում է և դրանց փոխարեն գործածում կամ հայերեն ժողովրդական, իսկ եթե հայերեն չկան, ապա օտար բառեր, միայն թե դրանք հասարակ հնչեն։ Այսպես, օրինակ, քառուղի բառը ժողովուրդը չի գործածում, թեև շատ գեղեցիկ բառ է, այնինչ խաչմերուկ հասարակ բառն ընդհանրացում գտավ գրական լեզվում։ Վերամբարձ լինելու պատճառով փողպատ բառը ժողովուրդը չի գործածում, և դրա փոխարեն կաշնյա կամ շարֆ օտար բառերը սովորական են դարձել։ Նույն պատճառով չեն

գործածվում այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, ճարմանդ, դույլ, անդրավարտիք, վերնաշապիկ, բանկոն *և այլն։*

Բանաստեղծական բառերը *ևս մյուս գործառական ոլորտներում չեն գործածվում։ Այսպիսի բառեր են, օրինակ,* արևահամ, բազմաբուրյան, գարնանաբույր, գեղածիծաղ, դառնաթախիծ, երկնառաք, թեթևասահ, լուսակերտ, ծիծաղախիտ, ծովածավալ, հեզաճկուն, ձյունաճերմակ, ողբանվագ, սիրակեզ, վշտամորմոք, տերևախիտ, փրփրադեզ *և այլն։ Բանաստեղծական բառերը, որ մեծ մասամբ ածականներ են, նաև մակբայներ, կարևոր տեղ ունեն խոսքի բանաստեղծականության և պատկերավորության համար։*

բ. Գիտական խոսքում, հրապարակախոսության մեջ, գիտատեխնիկական, հասարակական-քաղաքական, գործարարական և վարչագործարարական գործավարություններում համագործածական բառերին հակադրվում են տերմիններ, *որոնք մեր կյանքի ամենաբազմազան բնագավառների մասնագիտացված, հատուկ իմաստավորում ու կշիռ ստացած սահմանելի հասկացությունների անվանումներ են՝ մեծ մասով գոյականներ, բայց և ածականներ ու բայեր։ Բերենք հաղարավոր բառերից միայն մի քանի օրինակներ մի քանի մասնագիտություններից։*

Լեզվաբանական՝ ամանակ, առնմանում, բաղաձայն, բայ, բառույթ, գոյական, դերանուն, դերբայ, ենթակա, ենթամընա, թեքույթ, իմաստազատիչ, իմաստակազմիչ, խոնարհում, կապ, կրավորական, հնչույթ, հոլով, ձևույթ, նշույթավոր, շարահարություն, շարույթ, ոճ, պարբերույթ, ստորոգում, տրական, ուղղական, փոխակերպություն, փոփոխակ։

Գրականագիտական՝ արձակ, դյուցազներգություն, դրամա, կատակերգություն, կերպար, կլասիցիզմ, կոմիզմ, կուլմինացիա, հայրեն, հանգ, հանգույց, հեղինակ, հերոս, հեքիաթ, նախերգանք, ռեալիզմ, ռոմանտիզմ, սյուժե, ողբերգություն, ոտանավոր, չափածո, վերջերգ, վիպակ, վիպերգ, տաղ, քերթված, քնարական։

Փիլիսոփայական՝ ագնոստիցիզմ, ազատություն, աթեիզմ, անհրաժեշտություն, աշխարհայացք, բազիս, դասակարգ, դեիզմ, դետերմինիզմ, դոգմատիզմ, եզառած, երկսայրաբանություն, երևույթ, ժամանակ, իդեալիզմ, իր, ինտուիտիվիզմ, հասարակարգ, հավաքաբանություն, հա-

նաչողություն, մատերիա, մատերիալիզմ, մարքսիզմ, մոնիզմ, մտահանգում, նոմինալիզմ, որակ, պատահականություն, պետություն, պոզիտիվիզմ, պրագմատիզմ, սենսուալիզմ, վերնաշենք, վոլյունտարիզմ, տարածություն, տնտեսակարգ, քանակ, ֆիդեիզմ:

Մաթեմատիկական և երկրաչափական՝ աղեղ, անկյունագիծ, աստիճան, արմատ, արտադրյալ, ախսիոմա, բազմապատկելի, բինար, բինոմ, բուրգ, գումար, դետերմինանտ, դիֆերենցիալ, եռանկյունի, զուգահեռ, զուգահեռագիծ, թեորեմ, իռացիոնալ, լոգարիթմ, կոսինուս, հավասարում, շրջան, պարագիծ, պրոեկցիա, սինուս, վեկտոր, տանգենս, տրամագիծ, քանորդ, քառակուսի, ֆունկցիա:

Ֆիզիկայի՝ աերոդինամիկա, ամպեր, անկշռելիություն, արագացուցիչ, բևեռ, գերհաղորդիչ, գերձայն, դիէլեկտրիկ, էներգիա, էլեկտրոն, իներցիա, իմպուլս, իոն, լիցք, լիցքաթափում, լուսաբեկություն, խտություն, ծանրաչափ, կալորիա, կիլոգրամոմետր, կիլոկալորիա, կիլովատ, կիսահաղորդիչ, հականյութ, ձիաուժ, հառագայթում, մագնիսականություն, մասսա, մոլեկուլ, նեյտրոն, պրիզմա, պրոտոն, ջերմափոխականություն, ռեակտիվ, ռեակցիա, վոլտ, տրանսֆորմատոր, ուժգիծ, քվանտ, օպտիկա:

Իրավաբանական՝ ամնիստիա, անբաստանյալ, առերեսում, արբիտր, արբիտրաժ, արդարադատություն, արդարացնել, բացարկ, բեկանում, բռնագանձում, դատախազ, դատապարտյալ, դատարան, դատարանակազմություն, իրավախախտում, հայց, հայցադիմում, հանցագործություն, հանցանշան, հավելագրում, հոդված, մեղադրյալ, մեղադրող, շարաշահում, պաշտպան, վճիռ, վճռաբեկ, փաստաբան, օրենք:

Բժշկագիտական՝ ալերգիա, ախտանշան, ախտորոշում, ակնաբույժ, ամբուլատոր, ամպուլա, այտուց, այրվածքաբանություն, անալգին, անեմիա, անոթ, անոթախցանում, ասպիրին, բինտ, գեղձ, գինեկոլոգիա, դեղաբանություն, դեղատոմս, ենթաստամոքսային, էրիտրոցիտ, թերապևտ, թոքախտ, ինֆարկտ, լեյկոզ, հառագայթում, մանկաբարձություն, մաշկագետ, ներարկում, շաքարախտ, պատվաստում, պենիցիլին, ստամոքս, վիրաբուժարան,

վիրակապ, վիրահատություն, օրգան, օրգանիզմ, ֆիզիոթերապիա:

Հրապարակախոսության և հասարակական-քաղաքական գործունեության՝ ակտիվ, անտագոնիզմ, ավանգարդ, ապոլիտիկ, առաջադիմական, առաջադրանք, բյուջե, բոյկոտ, բռնապետություն, բուրժուա, գաղափարախոսություն, գերատեսչական, գերիշխանություն, դեմագոգիա, դեմոկրատիա, դեպարտամենտ, դեպուտատ, դեսպոտիզմ, դիկտատուրա, դիվերսիա, դոկտրինա, էքսպանսիա, ընտրություն, իմպերիալիզմ, ինտերնացիոնալ, ինտերվենցիա, լեգալ, լիբերալ, ծրագիր, կապիտուլյացիա, կանխագծում, կոմիտե, համագումար, հեգեմոն, մանիֆեստ, մասսա, միջոցառում, նացիոնալիզմ, նացիզմ, շովինիզմ, պառլամենտ, պացիֆիզմ, պլան, պլատֆորմ, պլենում, պրեզիդենտ, պրեմիեր, պրոլետարիատ, ռեակցիա, ռևանշիզմ, սահմանադրական, սենատ, սկզբունքայնություն, սոցիալիզմ, սոցմրցություն, տեռոր, քաղաքականություն, քարտուղար, օկուպանտ:

Թողնենք մյուս ոլորտները (զանազան գիտություններ, տեխնիկա, արվեստներ, արհեստներ և այլն), որոնցից յուրաքանչյուրն ունի իր տերմինաբանությունը: Չենք խոսում նաև այն մասին, որ միևնույն բառը տարբեր ոլորտներում կարող է ստանալ տարբեր նշանակություններ և դառնալ յուրաքանչյուրում առանձին տերմին (օրինակ՝ հոդված *բառն իրավագիտության, կենսաբանության մեջ և մամուլում,* արմատ *բառը մաթեմատիկայում և քերականության մեջ,* թեմա *բառը քերականության և գրականագիտության մեջ և այլն), չենք խոսում և այն մասին, որ համագործածական բառերի մի մասը միաժամանակ այս կամ այն ոլորտում կարող է տերմինի նշանակություն ունենալ: Ասենք միայն, որ տերմինները ոճական երանգավորում չունեն, եթե իրենց ոլորտում են գործածվում: Այլ ոլորտներում գործածվելիս դրանք ոճականորեն երանգավորվում են: Այսպես, օրինակ,* քառուղի *բառը ճարտարապետության ոլորտում տերմին է և ոճական երանգավորում չունի, բայց* պատմության քառուղիներ *կապակցության մեջ արտահայտությանը տալիս է պատկերավորություն: Զուգահեռական բառը, որ միաժամանակ և՛ աշխարհագրության, և՛ երկրաչափության մեջ տերմին է և ոճական լիցքավորումից զուրկ, գրականագիտության բնագավառում ձեռք է բե-*

ում ոճական լիցքավորում՝ արտահայտությանը տալով պատկերավորություն, թարմություն ու հետաքրքրականություն (գրականագետ Ս. Աղաբաբյանն իր մի աշխատությունը կոչել է «20-րդ դարի հայ պոեզիայի զուգահեռականներում»)։ Անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ տերմինները ոճական առումով խոսքի մեջ երկու շատ կարևոր գործառություն ունեն. նախ՝ դրանք խոսքի ճշտության միջոց են, մի բան, որ գիտական խոսքի ամենաանհրաժեշտ և կարևոր պայմաններից է, և երկրորդ, լինելով հիմնականում ծավալուն գաղափարի սահմանման անվանում, մի բառով արտահայտում են այդ գաղափարը և նպաստում խոսքի համառոտությանը, որը ևս գիտական խոսքի անհրաժեշտ և կարևոր պայմաններից է։

Գործառական ոլորտների մասին մեր խոսքն ավարտելով՝ անհրաժեշտ ենք գտնում անել մի դիտողություն։ Մեր լեզվաբանական գրականության մեջ եկեղեցուն ու կրոնին վերաբերող բառերը սովորաբար դասվում են հնացած կամ մեռած բառերի շարքը։ Մեր համոզմամբ այնպիսի բառեր, ինչպիսիք են **Աստվածաշունչ, ավետարանիչ, արքեպիսկոպոս, բուրվառ, եպիսկոպոս,** Ջատիկ, **ժամերգություն, լուսարար, խաչնամբույր, կաթողիկոս,** կնունք, կոնդակ, **Հրագալույց, մյուռոն, ճշխար, շուրջառ, Ջրօրհնեք,** սաղմոս, սարկավագ, վարդապետ, **Վեհարան,** վեղար, տիրացու, փիլոն, քահանա, *ոչ թե մեռած կամ հնացած բառեր են, այլ սահմանափակ ոլորտում կենդանի, գործածվող, հայ եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող բառեր, այս միջավայրի համար անհրաժեշտ տերմիններ։*

գ. Առօրյա-կենցաղային գործավարության մեջ համագործածական բառերին հակադրվում են երեք ենթաշերտի բառեր՝ **մանկական, գռեհիկ** *և* **ծածկալեզվային** *բառերը։*

Մանկական բառեր, *որ լավ չեն ուսումնասիրված, աննշան տեղ ունեն խոսքում։ Մանկական բառերից են՝* տոտոն *(օրորոց),* լոլո *(միրգ),* փափա *(կերակուր),* բու *կամ* բմպու *(ջուր),* փոփ *(հեշտ կուլ տալու համար մանրած, փափկեցրած սնունդ),* կակա *(քաղցրավենիք),* տոտ *կամ* տոտիկ *(ոտք),* ծիկ *(ուշադրություն հրավիրելու սիրալիր արտահայտություն) և այլն։ Սրանց դերը չնչին է նաև խոսքի ոճավորման մեջ։*

Գռեհիկ բառեր *ամոթ հարուցող կամ պախարակելի հասկացությունների անվանումներ են և անկիրթ, անպարկեշտ ու գռեհիկ մարդկանց կողմից գործածվում են հայհոյելու, մարդկանց*

վիրավորելու համար։ Կիրթ մարդիկ անթույլատրելի և անպատշաճ են համարում գռեհկաբանությունների (գռեհիկ բառեր, դարձվածներ, ասույթներ) գործածությունը։ Քանի որ ցածր միջավայրում սովորույթով զգալի թվով գռեհկաբանություններ են գործածվում, այստեղից էլ ոչ այնքան կոպիտները կարող են մուտք գործել և գրական լեզու (ինչպես՝ կայծոռիկ, կոթել, փրնթի, փնովել, ֆծնել և այլն), մանավանդ եթե դրանց իմաստները մթագնվել են։ Բառերի մի մասն էլ թեև որոշ մասնագիտական ոլորտներում (օրինակ՝ կենսաբանություն, բժշկություն) սովորական անվանումներ են, սակայն խոսքի այլ ոլորտներում գործածվելիս դառնում են անպատշաճ ու գռեհիկ։

Ծածկալեզվյան բառերը սովորական բառեր չեն։ Դրանք հիմնականում համագործածական բառեր են, որ առնված են միանգամայն այլ նշանակություններով (օրինակ՝ գողերի լեզվում պաղեցնել նշանակում է սպանել, մանել՝ հասկանալ, ծիտ՝ 20 կոպեկ) և կամ իմաստը պահելով՝ ենթարկվում են փոփոխությունների։ Օրինակ՝ «Թարսերենում» միավանկ բառերը լիովին են շրջվում (հաց—ցահ, շատ—տաշ, մեծ—ծեմ), բազմավանկների՝ միայն առաջին վանկերը (հասնել—սահնել, բախտավոր—խաբտավոր), հծծերենում բառից կամ վանկից առաջ արտասանվում է զ (ինչ—զինչ, ասել—զասել, տարի—զտազրի, ամոթ—զազմոթ), իսկ մնջերենում՝ բառի մեջ եղած յուրաքանչյուր ձայնավորից առաջ հավելվում է գ, ճ, f կամ ֆ բաղաձայններից որևէ մեկը (օրինակ՝ ֆ-ով՝ մեծ տուն—մֆեծ տֆուն, գ-ով՝ ինչ ես ասում—գինչ գես գասգում)։

3. Ըստ հարազատության մեր բառերը երկու խմբի են բաժանվում՝ հայերեն և օտար։ Հայերեն բառերը կարևոր տեղ և կշիռ ունեն խոսքի մեջ, սակայն ծագումնաբանորեն խոսքին ոճական երանգ կարող են տալ միայն օտար բառերը։ Ինչպես ասվել է, օտար բառերը բերում են նորության թարմություն, տարաշխարհիկության պատրանք և սրանով խոսքը դարձնում հետաքրքրական։ Օտար բառերի այս հատկանիշի մասին առաջին անգամ խոսել է Արիստոտելը, որը գտնում էր, որ տեղին ու պատշաճ գործածված օտար բառը խոսքի համար կարող է դառնալ զարդ։ Ուշ միջնադարի մեծ մտածող Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց» աշխատության մեջ գրում է, որ այնպես ինչպես նկարչության մեջ գույնը պայծառանում է մի այլ գույնով, այնպես էլ մի լեզու պայծառանում է մի այլ լեզվի միջոցով։

Նրանք, ովքեր ընդհանրապես մերժում են օտար բառերի գործածությունը, ճիշտ չեն վարվում հենց ոճական այս հանգամանքը նկատի ունենալու տեսակետից։

Իհարկե, կարելի է և ոչ մի լեզվից փոխառություն էլ չկատարել։ Իսլանդացիք, օրինակ, ոչ մի լեզվից փոխառություն չեն կատարում (ամեն նոր գաղափարի համար բառերի կցկցումով ստեղծում են նոր բառեր, ինչպես՝ սեխ գաղափարի համար ըստեղծել են տրոլլեպլի բառը, որ նշանակում է հսկա խնձոր, ֆուտբոլի համար՝ կնատտսպուրնա բառը, որ նշանակում է գունդը հրել և այլն), սակայն սա մեզ թվում է ծայրահեղություն, մանավանդ եթե նկատի ունենանք, որ օտարաբանությունը միայն բառերի փոխառությամբ չի սահմանափակվում։ Օտար քերականական կաղապարները, բառերի օտարաձև կապակցությունները լայնացնում են լեզվի բառերի ու արտահայտման միջոցների տարողունակությունները, արտահայտման լեզվամտածական հնարավորությունները, լեզուն հարստացնում նոր արտահայտաձևերով։ Ցույց տալու համար, որ փոխառյալ նույնիսկ մեկ բառը կարող է գաղափարի արտահայտման հատուկ կաղապարի պատճառ դառնալ, բերենք միայն մեկ օրինակ։ Արևելահայերենը փոխառել է տոկոս բառը, այնինչ արևմտահայերենն այդ բառը չունի։ Այս պատճառով էլ արևելահայերենում և արևմտահայերենում ունենք նույն մտքի արտահայտման հետևյալ երկու՝ միմյանցից տարբեր կաղապարները.

Արժե նշել, որ դասընթացքներու հետևողներեն 30 առ հարյուրը տնտեսագետներ և տեխնիկներ են, 28 առ հարյուրը՝ ուսուցչական քատրեր, ուսանողներ և նույնիսկ աշակերտներ։ (Մամուլ)	Արժե նշել, որ դասընթացներ հաճախողների 30 տոկոսը տնտեսագետներ, ինժեներներ և տեխնիկներ են, 28 տոկոսը՝ ուսուցչական կադրեր, ուսանողներ և նույնիսկ աշակերտներ։

Այս առումով ահա օտար բառի տեղին ու նպատակահարմար, ժամանակին ու պատշաճ կատարված գործածությունը սովորական լեզվագործածության առօրեական պահանջը կատարելուց բացի կարող է ծառայել նաև գեղագիտական նպատակների։

4. Ըստ գործածության հաճախականության *բառերը կարող ենք բաժանել երեք շերտի՝ հաճախական, նվազ հաճախական և ոչ հաճախական։ Բառերի հաճախականության մասին խոսք եղել է վերը։ Այստեղ ավելացնենք հետևյալը։ Պետք է տարբերենք բառերի հաճախականությունը լեզվում և խոսքում։ Այդ տարբե-*

բությունն զգալի է հատկապես գեղարվեստական խոսքում, որի մեջ ոչ միայն թեման, այլև հեղինակի անհատականությունը վճռական դեր ունի։ Այսպես, օրինակ, ըստ Բ. Ղազարյանի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանի» (1982 թ.) հայերենում իր հաճախականությամբ առաջին տեղն է բռնում և-ը։ Այդպես է նաև Ա. Իսահակյանի «Աբու Լալա-Մահարի» պոեմում, որտեղ 3246 բառագործածությունից 177-ը և է։ Սակայն այդպես չէ Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում, որտեղ ամենահաճախական բառը ու-ն է (117 գործածություն)։ Հետաքրքրության համար ստորև տալիս ենք հայերենի հաճախականության հիշյալ բառարանի, Ա. Իսահակյանի և Հ. Թումանյանի հիշյալ պոեմների ամենահաճախական առաջին 10 բառերի համեմատության տախտակը։

Ժամ. հ. լ. հաճախ. բառ.	«Աբու Լալա-Մահարի»	«Անուշ»
և	և—177	ու—117
նա	ես—85	ես—78
ու	դու—83	դու—77
որ	նա—44	մի—59
ես	մարդ—43	գալ—49
դու	քարավան—41	նա—47
մի	որ—35	սար—46
այդ	սեր—17	աղջիկ—40
լինել	աշխարհ—16	էն—37
մեջ	արև—16	յար—36

Այս փոքրիկ համեմատությունը ցույց է տալիս, որ նախ՝ երկու գեղարվեստական ստեղծագործություններում բառերը միանման հաճախականություն չունեն (քառավան բառը հայերենի ամենաքիչ գործածական բառերից է, բայց «Աբու Մահարիում» ամենահաճախական բառերից մեկն է), և այնուհետև, դրանք երկուսն էլ տարբեր են բառարանի (այսինքն՝ լեզվի) հաճախականության տվյալներից։ Բառի հաճախականությունը խոսքում պայմանավորված է մի շարք հանգամանքներով (հեղինակի նախասիրություն ու դիտավորություն, թեմա, բովանդակություն, գործառության ոլորտ և այլն), որոնք և պայման են խոսքի ոճի համար։ Հետաքրքրության համար բերենք միայն մի փաստ։ Հ. Թումանյանի «Անուշի» առաջին տարբերակում եղել է 110 և, 35

ու: Հետագա մշակման ժամանակ 110 և-ից նա թողել է 15-ը, այնինչ 35 ու-ի փոխարեն այժմ պոեմն ունի 117 ու:

Իբրև ընդհանուր դիտողություն ասենք, որ ինչքան լեզվում հաճախական են բառերը, այնքան առավել քիչ ոճական ծանրաբեռնվածություն ունեն, և ընդհակառակն, քիչ հաճախականություն ունեցող բառերն ընդհանրապես ոճականորեն ավելի են լիցքավորված: Սակայն այս կանոնը բացարձակ չէ. այն պայմանական է, որովհետև դրան խանգարում են վերոհիշյալ արտալեզվական գործոնները: Բացի սրանից, բառի նույնաբանական կրկնությունը բացասական նշանակություն է ունենում խոսքի համար և խոսքի աղքատության կամ անմշակվածության արտահայտություններից մեկն է:

5. Ըստ իմաստների քանակի բառերը բաժանվում են մենիմաստների և բազմիմաստների: Միայն մեկ իմաստ ունեցող բառերը մենիմաստ բառեր են: Մենիմաստ են, օրինակ, թվականները, դերանունները, շաղկապները, ընդհանրապես տերմինները, բայց և այլ բազմաթիվ բառեր: Բազմիմաստ են մեկից ավելի իմաստներ արտահայտող բառերը: Օրինակ՝

Հասնել.— հասունանալ, չափահաս դառնալ, ժամանել, ձգվել՝ տարածվել մինչև մի տեղ, բաժին ընկնել, օգնել:

Տուն.— բնակության շենք, ընտանիք, բանաստեղծական տողերի ամբողջություն, խաղաքարը դնելու համար պատրաստված տեղ:

Բազմիմաստությամբ աչքի են ընկնում նախ բայերը, ապա ածականները ու գոյականները: Արդի հայերենում 40 և ավելի իմաստ ունեցող բառերը բայեր են: Ստորև տալիս ենք 20 և ավելի իմաստներ ունեցող բառերի ցանկը՝ ըստ իմաստների նվազող հաջորդականության.

Բայեր		Այլ խոսքի մասեր	
տալ—62 իմաստ	ասել—32	թև—37 իմաստ	ցաքր—23
քաշել—55	անցնել—31	թուլլ—33	խոր—22
դնել—45	մտնել—29	օղակ—29	գլուխ—22
տանել—44	ճգել—28	բարձր—26	ձև—22
հանել—40	գցել—27	երես—25	պատկեր—22
դնել—40	բարձրանալ—26	վատ—24	ոտք—20
կտրել—35	վառել—25	սև—23	
վերցնել—34	լցնել—24		
բռնել—34	իմանալ—20		
խոսել—33	մնալ—20		

Ինչպես ասվել է, բառերի բազմիմաստությունը միաժամանակ վկայություն է նրանց հնության։ Նկատված է, որ բազմիմաստ են նյութական իմաստ արտահայտող արմատական բառերը, և ընդհակառակն, մենիմաստ են երկու և ավելի արմատներից բաղադրված բառերը։

Բազմիմաստ բառերի ոճական դերն այն է, որ դրանք միջոց են դառնում ճարտասանական որոշ ձևերի (ֆիգուր) համար։ Այսպես, օրինակ, բառի բազմիմաստության վրա է ստեղծվում պիտակություն ճարտասանական ձևը։ Կվինտիլիանոսը բերում է պիտակության այսպիսի օրինակ։ Պրոկլեսը դատարանում բողոքում էր որդուց, որ նա սպասում է իր շուտափույթ մահվանը, որպեսզի տիրանա հոր հարստությանը։ Որդին նրան ընդհատելով ասում է, թե ինքը հորից այդ չի սպասում (այսինքն՝ չի սպասում, որ շուտ կմեռնի)։ — Սպասի՛ր,— բարկացած ասում է հայրը (այսինքն՝ թույլ տուր խոսել)։ Այստեղ սպասել բայը գործածված է երեք անգամ և երեք անգամ էլ տարբեր իմաստներով։

Բառերի բազմիմաստությամբ ստեղծվում են նաև բառախաղեր, իմաստաբառեր, երկիմաստություններ, որոնք զարմանք և հետաքրքրություն են առաջ բերում ունկնդրի և ընթերցողի մեջ։ Ահա մեկ օրինակ։ Ալելուիա եբրայերեն բառը, որ կազմված է 3 բառ-բաղադրիչներից, կարող է 4 տեսակ մեկնաբանվել.

ալե	լու	իա
հայր	որդի	հոգի
օգնիր	ինձ	տեր
փրկիր	ինձ	աստված
մեկնիչներ	գովեցեք	տիրոջը

Բառերի բազմիմաստության են դիմում հատկապես արկածային ժանրի գրողները (այսպիսի ստեղծագործություններ ունեն Ժյուլ Վեռնը, Արթուր կոնան Դոյլը և ուրիշներ)։

6. Ըստ իմաստային առնչությունների բառերը լինում են նույնանիշ, համանիշ[21], հականիշ, նույնանուն, հարանուն, տար-

[21] Նույնանիշ և համանիշ բառերը հայ լեզվաբանության մեջ մտցվում են մի խմբի՝ հոմանիշների մեջ։ Այս մասին տե՛ս Ա. Սուքիասյանի «Հոմանիշները ժամանակակից հայերենում» (1971 թ.) և «Ժամանակակից հայոց լե-

անուն, տեսակասեռային մերձանիշներ, հարաբերակից բառեր։

ա. Նույնանիշ բառերն ունեն նույն նշանակությունը։ Նույնանիշ են, օրինակ, հարևան և դրացի, բույր և հոտ, անդրավարտիք, շալվար և տաբատ, պոմիդոր և լոլիկ, բադրիջան և սմբուկ և այլն։ Ընդհանրապես լեզուն խուսափում է նույնանիշներից, որովհետև նույնանշությունը ավելորդ ծանրաբեռնվածություն է նրա համար, և եթե դրանք մնում են լեզվում, ապա այն պատճառով, որ ունենում են ոճական զանազան երանգավորումներ կամ պատկանում են գործառական տարբեր ոլորտների։ Նույնանշությունը արդյունք է բառապաշարի հարստացման տարբեր (ներքին և արտաքին) ուղիների գոյության։ Այսպես, դրացի բառը հայերեն կազմություն է, այնինչ հարևան բառը փոխառություն է պարսկերենից։ Սրանք գոյատևում են այն պատճառով, որ դրացի արևմտահայ նաև արևելահայ գրական ոլորտին է պատկանում, իսկ հարևան-ը հասարակ է, ժողովրդախոսակցական։ Անդրավարտիք բառը հայերեն կազմություն է, իսկ շալվար-ը՝ փոխառություն ռուսերենից։ Առաջինը ճանաչվում է իբրև գրական, նույնիսկ գրքային, այնինչ շալվար-ը հասարակ է՝ ժողովրդախոսակցական։ Պարանոց և այտ բարձր ոլորտի բառեր են, այնինչ վիզ և թուշ ժողովրդական են, թեև բոլորն էլ հայերեն բառեր են։ Համանման նույնանիշների զույգեր են (գրական-ժողովրդական-բարբառային) գավազան և մահակ, խնոցի և ձձում, ճակնդեղ, բազուկ և տակ, հավկիթ և ձու, հոլանի և մերկ, նիգ և լինգ, ուսելի և մաշա և այլն։ Երբեմն նույնանիշի գործածականությունը և մնայունությունը որոշվում է բառի կազմվածքի առանձնահատկությամբ։ Օրինակ՝ սանձ բառը ունի երասան, պախուրց և լկամ նույնանիշները։ Գրական լեզվում մնացել է սանձ բառը. այդ այն պատճառով, որ հասարակ բառ է և միավանկ, ուստի և հարմար բառակազմության համար, այնինչ երասան և պախուրց բառերը բարձր ոլորտի բառեր են և երկվանկ, հետևաբար և բառակազմության համար ոչ հարմար։ Լկամ բառը ևս երկվանկ է և նեղ ոլորտի բառ։ Պատահական չէ, որ սանձ բառով ունենք շուրջ երկու տասնյակ բաղադրություններ (անսանձ, սանձարձակ, սանձակոտոր, սանձազերծել և այլն), մինչդեռ մյուս բա-

---

զու» (1982 թ., էջ 151—173) և Է. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984 թ., էջ 67—71) աշխատությունները։

ներով միայն մի քանի բառ են կազմված (երասանակալ, երասանակել, երասանակազանց, պախուրցազերծ, պախուրցաքափ, լկամել), և բոլորն էլ անգործածական են։ Չի բառը գործածությունից վաղուց է դուրս եկել, սակայն բանաստեղծական խոսքում երբեմն գործածվում է իր կարճության պատճառով, քանի որ նրա նույնանիշները՝ որովհետև, քանի որ, քանզի երկու կամ երեք վանկով երկար են։ Վերջին տասնամյակներում արդի հայերենում լայն տարածում գտան մի շարք օտար բառեր, ինչպես, օրինակ, դիկտոր, մարշրուտ, պլենար և այլն, որոնց զուգահեռ սկսեցին գործածվել հայերեն նույնանիշներ (հաղորդավար, երթուղի, լիագումար), որոնք անմիջապես տարածում գտան նախ իրենց հասկանալիության և ապա հասարակ լինելու պատճառով, այնինչ դիկտոր բառի խոսնակ և ռեկլամ բառի գովազդ ձևերը տարածում չգտան վերը նշված պայմաններին չբավարարելու պատճառով։ Այս տեսակետից լավ օրինակ է ռադիո բառը։ Արևմտահայ գրական լեզվում ստեղծված է ձայնասփյուռ գեղեցիկ բառը, սակայն այն արևելահայերենը չընդունեց, որովհետև երկարության պատճառով նոր կազմությունների համար անհարմար է։ Մինչդեռ ռադիո բառը հեշտությամբ նոր բաղադրություններ է կազմում (ինչպես՝ ռադիոակնարկ, ռադիոունկնդիր, ռադիոհաղորդում, ռադիոլսող, ռադիոընդունիչ, ռադիոբեմադրություն և այլն)։

Մեր ասածից արդեն պարզ է, որ նույնանիշ լինելով հանդերձ բառերը հավասար արժեք չունեն ո՛չ լեզվում և ո՛չ էլ խոսքում։ Նույնանիշները գիտական խոսքում, հատկապես բառարանագրության մեջ, շատ կարևոր դեր ունեն իրրև միջոց բառի իմաստի բացատրության համար, իսկ խոսքում ծառայում են խոսքի համապատասխանությանը։ Դրանց գործածությամբ ստեղծում ենք միջավայրին համապատասխան հոգեբանություն, խոսքը դարձնում համապատասխան թե՛ իրերին ու երևույթներին և թե՛ խոսողի կամ գրողի հոգեվիճակին ու իրադրությանը։ Այսպես, օրինակ, խոսքի հասարակ միջավայրում ոչ ոք վիզ ասելու փոխարեն չի գործածի պարանոց, բաց, մերկ ասելու փոխարեն՝ հոլանի, կրունկ-ի փոխարեն՝ գարշապար և այլն։

Նույնանիշ կարող են լինել ոչ միայն բառերը, այլև լեզվական այլ միավորներ լեզվի միևնույն և տարբեր մակարդակներում։ Այսպես, օրինակ, գեր և շաղ, դասատու և ուսուցիչ, լայնք և լայնություն զույգերը նույնանիշներ են բառային մա-

կարդակում, լեռնագագաթ և լեռան գագաթ, հորեղբայր և հոր եղբայր, մորաքույր և մոր քույր, բուն և բարձրագույն ուսումնական հաստատություն զույգերը՝ բառապաշարի և շարահյուսության մակարդակներում, պնդաճակատ և ճակատը պինդ, հաստագլուխ և գլուխը հաստ՝ բառապաշարի և դարձվածաբանության մակարդակներում և այլն։ Նույնանշությունը կարող է լինել միևնույն խոսքի մասի սահմաններում, կարող է և լինել տարբեր խոսքի մասերի սահմաններում։ Օրինակ՝ ապաբախտ և անբախտ, ապաշնորհ և անշնորհ նույնանիշներ են ածական խոսքի մասի սահմաններում։ Դարձյալ ածական են անհարմար և ոչ հարմար, անխոհեմ և ոչ խոհեմ, անհաջող և ոչ հաջող, անիմանալի և ոչ իմանալի, անեներելի և ոչ ներելի, անրմբռնելի և ոչ ըմբռնելի նույնանիշների զույգերը։ Հետևյալ զույգերում ունենք տարբեր խոսքի մասեր՝ շոր և շորացած, կոր և կորացած, խեղճ և խեղճացած, անհասկացող և չհասկացող, անկարող և չկարողացող, անմոռանալի և չմոռացվող։ Այս շարքի մեջ կարող ենք դնել նաև այն զույգերը, որոնց մեջ լծորդ կողմերից մեկը բառ է, իսկ մյուսը՝ այլ խոսքի մասերով կազմված կապակցություն, ինչպես՝ անտեր և տեր չունեցող, անհեր և հայր չունեցող, անգութ և գութ չունեցող, գրավաճառ և գիրք վաճառող, քարտաշ և քար տաշող, մսավաճառ և միս վաճառող[22] և այլն։ Նույնանիշ են նաև միևնույն գերադաս բաղադրիչով և հոմանիշ ստորադաս բաղադրիչներով կազմված բառերը, ինչպես՝ աղվաձայն և քաղցրաձայն, բարձրահասակ և երկարահասակ, գեղեցկատես և սիրունատես, մանկամիտ և երեխայամիտ, իրիկնանալ և երեկոյանալ, երկարաբուրդ և երկայնաբուրդ, երկարակտուց և երկայնակտուց, ճերմակահեր և սպիտակահեր։

Մեր ասածները վերաբերում են նույնանշությանը լեզվում, այնինչ խոսքի մեջ նույնանիշ կարող են դառնալ նաև այնպիսի բառեր, որոնք նույնանիշներ չեն լեզվում։ Բերենք միայն մեկ օրինակ։

«— Հիմա գիտե՞ս ինչ, էմմա,— դարձավ նա կնոջը,— ...դու

---

[22] Նույնանշային այսպիսի զույգերում իմաստային նրբերանգների տարբերություն կա։ Եթե, օրինակ, մսավաճառ պաշտոն է, մասնագիտություն, տևական գործի անուն է, ապա միս վաճառող տևական զբաղմունքի, պաշտոնի անվանում չէ. պատահականության բերումով տվյալ պահին միս վաճառողը դեռևս մսավաճառ չէ։ Այդպես են և մյուսները։

կնստես այս սնդուկի առջև (սնդուկ նա անվանում էր դաշնամուրը) և մեզ համար մի երկնային բան կթրխթրխկացնես... երկայն չհասկանաս, երկնային եմ ասում, այնպիսիներից, էլի, ես ու դու որ գիտենք» (Նար-Դոս):

Այստեղ սնդուկ բառը գործածված է դաշնամուր, իսկ թրխթրխկացնել բառը՝ նվագել նշանակություններով, բառեր, որոնք միայն այս հեգնական գործածության մեջ են նույնանիշներ, բայց ոչ հայոց լեզվում:

բ. Համանիշ բառեր. Սկզբից ասենք, որ համանշությունը նույնանշության նման ընդհանուր երևույթ է և չի սահմանափակվում միայն բառապաշարի ոլորտում: Այն գոյություն ունի լեզվի բոլոր մակարդակներում, ըստ որում ոչ միայն բառը կարող է լինել բառի համանիշ, այլև բառակապակցությունը, քերականական ձևը, շարահյուսական կապակցությունը, շարահյուսական կառույցը և այլն: Համանշությունը և նույնանշությունը ոճագիտության և ընդհանրապես խոսքի մասին գիտության համար առանցքային հասկացություններ են և պայմանավորում են ամբողջ խոսքի կառուցվածքը, կազմում խոսքի հյուսվածքի հենքը, այնքանով որքանով որ խոսքը կազմվածքի առումով ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվական նույնանիշ և համանիշ անսահման մեծ միջոցների ընտրություն՝ համապատասխան խոսքի նյութի, խոսքային հանգամանքների, նպատակադրության և այլն: Նույնանիշ և համանիշ բառերի ու միջոցների գործադրության հետևանքով խուսափում ենք միօրինակությունից ու միապաղաղությունից, նոր արտահայտաձևերով անընդհատ թարմացնում խոսքը, այն դարձնում բազմազան ու հաճելի, ճիշտ ու դիպուկ: Չենք սխալվի, եթե ասենք, որ ամեն մի ոճի ստեղծողը նույնանիշ և համանիշ միջոցների ու բառերի ընտրությունն է (գիտակցական թե ենթագիտակցական՝ միևնույն է): Այսքանով էլ ահա նույնանիշները և համանիշները կարևոր են խոսքի ու խոսքի տեսության համար:

Համանիշները իմաստային մերձավորություն ունեցող բառեր են: Այսպես, օրինակ, մաքուր, անարատ, անբասիր, պարզ, ջինջ, հստակ, վճիտ, անաղարտ համանիշներ են՝ մաքրություն ընդհանուր գաղափարով միմյանց հարաբերակից: Սրանք նույնանիշ չեն, որովհետև մի իմաստով ընդհանուր լինելով հանդերձ մեր լեզվում դրանք հավասար արժեք չունեն: Կարելի է ասել մաքուր երկինք և մաքուր սենյակ, կարելի է ասել նաև

պարզ երկինք, սակայն չի կարելի ասել պարզ սենյակ: Այս նշանակում է, որ այլ բան է պարզ-ն իբրև մաքուր, և այլ բան՝ ջինջ-ը, անարատ-ը, անբասիր-ը և այլն: Նույն ձևով՝ բարի հայացք, անշար հայացք, սիրալիր հայացք, մտերմական հայացք, փաղաքշական հայացք կապակցություններում բարի, անշար, սիրալիր, մտերմական և փաղաքշական բառերը համանիշ են դրական, լավ վերաբերմունքի գաղափարի ընդհանրության հիման վրա, սակայն այդ ընդհանրությամբ հանդերձ այդ բառերը միայն այս գործածության մեջ են իմաստով նույնը: Նույն բառերը հավասարապես չեն կարող կապվել գործ, մարդ, հանդիպում և այլ գոյականների: Նշանակում է, որ այլ բան է բարի-ն լավ վերաբերմունքի իմաստով, և այլ բան՝ սիրալիր-ը, փաղաքշական-ը, անշար-ը, մտերմական-ը: Շատ վախենալ, խիստ վախենալ, սաստիկ վախենալ, բավական վախենալ, չափազանց վախենալ կապակցություններում շատ, խիստ, սաստիկ, բավական, չափազանց բառերը համանիշներ են՝ շատ ընդհանուր գաղափարով, և այդ գաղափարի նույնանիշները չեն, որովհետև դրանցից յուրաքանչյուրը շատի գաղափարն ինչ-որ ձևով է արտահայտում: Այլ բառերի հետ կապակցվելիս այս բառերը կարող են ստանալ ուրիշ նշանակություններ: Այսպես, օրինակ, կարելի է ասել շատ մարդ և խիստ մարդ (չի կարելի ասել սաստիկ մարդ, բավական մարդ, չափազանց մարդ), որտեղ խիստ-ն այլևս շատ-ը չէ: Այն այս կապակցության մեջ համանիշ է արդեն շար, դաժան, պահանջկոտ, խստապահանջ բառերին: Մեր բերած օրինակները ցույց են տալիս, որ այսպիսի համանիշները իբրև այդպիսին ճանաչվում են կապակցություններում, այսինքն՝ խոսքում, հետևաբար սրանք խոսքային համանիշներ են, որոնք բնութագրվում են երկու հատկանիշներով՝ նախ, խոսքի մեջ հանդես են գալիս այլ բառերի նկատմամբ լրացական հարաբերությամբ (դառնում են լրացում), և այնուհետև, համապատասխան լրացյալի՝ կազմում են համանիշների տարբեր շարքեր: Այդ ցույց տանք ստորև բերվող աղյուսակով: Վերցնենք շատ, խիստ, սաստիկ, բավական, չափազանց համանիշները վախենալ բայի հետ միասին: Այս համանիշներից յուրաքանչյուրը այլ համանշային շարքերի մեջ է մտնում գյուղ, մարդ, դողալ և արագ լրացյալների հետ գործածվելիս, ինչպես այդ տեսնում ենք ուղղահայաց շարքերից:

բյուրավոր անթիվ անհամար	դաժան հաստապահանջ պահանջկոտ	զընգր-զընգր դրիժ-դրիժ ուտի պես	չափազանց անհամեմատ չտեսնված		
շատ	խիստ	հաստիկ	բավական	չափազանց	վախենալ
գյուղեր	մարդ	դողալ	արագ		

Խոսքային համանիշներից տարբերվում են լեզվային համանիշները։ Սրանք ևս երկու հատկանիշներով են բնութագրվում։ Նախ՝ լեզվային համանիշները ճանաչվում են կապակցություններից դուրս էլ, և երկրորդ, իմաստային առումով միևնույն գաղափարն են արտահայտում՝ քանակաորակային տարբեր չափերով, այդ պատճառով էլ համանշային այլ շարքերի մեջ չեն մտնում։ Այսպես, օրինակ, ժպիտ, ծիծաղ, քրքիջ, հրոհրոց *բառերը իմաստային առումով միմյանցից տարբերվում են նույն գաղափարի արտահայտման ուժգնությամբ կամ չափով, այլ կերպ ասած՝ ծիծաղ հասկացության տարբեր դրսևորումներն են։ Նույն ձևով՝* շամանդաղ, մշուշ, ամպ, մառախուղ, մեգ *բառերը ամպ գաղափարի տարբեր դրսևորումներն են ըստ նրա խտության չափի։ Նույնպիսի համանշային խմբեր են կազմում* լալ, հեկեկալ, հեծկլտալ, կոծել. վախենալ, սոսկալ, սարսափել, զարհուրել *և այլն։ Լեզվային համանիշներ են կազմում թե՛ գոյականները* (խնդրանք, աղաչանք, պաղատանք, թախանձանք. հակառակորդ, թշնամի. տխրություն, թախիծ), *թե՛ ածականները* (մեծ, մեծագույն, ամենամեծ. ուժեղ, հզոր. փոքր, շնչին. հիմար, տխմար, ապուշ), *թե՛ բայերը* (հիանալ, սքանչանալ, զմայլվել. ուրախանալ, բերկրել, ցնծալ, շարշարել, տանջել, խոշտանգել), *թե՛ մակբայները* (անմտորեն, հիմարաբար), *թե՛ կապերը* (մասին, վերաբերյալ) *և թե՛ շաղկապները* (բայց, սակայն)։

Ոճաբանական գրականության մեջ նկատված է, որ համանիշների մի խումբը արտահայտում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը, իսկ մի խումբը նման վերաբերմունք չի արտահայտում։ Այսպես, օրինակ, եթե քրքիջ *բառի մեջ կա բարյացակամության արտահայտություն սուբյեկտի նկատմամբ, ապա* հռհռոց *բառի մեջ կա անբարյացակամության արտահայտություն (հմմտ.* Աղջիկները քրքջացին *և* Ո՞վ է այնտեղ հռհռում)։

Այսպես են նաև սիրուն և սիրունիկ, անուշ, անուշիկ, ձեռ և բաթիկ և այլն։ Սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող համանիշները կոչվում են ոճական համանիշներ, ի հակադրություն սուբյեկտիվ վերաբերմունք չարտահայտող համանիշների, որոնք ընդունված է կոչել գաղափարագրական (идеографические)։ Գաղափարագրական են, օրինակ, կոիվ և պայքար, տանջել և չարչարել, ամպ և մառախուղ, վախենալ և սարսափել և այլն։

Համանիշների դերի մասին խոսել ենք վերը։ Այստեղ անհրաժեշտ ենք գտնում ավելացնել հետևյալը։ Քանի որ համանիշների մի մասն արտահայտում է աստիճանականության գաղափար, այդ պատճառով էլ այն կարևոր դեր է ունենում աստիճանի ճարտասանական ձևում։ Համանիշները միաժամանակ միջոց են ճարտասանական կեղծիքի համար։ Այսպես, օրինակ, գողանալ գաղափարը կարելի է մեղմել այնպես, որ նրա մեջ մեղադրական ոչինչ չմնա, այն հիմունքով, որ գողանալ նշանակում է գաղտնի, թաքուն վերցնել։ Վերջին հանգամանքները ճարպկորեն վերացնելով՝ գողությունը կարելի է հավասարեցնել վերցնելուն։ Նույն ձևով վերցնելը կարելի է դարձնել գողություն, խնդրելը՝ մուրալ, մուրալը՝ խնդրել և այլն։

Համանիշների գործածությունը պահանջում է ինչպես կյանքի լավ ճանաչողություն, այնպես էլ լեզվի լավ իմացություն։

գ. Տարանուն բառերը միևնույն իմաստն ունեն, սակայն լեզվում հանդես են գալիս բառային տարբերակներով, ինչպես՝ բարձվենյակ բույսը հանդես է գալիս նաև բարձվենակ, բարձմենյակ, բարձմենակ, բարձվենիկ, բացմենակ անվանումներով, միրուք բառը՝ 6 տարբերակներով՝ մորուք, մորուս, միրուս, մրրուս, մրուք: Ճագոմը (կաղնու վրա աճող մշտադալար մակաբույծ բույս (հանդես է գալիս նաև մղամուճ, մղամուրճ, մղամուրճի, մղամուճջ, բեկ բառը՝ բեգ, բեյ նաև բայ տարբերակներով, թակ բառը՝ թակաղ, թակաղակ, օթակ, աստղանյուս բառը՝ աստեղնանյուս, ծոծորակ-ը՝ ծոծրակ և այլն։

դ. Մերձանիշներ են այն բառերը, որոնք նույն գաղափարն արտահայտում են ուղղակիորեն և հավելյալ նրբիմաստներով։ Այսպես, օրինակ, սիրուն և սիրունիկ բարակ և բարալիկ, ուլ և ուլիկ, գլուխ և գլխիկ, ճուտ և ճուտիկ, գոտի և գոտիկ, մանուկ և մանչուկ, ծուռ և ծուռտիկ, դուստր և դստրիկ, ճորթ և ճորթուկ, տաք և տաքուկ, ծիտ և ծիտիկ զույգերից վերջիններում

Նույն գաղափարն արտահայտված է նվազական-փաղաքշական իմաստների հավելումով։ Մերձանիշների այդ հավելյալ իմաստները բազմազան են, համապատասխան այն բանի, թե ինչ խոսքի մասի են պատկանում դրանք։ Գոյականները բացի նվազական-փաղաքշական վերաբերմունքային նրբիմաստից կարող են արտահայտել նաև արհամարհական վերաբերմունք, ինչպես՝ մարդ–մարդուկ, գրող–գրչակ, *ածականները՝ նույն գաղափարի տարբեր աստիճանները՝* մեծ–մեծավուն–ամենամեծ–մեծագույն, հզոր–ամենահզոր–հզորագույն, վատ–ամենավատ–վատագույն, *մի խումբ բայեր զույգեր են կազմում տևականության և ընդհատականության նրբիմաստներով, ինչպես՝* դռռալ–դդռալ, խռռալ–խռխռալ, ծվվալ–ծվծվալ, թշշալ–թշթշալ, վշշալ–վշվշալ, *մի խումբ բայեր՝ գործողության միավորականությամբ ու բազմավորականությամբ, ինչպես՝* ծակել–ծակծկել, կտրել–կտրտել, չխկալ–չխկչխկալ, քաշել–քաշշել, թմփալ–թմփթմփալ, *մի խումբ բայեր՝ սուբյեկտի կամ օբյեկտի եզակիությամբ և հոգնակիությամբ, ինչպես՝* նստել–նստոտել, մորթել–մորթոտել, պոկել–քաղել, վերցնել–հավաքել, գցել–թափել, *մի խումբ բայեր էլ՝ գործողության և նրա երկրորդման նրբիմաստով, ինչպես՝* պատմել–վերապատմել, քնել–վերաքննել, ստուգել–վերաստուգել, ընտրել–վերընտրել *(մերձանիշներ չեն այն բառերը, որոնք թեև* վեր(ա) *ածանցով են կազմված, բայց նոր իմաստավորում են ստացել, ինչպես՝* վերաբերվել, վերագրվել, վերգրել)։

ե. Տեսակասեռային բառերը *վերաբերում են միևնույն տեսակային և սեռային հասկացությանը, ըստ այսմ բառերից մեկն ընդհանուր անվանում է, իսկ մյուսները՝ մասնավոր։ Այսպես, օրինակ,* ձի *ընդհանուր անվանում է, իսկ* հովատակ, ընժույգ, ուռածի, զամբիկ, ճակ, մատակածի՝ *մասնավոր անուն միևնույն տեսակի կենդանին անվանելու համար։* Ոշխար *ընդհանուր անվանում է, այնինչ* խոյ, մաքի, գառ՝ *մասնավոր անվանումներ,* գլխարկ *ընդհանուր անվանում է, իսկ* գդակ, փափախ, կեպի, շլյապա, ցիլինդր, քասակ, ֆես՝ *մասնավոր անվանումներ։ Տեսակասեռային բառերի խմբի մեջ ենք դնում նաև ամբողջ խմբին և նրա մեկ հատին տրվող անվանումները, ինչպես՝*

մեղու	—պարս
ձուկ, օձ	—վտառ
թռչուն (կռունկ, ճնճղուկ),	—եռամ
խոշոր եղջ. անաս. (կով, գոմեշ)	—նախիր
մանր եղջ. անասուններ (ոչխար, այծ)	—հոտ
շուն և գայլ	—ոհմակ
ձի, ջորի, ավանակ	—եռամակ
աղվես, շնագայլ	—ճահուկ

Ընդհանուր և մասնավոր բառերի գոյությունն արդյունք է ժողովրդի աշխարհըմբռնման։ Մեզ շրջապատող աշխարհի իրերը մեր լեզվամտածողության մեջ բաժանված են զանազան աստիճանավորումներ ներկայացնող խմբերի, որ ուսումնառության հետևանքով ճշտվում ու գիտական տեսքի են բերվում։ Այսպես, մենք բնական ճանաչողությամբ տարբերում ենք բուսական ու կենդանական աշխարհի բազմազան տեսակներ, որոնք մեր իմացության մեջ բաժանած են աստիճանավորություններ ներկայացնող խմբերի, որոնք անվանվում են տեսակասեռային բառերով։ Տեսակասեռային բառերից ընդհանուր անվանումները հեշտացնում են մտածելն ու խոսելը, իսկ մասնավոր անունները տալիս են իրերի մասնագիտական ճանաչում։ Պատկերացնելու համար, թե ինչ դեր ունեն ընդհանուր անվանումները, բերենք մի երկու օրինակ։ Գիտությանը հայտնի է 600 000-ից ավելի միջատների տեսակներ։ Ոչ ոք այսքան անուն չի կարող իմանալ, և մի միջատ բառը կարող է փոխարինել բոլոր այդ տեսակների անվանումներին։ Բույսերից միայն շուշանազգիները (սրանց մեջ են սոխը, սխտորը, կակաչը, շուշանը) ունեն 1600 տեսակ, որոնց անունները գուցե միայն մասնագետներն իմանան։ Այս դեպքերում ընդհանուր անվանումները օգնում են ոչ մասնագետին իր մտքերը հեշտ ձևով արտահայտել։ Մեր ժողովուրդը ռուսերենից փոխառել և գործածում է տյոտյա և դյադյա բառերն այն պատճառով, որ թեև ունենք արյունակցական կապի գաղափարների մասնավոր անվանումներ (հորեղբայր, հորաքույր, քեռի, մորաքույր և այլն), սակայն չունենք այդ գաղափարների համար ընդհանուր անվանումներ։ Այսպիսի բառերի պակասը երբեմն զգում են թարգմանիչները թարգմանություն կատարելիս։

Մասնավոր անունները կարևոր դեր ունեն հատկապես գի-

տական ու գեղարվեստական խոսքերում, որտեղ դրանք հաճախ են գործածվում իբրև տերմին՝ ծառայելով խոսքի ու մտքի ճշտությանը։

զ. Հարաբերակից են այն բառերը, որոնց արտահայտած գաղափարները տրամաբանական և հոգեբանական զանազան ասոցիացիաներով են առնչվում միմյանց։ Հարաբերակից բառերը ըստ իմաստի լինում են առնչակից, նույնաբուն, ժխտական և հակադրական, իսկ ըստ արտաքին ձևի՝ նույնանուն և հարանուն։

Առնչակից բառերը տրամաբանական առնչություններով միմյանց հետ կապված հասկացությունների անվանումներ են։ Ըստ սեռի տարբերում ենք մարդկանց և մարդուն մոտ կանգնած կենդանիներին տրվող անունները, ինչպես՝ կին–տղամարդ, աղջիկ–տղա, քույր–եղբայր, մայր–հայր, բժշկուհի–բժիշկ, ուսուցչուհի–ուսուցիչ, աշակերտուհի–աշակերտ, թագուհի–թագավոր, կով–եզ՝ ցուլ, երինջ–արջառ, մաքի–խոյ, մարի–վարուժան, հավ–աքաղաղ, զամբիկ–հովատակ, պախրակով–պախրա։ Ըստ բաղկացության առնչվում են, օրինակ՝ ճախարակ և լիսեռ, իլիկ, շուտվիկ, գութան և մաճ, խոփ, սրբիչ, էշ, լուծ, փոկ, սամի, սամոտեն. բարդ (30 խուրձ), փանջակ (10 խուրձ) և խուրձ, խորոմ (կես խուրձ), ակվնջ (խորոմի մաս)։ Ըստ բառիմաստի այլևայլ հատկանիշների՝ կուժ և կուլա. կարաս և կեփ, օշնակ, կճուճ և պուլիկ. լեռ և բլուր, թումբ. հոր և փոս. ճուպան և կառան, առասան, պարան, լար, քուղ, դեռնան, ապավանդակ, ապառում) ըստ նյութի՝ եթե կաշվից է՝ փոկ, եթե խոտից է՝ կեմ)։ Ըստ տարիքի տարբերում ենք՝ մանուկ, պատանի, երիտասարդ, ծերունի (պառավ), ջահել, ահել, հորթ, մոզի, արջառ (երինջ), կով (եզ). ճուտ, վառեկ, հավ։ Ըստ գործառության տարբերում ենք՝ բուն (եթե ծառը չի կտրված և չի ճյուղատված), գերան (եթե ճյուղատված է և հորիզոնական դիրքով է դրված), սյուն (եթե կանգնեցված է ուղղահայաց դիրքով). հիմնաքար (եթե քարը դրված է պատի հիմքում), անկյունաքար (եթե պատի անկյունում է դրված) և պարզապես քար (եթե պատի մեջ է դրված). ցորենը, գարին, հաճարը եթե աղացվեն, կդառնան ձավար, եթե ձավարը մանր լինի, կկոչվի ծտանք, հում աղացածը կոչվի ալյուր, բոված աղացածը՝ փոխինձ, բոված ցորենը կկոչվի աղանձ, ծեծած՝ մաշկը հանած ցորենը՝ կորկոտ կամ

բլղուր: Ըստ փոխադարձ առնչության *տարբերում ենք՝* որդի *և* ծնող (հայր *և* մայր). եղբորորդի *և* հորեղբայր, հորաքույր. փեսա *և* զոքանչ, աներ. հարս *և* սկեսուր, կեսուր. սանիկ *և* կրնքահայր, կնքամայր. աշակերտ *և* ուսուցիչ *և այլն:*

Նույնաբուն են այն բառերը, որոնք նույն բնից՝ արմատից են ծագում, այսինքն՝ ցեղակից են բառակազմորեն, ոչ ծագումնաբանորեն: Բերենք նույնաբուն բառերի մի քանի օրինակ:

Մարդ.— անմարդաբնակ, անմարդկային, գերմարդ, մարդակազմություն, մարդախոշոշ, մարդահամար, մարդահաշիվ, մարդկայնորեն, տմարդի:

Նավ.— նավախել, նավախուց, նավակ, նավակայմ, նավահանգիստ, նավաշինական, նավաշինություն, նավաստի, նավավար, օդանավ, օդանավակայան, տիեզերանավ, ջերմանավ:

Տուն.— անտնտեսվար, անտուն, մեծատուն, տաներեց, տնական, տնային, տնաշեն, տնաշինական, տնամանդ, տրնպան, տնտեսագետ, տնտեսական, տնտեսել, տնտեսություն, տնփեսա, տնօրինել:

Գյուղ.— գյուղական, գյուղատնտես, գյուղատնտեսական, գյուղամաղամ, գյուղացի, գյուղբաժին, գյուղխորհուրդ, գյուղկոոպ, գյուղեգյուղ:

է. Ժխտականությունը *ևս բառերի հարաբերակցության մի տեսակ է: Ժխտման կարգ ունեն հատկանիշ արտահայտող բառերը՝ ածականը, մակբայը և բայը, ինչպես՝* բարի–ոչ բարի, երկար–ոչ երկար, հաջող–ոչ հաջող, մեծ–ոչ մեծ, նվազ–ոչ նըվազ, ողորկ–ոչ ողորկ, պատեհ–ոչ պատեհ, ուղիղ–ոչ ուղիղ, անտառային–ոչ անտառային, սևահողային–ոչ սևահողային *(ածականներ),* արագ–ոչ արագ, դանդաղ–ոչ դանդաղ, բարոյապես–ոչ բարոյապես *(մակբայներ),* պատմել–չպատմել, զարգանալ–չզարգանալ, հոգնած–չհոգնած–ոչ հոգնած, մասնակցող–ոչ մասնակցող–չմասնակցող *(բայեր):*

Ընդհանրապես մյուս խոսքի մասերը ժխտման քերականական կարգ չունեն: Փիլիսոփայական աշխատություններում գոյականը հազվադեպ գործածվում է ժխտական ձևով՝ իբրև գոյականին հակադրվող վերացարկված գաղափար (օրինակ՝ մարդ *և* ոչ մարդ՝ *իբրև մարդ գաղափարին հակադրվող ամեն մի գոյականական հասկացություն), իսկ երբեմն էլ իբրև կոնկրետ*

հասկացություն։ Այսպիսի օրինակ տալիս է Դավիթ Անհաղթը։ Ահա այն.

«Տղամարդը և ոչ տղամարդը, բայց և այնպես տղամարդը քարով և ոչ քարով, բայց և այնպես քարով խփելով՝ սատկեցրեց ծառի և ոչ ծառի, բայց և այնպես ծառի վրա նստած թռչունին և ոչ թռչունին, բայց և այնպես թռչունին»։ (Դավիթ Անհաղթ, *Սահմանք իմաստասիրության, 1960, 98)։*

Այս հանելուկում տղամարդ և ոչ տղամարդ նշանակում է ներքինի, քար և ոչ քար՝ սնկաքար (պեմզա), ծառ և ոչ ծառ՝ ձող, թռչուն և ոչ թռչուն՝ չղջիկ)։

Ժխտականությունը շատ կարևոր իմացակարգ է աշխարհաճանաչողության մեջ։ Աշխարհը մեր մտածողության մեջ ներկայանում է իբրև երկու հակադրական կողմերի՝ իրականի և ոչ իրականի, գոյություն ունեցողի և չունեցողի, եղյալի և չեղյալի, իրականացման և չիրականացման, հաստատվողի և ժխտվողի ներհակ երևույթների անբաժանելի միասնություն։ Աշխարհը ճանաչվում է իր երկու կողմերի միասնության մեջ՝ դրական (պոզիտիվ) և ժխտական (նեգատիվ). եղյալով, իրականով, գոյություն ունեցողով ճանաչում ենք չեղյալը, անիրականն ու գոյություն չունեցողը, և չեղյալով, անիրականով ու գոյություն չունեցողով՝ եղյալը, իրականն ու գոյություն ունեցողը։ Ժխտականությունը իրական աշխարհի ժխտական պատկերն արտացոլելու լեզվական միջոցներից մեկն է (այս մասին տե՛ս նաև «Բառերի ընտրությունը խոսքում» վերնագրի տակ, էջ 157)։

ը. Հականիշ են այն բառերը, որոնց արտահայտած գաղափարները միմյանց հակադիր են, այսինքն՝ հակոտնյա, ծայրաբևեռային հասկացություններ են, և մենք հոգեբանական առոցիացիայով մեկի անունը տալիս մտածում ենք նաև մյուսի մասին։ Հականիշներ են կազմում հատկանիշ արտահայտող բառերը՝ ածականը, բայը և մակբայը։ Ածական հականիշներ են, օրինակ՝ մեծ–փոքր, լավ–վատ, հաստ–բարակ, թույլ–ուժեղ, լայն–նեղ, խելոք–հիմար, բարձր–ցածր, վախկոտ–անվախ, կարգապահ–անկարգ, հաջող–անհաջող։ *Բայ հականիշներ են, օրինակ,* հեռանալ–մոտենալ, շահել–տուժել, սիրել–ատել, օգնել–խանգարել, ուրախանալ–տխրել, բարձրանալ–իջնել, բանալ–փակել, կառուցել–քանդել, դալարել–չորանալ, փրկել–կործանել, հաստատել–ժխտել, ընդունել–մերժել, մտնել–ելնել։ *Մակբայ հականիշներ են, օրինակ,* արագ–դանդաղ, մոտիկ–հեռու, ա-

առաջ–հիմա, առաջ–ետ, վերև–ներքև, միասին–առանձնաբար: Գոյական հականիշները մեծ մասամբ ածականներից, բայահիմքերից, բայարմատներից ու մակբայներից կազմված բառեր են, ինչպես՝ լավություն–վատություն, թուլություն–ուժեղություն, խեղճություն–հիմարություն, ուրախություն–տխրություն, արագություն–դանդաղություն, սեր–ատելություն, ելք–մուտք, լույս–խավար, օգուտ–վնաս, հանույթ–տհանություն, սիրալիրություն–ատելություն: Հականիշներ են կազմում նաև կապերը, ինչպես՝ ճօգուտ–ի վնաս, ընդդեմ–ի նպաստ (ի շահ), առանց–ճանդեռձ:

Հականիշները, ինչպես և ժխտականություն արտահայտող բառերը կարևոր դեր ունեն հակադրությունների ճարտասանական ձևերում:

թ. Նույնանուն բառերը հարաբերակից են միմյանց ըստ բառի արտաքին ձևի. այս դեպքում հոգեբանական ասոցիացիան տեղի ունի ոչ թե իմաստի, այլ բառի արտաքին (հնչական կամ գրավոր) պատկերի հիման վրա: Նույնանուն են արտասանությամբ կամ գրությամբ նույն կազմը կամ պատկերն ունեցող բառերը: Նույնանունների առաջացման հիմնական ուղիներն են՝ բառերի հնչյունափոխությունը, փոխառությունները և բառակազմության հետևանքով առաջ եկած պատահական նմանությունները: Հնչյունափոխությամբ են առաջ եկել, օրինակ, արդի հայերենի հետևյալ նույնանունները՝ սեր և սեր (սէր), հոտ և հոտ (հօտ), հարկ (կարիք) և հարկ (յարկ՝ ընտանիք), հոդի (հին հայոց տոմարի երկրորդ ամիսը) և հոդի (յոդի՝ վատ, ատոր), հույլ (հոյլ՝ միատեղ) և հույլ (յոյլ՝ ծանրաշարժ, թամբալ), հոլով (թավալվել) և հոլով (յոլով՝ շատ, բազում): Փոխառությունների պատճառով առաջացած նույնանուններից են, օրինակ, փող (նեղ անցք) և փող (պարսկերեն դրամ), շահ (օգուտ) և շահ (պարսկերեն-արքա), քնար (նվագարան) և քնար (պարսկերեն-եզր, ափ), լալ (լաց լինել) և լալ (պարսկերեն-թանկարժեք քար), պատ (կառույց) և պատ (հնդկերեն-շախմատ. շրջափակ), հիմն (հիմք) և հիմն (հունարեն-օրհներգ), մարտ (կռիվ) և մարտ (լատիներեն՝ անցած հունարենից-ամսանուն), ամեն (բոլոր, յուրաքանչյուր) և ամեն (ամէն-հրեերեն-թող լինի), կիսել (երկու հավասար մասի բաժանել) և կիսել (ռուսերեն-սննդանյութ), բարակ (նուրբ, ոչ հաստ) և բարակ (ռուսերեն-շան տեսակ), շինել (կառուցել) և շինել (ռուսերեն-զինվորական վերարկու), կոն (հունարեն-երկրաչափա-

կան մարմին) և կոն *(քրդերեն-վրան)։ Քերականական ձևի կամ բաղադրության պատահական զուգադիպության հետևանքով առաջացած նույնանունության օրինակներից են՝* հոr *(փոս)* և հոr (հայr *բառի սեռականը),* կար *(գոյական՝* կարել *բայից)* և կար (կամ *բայի երրորդ դեմքի ձև),* առ *(նախդիր)* և առ (առնել *բայի հրամայական ձև),* անարգել (ան+արգել) և անարգել (անարգ+ել), կարող (կարել *բայից)* և կարող *(կարողացող)։*

Կան և այնպիսի նույնանուններ, որոնց ծագման ուղին դժվար է բացատրել, ինչպես՝ կույս *(աղջիկ, օրիորդ)* և կույս *(կողմ),* այr *(տղամարդ)* և այr *(քարայր),* ավել *(շատ)* և ավել *(մաքրելու, ավլելու իրը),* առ *(նախդիր)* և առ *(գոյականը)։*

Նույնանունները կարևոր ոճական լիցքավորում չունեն, եթե չհաշվենք դրանց կարևորությունը բառախաղերի ժամանակ (օրինակ՝ հարստանալու *համար պետք է* հար ստանալ):

Ժ. Հարանուն բառերը մի կողմով նման են նույնաբուն բառերին, որովհետև դրանց մի մասը կազմված է նույնաբուն բառերի նման, մի կողմով էլ նման են նույնանուն բառերին, որովհետև արտաքին կազմությամբ որոշ հարանուններ միմյանցից քիչ տարբերություն ունեն։ Հարանուններն ուրեմն շատ հաճախ միևնույն բնից կազմված, իսկ երբեմն սոսկ պատահական նմանություն ունեցող բառեր են, որոնք միանգամայն տարբեր նշանակություններ ունեն և կամ խոսքում տարբեր գործառություններով են հանդես գալիս, թեև ունեն միևնույն ընդհանուր նշանակությունը։ Այսպես, օրինակ, երազը *քնի մեջ մեզ ներկայացած տեսիլքն է, նույն արմատից կազմված* երազանք *բառի իմաստը հարթմնի երազն է, այնպիսի տեսիլները, որոնց իրականանալը փափագում ենք,* ժառանգ *նշանակում է որդի, իսկ նույն արմատից կազմված* ժառանգորդ *բառը չունի պարտադիր որդի նշանակությունը, այլ այն մարդը, որը ժառանգի իրավունքով ժառանգելու է ինչ-որ բան։ Այսպես են նաև հետևյալ հարանունները, որոնք երբեմն իմաստային նուրբ տարբերություններ ունեն, ուստի և դրանց իմանալը պայման է խոսքի ճշտության համար.* ազատամիտ–ազատամտական, անհետանալ–անհայտանալ, ապաստան–ապաստարան, առաջադեմ–առաջադիմական, ավանդ–ավանդություն–ավանդույթ, զոհել–զոհաբերել, ընդունելություն–ընդունելիություն, լուսավորական–լուսավորչական, կազմակերպական–կազմակերպչական, հայտա-

բերել–հայտնաբերել, հանդեպ–դեպի, հասկացություն–հասկացողություն, հարաբերություն–հարաբերակցություն, հնաբան–հնէաբան, հնաբանություն–հնէաբանություն, հնարք–հնարանք, մտածություն–մտածողություն, նկարագիր–նկարագրություն, ոճաբան–ոճագետ, որպեսզի–որպիսի, պահպանել–պաշտպանել, պատկանելություն – պատկանելիություն, պատրաստականություն–պատրաստակամություն, սովորույթ–սովորություն, տիրել–տիրանալ, օգտագործել–գործածել:

Այս բոլոր հարանուններում կառուցվածքային ընդհանրության հետ մեկտեղ կան և կառուցվածքային և իմաստային տարբերություններ, սակայն դրանք երբեմն նուրբ, աննկատելի տարբերություններ են, և բոլորը չէ, որ գիտեն կամ ըմբռնում են դրանք։ Մեր գրականության մեջ հաճախ ենք տեսնում միմյանց հետ շփոթված այլ-ն *ու* այլև-ը, որ-ն *ու* որպեսզի-ն, որտեղ-ն *ու* ուր-ը, դեռ-ն *ու* դեռևս-ը, *մի բան, որ գրական լեզվի նրբությունները լավ չիմանալու արտահայտություն է։ Ահա հարանունների սխալ գործածության մի օրինակ.*

««Սալբի» վեպի առաջաբանում 19-րդ դարի 20-ական թվականներին ռուսական զենքի հաղթական երթին նպաստած հայ ազատագրական շարժման գործիչներ Ներսես Աշտարակեցու և Ղազարոս Լազարյանի ձեռնարկները քննադատող Բաֆֆին «Հարեմում» գրում էր...» («Խորհ. Հայաստան», օրաթերթ, 19. 3. 1986, էջ 4)։

Արդի հայերենում անթույլատրելի է շփոթել ձեռնարկ, ձեռնարկում *և* ձեռնարկություն *բառերը, որոնք միանգամայն տարբեր իմաստներ ունեն։ Անշուշտ, նույնիսկ սխալ գործածված հարանունները մեր լեզվազգացողությամբ ճիշտ ենք ըմբռնում, սակայն խոսքի ճշտությունը պահանջում է դրանք իրենց տեղում գործածել, մանավանդ այն դեպքում, երբ իմաստային ընդհանրություն այլևս չունեն։ Այդպիսի ընդհանրություն ունենալու դեպքում հարանունների ոչ ճիշտ գործածությունն ինչ-որ չափով ներելի է (այսպիսի հարանուններ են, օրինակ,* որտեղ-ն *ու* ուր-ը, որ-ն *ու* որպեսզի-ն, *բայց ոչ* որպիսի-ն *ու* որպեսզի-ն)։ *Բանաստեղծական խոսքում հաճախ ենք տեսնում* երազ *բառը գործածված երազանքի փոխարեն, բայց համարյա բոլոր դեպքերում էլ վանկերի քանակի պատճառով, ինչպես՝*

Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հազարթև,
Ա՜խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ, տեսնեմ Անին
ու նոր մեռնեմ։ (Հ. Շիրազ)

Ըստ խոսողի կամ գրողի արտահայտած վերաբերմունքի *բառերը կարելի է բաժանել երեք խմբի՝ ոճականորեն չեզոք բառեր, ոճականորեն երանգավորված բառեր (լեզվական վերաբերմունքայիններ) և ըստ գործածության ոճականորեն երանգավորված բառեր (խոսքային վերաբերմունքայիններ)։*

ա. Ոճականորեն չեզոք *են այն բոլոր բառերը, որոնք բառային իմաստի հետ միասին չեն արտահայտում խոսողի կամ գրողի դրական կամ բացասական վերաբերմունքը գործողության օբյեկտի նկատմամբ։ Այսպիսի բառեր են բոլոր այն գոյականները, որոնք հատկանշային գաղափար չեն արտահայտում և խոսքում փոխաբերաբար չեն գործածված։ Օրինակ՝* ճաց, ջուր, տուն, ծառ, սար, գիրք, սեղան, ընկերություն, լիություն, վազք, կարիք: *Ոճականորեն չեզոք են ածականների մի զգալի մասը, հատկապես հարաբերական ածականները, ինչպես՝* կարմիր, դեղին, սպիտակ, կանաչ, առողջ, գեղեցիկ, դաշտային, տնային, դասարանական, ընկերական, բարեկամական, հայրական, մտավոր, բանավոր, *թվականները, դերանունները, բայերի մի զգալի մասը, ինչպես՝* բերել, գրել, գնալ, մնալ, խոսել, ասել, վազել, կարդալ, իմանալ, շտապել, պատասխանել, *մակբայները, կապերը, շաղկապները, ձայնարկությունները և վերաբերական բառերը։ Այս շերտի բառերը խոսքի մեջ գործածվում են ինքնաբանական նշանակությամբ։*

բ. Ոճականորեն երանգավորված բառեր *(լեզվական վերաբերմունքայիններ) են այն բառերը, որոնք արտահայտում են խոսողի կամ գրողի սուբյեկտիվ (դրական կամ բացասական) վերաբերմունքը։ Այսպիսի բառերը հենց իրենց բառային իմաստով վերաբերմունքային են։ Այսպես, օրինակ, անկախ այն բանից, թե ինչ հանգամանքում է գործածվում, ում նկատի ունենալով և այլն, լրտես գոյականը միշտ հանդես կգա իր բացասական իմաստով, խոսողի ընդգծված թշնամական վերաբերմունքով։ Նույն ձևով՝ մեր լեզվում ընդգծված բացասական վերաբերմունք են արտահայտում* անպարարություն, աչքածակություն, աչքակապություն, ավազակ, բանսարկու, գանգստեր, գող, դասալիք, դավաճան, դմբո, եղեռնագործ, եղեռնագործու-

թյուն, ընշամաղցություն, խառնաժողով, խուժան, հրոսակ, մատնիչ, մարդասպան, մոլուցք, ոսոխ, շարշի, սրիկա, վարժապետ, փերեզակ, փինաշի *և այլն։ Սրանց հակառակ կան բառեր էլ, որոնք խոսողի կամ գրողի սիրալիր, բարեկամական, բարյացակամության վերաբերմունքն են արտահայտում, ինչպես՝* ազնիվ, բարեհամբույր, հրաշագեղ, շնաշխարհիկ, պաշտելի, սիրահան, սիրելի, սմանչելի, վսեմ, փառահեղ։ *Ընդհանրապես ոճականորեն երանգավորված են լինում այն բառերը, որոնք կարող են արտահայտել անձի այս կամ այն հատկանիշը կամ հատկությունը։ Այսպես են գոյականները, ածականները և բայերը։ Դրական վերաբերմունք են արտահայտում Իկ, Ակ և Ուկ ածանցներով կազմված գոյականները, ինչպես՝* աշիկ, դնշիկ, թաթիկ, թիթեռնիկ, թշիկ, թևիկ, իշխանիկ, կաքավիկ, հարսիկ, հովիկ, հորթիկ, ձայնիկ, ձկնիկ, ձյունիկ, մամիկ, մատիկ, մուկիկ, շաղիկ, շնիկ, ոտիկ, պաշիկ, պոչիկ, ջանիկ, ջրիկ, սրտիկ, վզիկ, տաղիկ, տոտիկ, ուլիկ, փիսիկ, քթիկ, *որոնց միջոցով արտահայտում ենք քնքշանք ու սիրալիր վերաբերմունք առարկաների և կամ նրանց նկատմամբ, որոնց պատկանում են այդ առարկաները։ Նույն բանը վերաբերում է Իկ, Լիկ և Ուիլիկ ածանցներով կազմված ածականներին, ինչպես՝* անուշիկ, բարալիկ, բկլիկ, թխլիկ, թմբլիկ, թմփլիկ, թոթոլիկ, թութուշիկ, մեղմիկ, շեկլիկ, շաղլիկ, պստլիկ, սիրունիկ, սևուլիկ, փափլիկ։ *Որակական ածականների մի մեծ խումբ կոչված է արտահայտելու խոսողի ու գրողի բացասական վերաբերմունքը։ Բերենք մի քանի օրինակ.* աղմատիմաց, անամոթ, աներես, անզգամ, աննաշակ, անմիտ, անպիտան, արյունարբու, արյունռուշտ, աշխածակ, բթամիտ, գարշելի, դժոխածին, եղկելի, եպերելի, զազրելի, զզվելի, խարդախ, խելագար, հաստագլուխ, ձրիակեր, նեղճակատ, նենգ, մարդախաշող, չար, չարչիական, պնդանակատ, սառոր, տգեղ, տգետ, տհաս, օրապակաս։ *Բայերի մեջ դրական վերաբերմունքի բառերը համեմատաբար քիչ են, այնինչ բացասական վերաբերմունք արտահայտող բայերը որոշակի թիվ են կազմում, ինչպես՝* աներեսանալ, անզգամանալ, աֆլորանալ, գազազել, իշանալ, լկտվել, լրտեսել, խարդախել, խարդավանել, ծլկել, հղփանալ, հոխորտալ, հոհոալ, ճամարտակել, ճապաղել, նողոպրել, նենգափոխել, շնանալ, չմեղանալ, ջրիկանալ, սադրել, փմվել, քծնել։

Նկատենք, որ դրական վերաբերմունքի բառերը խոսքի բա-

նաստեղծականության տարր են և այդ գործառությամբ էլ առավել հաճախ բանաստեղծական խոսքում են հանդես գալիս։ Ահա մեկ օրինակ հայ պոեզիայից։

Ո՜հ, ի՜նչ անուշ և ինչպես զով
Առավոտից փչես, հովիկ,
Ծաղկանց վրա գուրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ։
Բայց չես հովիկ իմ հայրենյաց,
Գնա՛, անցի՛ր սրտես ի բաց։

Ո՜հ, ի՜նչ աղու ու սրտագին
Ծառոց մեջեն երգես, թռչնիկ,
Սիրո ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենյաց,
Գնա՛, երգե՛ սրտես ի բաց։

Ո՜հ, ի՜նչ մրմունջ հանես, վտակ,
Ականակիտ ու հանդարտիկ.
Քո հայելվույդ մեջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ։
Բայց չես վտակ իմ հայրենյաց,
Գնա՛, հոսե՛ սրտես ի բաց։ (Մ. Պեշիկթաշլյան)

Նկատենք նաև, որ խոսքի բանաստեղծականության այս միջոցն առավել արևմտահայ բարբառներին և արևմտահայ գրականին է հատուկ. այդ է պատճառը, որ արևմտահայ միջավայրի կամ միջնադարի պատրանք ստեղծելու համար մեր բանաստեղծներն այդ միջոցին են դիմում։ Բերենք մեկական օրինակ։ Արևմտահայ ժողովրդական խոսքի առանձնահատկությունները պահպանելով՝ Հ. Թումանյանը գրում է.

Դու ո՞ր սարեն կուգաս, ջրիկ,
Իմ պաղ ջրիկ, իմ անուշիկ...

Միջնադարի ժամանակների բներանգ ստեղծելու նպատակով Վ. Դավթյանը դիմում է այդ միջոցին, որովհետև այն ուղ միջնադարի հայ պոեզիայի մեջ նկատելի արտահայտաձև է.

Աբրեշում գորգիկը փռեմ,
Ոսկեթել ծածկոցը վրան,

Հոգեկիս իմ տունը բերեմ
Ու դնեմ ախիկը դռան...

Սափոր մի ալ գինի հանեմ,
Ու խմենք մեր սիրու վրա,
Իմ շարե շապիկը հագնեմ,
Որ ճերմակ ծոցիկս երևա...

Գ. Ըստ գործածության ոճականորեն երանգավորված ենք կոչում այն բառերը, որոնք թեև լեզվում առանձնաբար վերցրած չեզոք են, որևէ վերաբերմունք չեն արտահայտում, սակայն խոսքի մեջ, մանավանդ փոխաբանորեն գործածվելիս, կարող են արտահայտել սուբյեկտիվ վերաբերմունք։ Բերենք մի երկու օրինակ։ Համեստ բառն ընդհանրապես դրական գաղափար է արտահայտում, սակայն բացասական իմաստային երանգ է ստանում կարողություններ, գիտելիքներ, ընդունակություններ բառերի հետ գործածվելիս («համեստ գիտելիքների տեր մարդ է» արտահայտությունը կդառնա վիրավորական, եթե ասվի լավ գիտնականի հասցեին. այն իր բացասական արժեքը կորցնի, եթե ասվի ճարտասանական կեղծիքով, ինչպես՝ «իմ համեստ կարողություններով ծառայել եմ ազգիս լուսավորության գործին»)։ Կին բառը չեզոք է, սակայն եթե գործածվի տղամարդու հասցեին, կհնչի չափազանց վիրավորական։ «Իլիականում» Հոմերոսն այսպիսի մի պատկեր ունի. հույներից ոչ մեկը չէր ցանկանում Հեկտորի դեմ մենամարտել, բայց երբ Մենելավոսը վախկոտության համար նրանց հանդիմանում է՝ ասելով «...և կին եք դուք, ոչ թե այրեր ամայացի», սա շատ ծանր վիրավորանք է դառնում աքայացիների համար, և պատվախնդրությամբ գրգռված՝ նրանցից շատերն են ցանկանում դուրս գալ մենամարտի։ Նման մի բան էլ Հ. Թումանյանի «Անուշում» կա. Մոսին իր վրեժխնդրությունը գրգռելու համար իրեն նախատում է հետևյալ կերպ.

Դե մեռի՛ր, էլի, գետինը մտի՛ր,
Տանը վե՛ր ընկիր, իլիկ պտտի՛ր։

Երբեմն բառի ոճական երանգը փոխվում է նրա ուղղվածության հետ միասին։ Եթե հեռախոսով մեկին ասենք «Ձեզ անհանգստացնում է այսինչը», ապա ընդգծված բայով վիրավորական ոչինչ արտահայտած չենք լինի, բայց եթե զանգ տվողին

ասվի «Ո՞վ է այս ժամին ինձ անհանգստացնում», կդառնա վիրավորական։ Այսպես էլ կան բառեր, որոնք տարբերակված են ըստ մարդու և կենդանիների ոլորտների (օրինակ՝ ձեռք-թաթ, ուտել-լափել, մահանալ-սատկել, նստել-շնթռել և այլ)։ Վերջիններս մարդու համար գործածվելիս ձեռք են բերում խիստ ընդգծված բացասական ոճական երանգավորում։

Խոսքային ոճավորվածների մեջ մի խումբ էլ կազմում են այսպես կոչված բանաստեղծական բառերը։ Այդպիսին են, օրինակ, հետևյալ քառատողերում ընդգծվածները.

Խորհրդավոր է երկինքն երազուն,
Վարսաթափ ուռի, դողդոջուն եղեգ.
Արծաթ խոսքերով աղբյուրն է հոսում.
— Սիրուս կարոտով կանչում է քեզ, ե՛կ։

Վ. Տերյան

Ոսկեհանդերձ եկար և միգասքող,
Տխուրաշյա աշուն, սիրած աշուն.
Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,
Մետաքսներով ֆնիշաշրշուն։ Վ. Տերյան

3. Ըստ կազմության առանձնահատկությունների բառերը բաժանում ենք կարճերի և երկարների։ Այսպիսի բաժանման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ երկար և կարճ բառերը հավասար արժեք չեն ներկայացնում խոսքի որոշ տեսակներում, հատկապես չափածո խոսքում, պարբերություններում և այլն, որտեղ յոթ և ավելի վանկ ունեցող բառերը տեղ չունեն, իսկ վեց վանկանի բառերն էլ հազվադեպ են գործածվում։

Լեզուները միմյանցից տարբերվում են նաև բառերի երկարությամբ։ Կան լեզուներ, որոնց բառերը կարճ են, կան լեզուներ էլ, որոնց երկար բառերը մի տողում չեն տեղավորվում։ Հայերենը բառերի երկարությամբ միջին տեղ է գրավում լեզուների շարքում։ Արդի հայերենի բառերն ունեն մեկից մինչև քսան հնչյուն։ 20 և ավելի հնչյուններից կազմված բառերը բացառություններ են։ Կարճ ենք համարում մեկ և երկու վանկեր ունեցող բառերը, միջին երկարության՝ երեքից հինգ վանկանի բառերը և երկար՝ վեց և ավելի վանկեր ունեցող բառերը։ Ամենակարճ բառերը ձայնավոր հնչյուններով արտահայտվող բառերն են՝ ա, օ, ու, ի, է, ը։ Կարճ են նաև երկու հնչյունով կազմ-

ված միավանկ բառերը, որոնց թիվը նույնպես շատ չէ։ Այդ բառերից են՝ ալ, ախ, ակ, աճ, աղ, աև, ամ, այ, աչ, աջ, առ, ափ, բա, դա, կա, հա, նա, սա, տա, օդ, օղ, օձ, ով, օր, օֆ, հո, ռո, ֆո, ուս, ուր, ում, բու, դու, չու, էլ, եմ, էյ, էր, ղե, քե, չէ, իժ, իլ, իմ, իր, զի, քի, լի, ձի, մի և այլն։ Անհամեմատ շատ են 3—13 հնչյուններ ունեցող մեկից մինչև հինգ վանկանի բառերը։ Ահա այս կարճ և միջին երկարություն ունեցող բառերն են, որ պիտանի են չափածո խոսքի և ռիթմական արձակի համար։ Հայերենը թեև ունի բառաբարդման զարգացած տեխնիկա, այնուամենայնիվ նրա համադրական բարդությունները շատ երկար չեն։ Մեր ամենաերկար բառերը, որ կազմված են քսան և ավելի հնչյուններից, քանակով չեն անցնում մի երկու տասնյակի սահմաններից։ Ահա արդի հայերենի մեջ հայտնի ամենաերկար բառերի ցանկը՝ ալկալիասիլիկահողային, ամենաներկայացուցչական, գազոֆոտոգրաֆիական, երկրաբանահետախուզական, էլեկտրաջերմաօդափոխիչ, ինտերնացիոնալիստական, կինոնկարահանապարհորդություն, ռադիոսպորտտեխնիկական, ռազմանայրենասիրություն (20 հնչյուն), բազմամակարդայնություն, ջերմաէլեկտրատաքացուցիչ, հիդրոօդերևութաբանական (21 հնչյուն), ամբարձիչատրանսպորտային, այգեպտղաբանջարաբուծական, աշխարհագրահոգեբանություն (22 հնչյուն), հանրապահեստամնացորդարան (23 հնչյուն), ճարտարապետագեղարվեստական (24 հնչյուն), ռազմաֆինանսաարդյունաբերական (26 հնչյուն)։ Հր. Աճառյանի տվյալներով[23] գրաբարի ամենաերկար բառերն են վերնագագաթնակատարահերձ (22 հնչյուն), նախանանապարհորդացուցանել և նրալուսանանշաղեղնություն (23 հնչյուն)։ Հին գրականության մեջ մեզ հայտնի հայերեն ամենաերկար բառերը հանդիպել են Խաչատուր Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն» աշխատության մեջ։ Դրանք են՝ ներհակախնդրալուծաբանություն (24 հնչյուն) և հակառակորդապատճառաբանություն (26 հնչյուն)։ Եթե նկատի ունենանք, որ հիշյալ բառերից գոյականները կարող են հանդես գալ հոգնակի թվով և թեք հոլովաձևերով (-ներից և -ներում), որի հետևանքով կաճեն ևս 5 հնչյունով, ապա մեզ

---

[23] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, Ներածություն, 1955, էջ 309։

հայտնի ամենաերկար բառերից միայն երկուսում հնչյունների քանակը կարող է հասնել 31-ի։

Ամենաերկար բառերը և ընդհանրապես երկար բառերը հատուկ են դ'ուռության ու տեխնիկայի, մասամբ նաև հրապարակախոսության «լեզուներին»։ Դրանք բացառված են ինչպես չափածոյի, այնպես էլ ռիթմական արձակի ու արձակ բանաստեղծության լեզվում, քանի որ 6-ից ավելի վանկ ունեցող բառերը ոտքեր չեն կազմում։ Ոչ ռիթմական արձակը ոչ մի նշանակություն չի տալիս բառի երկարությանը։ Ընդհակառակն, դրանք անհրաժեշտ են, հատկապես հրապարակախոսության մեջ, խոսքին վսեմություն, հանդիսավորություն ու լրջություն տալու համար։ Սովորական արձակում երկար բառերը արտասանությունը դարձնում են դժվար, ունկնդրելը՝ անկարելի։ Նույն ձևով կարճ բառերի կուտակումն է խոսքը դարձնում դժվար արտասանելի ու ընկալելի։ Իբրև օրինակ բերենք Ե. Չարենցի մի տողը՝ Գիտես դա դու հո։ Ընդամենը չորս բառ, և երեք միավանկ բառերը միասին արտասանել չի լինում[24]։ Հիշյալ երկու ծայրահեղություններից խուսափելու համար խոսքում կարճ ու երկար բառերը բարեխառնվում են։

Գրավոր խոսքի փաստերը հաստատում են, որ համեմատաբար քիչ վանկեր ունեցող բառերով են ստեղծվում նուրբ զգացմունքներ արտահայտող քնարական չափածո և արձակ ստեղծագործությունները։ Վանկերի թիվը կարևոր դեր ունի բանաստեղծական խոսքում և խոսքի բանաստեղծականության մեջ։ Այն ոչ միայն պայմանավորում է խոսքի ռիթմը, չափը և ձևը, այլև միաժամանակ ստեղծագործության լեզվի և հեղինակային ոճի կարևոր բաղադրիչներից է։ Այսպես, քնարական ոտանավորները սովորաբար ստեղծվում են 1—4 վանկանի բառերով, իսկ էպիկական շունչ ունեցող ստեղծագործություններում կարող են գործածվել 5, նույնիսկ 6 վանկանի բառեր։ Կարճ բառերը հարմար են գործածվելու բանավեճի ժամանակ՝ արագախոսության և խոսքին թափ հաղորդելու համար։ Ինչպես ճակատամարտում արագ կրակոցները, այնպես էլ բանավեճում արագ

---

[24] Սա մենք չենք դիտում բացարձակ բան։ Կարելի է միավանկ բառերով նաև երկար նախադասություններ կազմել, բայց միևնույն է՝ խոսքը կաղալու է։ Ահա այդպիսի մի նախադասություն՝ Առ քեզ մի դուլլ կաթ տամ, տար մեր տուն, ու երբ որ նա գա տուն, եկ ինձ մոտ, քեզ մի քիչ ձու, թարմ հաց, մի մեծ սեխ, մի փարչ ձեթ ու մի քիչ յուղ տամ, տար քո մոր մոտ։

խոսելն ու շատ բան ասելը մեծացնում են խոսքի թափը։ Այսպիսի նպատակի համար երկար բառերը պիտանի չեն։ Կարճ բառերը նպաստում են խոսքի արագ տեմպին և հարմար են հուզականություն արտահայտելու համար (շատ հուզված մարդիկ բառերն արտասանում են կտրտված)։

Եթե անտեսենք որոշ բացառություններ, ապա կարող ենք ասել, որ կարճ բառերը պարզ են, իսկ երկար բառերը՝ բաղադրյալ՝ ածանցավոր, բարդ և բարդ ածանցավոր։ Երկար բառերը, հատկապես բարդությունները և տերմինները, կարևոր դեր ունեն գիտական խոսքում, քանի որ դրանք միջոց են միտքը ճիշտ և առարկայորեն արտահայտելու համար։ Մեծ է նաև այսպիսի բառերի դերը գեղարվեստական խոսքում այն պատճառով, որ բարդությունների բաղադրիչները գաղափարների հարաբերություններ արտահայտելու պատճառով նպաստում են խոսքի պատկերավորությանը (հմմտ. բարձրաթռիչ, լեռնապար, սանձահարել, ծովածավալ, ողբանվագ, երկնակամար, ծաղկափրթիթ)։

ԲԱՌԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔՈՒՄ. ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսելիս բառերի ընտրություն ենք կատարում, իսկ ընտրողականությունը ուղեղի գիտակցական և ենթագիտակցական աշխատանքի ամենակարևոր գործառույթներից մեկն է։ *Մարդիկ միմյանցից տարբերվում են ընտրողականությամբ։ Բառերի ընտրությունը պայմանավորված է լինում բազմաթիվ հանգամանքներով՝ առաջին հերթին խոսքի իրադրությամբ, այն միջավայրով, որտեղ տեղի է ունենում խոսքը, խոսքի նյութով, որի շուրջը ծավալվում է խոսքը, խոսքի հասարակական գործառությամբ, թե ինչ նպատակի է ծառայում այն, խոսող կամ գրող անհատի գիտակցությամբ, իմացությամբ և մտածողության յուրահատկությամբ, նրա լեզվաիմացությամբ, նրա նպատակադրմամբ և այլն։ Այսպես, գիտնականը դասախոսություն կարդալիս, հոդված կամ աշխատություն շարադրելիս իր խոսքի մեջ գործածում է այն տերմինները, որոնք վերաբերում են տվյալ գիտության տվյալ թեմային և արտահայտում են նյութի հետ կապված ամենակարևոր հասկացություններն ու գա-*

զափարները։ Գիտնականը միաժամանակ նկատի է ունենում, թե ով է իր ունկնդիրը, ում համար է գրում, տվյալ խոսքով ինչ նպատակ է հետապնդում։ Սակայն յուրաքանչյուր գիտնական յուրովի պատկերացում է ունենում թե՛ տվյալ առարկայի և թե՛ տվյալ նյութի մասին, ունենում է յուրովի գիտակցություն ու գիտելիքներ, յուրովի հիշողություն, յուրովի ճաշակ ու շընորհք, յուրովի է տիրապետում մայրենի լեզվին, այս պատճառով էլ յուրաքանչյուր գիտնական միևնույն նյութի մասին խոսելիս ու գրելիս բառերն ընտրում է իր ձևով՝ միանգամայն տարբեր ուրիշներից։ Բացի սրանից, յուրաքանչյուր անհատ, հետևաբար գիտնականը, տվյալ պահին գտնվում է այս կամ այն տրամադրության մեջ, որի հետևանքով տարբեր լարվածությամբ ու ակտիվությամբ են գործում նրա մտավոր ու հոգեկան պոտենցիալ կարողությունները, տարբեր չափերով է լինում ոգևորված կամ ոգեշնչված, որոնք ընտրողականության կարևոր ազդակներ են։ Նույն բանը վերաբերում է նաև գեղարվեստական ստեղծագործությանը, որն ստեղծելիս առաջնային են դառնում հոգեբանական հանգամանքները՝ գրողի զգացումներն ու հույզերը, որոնք իրենց դրոշմն են դնում ոչ միայն ստեղծագործության ոգու վրա, այլև որոշում, թե ինչ լեզվական նյութով է կերտվելու գեղարվեստական խոսքի հորինվածքը։ Մեր միտքը պարզ դարձնելու համար վերցնենք Ե. Չարենցից և Վ. Տերյանից մեկ-երկու ստեղծագործություն և տեսնենք, թե ինչ կարգի բառեր են ընտրված, և ինչպես են դրանք ստեղծում համապատասխան տրամադրություն։ Նախ վերցնենք Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի առաջին 18 տողը.

Հեռու, մոտիկ ընկերներին,—աշխարհներին,
արևներին,—
Հրանման հոգիներին,—
Բոլոր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,—
Բոլոր նրանց հոգիներին արևավառ,—
Կյանքի, մահի այս ամեհի աղջամուղջում՝
Ողջակիզվող հոգիներին—ողջո՜ւյն, ողջո՜ւյն։—

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն։
Արևը բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում։
Դաշտի վրա փռվել էր մուժ արյունաման՝
Թույն էր կարծես բորբ արևի սրտից քամած։

Արևը, թեժ՝ մայր էր մտնում արևմուտքում—
Ու արյուն էր դաշտի վրա, թույն էր թքում։
Հորիզոնում վառվել էր մի կարմիր ֆուրա—
Ու արևավառ փայլ էր փռում դաշտի վրա։
Ու արտերը, ալեծածան, վառվել էին
Արեգակի կարմիր փայլով իրիկնային։—
Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝
Հրակարմիր տարածվել էր նրանց առաջ։

Ստեղծագործության այս հատվածում գործածված շուրջ 100 բառագործածության մեջ արևի, կարմիրի, կրակի, կրակի փայլ ու երանգի գաղափար արտահայտող բառերը, որոնք մոտիկ կամ հեռավոր ձևով խորհրդանշում են հեղափոխության ժամանակները, կազմում են 25 բառագործածություն (բանահյուսվածքում ընդգծված են), որ զգալի տոկոս են կազմում։ Եթե այս բառերի մի մասը հեղինակը վերցրել է մեր բառապաշարից, ապա մի մասն էլ ստեղծագործական պահի թելադրությամբ ստեղծել է ինքը, ինչպես՝ հրանման, հրակարմիր, արևավառ, արյունամած, արևավառ։ Ցարենցն այս օրերին տոգորված էր հեղափոխության, հրի ու կրակի գաղափարներով, և պատահական չէ, որ նա հեղափոխական գունաշղարշի միջից է նայում նաև իր սիրո առարկային.

Նոր է կարոտս հիմա, հուր է կարմիր ու հրդեհ։
Նոր է հմայքը, որով դու ուզում ես կախարդել։

Հուր ես դարձել ու կրակ, փայլ ես կարմիր ու
փրփուր,
Ինչպես օրերը այս տաք, ինչպես օրերը պուրպուր։

Շուրջդ օրերը վառվում ու հոլովվում են արագ՝
Օրերը տոթ ու այրող, ինչպես նայվածքդ հրակ։
Ինչպես երգեմ, չգիտեմ, կարմիր հմայքը քո այս,
Ինչպես ասեմ աշխարհին, որ աշխարհում արդեն
կաս։

Ընդգծված բառերը ցույց են տալիս, թե տասական թվականներին գրած այս բանաստեղծության մեջ ինչ կշիռ ունեն ժամանակի շունչը դրսևորող բառ-հասկացությունները՝ 62 բառագործածության մեջ 15 բառ, որ խորհրդանշում են կարմիրի ու կրակի, հրի ու հրդեհի օրերը։ «Լրոնզե քույր իմ» բանաստեղծության մեջ կա շուրջ 125 բառագործածություն, և սրանց

մեջ 40-ը հեղափոխության շունչն արտահայտող բառեր։ Միանգամայն բառագործածության այլ պատկեր կներկայանա մեզ, եթե քննելու լինենք նրա ավելի հասուն տարիների կամ պատանեկության շրջանի ստեղծագործությունները։

Այժմ համեմատության համար վերցնենք Վ. Տերյանի «Գիշեր և հուշեր» շարքից մի բանաստեղծություն.

Անվերջ գիշերի մռայլ վիհերում
Իմ մենակ սիրտն է ցավագին ճչում.
Ես մոլորվել եմ այս մութ աշխարհում,
Եվ ինձ խավարից ոչ ոք չի կանչում։

Գիշերն է փռել իր թևերը մութ,
Գիշերն է գերել իմ սիրտը ցաված.—
Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ
Եվ ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց։

Հողմն է հեկեկում անունջ վիհերում,
Օ՜, անհուն գիշեր, քեզ ո՞վ է փռել,
Ինչո՞ւ է շուրջս աշխարհը լռում,
Ո՞վ է իմ հոգու լույսերը մարել։

Այս ստեղծագործությունը կոչված է արտահայտելու բանաստեղծի տխուր ու մռայլ տրամադրությունը, որի համար նա ընտրել է ժխտական-բացասական տրամադրություն արտահայտող բառեր ու բառային խորհրդանիշներ (այստեղ չենք խոսում նույն կարգի քերականական ու ճարտասանական միջոցների մասին)։ Այսպիսի բառերից ու խորհրդանիշներից են գիշեր, մռայլ, վիհ, ցավագին, ճչալ, մոլորվել, մութ, խավար, ցաված, լաց, հողմ, հեկեկալ, անունջ, անհուն, լռել և մարել։ Ընդամենը 57 բառագործածություն, և 16-ը մռայլ տրամադրություն արտահայտելու համար են գործածված։ Տոկոսային հարաբերությունը հոգուտ բացասական տրամադրության բառերի կաճի, եթե սրանց ավելացնենք այս տեսակետից ինքնին չեզոք, սակայն կապակցություններում բացասական երանգավորում ստացած բառերը՝ անվերջ (անվերջ գիշերի), մենակ (մենակ սիրտ), փռել (գիշերն է փռել իր թևերը մութ=*չարագուշակ տարածվել*), գերել (գիշերն է գերել իմ սիրտը ցաված=*գերի դարձնել*), սուտ (երջանկության սուտ), օ (օ՜, անհուն գիշեր)։ Այս մռայլ տրամադրությունը սաստկացնելու նպատակով բանաստեղծը լրացրել է գիշեր բառը անվերջ, վիհ բառը՝ մռայլ,

սիրտ բառը՝ մենակ, ճչալ բառը՝ ցավագին, աշխարհ բառը՝ մութ, թեեր բառը՝ մութ, սիրտ բառը՝ ցաված, վիհ բառը՝ անունջ, գիշեր բառը՝ անհուն լրացումներով՝ բոլորն էլ բացասական զգայությունների հետ կապված բառեր։ Նուրբ զգացումներ ու տխուր խոհ արտահայտելու համար բանաստեղծն ընտրել է 1—3 վանկանի բառեր (միայն 2 բառում վանկերի քանակը 4 է), որպեսզի բանաստեղծության շունչը համապատասխանի բովանդակության ոգուն։ Հանգիտության պահանջով տողերի վերջերում ընտրված են հանգավորվող բառեր ու բառաձևեր (ճրչում—կանչում, մութ—սուտ և այլն)։ Բարձր մտավորականի հույզերն ու զգացումները անհամապատասխան ու անհարիր կլիներ արտահայտել հասարակ, ժողովրդական մտածողությանը պատշաճ բառերով ու կապակցություններով։ Այս է պատճառը, որ բանաստեղծության հյուսվածքում զգալի տեղ ունեն բացառապես գրական լեզվին բնորոշ բառեր, ինչպես՝ մոայլ, վիհ, ցավագին, գերել, որոնել, հողմ, ճեկեկալ, մարել, օ, անունջ, և ժողովրդական մտածողությանն անծանոթ կապակցություններ, ինչպես՝ գիշերի վիհեր, երջանկության սուտ, վերադարձի լաց, հողմն է ճեկեկում վիհերում, անհուն գիշեր, գիշեր, թեզ ո՞վ է փոել, որոնք բանաստեղծական մտածողության արտահայտություն են։ Այսպիսի ընտրողությունը, ինչպես տեսնում ենք, հանգեցնում է նրան, որ բանաստեղծական խոսքի յուրաքանչյուր բաղադրիչ հագեցվում է մեկից ավելի, երբեմն բազմաթիվ ինֆորմացիաներով, որի հետևանքով էլ մեծանում է այսպիսի խոսքի գեղագիտական արժեքը և ազդեցության ուժը։

Մենք այստեղ մի քանի օրինակով ցույց տվինք բառերի ընտրության միայն մասնավոր մի քանի երևույթներ։ Սակայն երբ քննելու լինենք խոսքի տարատեսակությունները տարբեր հեղինակների օրինակներով, ապա կտեսնենք, որ բառերի ընտրությունը կատարվում է բազմաթիվ պատճառներով, որոնց մասին խոսք է եղել վերը։ Այդ պատճառները բազմազան են։ Բառերն ընտրվում են ըստ թեմայի, ըստ գործառության (գեղարվեստական է, գիտական և այլն), ըստ նպատակադրման, ըստ խոսքի ժանրի (չափածո է, թե արձակ, դրամա է, ողբերգություն, թե կատակերգություն), ըստ խոսքի իրադրության (ում համար է ասվում, մենախոսություն է, թե տրամախոսություն), համապատասխան այն բանի, թե խոսքի հեղինակը ցանկանում է ստեղծել պատմական բներանգ, ցանկանում է պատկերավոր

արտահայտվել, ունկնդրի մեջ հույզ է ուզում առաջացնել, թե հեգնանք, ուզում է ծիծաղեցնել, թե տխրեցնել, մտքին ճշգրտություն, համառոտություն, խոսքին հանդիսավորություն, վերամբարձություն է տալիս, թե ժողովրդայնություն և այլն։ Բառերի ընտրության պատճառ կարող են դառնալ և այլ պահանջներ՝ կրկնաբանություններից (տավտոլոգիա) խուսափելու պահանջը, խոսքի բանաստեղծականության պահանջները, ինչպես, օրինակ, հանգիտությունը (հանգ, առձայնույթ, բաղաձայնույթ, հատած), կշռույթի և պարբերույթի ստեղծման պահանջները և այլն։ Այս բոլոր պատճառներով բառերի ընտրության օրինակներ բերելը զգալի տեղ ու ժամանակ կպահանջեր։ Մենք բավարարվենք բերած օրինակներով և Հ. Սահյանի մի բանաստեղծությամբ, որտեղ ընդգծված բառերը մերօրյա բանաստեղծի խոսքը կապում են Քուչակի ժամանակների հետ՝ ստեղծում ուշ միջնադարի ժամանակների պատրանք։

Բերանդ բեր համբուրեմ,
Արտուտիկ, մի հայրեն ասա։
Հայրենեներ չէին գրում
Սաադին ու Հայնեն, ասա։
Սրտիկս դող է ընկնում
Քուչակի մի ձայնեն, ասա,
Սրտիկս էլ եթե հանեն,
Կրակ տան ու այրեն, ասա,
Իմ այրված սրտի միջից
Հայրենը չհանեն, ասա...
Հանեն էլ, ամեն բառից
Քուչակներ կհառնեն, ասա։

Բառերի ընտրության երկու եղանակ գոյություն ունի։ Մի դեպքում այն կատարվում է ենթագիտակցաբար, ինքնաբերաբար, երբ մարդ խոսում է կամ գրում՝ միաժամանակ ստեղծելով, ստեղծագործելով։ Այս դեպքում ևս մտավոր գործունեությունը գտնվում է գիտակցության հսկողության տակ։ Մյուս դեպքում՝ պատրաստի խոսքի մշակման ժամանակ, գործում է սոսկ գիտակցությունը, գիտակցական-ստեղծագործականը, իսկ ենթագիտակցականը ետ է մղվում, պասիվանում, ու գիտակցաբար մի բառը փոխարինվում է մյուսով՝ վերը նշված պատճառների թելադրանքով։ Երկու դեպքերում էլ շատ կարևոր է բառի

ամենանպատակահարմար ընտրությունը և ճիշտ ու տեղին գործածությունը։ Ճիշտ բառը ճիշտ տեղում (արտահայտությունը ուշ միջնադարի հեղինակ Գրիգոր Վկայասերինն է),— ահա մի նշանաբան, որով պետք է առաջնորդվի ոչ միայն գիտնականն ու գրողը, այլև յուրաքանչյուր քաղաքացի։ Սա լեզվական վարվեցողության անխախտ նշանաբան պետք է դառնա բոլորի համար։ Գեղարվեստական խոսքի մեծ վարպետ հանճարեղ Թումանյանն առանց չափազանցության էր ասում, որ իսկական գեղագետի համար ճիշտ ընտրված բառը մի աշխարհ արժե։

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառապաշարից անկախ գոյություն ունեն և լեզվի մի շերտ են կազմում բառերի կայուն կապակցությունները՝ բառակապակցություններ[25]: *Բառակապակցությունները երկու և ավելի բառերի կայունացած, ժամանակի ընթացքում ձևաչափված և իմաստային միություն դարձած կամ նոր իմաստավորում ստացած կապակցություններ են, որ պատրաստի ձևով գոյություն ունեն լեզվում և միասնաբար առնվում են նախադասության մեջ՝ իբրև մեկ բաղադրիչ, ճիշտ այնպես, ինչպես բառն է դառնում նախադասություն կազմող լեզվական ինքնուրույն տարր։ Երկու հատկանիշով բառակապակցությունը և բառը նման են միմյանց. մեկը շարահյուսական գործառույթն է, այն, որ բառակապակցությունը բառի նման միանգամից առնվում է նախադասության մեջ իբրև մեկ շարահյուսական միավոր, իսկ մյուսն այն է, որ բառակապակցությունը իմաստային մեկ ամ-*

---

[25] Արդի հայ լեզվաբանության մեջ, ռուս լեզվաբանության օրինակով, բառակապակցություն տերմինը գործածվում է բառերի շարահյուսական ազատ կապակցությունների համար, իսկ կայուն կապակցությունների տարատեսակությունները դիտվում են բառապաշարի մաս, դրվում են բառագիտության մեջ՝ մի մասն իբրև բարդ բառերի տեսակ (անվանական և բայական հարադրություններ), մի մասն էլ իբրև բաղադրյալ անուններ և դարձվածաբանություն։ Մենք բարդ բառ համարում ենք միայն այն միավորները, որոնք կարող են ունենալ համարժեք կապակցություններ, ինչպես, օրինակ, լեռնագագաթ-լեռան գագաթ, քարաշեն-քարից շինված, բուն-բարձրագույն ուսումնական հաստատություն և այլն։ Այս կանոնին չբավարարող միավորները բարդություն չեն։

բողջություն է և բառի նման արտահայտում է մեկ հասկացություն։ Այսպես, օրինակ, or ու գիշեր *երկու առանձին բառերից կազմված մի կայուն կապակցություն է, որ ունի* անընդհատ *նշանակությունը և այդ նշանակությամբ էլ մտնում է նախադասություն՝ իբրև շարահյուսական մեկ միավոր* (or ու գիշեր հայրս աշխատում էր մեր տան կարիքները հոգալու համար)։ *Նույն ձևով իմաստային մեկ միություն և մեկ բառակապակցություն են մեր լեզվում* տուն ու տեղ *(ամբողջ ունեցվածքը),* խաղ ու պար *(շատ հեշտ),* առաջը կտրել *(արգելել),* պար գալ *(պարել),* պտույտ գալ *(պտտվել),* խույս տալ *(խուսափել),* մեջ ընկնել *(միջամտել),* դուրս ընկնել *(այլասերվել),* ոտքը մի տեղից կտրել *(մեկին արգելել ինչ-որ տեղ գնալ),* քանին քքու չասել *(չնեղացնել, թողնել իր ուզածին),* երես տալ *(շփացնել),* եզան լեզու *(բույսի անվանում),* սատանի եղունգ *(հանքատեսակ),* Խորհրդային Միության հերոս, կաբինետային գիտնական *և այլն։*

Բառակապակցությունները լինում են չորս տեսակ՝ կրկնավորներ, հարադրավորներ, բաղադրավորներ և դարձվածներ։

1. Կրկնավորները *միևնույն բառի կրկնությամբ կազմված կայուն կապակցություններ են, որ գոյություն ունեն մեր լեզվում պատրաստի ձևով, ինչպես՝* արագ-արագ, գունդ-գունդ, թել-թել, խումբ-խումբ, ծանր-ծանր, կաթիլ-կաթիլ, կամաց-կամաց, մեկ-մեկ, մի-մի, ստեպ-ստեպ, վռազ-վռազ, տեղ-տեղ, ուրախ-ուրախ, փաթիլ-փաթիլ, փունջ-փունջ, քանի-քանի, զինչ ու զինչ, քեզ ու քեզ, բառ առ բառ, էջ առ էջ, մեկ առ մեկ, մերթ ընդ մերթ, մեջ ընդ մեջ։ *Կրկնավորների մի մասի բաղադրիչներից մեկը կամ հնչյունափոխված է լինում և կամ ունենում է հնչյունի հավելում, ինչպես և հնչյունի անկում։ Կրկնավորի առաջին եզրի առաջին ձայնավորը* ա *լինելու դեպքում հաջորդ եզրում* ա-*ն փոխվում է* ու-*ի, ինչպես՝* ծակ-ծուկ, մազ-մուզ, մարդ-մուրդ, շախկ-շուխկ, չախկ-չուխկ, փալաս-փուլուս։ *Եթե առաջին եզրում բառն սկսվում է ձայնավորով, ապա երկրորդ եզրի սկզբում հավելվում է* մ *կամ* շ, *ինչպես՝* աղ-մաղ, աղջիկ-մաղջիկ, աման-շաման, էջ-մեջ, ոչխար-մոչխար, ուղտ-մուղտ։ *Այն դեպքում, երբ կրկնավորի առաջին եզրը ըսկըսվում է բաղաձայնով, երկրորդ եզրում այդ բաղաձայնը, անկախ նրանից, թե ինչ բաղաձայն է, փոխվում է* մ-*ի, ինչպես՝* գուլպա-մուլպա, թելիկ-մելիկ, խնձոր-մնձոր, կով-մով,

շուն-մուն, շուտ ու մուտ, շրխկ-մրխկ, տուն-մուն, փալաս-մալաս, ինել-մնել: *Հաղվադեպ միայն կրկնավորի առաջին եզրում բառը կորցնում է առաջին բաղաձայնը, ինչպես* այլուն-փայլուն *և* արմաղ-շարմաղ *կրկնավորներում է։*

Պետք է ասենք, որ կրկնավորների այս տարատեսակությունները զանազան ոճական լիցքավորումներ են հանդես բերում։ Առաջին խմբում թվարկվածները (արագ-արագ *և այլն) գործողության կամ առարկայի հատկանիշ են ցույց տալիս՝ մեծ մասամբ հատկանիշի ընդգծումով կամ խստացումով։* Այլուն-փայլուն *և* արմաղ-շարմաղ *կրկնավորներում ևս իմաստի խստացում կա, այնինչ մյուս դեպքերի (հնչյունափոխությամբ և հավելմամբ կազմված) կրկնավորներն արտահայտում են խոսողի արհամարհական վերաբերմունքն օբյեկտի նկատմամբ։ Ավելացնենք նաև, որ կրկնավորներն ընդհանրապես ժողովրդական խոսքի երևույթ են (թեև կան նաև գրական կրկնավորներ), այդ պատճառով էլ խոսք են բերում ժողովրդական խոսքին հատուկ ոճական երանգները (թեթևություն, պարզություն, ժողովրդական ոգի և այլն) և տեղ չունեն գործառական որոշ ոճերում (գիտական, հրապարակախոսական, վարչա-գործարարական և այլն)։*

2. Հ ա ր ա դ ր ա վ ո ր ն ե ր ի *մեջ տարբերակվում են երկու ենթատեսակներ՝ անվանական և բայական։* Անվանական հարադրության *բաղադրիչները երեք կարգի իմաստային հարաբերությամբ են կապված, նույնական, առնչակցական և հակադրական։* Նույնական *են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները նույն իմաստն ունեն կամ իմաստով մոտ են, ինչպես՝* անուշ-մեղուշ, գոռում-գոչյուն, շխկոց-թխկոց, մոզած-ճոզած, ուռած-փիված, ախ ու վախ, ահ ու դող, ահ ու զար, բան ու գործ, գունդ ու կծիկ, դեղ ու ճար, լաց ու թաց, լուռ ու մունջ, խաղ ու պար, խաղք ու խայտառակ, ծայր ու սահման, ճար ու հնար, ճար ու ճամփա, շենք ու շնորհք, ոչ ու փուչ, շար ու շառ, շոռ ու ցավ: *Այս խմբի մեջ մտնող անվանական հարադրություններն արտահայտում են գաղափարի սաստկացում։* Առնչակցական *են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները իմաստով առնչակից բառեր են, ինչպես՝* կերած-խմած, ձյուն-ձմեռ, թակ ու մահակ, թուր ու թվանք, թև ու թիկունք, խելք ու միտք, հայր ու մայր, շուն ու շանգյալ, ոտ ու ձեռք, ջարդ ու խուրդ, տեր ու տիրական, տուր ու դմփոց,

ցաք ու ցրիվ: Հակադրական կապակցության մեջ հարադրավորների բաղադրիչները հակադիր իմաստներ ունեն, ինչպես՝ ամառ-ձմեռ, գիշեր-ցերեկ, ավել-պակաս, լավ-վատ, աջ ու ձախ, գիշեր ու ցերեկ, դես ու դեն, ետ ու առաջ, խեր ու շառ, ներս ու դուրս, վեր ու վար, տակ ու գլուխ, տակն ու վրա, օր ու գիշեր, այսպես թե այնպես, կամա թե ակամա, վաղ թե ուշ: Եթե առնչակցական հարադրությունները ևս իմաստի սաստկացում են արտահայտում, ապա հակադրական կապակցությամբ կազմվածները՝ երկու ծայրաթևերի միջև եղածի ընդգրկում:

Բայական հարադրությունները մեծ ծավալում ունեն մեր լեզվում և իմաստակազմության կարևոր միջոց են: Բայական հարադրությունների բաղադրիչներից վերջինը միշտ բայ է, իսկ առաջինը՝ որևէ անուն, մակբայ, անվանական հարադրություն և կամ բայ, ինչպես դուրս անել, դուրս բերել, դուրս գցել, դուրս բնկնել, դուրս հանել, դուրս տանել, թափ տալ, խույս տալ, ծուռ դնել, կրակ կտրել, հավատ ընծայել, հավատ ներշնչել, պար ածել, պար գալ, վրեժ լուծել, ի կատար ածել, ի վիճակի լինել, կեր ու խում անել, կտոր-կտոր անել, կուշ ու ձիգ գալ, մաս-մաս անել, ասել պրծնել, բերել հասցնել, գալ հասնել, թողնել հեռանալ, վառել թողնել, տալ անցնել, գնալ-գալ, ծլել-ծաղկել, ուտել-խմել: Բայական հարադրավորների մեջ մի խումբ են կազմում միավորական և բազմավորական բայերից կազմվածները, ինչպես՝ բզել-բզբզել, գոռալ-գոռգոռալ, դաղել-դաղդղորել, ծալել-ծալծլել, ծամել-ծամծմել, պաչել-պաչպչել, քաշել-քաշքշել: Մի խումբ էլ կազմում են նույն բայի հաստատական և ժխտական ձևերով, ինչպես՝ ասած-չասած, արած-չարած, եղած-չեղած, ուզես չուզես, ունեմ-չունեմ:

Մեծ է հարադրավորների դերը խոսքի ժողովրդականության և երաժշտականության համար: Ունենալով հիմնականում ժողովրդական ծագում, հարադրավորները ժողովրդական ոգի են բերում խոսք, խոսքին տալիս երաժշտականություն, պատկերավորություն, բանաստեղծականություն: Առանձնապես երաժշտականություն են տալիս կրկնավորները և այն հարադրավորները, որոնք ստեղծված են համահնչյունության սկզբունքով: Վերջիններս երկու տեսակ են լինում: Մի տեսակի մեջ ենք դնում հավասար վանկերով կազմված հարադրավորները, ինչպես՝ ախ ու վախ, լաց ու կոծ, ծուռ ու մուռ, հաց ու թաց, ձեն-ձուն, շուռ ու մուռ, աման-չաման, անուշ-մեղուշ, թելիկ-մելիկ,

խորոտիկ-մորոտիկ, չալիկ-մալիկ, տխուր-տրտում, օրոր-շորոր, ալալոց-թալալոց, ափալ-թափալ, բգիկ-բգիկ, *իսկ մյուս տեսակի մեջ այն հարադրավորները, որոնց առաջին եզրում մեկ վանկանի բառ է, իսկ երկրորդ եզրում՝ երկու կամ երեք, ինչպես՝* դեղ ու դարման, դուռ ու դռկից, զառ ու զարբաբ, բուր ու թվանք, խաղ ու խայտառակ, ճար ու ճամփա, շենք ու շնորհք, շուն ու շանգյալ, ջան ու ջիգյար, սեր ու սոյբաթ, տեր ու տիրական, փոր ու փոշման: *Համահնչյունության սկզբունքով կազմված հարադրավորները մեր լեզվում այնքան շատ են, որ մարդ ակամա մտածում է, թե բանաստեղծության սիրահար մեր ժողովուրդը առօրյա զրույցն էլ ուզում է բանաստեղծություն դարձնել։*

Հարադրավորները (մանավանդ նրանք, որոնք ունեն միաբառ զուգահեռներ) խոսքը դարձնում են հասարակ, անմիջական, իսկ միաբառ զուգահեռների հետ գործածվելիս նրան տալիս են պեսպիսություն։ Հարադրավորները կարևոր դեր ունեն իմաստակազմության մեջ. նրանց միջոցով արտահայտում ենք այնպիսի գաղափարներ, որոնց արտահայտման համար հատուկ բառեր չեն ստեղծվել։

3. Բ ա ղ ա դ ր ա վ ո ր ն ե ր *են երկու և ավելի բառերի այն կայուն կապակցությունները, որոնք անվանում են մեկ (հասարակ կամ հատուկ) հասկացություն։ Այդպիսի անվանումներ են, օրինակ՝* եզան լեզու *(բույս)*, գառան դմակ *(խաղողի տեսակ)*, սատանի եղունգ *(հանքատեսակ)*, շտապ օգնություն, ենթաստամոքսային գեղձ, տասներկումատնյա աղիք, գթության քույր, խոսքի մաս, հատուկ անուն, քառակուսի արմատ, ուղիղ անկյուն, կարմիր անկյուն, Մեծ արջ, Սև ծով, Սևանա լիճ, Հին Գորիս *(գյուղի անուն)*, Վերին Խաթունարխ, Դոնի Ռոստով, Խաղաղ օվկիանոս:

Բաղադրավորները հիմնականում տերմինային հասկացություններ են, ուստի և դրանց իմացությունը պարտադիր է կյանքի տվյալ բնագավառի հետ կապված մարդկանց համար։ Հայերենում բաղադրավորները մեծ թիվ են կազմում։ Դժբախտաբար դրանց բառարանը չունենալու պատճառով ճիշտ թիվ ասել չենք կարող, բայց մոտավոր պատկերացում տալու համար բերենք բաղադրավորների մի քանի օրինակ միայն հասարակական-քաղաքական կյանքի բնագավառից. աշխատանքային կարգապահություն, աշխատանքային ռեզերվներ, աշխատանքի ար-

տադրողականություն, աշխատանքի վետերան, աշխատավորական կոլեկտիվ, առաջավոր փորձ, արդյունաբերական միավորում, արտադրական միավորում, արտադրության միջոցներ, արտաքին առևտուր, արտաքին քաղաքականություն, բալիստիկ հրթիռ, բնորոշ գիծ, գաղափարական ճակատ, գաղափարական պայքար, գերագույն խորհուրդ, գիտատեխնիկական առաջընթաց, գլխավոր քարտուղար, գյուղատնտեսական կուլտուրա, երկաթյա կարգապահություն, զարգացող երկրներ, թեթև արդյունաբերություն, ժողովրդական տնտեսություն, ինքնավար մարզ, լարվածության թուլացում, խաղաղ գոյակցություն, ծանր արդյունաբերություն, ծանր ինդուստրիա, կապիտալ ներդրում, կենտրոնական կոմիտե, կոմունիստական շաբաթօրյակ, կուլտուրական հեղափոխություն, կուսակցական գիծ, կուսակցական կյանք, կուսակցական մարմիններ, հանդիպական պլան, հանրային սեփականություն, հարվածային աշխատանք, հարվածային հերթափոխ, հարուստ հեկտար, հնգամյակի բնագիծ, մեռյալ կետ, մինիստրական պորտֆել, մինիստրների խորհուրդ, մինիստրների կաբինետ, միութենական հանրապետություն, ներքին քաղաքականություն, նյութատեխնիկական բազա, պարենային ծրագիր, պատերազմի վետերան, ռազմական պոտենցիալ, սառը պատերազմ, սոցիալիստական մրցություն, սոցիալիստական պարտավորություն, սպառազինությունների մրցավազք, ստախանովյան շարժում, տեխնիկայի նվաճում, տնտեսական մարմին(ներ), քաղաքական գիծ, քաղաքական ակտիվություն, քաղաքական կամպանիա, քաղաքական մակարդակ, քաղաքական միջոցառում, քաղաքական նշանակություն, քաղաքացիական պարտք *և այլն։*

Բաղադրավոր կապակցությունների մի մասը պետությունների, հիմնարկների, կուսակցությունների, կազմակերպությունների, զանազան միավորումների անուններ են։ Բաղադրավոր կապակցությունները ժամանակակից հասարակական ու վարչաքաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի, լուսավորության ու մշակույթի բուռն զարգացման ու առաջընթացի հետ մեծ ծավալում են ստանում՝ հանդես գալով իբրև լեզվի հարստացման մեջ բառակազմությանը համարժեք ու հավասար մի նոր երևույթ։ *Այսպիսի կապակցություններն են, որ հիմք են դառնում հապավումների համար, ինչպես՝* ՄԱԿ—միավորված ազգերի կազմակերպություն, ԽՍՀՄ—Խորհրդային Սոցիալիս-

տական Հանրապետությունների Միություն, կենտկոմ—կենտրոնական կոմիտե, կոլտնտեսություն—կոլեկտիվ տնտեսություն, աշխor—աշխատանքային or, սոցմրցություն—սոցիալիստական մրցություն:

Բաղադրավորների մի տեսակ էլ մարդկանց հատուկ անուններն են՝ հայրանունների ու ազգանունների հետ միասնաբար առած:

Բաղադրավորների մի տեսակ են կազմում շարահյուսական զանազան սերտաճումները՝ մեծ մասամբ ՈՐ և ԹԵ թարմատար բաղադրիչներով, ինչպես՝ այնպես nr, մանավանդ nr, ինչ-nr, ինչպես nr, հենց nr, չէ՞ nr, քանի nr, թե nr, միայն թե, հազիվ թե, դժվար թե, քան թե, կարծես թե, ինչպես թե, ոնց թե, իբր թե, իբրև թե, թե չէ, եթե ոչ, ապա թե ոչ, ինչ է թե, փոքr ի շատե, այնու ամենայնիվ, մի ըստ միոջե, համենայն դեպս *և այլն:*

4. Դարձվածները *բառակապակցությունների մեջ ուրույն տեղ ունեն/Դրանք երկու և ավելի բառերի վերաիմաստավորված այն կայուն կապակցություններն են, որոնք ունեն փոխաբերական իմաստ:}Ի տարբերություն բաղադրավորների, որոնց մեջ հիմնական իմաստը կրում է քերականական լրացյալ անդամը* (խաղաղ գոյակցություն *նշանակում է գոյակցություն, և թեև* խաղաղ *բառը նոր իմաստ է մտցնում կապակցության մեջ, այնուամենայնիվ գոյակցությունը մնում է գոյակցություն), և ամբողջ կապակցությունը ունենում է սոսկ անվանողական իմաստ, դարձվածն ունենում է փոխաբերական իմաստ: Այսպես, օրինակ,* գլուխն ուտել *բառակապակցությունը դարձված է, որովհետև այս երկու բառերը միասնաբար մի նոր՝ փոխաբերական իմաստ են արտահայտում՝ սպանել, ոչնչացնել, վերացնել:* Նույն ձևով՝ ականջը բուրդ խրել, մատը մատին շտալ, բուրդը գզել, աչքով աչք չունենալ, արջը կամին լծել *(անշնորհք մեկին պաշտոն տալ),* մեծ էշը ախոռում թողնել, միրուքի տակով անց կենալ *(մի հնարքով մեկի դիտավորությունն իմանալ) կապակցությունները դարձվածներ են, որովհետև դրանք միասնաբար փոխաբերական իմաստներ են արտահայտում:*

Դարձվածներն ըստ գործածության ոլորտի լինում են ժողովրդական և գրական: Ժողովրդական ծագում ունեցող դարձվածները ժողովրդի առօրյա կյանքից առնված, ժողովրդի մըտածողությունն ու ոգին արտահայտող բառակապակցություններ են՝ ոճական լիցքավորումով հագեցած: Այսպես, օրինակ,

շուրը շնից՝ երկուսն էլ մի տնից, էշը ցեխից հանել, իր էշը քշել, մեկի վրա ձի քշել, մեկի զուռնայով (դուդուկով) պտրել, իր քթից դենը ոչինչ չտեսնել, ոտքը ոտքի առաջ չդնել, ոտին տեղ անել, կաշին քերթել, գլուխն ուսերին ծանրություն անել, մեկի գլուխը լվանալ, կուժն ու կուլան մեկի գլխին ջարդել, այբբ փալասով բռնել, քթին բուրվառ տալ, քիթը ցցել, խոփը քարին առնել, տունը քանդվել, խոսքը կտուրը գցել, ձեռքից բաց թողնել, մի ձեռքով երկու ձմերուկ բռնել, ունքը շինելու փոխարեն աչքն էլ հանել, աղջի՞կ ես՝ թե՞ տղա, գլուխը քարովը տալ, փեշի քարը թափել: *Սրանք հայերենում մեծ թիվ են կազմում (ավելի քան 10 000) և ժողովրդական խոսքի համար անսպառելի ու անփոխարինելի հարստություն են, գրական խոսք են բերում ժողովրդական ոգի, պարզություն, խոսքին տալիս թեթևություն, խոսքը դարձնում մտերմիկ ու անմիջական։ Գրական ոլորտի դարձվածները քանակով շատ չեն և չունեն Ժողովրդականի հարուստ լիցքավորումը, սակայն մեծ մասամբ աստվածաշնչական, առասպելաբանական և պատմական հին գրական աղբյուրներից բխած լինելով՝ բերում են իրենց հետ հնության իմաստությունը, խոսքին տալիս վսեմություն ու հնության փայլ, խոսքը դարձնում վեհաշուք։ Այսպիսի դարձվածներ են, օրինակ,* Արիադնայի թել, ամիլլեսյան գարշապար, լուկուլլոսյան խրախճանք, պյուռոսյան հաղթանակ, քավության նոխազ, ձայն բարբառո հանապատի, ձայն բազմաց՝ ձայն աստուծո, ակն ընդ ական՝ ատամն ընդ ատաման, հավատո հանգանակ, այբից մինչև քե: *Արտահայտությունն ազնիվ ու վայելուչ են դարձնում նաև գրական միջավայրում ստեղծված դարձվածները, ինչպիսիք են՝* հույսեր փայփայել, կյանքի կոչել, երկնից աստղեր վայր բերել, լեզվին ազատություն տալ, թողնել բախտի քմահաճույքին, ուշադրությունը նվիրել մի բանի, լայն տարածում գտնել, ջերմ արձագանք գտնել, մի բանի վկայությունը լինել, իր լավագույն արտահայտությունը գտնել (մի բանում), անկողնուն գերի դառնալ, անկողնուն ծառայել, անկողնուն գամվել, անարգանքի սյունին գամել *և այլն։*

Ի տարբերություն բառակապակցությունների մյուս տեսակների, դարձվածները, հատկապես ժողովրդական դարձվածները, ոճական մեծ լիցքավորում ունեն, որն արտահայտվում է հետևյալում։

ա. Դարձվածներն աչքի են ընկնում պատկերավորությամբ

և արտահայտչականությամբ. դարձվածների մեծ մասն ընդգրծված պատկեր է ներկայացնում, ինչպես, օրինակ՝ գլխին նըստեցնել, համ նալին խփել, համ մեխին, երկու ոտը մի մաշիկում դնել, իր զուռնան փչել, ցեխը կոխել՝ հանել, ստերի տոպրակը բաց անել, ձեռքը ծոցին մնալ, փեշը տանել գոմշի պոզով գցել, վիզ ծռել, ականջին օղ անել, թանի մեջ ընկած մուկ դառնալ: *Դարձվածների այս առանձնահատկությունը սերտորեն կապված է նրանց առաջացման հիմքի հետ. դարձվածների մի մասի հիմքում համեմատությունն է, մի մասի հիմքում՝ փոխակերպությունները, մի մասի հիմքում էլ՝ ձևերը (ոճական այս կարգերի մասին տես հաջորդ գրքում)։ Բերենք միայն մի քանի օրինակներ։ Համեմատության հիմքի վրա են ձևավորվել՝* թրջված հավ դառնալ, ջաղացը կորցնել՝ չախչախի ետևից մաղ գալ, չոփ դառնալ, երեսը գոմշի կաշի շինել, ֆիքը բոնես՝ ճոգին կտա: *Փոխանունությամբ են ստեղծվել՝* ստերի տոպրակը բաց անել, բերան բացել, լեզուն հանել, ցեխը կոխել *(նախորդ գործողության անվանում՝ հաջորդողի փոխարեն), խելամտությամբ՝* ոտքը մի տեղ ընկնել, ֆիքը մի բանի մեջ խոթել, գլուխը ձեռքն ընկնել, մեկի ոտքը մի տեղից կտրել *(մասն ամբողջի փոխարեն), չափազանցությամբ՝* մազի կամուրջ անցնել, ասեղի ծակից անցնել, ասեղի ծակից Հնդկաստան նայել, լուն ուտա շինել, *աստիճանի ձևով՝* ջրից ելնել՝ ջրհեղեղն ընկնել, մրից ելնել՝ մրջուրն ընկնել, անձրևից փախչել՝ ջուրն ընկնել, ունքը շինելու փոխարեն աչքն էլ հանել, *հակադրությամբ՝* երկու կրակի միջև զտնվել, երկու քարի արանքում մնալ, հա՛մ նալին խրփել, հա՛մ մեխին, վերևն ասված, ներքևը՝ դու, ծուռ նստել՝ շիտակ խոսել:

բ. Դարձվածներն արտահայտում են ամենաբազմազան կարգի վերաբերմունքներ, առավել խոսողի սուբյեկտիվ՝ բացասական վերաբերմունքները (թշնամանք, արհամարհանք, հեգնանք և այլն), ինչպես՝ սարի արջ, իշի գլուխ, մեծ-մեծ բրդել, ուղտի ականջում ֆնած լինել, փորը ծխով լցնել, երեսը պնդացնել, երեսը գոմշի կաշի շինել, շան օրը գցել, գլուխը հաստ, գլխին զոռ տալ, գլուխը քարովը տալ, ականջը օձ մրտնել, ականջի միրը մաղ շինել, մյուսը՝ խախալ, լեզուն իրեն քաշել, ֆիքն ամեն տեղ խոթել, կապը կտրած, թոկից փախած, ասեղ մաշկող, մութ տեղը մազ մանող, բերանը (ոեխը) բան գրցել *(կաշառել)*, գրպանում մկները պար են գալիս, գրպանում

մկները ջիրիդ են խաղում, վիզը տանձի կոթ դառնալ, ֆիթը կախել, թանին թթու ասել, մոութը երկարացնել, մաստակը ցեխն ընկնել, գլխին ֆոլոզ դնել, գլուխը լոլել, գլուխը ֆոլոմբստել, ֆթին բուրվառ տալ, դորթ ու բեշ անել *և այլն։ Դարձվածների անհամեմատ քիչ մասն արտահայտում է խոսողի դրական վերաբերմունքը, այսպիսի դարձվածներ են՝* սրտից փուշ հանող, սրտից ջուր խմել, աչֆի լույս, գլխիդ մեռնեմ, գլխովդ պտույտ գամ, խելֆիդ մեռնեմ, ցավդ տանեմ, հոգիդ սիրեմ, հոգու հատոր, ջանին մեռնեմ:

գ. Ժողովրդական ծագում ունեցող դարձվածները միջոց են միտքը բազմազան ձևերով արտահայտելու համար։ Դրանց մի մասը, հատկապես բայական դարձվածները, կազմում է համանիշների և նույնանիշների շարքեր՝ տարբեր պատկերներով և վերաբերմունքներով արտահայտելով միևնույն կամ մոտ գաղափարներ։ Բերենք մի քանի օրինակներ։ Լռել *իմաստը կարելի է արտահայտել մի շարք դարձվածներով, ինչպես՝* բերանին կապ դնել, բերանը կապել՝ նստել, լեզուն պարկը դնել, լեզուն ծակը կոխել *(գռեհիկ)*, լեզուն փորը ֆաշել, լեզուն փորն ընկնել, լեզուն կպչել, լեզուն կտրվել, լեզուն բունը դնել, ձայնը փորը գրցել, ձայնը փորն ընկնել, *որոնցից յուրաքանչյուրը մի տեսակ վերաբերմունք է արտահայտում օբյեկտի նկատմամբ։* Խաբել, հիմարացնել *իմաստը կարելի է արտահայտել* հիմարի տեղ դրնել, մատներդ վրա խաղացնել, աչֆերը կապել, աչֆերին թոզ փչել, գլուխը թոլոզել, գլուխը ֆոլոմստել, գլուխը ֆոլոզ դնել, գլուխը յուղել, գլխին յուղ ֆսել, գլուխը լոլել, գլուխը կլեկել, գլուխը թլսորել, գլխին աղ անել, գլխին փոշի անել, ֆթից բրոնել՝ ման ածել *դարձվածներով։* Նիհարել *իմաստը կարելի է արտահայտել* չոր տախտակ դառնալ, կմախք դառնալ, ոսկոր ու կաշի դառնալ, ոսկորը ոսկորն անցնել, ոսկորը ոսկորին ձեն կտա, ֆիթը մնալ, վիզը տանձի կոթ դառնալ: Հիմար (հիմարավուն) *իմաստը կարելի է արտահայտել* խելֆից բարակ, խելֆից ծարավ, խելֆից թեթև, ծուծը բարակ, բամբակը նոսր, տախտակը սլակաս, ծալը պակաս, շապիկը կարճ, խելֆը գնալ-գալ անել, խելֆին ֆամի դիպչել, Հակոն տա՞նն է (Ակոն տանը չէ) *դարձվածներով։* Փող չունենալ (աղֆատ լինել) *գաղափարը կարելի է արտահայտել* գրպանը դատարկ, գրպանը ծակ, ֆսակը դատարկ, ֆսակը ծակ, ձեռը դատարկ, ձեռը պակաս, գրպանում

մկներ են պար գալիս, գրպանում մկները ջիրիդ են խաղում դարձվածներով։

Մեծ մասամբ ժողովրդական ծագում ունենալու պատճառով դարձվածները խոսք են բերում, ինչպես ասվել է, ժողովրդական ոգի, նրան տալիս անմիջականության հաճելիությունը, նըպաստում խոսքի բանաստեղծականությանը, խոսքը դարձնում բազմազան ու հետաքրքրական։ Դարձվածները մեր լեզվի անկապտելի հարստությունն են։ Հայ գրականության երախտավորներ Աբովյանը, Պռոշյանը, Թումանյանը, Իսահակյանը, Դեմիրճյանը, Բակունցը և ուրիշներ մեր ժողովրդի ստեղծած այդ գանձերը բերին գեղարվեստական գրականություն, նրան տվին ժողովրդականության կենդանի շունչ, հարստացնելով մեր նոր գրական լեզուն մի կենսատու զարկերակով։

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ

Լեզվի ամբողջ բառապաշարը բաժանվում է խոսքի մասերի՝ բառերի այնպիսի խմբերի, որոնցից յուրաքանչյուրը իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական կարգերով և խոսքի մեջ ունեցած իր դերով տարբեր է մյուսից։ Ժամանակակից հայոց լեզվում տասը խոսքի մասերից գոյականը, առարկայական իմաստ ունեցող դերանունները և բայը մյուսներից տարբերվում են նրանով, որ ունեն հարացուցային ձևեր, այսինքն թեքվում են և դառնում հարացուցային հարաբերությունների միավորներ։ Գոյականը, ածականը, թվականը, բայը, մակբայը և դերանունը մյուսներից տարբերվում են նրանով, որ ծառայում են միտք, դատողություն արտահայտելուն և դառնում են նախադասության անդամներ, այսինքն մտնում են շարակարգային հարաբերությունների մեջ և դառնում շարակարգային հարաբերությունների միավորներ։ Կապը և շաղկապը ծառայում են շարակարգային հարաբերությունների արտահայտմանը, վերաբերականները կոչված են արտահայտելու խոսողի զանազան վերաբերմունքները, ձայնարկությունները՝ նրա զգացմունքները, իսկ կամային բառերը՝ կամքը։ Սրանցից բացի կան նաև բնաձայնություններ։ Խոսքի մասերը նախադասության մեջ և խոս-

քում հանդես են գալիս իրենց բառային-ֆիզիկական, խոսքի մասային, իմաստաբանական, քերականական և ոճաբանական առանձնահատկություններով, որոնք կազմում են լեզվագիտական կարգեր։ Լեզվագիտական կարգերը կոչված են արտահայտելու և արտացոլելու իրական աշխարհի իրերն ու երևույթները, նրանց բազմապան հարաբերություններն ու առնչությունները։ որոնք մեր աշխարհաճանաչողության համաձայն մտածողության մեջ բաժանված են մտածական-իմացական կարգերի։ Մտածական-իմացական այս կարգերը, որ կոչվում են հասկացական կարգեր, տարբեր են լեզվագիտական կարգերից, և միևնույն հասկացական կարգը տարբեր խոսքի մասեր տարբեր ձևով են արտացոլում։ Այսպես, օրինակ, ժամանակի հասկացական կարգը անսկիզբի ու անվերջի վերացական մի ըմբռնում է, որի բովանդակությունը խոսքի մասերից գոյականը մի ձևով է արտացոլում (օրինակ՝ վայրկյան, րոպե, ժամ, տարի, տառնամյակ, դար, ներկա, գալիք, անցյալ և այլն), մակբայը՝ մի այլ ձևով (օրինակ՝ երեկ, այսօր, այժմ, հետո և այլն), դերանունը՝ մի ուրիշ ձևով (օրինակ՝ երբ), և բայը՝ միանգամայն այլ ձևով (օրինակ՝ գրեցի, գրում եմ, գրելու եմ)։ Այսպես են նաև տարածության, թվի կամ քանակի, եղանակավորության, խոսողի զանազան վերաբերմունքների, ժխտման և հաստատման, ատիճանականության, հաջորդականության և համագոյակցության, սեռի, դեմքի, առարկայական զանազան հարաբերությունների հասկացական կարգերը, որոնց բովանդակության արտահայտման համար կոչված են լեզվագիտական զանազան կարգեր և զանազան միջոցներ։ Ահա այս կարգերի և միջոցների գոյությունը ևս դառնում է աղբյուր միևնույն մտքի կամ իմաստի արտահայտման բազմազանության, հետևաբար և ոճական միջոցների հարստության։

Խոսքի մասերը միմյանցից տարբերվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր ոճական առանձնահատկություններով։ Ընդհանուրն այն է, որ գոյականը, ածականը, բայը, մակբայը և դերանունը խոսքի մեջ կարող են գործածվել փոխակերպաբար, այնինչ մյուս խոսքի մասերը փոխակերպաբար չեն գործածվում։ Ստորև կխոսվի խոսքի մասերի մասնավոր ոճական առանձնահատկություններից միայն կարևորների մասին։

Գոյականներն առարկաների ու առարկայացված հասկացությունների անուններ են։ Մեզ շրջապատող աշխարհի իրերը, մեր հոգևոր և մտավոր ըմբռնմանը ենթակա առարկայացած հասկացությունները, որոնք ճանաչված են ժողովրդի կողմից և ամրագրված բառերով, լեզվում հսկայական թիվ են կազմում։ Այդ պատճառով էլ քանակով ամենամեծ խոսքի մասը կազմում է գոյականը։ Այդպես է նաև հայերենում, որտեղ ամբողջ բառապաշարի շուրջ 70 տոկոսը գոյականն է։ Իմաստաբանական կողմից գոյականն աչքի է ընկնում իր ոչ-իրադրական նշանակությամբ, այսինքն այն հանդես է գալիս իր նյութական-առարկայական, մասնավորված նշանակությամբ։ Այսպես, օրինակ, թե՛ նախադասության ու խոսքի մեջ և թե՛ նրանցից դուրս առանձին առնված ծառ-ը ծառ է, քար-ը՝ քար, տուն-ը՝ տուն, ծով-ը՝ ծով, մարդ-ը՝ մարդ և այլն։ Այդպիսին չեն, օրինակ, դերանունները, որոնք իրադրական են և ունեն ընդհանուր, ոչ կոնկրետ իմաստ։ Օրինակ, սա-ն ամեն մի հանգամանքում, ամեն մի խոսքային իրադրության մեջ կարող է իր նյութական նշանակությունը փոխել (մի դեպքում լինել տուն, մի դեպքում՝ քար, ծով, լեռ, ծաղիկ, խնձոր, մարդ և այլն)։ Գոյականն ու դերանունը հակադրվում են միմյանց հենց առաջին հերթին իրենց արտահայտած կոնկրետ և ընդհանուր իմաստներով։ Ուսումնասիրելով խոսքի մասերի արտահայտած կոնկրետ և ընդհանուր իմաստային հատկանիշները՝ գալիս ենք այն եզրակացությանը, որ անդրադարձ կապ գոյություն ունի խոսքի մասի քանակի և արտահայտած իմաստի միջև. մասնավորված իմաստ արտահայտող խոսքի մասը շատ է քանակով (ինչպես գոյականն է) և, ընդհակառակն, իրադրական իմաստ արտահայտող խոսքի մասը՝ քիչ (այսպես է դերանունը, որի քանակը մի երկու տասնյակից այն կողմ չի անցնում), իսկ եթե նկատի ունենանք միայն գոյականի իմաստ արտահայտող դերանունները, ապա կտեսնենք, որ դրանք մի քանի բառ են։

Գոյականը իմաստային այդ առանձնահատկության շնորհիվ կարևոր դեր է ստանձնում խոսքում։ Գոյականն է խոսքին առարկայականություն տվողը, նա է մտքի առարկայացման հիմնական միջոցը, նա է կազմում խոսքի ողնաշարը։ Գոյականն իր իմաստաբանական և քերականական կարգերով ամենահա-

ռուստ խոսքի մասերից մեկն է։ Ինչպես բոլոր խոսքի մասերի, այնպես էլ գոյականի յուրաքանչյուր իմաստաբանական և քերականական կարգ այն պատճառով, որ օժտված է լինում ոճական այս կամ այն հնարավորությամբ, կարող է դառնալ խոսքը ոճավորելու միջոց։ Դիտարկենք դրանցից կարևորները։

Գոյականի իմաստաբանական կարգերից են թանձրացականությունն ու վերացականությունը։ Թանձրացական գոյականները մեծ կիրառություն ունեն հատկապես գեղարվեստական գրականության լեզվում, առավելապես նկարագրություններում, ինչպես և տեխնիկական գիտությունների լեզվում։ Ահա մեկ օրինակ գեղարվեստական գրականությունից.

Ողական ամրոցը *շրջապատող ծառազարդ* բլուրները *մխում էին* ձյունի *պես ճերմակ* գոլորշիներով։ Սար *ու* ձոր, դար *ու* դաշտ *պատած էր անթափանցիկ* մառախուղով։ Օդի *մեջ լողացող ջրային* շիթերը արեգակի *առաջին* ճառագայթներից *վառվում էին միլիոնավոր ոսկյա* հուլունքների *նման։* Ծառերի տերևները, խոտերի ծղոտները, հովիտների *նախշուն* ծաղիկները, *ցողված անձրևային* կաթիլներով, *կարծես սփռված լինեին գույնզգույն* գոհարներով։ (Ռաֆֆի)

Վերացական գոյականները կոչված են արտահայտելու վերացական հասկացություններ։ Վերացականությունը որոշ գիտությունների համար կարևոր ու անհրաժեշտ հանգամանք է (փիլիսոփայություն, տրամաբանություն, հոգեբանություն և այլն), քանի որ դրանք գործ ունեն մտքի իրողությունների առարկայացման հետ, կյանքի երևույթներն ու դրանց հարաբերություններն արտահայտում են դատողությունների ու մտահանգումների ձևով։ Ահա մի հատված Գ. Բրուտյանի «Ձևական տրամաբանության դասընթաց» դասագրքից, որի մեջ երևում է, թե այսպիսի խոսքերում ինչ դեր ունեն վերացական գոյականները։

Դեդուկտիվ տեսության կառուցման աքսիոմատիկ և գենետիկ մեթոդները

Աքսիոմատիկ մեթոդով *դեդուկտիվ* տեսության կառուցման *համար անհրաժեշտ է նախ և առաջ ընտրել որոշ* դրույթներ, *որոնք մենք համարում ենք ճշմարիտ, սակայն որոնց* ճշմարտությունը *չի ապացուցվում տվյալ դեդուկտիվ* տեսության համակարգի շրջանակներում։ *Այդ* դրույթներն *անվանվում են*

տվյալ դեդուկտիվ տեսության աքսիոմներ: *Երբ ասում ենք, թե դեդուկտիվ* տեսության աքսիոմներն *այն* դրույթներն *են, որոնք չեն ապացուցվում, այդ ամենևին էլ չի նշանակում, թե դրանց ճշմարիտ լինելը կախված է մեր կամքից։ Այդ* աքսիոմները *չեն ապացուցվում դեդուկտիվ* տեսության *տվյալ* համակարգում, *սակայն դրանց* ճշմարտությունը *ապացուցված է կամ անմիջականորեն* պրակտիկայում, *կամ գիտական այլ* տեսություններում: *Ոչ միայն չեն ապացուցվում դեդուկտիվ* տեսության *ելակետային* դրույթները *կամ* աքսիոմները, *այլև չեն սահմանվում դրանց* կազմում *հանդես եկող* հասկացությունները *տվյալ* տեսության *միջոցներով։*

Առարկայական գոյականը թաքնված ձևով իր մեջ ամփոփում է իր ատրիբուտները կազմող բոլոր հատկանիշները, ի տարբերություն ածականի, որ գոյականի հատկանիշներից միայն մեկն է անվանում։ Այսպես, օրինակ, ծաղիկ *գոյականը ինքնին ենթադրում է իր ատրիբուտները՝ քնքշություն, գեղեցկություն, հոտավետություն, գունային հատկանիշ և այլն։ Այս պատճառով էլ առարկայական գոյականը որոշչի գործառությամբ հանդես գալիս դառնում է շատ ավելի ուժեղ մակդիր, քան ածականը։ Օրինակ,*

Ես սիրում եմ ծաղիկ *աղջիկ,*
Ծաղկի բուրմունք, կույսի սեր։ (Ավ. Իսահակյան)

Այստեղ աղջիկ *գոյականի* ծաղիկ *որոշիչը՝ քանի որ արտահայտում է հատկանիշների ամբողջություն, այդ պատճառով էլ շատ ավելի ուժեղ բնութագրություն է դառնում* աղջիկ *գոյականի համար, քան կարող է լինել որևէ ածական, որովհետև վերջինս միայն մեկ հատկանիշով կարող է բնութագրել առարկան։*

Անցյալում, իբրև խոսքին բանաստեղծականություն տալու ոճական միջոց, որոշչային կիրառությամբ հանդես է եկել նաև ածականից կազմված վերացական գոյականը՝ փոխմականունը։ Արդի հայերենում այս միջոցին մեր գրողները հազվադեպ են դիմում։ Ահա երկու օրինակ.

Օտար դաշտերի անանց մշուշում
Տխուր լռության գիշերն է իջել,
Իմ սիրտը հավետ թախիծն է մաշում,
Մի լուսե երգ է իմ հոգում ննջել։ (Վ. Տերյան)

Տեսավ Հնդու խաղաղության գետերը սրբազան լոտոսներով օծուն։ (Ա. Իսահակյան)

Հատկանիշ վերագրելու նման գործառույթամբ հանդես է գալիս գոյականը ստորոգելիի պաշտոնում, ինչպես և այն դեպքերում, երբ զեղչական կառույցում է, ինչպես՝

Կոդակը վեր կացավ և ավելի ծանրակշռության համար, քան ցավից՝ տնքալով դուրս գնաց։

— «Աղվես»... մոմռաց նրա հետևից Վասակը և դուրս եկավ այգի։ (Դ. Դեմիրճյան)

Ոճական լիցքավորում ունեն կազմությամբ բարդ գոյականները և անվանական հարադրությունները։ Երկու դեպքում էլ բաղադրիչներն ունենում են իմաստային հարաբերություններ, որոնք հաճախ առաջ են բերում պատկերի գաղափար, և բառն ու կապակցությունն արտահայտում են ներքին պատկեր։ Այսպես են, օրինակ, ձիարշավ, պարահանդես, առևտուր, երկաթուղի, լեռնագագաթ, ձեռնասայլակ, փողկապ, խաղ ու պար, աղ ու հաց և այլն։

Գոյական են մեծ մասամբ տերմինները, որոնք խիստ կարեվորություն ունեն գիտական խոսքում և ծառայում են խոսքի ճշտության ու համառոտության խնդիրներին, միջոց են հասկացությունների սահմանման համար։

Գոյականների մեջ կշիռ են կազմում բայանունները։ Ում ածանցով կազմված բայանունները (կառուցում, կցում, սնուցում, փոխարկում, անցում, հորատում, բտում և այլն) առավել գործածվում են գիտական խոսքում և հրապարակախոսության մեջ և, իբրև կանոն, խոսքին հանդիսավորություն և սեղմություն տալով հանդերձ՝ առաջ են բերում ոճի ծանրություն, խոսքը դարձնում դժվար ընկալելի։ Ք և անք ածանցներով կազմվածները (ընթացք, լիցք, սլացք, խոյանք, հեգնանք, ֆծնանք, ֆնիշանք, աղաչանք, տենչանք, կապանք, անրջանք, ափսոսանք, հրճվանք, երկմտանք և այլն) առավել գործածվում են գեղարվեստական գրականության և գրականագիտության մեջ և զգալի մասով բանաստեղծական են, այդ պատճառով էլ խոսքին տալիս են բանաստեղծականություն։

Պետք է ասել, որ ընդհանրապես միևնույն բայական հիմքից համանիշ ածանցներով ստեղծված բայանունները կազմում են զուգահեռ շարքեր, որոնք կոչված են ծառայելու երկու տարբեր հաղորդակցական նպատակների՝ գեղարվեստական խոսքում և գիտական, քանի որ համանշային շարքերից մեկը (ստորև տեր-

վող շարքերից առաջինը) առավել բանաստեղծական է, իսկ մյուսը (երկրորդը)՝ առավել առարկայական.

ծունչյուն—ծունչոց	համոզում—համոզմունք	բաբախյուն—բաբախում
մունչյուն—մունչոց	բերում—բերմունք	գոչյուն—գոչում
վրնջյուն—վրնջոց	հիացում—հիացմունք	պայթյուն-պայթում
դղրդյուն—դղրդոց	նախապաշարում—նախապաշարմունք	տրոփյուն-տրոփում
խշշյուն—խշշոց	զգացում—զգացմունք	բախյուն-բախում

Այսպես են նաև՝ բառաչ–բառաչյուն, խոխոջ–խոխոջյուն, ղողանջ–ղողանջյուն, տրտունջ–տրտնջյուն, դղիրդ–դղրդյուն *և այլն։*

Այն պատճառով, որ գոյականի եզակին մատնացույց է անում տվյալ տեսակի մեկ առարկան և միաժամանակ տեսակն է անվանում (օրինակ, ոչխար *նշանակում է մեկ ոչխար, բայց և ոչխար ընդհանրապես, այսինքն՝ իբրև կենդանու տեսակ, հեշտությամբ գործածվում է փոխանունաբար, ինչպես՝* «ոչխարը բեր կիթ» *(Հ. Թ.) արտահայտության մեջ* ոչխար *նշանակում է բոլոր ոչխարները։ Ընդհանրապես գոյականը բացառիկ խոսքի մաս է փոխակերպությունների տեսակետից։*

Իմաստաբանական առումով խոսքի մասերի ստորակարգության մեջ գոյականն ունի նախապատվություն մյուս խոսքի մասերի համեմատությամբ. այս նշանակում է, որ մյուս խոսքի մասերը՝ հատկապես ածականն ու բայը, իրենց իմաստային կոնկրետությունները լեզվում ստանում և խոսքում արտահայտում են գոյականի հետ ունեցած կապակցության հետևանքով։ *Այսպես, օրինակ,* գնացք *գոյականը ինչ կապակցության մեջ էլ վերցնենք, իր իմաստով կմնա նույնը (հմմտ.* գնացքը եկավ, մարդատար գնացք, գնացքի վերանորոգում, այսպիսի գնացք)։ *Այնինչ* գալ *բայն ունի մոտենալու ընդհանուր իմաստ, և իմաստային բազմաթիվ նրբություններ է հանդես բերում գոյականների հետ կապակցվելիս, ինչպես՝* Արամը եկավ, անձրև եկավ, գնացքը եկավ, աշունը եկավ, Նոր տարին եկավ, հոտ եկավ, մազերը եկան, դուռը եկավ, հերթը եկավ։ Աշխատել *բայը զանազան նշանակություններ է դրսևորում՝ համապատասխան այն բանի, թե ինչ գոյականի հետ է կապակցության մեջ մտնում.* Հայկը աշխատում է, ժամացույցն աշխատում է, գործարանն աշխատում է, տրանսպորտն աշխատում է, խանութն աշխատում է *և այլն։ Ոչինչ չի փոխվի, եթե փոխակերպեինք*

աշխատող Հայկ, աշխատող գործարան, աշխատող տրանսպորտ, աշխատող ժամացույց և աշխատող խանութ *կապակցություններով, որտեղ ևս բայերն իրենց համապատասխան իմաստները ստանում են կապակցության մեջ եղած լրացյալ գոյականներից։ Այս նշանակում է, որ ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ կապակցություններում բայը իր իմաստային որոշակիությունը ստանում է կապակցության մեջ եղած գոյականից։*

Նույն ձևով ածականն է լեզվում զանազան իմաստներ ստանում և խոսքում դրսևորում այդ իմաստները համապատասխան այն բանի, թե ինչ գոյականի հետ է կապակցության մեջ մտնում։ Օր. չոր օդ, չոր հաց, չոր պատասխան, չոր ճանապարհ, չոր հագ, չոր մարդ *կապակցություններից յուրաքանչյուրում* չոր-*ը հանդես է եկել նոր նշանակությամբ։* Մաքր բեռ, մաքր խնդիր, մաքր բնավորություն, մաքր պարտականություն, մաքր ճանապարհ, մաքր քայլեր, մաքր օդ *կապակցություններից յուրաքանչյուրում* մաքր *բառը հանդես է եկել նոր նշանակությամբ։ Այսինքն՝ ածականի արտահայտած իմաստը ևս պայմանավորված է իր լրացյալ գոյականի իմաստով. ածականն իր իմաստի կոնկրետացումը ստանում է լրացյալ գոյականի միջոցով։*

Բազմիմաստ գոյականն իր իմաստային կոնկրետացումն այլ խոսքի մասից չի ստանում, այն ստանում է միայն գոյականից, ինչպես՝

մարդու թև	կենդանու գլուխ
թռչունի թև	սոխի գլուխ
օդանավի թև	մեխի գլուխ
շարքի թև	գրքի գլուխ
հագուստի թև	շարքի գլուխ
գութանի թև	լեռան գլուխ

Այս օրինակներում թև *և* գլուխ *գոյականներն իրենց իմաստային որոշակիությունն ստանում են իրենց հատկացուցիչներից։*

Գոյականի իմաստաբանական այս նախապատվությունը պայմանավորում է նրա կարևոր տեղն ու նշանակությունը խոսքի հյուսվածքում։ Նախադասության մեջ գոյականը հանդես է գալիս երկու կարգի նշանակություններով՝ առարկայական և հատկանշային։ Առարկայական նշանակություն է ունենում, երբ դառնում է ենթակա, հատկացուցիչ, խնդիր և պարագա։ Առար-

կայական իմաստ գոյականն ունի առանձնաբար, նախադասության անդամների կապակցությունից դուրս էլ, այդ պատճառով իր առարկայական նշանակությունը պահում է նաև կոչական դառնալիս։ Որոշչի և ստորոգելիական վերադրի պաշտոններում գործածվելիս գոյականն ստանում է բնութագրող դեր և արտահայտում հատկանիշ, ինչպես՝

մարդասպանը մարդ չէ։

Ափսոս, Անուշ, սարի ծաղիկ,
Ափսոս իգիթ քու յարին,
Ափսոս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսոս էդ ծով աչերիդ։ (Հ. Թումանյան),

Այստեղ ընդգծված մարդ, սարի, ծով գոյականները հատկանիշի գաղափար են արտահայտում։

Գոյականը քերականական կարգերով ևս հարուստ խոսքի մաս է։ Յուրաքանչյուր քերականական կարգ, այդ թվում և գոյականի քերականական կարգերից ամեն մեկը, ունի ոճական լիցքավորում և խոսք է բերում ոճական համապատասխան երանգ։

Գոյականի թվի կարգը

Գոյականի հոգնակիի կազմության մասնիկները մեր լեզվական ըմբռնմամբ տարբեր ոլորտների են պատկանում։ Եր և ներ մասնիկները գրական լեզվին հատուկ լինելով՝ շեզոք են ոճական առումով։ Այդպես են նաև իկ-ը և այք-ը՝ մարդ և կին գոյականների համար։ Իք (կնանիք, գյուղացիք), երք (տղերք, աղջկերք), ենք, անք, ունք (Լևոնենք, Քոլունք, Վարդանանք) ժողովրդական են, նի, ան, աներ (տրեխնի, գլխնի, ձիան, ձրվաներ) բարբառային են, այք (տիկնայք, տղայք, պարոնայք), ք (դարք, հերք) գրաբարյան են։

Ժողովրդական, բարբառային և գրաբարյան հոգնակի ձևերը արդի գրականում կարող են փոխարինվել գրական եր և ներ մասնիկներով կազմված ձևերով (դարք-դարեր, պարոնայք-պարոններ), ուստի խոսքի մեջ ոչ գրական ոլորտներին հատուկ հոգնակերտով կազմված ձևերը խոսք են բերում իրենց միջավայրին հատուկ ոճական երանգներ՝ ժողովրդականը ժողովրդական, բարբառայինը՝ ցածր կամ գռեհիկ, իսկ գրաբարյանը բարձր կամ հանդիսավոր ոճ են ստեղծում։

Ա ռ կ ա յ ա ց մ ա ն կ ա ր գ ն *արտահայտվում է հոդերի միջոցով։ Արդի գրական լեզվում որոշյալ ն և ը հոդ ստանում են ուղղական, տրական և հայցական հոլովները։ Սեռական, բառնացական, գործիական և ներգոյական հոլովները ում ճյուղի բարբառներում կարող են որոշյալ հոդ ստանալ։ Այսպես, ժողովրդական ծագում ունեն մի քանի դարձվածքներ ու արտահայտություններ, որոնք կազմված են պարառական նշանակությամբ գործիականով արտահայտված գոյականով՝* գլուխը բարովը (պատովը տալ), ամանը գետնովը տալ, վզովը (ճտովն) ընկնել, ասածը սրտովը չլինել, մատանին մատովը չլինել, կոշիկը ոտովը չլինել *և այլն։ Նույն ձևով ունենք նաև ներգոյական հոլովով կազմված ժողովրդական ասացվածքներ, դարձվածքներ և դարձվածային կապակցություններ, ինչպես՝* սրտումը տեղ ըլնի, ամանումը (բղղումը) եղ կըլնի, յուղ ու մեղրը շան տկումը *(շատ բան իմացող, բայց վատ մարդու մասին)։ Ժողովրդական արտահայտաձև է նաև ուղղական, տրական, հայցական, գործիական ու ներգոյական հոլովներով դրված գոյականը ստացական և ցուցական* ս *և* դ *հոդերով գործածելը, ինչպես՝* Սրտո՞վդ է. Ա՜խ, մայրիկ ջան, ...վզովս ընկավ ու արտասվեց. Օրումս այս բանը տեսած չէի։

Աշխարհս *աշխարհով կշտացավ, իս քեզանից սով,*
աչքի լուս։ (Սայաթ–Նովա)

Աշխարհս *դարձել է, ախպեր, առ ու փախ,*
Սերը դարձել սուր, ու ջուրը՝ արին...
(Հ. Թումանյան)

Աշխարհիս *այն ո՞ր հռչակավոր գինեկոլոգ-պրոֆեսորն է, որ հմտությամբ կարողանա նրա պես բժշկել կանանց ամեն տեսակ հիվանդություններից։* (Նար–Դոս)

Ընդհանուր բացարձակ ունայնության գիտակցությունը շատից դուրս ճնշում է մարդուս։ (Նար–Դոս)

Ժողովրդականության երանգն ավելի է ընդգծվում, երբ ս *հոդով գոյականն ունենում է* այս *ցուցական դերանունն իբրև որոշիչ, ինչպես՝*

...չէ՞ որ այս ոոպեիս *դուք եք իմ ծնողը և անչափ երախտիք ունիք ինձ վրա։* (Նար–Դոս)

Ժողովրդական է նաև ս *ցուցական հոդի գործածությունը հեգնանքի նպատակով, ինչպես՝*

— Նա է, նա է,— վրա բերի ես, չգրացնելով նրան, և բրոնելով Բազենյանի ձեռքից, տարա նստեցրի կողքիս։

Հուսարս բեղն այնպես ձիգ տվեց, որ քիչ մնաց պոկի...

(Նար-Դոս)

Այնինչ ս հոդով կազմված բառերի մեծ մասը (խստագույնս, լավագույնս, երկիցս, երիցս, բազմիցս, քանիցս, վերջերս, նորերս, ամսույս) գրական են և գործածվում են բարձր ոճերում։

Գոյականը թեև սեռական հոլովով դրվելիս որոշյալ հոդ է ստանում ում ճյուղի բարբառներում, սակայն գրական լեզվում այն հոդ չի առնում, և սրանով տարբերվում է տրականից, որն առանց հոդի որոշյալ առման դեպքում չի գործածվում։

Ընդհակառակն, շատ սովորական է բացառական, գործիական և ներգոյական հոլովներով գոյականների որոշյալ ձևերը ժողովրդական խոսքում։ Ահա մի օրինակ.

Գարունքները դու ման կուգաս սարումը
Ես կկանգնեմ իմ տված իլդարումը.
Հարսանիքդ կը լինի էս տարումը,
Մատնիքս առան ձեր տան ճանապարհումը...
Աղջի, ի՞նչ ես կանգնել էդ ղեյմաթումը,
Արի կանգնի իմ սազ ու սոյբաթումը...

(Միսկին Բուրջի)

Ժողովրդական մտածողությանը հատուկ հոդավորման այս երևույթը հնարավոր է գեղարվեստական խոսքում, որը խոսքը դարձնում է հասարակ և ցածր։

Ժողովրդական մտածողությանը հատուկ երևույթ է նաև հոդավորման այն դեպքը, երբ լրացում դերբայի ստացական հոդն անցնում է իր լրացյալ գոյականին, ինչպես՝

«Տնկած ծառերդ փուշ են դառել, ինձ սպանում, պահած ծաղիկներդ կրակ են դառել, ինձ էրում, խորովում. ման եկած տեղերդ աչքիս լսումը մզրախի պես ցցվում, սիրտս դուրս ճոթռում»։ (Խ. Աբովյան)

Այստեղ ըստ էության ստացականությունը վերաբերում է ոչ թե ծառեր, ծաղիկներ և տեղեր գոյականներին, այլ դերբայներին (քո տնկած, քո պահած, քո ման եկած, այսինքն՝ տնկածդ ծառերը, պահածդ ծաղիկները, ման եկածդ տեղերը).

Ժողովրդական մտածողության արտահայտություն են նաև երբեմն, ուրեմն, դառն, սառն, այսինքն, ընդհակառակն, խառն

բառերի երբեմը, ուրեմը, դառը, սառը, այսինմը, ընդհակառակը, խառը և ուրեմս, այսինմս, նաև բաս ձևերը։

Ժողովրդական մտածողության արտահայտություն է ստացականության իմաստով գործածված ս և դ հոդերով գոյականի հետ և՛ I և՛ II դեմքերի անձնական դերանունների եզակի սեռականների գործածությունը։ Օրինակ՝

— Որսկան ախպեր, ասա, յարաբ
Ո՞վ է հարսը իմ բալիս՝
Ո՞վ է գրկում չոր գլուխը
Իմ մարալիս, իմ լալիս։ (Ա. Իսահակյան)

Արևմտահայ բարբառներին հատուկ երևույթ է հայտնի ու որոշյալ գոյական ենթական անորոշ ձևով գործածելը։ Որոշյալ ենթակայի անհոդ գործածությունը գրական խոսքում երկին տալիս է տվյալ տարածքին հատուկ բներանգ։ Այսպես, օրինակ, Հ. Թումանյանն իր «Սասունցի Դավիթ» պոեմում իր խոսքը ոճավորում է նաև որոշյալ ենթական անորոշ ձևով գործածելով։ Նույն բանն ենք տեսնում նաև Իսահակյանի «Սասմա Մհերում»։ Նա իր վիպերգն սկսում է այսպես՝

Ելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա,
Կռիվ խոյացավ ի Մսրա վրա։
Ու նրա ետնուց խանդութ մեծ Տիկին
Լիր-լրումն առավ,
Լույս աշխարհ բերավ
Մեկ արու զավակ՝ տեր ու ժառանգին
Ջոջանց աթոռքին, Սասմա աշխարքին։

Մի ուրիշ տեղ գրում է.

Մհեր պառկեց, քուն չտարավ.
Աչք չփակեց ու ողջ գիշեր
Աշխարհի բան միտք կաներ միտք
Ջոջանց Մհեր։

Որոշյալ ենթակայի անորոշ ձևով գործածությունը սովորական երևույթ էր նաև գրաբարում։ Ահա այս հանգամանքը հընարավորություն է տվել Ն. Ջարյանին իր «Արա Գեղեցիկ» պատմադիցաբանական ողբերգությունը ոճավորելու այս միջոցով, այսինքն՝ ենթական անհոդ գործածելու միջոցով կարողացել է ստեղծել պատմական վաղ ժամանակների պատրանք (իհարկե, ոչ միայն այս միջոցով)։

Օրինակ.

Բայց անտեղի է այդ կարգի տագնապ,
Քանի որ Շամիրամ սիրում է քեզ վաղուց։

...Վահագն է վեհ աստված վիշապաքաղ,
Եվ Անահիտ է ոսկեմայր յուր ամուսին...

(Ն. Զարյան)

Հոլովը և հոլովումը գոյականը բնութագրող ձևաբանական ամենակարևոր քերականական կարգերից են։ Հոլովը կոչված է արտահայտելու բառերի շարահյուսական զանազան հարաբերություններ։ Բայց քանի որ մեր լեզուն ունի միևնույն քերականական հարաբերություններն արտահայտելու տարբեր միջոցներ, այդ պատճառով էլ ստեղծվում է քերականական նույն գաղափարն արտահայտելու զուգահեռ միջոցներից ընտրություն կատարելու հնարավորություն, իսկ որտեղ ընտրություն, այնտեղ էլ ոճական այս կամ այն երանգը։

Ուղղական հոլովը անհամեմատ քիչ հնարավորություն է տալիս զուգահեռ ձևերի, մանավանդ նրա ելակետային ձևը՝ եզակին։ Այնուամենայնիվ կան գոյականներ, որոնց ժողովրդական և գրական ձևերը եզակի ուղղականում տարբեր են, ինչպես, կին և կնիկ, որ պատկանում են տարբեր հոլովումների (կնոջ, կնկա), հայր և հերա, մայր և մերա, ապեր և ապի, աշուն և աշունք, գարուն և գարունք և այլն։ Սակայն մենք կարող ենք սրանք նաև տարբեր բառեր էլ համարել (իսկապես սրանք տարբեր բառեր են), հետևաբար կարող ենք ասել, որ եզակի ուղղականն իբրև սկզբնաձև զուգահեռ ձև չի ունենում։

Ուղղականի հոգնակին որոշ հնարավորություն է տալիս ընտրության, քանի որ գոյականը կարող է ընդունել գրական, ժողովրդական և գրաբարյան տարբեր վերջավորություններ, ինչպես՝ ձի–ձիեր (գրական), և ձիաներ, ձիանք (ժողովրդական), երեխա –երեխաներ– երեխեք–երեխերք, գյուղացի –գյուղացիներ – գյուղացիք, կին–կանայք–կիներ–կնանիք և այլն։ Ուղղական հոլովը կապով երբեք չի գործածվում, այդ պատճառով էլ չի ունենում միևնույն հարաբերության արտահայտության հոլովված ձևով և կապի համադրությամբ։ Արդի հայերենում կոչական հոլով չունենք, շատ քիչ բառեր միայն գործածվում են ուղղական ձևով իբրև կոչականներ։ Դրանք են՝ աղջի, մասամբ նաև պարոնայ՛, տիկնայք, իսկ աղա, աբա, ալո կոչական բառեր են՝ անցած ձայնարկությունների շարքը)։

Սեռական հոլովը, քանի որ տարբեր հոլովումների համար ունի տարբեր վերջավորություններ, այդ պատճառով էլ հոլովական ձևերի ընտրության ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում մեզ։ Բացի սրանից, խոսել սեռական հոլովի ձևավորման կամ կազմության մասին նշանակում է խոսել հոլովման տիպի մասին։ Այս պատճառով էլ այստեղ զուգահեռաբար կքննենք նաև հոլովման քերականական կարգը։

Ի հոլովումը իբրև ընդհանրական հոլովում գրական լեզվի համար նորմայի արժեք ունի, այդ պատճառով էլ այս հոլովման բառերը հազվադեպ են հանդես գալիս գրաբարյան կամ ժողովրդական վերջավորություններով։ Այսպես՝ պատիվ, հույս, սուգ, Մուշ, լույս և հուր բառերը որոշակի կապակցություններում են գործածվում ո հոլովմամբ (պատվո պահակ, սգո միտինգ, Հրո երկիր, հուսով եմ, որ չեք մերժի, Մշո աղջիկ և այլն)։ Արդի գրական լեզվում այս բառերը հոլովվում են ի հոլովիչով։ Ի հոլովման է պատկանում դար գոյականը, որն ունենում է ու-ով հոլովիչ՝ դարձյալ սահմանափակ կապակցություններում (օր.՝ դարու զավակ)։ Ի հոլովման պատկանող մութ բառը կարող է հանդես գալ նաև ժողովրդական մթան ձևով (ան հոլովիչ), կայսր բառը՝ կայսեր ձևով, իսկ ե ներքին թեքման դուստր բառն ունի նաև դուստրի ձևը, որն անսովոր բաղարկություն է վերամբարձ բառի և հասարակ հոլովական ձևի։

Ի հոլովման մի երկու գոյականներ սեռականում ունենում են նաև յան վերջավորությունը՝ ծնունդ, կորուստ, թաքուստ, փախուստ, գալուստ և հանգիստ։ Սրանց համապատասխան ի վերջավորությամբ ձևերը արդի գրականում հնչում են հասարակ (գալուստի, թաքուստի, ծնունդի և այլն)։ Հազվադեպ երևույթներից է, որ ի հոլովման պատկանող գոյականը ա թեքման ենթարկվի, ինչպես հանդիպում ենք Հ. Սահյանի պոեզիայում՝ (Գյազբելա սար), որն անշուշտ Գորիսի բարբառի ազդեցության արտահայտությունն է (նույն երևույթը գոյություն ունի նաև Արարատյան բարբառում)։

Ա հոլովիչով ունենք նաև գրաբարյան ձևեր՝ դարձյալ կայունացած կապակցություններում, ինչպես՝ Վանա լիճ, Սևանա կղզի, ճորա պահակ։ Գրաբարի նմանությամբ հատուկ անունների ա հոլովիչով հոլովելը կարող է ոճավորման արժեք ձեռք բերել. ինչպես՝

Ելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա,
Կռիվ խոյացավ ի Մսրա վրա։ (Ա. Իսահակյան)

Գոյականների մեծ մասը (չհաշված Ք-Ց հոլովման բառերը) հոգնակիում ենթարկվում են ի հոլովման, սակայն ունենք նաև զուգահեռ ձևեր։ Այսպես, սեռականում ի մասնիկի փոխարեն ու մասնիկ գործածելու միջոցով խոսքը կարելի է ոճավորել՝ ստեղծելով արևմտահայ միջավայրի պատրանք։ Այսպես է վարվել, օրինակ, Ավ. Իսահակյանը իր «Սասմա Մհեր» պոեմում.

Ռամիկը հանց ճորտ ու ստրուկ
Բանվոր, մշակ, գերի-գրաստ,
Կտառապեր ու կաշխատեր,
Կտառապեր ու կտքներ
Արքաներու, իշխաններու,
Սեպուհներու, հարուստներու
Շահի համար անհագ, անկուշտ։

Այնուհետև, գրաբարյան հոգնակի սեռականի մի քանի քարացած հոլովաձևեր ունենք (**հայոց, վրաց, պարսից, ռուսաց** *և այլն) գրական զուգահեռ ձևերի հետ (հայոց լեզու և հայերի լեզու), որոնք իմաստային ու ոճական նուրբ տարբերակումներ են հանդես բերում, մանավանդ որ գրաբարյան ձևերն ըմբռնվում են ածականական իմաստով։*

Ծանոթություն։ Գոյականի տրական հոլովը իր կազմությամբ արտաքնապես չի տարբերվում սեռականից, ուստի ինչ ասվել է ի հոլովիչով սեռականի մասին, վերաբերում է նաև տրականին։ Սակայն պետք է նկատել, որ վերոհիշյալ բոլոր զուգահեռ ձևերը, այսինքն՝ **ո, յան, ա,** հոլովիչներով կազմությունները, վերաբերում են միայն սեռականին, բայց ոչ տրականին, քանի որ հիշյալ բառերը տրականում մյուս գոյականների նման ունենում են միայն **ի**-ով ձևեր (**պատվի(ն) — չդիպչեք նրա պատվին, ծնունդին — «Համեցեք Նշանիչի ծնունդին»** և այլն)։

Ու *հոլովման պատկանող բառերի սեռականը կազմվում է կա՛մ* **ի**-ու *հերթագայությամբ* (**ոսկի–ոսկու, գինի–գինու**), *կա՛մ գոյականաբար գործածված անորոշ դերբայի վերջում* ու *հոլովիչի կցումով* (**ասել–ասելու, կառուցել–կառուցելու**)։ *Բացառություն են* **մարդ, աստված, ձի, ամուսին** *և* **անկողին** *բառերը, որոնք նույնպես վերջում ստանում են* ու *հոլովիչը։*

Ի-ու հերթագայությամբ բառերի մեջ կան այնպիսիները, որոնք հոլովվում են նաև ի հոլովիչով։ Այսպես են հոլովվում ի-ով վերջացող մի շարք հատուկ անուններ (Գանդի-Գանդու, Գանդիի, Նիզամի-Նիզամու, Նիզամիի, Ռուդաֆի-Ռուդաֆու, Ռուդաֆիի, Նուխի-Նուխու, Նուխիի, Անի-Անիի, Սևի-Սևիի, Ազադի-Ազադիի, Ոսկի-Ոսկիի) և մի քանի հասարակ գոյականներ (գոտի-գոտիի, այրի-այրիի և այլն)։ Որքան էլ տարօրինակ, սակայն արդի լեզվաբանությամբ ի-ով ձևերը թվում են գրական, իսկ ու-ով ձևերը՝ ժողովրդական։

Ան հոլովման բառերի մի մեծ խումբ կազմում են ում ածանցով բայանունները, ինչպես՝ կառուցում, ճատուցում, մոտեցում, ստուգում, բուժում, նվազում, լուծում, անկում, պնդում, կուտակում, խզում, խախտում և այլն, որոնք ան հոլովման են ենթարկվում, եթե բառի մեջ իշխում է գործողության գաղափարը։ Այն դեպքում, երբ ում ածանցով բայանվան մեջ իշխում է առարկայական գաղափարը, բայանունը ենթարկվում է ի հոլովման, ինչպես՝ դիմում, պատում, խնդում, ապրում, որոշում և այլն։

Սակայն ում-ով բայանունների մի զգալի մասը արևմտահայերենում հոլովվում է ի հոլովմամբ. ըստ երևույթին արևմտահայերենի ազդեցությամբ էլ արևելահայ գրական լեզվում գործածվում է նաև այդ ձևը, որը խոսքին տալիս է վերամբարձություն։ Արդի գրական հայերենում հաճախ են ի հոլովմամբ հոլովվում ում-ով կազմված բազմաթիվ բայանուններ, ինչպես՝ արբեցում, ճաշտեցում, ճատուցում, կոչում, խզում, ճեռացում, մոռացում, աղմատացում, խտացում, ճարստացում, արդարացում, տկարացում, քարացում, թերացում, վերացում, շիկացում, սաստկացում, կաճավորում, ներդրում, սպասում, տնտեսում, խափանում, ծագում և այլն։

Գրաբարում բաղաձայնից հետո բառավերջում ն ունեցած միավանկ բառերից մի քանիսը, որ արդի հայերենում ան հոլովման են պատկանում, ունեն նաև ի-ով զուգահեռ ձև, որը մյուս ձևին հակադրվում է իբրև ժողովրդական, ինչպես՝ բեռ-բեռի, ծոռ-ծոռի, թոռ-թոռի, եզ-եզի։ Նույն եղանակով՝ ան հոլովման պատկանող ամառ և ձմեռ բառերը ունեն նաև վա հոլովման ձևեր (ամռան-ամառվա, ձմռան-ձմեռվա), որոնք ի հակադրություն գրական ան հոլովման, ժողովրդական ձև են։

Վա հոլովման պատկանող բառերը ժամանակի գաղափար

արտահայտող գոյականներ են (բացառություն կազմում են վայրկյան և դար բառերը և ամսանունները, որոնք հոլովվում են ի հոլովմամբ)։ Ընդհանրապես նկատելի է, որ ժամանակի գաղափար արտահայտող բառի հոլովումը կախված է խոսքի մեջ նրա գործածության իմաստից։ Այսպես, օրինակ, ժամ գոյականը երկու ժամվա գործ է կապակցության մեջ առնված է ժամանակի քանակային առումով, այնինչ ժամի կեսն անց է կացնում դաս հարցնելով կապակցության մեջ ժամ բառն առնված է առարկայական նշանակությամբ։ Նույն ձևով, եթե ճաշ գոյականն առարկայական իմաստ ունի, հոլովվում է ի հոլովմամբ, ինչպես՝ ճաշի համար միս եմ գնել, այնինչ ժամանակային առումով գործածվելիս ստանում է վա հոլովիչ, ինչպես՝ «ճաշվա բանթող է»—Հ. Սահյան (այսինքն՝ ճաշելու ժամանակի, պահի)։ Այս միտքը լավագույնս ապացուցվում է or և այսor բառերի հոլովումներով։ Or բառը առարկայական իմաստով հոլովվում է orի, իսկ ժամանակային իմաստով՝ orվա, այնինչ այսor բառը միայն կունենա այսorվա ձևը, որովհետև առարկայական իմաստով չի գործածվում։ Նույն բանը պիտի ասենք գիշեր գոյականի մասին, որն առարկայական առումով ի հոլովմամբ է հոլովվում) «էն վեհ վայրկենին չքնաղ գիշերի...».—Հ. Թ.), իսկ ժամանակային առումով՝ վա հոլովմամբ։ Նկատենք, որ այսպիսի զուգաձևությունը, կապված լինելով տարբեր իմաստների հետ, ոճավորման միջոց չի կարող դառնալ։

Ժողովրդական են և գրականին չեն անցել մի քանի բառաձևեր՝ սեռականի ն որոշիչ հոդով, ինչպես՝ հերու-հերվան (...Անցել ձեր գլխի հերվան ձյունի պես... Հ. Թումանյան), իրիկվան (...Ահա իրիկվան քեֆի սեղանը... Հ. Թումանյան), գիշերվան, orվան և այլն։ Սրանց հակառակ մահ բառը հոլովվում է վան հոլովիչով, սակայն հանդես է գալիս նաև ի և ու հոլովիչներով ևս, ինչպես՝ Քանի մահի եմ վկա (Հ. Սահյան), կենաց ու մահու պայքար։

Ոչ հոլովման պատկանում են քիչ բառեր՝ կին, տեր, քույր, ընկեր, աներ և այն բառերը, որոնց վերջին բաղադրիչը սրանցից մեկնումեկն է (տիկին, տանտեր, հորաքույր)։ Պետք է նկատել, սակայն, որ քույր բառը, եթե բուժքույր իմաստն ունի, ենթարկվում է նաև ի հոլովման։ Ընկեր բառը մեր պոեզիայում հաճախ է գործածվել ժողովրդական ընկերի ձևով։ Օրինակ՝

Անկոտրում Մոսին էլ ո՞ր Մոսին էր,
Որ աչքը դեռ բաց, էս լուս աշխարհքում,
Իրեն հարազատ քրոջը տեսներ
Նամարդ ընկերի՝ Սարոյի գրկում։ (Հ. Թումանյան)

Ի *հոլովումով կարող են հոլովվել նաև* ընկեր *բառով կազմըված* դասընկեր, խաղընկեր, զրույցընկեր, կին *բառով կազմված* տիկին, տանտիկին, իրիցկին, տերտերակին, տեր *բառով կազմըված* սեփականատեր, գործարանատեր, պարտատեր, հանֆատեր, տանուտեր *և այլ բառեր, որ սովորական են ժողովրդախոսակցական լեզվում։ Այսպիսի բառերի մեջ բացառություն է կազմում* տերտեր *բառը, որ միայն* ի *հոլովումով է գործածվում նաև գրական լեզվում։* Աներ *և* սկեսուր *(կեսուր) բառերը* ի *հոլովման են պատկանում, սակայն առավել հակում են հանդես բերում* ոջ *հոլովման ենթարկվելու, երբեմն էլ հոլովվում են* ո *ներքին թեքմամբ՝* անոր, սկեսոր։ Տալ *բառը* ի *հոլովման է պատկանում, սակայն երբեմն հանդես է գալիս* ոջ *հոլովմամբ։* Տեգր *բառը, որ երբեմն* ոջ *հոլովումով է հանդես գալիս, ունի ներքին* ո *թեքում՝* տեգոր։

Ու/ա հոլովման *ենթարկվում են* տուն *և* շուն *բառերը։ Սրանց հետ կարելի է դնել նաև* անուն *բառը, որ միշտ* ա *ներդրավոր հոլովման է պատկանում։*

Յու/յա հոլովման *պատկանում են* ություն *ածանցով գոյականները, որ մեծ թիվ են կազմում հայերենում, և մի երկու այլ գոյականներ՝* ձյուն, սյուն, անկյուն, արյուն։ *Վերջիններս ունեն ժողովրդականի* ի *հոլովումով ձևեր՝* ձյունի, սյունի, արյունի, անկյունի, *որ հաճախ են հանդիպում նաև գրական խոսքում։*

Այ/ո հոլովման *են պատկանում* հայր, մայր *և* եղբար *և սրբանցով բաղադրված մի քանի բառեր՝* արքեղբայր, կաթնեղբայր, հարսնեղբայր, հորեղբայր, մորեղբայր, աբբահայր, նախահայր, պատմահայր, կնքահայր, քերթողահայր, վանահայր, նախամայր, աստվածամայր, հարսնամայր, տիրամայր, ծծմայր *և այլն։ Այն բարդ գոյականները, որոնց մեջ* մայր *բաղադրիչը անձի իմաստով չի գործածված, հոլովվում են* ի *հոլովումով, ինչպես՝* եղնջամայր, տառամայր, ծովամայր, խեշմայր։

Գոյականի տրական հոլովը, *ինչպես ասվել է, ձևով լիովին նման է սեռականին, սակայն նրանցից տարբերվում է նրանով, որ որոշյալության դեպքում ստանում է որոշիչ հոդ և ունի անորոշ ու որոշյալ ձևերի հակադրություն, այնինչ սեռականը, ու-*

նենալով հանդերձ որոշյալության ու անորոշության գաղափար, ձևերի տարբերակում չունի։

Հայցական հոլովն ունի անձի և իրի տարբերակում, արտահայտում է անձի և իրի առումների գաղափար, հոլովական լրացուցիչ գաղափար արտահայտելու համար, մյուս թեք հոլովների նման գործածվում է կապի հետ միասին, ի տարբերություն ուղղականի, որին չի առնչվում ոչ մի կապ։

Հայցական հոլովն ունի երկու ձևավորում. բոլոր իրերը հայցականում ունենում են ուղղականի ձև, անձերը՝ տրականի, իր մտածված անձերը՝ ուղղականի, և անձ մտածված իրերը՝ տրականի։

Հայցական հոլովով դրված գոյականի հոլովական ձևավորումը միջոց է ճարտասանական այնպիսի փոխակերպությունների համար, ինչպիսիք են այլաբանությունը և դիմառնությունը։

Բացառական հոլովը *գրական լեզվում ունի երկու տեսակ ձևավորում՝* –ից *և* –ուց *վերջավորություններով։* –Ից *վերջավորություն են ստանում բոլոր այն գոյականները, որոնք չեն պատկանում* ու *և կամ* ո *հոլովման։* Վա *հոլովման պատկանող բառերը բացառականում կարող են ունենալ երկու տեսակ ձևավորում՝ կարճ (կազմված ուղղականից) և երկար (կազմված տրականից)։ Օրինակ՝* օր-օրից *և* օրվանից, *շաբաթ-*շաբաթից *և* շաբաթվանից *(այսպես են նաև* տարի, ամիս, ժամ, ժամանակ, անուն, ամառ, ձմեռ, գիշեր, առավոտ, մահ *բառերը)։ Նույն ձևով* տուն *և* շուն *բառերի կարճ ձևերն են* տնից *և* շնից, *իսկ երկար ձևերը՝* տանից *և* շանից, *ըստ որում կարճ ձևերը գրական են, իսկ երկարները՝ ժողովրդական։*

*Ու հոլովման բառերը ևս կարող են բացառականում զուգահեռ ձևեր հանդես բերել։ Այսպիսի զուգաձևություններ ունեն միայն այն բառերը, որոնք սեռականում պատկանում են նաև ի հոլովման, ինչպես՝ Բաֆֆի-*Բաֆֆիից, Բաֆֆուց, *Անի-*Անիից, Անուց, *էրեբունի-*էրեբունիից, էրեբունուց, *Նիզամի-*Նիզամիից, Նիզամուց, *գոտի-*գոտիից, գոտուց *և այլն։ Այստեղ հարկ է նշել, որ* ից *վերջավորությամբ ձևը ըմբռնվում է գրական, իսկ* ուց *վերջավորությամբ ձևը՝ ժողովրդական։*

Բացառական հոլովում զուգաձևության դեպքերից մեկն էլ այն է, երբ գրաբարյան կամ արևմտահայ գրականի և բարբառների բացառականը է վերջավորությամբ գործածվում է արևելա-

հայերենում, որով և հնարավոր է լինում խոսքը ոճավորել։ Բերենք օրինակներ.

Արև բացվեց թուխ ամպերեն.
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն, *սարի* ծերեն.
Բարև բերավ ծաղիկներեն.
Սիրունիկ-սիրունիկ,
Նախշուն կաքավիկ։ (Հ. Թումանյան)

— *Որսկան ախպեր,* սարեն *կուգաս,*
Սարի մարալ կփնտրես..։
...*Դարդի* ձեռքեն *սարերն ընկավ*
Իմ արևս, իմ բալես... (Ա. Իսահակյան)

Գործիական հոլովում *զուգահեռ ձևեր են կազմում* ում *և* ությունն *ածանց ունեցող բառերը։* Ում *ածանցով բայանունների մեջ կան այնպիսիները, որոնք հանդես են գալիս հիմնականում* ով *գործիականի վերջավորությամբ* (սոսկում, հերկում, ներկում, պեղում, շահում, վատնում, մկրտում *և այլն), և համեմատաբար շատ են այն բառերը, որոնք զուգահեռ ձևեր են հանդես բերում, կազմվելով և՛* ով, *և՛* ը *հոլովիչներով, ինչպես՝* լարում, ճնշում, կոչում, մղում, աճում, հուզում, շարժում, բուժում, ընկալում, կախում, որակում, անկում, շտկում, ուսուցում *և այլն, ըստ որում այս բառերը ավելի հաճախ գործածվում են* ով *վերջավորությամբ, որ գրական են դարձել, իսկ սրանց* ը-*ով ձևը ըմբռնվում է գրքային կամ վերամբարձ։*

Ությունն *ածանցով կազմված քիչ բայանուններ կան, որ առավել* ով *մասնիկով են գործածվում* (վարժություն, եղելություն, *և էլի մի երկու բառեր)։* Ությունն *ածանցով բառերը մեծ մասամբ գործածվում են* ը *հոլովիչով և գրական ձև են, իսկ սրանց զուգահեռ* ով *վերջավորությամբ գործիականները, ի տարբերություն* ում-*ով կազմված բայանունների, ունեն ժողովրդական երանգ։ Այսպիսի բառերից են, օրինակ,* պարզություն, նեղություն, հաճություն, էություն, հեշտություն, կրթություն, անհնություն, կրկնություն, գժություն, լրջություն, լիություն, համառություն, բացառություն, որոշակիություն, մոայլություն, բարկություն, մոլություն, ճոխություն, մեծություն, նվիրվածություն, վերլուծություն, խվեարկությունն *և այլն։*

Նկատելի է, որ առարկայական նշանակությամբ ությունն *ա-*

ծանցով գոյականները հակում ունեն հոլովվելու ով վերջավորությամբ, իսկ պարագայական նշանակությամբ, այսինքն՝ ձևի պարագա դառնալիս՝ ը վերջավորությամբ։

Ներգոյական հոլովը *զուգահեռ ձևեր համարյա չի տալիս, եթե անտեսելու լինենք* մեջ *կապով վերլուծական և ում մասնիկով կազմված համադրական ձևերը* (այգում *և* այգու մեջ, գյուղում *և* գյուղի մեջ, սարում *և* սարի մեջ, հանրապետությունում *և* հանրապետության մեջ *և այլն), որոնցից համադրականները առավել բարձր ոճին են հարմարում, իսկ կապով վերլուծական ձևերը՝ հասարակ ոճին։*

Վերջավորություններով կազմված որոշ հոլովների արտահայտած գաղափարները կարելի է արտահայտել նաև հոլովների ու կապերի համադրություններով, որով և առաջ են գալիս զուգահեռ՝ վերլուծական ձևեր, ուստի և ընտրության հնարավորություն, հետևաբար և ոճական զանազան երանգներ՝ խոսքի մեջ։ Այս տեսակետից մեծ հնարավորություններ է հանդես բերում սեռական հոլովը, որը մի քանի կապերի հետ համադրվելիս արտահայտում է տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովների զանազան իմաստներ։ Այսպես, վրա *կապի հետ սեռականն արտահայտում է տրականի մի երկու իմաստներ, նախ՝ տեղի* (ծառի վրա–ծառին, պատի վրա–պատին), *այնուհետև՝ հանգման նշանակությամբ տրական, որ ժողովրդական խոսքին է հատուկ, ինչպես՝* Սիրահարվել էի Աշխենի վրա. Հոր վրա տարին մի անգամ էլ չի նամակ գրում։ *Սեռականի հետ համար և նպատակով կապերը արտահայտում են տրականներով նպատակի պարագայի իմաստ, ինչպես՝* եկել եմ քեզ տանելու համար (տանելու), *ելույթ* ունենալու նպատակով *բեմ բարձրացավ* (ելույթ ունենալու)։ *Այս զուգահեռ ձևերում կապերով սեռականն ավելի հասարակ ոճ է ստեղծում։*

Սեռականը մասին *կապի հետ միասին արտահայտում է բացառականի իմաստ, ինչպես՝* խոսում էին անցած–գնացած օրերի մասին (անցած–գնացած օրերից, խոսում են Լոռու հին–հին քաջերից։ *Հ. Թ.), որոնցից կապով ձևն ավելի հասարակ է, համադրականը՝ գրքային։ Արդեն հնացած է նույն նշանակությամբ* սեռական+վրա *կապակցությունը* (խոսում էին այս հարցի վրա)։ *Սեռականը* կողմից *կապի հետ ունի բացառականով արտահայտվող ներգործության խնդրի իմաստ, ինչպես՝* Թեկնածու է առաջադրվել մեր կազմակերպության կողմից=

կազմակերպությունից: Այս դեպքում էլ կապով սեռականը գրական նորման է, իսկ բացառականը գրքային երանգ ունի:

Սեռականը հետ կապով արտահայտում է գործիականի իմաստ՝ միասնության նշանակությամբ (աշակերտների հետ= աշակերտներով): Ինչպես այստեղ, այնպես էլ մյուս դեպքերում, կապով կապակցությունն ավելի բացահայտ է արտահայտում առարկաների հարաբերությունները, քան հոլովական համադրական ձևը: Սեռականի և մեջ կապի ու ներգոյականի մասին խոսվել է վերը: Բացի սեռականից, բացառական և գործիական հոլովները ևս կապերի հետ գործածվելիս զուգահեռներ են կազմում գործիականի հետ: Այսպես, բացառական հոլովով դրված անորոշ դերբայի հետ հետո կապը կարող է նույն դերբայի գործիականի հաջորդելու ժամանակային իմաստն արտահայտել (գրելուց հետո=գրելով. գրելով իր վեպը..., նշանակում է վեպը գրելուց հետո), իսկ հանդերձ կապը գործիականի հետ գործածվում է հավելադրաբար, քանի որ ունի դարձյալ գործիականի իմաստ (գրքերով հանդերձ=գրքերով), ուստի և սոսկ բարձր և հանդիսավոր ոճի մեջ է գործածվում:

Ասվածից հետևում է, որ միևնույն հարաբերությունն արտահայտելու համար լեզուն տալիս է զուգահեռ միջոցներ: Այսպես, օրինակ.

Եկավ երեխայով,
Եկավ երեխայի հետ,
Եկավ երեխայով հանդերձ:

Կամ՝

Եկել եմ սովորելուց,
Եկել եմ սովորելու համար,
Եկել եմ սովորելու նպատակով:

Այսպիսի զուգահեռ ձևերը խոսքը ոճավորելու և այն բազմազան դարձնելու միջոցներ են, եթե սրան էլ ավելացնենք բուն համադրական հոլովական ձևերի արտահայտած իմաստային նրբությունները, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի մեծ հարստություն ունի իր մեջ գոյականի հոլովման համակարգը: Բերենք միայն մեկ օրինակ: Գործիական հոլովը կարող է կապվել ամենատարբեր իմաստներ ունեցող բայերի հետ և համապատասխան դրան էլ ստանալ քերականական ամենաբազմազան նշանակություններ՝ համապատասխան կապակցության մեջ բայի և գոյականի ունեցած նշանակությունների: Համեմա-

տության նպատակով բերենք հետևյալ կապակցությունները, տեսնելու համար, թե իմաստային ինչ բազմազանություն է ներկայացնում գործիական հոլովը.

1. Կտրեցի դանակով
   դժվարությամբ
2. Անցավ փողոցով
   ասեղի անցքով
   կամուրջով
   առվով
   կողքով
   ընթերցելով
   դաշտի երկարությամբ
   գիրքը դնելով սեղանին
3. Հպարտանում եմ քեզանով
   մեր հայրենիքով
   մեր երկրի հզորությամբ
4. Եկավ գիշերով
   արագությամբ
   վազելով
   մեկի հրավերով
5. Նայեց աչքի տակով
   խստությամբ
   անցքով
   վերևով
6. Բարձրացավ արագ քայլերով
   սանդուղքներով
7. Գրկեց երկու ձեռքով
   կարոտով
   հյուրերի ներկայությամբ
8. Կերավ կեղևով
   եռանդով
9. Համոզեց շատ ասելով
   ապացույցներով
10. Մնաց ետևից նայելով
    խաղաղությամբ
    ընկերներով
11. Տվեց ծոն պատովը
    թանկ գնով
    բաժակով
12. Գրեց իմ օգնությամբ
    գրիչով
    հաջողությամբ
    երկար մտածելով
13. Ասացի կատակով
14. Աշխատեց ամիսներով և այլն:

Բերված օրինակները չեն սպառում գործիական հոլովի արտահայտած իմաստային նրբությունները և քերականական (շարահյուսական) նշանակությունները։ Նման իմաստային բազմազանություններ հանդես են բերում մեր մյուս հոլովները ևս, որոնք արտահայտման հարստության, ճշտության և բազմազանության աղբյուր են։

Իբրև բառ բարդ գոյականները *կարող են դառնալ իրենց բաղադրիչներով կազմված կապակցությունների զուգահեռներ։ Օրինակ.*

Գոյական + բայ	Գոյական + գոյական
հացթուխ = հաց թխող	լեռնագագաթ = լեռան գագաթ
մեքենավար = մեքենա վարող	ծովափ = ծովի ափ
գրավաճառ = գիրք վաճառող	հորեղբայր = հոր եղբայր
փայտահատ = փայտ կտրող	մորաքույր = մոր քույր

Բայ + գոյական
գրելաձև = գրելու ձև
վառելափայտ = վառելու փայտ
բնակավայր = բնակվելու վայր
թմրադեղ = թմրեցնող դեղ

Իհարկե, միշտ չէ, որ այսպիսի զուգահեռներում համադրական բառը և կապակցությունն իմաստներով լիովին համապատասխանում են միմյանց, սակայն միշտ էլ մոտավոր նույնություն լինում է, և միմյանց փոխարեն գործածվելով՝ տարբեր ոճական երանգ են բերում խոսք, ըստ որում կապակցությունները ժողովրդական մտածողությանն են հատուկ, իսկ բարդությունները՝ բարձր ոճին։ Եվ ինչպես միշտ, այս դեպքում էլ զուգահեռ ձևերի գործածությունը նպաստում է խոսքի բազմազանությանը, օգնում խուսափելու արտահայտման միակերպությունից։

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ ԽՈՍՔՈՒՄ

Ածականն, իբրև առարկայի հատկանիշ անվանող բառ, խոսքում հանդես է գալիս առարկան բնութագրող հատկությամբ։ Բայերը, հատկապես հարակատար և ենթակայական դերբայները, ևս բնութագրում են առարկան, սակայն առարկայի փոփոխվող, շարժուն հատկանիշ են անվանում, հաճախ գործողության կերպի հետ միասին, այնինչ ածականը անվանում է անփոփոխ, անշարժ հատկանիշ։

Ածականը բնութագրվում է մի քանի հատկանիշներով, որոնցով էլ պայմանավորվում է նրա տեղը խոսքի համակարգում։ Դրանցից են.

1. Հակադրականություն. *Սա ածականը բնութագրող կարևոր հատկանիշներից է, որը դեռևս պյութագորական Ալկեոմոնն է նկատել։ Որակական ածականները կազմում են հակադրական զույգեր՝* մեծ–փոքր, լավ–վատ, քաղցր–դառն, սև–սպիտակ, բարի–չար, ուժեղ–թույլ, գիտուն–տգետ, վախկոտ–անվախ, խոհեմ–անխոհեմ, զոհ–դժգոհ, բախտավոր–անբախտ *և այլն։ Ածականի հակադրականությունը միջոց է դառնում հակադրության ճարտասանական ձևեր կազմելու համար։*

2. Ժխտականություն. *Ածականներն ունեն ոչ ժխտական մասնիկ առնելու միջոցով հատկանիշի գաղափարը ժխտելու*

առանձնահատկություն։ Օրինակ՝ հաջող–ոչ հաջող, մեծ–ոչ մեծ, փոքր–ոչ փոքր, լավ–ոչ լավ, վատ–ոչ վատ։ Ածականի ժխտական ձևերը հատկանիշների նրբիմաստներ են արտահայտում։ Ոչ լավ-ը կարող է վատ նշանակել, բայց կարող է և վատ-ից տարբեր լինել, ոչ փոքր-ը միշտ չէ, որ մեծ է։ Այսպիսի գաղափարները մի կողմից բառապաշարի մեջ չմտնելով հանդերձ՝ հարստացնում են գաղափարների կարգը լեզվում, մյուս կողմից էլ դառնում արտահայտման զուգահեռ ձև՝ բազմազան դարձնելով խոսքը։

3. Աստիճան և աստիճանավորություն. Որակական ածականի կարևոր հատկանիշներից մեկն էլ այն է, որ ցույց է տալիս միևնույն հատկանիշի չափը ըստ երկու ծայրաբևեռների, ինչպես՝ մեծ–ամենամեծ, փոքր–ամենափոքր, երկար–ամենաերկար, հզոր–հզորագույն, գեղեցիկ–գեղեցկագույն, լավ–լավագույն և այլն։ Քանի որ ածականներն ունեն հակադրականության կարգ, այս պատճառով հատկանիշներն աճում են հակադիր ուղղություններով, ինչպես՝ ամենամեծ–մեծ||փոքր–ամենափոքր, որով և հակադրություն է ստեղծվում ոչ միայն մեծի և փոքրի, այլև ամենամեծի և ամենափոքրի միջև։ Նույն ձևով՝ ամենաքաղցր–քաղցր||դառն - ամենադառն, ամենաուժեղ - ուժեղ||թույլ-ամենաթույլ և այլն։

Աստիճանի կարգը որոշ անորոշություն ունի բառային մակարդակում։ Այսպես, մեծ կարող է համարվել և Արարատ լեռը, և մի բալի չափ թանկարժեք քարը։ Այս հարաբերությունը վերանում է խոսքի մեջ, երբ հատկապես հակադիր ծայրաթևերի միջև ածականի դրական աստիճանի վրա դրվում են հատկանիշների տարբեր չափերն արտահայտող բառեր՝ ավելի, առավել, սակավ, նվազ, քիչ, բավական, շատ, անհամեմատ և այլն, որով և առաջ է գալիս աստիճանավորություն։ Աստիճանն ու աստիճանավորությունը խոսքի մեջ դառնում են միջոց առարկաների տարբերակման համար և գործածվում են ինչպես աստիճանի ձևեր կազմելու, այնպես էլ համեմատություններ անելու համար։

4. Բացառիկություն. Մի խումբ ածականներ արտահայտում են հատկանիշի բացառիկության, անպարփակելիության, անպարագրելիության գաղափար, ինչպես՝ անսահման, անհման, անթիվ, անհաշիվ, անհամար, աներևակայելի, անընդգրկելի,

անիմանալի, անհասանելի և այլն, որոնց օգնությամբ կազմում ենք չափազանցություններ։

5. Վերաբերմունք. Ածականն առարկան երկու կերպ է բնութագրում։ Մի դեպքում այն առարկան բնութագրում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն արտահայտելով, իսկ մյուս դեպքում՝ օբյեկտիվորեն, առանց սուբյեկտիվ վերաբերմունքի։ Այսպես, օրինակ, սուբյեկտիվ վերաբերմունք չեն արտահայտում լայն, նեղ, խոր, կարճ, հաստ, բարակ, լեռնային, դաշտային, երկաթե, փայտե ածականները, սակայն որակական ածականների մի մասն արտահայտում է խոսողի սուբյեկտիվ (դրական կամ բացասական) զանազան վերաբերմունքները, ինչպես՝ լավ, բարի, բարեհամբույր, կորովի, գեղազանց, քաջ, առնական, գեղեցիկ, իմաստուն, շենշող, հոյաշեն, պայծառ, վեհ, վեհ, հզոր, ճնճղաձին, ջերմագին, փառապանծ և այլն (դրական վերաբերմունք) և վատ, ժանտ, ժլատ, բիրտ, կոպիտ, ագահ, անխելք, գռռոզ, թունոտ, նենգ, տհաս, անփառունակ, լիրբ, լկտի, չարամիտ, հանդուգն, անզուսպ, մոլի, ճնձռոտ, անշուք և այլն (բացասական վերաբերմունք)։ Ածականի այս հատկանիշը կարևորություն ունի հատկապես գեղարվեստական խոսքում, գեղարվեստական պատկերների և կերպարների բնութագրության մեջ։

Խոսքի մեջ փոխաբերաբար գործածվելու հետևանքով բառային մակարդակում ունեցած չեզոքությունը կարող է վերանալ, և բառը կարող է ձեռք բերել ընդգծված վերաբերմունք։ Այսպես, օրինակ, սև բառը բառային մակարդակում ընդհանրապես չեզոք է, բացասական կամ դրական վերաբերմունք չի ցույց տալիս, սակայն գործածության մեջ այն կարող է վերաբերմունք արտահայտել։ Այսպես, օրինակ՝

Հաճելի՞ է մեջքներիդ վրա տանել այն գահը
Որի վրա է նստած Հյուսիսի սև ագռավը։
(Հ. Հակոբյան)

6. Համանշություն. Ածականը համանիշ ձևեր ունեցող խոսքի մաս է և կազմում է բառային համանիշների շարքեր, օրինակ, պարզ–ջինջ, հստակ–մաքուր, դժվար–խրթին, սիրալիր–մրտերմիկ–մտերմական։ Այն կազմում է նաև նույնանշության շարքեր, ինչպես՝ բարձրագույն–ամենաբարձր–ամենից բարձր, մեծագույն–ամենամեծ–ամենից մեծ, որոնցից առաջինները

բարձր ոճին են հարմարում, երկրորդները՝ սովորական ոճին, իսկ վերջինները՝ հասարակ ոճին։

Կազմությամբ բաղադրյալ ածականը նույնանշային հարաբերության մեջ է մտնում բայական և անվանական կապակցությունների հետ, ինչպես՝

Բայական

լայնատարած-լայն տարածված	բարձրաթռիչ-բարձր թռչող
նորակառույց-նոր կառուցված	արագընթաց-արագ ընթացող
նորահայտ-նոր ի հայտ բերված, նոր հայտնված	դժվարամարս-դժվար մարսվող
արագընթաց-արագ ընթացող	ճեպընթաց-ճեպով ընթացող

գոյականական	ածականական՝
բարձրահասակ-բարձր հասակով	թախծալի-թախիծով լի
ամրակազմ-ամուր կազմվածքով	հողաղուրկ-հողից զուրկ
կարմրաթուշ-կարմիր թշերով	լուսագեղ-լույսի պես գեղեցիկ
սևաչյա-սև աչքերով	հորդառատ-հորդ և առատ

Նույնանշության այս զուգահեռ ձևերը մի կողմից արտահայտման հնարավորությունները հարստացնելու, մյուս կողմից էլ խոսքը ոճավորելու միջոցներ են, քանի որ համադրական ձևերը հարմար են սովորականից բարձր ոճին, բանաստեղծական խոսքին, իսկ կապակցությունները՝ հասարակ ոճին։

Խոսքի տարբեր տիպերում ածականը տարբեր ոճական գործառություններ ունի։ Գեղարվեստական խոսքում կարևոր դեր ունեն որակական ածականները, որոնք դրվելով գոյականի կամ բայի հետ՝ մեծ մասամբ պայմանավորում են խոսքի գեղարվեստականությունը և բանաստեղծականությունը։ Որակական ածականը մեծ դեր ունի նկարագրության, գեղարվեստական պատկերների ստեղծման մեջ։ Առանց նրա խոսքը լինում է մերկ, նկարագրություններն ու պատկերները՝ չոր ու աննյութ։ Ածականն է, որ դառնում է գեղարվեստական պատկերի համար զարդ։ Հետևյալ օրինակում կարելի է տեսնել, թե ինչ դեր ունի որակական ածականը գեղարվեստական պատկերի համակարգում։

«Արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողքերով, որ աչք էին շլացնում։ Արագածի պսակաձև գագաթը չէր երևում, նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանցիկ շղարշով։ Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով։ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սֆանչելի ալեկոծությամբ։

Գեղեցիկ էր այդ առավոտը։

Թռչունները ուրախ-ուրախ ճախրում էին մի թուփից դեպի մյուսը։ Գույնզգույն թիթեռները, գույնզգույն ծաղիկների նըման, ցանված էին օդի մեջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևքերով թափահարում էր, շտապելով դեպի Արաքսի մորուտները։ Զեռնասուն հղջերուները, վայրենի վիթն ու այծյամը դուրս էին եկել խոսրովի արքայական անտառներից և ազատ, համարձակ վազվզում էին շրջակա մարգերի վրա»։ (Բաֆֆի)

Մասամբ խոսքի տիպով է պայմանավորված, թե ածականն ինչ գործառույթամբ է հանդես գալու նրա մեջ։ Գեղարվեստական խոսքում ոչ միայն որակական, այլև հարաբերական ածականներն ստանձնում են խոսքը պատկերավոր, հուզական ու գունեղ դարձնելու գործառույթն, գեղագիտորեն են բնութագրում մարդկանց, իրերն ու երևույթները՝ դառնալով մակդիր։ Մակդիր դառնալը ածականի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է։

Հարաբերական ածականներն առավել գործածվում են գիտական խոսքում և հրապարակախոսության մեջ և կոչված են ծառայելու ոչ թե խոսքը գեղագիտորեն հարստացնելու, նրան պատկերավորություն կամ հուզականություն տալու, այլ մտքի ճշտության, իմաստի որոշակիության գործին։ Այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակից.

ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն հերթական նիստում քննարկեց երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման 1948 թվականի պետական պլանի կատարման արդյունքները։

Նիստում նշվեց, որ մասսաների աշխատանքային ակտիվության ու ձեռներեցության հետագա բարձրացման, սոցիալիս-

տական մրցության զարգացման, կուսակցական, խորհրդային և տնտեսական մարմինների նպատակասլաց աշխատանքի շնորհիվ անցած տարի ապահովվեցին հանրային արտադրության դինամիկ զարգացում, նրա արդյունավետության աճ, բարելավվեցին որակական ցուցանիշները։ (Խորհրդային Հայաստան, օրաթերթ)

Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, խոսքի բովանդակության համապատասխան առավել գործածված են հարաբերական ածականներ։ Գիտական խոսքում և հրապարակախոսության մեջ որակական ածականները, հարաբերականների նման, ծառայում են ոչ թե պատկերի, հույզի կամ գեղագիտական որևէ խնդրի, այլ սոսկ առարկաների և առարկայացված հասկացությունների ճիշտ ու ճշգրիտ ներկայացմանը (խոսքը չի վերաբերում այն գիտություններին, որոնց քննության նյութը գեղագիտությունն է, գեղարվեստական գրականությունը և այլն)

Ըստ իրենց կիրառական այս առանձնահատկությունների, ածականները երկփեղկված են. ընդհանրապես որակական ածականները կապակցության մեջ են մտնում թանձրացական գոյականների, իսկ հարաբերական ածականները՝ վերացական գոյականների հետ, ինչպես այդ երևում է նաև մեր բերած օրինակներից։

Առարկան բնութագրող խոսքի մաս է նաև բայը։ Հատկապես բայի հարակատար, ենթակայական և ապառնի դերբայները, ինչպես նաև անորոշ դերբայի սեռական հոլովը հանդես են գալիս մոտավորապես նույն գործառությամբ, ինչ գործառությամբ որ հանդես է գալիս ածականը, այսինքն, դառնում են որոշիչներ, հարստացնելով առարկայի որակական բնութագրությունը։ Այս առումով ածականի արտահայտած իմաստին արդի հայերենում այնքան մոտ է ըմբռնվում հարակատարի արտահայտած իմաստը, որ բայական ձևն արդեն ստանում է ածականական ածանց և վերածվում ածականի գերադրական աստիճանի, որի պատճառով դերբայն ըմբռնվում է իբրև դրական աստիճան։ Այսպես, օրինակ, արդի հայերենում ունենք ամենազարգացած (Նա իր կոլեկտիվի ամենազարգացած մարդն է), ամենակարդացած, ամենասիրված և այլ բառեր, որոնք իսկապես ոչ բայ են և ոչ էլ ածական. բայ չեն, որովհետև չունենք ամենազարգանալ և նման ձևեր, և ածական չեն այնքանով, որ-

քանով որ սրանց զարգացած, կարդացած, սիրված ձևերը բայ են և ոչ ածական։

Ածականի և բայի իմաստային մոտիկությունը և որոշչային կիրառության գործառությունը դառնում են պայման, որ ածականն ու բայը դիտվեն համանիշներ խոսքի մակարդակում (հմմտ. կանաչ դաշտեր–կանաչած դաշտեր, ծաղկափթիթ և ծաղկած, ծաղկող ծառեր, այգիներ)։ Համանշային զուգահեռներ են դառնում իշ, իկ, ու, ովի, ուն, ան ածանց ունեցող ածականները և համապատասխան հիմքերով կազմված ենթակայական դերբայները, ինչպես՝ ավերիշ–ավերող, թովիշ–թովող, հմայիշ–հմայող, սպանիշ–սպանող, ազդեցիկ–ազդող, երգեցիկ–երգող, անցողիկ–անցնող, հատու–հատող, ազդու–ազդող, կախովի–կախվող, բացովի–բացվող, ծալովի–ծալվող, հնչուն–հընչող, ոլորուն–ոլորվող, տոկուն–տոկացող, կծան–կծող, ճղճղան–ճղճղացող, բլբլան–բլբլացող, խաբլան–խաբող և այլն։ Նույն ձևով համանիշ զույգեր են կազմում ուն ածանցով մի քանի ածականներ և համապատասխան հիմքով կազմված հարակատար դերբայներ, ինչպես՝ ցեխոտ–ցեխոտված, փոշոտ–փոշոտված, յուղոտ–յուղոտված և այլն։

Համանիշ այս ձևերի առկայությունը լեզվի հարստության վկայություն է և միաժամանակ հնարավորություն՝ ըստ անհրաժեշտության և ըստ պատշաճի ընտրություն կատարելու համար։

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ ԽՈՍՔՈՒՄ

Թվականները գոյականի քանական հատկանիշներ անվանող բառերն են։ Թվական անունը անհամեմատ աղքատ խոսքի մաս է։ Այն բաղկացած է քիչ թվով բառերից. հայերենում թվականների քանակը հազիվ է անցնում 400-ից, որոնցով սակայն կարելի է արտահայտել ցանկացած թվային գաղափար։ Թվականները քերականական կարգեր չունեն, իմաստաբանական կարգերն էլ աղքատ են։ Թվականները կոչված են ծառայելու մրտքերի արտահայտման ճշտությունը, այդ պատճառով էլ նրանց գաղափարները որոշակի են և չեն ենթարկվում փոխակերպությունների։

Քանի որ թվային կարգն ինքը ներկայացնում է վերելքի կամ վայրէջքի գծերով աճում կամ նվազում, այդ պատճառով էլ

թվականները դառնում են միջոց աստիճանի ճարտասական ձև կազմելու համար։ Թվականներից մի երկուսը՝ յոթ (սովորաբար սրա ժողովրդական ձևը՝ օխտը), տասը, քսան, քառասուն, հարյուր, հազար և միլիոն, գործածվում են չափազանցությունների ճարտասական ձևում։

Թվականն ընդհանրապես չունի ոճական լիցքավորումներ, ինչպես որ ունի գոյականը կամ ածականը։ Այն չունի համանշություն, հականշություն, վերաբերմունքի և այլ ոճական կարգեր։ Այս պատճառով էլ թվականի դերը, իբրև ոճավորման միջոց, շատ չնչին է։

ԲԱՅԸ ԽՈՍՔՈՒՄ

Բայն աչքի է ընկնում ոչ միայն իր իմաստաբանական ու քերականական կարգերի ու բառաձևերի հարստությամբ, այլև նախադասության մեջ ունեցած բացառիկ դերով, որով և պայմանավորված է նրա կարևոր դերը նաև խոսքի ոճաբանական համակարգում։

Բայն ունի խոսքիմասային ընդհանուր հատկանիշներ, որոնք նրան կարևոր տեղ են հատկացնում խոսքի մեջ։ Ահա դրանցից կարևորները.

1. Հաստատման և ժխտման կարգ. Յուրաքանչյուր բայ նախադասության մեջ հանդես է գալիս կամ հաստատական և կամ ժխտական ձևով (գրել–չգրել, եկավ–չեկավ, խոսել–չխոսել, ծաղկած–չծաղկած, կգնա–չի գնա, կարդա–մի՛ կարդա և այլն)։ Ժխտական ձևերով ոչ միայն առարկայի գործողության, վիճակի, գոյության ժխտում ենք արտահայտում, այլև երբեմն այնպիսի գաղափարներ, որոնք արտահայտվում են այլ բառերով։ Այսպես, օրինակ, չտեսնված բայաձևը սոսկ տեսնված գաղափարի ժխտում չի արտահայտում, այլև հիանալի իմաստը, որ չունի նրա հաստատականը։

Քանի որ բայը կազմում է հականիշներ (սիրել–ատել, հաղթել–պարտվել, տանել–տարվել), այդ պատճառով էլ հաստատական և ժխտական ձևերը դառնում են դրանց համանիշները (օրինակ, հաղթել–չպարտվել, չհաղթել–պարտվել) և հարստացնում արտահայտման հնարավորությունները, հնարավորություն տալիս արտահայտել մտքերն իրենց բազմատեսակ նրբիմաստներով։

2. Համանիշներ և նույնանիշներ. Համանիշների և նույնանիշների շարքեր են կազմում ոչ միայն ածականից-գոյականից կազմված բայերը, այլև բայահիմքերից կազմվածները, մի բան, որ հաստատում է, թե համանիշությունը և նույնանիշությունը բային հատուկ երևույթներ են։ Ահա բայական համանիշների և նույնանիշների մի քանի օրինակներ.

անբախտանալ-դժբախտանալ, թշվառանալ
հանդիմանել-կշտամբել, նախատել
անարգել-խայտառակել, անպատվել
բարգավաճել-շենանալ
ոգևորել-խրախուսել, խանդավառել, թևավորել
հարվածել-ձաղկել, խփել
լալ-արտասվել, հեկեկալ
գժվել-խելագարվել, ցնորվել
ձերբակալել - կալանավորել, բանտարկել
իմանալ-գիտենալ
գովել-գովաբանել
առնել-գնել
ծաղկել-փթթել
մտերմանալ-ընկերանալ, մոտիկանալ
վատնել-շռայլել, մսխել
թափառել-դեգերել և այլն։

Նույնանիշների և համանիշների մասին խոսք եղել է վերը։ Այստեղ ասենք, որ այսպիսի բառերը հնարավորություն են տալիս ոչ միայն արտահայտել գաղափարը ավելի ճիշտ, ավելի տեղին, դիպուկ ու պատշաճ ձևով, այլև դրանք իրենց հետ բերում են միջավայրի բներանգը, արտահայտում խոսողի զանազան վերաբերմունքները համապատասխան առարկաների կամ գործողության նկատմամբ։ Նույնանիշներ և համանիշներ ունեն ոչ բոլոր բայերը։

3. Հականիշների շարքեր նույնպես կարող են կազմել ոչ բոլոր բայերը։ Դրանք ևս գոյականից, ածականից ու մակբայից կազմված բայեր են, բայց նաև բայահիմք բայեր, ինչպես՝ սիրել-ատել, մեծանալ-փոքրանալ, լավանալ-վատանալ, ուրախանալ-տխրել, ուժեղանալ-թուլանալ, սկսվել-վերջանալ, գալ-գընալ, հաղթել-պարտվել և այլն։

4. Աստիճանի գաղափարն իր յուրահատկությունն ունի բայի համակարգում։ Ածականից ու մակբայից կազմված բայերը ածականի ու մակբայի նման էլ աստիճաններ են կազմում։ Ինչպես՝ լավանալ-ավելի լավանալ, շատ լավանալ, չափազանց լավանալ (ածականից), հեռանալ-ավելի հեռանալ, շատ հեռանալ, չափազանց հեռանալ (մակբայից) և այլն։ Այլ ձևով են աս-

տիճան կազմում բայահիմք բայերը։ Աստիճան կարող են կազմել բայերն ըստ ցույց տված գործողության ուժգնության և սաստկության։ Այսպես, օրինակ,

լալ-հեծել, հեծեծել, կոծել	վազել-սլանալ
վառել-տոչորել, հրդեհել	ուտել-խժռել
վախենալ-սարսափել, զարհուրել	շարշարել-տանջել, խոշտանգել

և այլն։

Սաստկականության գաղափար. բազմակիության ու տևականության գաղափարների հետ մեկտեղ արտահայտվում է նաև բայահիմքի կրկնության միջոցով, ինչպես՝ փայլել-փայլփլել, շողալ-շողշողալ, գոռալ-գոռգոռալ, հեծել-հեծեծել և այլն, որոնք առաջինների նման դառնում են միջոց աստիճանի ճարտասանական ձևի համար։

5. Վերաբերմունքը բայի ամենակարևոր ոճական առանձնահատկություններից է։ Զգալի թվով բայեր արտահայտում են զանազան կարգի (դրական և բացասական բնույթի) վերաբերմունքներ, որոնք գնահատողական արժեք ունեն և կարևոր դեր ունեն հատկապես բացասական ու ժխտական երևույթները պատկերելու, գեղարվեստական երկում զանազան կերպարներ ստեղծելու գործում։ Այսպես, օրինակ, բացասական վերաբերմունքներ են արտահայտում հետևյալ բայերը. անեռեսանալ, լրբանալ, դավաճանել, մատնել, ուրանալ, չմեղանալ, ճողոպրել, սողոսկել, ծլկել, ֆծնել, խցկվել, վխտալ, հոհոալ, ճղճղալ։ Սրանք մարդու բացասական հատկանիշներ բնութագրող բառեր են։

Բայերը բաժանված են նաև ըստ իրի, անձի և կենդանի այլ արարածների։ Մարդու և կենդանիների միանման հատկանիշները անվանվում են հաճախ տարբեր բայերով, և կենդանուն բնորոշ գործողությունը մարդուն վերագրելիս առաջ է գալիս փոխաբերություն, որ միշտ վերաբերմունքի հետ է կապվում։ Օրինակ, կենդանիների ոռնալ, բառաչել, զռալ, լափել, խայթել հատկանիշները մարդկանց համար գործածելիս ձեռք են բերում բացասական բովանդակություն, ընդգծված թշնամական վերաբերմունք խոսողի կողմից նրան, ում հասցեին ասվում է։ Բայց այս մասին կխոսվի հետո։

6. Սեռ. նախադասության ներգործական, չեզոք և կրավորական կառույցներ. Սեռը բայը բնորոշող ամենակարևոր կարգերից

է, որի հետ են կապված խոսքի չեզոք, ներգործական և կրավորական կառուցվածքները։ Խոսքի չեզոք կառուցվածք է լինում այն դեպքում, երբ նախադասության մեջ ստորոգումը կատարվում է չեզոք բայով։ Այսպիսի կառուցվածք ունի, օրինակ, Հ. Սահյանի «Լուսաբաց» ոտանավորը.

Լույսը առավ սարին,
Սարսռում է սարը,—
Սարերը վեր թռան։
Հավքն արթնացավ ծառին,
Սարսռում է ծառը,—
Ծառերը վեր թռան։

Քարայծն ելավ քարին,
Սարսռում է քարը,—
Քարերը վեր թռան...
Եվ ինձ մի պահ թվաց՝
Քարերի տակ քնած
Դարերը վեր թռան։

Ներգործական կառուցվածքի նախադասությունների բայ-ստորոգյալը ներգործական սեռի բայ է։ Ահա մի օրինակ Հ. Սահյանի «Պապը» ոտանավորից.

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը։

Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է
Եվ բոլոր կամերը
Մեն-մենակ քարել է...

Չեզոք և ներգործական կառուցվածքները արտահայտման հիմնական ձևերն են, անհամեմատ քիչ հանդես եկող ձև է մտքի արտահայտման կրավորական եղանակը, որը նախադասության կառուցումն է կրավորական բայ-ստորոգյալի միջոցով։

Եթե չեզոք ու ներգործական կառուցվածքները գեղարվեստական խոսքի ու առտնին, առօրյա, հաղորդակցման սովորական կառույցներ են, ապա կրավորական կառուցվածքի նախադասությունները մեծ տեղ ունեն գիտական խոսքում, մասամբ նաև հրապարակախոսության մեջ։ Կրավորական կառուցվածքի դեպքում մտածողությունն ընթանում է այնպես, որ օբյեկտ հանդիսացող առարկան առնվում է իբրև սուբյեկտ (դառնում է նախադասության քերականական ենթակա), իսկ տրամաբանական ենթական դառնում է ոչ այնքան կարևոր, մինչև այն աստիճան, որ կարող է նաև չարտահայտվել։ Այդ ցույց տանք հետևյալ օրինակով.

«Հայ և օտար լեզուների քերականությունների մեջ սովորաբար ընդունվում է ածականի համեմատության երեք աստիճան՝ դրական—մեծ, բաղդատական (համեմատական)—ավելի մեծ, գերադրական—ամենամեծ։ Սրանցից դրական աստիճանը

սկզբունքորեն տարբերվում է բաղդատական և գերադրական աստիճաններից, նրանով, որ դրականի դեպքում արտահայտվում է բացարձակ հատկանիշ, հատկանիշ առանց համեմատության, օրինակ, մեծ քաղաք, իսկ բաղդատականի և գերադրականի դեպքում, որպես կանոն արտահայտվում է հարաբերական հատկանիշ, որը համեմատվում է այլ առարկաների նույն հատկանիշի հետ, օրինակ, ավելի մեծ քաղաք, ամենամեծ քաղաքը։ Ահա ելնելով սրանից, որոշ քերականական աշխատություններում դրականը համեմատության աստիճան չի համարվում և ընդունվում է համեմատության երկու աստիճան՝ բաղդատական և գերադրական»։ (Մ. Ասատրյան, Հայոց լեզու, 1983, էջ 145)։

Կրավորական կառուցվածքի դեպքում վերանում է նաև խոսողի հոգեբանական միջամտությունը իր ներկայացրած պատումի մեջ, ասելիքն ասում է ուրիշի կողմից, խոսքը դառնում է մի տեսակ շեզոք, խոսողը կարծես թե իրեն ապահովագրում է պատմածի բովանդակության համար պատասխանատվությունից։ Ասվածին ավելացնենք նաև այն, որ ներգործական կառուցվածքը սովորական ոճ է առաջ բերում, այնինչ կրավորականը առավել բարձր ոճի է հարմարում։ Այսպես՝ Իրեն տվել է հարբեցողության նախադասությունը սովորական է, այնինչ Լիովին տրվել է գրականությանը կրավորական կառուցվածքը բարձր ոճի արտահայտություն է։

Գեղարվեստական խոսքում կրավորական կառուցվածքը հենց արտահայտություն է լինում վերամբարձության կամ հանդիսավորության։ Ռաֆֆին «Սամվելում» երբեմն-երբեմն դիմում է այս միջոցին։

Նա այն աստիճան գրավված էր յուր երգով, որ բնավ չէր լսում յուր ետևից տրոփող սմբակների ձայնը... (Ռաֆֆի)

Արդի հայերենը հարուստ է դերբայներով՝ բայական յուրահատուկ բառաձևերով։

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ

Անորոշ դերբայը խոսքում

Անորոշ դերբայի գործառության մեջ պետք է նշել երկու կարևոր կետ.

ա. Անորոշ դերբայով կազմվում են անդեմ նախադասություններ՝ իբրև կոչեր (Հասնե՛լ առաջավորներին. Ձծխե՛լ. Ձաղմրկե՛լ և այլն), նաև իբրև հրաման, կարգադրություն, առաջարկություն, վճիռ, պահանջ և այլն։ Օրինակ.

— Ձորքը ոտքի՛ հանել և պատրա՛ստ լինել,— ասաց իշխանը ներկա գտնվող հրամանատարներին և թիկնապահներին։ (Ս. Ջորյան)

Երկու մեքենաներ միաժամանակ դուրս եկան Երևանից և Լենինականից։ Որոշել, թե ինչքան ժամանակ հետո մեքենաները կհանդիպեն ճանապարհին, երբ շարժվում են նույն արագությամբ, և ամբողջ ճանապարհի համար պահանջվում է 2 ժամ ժամանակ։

Հատվածից դուրս գրել ածականները և որոշել նրանց շարահյուսական կիրառությունը։

Այս կիրառությամբ անորոշը որոշակի արտահայտաձև է դարձել այսպես կոչված արձանագրական ոճում։ Ահա մի օրինակ.

Ձեղավ ընկերներ... մինչև երեք օր
Կուլակին տրված պլանն ավարտել,
Թերացողներին հուպ տալ օրենքով,
Թաքցրած հացի տեղերը պարզել։
Վաղը հրավիրել կոլխոզի, գյուղի
Ձքավորական անհապաղ նիստեր,
Գարնանացանի թվերն ստուգիչ
Քննել նիստերում, պարզել, հաստատել։

(Ն. Ձարյան)

Սա լիովին նման է արձանագրությունների որոշումներին, որոնք կազմվում են անորոշ դերբայից ու նրա լրացումներից, ունեն կարգադրության, մեղմ հրամանի արժեք, որ անվերապահորեն պետք է կատարվի, այսինքն արտահայտում են պարտադրողականություն։ Սա պարտադրողականության անորոշն է։

բ. Անորոշ դերբայով կազմվում են անդեմ նախադասություններ երբեմն անորոշության գաղափար, անվճռական, տարտամ ցանկություն, երբեմն էլ թաքնված, քողարկված վճիռ արտահայտելու համար։ Ահա մի օրինակ Վ. Տերյանից.

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Ձսիրել, չխորհել, չափսոսալ—

Հեռանա՞լ...
Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
Գիշերում այս անշող
Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,
Մոռացման ոսկի շող...
Մի վայրկյան ամենից հեռանալ,
Ամենին մոռանալ.—
Խավարում, ցավերում քարանալ
Մեն միայն...
Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
Ամենին մոռանալ,
Զսիրել, չտենչալ, չկանչել,
Հեռանա՞լ...
«Լինել, թե չլինել,— այս է խնդիրը»։ (Շեքսպիր)

Անորոշ դերբայով կարելի է տալ հարց և պատասխանել։ Ահա մի օրինակ.

— Ապրե՞լ...
— Ապրել միայն կարմիր գարնան,
Երբ ջրերն են իրար խառնվում —
Գետեր դառնում,
Երբ կանաչն է հասակ առնում,
Փարթամանում,
Ապրել միայն կարմիր գարնան... (Հ. Հակոբյան)

Անորոշ դերբայը նշանակել բայի դիմավոր ձևի հետ արդի հայերենում կազմում է հատուկ շարահյուսական կառույց։ Բերենք օրինակներ.

Թույլ չտալ տիեզերքում սպառազինությունների մրցավազքի տարածում՝ նշանակում է վերացնել միջուկային սպառազինությունների էական կրճատումների արգելքը։ («Խորհրդային Հայաստան», օրաթերթ)

Մինչդեռ տիեզերքի պրոբլեմի լուծման վրա փականք դնելը նշանակում է չուզենալ երկրագնդի վրա սպառազինությունների մրցավազքի դադարեցում։ (Նույն տեղում)

Անորոշ դերբայով արտահայտվում է նաև երկընտրանք։ Օրինակ.

Ի՞նչ պետք է անել հիմա. Թո՞ւյլ տալ, որ թշնամին հարմար դիրքեր բռնի, թե՞ խանգարել նրա այդ փորձը։ (Ս. Զորյան)

Խոսքի այսպիսի կառուցվածքները համեմատաբար նոր

երևույթ են մեր լեզվում և չկային ոչ վաղ անցյալի մեր գրականության մեջ, չկան նաև մեր ժողովրդական-խոսակցական հայերենում։

Անորոշ դերբայով նոր կառույցներ էլ կան, որոնց պետք է անդրադառնանք սույն աշխատության «Խոսքի արժանիքներն ու թերությունները» գլխում։

Անորոշ դերբայը հոլովվում է և իր հոլովական տարբեր ձևերով հարստացնում մեր լեզվի արտահայտչամիջոցները։ Այլ բան է գոյականի ու դերանվան հոլովումը, այլ բան է ածականի ու թվականի հոլովումը, և այլ բան բայի անդամ ձևերի հոլովումը։ Բայի հոլովական ձևերով այնպիսի քերականական իմաստներ ենք արտահայտում, որ չեն կարող արտահայտվել մյուս խոսքի մասերի հոլովական ձևերով. այդ գործողության, շարժման իմաստն է, որ անորոշ դերբայն իր մեջ իր բոլոր հոլովական ձևերում պահում է։

Անկատար (համակատար) դերբայը խոսքում

Անկատար դերբայի -ում վերջավորությամբ ձևը գրական լեզվում անկախ գործածություն չունի, այն օժանդակ բայի հետ միայն եղանակային ձևեր է կազմում։ Դրա մասին կխոսվի իր տեղում։

Անկատար դերբայի -իս-ով ձևը (համակատար) անկախ գործածությամբ անվանում է այնպիսի գործողություն, որը տեղի ունենալիս կատարվում է ենթակայի գործողությունը։ Եվ քանի որ այս դերբայի անկախ գործածությունը սահմանափակվում է սոսկ ժամանակի պարագայական գործառությամբ, այդ պատճառով էլ ոճական առումով ակտիվ դեր չունի։ Այսպես են նախադասության ինչպես մյուս պարագաները, այնպես էլ խնդիրները, որոնք անմիջաբար չեն կապվում առարկայի հետ, այդ պատճառով էլ ոճական զգալի լիցքավորում չունեն խոսքում, և ընդհակառակն, նախադասության բոլոր այն անդամները, որոնք ծառայում են առարկան բնութագրելու խնդրին (ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ), խոսքում ունեն ակտիվ դեր։

Իս-ով անկատարն արտահայտում է մոտավորապես այնպիսի ժամանակային իմաստ, ինչպիսին արտահայտում է անորոշ դերբայը ժամանակ, ընթացքում, պահին կապական բառերի

հետ։ Օրինակ՝ Ուտելիս շտապես՝ մարմնիդ կվնասես, իսկ թե խոսելիս շտապես՝ նոգուդ։ Ուտելիս և խոսելիս բառաձևերի քերականական իմաստները կարելի է արտահայտել ուտելու ժամանակ, ուտելու ընթացքում, ուտելու պահին, խոսելու ժամանակ, խոսելու ընթացքում և խոսելու պահին կապակցություններով, որոնցից յուրաքանչյուրը իր նրբիմաստներն ունի, մանավանդ որ ընթացքում և պահին կապերն ավելի գրական են, իսկ ժամանակ կապը՝ հասարակ։

Ապառնի (ապակատար) դերբայը խոսքում

Ապառնի դերբայի երկու ձևերն էլ (պահելիք, բերելիք և պահելու, բերելու) անկախաբար այնքան հազվադեպ են գործածվում, որ ավելորդ ենք համարում նրա մասին առանձին խոսել։

Հարակատար դերբայը խոսքում

Հարակատար դերբայը իր արտահայտած իմաստով (գործողությունն իբրև առարկայի վիճակ) շատ մոտ է ածականին, մինչև այն աստիճան, որ նույնիսկ որոշ բայերի հարակատարները, ինչպես ասվել է, ստանում են ածականի գերադրական աստիճան։ Իմաստային այս առանձնահատկությամբ էլ հարակատար դերբայը կապվում է գոյականին՝ ածականին հավասար, վերջինիս նման գեղագիտորեն բնութագրելով առարկան, ինչպես հետևյալ տողերում է.

— Ընչի՞ համար էլ ես սիրեմ էն տղին,
Մազերը սև, աչքերը սև էն տղին,
Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,
Մաուզերը կողքին կախած էն տղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տղին։

(Ե. Չարենց)

Պարագայական կիրառությամբ հարակատարը ոճական այն լիցքավորումը չունի վերը բացատրված կանոնի համաձայն։ Ահա պարագայական կիրառության մի օրինակ։

Տուն ես մտնում հաճախ մթնած—
Ինչ-որ գործիդ խափանումից
Հաճախ ճրանած՝ ինքնագլուխ
Ինքնամոռաց թափառումից,

Հաճախ շիկնած՝
Մի անպատկառ զգացումի
Անակնկալ ժամանումից... (Հ. Սահյան)

Հարակատարը հատ ու կենտ շարահյուսական կառույցներում միայնակ ստորոգում է կատարում, որը ժողովրդական լեզվամտածողության արտահայտություն է և հասարակ ոճ է բերում խոսք։ Օրինակներ՝

Կյանքը լավ է... բայց ի՞նչ արա՛
Համ էլ մահից ինչ փախչեմ... (Ա. Ծատուրյան)

Ասացի գնամ բարեկամիս տեսության, ով գիտի՝ ո՞վ ողջ, ո՞վ մեռած:

— *Հեր ու մեր չունես, բալա ջան, մենք քեզ հեր ու մեր։ Առ, պսակվիր, ոնց որ Լենինի կարգն է։* Տերտերի հերն էլ անիծած:
(Ն. Զարյան)

— *Իմ դարդը խնձորները չէին.* թռած խնձորների վրա: *Ես ուզում էի իմանալ այգիս գո՞ղ է մտնում, թե ոչ։* (Ս. Զորյան)

Յոթ անգամ երեք՝ հավասար է 21-ի. մեկը գրած, երկուսը պահած:

Ենթակայական դերբայը խոսքում

Ենթակայական դերբայը երկակի իմաստ ունի՝ հատկանշային և առարկայական։

ա. Ենթակայական դերբայը, քանի որ իր մեջ ունի որևէ բան անելու, լինելու կարողություն, ունակություն, հնարավորություն՝ իբրև գոյականի հատկանիշ, այդ պատճառով էլ հեշտությամբ դառնում է առարկայի բնութագրություն, հանդես գալով իբրև որոշիչ և նաև ստորոգելիական վերադիր.

«Աչքերը շող էն տղին եմ ես սիրում,
Մաշին ֆշող էն տղին եմ ես սիրում։ (Ե. Չարենց)

*«Հարևաններն անունը դնում են Անբան Հուռի։ Ինչ մերն է՝ աղջկան գովելով ման է գալիս.—*լիդրը գզող, լիդրը մանող, համ խճճող, համ խճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, *մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները ոսկի»։*
(Հ. Թումանյան)

Հիշենք նաև նրանց ծնող
նրանց սնող,

Նրանց զինող
Հայրենիքը հերոսամայր։ (Պ. Սևակ)

Կարողություն, ունակություն, հնարավորություն ունենալու այս իմաստի մի կիրառությունն էլ եղանակային ձև է կազմում, որ թեև խոսակցական լեզվում սովորական է, սակայն գրական լեզվում հազվադեպ է գործածվում։ Ահա մի օրինակ Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարիից»։

Շաչեցեք գլխիս, ամեհի հողմեր, դուք, մրրիկներ,
պայթեցեք գլխիս,
Ես բաց ճակատով ձեր դեմն եմ կանգնած, ես
վախեցող չեմ, *զարկեցեք ճակտիս։*

Այսպիսի իմաստով ենթակայականը ավելի հաճախ ժխտական ձևով է հանդես գալիս (հաստատական ձևն էլ՝ ճարտասանական հարցումով, որ նույնպես ժխտականություն է տալիս ասվածին)։

բ. Ենթակայական դերբայը մեծ հաճախականություն ունի գոյականաբար կիրառվելիս, այդ այն պատճառով, որ առանց գոյականանալու էլ դերբայի մեջ ըմբռնվում է գործողությունը կատարողը, իսկ գոյականաբար գործածվելիս առաջին պլան է մղվում հենց գոյականական իմաստը։ Ահա մի օրինակ.

Այս գավով էլ եկեք հարգենք
Եվ անթառամ հիշատակը
Կամար-կամուրջ քաշողների,
Սյուն ու խաչքար տաշողների,
Սանդ ու երկանք կտրողների,
Ելք ու ճամփա փնտրողների,
Վանք ու պալատ շինողների,
Կտրիճ զավակ ծնողների,
Աղբյուր-առու սարքողների,
Փող ու թմբուկ զարկողների,
Ինչպես նաև հիշատակը
Նրանց հիշող-հարգողների...
(Պ. Սևակ)

ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ

ԵՂԱՆԱԿԱԾԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիմավոր ձևերն ըստ իրենց արտահայտած վերաբերմունքի բաժանվում են 5 եղանակների։

Սահմանական եղանակն *արտահայտում է գործողության նկատմամբ խոսողի օբյեկտիվ վերաբերմունքը, այսինքն՝ ասվածը ներկայացվում է իբրև խոսողի սուբյեկտիվ կամքից անկախ, օբյեկտիվորեն տեղի ունեցած, տեղի ունեցող ու տեղի*

ունենալիք գործողություն։ Այս պատճառով էլ գիտական խոսքը հիմնականում կառուցվում է սահմանական եղանակի բայերով։ Սահմանական եղանակով ենք պատմում, նկարագրում, ներկայացնում ու արձանագրում, քննում ու դատում, դատողություններ անում, տալիս սահմանումներ, ձևակերպում կանոններ ու օրենքներ։ Սահմանական եղանակը դատողություններ անելու, պատմելու, նկարագրելու եղանակ է, ամենահաճախականը եղանակների մեջ։

Ի հակադրություն սահմանականի, մյուս բոլոր եղանակները սուբյեկտիվ վերաբերմունքի եղանակներ են, այդ պատճառով էլ դրանք քիչ տեղ ունեն գիտական, դատողական բնույթի խոսքում։

Հրամայականը խոսողի հրամանն ու կարգադրությունն է արտահայտում, ըղձականը՝ խոսողի իղձը և ցանկությունը, պայմանականը՝ խոսողի կտրական վճիռը, վճռականությունը, իսկ անհրաժեշտականը՝ խոսողի կողմից դիտվում է իբրև այնպիսի գործողություն, որը տեղի պիտի ունենա անհրաժեշտաբար կամ հարկադրանքով, հարկադրաբար։

Լինելով սուբյեկտիվ վերաբերմունքների եղանակներ, սրանք չունեն սահմանականի լայն հնարավորություններն ու կիրառությունները։

Սահմանական եղանակի բայաձևերով է հիմականում տեղի ունենում հաղորդակցությունը, որը սովորաբար հարցում է ու պատասխան։ Հրամայականով, օրինակ, անհնար է ո՛չ հարց տալ և ո՛չ էլ պատասխանել։ Ըղձական, պայմանական ու հարկադրական եղանակները ևս պիտանի չեն պատմելու ու նկարագրելու համար, թեև այս եղանակներով կարելի է և՛ հարց տալ, և՛ պատասխանել։ Սրանք կոչված են ոչ այդ նպատակի համար, այլ արտահայտելու խոսողի սուբյեկտիվ զանազան վերաբերմունքները։

Դիմավոր ձևերը իրենց մեջ համատեղելով եղանակի, գործողության կերպի, ժամանակի, դեմքի և թվի գաղափարները, հանդես են գալիս քերականական բազմազան նրբիմաստներով, խոսքը դարձնում հարուստ, լիցքավորում այն ոճական զանազան հնարավորություններով։ Դրանք հիմք են դառնում, որ եղանակը կամ ժամանակաձևը առնվի իր հիմնական և երկրորդական նշանակություններով, այսինքն՝ գործածվի այլ եղանակների կամ այլ ժամանակաձևերի քերականական իմաստներով։

Բայի մի եղանակային ձևի կիրառությունը մի այլ եղանակային ձևի փոխարեն, այսինքն՝ մի եղանակի գործածությունը մի այլ եղանակի, մի ժամանակաձևի գործածությունը մի այլ ժամանակաձևի, մի դեմքի, մի թվի գործածությունը մի այլ դեմքի, մի այլ թվի փոխարեն, պայմանավորված է լինում ինչպես խոսքի իրադրությամբ, այնպես էլ վերաբերմունքային զանազան հանգամանքներով, մի բան, որ խոսքի այս կամ այն ոճական երանգավորման պատճառ է դառնում։ Հետևաբար՝ խոսքի մեջ մի եղանակաձևի գործածությունը մի այլ եղանակաձևի փոխարեն, որ կոչվում է բայի դիմավոր ձևերի եղանակա-ժամանակային կիրառություններ, ոչ այլ ինչ է, եթե ոչ ոճական կիրառություն։

Ստորև տալիս ենք բայի դիմավոր ձևերի ոճական այսպիսի կիրառությունները՝ ամենաընդհանուր գծերով։

Սահմանական եղանակի ներկա ժամանակ

Սահմանական եղանակի ներկան ժամանակային առումով երկիմաստ է. այն անվանում է խոսքի պահին կատարվող գործողություն և ընդհանրապես կատարվող գործողություն, անկախ ժամանակից, օրինակ. Դրսում ձյուն է գալիս *(խոսքի պահին)* և Ձմռանը ձյուն է գալիս։ *Հիմա* այս անիվը պտտվում է և երկիրը պտտվում է արևի շուրջը, *որտեղ միևնույն բայաձևը հանդես է բերում* իրադրական ներկայի *և* ընդհանրական ներկայի *իմաստներ։*

Ընդհանրական ներկան *գործածվում է սովորական, սովորաբար տեղի ունեցող երևույթներ նկարագրելու համար։ Ահա մի հատված Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմից.*

Աշունն էլի զբաղվում է *ներկարարի իր փեշակով.*
Նա օրն ի բուն աշխատում է,
Իսկ գյուղացին՝ հանգստանում,
Երբ աղունը տուն է գալիս
Ծանր սայլով կամ իշուկով,
Երբ աղվում է *թթու-թուրշին,*
Նորոգվում է *ճոճկան քուրսին,*
Ու չորացած ցան-փթիրը ամրոցի տեսք
է ստանում։ (Պ. Սևակ)

Ընդհանրապես ներկայով են արտահայտվում միշտ տեղի ունեցող, անընդհատ կրկնվող գործողությունները, ինչպես և մշտական, հարատևող վիճակները, ինչպես՝

Ինչ ճամփով հեշտ է միշտ լցնել գրպան,
Հարուստն այդ ճամփան լավ է իմանում.
Մեկին բաշխում է նա իր հին գուլպան,
Իսկ հարյուր մեկի շապիկն է հանում:

(Ալ. Ծատուրյան)

Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը ողողում է *Խորհրդային Միության հյուսիսային ափերը։ Արաքսն* անցնում է *Արարատյան դաշտով։ Հարանց անապատը* գտնվում է *պատմական Սյունիքում։*

Ընդհանրական ներկան կանոնական երևույթների նկարագրման միջոց է և ծառայում է սահմանումների, կանոնների, բնորոշումների, բնութագրությունների համար։ Այդ պատճառով էլ ընդհանրական ներկայով են կառուցվում, գիտական և ուսուցողական խոսքերը, օրենքները, կանոնադրությունները և այլն։ Այսպես, օրինակ՝

Հակասության օրենքն իր օբյեկտիվ հիմքերն ունի. *այն* արտացոլում է *օբյեկտիվ իրականության որոշակի կողմերը։ Հակասության օրենքի օբյեկտիվ հիմքերը սերտ առնչություն* ունեն *նույնության օրենքի օբյեկտիվ հիմքերի հետ և* խարբսխվում են *վերջիններիս վրա։*

Նույնության օրենքը ապահովում է *մեր մտքերի որոշակիությունը այն պատճառով, որ օբյեկտիվ իրականության մեջ առարկաները, փոփոխվելով ու զարգանալով հանդերձ, մինչև մի որոշ սահման* պահպանում են *իրենց որակը, այսինքն՝ այն էական հատկությունների միասնությունը, որի շնորհիվ մի առարկա* տարբերվում է *մյուս բոլոր առարկաներից։* (Գ. Բրուտյան)

Ընդհանրական ներկայի մի տեսակն էլ այսպես կոչված առածական ներկան է, *որով կազմվում են առածներ, ասացվածքներ, զանազան իմաստախոսություններ։ Օրինակ, եզը* սատկում է, *կաշին* է մնում, *մարդը* մեռնում է, *անունն* է մընում. *ճտերը աշնանն* են հաշվում. *սեպը սեպով* են հանում:

«Ծանոթ շները չեն հաշում *վրադ, ծանոթ մարդիկ* են հաշում *քո վրա»։* (Ավ. Իսահակյան)

Ընդհանրական ներկայով են արտահայտվում տվյալ առարկային ներհատուկ հատկանիշները, ինչպես՝ շունը հաչում է, առյուծը՝ մռնչում, կատուն՝ մլավում։

Ընդհանրական ներկայի արտահայտություններից մեկն էլ այսպես կոչված հեքիաթական ներկան է, որը ցույց է տալիս ոչ իրադրական, հավանական, հնարավոր, անցյալում կատարված գործողություն, ինչպես՝

Լինում է իբրև գյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ։
Ունենում է սա մի խելոք տղա,
Տանում է ծառա տալի մեկի մոտ։ (Հ. Թումանյան)

Բացի բուն (իրադրական) և ընդհանրական ներկաների իմաստներից, սահմանական ներկան կարող է առնվել ինչպես անցյալի, այնպես էլ ապառնիի նշանակություններով։ Անցյալի նշանակությամբ առնվում է այսպես կոչված պատմական ներկան։ Եթե ընդհանրական ներկայի դեպքում բայը ներկա ժամանակաձևի ժամանակային իմաստը համեմատության մեջ է լինում ներկա գաղափարի հետ ընդհանրապես, ապա պատմական ներկա է լինում այն դեպքում, երբ այլ բառերով ու լեզվական այլ միջոցներով ներկա ժամանակաձևի իմաստը հարաբերության մեջ է դրվում անցյալ ժամանակի հետ։ Երբ անցյալի իրադարձությունները ներկայացնում ենք բայի ներկա ժամանակաձևով, կարծես թե մի տեսակ կենդանություն է առնում անցյալը, այն բերվում աչքի առաջ, դարձվում այժմեական, որով և խոսքին տրվում է աշխուժություն և հետաքրքրություն։ Օրինակ՝

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել բան էր ծախում։
Օրվան մի օր մոտիկ գյուղից
Մահակն ուսին, շունն ետևից
Ներս է մտնում մի զըռ չոբան։ (Հ. Թումանյան)
Հայ դասատուներն իրենք են զգում,
Որ ջահել սանի առաջմղումից
Հոգնում կես ճամփին ու ետ են մնում։
Եվ Կոմիտասը Բեռլին է գնում։ (Պ. Սևակ)

Սակայն պատմական ներկան առավել հատուկ է գիտական

ոճին։ Անցյալի իրադարձությունները շատ հաճախ ներկայով ենք ներկայացնում ոչ միայն պատմին աշխուժություն, հետաքրքրություն ու կենդանություն տալու, այլև խոսքը բազմազան դարձնելու նպատակով։ Ահա մեկ օրինակ.

1883 թվականի օգոստոսին Շիրվանզադեն տեղափոխվում է Թիֆլիս և ամբողջապես նվիրվում գրականությանը։ Նա շարունակում է ինքնակրթությունը, ուսումնասիրում համաշխարհային գրականության լավագույն երկերը, ծանոթանում ռուս և հայ հեղափոխական-դեմոկրատների գեղագիտական հայացքներին։ (Հ. Թամրազյան)

Երբեմն պատմական ներկայով են ներկայացվում նաև մեկ անգամ և ընդմիշտ կատարվող գործողություններ՝ ինչպես՝

1923 թվականի մարտի 23-ին, 54 տարեկան հասակում, կյանքից հեռանում է հայ ժողովրդի մեծ զավակը՝ մի խորունկ ցավ սրտում, որ չկարողացավ ողջ հանճարն ու իմաստությունը տալ իր հայրենիքի նոր կյանքին։ (Հր. Թամրազյան)

«Ս. Մելիք-Շահնազարյանը վախճանվում է 80 տարեկան հասակում, 1942 թ. Թբիլիսիում»։ «Անուշավան Աբովյանը վախճանվում է 1938 թ. հայրենի գյուղում»։ («Հայ գյուղագիրներ»)

Նույն ձևով սահմանական ներկան կարելի է գործածել գալիք որևէ ժամանակում տեղի ունենալիք գործողություն ներկայացնելու համար։ Օրինակ.

2000 թվականն է, և մենք հանդիպում ենք միմյանց։ Ես մոտենում եմ քեզ, բարևում, իսկ դու ինձ չես ճանաչում։

Սահմանական ներկան գործածվում է նաև արտահայտելու անմիջապես կատարվելիք գործողություն։ Օրինակ.

— Անո՜ւշ, ա՛յ աղջի՜, Անո՜ւշ, տո՛ւն արի...
Կանչում է մերը, հառաչում, կանչում.
Գալիս եմ, գալի՜ս, գալիս եմ նանի՜,
Ջորից աղջկա ձենն է ղողանջում։ (Հ. Թումանյան)

Ոճի տեսակետից կարևորություն է ներկայացնում օժանդակ բայի ներկայի եզակի երրորդ դեմքը, որն ունի ժողովրդական ա և չի ձևերը՝ ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ ստորոգյալների կազմում՝ վերջադաս կիրառությամբ։ Օրինակ՝ ասում ա, բերում ա, սա բա՞ն ա՞, տալիս չի, սա գործ չի։ Սա ժողովրդախոսակցական ոճում ու բարբառներում տարածված և

արմատացած երևույթ է, որն այնպես է խաթարում գրական ոճը, ինչպես չի խաթարում լեզվական և ոչ մի տարր։

Անցյալի անկատար

Անցյալի անկատար ժամանակաձևը ևս ժամանակային իմաստով երկփեղկված է։ Մի իմաստով այն հարաբերակցվում է խոսքի պահի հետ և ցույց է տալիս խոսքի պահից առաջ կատարված գործողություն, ուստի այս իմաստով հարմարում է նկարագրություններին։ Օրինակ.

Կարմիր քամին խելագարի նման մոնչում էր, փոթորկվում էր, բարձրացնելով օդի մեջ թանձր, ավազախառն փոշի։ ...Քամու ուժգին հոսանքի ներքո դալար թուփերը, փշալի մացառները հեծելով, հառաչելով կպչում էին գետնին և դարձյալ վեր էին բարձրացնում իրենց հողմակոծ գլուխները։ Մոլորված, շփոթված ծտերը, հակառակ իրենց կամքի տարվում էին օդի մեջ, որպես բամբակի փոքրիկ պատառներ։ Սրարձիչ բազեն անգամ յուր ուժեղ թևերով դժվարանում էր ընդդիմադրել զայրացած տարրի կատաղի ալիքներին։ (Բաֆֆի)

«Անիից էի վերադառնում և անցնում հայկական մի գյուղի միջով։

Գիշերը սաստիկ անձրև էր եկել, այնքան սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ փլցրել էր։ Փողոցներից հեղեղներ էին վազում քչքչալով։ Երկինքը միաձույլ կապտագույն ամպերով ծածկված էր. դեռ էլի մեկ-մեկ անձրևում էր։

Լույսը նոր էր բացվել։ Կանչում էին մի քանի ուշ մնացած աքաղաղներ, ղողանջում էին եկեղեցու զանգակները»։ (Վրթ. Փափազյան)

Թեև գործողություններն անցյալ են, սակայն զգացվում է, որ դրանք հարաձգվում են մինչև խոսքի ներկան՝ արտահայտելով ներկա գործողություն։ Այդ երևում է վերջին օրինակից, որի մեջ վազում էին, անձրևում էր, կանչում էին, ղողանջում էին բայերը ցույց են տալիս պատմելու ներկա ժամանակի գաղափար։ Այս պատկերացման անկատարն է, որ գեղարվեստական գրականության մեջ հաճախ է գործածվում։ Ահա պատկերացման անկատարի մի օրինակ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմից.

Եվ վարդապետի հայացքի դիմաց,
Նրա կարոտած աչքերին ի տես,
Զգվում էր հանկարծ կածանը քարոտ.
Սարավանդակից գութանի խոփն էր հանկարծ
պսպղում.
Թոնրի պռունգին, սև պուտուկի մեջ, ապուրն
էր պաղում.
Ճակատին շարված բոլոր «արծաթի» ծափերի
ներքո
Արմաղան մի հարս նախշուն կարպետին ձավար
էր մաղում.
Իրենց մացառե ցանցառ բեղի տակ
Միծաղում էին քարափներն անտակ՝
Աղունակների ու կաքավների,
Խոտում հարուցող կրկրան ձայնից,
Բարակ գոլորշին, անուշ խնկի պես,
Մփում էր այգում, ելնում հնձանից.
Հարթ կտուրներին ծփծփում էին
Աներևսորեն կանաչած խոտեր.
Ջահել ու բոբիկ կանացի ոտեր
Թփթփում էին
Ու տպում էին
Իրենց հետքերը աղուրի փոշում։

Մյուս իմաստով էլ անկատարը արտահայտում է սովորաբար տեղի ունեցող, կրկնվող գործողություններ. ինչպես.

«Ու երկուսն էլ վիրավորվում էին և ավելորդ խոսքեր ասում իրար։ Նրանց ձայնի վրա դուրս էին թափվում որդիները, կանայք, հարսները գլուխները հանում էին դռներից կամ լուսամուտներից, երեխաները վազում էին խաղի տեղից, ու սկսվում էր լեզվակռիվ. բոլորն էլ խոսում էին միասին և աշխատում էին միանգամից մի քանի խոսք ասել։ Մի երկու րոպեում իրար գլխով էին տալիս հին ու նոր, կրկնում էին այն բոլորը, ինչ ասել էին անցյալ տարի, և ասում էին բաներ, որ երբեք չէին ասել. կամ ծաղրում էին իրար պակասություն ու խոսելու ձև»։

(Ս. Զորյան)

Անցյալի անկատարը ցույց է տալիս անցյալին վերաբերող այնպիսի գործողություն, որն իմաստով ավարտուն, կատար-

ված գործողություն է և ունի հարակատարի նշանակություն։ Օրինակ.

«Սպիտակ շղարշը յուր թափանցիկ ծալքերով սողում էր վեհափառ գլխի այդ սիրուն զարդը, որ նրա կախարդիչ դեմքին մի առանձին վայելչություն էր ընծայում։ ...Այդ թանկագին գինտերի... ծայրերը վերջանում էին զանգակաձև փնջիկներով, որոնց յուրաքանչյուրի մեջ բռնված էր մի-մի խոշոր գոհար. մի մարգարտաշար շղթա միացնում էր գինտերի երկու ծայրերը և իջնում էր մինչև կուրծքը։ Պարանոցին կրում էր նույնպես գոհարազարդ մանյակը, որից քարշ էր ընկած արքայական լանջապատիվը, որը ճաճանչավոր լուսնի ձև ուներ և հանգչում էր փառավոր կուրծքի վրա»։ (Ռաֆֆի)

Սովորաբար անցյալի անկատար ժամանակով են կազմվում մահախոսականները, այն հիման վրա, որ հանգուցյալն այլևս ներկա չէ, արդեն անցել է անցյալների շարքը[26]*։ Ահա մի օրինակ.*

«Դիանիել Հարությունյանը ծնվել, ապրում *ու* աշխատում *էր Վրացական ԽՍՀ Ծալկայի շրջանի Այազմա գյուղում։ Նա իր ամբողջ կյանքում* պրոպագանդում *էր հայ գրականությունը և լեզուն, անխոնջ ջանքերով* օգնում *էր սովետահայ գրականության, մամուլի, առանձնապես դրական մամուլի տարածման գործին Վրաստանի հայաբնակ գյուղերում։ Նա* գրում *էր բանաստեղծություններ,* կատարում *էր թարգմանություններ վրացերենից»։ («Գրական թերթ»)*

Ապառնի

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը խոսքի մեջ քիչ գործածվող ժամանակաձևերից է։ Դրա պատճառն այն է, որ արդի հայերենն ունի ապառնիության գաղափար արտահայտող այլ ժամանակաձևեր և այլ միջոցներ ևս։ Այսպես, ապառնիության գաղափար են արտահայտում նաև ըղձականի, պայմանականի և հարկադրականի ապառնիները, անորոշ դերբայի որոշ կապակցություններ (վճռեցի, անհրաժեշտ է, որոշել եմ,

---

[26] Լատիներենում կա հատուկ ձև մահացածի մասին արտահայտվելու համար։ Երբ մեկի մասին որևէ բան են հարցնում, չիմանալով որ նա մահացած է, նրան պատասխանում են «էր», որ նշանակում է, թե այժմ կենդանի չէ։

պետք է, պատրաստվում եմ—գնալ և այլն)։ Եվ ապառնի ժամանակը լիովին դուրս կգար մեր լեզվից, եթե մի էական տարբերություն չլիներ սահմանականի և մյուս ապառնիների ու անորոշ դերբայի հիշյալ կապակցությունների միջև. այդ այն է, որ սահմանականի ապառնին մաքուր, անխառն ապառնի է, օբյեկտիվ վերաբերմունքով, այնինչ մյուսները սուբյեկտիվ վերաբերմունքի հետ խառն են լինում (ցանկություն, իղձ, վճռականություն, հարկադրանք, անհրաժեշտություն և այլն)։

Այսպես, հետևյալ հատվածում ընդգծված բայերն արտահայտում են սոսկ ապառնիության գաղափար, որովհետև տրված են սահմանական եղանակի ապառնի ժամանակով։

— Օգոստոսին Մոսկվայում տեղի է ունենալու Աստղագետների Միջազգային միության տասներորդ համագումարը։ Համագումարի առթիվ բացվելու է խորհրդային աստղագիտության պատմությունն ու նվաճումներն արտացոլող մեծ ցուցահանդես։ («Խորհրդային Հայաստան» օրաթերթ)

Ապառնին գործածվում է ծանուցումների, հայտարարությունների, ազդագրերի մեջ, քանի որ խոսքերի այս տեսակներն ազդարարում են ապագայում կատարվելիք, տեղի ունենալիք որևէ բան։ Օրինակ.

1986 թ. հունվարի 2-ից շինանյութերի բացթողումը 1985 թ. կտրոններով չի կատարվելու։ («Խորհրդային Հայաստան» օրաթերթ)

Անցյալի ապառնի

Անցյալի ապառնին ևս շատ հազվադեպ գործածվող ժամանակաձև է. այդ դարձյալ այն պատճառով, որ նրա ժամանակային իմաստն արտահայտվում է սուբյեկտիվ եղանակների ժամանակաձևերով։ Անցյալի ապառնին բարդ ժամանակաձև է. այն մի կողմից անցյալ է, մյուս կողմից էլ ապառնի։ Այն հարաբերակցվում է երկու ժամանակակետի՝ խոսքի պահի, որի համեմատությամբ անցյալ է, և մի անցյալ ժամանակակետի, որի համար ինքն ապառնի է։ Գրելու եմ բայաձևն իսկապես ապառնի է, որովհետև գործողությունը տեղի պիտի ունենա խոսքի պահից հետո, այնինչ գրելու էի ապառնի է անցյալ որևէ պահի նկատմամբ (օրինակ, անցյալ տարի, մի քանի րոպե առաջ և այլն), այնինչ խոսքի պահի նկատմամբ անցյալ է։ Այս

առումով անցյալի ապառնին իսկապես ապառնի չէ, թեև կազմվում է ապառնի դերբայով, քանի որ խոսքի պահի համեմատությամբ անցյալ է։ Այս է պատճառը, որ երկվություն կա նրա ձևի և արտահայտած բովանդակության միջև. այս բայաձևի հաստատականը նշանակում է գործողության տեղի չունենալը, իսկ ժխտականը՝ տեղի ունենալը։ Օրինակ.

Անշուշտ մենք մեր գրաստների հետ զոհ էինք գնալու պատառոտող ընտանի գազանների սուր ատամներին, եթե առաջնորդող քուրդը վաղօրոք հարյուր քայլաչափ տարածությունից քրդերեն լեզվով ձայն չտար և չզգուշացներ վրանաբնակներին՝ շներին զսպելու համար։ (Պ. Պռոշյան)

Զոհ էինք գնալու ժամանակաձևով արտահայտված է հակառակ իմաստ (զոհ չենք գնացել)։

Թե՛ ապառնին և թե՛ անցյալի ապառնին պատմելու համար պիտանի ժամանակաձևեր չեն (պատումը անցածի, տեղի ունեցածի, եղածի շուրջը կարող է զարգանալ, բայց ոչ սպասվելիքի), այդ պատճառով էլ շատ սահմանափակ գործածություն ու կիրառություն ունեն։

Վաղակատար

Վաղակատար ժամանակաձևով արտահայտվում է անցյալի անորոշ մի ժամանակում ավարտված գործողություն։ Օրինակ,

Քոշաքարում ես վազել եմ
Եղնիկի հետ երագ, Անուշ,
Ցմրուխտ սարում երազել եմ
Ջնաշխարհիկ երազ, Անուշ։ (Հ. Թումանյան)

Աշխարհում միշտ բաց են եղել.
Դռներս կրնկի վրա...
Ելնողին չեմ ասել՝ արի,
Մտնողին չեմ ասել՝ գնա։
Իմ ձեռքին ինչ որ ունեցել,
Բոլորը բաշխել եմ ձրի,—
Եվ հացի պատառը վերջին
Եվ վերջին կաթիլը ջրի...
...Բաշխել եմ կրակ ու կորով
Ժպիտներ, ուժ ու ժամանակ,

Թե մեկից բան եմ խնայել,
Իմ ցավն եմ խնայել մենակ։ (Հ. Սահյան)

Վաղակատար և հարակատար դերբայները գրաբարի անցյալի դերբայից են ծագում, այդ է պատճառը, որ վաղակատարը ևս ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը անցյալում ավարտվել է, սակայն հարաձգվում է իր արդյունքով մինչև խոսքի ներկա պահը։ Օրինակ.

«Տխուր, գլխիկոր, սիրտս դարդի ծով,
Նստել եմ շվար՝ Արազի ափին...» (Ա. Իսահակյան)

Կարծում էի, որ հանաք է նորից,
Հիմա գանգատով կանգնել ես իմ դեմ։
(Վ. Տերյան)

«Մենք քաշվել նստել ենք մեր բերդերում, շրջապատել ենք մեզ պահակ գնդերով, ապահովել ենք թշնամու հարձակումից, իսկ ժողովուրդն ու եկեղեցիները թողել անտերունչ, անպաշտպան կամ ավելի ճիշտ ասած՝ մատնել նրանց թշնամու սրին» (Մուրացան)

Այս հարատևելու գաղափարը սերտ առնչություն ունի ներկայի հետ, այնպես ինչպես բուն հարակատարն է ներկա ըմբռնվում։ Այս իմաստով էլ վաղակատարը գործածվում է ներկայի նշանակությամբ հատկապես անեծքներում ու աղոթքներում։ Ահա մեկ-երկու օրինակ.

«Հետո նա ձեռքերը ծալեց կրծքին, աչքերն աղոթողի պես ձգեց եկեղեցու պատն ի վեր և շարունակեց. — Խնդրել եմ մայր աստվածածնից, որ նա այրվի, այրվի, այրվի, ոնց որ մենք ենք այրվում, փոթթվում անկրակ նրա պատճառով։ Խնդրել եմ տեր ամենակալից, որ նրա օրերն ու կյանքն այնպես խավարի, ոնց որ մեր կյանքն է խավարել նրա պատճառով»։ (Նար-Դոս)

«Ով Մարութա Աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,
Ձեզ եմ կանչել էս նեղ ժամին...» (Հ. Թումանյան)

Վաղակատարը գործածվում է ընդհանրական ներկայի իմաստով նաև ժողովրդական իմաստախոսություններում, ասացվածքներում, առածներում։ Օրինակ.

Անճարը կերել ա բանջարը։
Յա գժի հետ խոսել ես, յա գարի հաց կերել ես։
Անզոր խաչին մա խունկ ես ծխե, մա փթիր։
(«Առածանի»)

Վերջին երկու օրինակներում ավելի շատ է զգացվում ընդհանրությունը վաղակատարի և ըղձական ապառնու միջև։ Հատկապես երկրորդական նախադասություններում վաղակատարը ունենում է ըղձականի նշանակություն, այսինքն արտահայտում է պայման, մի բան, որ հատուկ է ժողովրդական մտածողությանը։ Օրինակ.

Դարձեք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա,
Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վրա,
Հորում լինեն քառասուն գազ խոր,
Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր
Սասմա Դավիթ, Թուր կեծակին։ (Հ. Թումանյան)

— Ադա Սիսա՛կ, ոսկորներդ խուրդ ու խաշ կանեմ, թե էգուց առավոտ քեզ էստեղ տեսել եմ։ (Վրթ. Փափազյան)

Ընդհակառակն, գլխավոր նախադասության մեջ վաղակատարը ժողովրդախոսակցական լեզվում գործածվում է պայմանական եղանակի ապառնիի իմաստով և արտահայտում է վճռականություն, եթե երկրորդականը պայմանի նախադասություն է, ինչպես՝

Մեր ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն եկել ա մեր օրին։ (Խ. Աբովյան)

Եթե մեր արդար, համեստ պահանջից
Մերոնք նահանջեն,
Բաս սովն եկել է,
Մեր վզին շոքել է։ (Հ. Հակոբյան)

Ի վերուստ քանքար քեզի տված է,
Հեղինակ անունդ աշխարհ փռված է.
Բայց թե գրչեդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, գրչիդ ալ վրան։
(Ռ. Պատկանյան)

18—64

Անցյալի վաղակատար

Անցյալի վաղակատարը անվանում է անցյալ մի ժամանակակետից առաջ տեղի ունեցած գործողություն։ Օրինակ.

«Այս կնոջը հայտնի էին թագուհու ցավերը, տանջող վշտերը, նա սկզբից արդեն ամեն բան տեսել, ճանաչել *և* ստուգել *էր։ Նա անկեղծ սրտով* վշտացել *և* արտասվել *էր մեծ տիկնոջ համար...»։* (Մուրացան)

Այս բայաձևով կարող է արտահայտվել գործողության հարատևումը մինչև անցյալ մի ժամանակակետ։ Օրինակ՝

Լևոնը համարյա մոռացել *էր Հասմիկի ներկայությունը։ Նրա սրտում արդեն* հանգել *էին իր անձնական կյանքի հարցերը։ Նա* ընկել *էր հակառակորդի հետքերի վրա։ Նա զգում էր նրա մոտիկությունը, և նրան* տիրել *էր մոտալուտ բախման մոլեգին բերկրանքը։* (Ն. Զարյան)

Անցյալի վաղակատարը ժողովրդախոսակցական լեզվում գործածվում է ըղձական անցյալի իմաստով, եթե պայմանի երկրորդական նախադասության մեջ է, օրինակ՝

Մի արջ պատահեր, մի գազան, մի գել,
Որ չէի տեսել *ձեր շուքը մեկ էլ։* (Հ. Թումանյան)

Դարձյալ խոսակցական լեզվում անցյալի վաղակատարը կարող է գործածվել պայմանական եղանակի անցյալի իմաստով և արտահայտել վճռականություն, եթե գլխավոր այնպիսի նախադասության մեջ է, որին ստորադասված է պայմանի երկրորդական նախադասություն։ Օրինակ,

Եթե Մացակ ապերը չըլեր, քարը քարին չէին թողել *մեր կոլխոզում... Օ՜, Մացակ ապերը չըլեր, մեզ* կերել *էր մեր միջի խալխը...»* (Ն. Զարյան)

Հարակատար

Հարակատար ժամանակաձևը, ի տարբերություն բոլոր մյուս ժամանակաձևերի, ցույց է տալիս ոչ թե շարժում, այլ գործողության հետևանքով առաջ եկած վիճակ. այս նշանակությամբ հարակատարը նույնպես ներկա է, վիճակի ներկա[27]*։ Այդ երե-*

---

[27] Կան լեզվաբաններ, որ հարակատար ժամանակները, առանց բավարար հիմք ունենալու, համում են արդի հայերենի բայի խոնարհման հարացույցից։ Ոմանք էլ մեր բայի ժամանակաձևերը շատ են համարում։ Հապա

վում է հետևյալ օրինակից, որտեղ հարակատարը գործածված է ներկա ժամանակաձևի հետ

Կես գիշերին, գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է, և հոսանքին
Ես նայում եմ միալար։ (Ա. Իսահակյան)

Քանի որ իր կերպային իմաստով հարակատար դերբայը ավարտված գործողության գաղափար է արտահայտում, այդ պատճառով էլ նրանով կազմված ներկա ժամանակաձևը ցույց է տալիս խոսքի պահից առաջ ավարտված, բայց մինչև խոսքի ներկան հարաձգված գործողության վիճակ. ինչպես՝

Հեռավոր մի ծառի տակին մորթված է պարարտ ոչխարը, սարքված են օջախին պղինձներն և շարված են փայտյա դալար շամփրների վերա խորոված ները։ (Պ. Պռոշյան)

— *Երաժիշտները կանչվա՞ծ են։*

— *Կանչված են, տիկին։*

— *Կհրամայես տակառապետին, որ ամենահին և ամենաթունդ գինին բաց անեն հյուրերի համար։*

— *Հրամայված է, տիկին։* (Ռաֆֆի)

Մեր անցյալի գրականության մեջ, ինչպես և ժողովրդախոսակցական լեզվում հարակատար ժամանակաձև կազմում էին ոչ միայն այնպիսի բայեր, որ վիճակ չեն ցույց տալիս, այլև նույնիսկ ներգործական սեռի բայեր։ Օրինակ,

— *Դու ո՞վ ես, Նանե, ես քեզ չեմ տեսած, դու մեր գեղիցը չես,— հարցնում է Արևհատը։* (Ղ. Աղայան)

Արդի հայերենում ինչպես ներգործական սեռի, այնպես էլ վիճակ ցույց չտվող բայերով հարակատարը ժամանակաձև չի կազմում, բայց սովորական են բայերի կրավորական և կրավորակերպ չեզոքների հարակատար ժամանակները։

Հարակատարը քիչ կիրառություններ ունի։ Դրանցից մեկը ապառնի իմաստով գործածվելն է՝ այնպիսի բարդ նախադասության մեջ, որի երկրորդականը պայմանի պարագա է։ Օրինակ,

Ամենից առաջ եկավ թեմական առաջնորդը և դարձյալ խո-

ի՞նչ ասեն էսկիմոսները, որոնց լեզվում բայի միայն 63 ներկայի ժամանակաձև կա, ի՞նչ ասեն հյուսիսամերիկյան չիպպևե ցեղի հնդկացիները, որոնց լեզվում մոտ 6 հազար բայաձև կա։

սեց եկեղեցու կարիքների մասին։ Հարկավոր է թեմի մի գյուղում եկեղեցի կառուցանել, եթե ոչ, գյուղական համայնքը կորած է։ (Շիրվանզադե)

Անցյալի հարակատար

Անցյալի հարակատարը հարաբերակցվում է խոսքի պահից առաջ մի ժամանակի հետ և ցույց տալիս դրանից առաջ ավարտված գործողություն, որի հետևանքը հարաձգվում է մինչև այդ անցյալ ժամանակամիջոցը՝ դառնալով այդ անցյալ ժամանակամիջոցի ներկա։ Օրինակ,

Կես գիշեր էր, և նա դեռ անքուն նստած էր հոր մահճակալի քով։ Սենյակի մի անկյունում, մերկ հատակի վրա հագուստով ննջած էին նրա մայրն ու հորաքույրը։ Դավիթը ննջած էր կից սենյակում, երեխաների մոտ։ (Շիրվանզադե)

Հարակատար անցյալը ներկայի նման կարող է ապառնիի իմաստ արտահայտել, եթե պայմանի երկրորդական նախադասություն ունեցող գլխավոր նախադասության ստորոգյալն է, ինչպես,

Մշակներն աշխատում էին բուրգի և բնակարանի միջև գրտնըվող նավթային լճակն ապահովել կրակից. եթե նա վառվեր, բոլոր շինությունները կորած էին։ (Շիրվանզադե)

Անցյալ կատարյալ

Անցյալ կատարյալը իսկապես անցյալ է և իսկապես կատարյալ. այն ցույց է տալիս անցյալում կատարված-ավարտված գործողություն՝ առանց որևէ հետևանքի կամ հարաձգման։ Այս պատճառով էլ անցյալ կատարյալը ներկայի և անցյալ անկատարի նման հարմար է նկարագրության համար։ Օրինակներ,

Թնդաց սար ու ձոր, շարժվեցին ծառեր, դողացին քարեր։ Հուզվեց չար աղան, խելահեղ Զողխեն ֆիշ մնաց թոներ ու ցած գար, ոչխարի պես ընկներ Հասոյի ոտքերը։

Շարժվեցին ոչխարները, մոտեցան սանդուղքին ու սկսեցին միմյանց ետևից բարձրանալ աշտարակն ի վեր։ (Վրթ. Փափազյան)

Սիրտս ալևոր կաղնու մեջ դրի,
Կռացած կաղնին նորից բողբոջեց,
Բարձրացավ կանգնեց ընդդեմ հողմերի

Եվ ջահելացած նորից շառաչեց:
Եվ մատաղ սիրտս ճախրանքի ծարավ
Զառամյալ արծվի կրծքի տակ դրի,
Մեռնող արծիվը թև առավ, թռավ
Որսի հետևից ջահել օրերի: (Հ. Շիրազ)

Անցյալ կատարյալը գործածվում է առածական ներկայի իմաստով, ինչպես՝

Տերը տվեց, տերտերը տարավ: (Զանգեզ. ասացվածք)

Ով մաշկեց կաշին, ով կերավ բիշին:
Աղջկա գեշը չտեսանի՛, հարսի՝ լավը: (Առածանի)

Անցյալ կատարյալով են արտահայտվում մարդիկ խիստ հուզված լինելու դեպքում, երբ հանկարծ անսպասելի բան է կատարվում:

Օրինակ՝

— Խեղդե՞ց, խեղդե՞ց, վա՛յ իմ կատուն:
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն...
— ...Սպանեցի՞ն... հա՛յ օգնություն:

(Հ. Թումանյան)

Անցյալ կատարյալը գործածվում է նաև արտահայտելու համար անմիջաբար կատարվելիք գործողություն, ինչպես՝

— Մեռե՞լ է,— աղաղակեց Աշխենը խելագարի պես:
— Ո՞վ, ի՞նչ ես ասում:
— Եվան:
— Գի՞ժ ես, ինչ ես, ինչեր ես դուրս տալիս:
— Ասա, թե չէ՝ այս բոպեիս ինձ կառքի տակ ձգեցի:

(Նար-Դոս)

Անցյալ կատարյալը գործածվում է ըղձականի և պայմանականի փոխարեն: Այն ըղձականի իմաստ է ունենում, երբ բարդ նախադասության կազմում լինում է պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալ: Օրինակ,

Պատերազմի գործում արդարացում չկա: Հաղթեցիր՝ արդար ես, պարտվեցիր՝ մեղավոր ես: (Դ. Դեմիրճյան)

Այսօր իշխանությունից մի հրաման եկավ, Արտեմ Սերգեյիչն է կատարելու ձևը ցույց տվողը: Վաղը մի գործակալ, մի առաջնորդ, մի պատվելի հյուր այցելեց գյուղը, Արտեմ Սերգեյիչն է հյուրասիրում, պատվում, նրա արձակած սուրբ աթոռի

հրամանը կատարել տալիս և հարդանքով ու լիաբուռն աջա-համբույրով ուղևորում։ (Պ. Պռոշյան)

Թաղեմ քեզ հատիկ, և դարդս քեզ հետ.
Թե աստված ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր։
(Հ. Հովհաննիսյան)

— Բայց լավ կվարես, ա՛յ Սրապիոն, խարակ տեղ թողիր կամ գլխահանուկ արիր՝ ինչիներիս կգրեմ, տղիդ լավ աչքով չի նայի։ (Ս. Զորյան)

Անցյալ կատարյալը գործածվում է պայմանի երկրորդական նախադասությանը գերադաս նախադասության կազմում և արտահայտում վճիռ։ Օրինակ,

Մինչև թուրը եկավ, լեզուն գլուխը կտրեց: (Առածանի)

Մի կյանքից եթե զվարթությունը, քեֆն ու սափեն հանես, էլ տեղն ի՞նչ մնաց: Մնաց հոգսն ու ջափեն։ (Հ. Թումանյան)

Սակայն այս կիրառությունները առավել ժողովրդական լեզվամտածողության արտահայտություն են և գրական խոսք են գալիս ժողովրդական խոսքից, այդ է պատճառը, որ այսպիսի կիրառություններ հատուկ չեն գիտական խոսքին ու հրապարակախոսությանը։

Ե լծորդության չեզոք սեռի բայերն անցյալ կատարյալում մի հարյուր տարի առաջ ձևավորվում էին ա, ար, ավ, անք, աք, ան վերջավորություններով։ Օրինակներ՝

Դեպի վե՞ր, դեպի վե՞ր... Անվերջ է ուղիս,
Հոգնեցան բազուկներս այս կռվումն անզոր,
Սպառվեցավ և վերջին ուժն էլ ծնկներիս—
Դեպի վե՞ր, սարն ի վե՞ր, քաջասիրտ զինվոր։
(Հ. Հովհաննիսյան)

Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե լեռան ետևում, և Տարոնը ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ։ (Ռաֆֆի)

Ու հետն սկսավ ողբալ ու կոծել,
Իր օրը սգալ, իր բախտն անիծել։ (Հ. Թումանյան)

Սակայն այս կազմությունն այլևս կենդանի չէ և իբրև հնացած ձև հնության երանգ է տալիս գեղարվեստական ստեղծագործություններին։

Ըղձական եղանակ

Ըղձական եղանակը սուբյեկտիվ վերաբերմունքի եղանակ է և, ի տարբերություն սահմանականի, որը օբյեկտիվ վերաբերմունքի եղանակ է, արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը գործողության նկատմամբ. այսինքն՝ ըղձական եղանակաձև ունեցող բայը մի կողմից գործողություն է նշանակում, մյուս կողմից էլ խոսողի իղձը, ցանկությունը, բաղձանքը, փափագը, երազանքը և այլն, որոնք ընդհանրապես հուզական խոսքերում են լինում։

Ըղձականի ապառնի

Ըղձականի ապառնին ըստ էության ապառնի չէ, այլ ներկա, և արտահայտում է խոսողի ներկա ցանկությունը, իղձը, փափագը, բաղձանքը և երազանքը, օրինակ՝

Նորից գարուն է, արտերը ելնեմ,
Եղնիկների հետ հովի պես սուրամ,
Արծիվների հետ երգով սավառնեմ,
Սիրտս երկնքի սրտի հետ բանամ։
Նորից գարուն է, արտերը ելնեմ,
Կայծակների հետ բախվեմ *ամպերում,*
ելնեմ *սարերը, բարձունքը* գրկեմ,
ելնեմ *սարերը,* մեռնեմ *սարերում։* (Հ. Շիրազ)

Թող աչքերիս լույսն էլ մարի,
Միայն միտքս փոխվի *բառի,*
Համերգի մեջ այս աշխարհի
Զհամրանամ, չհամրանամ։
Փոշի դառնամ *բարձունքներում,*
Հալվեմ *ես իմ արցունքներում,*
Միայն կյանքի մանրուքներում
Չմանրանամ, չմանրանամ։ (Հ. Սահյան)

Ըղձականի ապառնիով ենք արտահայտում կոչերը. ինչպես՝ Կորչի՛ պատերազմը, կեցցե՛ ժողովուրդների բարեկամությունը. Թող ապրի՛ ու բարգավաճի՛ մայր Հայաստանը։

Ըղձականի ապառնիով են արտահայտվում օրհնանքը, աղոթքը, մաղթանքը, անեծքը, երդումը, հայհոյանքը և այլն, որոնք

Նույնպես ցանկություն են և միաժամանակ զգայական խոսքեր։ Օրինակներ՝

Բարեմաղթություն՝ *Տե՛ս, ահա, Սարոն սև ճամփեն ընկավ...*
Աստված խնայի *ջահել-ջիվանին,*
Աստված խնայի *իր անբախտ նանին։*
(Հ. Թումանյան)

Անեծք՝ — *Վա՜յ, Դավիթ, ասավ,* մահս տանի քեզ,
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինես։ (Հ. Թումանյան)

Վա՜յ, խելառ Դավիթ, շաղգամի տեղակ
Դու կրակ ուտես, ցավ ուտես, *ասավ...*
(Հ. Թումանյան)

Օրհնանք՝ *Հայրն էլ եկավ ու ծեսին*
Էսպես օրհնեց իր փեսին.
— Ջաղացիդ միշտ հերթ լինի,
Մեջիդ ամուր բերդ լինի։ (Հ. Թումանյան)

Բայց ամենի խոսքի տուտն էս էր. «Օրհնյա ի տեր, Աստված կարգդ հաստատ պահի։ Քո աղոթքը մեր գլխիցն անպակաս ըլի։ *Տանուտեր,* սաղ ըլիս, *տանուտեր,* քո շվարը մեզ վրա դայիմ դադրմի ըլի։ *Միրզամ,* Աստված որդիքդ պահի։ *Ավետիք,* քո որդու կարմիրը կապենք»։ (Խ. Աբովյան)

Երդում՝ — *Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը.*
— Ով սուտ ասի, գետինը մտնի,— *երդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ։* (Հ. Թումանյան)

Ըղձականի ապառնիով արտահայտվում է մեղմ կարգադրություն, հորդոր, պատվիրանք, խրատ։ Օրինակ,

Վախտ ու անվախտ դես ու դեն չընկնես, ձեռդ ընկած փողը քոռ ու փուչ չանես, *հազար ու մի պակասություն ունենք։ Քեզ էլ լավ պահի,* գիշերները բաց չըլես, մրսես ոչ...
(Հ. Թումանյան)

— *Դի վերցրու, Գրիգոր,— ասաց Լևոնը ծանր ու հատ-հատ,— ետ տար այնտեղ, որտեղից որ բերել ես, ու մեկ էլ* էսպիսի բան չանես (Ն. Զարյան)

Այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում հրամայել, կարգադրել, պահանջ առաջադրել դիրքով, տարիքով, պաշտոնով

ավագներին, նաև սիրալիրության համար, գործածում ենք ըղձականը՝ հաճախ մի եղանակիչի հետ միասին.

— Այս գրությունը մի փոխանցեք նախագահին։

Ըղձական ներկան ստանում է հրամայական նշանակություն, երբ գործածվում է հոգնակի I դեմքով, անկախ այն բանից, խոսքը վերաբերում է միաժամանակ խոսողին ու խոսակցին, թե այն «հարգանքի» հոգնակի է, և խոսքը վերաբերում է միայն եզակի խոսակցին։ Ահա մեկական օրինակներ՝ նախ բուն հոգնակիով և ապա «հարգանքի» հոգնակիով.

Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր ադաթին...
Գնա՞նք, զարկե՞նք...
Ջարդե՞նք, կրակե՞նք... (Հ. Թումանյան)

Նինոս.— Ոչ, աննմանդ Շամիրամ։
Ես կամենում էի մեկնաբանել միայն,
Թե խստությունը, այն դեպքում, երբ չի բերում օգուտ,
Կամ չի հաստում կարգերը տերության,
Վտանգավոր է։ Զլինենք անմտորեն անգութ
Հանդեպ նրանց, որ զոհ են լոկ արդար սխալմունքի։ (Ն. Զարյան)

Ըղձականի ապառնու III դեմքը թող *եղանակիչի հետ ունենում է մեղմ հրամայականի իմաստ*[28]*։ Օրինակ՝*

Թող *ամենքը ինձ մոռանան առհավետ,*
Թող *ոչ մի մարդ ինձ կարոտով չսգա,*
Գերեզմանս թող *չունենա արահետ,*
Ու թող *ոչ ոք գերեզմանիս* մոտ *չգա։* (Վ. Տերյան)

Այսպիսի կիրառության մեջ մի կողմից կա թույլտվության, բայց մյուս կողմից էլ՝ հակառակության գաղափար։ Օրինակ՝

Մեր թշնամին բերում է տանկեր.
Բերում է ցեղեր սևամորթ
Կեռ դաշույններով գալիս են,
Մռայլ գնդերով գալիս են,
Թող *գան...* (Վ. Տերյան)

---

[28] Ըղձականի և հրամայականի առնչությունների մասին տե՛ս «Հրամայական եղանակ» վերնագրի տակ։

Երկրորդական նախադասությունների մեջ ըղձականի ապառնին պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալ է դառնում։ Սա նրա հիմնական կիրառությունն է, քանի որ այս գործառությամբ հանդես գալիս մյուս եղանակներն ունենում են ըղձականի իմաստ, իսկ ինքն այլ ժամանակաձևի իմաստ չի ունենում, եթե այսպիսի նախադասությունն ստորադասված է այնպիսի գլխավորի, որի ստորոգյալը արտահայտված է պայմանական եղանակի բայով։ Օրինակ,

Թե տիրես, մեծ շահ, դու նրա սրտին,
Թաթուլն էլ անզոր կընկնի ոտքիդ տակ։

(Հ. Թումանյան)

Վարդի թերթեր էլ քեզ ո՛չ շահ,
Էնպես շուրթեր Ո՛չ ահ ու մահ,
Թե հաղթություն քեզ մաղթեն, Ո՛չ զենք ու զորք կհաղթեն։

(Հ. Թումանյան)

Խոսակցական հայերենում ըղձականի ձևը գործածվում է սահմանական եղանակի ներկայի իմաստով (գրաբարում հենց այդ ձևն էլ եղել է սահմանական ներկա)։ Այսպես գործածվում է ըղձականը պատմական ներկայի իմաստով, երբ անհրաժեշտ է լինում արտահայտել մի գործողության անսպասելի կերպով տեղի ունենալը։ Ահա մի օրինակ,

— Մի տարի անցնում էի կանաչ արտով։ Տեսնեմ մի կաքավ։ Ձեռիս բան չկար՝ հանեցի մաշիկս ու նետեցի վրան։ Հեռու չէր, չորս-հինգ քայլ։ Նետեցի ու մտիկ տվի՝ ո՛չ թռչուն, ո՛չ մաշիկ։ Բա՛հ։ Թռչունը կորավ, ապա մաշի՞կս։ Շատ փնտրեցի, շատ մտածեցի՝ չկար ու չկար։ Հենց կորավ ու կորավ։ Ես էլ մի մաշիկով ման էի գալիս։ Հետևյալ տարին, Նաբուգոդոնոսոր ընկերոջս հետ գնացել էի Եգիպտոս ման գալու։ Փողոցով անցնելիս տեսնենք մի տաճար շուկայի մեջտեղ։ Ասում եմ, այ Նաբուգոդոնոսոր, տաճարը շուկայի մեջտեղ ի՞նչ գործ ունի։ Նաբուգոդոնոսորը թե՝ հա՛, է՛։ Հարցրինք մի եգիպտացու՝ ասաց՝ երկնքից մի մաշիկ ընկավ շուկայի մեջտեղ, ամոթ չլինի ասել՝ միզելու տեղը, մաքրեցինք, տաճար շինեցինք, քանի որ մաշիկը սուրբ էր, երկնքից ընկած։ Գնանք տեսնենք, ասում եմ Նաբուգոդոնոսորին։ Նաբուգոդոնոսորը թե՝ բան չունե՞ս։ Չէ՛, գնանք։ Գնացինք, քուրմը ասաց՝ մաշիկներդ հանեք՝ հետո մտեք տա-

Ճար։ Հանեցինք, մտանք։ Նայում ենք։ Մեկ էլ ես նայեմ ի՞նչ տեսնեմ, մաշիկս... (Դ. Դեմիրճյան)

Ծանոթություն. Ժողովրդական հայերենի արտահայտաձև է ըղձականի ձևը գործածել հրամայականի նշանակությամբ, որն այլ բան չէ, քան պարզ կազմության ել լծորդությունն ունեցող բայերի հրամայականը կազմել ներկայի և ոչ թե անցյալի հիմքից։ Օրինակ,

Սրանից հետո թե մեկ էլ ծուռ բան ասեմ,
Երեսիս թքեք, ինձ կոլեկտիվից վռնդեք։
Միայն մի խնդիրք ունեմ... էս կովի մասին
Թերթում միք գրի... էդ անտեր «ի ցույցը»...
ջնջեք։ Ն. Զարյան)

Ըղձականի անցյալ

Ըղձականի անցյալը *սոսկ քերականական ձևով է անցյալ, այնինչ իմաստով իսկապես անցյալ չէ, այլ ներկա մտորում, ներկա ափսոսանք, անիրականանալի իղձ, ցանկություն, փափագ, երազանք՝ ուղղված դեպի անցյալը, և քանի որ այդպես է, ապա դրական բայաձև ենք գործածում, երբ գործողությունը չի իրականացել, և ժխտական բայաձև, երբ գործողությունն իրականացել է։ Օրինակ,*

Ախ, երանի չծնվեի,
Չլսեի
Հովիվների երգերը ջինջ
Եվ մայրական խոսքերը սուրբ։
Չտեսնեի
Զքնաղ դեմքը իմ տիրուհու
Եվ աշխարհքը հրաշագեղ.
Ախ, երանի չծնվեի,
Չլսեի, չտեսնեի—
Չմեռնեի.... (Ա. Իսահակյան)

Ներկայի դաղափարն ավելի է ընդգծվում, երբ խոհը, ցանկությունը, մտորումը չկատարվածի կամ անիրականանալի երազանքի մասին է, այսինքն՝ երբ բայն ունի հաստատական ձև։ Օրինակ՝

Եռ դառնար հիմա հասակս մատաղ,
Լինեի նորից այն խենթ պատանին,
Երգը շուրթերիս, և սիրտս ուրախ,
Սանձեի նորից հորս կապույտ ձին
Եվ խուլ ձորերով, կատարներով վեհ,
Սուրող գետերի շառաչյունի հետ
Թռչեի զքնաղ իմ սիրածին տես... (Ա. Իսահակյան)

Ընդհանրապես անիրականանալի թվացող ցանկությունը, երազանքը, որ հենց այս պատճառով ինքնին արդեն հուզականությամբ է տոգորված, արտահայտվում է ըղձական եղանակի անցյալով։ Ահա մեկ օրինակ.

Թուշեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնեի այն առուն,
Կարոտով ես անհուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում է սարերում։

Թեմվեի աղբյուրին,
Կարոտած պաղ ջրին,
Լինեի հանդերում,
Մեր կանաչ մարգերում...
Ուր ծաղկունքն են բուրում,
Ուր մենակ օրերում
Հովն էր միշտ ինձ համբուրում։

(Գ. Սարյան)

Ըղձականի անցյալը մեծ հնարավորությամբ է օժտված արտահայտելու խոր ու նուրբ զգացումներ, մտորումներ ու խոհեր։ Նկատենք, որ սա ոչ միայն ըղձական անցյալին է վերաբերում, այլև անցյալ ժամանակներին ընդհանրապես, քանի որ ամեն մի անցյալ ստանում է վերհուշի արժեք, իսկ վերհուշը թախծի տրամադրությամբ է համակում մեզ։ Ահա ըղձականի անցյալով մի գողտրիկ օրինակ Հ. Սահյանից.

Մեր տան պատից մի քար լիներ,
Նստեի վրան
Ու պատմեի անտուն կյանքիս
Հեքիաթը նրան։
Պատմեի, թե այս աշխարհում
Ինչե՞ր եմ քաշել,
Եվ գլխիս տակ քանի՞-քանի՞
Քարեր եմ մաշել։
Ու լսեի վերջին անգամ
Խորհուրդը նրա,
Ու մեռնեի ապուպապոտ
Այդ քարի վրա։

Անիրականանալիության գաղափարն արտահայտվում է նաև երկրորդական նախադասություններում։ Օրինակ.

Ամենից առաջ՝ նա հայր էր ծնվել...
Այդպես էլ կյանքում չունեցավ բալիկ,

Որ տան անկյունում օրորոց դրվեր,
Կամարից կախվեր հուռութ-խաղալիք,
Եվ ինքն էլ հակված նանիկ, նայ ասեր,
Իսկ երբ մեծանար՝ տը՛պ-տը՛պ-տը՛պ՝ վազեր
Ու հոր թղթերը խառներ–խզրզեր,
Անվերջ բլբլար,
Եվ շիվը դալար
Աննկատ լցվեր ու նոր բուն դառնար.
Երջանիկ մի օր տեղ ու տուն դառնար:

(Պ. Սևակ)

Պայմանի երկրորդական նախադասությունների ստորոգյալ դառնալը այս ժամանակաձևի հիմնական կիրառությունն է. ինչպես՝

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թե աշուղն էլ ունենար,
Առանց զենքի,
Առանց զորքի
Շահերի դեմ կգնար: (Հ. Թումանյան)

Պայմանական եղանակ

Պայմանական կոչվող եղանակաձևի հիմնական իմաստը վճռականություն արտահայտելն է: Այս եղանակաձևը սովորաբար լինում է այնպիսի նախադասության ստորոգյալ, որին ստորադասված է լինում պայմանի երկրորդական նախադասություն, ինչպես՝

Նրանց ձգված մկաններում ուժն է նստել
խոնավ հողի
Եթե ուզեն՝ արևներին նոր կյանք կտան ու
նոր ուղի...
Եթե ուզեն՝ արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն՝ վար կբերեն երկինքներից
արեգակներ... (Ե. Չարենց)

Այստեղ ուզեն ըղձականը պայման է արտահայտում, իսկ (կյանք) կտան, կշպրտեն, վար կբերեն բայերն արտահայտում են ոչ թե պայման, այլ խոսողի վճռականությունը, կատեգորիկ

վերաբերմունքը կատարվելիք գործողության վերաբերյալ։ Վճռականության գաղափարը ավելի ուժեղ, ընդգծված է արտահայտվում հատկապես ժխտական ձևում, ինչպես՝

Չեմ տալ, ասավ, իմ հոր ոսկին,
Չեմ տալ կանայք իմ հայ ազգին,
Սասմա երկիր ձեզ տեղ չկա... (Հ. Թումանյան)

— Խփի՛ր... ես պարսիկներին չեմ ծառայի...
Վասակը ապտակեց նրան։
— Սպանի՛ր թեկուզ... չեմ ծառայի։
(Դ. Դեմիրճյան)

Կխորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ բողնի, ես չեմ բողնի դու մեռնիս...
(Ա. Իսահակյան)

Ուրեմն՝ այս եղանակի իմաստը խոսողի սուբյեկտիվ, կամային վերաբերմունք (վճռականություն, կատեգորիկ վճիռ) արտահայտելն է։

Պայմանականի ապառնի

Պայմանականի ապառնին, ինչպես վերը բերված օրինակներում տեսանք, արտահայտում է որևէ բան անելու մասին խոսողի ներկա վճիռը, վճռականությունը, ինչպես և հնարավոր, ենթադրելի, ընդհանրապես սովորությամբ տեղի ունեցող գործողություններ, նաև հրաման, խնդրանք և այլն։ Այդ մասամբ պայմանավորված է բայի դեմքով։

Վճռականության գաղափար են արտահայտում այս բայաձևի բոլոր դեմքերը, ինչպես՝

Այնքան ժամանակ, որ ծովը պիտի փարե Հեջազի ափերն զմրուխտյա,
Ես ետ չեմ դառնա կնոջ մոտ երբեք, ես չեմ կարոտնա
թովչանքին նրա։ (Ա. Իսահակյան)

— Կգնաս։ — Կներկայանա։
— Չե՛մ գնա։ — Չի՛ ներկայանա

Պայմանականի ապառնիի երկրորդ դեմքով արտահայտվում է պահանջ, կարգադրություն, հրաման, ինչպես՝

Կերթաս խոր գլուխ կտաս դու նրան
Ու իմ փափագը կհայտնես իրան.
Կասես՝ չեմ ուզում մնալ թագուհի... (Ա. Պուշկին)

Երրորդ դեմքով գործածվելիս պայմանականի ապառնին հանդես է բերում կիրառության ավելի մեծ հնարավորություններ։

Գործածվելով ապառնիի իմաստով՝ այս եղանակաձևը արտահայտում է ենթադրելի, հնարավոր, ընդհանրապես սովորությամբ կատարվող գործողություններ։ Օրինակ՝

Զախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան։
(Չիվանի)

Հացի կտորտանք ու քարթուն կտան։ Կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն էս ա... (Հ. Թումանյան)

Այս կիրառությանը մոտ է սովորությամբ տեղի ունեցող և կրկնվող գործողությունների իմաստով գործածվող պայմանականի ապառնին, ինչպես՝

Ասենք՝ այն գլխից ես չեմ հավանել նրան. ժամանակ-ան-ժամանակ ներս կընկնի, *չաշանակի պես* կխոսի, *լիրբ-լիրբ* կծիծաղի, *պապիրոս* կմաշի, դուրս կտա *ինչ որ բերանը գա, ոչ մեծ* կհարցնի, *ոչ պստիկ։* (Նար-Դոս)

Այս կիրառությանը շատ մոտ է պայմանականի ապառնիի գործածությունը սահմանականի ներկայի իմաստով։ Օրինակ՝

«Դու ով ես կամ ինչ» էլ չեն հարցնում,
Այս տեսակ կանոն չկա նրանցում.
Մինչև երեք օր հյուրին կպատվեն,
Հետո այդ բանը նրան կհարցնեն։ (Ղ. Աղայան)

Պայմանականի և սահմանականի ներկայի իմաստային այս ընդհանրության պատճառը ծագումնաբանական ընդհանրությունն է։ Արևմտահայերենում և արևմտյան բարբառներում սահմանական ներկան նույն կազմությունն ունի, ինչ որ գրական լեզվում պայմանականը։ Ա. Խաչակյանը գրում է.

Բարև կուտամ, չես առնի,
Ոտքիդ կոխած հողն եմ, յար...

Եթե այստեղ ընդգծված բայերը սահմանական ներկայի իմաստով են գործածված, ապա երբեմն դժվար է լինում որոշել, թե ինչ ժամանակաձև է՝ արևմտահայ սահմանակա՞նը, թե արևելահայ պայմանականը, ինչպես՝

Սիրտս երկինք է...
Բույր կուտա *ծաղկին,*
Սեր կուտա *կույսին,*
Կյանք կուտա *անկյանք*
Զոր անապատին... (Ա. Իսահակյան)

Սահմանական իմաստով գործածվելիս պայմանական ապառնին ձեռք է բերում ընդհանրական ներկայի բնավորություն (առածական ներկա), որով կազմվում են առածներ, ասացվածքներ ու խրատներ։ Օրինակ՝ Աղմատի հալը աղմատը կհասկանա... Երկաթը տաք-տաք կծեծեն. Մինչև աչառը եզը կդառնա, տերը խոզ կդառնա. Հայը մինչև չբեզարի, չի նստի. Դրկիցի շանը քար չեն գցի, տիրոջ խաթրը կպահեն. Անմիտ բաներ չեն անի, խելոք կկենան։

Անկախ դեմքից երկրորդական նախադասություններում, հատկապես երբ գլխավորի բայ-ստորոգյալը պայմանական եղանակով է դրված, պայմանականի ապառնին ունենում է ըղձականի նշանակություն և արտահայտում է պայման, ենթադրելի գործողություն։ Օրինակ՝

Մարդ ինչ անի, էն իր առաջը կգա։ Լավություն կանես, *լավություն կտեսնես,* վատություն կանես՝ *վատություն։*

(Խ. Աբովյան)

Պայմանականի անցյալ

Պայմանականի անցյալը *իսկապես անցյալ չէ, այլ ներկա. այն արտահայտում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը՝ ներկա վճռականության վերաբերմունքը անցյալում տեղի ունեցած կամ չունեցած գործողության վերաբերյալ։ Օրինակ՝*

Եթե մոմակալը հատակի տափակ կողմով դիպած չլիներ, վիրավորը չէր ապրիլ։ (Շիրվանզադե)

Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր *ինձ, թե* չլինեին *ընկեր, բարեկամ...* (Ա. Իսահակյան)

Չէիր ձանձրանա *դու գիտությունից,*
Չէիր ձանձրանա *սիրուց ու կյանքից,*
Թե ունենայիր թշնամիներ մեծ... (Ե. Չարենց)

Ինչպես բերված օրինակներից էլ է երևում, այս ժամանակաձևի ժխտական ձևով հաստատական գործողություն է արտա-

հայտվում, իսկ դրական ձևով ժխտվում է գործողության տեղի ունենալը։

Պայմանականի անցյալը գործածվում է սահմանական եղանակի անկատար անցյալի իմաստով և ցույց է տալիս գործողության կրկնականություն, որ տեղի է ունենում սովորության համաձայն։ Օրինակ՝

Բայց այդպես չէր հանգուցյալ հայրը։ Ամեն տարի աշնան ժամանակը կգար։ Մենք առաջուց կլվանայինք, կմաքրեինք ոչխարները, և սպիտակ, ձյունափայլ հոտերը կհանեինք նրա առջև։ Նա կնայեր և փառք կտար աստծուն։ (Ռաֆֆի)

Հյուր կգնար հայրս իրեն զառ-աներանց,
Տոն օրերին կսպասեին մեծ փեսային
Մառանը լի, բոլ էր, առատ տունը նրանց,
Հորս պատվին լավ ճաշկերույթ միշտ կտային...
Ծալապատիկ նստած տեղից հայրս թախտեն
Վեր կրուշեր, թափ կտար իր շիշ փափախը,
Կասեր՝ ա՛խալխ, շեն մնա ձեր գյուռ օջախը...
(Հ. Հակոբյան)

Ինչպես ապառնիի մասին ասվեց, պայմանականի անցյալը անցյալ անկատարի իմաստով (ոչ սովորույթով կրկնվող գործողություններ) գործածվում է արևմտահայերենում և արևմտահայ բարբառներում, որտեղից էլ այն անցնում է գրական լեզու։ Այս ժամանակաձևին դիմում են Կ ճյուղի բարբառներին պատկանող հեղինակները։

Ահա մի օրինակ Ավ. Իսահակյանից.

Յոթ մարդու կերը կուտեր մեկ ժամով,
Ով տարով կաճեր՝ նա կաճեր ժամով։
...Կվազեր Մհեր շանթի հետևեն,
Փետուր կպոկեր արծվի թևեն։

Հարկադրական եղանակ

Հարկադրական եղանակը ևս սուբյեկտիվ վերաբերմունքի եղանակ է։ Այս եղանակով խոսողն արտահայտում է մի գործողություն, որ պիտի տեղի ունենա մի նպատակամղումով, հարկադրաբար կամ անհրաժեշտորեն։ Օրինակ՝

Ես պիտի դուրս գամ *դեպ հրապարակ*
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ
Խավարի ընդդեմ պատերազմելով.
(Մ. Նալբանդյան)

Պիտի երթան *առաջ հիմա,* պիտի առնեն՝
քաղաքը մեծ,
Պիտի թափեն *նրա վրա հազարամյա մաղձը*
իրենց։
Քանդեն պիտի ու ավերեն, *տեղը փոշի*
պիտի փռեն—
Հազարամյա քաղաքը այդ քանդեն պիտի ու
ավերեն։—
Այրեն պիտի, *խելագարված* պիտի պարեն
հրդեհներում,
Ու կարմրավառ կրակ ու կայծ պիտի փռեն
երկրի հեռուն։ (Ե. Չարենց)

Հարկադրականի ապառնի

Հարկադրականի ապառնին *գործածվում է նաև արտահայտելու համար վճռականություն, անառարկելի վճիռ. ինչպես՝*

Ատում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Ե՛վ քո որդոց և՛ քո մահը
Պիտի տեսնեմ *անպատճառ։* (Պուշկին)

Գործածվելով անդեմ և անենթակա նախադասություններում, խոսքին տալիս է խրատական բնույթ, ինչպես՝

Մարդ պետք է ապրի բարձր նպատակի համար։
Մարդկանց մոտ պետք է աշալուրջ լինես,
միշտ ոտքի վրա և սուրը ձեռքիդ,
Որ քեզ չլկեն, քեզ չհոշոտեն թե՛ բարեկամդ և
թե՛ թշնամիդ։ (Ա. Խաչակյան)

Ժողովրդական մտածողության արտահայտություն է ինչպես պայմանականի, այնպես էլ հարկադրականի ապառնիով առարկային ներհատուկ հատկանիշ արտահայտելը, ինչպես՝

Էդ էր նրա բնույթը։ Շունը պիտի կծոտի, կատուն պիտի

ճանկրի, օձը պիտի խայթի, Եփրեմխանը պիտի մարդկանց տակը փորի: (Ն. Զարյան)

Հարկադրականի անցյալ

Հարկադրականի անցյալն իր բուն կիրառությամբ արտահայտում է ներկա վերաբերմունք տեղի ունեցած կամ չունեցած գործողության վերաբերյալ, ըստ որում դրական ձևով արտահայտվում է գործողության տեղի ունեցած չլինելը, իսկ ժխտական ձևով՝ գործողության կատարված լինելը։ Օրինակ՝

Նա մի պոեմ պիտի գրեր
Ու մի պիես ու մի վեպ... (Ե. Չարենց)

Այս ժամանակաձևը կարող է գործածվել ապառնիի նշանակությամբ, ինչպես հետևյալ հատվածում է՝

Ամբոխը բաժանվեց երեք հավասար մասի։ Նրանցից ամեն մինը պետք է բռներ *հովտի մի զառիվայրը։ Ջահավոր պահակները գաղտուկ* պիտի մոտենային *վրաններին։ Հարձակման նշանը* պետք է տար *Մարզպետունին, իսկ առաջին կրակը* պիտի վառեր *սեպուհը։* (Մուրացան)

Հարկադրականի անցյալը ապառնիի իմաստով գործածվելու դեպքում թեև գործողության կատարվելը դնում է կասկածի տակ, սակայն խոսքին տալիս է աշխուժություն, մեծացնում հետաքրքրությունը կատարվելիքի նկատմամբ։

Հարկադրականի անցյալը ևս քիչ հաճախականություն և քիչ կիրառություններ ունեցող ժամանակաձևերից է։

Հրամայական եղանակ

Հրամայական եղանակը ևս սուբյեկտիվ վերաբերմունքի եղանակ է և միակ եղանակը, որ հարցական ձև չունի։ Բոլոր եղանակների բոլոր ժամանակաձևերը կարող են հարցական ձևով արտասանվել, և յուրաքանչյուր ժամանակաձևի անհարց ձևը կարող է դառնալ նրա պատասխանը։ Օրինակ, գնո՞ւմ ես—գնում եմ *կամ* չեմ գնում, գրեցի՞ր—գրեցի *կամ* չգրեցի, կկարդա՞ս—կկարդամ *կամ* չեմ կարդա, պիտի բերե՞ս—պիտի բերեմ *կամ* չպիտի բերեմ: *Միայն ըղձական եղանակի ապառնիի եզակի և հոգնակի առաջին դեմքն է, որի առաջադրած հարցման պատասխանը լինում է ոչ թե ըղձական, այլ հրամայական, ինչպես՝* կարդա՞մ-կարդա՛, գրե՞մ-գրի՛ր, խոսե՞մ-խոսի՛ր, գնա՞նք-

գնացե՛ք, վառե՞նք-վառեցե՛ք, ուտե՞նք-կերե՛ք և այլն։ Երկրորդ դեմքի ըղձականի պատասխանը չի լինում հրամայական, այլ ըղձական (բերե՞ս-բերեմ), այնինչ երրորդ դեմքի ըղձականի հարցական ձևի պատասխանը լինում է թող եղանակավորիչով ըղձական, ինչպես՝ խոսի՞-թող խոսի, գա՞ն-թող գան։ Այս նշանակում է, որ հրամանը հակադարձ է հարցումին, որ հրամայական եղանակը ըղձականի հակադարձն է, որ հարցի և հրամանի դեպքում առաջին և երկրորդ դեմքերը հակադարձվում են։

Հրամայական եղանակը արտահայտում է հրաման, կարգադրություն, մի բան անելու պահանջ։ Օրինակ՝

— Թռեք անցե՛ք, *իմ սիրուն ոչխարներ,— երգում էր Հասոն,— թռե՛ք իմ թավամազ գառնուկներ, եկե՛ք ձեր տիրոջ մոտ։*

(Վրթ. Փափազյան)

Մեղմ հրամանը վերածվում է պատվերի, խրատաբանության, ինչպես՝

Մի՛ հավատար *ստվերներին, հենվի՛ր միայն քեզ վրա,*
Ատելու չա՛փ սիրիր *մարդկանց, բայց լավություն միշտ* արա.
Եվ լայն օրում թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ ճանաչի՛ր,
Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր։

(Ա. Խաչիկյան)

Իշխանություն տուր *և* փորձիր *մարդու հոգին։*

(Առած)

Տո՛ւր, մի՛ վախենա, ա՛ռ, մի՛ ամաչիր։ (Առած)

Քիչ խոսի՛ր, շատ լսի՛ր։ (Առած)

Զևով համադասական, իսկ իմաստով ստորադասական նախադասությունների կազմում հրամայականն արտահայտում է պայման, ինչպես՝

Տվեք ինձ հենման կետ, *և ես շուռ կտամ երկիրը։*

(Արքիմեդ)

Աշխարհ անցիր, *Արարատի նման ճերմակ գագաթ չկա։*

(Եղ. Չարենց)

Անցիր հայի շենքը, մտիր *նրա աղքատիկ հարկի ներքո, և կտեսնես, նա յուր մի տուն լիքը գառնուկների բերանի վերջին պատառը կկտրեր և լայնասիրտ հաճությամբ քո առաջը կդներ, ո՛վ աստծո հյուր։* (Պ. Պռոշյան)

Հրամանը վերածվում է մեղմ պահանջի, երբ արտահայտված է լինում ժամանակի երկրորդականին գերադաս նախադասության մեջ։ Օրինակ՝

Երբ կհոգնես, կգազազես աշխարհից,
Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից:
(Վ. Տերյան)

Խելոք մանուկներ, դուք որ մեծանաք, մեծ մարդիկ դառնաք, մեզ խնայեցե՛ք, *մեզ* պահպանեցե՛ք *և ձեր հանդերում, ձեր այգիներում ծառեր* տնկեցե՛ք: (Ղ. Աղայան)

Հրամայականով կարելի է արտահայտել նաև խնդրանք, իղձ։ Օրինակ՝

Քնքուշ երազով պաճուճիր *հոգիս,*
Նստիր *մահճիս մոտ ու տխուր* երգիր,
Մազերդ փռիր *հոգնատանջ կրծքիս*
Ու մեղմ փայփայիր *սիրտս տարագիր։* (Վ. Տերյան)

Սրան հակառակ պայմանի երկրորդական նախադասությանը գերադաս նախադասության մեջ հրամայականն ավելի կատեգորիկ բնույթ է ստանում։ Օրինակ՝

Ունես, աշխատիր *կրկնապատկել, եռապատկել, տասնապատկել։ Քոնը քիչ է,* իլի՛ր *հարևանից, ընկերից, եղբորից։ Ճանկերդ* սրի՛ր *ու* ընկի՛ր *աշխարհի* հոգին հանի՛ր, *մի՛* նստիր *ու պառավ կնոջ պես սրան ու նրան նախանձիր։* (Շիրվանզադե)

Հրամանը պատշաճ է տալ փոքրին, ստորադրյալին, դիրքով, տարիքով, պաշտոնով ցածրին, բայց ոչ ավագին։ Այս է պատճառը, որ նման անհարմարությունից խուսափելու համար հրամայականի փոխարեն գործածում ենք ըղձականը, ընտրելով արտահայտման քաղաքավարական եղանակ։

***

Մենք ամենահամառոտ կերպով թվարկեցինք բայի եղանակների և ժամանակաձևերի հիմնական և երկրորդական քիչ թե շատ հաճախական կիրառությունները արդի գրական հայերենում։ Սակայն պետք է ասենք, որ ժողովրդախոսակցական հայերենում և բարբառներում այդ կիրառություններն ավելի շատ են և գրական լեզվի համար ոճավորման առատ աղբյուր կարող են դառնալ։ Ասենք նաև, որ ժողովրդախոսակցական լեզվում և

բարբառներում հաճախ են գործածվում երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը, որոնք գրականում քիչ գործածական են։

Այստեղ պետք է մի երկու դիտողություններ ավելացնենք եղանակաժամանակային կիրառություններում փոխադարձ համաձայնությունների վերաբերյալ։

ԵՂԱՆԱԿԱՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըղձական ու պայմանական եղանակների մասին խոսելիս տեսանք, որ ժամանակաձևի իմաստը երբեմն պայմանավորված է լինում շարահյուսական կառույցներով։ Այսպես, անկախ այն բանից, թե ինչ ժամանակաձևով է արտահայտված լինում պայմանի երկրորդական նախադասությունը, նրա գլխավոր (գերադաս) նախադասության բայ-ստորոգյալը միշտ ունենում է վճռականության իմաստ, այսինքն՝ ունենում է այսպես կոչված պայմանական ապառնու եղանակաժամանակային իմաստ։ Ինչպես՝

Եթե իմանա,	խայտառակվելու ենք։ խայտառակվեցինք։ պիտի խայտառակվենք։

Ընդգծված ժամանակաձևերը շարահյուսական կառուցվածքի թելադրությամբ ստանում են պայմանականի եղանակային իմաստ։ Եվ ընդհակառակն, եթե գլխավոր նախադասության ստորոգյալն արտահայտված է պայմանական եղանակաձևով, ապա անկախ եղանակաձևից երկրորդական նախադասության բայ-ստորոգյալն ունենում է ըղձական ապառնու իմաստ, ինչպես՝

Եթե գալիս ես, Եթե եկար, Եթե պիտի գաս, Եթե գալու ես,	կգնամ։

Նույն ձևով էլ սահմանական ներկա, սահմանական ապառնի, պայմանական և հարկադրական ապառնի ժամանակներով և թե չէ ժխտական կառույցներում հիշյալ ժամանակաձևերն արտահայտում են հարցում կամ սպառնալիք, ինչպես՝

Գնո՞ւմ ես,
Գնալո՞ւ ես,
Կգնա՞ս,
Պիտի գնա՞ս,
թե չէ։

Իհարկե, շարահյուսական ոչ բոլոր կառույցներն են օժտված այսպիսի պարտադրիչ ուժով, սակայն այնուամենայնիվ այս նշանակում է, որ եղանակաժամանակային կիրառությունները մասամբ շարահյուսական կառուցվածքի հետ են կապված։

Այնուհետև, խոսքի բովանդակության համապատասխան զանազան կերպային նշանակություններ ունեցող բայաձևեր հանդես են գալիս մի բանահյուսվածքում, ըստ որում ինչպես պարզ, անկախ, այնպես էլ բարդ համադասական, բարդ ստորադասական և բազմաբարդ նախադասություններում։ Գոյություն ունի եղանակային և ժամանակային ձևերի համաձայնություն՝ հնարավորություն միմյանց հետ գործածվելու, և կամ միմյանց հետ գործածվելու անհնարինություն։ Ընդհանրապես նկատելի է եղանակաձևերի համաձայնություն ըստ ժամանակի։ Եթե խոսքի հիմքում ապառնի ժամանակ է ընկած, ապա անկախ և բարդ համադասական նախադասություններում միմյանց հետ համաձայն են լինում ապառնի ժամանակները՝ անկախ եղանակից, եթե խոսքի հիմքում անցյալն է, ապա համաձայն են լինում անցյալ ժամանակները, իսկ ներկա ժամանակաընթացքում՝ ներկաները։ Ահա մի օրինակ անցյալ ժամանակների համաձայնությամբ.

Որպես զինվորական նա քաջ էր և ազնիվ, որպես պալատական նա արքունիքի զարդն էր, իսկ որպես հոգևորական նա եղավ եկեղեցու զարդը։ Իբրև մի ջահ լուսապայծառ լուսավորեց նա աստծու տունը։ Աշխարհը լցվեցավ երջանկությամբ։ Քաջ զինվորականը դարձավ քաջ հովիվ և յուր անձը դրեց յուր հոտի վրա։ Աղքատը հաց ուներ ուտելու, հիվանդը՝ ապահով ապաստարան։ Որբը սնուցող հայր ուներ, իսկ այրին՝ խնամող ձեռք։ Ամենուրեք թագավորում էր գթությունը, ամենուրեք տիրում էր ողորմածությունը։ Նեղյալների հայր եղավ նա և սրբեց թշվառների արտասուքը։ (Բաֆֆի)

Եղանակների և ժամանակների համապատասխանություն կարող է լինել միայն այն ժամանակ, երբ խոսքի առարկան նույնն է։ Այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում խոսքի ա-

ռարկան փոխել, դիմում ենք նաև եղանակի կամ ժամանակի փոփոխության (սա խոսքի առարկան փոխելու միջոցներից մեկն է)։ Օրինակ՝

Դժկամ նայում են ժայռերը խոժոռ,
Տխուր խաղում են ալիքները ժիր.—
Ընդունի՛ր հոգիս մոլոր, մենավոր,—
Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր։
Սողում են դանդաղ օրերը անծիր,
Կորած է մթնում մոլոր իմ ուղին.—
Քնքուշ խոսքերով թախիծս ցրի՛ր,
Անխոս ամոքի՛ր ցաված իմ հոգին։ (Վ. Տերյան)

Այս ոտանավորի քառատողերի առաջին երկու տողերում խոսքի առարկան մի բան է, իսկ վերջին տողերում՝ մի այլ բան. խոսքի առարկայի փոփոխության հետ միաժամանակ տեղի է ունենում նաև եղանակի շրջում, և այդ շրջումով մեծացվում է խոսքի հուզականությունը։ Սակայն ուժեղ ոճական լիցքավորում է ստանում եղանակաձևի փոփոխությունն այն դեպքում, երբ խոսքի առարկան չի փոխվում։ Ահա մի օրինակ, որի մեջ ըղձականի փոխարեն պայմանի պարագայի դերում ընդգծված հրամայականի գործածությունը խոսքին զգալի հուզական լիցք ու թափ է հաղորդում։

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ
չկա,
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ
չկա,
Աշխարհ անցի՛ր, *Արարատի նման ճերմակ*
գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս
սարն եմ սիրում։ (Ե. Չարենց)

Եղանակաձևերի և ժամանակաձևերի միահյուսումը կամ բարեխառնումը խոսքն ազատում է միակերպության ձանձրալիությունից և նրան տալիս բազմազանության հաճելիություն։

Հիշյալ երևույթից տարբեր, որոշ իմաստով հակառակ է նրան եղանակաձևի բազմիմաստությունը՝ *խոսքի կառուցումը միայն մեկ եղանակով ու մեկ ժամանակաձևով։ Հասկանալի է, որ այսպիսի խոսքը պետք է համառոտ լինի՝ ստեղծված հատուկ նպատակադրումով։ Այսպիսի խոսքերը հյուսվում են իբրև բանաստեղծական նուրբ զգացման, ապրումի, մտորումի, անորոշ*

ցանկության, վերհուշի գեղարվեստական արտահայտություն։ Այսպես է ստեղծված, օրինակ, Վ. Տերյանի հետևյալ բանաստեղծությունը.

Դու գալիս ես մութ գիշերապահին
Եվ լինում ես լուռ.
Ես չեմ հիշեցնում ցնորքներդ հին,
Չեմ վրդովում քեզ խոսքերով տխուր։

Ես հասկանում եմ քո խենթ աչքերի
Հրեղեն լեզուն,
Խոնարհ եմ լինում ես որպես գերի,
Եվ տրտմության սև խոսքեր չեմ ասում։

Վառվում է մոմը դողդոջ փայլերով
Հեռու անկյունում,—
Ելնում ես անխոս, հպարտ քայլերով,
Մահապարտի պես այնտեղ ես գնում։

Եվ շշնջում է հագուստդ թափվող
Վարագույրի մոտ,—
Փռվում է դառը ցնծության մի դող,
Ու ողջ աշխարհը դառնում է աղոտ...

Կանգնած ես դու մերկ, թագուհի, խոնարհ,
Իսկ ես քո գերին.
Քո թագավորն ու դահիճն եմ խավար,
Եվ սահման չկա չար տանջանքներին։

Հիվանդ հոգու ցնորական այս տեսիլքը այստեղ պատմված է սահմանական եղանակի ներկա ժամանակաձևով, սակայն այս ներկան իրական-իրադրական ներկա չէ, քանի որ չի համընկնում ո՛չ խոսքի պահի և ո՛չ էլ ընդհանրական ներկային։ Սա միաժամանակ պատմական ներկա չէ։ Այստեղ պատումն այնպես է արվում, որ ներկան միաժամանակ և՛ ներկա լինի և՛ ներկա չլինի, միաժամանակ և՛ անցյալ նշանակի և՛ գալիք։ Ժամանակային այս անորոշությունը միանգամայն հարիր է բանաստեղծի հոգեկան ապրումի անորոշությանը։ Այս նշանակում է, որ եղանակաձևի բազմիմաստությունը կարող է միջոց դառնալ հոգեկան նուրբ զգացումներ արտահայտելու համար։ Վ. Տերյանը, որին է պատկանում բանաստեղծական այս միջոցի գյուտը, իր հոգեկան

տվայտանքների արտահայտման համար դիմել է եղանակաձևի բազմիմաստությանը իր բազմաթիվ ստեղծագործություններում (նրա ստեղծագործությունների շուրջ 10 %-ը գրված է այսպես), օգտագործելով ոչ միայն սահմանական եղանակի ժամանակաձևերը, այլև մյուս եղանակները։ Այսպես, օրինակ, ըղձական եղանակի անցյալով է գրված նրա հանրահայտ «Լինեի չոբան սարերում հեռու» բանաստեղծությունը.

Լինեի չոբան սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրանիս մոտով,
Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու

Ահա մի օրինակ էլ պայմանական եղանակով.

Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ,
Քնքուշ ձեռներդ ես կհամբուրեմ,
Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ
Ու հեքիաթային լույսեր կվառեմ...

Երկար մազերդ կարձակես ազատ,
Հիվանդ գլուխդ կդնես կրծքիս,
Կլինես քնքուշ, մոտիկ, հարազատ,—
Անուշ խոսքերով կդյութես հոգիս...

Պայծառ աշխարհում կլինենք մենակ՝
Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված,
Կերազենք անհուշ, անվերջ ու անհագ,—
Հեքիաթ աշխարհում առհավետ կապված։

Ինչպես որ բերված օրինակներից էլ երևում է, եղանակաձևի բազմիմաստությամբ հյուսված ստեղծագործություններում ժամանակաձևի (նաև եղանակային) իմաստը խամրում է, և դրանք բոլորն էլ վերածվում են մի տեսակ չիրականանալի իղձի, որով և ավելի է ընդգծվում ստեղծագործության թախծոտ տրամադրությունը։

ԴԵՄՔ ԵՎ ԹԻՎ

Բայի եղանակային ձևերը անբաժան են դեմքի և թվի քերականական կարգերից։ Եղանակների ու ժամանակաձևերի նման բայի դեմքն ու թիվը ևս ունեն իրենց հիմնական և երկրորդա-

յին կիրառությունները, այսինքն մի դեմքը կարող է գործածվել մի այլ դեմքի, և մի թիվը՝ մի այլ թվի փոխարեն։

Արդի հայերենում նկատելի են դիմափոխության հետևյալ դեպքերը։

ա. Շատ սովորական է եզակի երկրորդ դեմքի բայաձևի գործածությունը առաջին դեմքի եզակիի փոխարեն, ինչպես՝ Սահմանական ներկայով.

— Ջանըմ, հարվածո՞ւմ ես, բողոքում են, դրվատո՞ւմ ես, բողոքում են։ Չգիտես ինչպես գրես, որ գոհ մնան մարդիկ,— փորձեց կատակել խոռխոռունին։ (Ն. Զարյան)

Ըղձականով.

Հապա ի՞նչ անես... թողնես փախչե՞ս... Եվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին։ Բայց ո՞նց փախչես, մենակ ճամփա չգիտես, մարդ չես ճանաչում... (Հ. Թումանյան)

Ըղձականով, պայմանականով և հարկադրականով.

Ջարմանք բան է մեր բախտն, ախպեր,
Հայ գործիչին ինչ էլ անես,
Լավ տեղ կտաս, պատիվ թե սեր,
Վերջը պետք է դու փոշմանես... (Հ. Թումանյան)

Երկրորդ դեմքի բայաձևն առաջինի իմաստով է գործածվում, երբ խոսողն ինքն իր հետ է խոսում, որ այլ բան չէ, քան ներքին խոսքի մի արտահայտություն։

Օրինակ՝

Կարմրիկն էնպես խոսում է, իսկ գելն իրան-իրան միտք է անում.

— Էս փոքրիկ, քնքուշ աղջիկը ի՜նչ անուշ պատառ է... Սա ավելի համով կլինի, քան թե պառավը։ Ապա քեզ տեսնեմ, մեր տղա, բանն էնպես խելքով բռնի, որ ջուխտն էլ ճանկդ գցես... (Հ. Թումանյան)

Նրան որ տեսա էդպես, սիրտս դող ընկավ։ Մտքումս ասի՝ ինձ ավելի պիտի տանջեն շան որդիք։ — Քու բանը բուրդ է, խեչա՜ն, ասում եմ, կուժն ու կուլան քո գլխին պիտի կոտրեն. ինքդ խեղճ մարդ, նրանք ռուս, ո՛չ խոսքերն ես հասկանում, ո՛չ լեզուն, անլեզու սարի անասուն. ինչ ուզենան, կանեն քեզ, ո՛չ տեր ունես, ո՛չ տիրական։ (Ս. Զորյան)

բ. Երկրորդ դեմքի բայաձևը գործածվում է ընդհանրական

իմաստով, այսինքն՝ այնպես, որ որևէ կոնկրետ դեմքի չի վերաբերում, այլ մարդուն ընդհանրապես։ Օրինակ՝

— Մինչև անգամ ես կարծում էի, որ երբ երկու ընկերների միջև ինչ-ինչ պատճառներով հակակրանք է ծաղում, այդ դեպքումն էլ շատ լավ կլինի, որ նրանք իրենց այդ զգացումը չծածկեն իրարից։ Սիրում ես *ընկերոջդ,— այդ ինքնըստինքյան կարտահայտվի.* սկսել ես ատել,— *այդ էլ մի՛ աշխատիր ծածկել։ Քաշվելն էլ ավելի վատ է այդ դեպքում,* խոսքն ուղղակի տո՛ւր ճակատին ու հեռացի՛ր։ *Այդ հանգստություն կտա քեզ, կամրացնե հոգիդ։* (Նար-Դոս)

— ...Սանդարյանը պարտիային նվիրված անկեղծ մարդ է։

— Ես էլ այդ կարծիքին եմ։ Բա՞յց։

— Բայց եթե դու նրա ղեկավարության տակ ես, ապա չհամարձակվես նրանից լավ հասկանալ *պարտիայի քաղաքականությունը։ Նա անկեղծորեն կարծում է, թե ինքը ամբողջ ռայկոմն է, իսկ ռայկոմը՝ ամբողջ պարտիան։ Եթե* դու նրա հետ վիճես, *նա քեզ անկեղծորեն կմեղադրի պարտիայի ծրագիրն ու կանոնադրությունը հերքելու մեջ։* (Ն. Զարյան)

Ծանոթություն. Ընդհանրական իմաստով այժմ սկսել է տարածում գտնել եզակիի փոխարեն հոգնակին (հոգնակի դերանուն ենթակայի հետ միասին), անշուշտ ռուսերենի ազդեցությամբ, երևի ոմանք եզակի ձևը համարում են անպատշաճ։ Ահա մի օրինակ.

Չի կարելի սեփական օրգանիզմի հետ վարվել, ինչպես ստրուկի հետ։ Նյարդային համակարգը վաղ թե ուշ կպատժի դրա համար։ Եթե դուք *սոված եք (փոխ. եթե սոված ես, եթե մարդ սոված է,—Պ. Պ.), առանց այն էլ հոգնած նյարդային համակարգը ձեր կամքից անկախ կհանգի մի վիճակի, որը հղի է «պայթյունով»։*

(«Գիտություն և տեխնիկա»)

գ. Առաջին դեմքի նշանակությամբ կարող է գործածվել նաև երրորդ դեմքը՝ դարձյալ եզակի թվով։ Այդ լինում է այն դեպքում, երբ խոսողն իր անունը, պաշտոնը հիշատակելով կամ որևէ այլ ձևով իրեն ակնարկելով՝ խոսակցի հետ իր մասին է խոսում։ Օրինակ՝

(Խոսում են Սամվելը և իր սպասավոր Հուսիկը)

— Կարո՞ղ ես իմանալ և այն, թե սուրհանդակը ինչ կխոսի տիկնոջ հետ։

— Այդ էլ կարող եմ։

— Բայց նա չպիտի գիտենա, որ դու ինձանից պատվեր ես ստացել։

— Հուսիկը երեխա չէ, նա այդ կարող է հասկանալ (Բաֆֆի)։

Երրորդ դեմքի հոգնակին եզակի առաջինի փոխարեն է գործածվում, երբ խոսողը վրդովված է լինում և ուզում է իր պատասխան արհամարհանքն արտահայտած լինել, ինչպես՝

— Աղջիկ պարոնը տանն է՞։

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Գիքորը։

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ։

— Քեզ հարցնում են՝ տանն է՞, թե չէ,—բարկացավ պարոնը։ (Հ. Թումանյան)

— Է՜յ,— ձայն տվեց պարսիկ զինվորը,— ո՞վ ես, որ այստեղ ես լողացնում նժույգները։

Արծվին հայացքը սահեցրեց զինվորի աչքերի վրայով և շարունակեց լվալ նժույգների ազդրերը։

— Քեզ հետ չե՞ն,— ձայն տվեց կրկին զինվորը։

(Դ. Դեմիրճյան)

Երրորդ դեմքն առաջինի իմաստով է գործածվում նաև այն դեպքում, երբ խոսքն առաջ է տարվում ուրիշի բերանով, ինչպես՝

Էս պատմությունից հետո քեռի Խեչանը գնացել էր գյուղումը պատմել, թե իր տեղը նեղ էր, եկել էր քաղաք՝ ինձ խնդրել, որ օգնեմ, իսկ ես ասել էի՝ չեմ կարող, ու ո՛չ նրա խոսքին էին ականջ դրել, ո՛չ երեսին էին մտիկ արել։ (Հ. Թումանյան)

Երրորդ դեմքն առաջինի, բայց նաև անորոշ դիմային նշանակությամբ է գործածվում, երբ բայ-ստորոգյալն ունենում է մարդ «ձևական» ենթական, ինչպես՝

Իր թափառ կյանքում,
Մարդ ինչ իմանա,
Չի նստել, թախծել
Այդ քարի վրա։ (Ա. Իսահակյան)

— Ի՞նչ պետք է անեք, մարդ ուզում է՝ դուրս գա, աշխարհ տեսնե, բայց դուք կույր աղջկա նման, հենց տանն եք պահում։ Ես խո պստիկ չեմ։ (Բաֆֆի)

Դիմային այս անորոշությունը խոսքի անհրաժեշտ տարրերից է. ինչպես որ կան մտքի հաստատունությունն արտահայ-

տող լեզվական միջոցներ, այնպես էլ կան միջոցներ, որոնք կոչված են արտահայտելու անորոշություն։

դ. Երկրորդ դեմքը կարող է գործածվել նաև երրորդ դեմքի իմաստով, եթե տրվում է նրա անունը կամ երրորդ դեմքն ակնարկվում է։ Օրինակ՝

Թե չէ՝ թավադ ես, ինչ ուզես՝ անես,
Ես չկարենամ քեզ մի խոսք ասե՞լ...

(Հ. Թումանյան)

Երկրորդ դեմքը երրորդի իմաստով է գործածվում, երբ խոսողը մտովի դառնում է դեպի բացակա անձը, նրան մտովի իր խոսակիցը դարձնում՝ խոսքը ազդու դարձնելու նպատակով։ Օրինակ՝

Եկել է, թե Քուռակը թամբեք, գնամ արտերը ման գամ։ Ի՞նչ կա որ, գնա ման արի: ...Ձին քշել գնացել կանգնել է Ջուրաբենց դռանն ու Ջուրաբենց աղջկա հետ սիրաբանություն է անում։ Բա սա կոմունիստի արարմունք է՞։ Տո՛, մասսայի ղեկավար ես, կնիկ, տղի տեր մարդ, ի՞նչ ես ընկել ջահել աղջկա ետևից: Տանն էլ կնկա հետ թուր ու թվանքով է խոսում։

(Ն. Ջարյան)

ե. Երրորդ դեմքը կարելի է գործածել երկրորդ դեմքի նշանակությամբ։ Այս տեղի է ունենում այն դեպքում, երբ խոսողն իր խոսակցին ավելի մեծ կարևորություն է տալիս, քան դրան արժանի է։ Նման դիմափոխությունը խոսքի պատումին տալիս է աշխուժություն ու այն դարձնում կենդանի ու հետաքրքրական։ Օրինակ՝

— Լսի՛ր, տեր Մարզպետունի. ես իրավուք չունիմ ստիպել քեզ՝ բանալ քո սիրտն իմ առաջ։ Դու հայրենիքիդ նվիրված մարդ ես, քո թագավորի հավատարիմ պաշտոնյան ես, Սևադան պարտավոր է քեզ հարգել (փոխ. ես պարտավոր եմ քեզ հարգել,—Պ. Պ.)... Սևադան իրավունք չունի ծածկել յուր գործերը: Գարդմանա տերը չի կարող յուր թշնամությունը բարեկամությամբ վարագուրել (փոխ. իրավունք չունեմ... չեմ կարող,— Պ. Պ.)։

— Եվ այդպես, ուրեմն Գարդմանա տերը ապստամբների հետ է,— հարցրեց իշխանը խաղաղ ձայնով։

— Ոչ թե միայն ապստամբների հետ է, այլև նա ինքն է ապստամբությունը վառել, բորբոքել:

— Այդ անկարելի է։ Ջարիքը գուցե յուր ետևից տարել է

սրտմտությամբ վառված Սևադային, բայց Սևադան ինքն այդ շարիքը չէր ստեղծել։

— Այո, ես ինքս ստեղծեցի։ (Մուրացան)

Նույն ձևով՝ երբ խոսողն իր խոսակցի համեմատությամբ ցածր է դիրքով և իրեն նրան հավասարեցնել չի կարող, նման դեպքերում անցյալում արտահայտվում էին դիմափոխությամբ։ Այսպիսի օրինակ տալիս է Բաֆֆին «Սամվելում», մանավանդ որ անցյալում դիմացինին դուք հոգնակի ձևով դիմելու սովորություն հայ ժողովուրդը չուներ։ Ահա այսպիսի դիմափոխության մի օրինակ հիշյալ վեպից։

Փայլակը ուրախությամբ առեց նամակները հարցնելով.

— Իմ տերը հենց ա՞յս բոպեիս է հրամայում ճանապարհ ընկնել... — Նախավկայի մոտ, Մաղարթա լեռան ստորոտում, ժայռի վրա նստած կգտնես մի կրոնավոր։ Նամակներից մեկը կհանձնես նրան։

— Ո՞ր նամակը։ Իմ տիրոջ ծառան կարդալ չգիտե։

ղ. Սովորական արտահայտաձև է, երբ անորոշ ենթակա լինելու դեպքում գործածում ենք բայի երրորդ դեմքը հոգնակի թվով, ինչպես՝

Զանգը տվին։ Գիքորը վեր թռավ։ (Հ. Թումանյան)

Դուռը դրսից ծեծեցին... Որովհետև դուռն իսկույն բացող չեղավ, ներից ծեծեցին։ (Նար-Դոս)

Ընդհանրապես ենթական անորոշ լինելիս ստորոգյալը դրվում է հոգնակի թվով (նաև երկրորդ դեմքով), ինչպես՝

— Ա՜, բարով, բարով, քեռի Խեչան։ Աղջի՛, չայ բերեք, ճաց բերեք քեռի Խեչանի համար։ (Հ. Թումանյան)

ԺԽՏՈՒՄԸ ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐՈՒՄ

Յուրաքանչյուր խոնարհված բայ հանդես է գալիս երկու ձևերով՝ հաստատական և ժխտական։ Գործողության ժխտումը հրամայական եղանակում կատարվում է Մի արգելական մասնիկով, իսկ մյուս եղանակներում՝ Չ մասնիկով։ Գրական լեզվում արգելական հրամայականը կանոնավորապես կազմվում է ներկայի հիմքից, որին ավելանում են իր և եք (ե լծորդության բայերի դեպքում) և ար և աք (ա լծորդության բայերի դեպքում) վերջավորությունները։ Ժողովրդախոսակցականում արգելական հրամայականը կազմվում է հաստատական հրամայականից,

որով և առաջ են գալիս բազմաձևություններ։ Այդ ցույց տանք մի քանի բայերի համեմատությամբ.

Գրական լեզվում		Ժողովրդախոսակցական	
Գնալ	մի՛ գնար	գնա	մի՛ գնա
	մի՛ գնաք	գնացեք	մի՛ գնացեք
Զարմանալ	մի՛ զարմանար	զարմացիր	մի՛ զարմացիր
	մի՛ զարմանաք		
Նեղանալ	մի՛ նեղանար	զարմացեք	մի՛ զարմացեք
	մի՛ նեղանաք		
Խոսել	մի՛ խոսիր	նեղացիր	մի՛ նեղացիր
	մի՛ խոսեք	նեղացեք	մի՛ նեղացեք
Թռչել	մի՛ թռչիր	խոսի(ր)	մի՛ խոսի
	մի՛ թռչեք	խոսեք	մի՛ խոսեք,
Թռցնել	մի՛ թռցնիր		մի՛ խոսեցեք
	մի՛ թռցնեք	թռի(ր)	մի՛ թռի
Բարկացնել	մի՛ բարկացնիր		մի՛ թռիր
	մի՛ բարկացնեք	թռեք	մի՛ թռեք
Վազեցնել	մի՛ վազեցնիր		(մի՛ թռչեցեք)
	մի՛ վազեցնեք	թռցրու	մի՛ թռցրու
		թռցրեք	մի՛ թռցրեք
			(մի՛ թռցրեցեք)
		բարկացրու	մի՛ բարկացրու
		բարկացրեք	մի՛ բարկացրեք
			(մի՛ բարկացրեցեք)
		վազեցրու	մի՛ վազեցրու
		վազեցրեք	մի՛ վազեցրեք
			(մի՛ վազեցրեցեք)

Ժողովրդական արգելականի այս բազմաձևությունը մեր գեղարվեստական գրականության խոսքի միջոցով թափանցում է գրական լեզու և տարածվելու հակում ունի։ Այդ այն պատճառով, որ ոչ միայն արգելականի գրական ձևերը համարյա չեն ուսուցանվում դպրոցում, այլև հաստատականի համաբանությամբ ժխտական կազմելն ավելի հեշտ է, քան հիմքի ընդհանրության վրա կազմելը, մանավանդ որ ոչ միայն անգրագետ-

կիսագրագետ մարդիկ, այլև գրագետները, եթե մասնագետ լեզվաբան չեն, բայի հիմքերի մասին գաղափար չունեն։ Գրական լեզվում ձևավորվող այս բազմաձևության և արգելականի մեջ լեզվի ստեղծած գեղեցիկ միօրինակության փոխարեն առաջացած անկանոնությունից խուսափելու միակ ելքը գրական ձևերը դպրոցում և այլուր սովորեցնելն է։

Ծանոթություն. ՈՒՄ ձյուղի բարբառներում արգելական հրամայականը կազմվում է անորոշ դերբայով և **մի** արգելականով, ըստ որում հոգնակի թվում արգելական մասնիկը դառնում է **միք** (օրինակ՝ **տանիլ մի—տանիլ միք, ասիլ մի—ասիլ միք**), որից էլ առաջ է եկել գրական լեզվում երբեմն հանդիպող **միք ասի, միք գնա** կառուցվածքի արգելականը՝ իբրև ժողովրդականի և բարբառային ձևի բաղադրություն։

Դիմավոր բայերի ժխտումը կատարվում է նաև ոչ *ժխտական մասնիկով, որն ունի իր գործածության առանձնահատկությունը։ Նախ ասենք, որ* ոչ *ժխտականը ըղձականի հետ գործածվելիս խոսքը վերածում է անեծքի* (ոչ վայելի, ոչ տեսնես, ոչ գա)։ *Մյուս բոլոր եղանակաձևերի հետ, ինչպես և ըղձականի հետ,* ոչ-*ը գործածվում է այն դեպքում, երբ ժխտումը վերաբերում է մեկից ավելի բայերի կամ երբ բայի հետ կապված են ժխտվող մեկից ավելի ենթականեր, խնդիրներ կամ պարագաներ, այսինքն՝ երբ ժխտումն առաջ է բերում* բաժանում *ճարտասանական ձևը։ Ահա օրինակներ նախ սահմանական, ապա հրամայական եղանակներով.*

— Տո՛ Ջենով Օհան, տո՛ մահի տարած,
Էս խենթը բերիր արիր գառնարած,
Ո՛չ գառն է ջոկում, ո՛չ գելն ու աղվես...
(Հ. Թումանյան)

Ո՛չ վիշտ եմ սգում, ո՛չ սեր եմ երգում,
Իմ հոգում չկա ո՛չ աստղ, ո՛չ երազ։
(Ա. Իսահակյան)

Եվ լավ օրում թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ
ճանաչիր,

Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր։
(Ա. Իսահակյան)

Երբ ժխտումն անմիջապես գործողությանն է վերաբերում,

այսինքն՝ երբ առանց ենթակաների ու լրացումների հակադրության, հակադրվում են գործողությունները, ոչ ժխտականը դրվում է ժխտվող յուրաքանչյուր բայի հետ՝ նրանից առաջ, ինչպես՝

Սևուկ շունը կծկված
Դռան վրա է նստած։
Ո՛չ հաչում է, ո՛չ կծում,
Ո՛չ էլ *մարդ է* ներս թողնում։

Այն դեպքում, երբ կան ենթակաների, խնդիրների կամ պարագաների հակադրություններ՝ իրենց տարբեր բայ-ստորոգյալներով, ոչ ժխտականը դրվում է նախադասության հիշյալ միավորներից առաջ՝ ժխտելով դրական ձևով արտահայտված բայի իմաստը։ Օրինակ՝

Ինչ լավ է, ասավ։
Ո՛չ ոտոռդ է *ման գալի,*
Ո՛չ նապաստակ *վազ տալի,*
Ո՛չ թռչնակ ծլվլում,
Ո՛չ արևն է երևում։
(Հ. Թումանյան)

Արևը վառ,
Ճամփեն երկար,
Ո՛չ աղբյուր կա, ո՛չ առու։ (Հ. Թումանյան)

Այն դեպքում, երբ երկու և ավելի ենթականեր և կամ խնդիրներ ու պարագաներ կապված են լինում մեկ ընդհանուր բայ-ստորոգյալի հետ, վերջինս անկախ իր շարադասության դիրքից (նախադաս է, թե ետադաս) ունենում է ժխտական ձև, որի հետևանքով առաջ է գալիս կրկնակի ժխտում։ Օրինակ՝

Սակայն ես սպասեցի քեզ թե՛ այստեղ, թե՛ լճակում, իսկ դու չկայիր ո՛չ այստեղ, ո՛չ այնտեղ։ (Ա. Իսահակյան)

Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին.—
Ջեն հրապուրում իմ հիվանդ հոգին։
(Ա. Իսահակյան)

Ժխտման կարգի մասին մեր ասելիքն ավարտելուց առաջ ասենք, որ բայի ժխտական ձևը խոսքում պայմանավորված է

լինում կապակցության մեջ եղած բառերով։ Այսպես, օրինակ, բավական է, որ բայ-ստորոգյալի հետ կապված լինի ժխտական որևէ դերանուն (ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ, ոչ մի) *կամ բացառման իմաստ արտահայտող մակբայ* (ամենևին, այլև, էլ, երբեք, իսպառ, բոլորվին *նաև* հո (խոմ) *եղանակավորիչը), որպեսզի բայ-ստորոգյալը գործածվի միայն ժխտական ձևով։ Օրինակ՝*

Իմ ճամփան անվախճան մի գիշեր,
Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա։ (Վ. Տերյան)

Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում,
Եվ չի պակասի *աշխարհում* ոչինչ։ (Հ. Սանյան)

Ծանոթություն. Ոչ վաղ անցյալում այսպիսի բառերի հետ կարող էր գործածվել նաև բայի դրական ձևը, հատկապես ոչ ոք դերանվան հետ։ Ահա մի երկու օրինակներ.

Մամիկոնյան տնից ոչ ոք մնաց, որ ժառանգեր հայոց սպարապետության պաշտոնը։ (Ռաֆֆի)

Սրատեսության մեջ ոչ ոք ինձ հետ կարող է մրցել։ (Ռաֆֆի)

Ամենքին խնդրեցինք, որ միանան և թև ու թիկունք լինեն արքային, պաշտպան՝ հայրենիքին ու գահին. բայց ոչ ոք մեզ լսեց և ոչ ոք մեր խնդիրը հարգեց (Մուրացան)

— Գնա սիրելիս և սրանից հետո խոհեմ եղիր։ Հիլլելին ոչ ոք կարող է զայրացնել։ (Ավ. Իսահակյան)

Ավելացնենք նաև, որ թեև ժխտում ու բացառում արտահայտող հիշյալ բառերի հետ բայը դրական ձևով է հանդես գալիս նաև արևմտահայերենում, սակայն արևելահայ գրականում արդեն հնացած ձև է, և հնչում է մեր ականջին խորթ ու անսովոր։

ՄԱԿԲԱՅԸ ԽՈՍՔՈՒՄ

Մակբայը բնութագրում է բայի արտահայտած գործողությունը ըստ կատարման ձևի և չափի, ցույց տալիս գործողության տեղն ու ժամանակը։ Ե՛վ քանակով (շուրջ 1000 բառ), և՛ իմաստաբանական կարգերով մակբայն աղքատ խոսքի մաս է՝ զուրկ ձևաբանական կարգերից։ Այս պատճառով էլ այն անհամեմատ ոճական քիչ լիցքավորում ունի։ Քանակով համեմատաբար շատ են որեն *և* բար *ածանցներով կազմված մակբայները (յուրաքանչյուրով ունենք կազմված շուրջ 300-ական մակբայ),* պես *ածանցով կազմված ունենք շուրջ 110 մակբայ, այ-*

Նուհետև գալիս են գին *ածանցով կազմվածները (մի քանի տասնյակ), ապա* վարի *ածանցով կազմվածները, և այնուհետև* ովի, ովին, անց, ուստ, ու, են *ածանցներով կազմվածները, որոնցով ավելի քիչ բառեր ունենք։ Մակբայները ոճական լիցքավորում են ստանում կա՛մ իբրև համանիշներ, կա՛մ իբրև գրական և ժողովրդախոսակցական ու բարբառային տարբերակներ։*

1. Բար, որեն *և* պես *ածանցներով և միևնույն հիմքով ունենք կազմված մի շարք բառեր, որոնք, եթե չնչին բացառություններն անտեսենք, նույն իմաստն են արտահայտում, նախադասության մեջ նույն գործառությամբ են հանդես գալիս, սակայն ոճական նրբություններ են հանդես բերում։ Ահա այդպիսի բառերի շարքեր.*

արագորեն—արագաբար
ագահորեն—ագահաբար
բնազդորեն—բնազդաբար
հավանորեն—հավանաբար
հավերժորեն—հավերժաբար
մեխանիկորեն—մեխանիկաբար
ստրկորեն—ստրկաբար
զգալիորեն—զգալապես
ամիհատորեն—ամիհատապես
բացարձակորեն—բացարձակապես
գործնականորեն—գործնականապես
նյութականորեն—նյութականապես
դրականորեն—դրականապես
վճռականորեն—վճռականապես
անմիջաբար—անմիջապես
առատաբար—առատապես
քաջաբար—քաջապես
հաստատաբար—հաստատապես
վայրկենաբար—վայրկենապես
մշտաբար—մշտապես
բոպեաբար—բոպեապես
և այլն։

Համանշային զուգահեռներ են կազմում նաև.

ա. Մակբայները և մակբայական կապակցությունները, ինչպես՝

արագ —արագ կերպով, արագ ձևով
դանդաղ —դանդաղ կերպով, դանդաղ ձևով
կոպտորեն —կոպիտ կերպով, կոպիտ ձևով
ազատորեն —ազատ կերպով
շտապ —շտապ կարգով
եղբայրաբար —եղբոր պես, եղբոր նման և այլն։

բ. Ածական-մակբայները և մակբայական կապակցությունները, ինչպես՝

լավ —*լավ կերպով, լավ ձևով, լավ եղանակով*
վատ —*վատ կերպով, վատ ձևով, վատ եղանակով*
հեշտ —*հեշտ կերպով, հեշտ ձևով, հեշտ եղանակով*
անհագ —*անհագ կերպով, անհագ ձևով*
աղոտ —*աղոտ կերպով, աղոտ ձևով*

Պետք է նկատել, որ վերջին տասնամյակներում մակբայաբար գործածվող այսպիսի որակական ածականների փոխարեն սկսել են լայն տարածում ստանալ մակբայական կապակցությունները՝ անկասկած ռուսերենի ազդեցությամբ։

Մակբայները և մակբայական կապակցությունները կարող են համանշային զուգահեռներ կազմել նաև գոյականի գործիական հոլովի հետ, ինչպես՝

տհաճորեն —*տհաճությամբ*
համառորեն — *համառությամբ*
մտերմաբար —*մտերմությամբ*
խոհեմաբար —*խոհեմությամբ*
դժվար կերպով —*դժվարությամբ*
հաջող կերպով —*հաջողությամբ*

Ծանոթություն. Ընդհանրապես հատկանիշ արտահայտող բառերից (ածական, մակբայ և բայ) կազմված գոյականների գործիական հոլովը ցույց է տալիս գործողության ձև և ոճական մակբայական նշանակություն։ Վերը բերված շարքում ածականներ ու մակբայներ են։ Բայահիմքից կազմված գոյականների գործիականում ևս խիստ ընդգծված է գործողությունը բնութագրող հատկանիշը, ինչպես՝ **կասկածանքով, նողկանքով, պարծանքով, աղաչանքով, քամահրանքով,** նաև **երազանքով, սարսափով** և այլն։ Բացի սրանից, մակբայական նշանակությունը շատ ընդգծված է ինչպես համընթացական (անկատար երկրորդ) դերբայի **(գնալիս, անցնելիս, աշխատելիս, խոսելիս)**, այնպես էլ անդրոշ դերբայի գործիական հոլովի մեջ **(վազելով, ծիծաղելով, զրուցելով)**, Քանի որ այս ձևերը կիրառվում են պարագայական գործառությամբ, այդ պատճառով էլ բուն մակբայներ քիչ են ստեղծվում մեր լեզվում։ Սրան նպաստում են նաև **կերպով, եղանակով, ձևով, կարգով, պես, նման** կապերով կապակցությունները, որոնք այժմ լայն տարածում ունեն՝ անշուշտ ռուսերենի ազդեցությամբ։

2. Զգալի թվով մակբայներ գրական ոլորտի բառեր են։ Դրանք ոչ միայն **բար, որեն, պես** *ածանցներով կազմված մակ-*

բայներ են, այլև հետևյալ ածանցներով կազմվածները.

ԳԻՆ.— ողբագին, եռանդագին, հիվանդագին, տենդագին, զըվարթագին, լալագին, թախծագին, թախանձագին, ջերմագին, դառնագին, սպառնագին, քնքշագին, տառապագին, ցավագին, հեշտագին, կարոտագին, մոլեգին, ուժգին, տխրագին։

ՈՒՍՏ.— վերուստ, արտաքուստ, ներքուստ։

ՈՎԻՆ.— լիովին, գլխովին, խմբովին, կամովին, հիմնովին, բոլորովին, ամբողջովին։

ՈՎԻ.— մտովի, յուրովի։

Գրական ոլորտի մակբայներ են նաև ս-ով կազմված բազմիցս, քանիցս, երիցս, լավագույնս, խստագույնս, և-*ով կազմված* ստորև, վերև, ներքև, իվ-*ով կազմված* խստիվ, մեղմիվ, ճշտիվ, *այլև* լռելյայն, գաղտագողի, հավերժ, հավետ, առհավետ, առայժմ, առմիշտ, ընդմիշտ, կանխավ, սակավ, հանապազ, հազվադեպ, գրեթե, սաստիկ, տակավին, միառժամանակ, այնուհետև, այսուհետև, ամենուր, ամենուրեք, հետզհետե, դարձյալ, առաջիկայում, ի վերջո, մերթ, մերթ-մերթ, մերթ ընդ մերթ, երբեմն, երբեմն-երբեմն, ստեպ-ստեպ, ետմահու, ժամ առ ժամ, քայլ առ քայլ, մեկ առ մեկ, գիրկընդխառն, օրինիբուն, միաձայն, միաբերան, միաժամանակ, միահամուռ, սրտատրոփ, բարձրաձայն, շեշտակի, շեղակի, փութանակի, անընդհատ *և այլն։*

Մակբայների մի մասն էլ ունի ժողովրդական ծագում և խոսք է բերում հասարակ ոճ։ Այսպիսի մակբայներից են, օրինակ, վարի *ածանցով կազմված* մարդավարի, տնավարի, աղայավարի, խոզավարի, իշավարի, գողավարի, գյուղավարի, ընկերավարի, մեծավարի, հայավարի, թուրքավարի, տղայավարի, անց *ածանցով կազմված* նորմեկանց, շապկանց, երեսանց, կողքանց, հեռվանց, տակևանց, ուց *ածանցով կազմված* հնուց, վաղուց, առաջուց, մորուց, փոքրուց, ու *ածանցով կազմված* կսկծու, ջգրու, են-*ով կազմված* զնգալեն, զրնգալեն, գլգալեն, ճղճղալեն, գվգվալեն, *այլև կազմությամբ պարզ ու բարդ մակբայներ, ինչպես՝* միշտ, խիստ, խեթ-խեթ, վռազ-վռազ, ֆիշ-ֆիշ, ուշ-ուշ, հատ-հատ, մեծ-մեծ, բուռ-բուռ, ծուռ-ծուռ, լայն-լայն, մեկ-մեկ, հուր-հավիտյան, տուն-տնովի, գեղ-գեղովի, սարեսար, դարեդար, քարեքար, պատեպատ, դռնեդուռ, բերնեբերան,

շարվեշարան, կուզեկուզ, սուսուփուս, լուռումունջ, ափալ-թափալ, բարով-խերով, ժուկով-ժամանակով:

ԴԵՐԱՆՈՒՆԸ ԽՈՍՔՈՒՄ

Մինչև այժմ քննարկված խոսքի մասերը՝ գոյականը, ածականը, թվականը, բայը և մակբայը, նյութական իմաստ ունեցող այն խոսքի մասերն են, որոնք մի ընդհանուր առանձնահատկությամբ տարբերվում են մյուս խոսքի մասերից։ Այդ այն է, որ դրանք բոլորն էլ անվանող բառեր են. յուրաքանչյուր գոյական անվանում է մի առարկա, տալիս է առարկայի կամ առարկայացված հասկացության անունը, յուրաքանչյուր ածական անվանում է առարկայի որակային մեկ հատկանիշ, տալիս է հատկանիշի անունը, յուրաքանչյուր թվական անվանում է առարկայի թիվ, թվային հատկանիշ, յուրաքանչյուր բայ անվանում է գործողություն, եղելություն, տալիս է գործողության անունը, և յուրաքանչյուր մակբայ անվանում է գործողության մեկ հանգամանք (ձև, չափ, ժամանակ և այլն)։ Մյուս խոսքի մասերը այս առանձնահատկությունը չունեն։ Կապերը և շաղկապները բառերի կամ նախադասությունների հարաբերություններ են ցույց տալիս, վերաբերականները բառերն օժտում են զանազան վերաբերական հասկացություններով, ձայնարկությունները արտահայտում են չտարրորոշված զգացմունքներ և չտարրորոշված կոչեր։ Այս բոլոր խոսքի մասերից առանձնանում է միայն դերանունը։

Դերանունը բազմաբնույթ խոսքի մաս է՝ կազմված ընդամենը մի երկու տասնյակ բառերից, որոնք ունեն գոյականի, ածականի, թվականի, բայի և մակբայի իմաստներ և, խոսքում փոխարինելով նրանց, մեծ դեր են ստանձնում խոսքի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, խոսքը միօրինակությունից և ավելորդ կրկնություններից ազատելու գործում, հեշտացնում արտահայտվելը, օգնում արտահայտելու նաև այնպիսի գաղափարներ, որոնց համար կա՛մ լեզուն բառեր չի ստեղծել, և կա՛մ եթե լեզվում կան, ապա մենք չգիտենք կամ տվյալ պահին չենք հիշում։ Սրանով էլ հենց մեծանում է դերանվան դերը ոչ միայն խոսքում, այլև լեզվում։

Դերանունները նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից առանձնանում և մի առանձին խոսքի մասի մեջ են միավորվում

իմաստային մի ընդհանրությամբ. այդ այն է, որ դերանունը, ի տարբերություն մյուս՝ նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի, ոչ թե անվանող, այլ ցույց տվող, մատնացույց անող խոսքի մաս է։ Այսպես, եթե քար, ծառ, տուն, մարդ գոյականներից յուրաքանչյուրը սոսկ տալիս է առարկայի անունը, անվանում է առարկա[29], կարմիր, գեղեցիկ, հանելի, լեռնային ածականներից յուրաքանչյուրը տալիս է առարկայի որոշակի մեկ հատկանիշի անունը, երկու, տասը, հինգերորդ, երկուական թվականներից յուրաքանչյուրը տալիս է առարկայի թվային որոշակի գաղափարի անունը, գրել, եկավ, տեսնելու եմ բայերից յուրաքանչյուրը տալիս է որոշակի մեկ գործողության անուն, արագ, խորապես, դառնորեն մակբայներից յուրաքանչյուրը անվանում է գործողության մեկ հատկանիշ, ապա բոլոր դերանունները ոչ թե անվանում են, այլ ցույց են տալիս, մատնացույց են անում առարկան, նրա հատկանիշները, գործողությունները ու եղելությունները, սրանց հատկանիշները և հանգամանքները (չափը, տեղը, ձևը և այլն), առանց դրանց անունները տալու։ Այսպես, ես դերանունը մատնացույց է անում խոսողին՝ առանց նրա անունը տալու, դու դերանունը մատնացույց է անում խոսակցին՝ առանց նրա անունը տալու, նա դերանունը մատնացույց է անում մի երրորդ անձնավորության կամ առարկա, դարձյալ առանց անունը տալու։ Սա դերանունը մատնացույց է անում առարկան և անունը չի տալիս, այսպիսի դերանունը մատնացույց է անում առարկայի որակային հատկանիշ՝ առանց այդ հատկանշի անունը տալու, այսքան դերանունը մատնացույց է անում առարկայի քանակային հատկանիշ՝ առանց այդ հատկանշի անունը տալու, ինչ արեց կապակցությամբ արտահայտված դերանունը մատնացույց է անում գործողությունը՝ առանց այդ գործողության անունը տալու, այսպես դերանունը մատնացույց է անում գործողության կատարման ձևը, սակայն չի տալիս անունը։ Եվ քանի որ անունը չի տալիս, այդ պատճառով էլ դերանունն ունենում է իրադրական

---

[29] Թյուրիմացություն է կարծել, թե գոյականը ցույց է տալիս առարկա, ինչպես շարադրվում է դասագրքերում, ուսումնական ձեռնարկներում և գիտական աշխատություններում։ Նույնպիսի թյուրիմացություն գոյություն ունի մյուս նյութական խոսքի մասերի սահմանումների մեջ։ Այս խոսքի մասերը ցույց չեն տալիս, այլ միայն ու միայն անվանում են։

և ծայր աստիճան ընդհանուր նշանակություն։ Սա կարող է նշանակել աշխարհում գոյություն ունեցող, նույնիսկ գոյություն չունեցող, բայց մտածված ամեն ինչ, ամեն առարկա, իր, անձ, երևույթ, հասկացություն։ Այսպիսի կարող է նշանակել առարկայի որակական ամեն մի հատկանիշ։ Այսքան կարող է նշանակել առարկայի ցանկացած թիվ և այլն։ Ահա դերանվան այս առանձնահատկությամբ էլ պայմանավորված է նրա իրադրական բնույթը խոսքի մեջ։ Այսպես, օրինակ, սա դերանունը՝ իբրև գոյականի դերանվանական գաղափար, եթե լեզվում կարող է ունենալ ցանկացած գոյականի նշանակություն, ապա յուրաքանչյուր խոսքում, յուրաքանչյուր գործածության մեջ այն կարող է հանդես գալ այդ անթիվ շատ նշանակություններից միայն մեկն ու մեկով։ Սա է պատճառը, որ դերանունը թեև ընդամենը մի քանի բառ է, սակայն փոխարինում է նյութական իմաստ ունեցող բոլոր բառերին՝ նշանակելով նրանց արտահայտած բոլոր գաղափարները, որ լեզուներում հասնում են հարյուր հազարների։ Ավելին, դերանունների միջոցով կարողանում ենք արտահայտել նաև այնպիսի գաղափարներ, որոնց համար մայրենի լեզուն հատուկ բառեր չի ստեղծել։

Իր իմաստի այս առանձնահատկությամբ դերանունը կարող է ստանալ ոճական մեծ լիցքավորում։ Որ դա այդպես է, ցույց տանք մի օրինակով։ Հ. Հակոբյանը «Մեռան-չկորան» բանաստեղծության մեջ գրում է.

Ինչպիսի՜ հերոս ընկերներ մեռան—
Մեռան-չկորան։

Այստեղ եթե ասվեր՝ ինչպիսի, այսինքն՝ տրվեր հատկանշի անունը, ապա իմաստը կնեղանար, այնինչ ինչպիսի դերանունը այս ճարտասանական բացականչության մեջ հնարավորություն է տալիս պատկերացնելու ամենավեսը, ամենաբարձրը, ամենագերազանցը։

Համապատասխան այն բանի, թե ինչ խոսքի մասի իմաստ ունի դերանունը, դրսևորում է տվյալ խոսքի մասի քերականական առանձնահատկությունները, այդ պատճառով էլ գոյականի իմաստ ունեցող դերանունները հոլովվում են, բայի իմաստ ունեցող ինչ անել, ինչ լինել և բան անել դերանունները՝ խոնարհվում, իսկ ածականի, թվականի և մակբայի իմաստ ունեցող դերանունները քերականական փոփոխության չեն ենթարկվում։

Գոյականի իմաստ ունեցող դերանուններից անձ ցույց տը-վողները գերապատիվ են գոյականի նկատմամբ։ Ես, մենք, դու, դուք, նա, նրանք, ինքս, ինքներս, ինքդ, ինքներդ, ինքը, իրենք, ով, ովքեր դերանունները նախադասության մեջ ուղղա-կան հոլովով հանդես գալիս դառնում են ենթակա, իսկ ուղղա-կանով հանդես եկող գոյականներն ու գոյականաբար առնված մյուս բառերը՝ ստորոգելիական վերադիր։ Այսպես, հետևյալ օրինակներում

Ուսուցիչը ես եմ	Հանձնողը ես եմ
Ուսուցիչը դու ես	Հանձնողը դու ես
Ուսուցիչը նա է	Հանձնողը նա է
Ուսուցիչը մենք ենք	Հանձնողը մենք ենք
Ուսուցիչը դուք եք	Հանձնողը դուք եք
Ուսուցիչը նրանք են	Հանձնողը նրանք են

ընդգծված բառերը բայի դեմքի և թվի հետ ոչ մի կապ չունեն, քանի որ ստորոգելիական վերադիր են (ստորոգելի), իսկ ես, դու, նա, մենք, դուք, նրանք դերանունները՝ ենթականեր։

Հոլովվելով՝ գոյականի իմաստ ունեցող դերանունները հան-դես են բերում զուգահեռ՝ գրական և ժողովրդական ձևեր, որոնց ընտրությունը խոսքի մեջ դառնում է ոճավորման միջոց։ Հո-լովական զուգահեռ ձևեր են ունենում ես, մենք, դու, դուք անձ-նական դերանունները բացառական, գործիական և ներգոյական հոլովներում (ինձնից||ինձանից, ինձնով||ինձանով, ինձնում||ին-ձանում, քեզնից||քեզանից, ձեզնից||ձեզանից, ձեզնում||ձե-զանում և այլն)։ Ինքը դերանվան սեռական հոլովը լի-նում է իր, որի փոխարեն բարձր ոճերում գործածվում է յուր։ Գոյականի իմաստ ունեցող դերանուններից միմյանց և մեկմեկու գրական են, իսկ սրանց համարժեք իրար և իրարու ձևերը՝ ժողովրդական։ Ժողովրդական է նաև ինքն դերանվան սեռական հոլովի իրեն ձևը, որ հոդ առնելու պատճառով նման-վում է տրականին։ Այս ձևին հաճախ է դիմում Հ. Թումանյանը՝ ժողովրդական ոճ ստեղծելու նպատակով, ինչպես՝

Ուր ահեղ կովով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ...

Կամ՝

Նայի շահին, իրեն զորքին,
Աշխարհի տերն անսահման...

Անձ ցույց տվող դերանուններից խոսքում շատ ավելի ակտիվ դեր ունեն առաջին և երկրորդ դեմքերի դերանունները, այդ այն պատճառով, որ գոյականները ենթակա կամ խնդիր դառնում են երրորդ դեմքով և միայն հազվադեպ են առաջին կամ երկրորդ դեմքերով այդ շարահյուսական գործառույթներով հանդես գալիս (ինչպես՝ ուսանողներս այդ լավ ենք հասկանում. պաշտոնյաներդ խորհե՞լ եք այդ մասին. նոր հասարակարգը կառուցողներիդ հիմնավոր գիտելիքներ են պետք), մի բան, որը գրքային ոճ է ստեղծում։

Գրական լեզվում քաղաքավարական ձև է խոսակցին, եթե նա տարիքով, դիրքով, պաշտոնով ավագ է, դիմել դուք-ով, այսինքն՝ եզակի խոսակցին դիմել Դուք, Ձեր, Ձեզնից և այլ ձևերով։ Ընդհակառակն, ժողովրդի հետամնաց խավերում խոսողն իր մասին է հոգնակի արտահայտվում, այնինչ դիմացինին դիմում եզակի։ Այս երևույթը չի վրիպել մեր լավ գրողների հայացքից, և այն արձանագրված ենք տեսնում որոշ գեղարվեստական ստեղծագործություններում՝ իբրև ոճավորման միջոց։ Ահա օրինակներ.

Բարի օր ֆեզ, այ խանութպան,
Մեղր չունե՞ս, մի քիչ տաս մեզ։ (Հ. Թումանյան)

Այսպես է իր մասին խոսում նաև Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի գործող անձերից մեկը՝ Վարդանը։

ՌՈԶԱԼԻԱ.— Դու դեռ այստե՞ղ ես։

ՎԱՐԴԱՆ.— Հրամանիդ ամ սպասում։ Ալ պյան չե՞ս ասիլու։

ՌՈԶԱԼԻԱ.— «Չես ասիլու»։ «Չես»-ը ո՞րն է, ես քո՞ւյրդ եմ, թե ընկերդ։

ՎԱՐԴԱՆ.— Ա բալամ, դե մենք չորան մարդ անք, հի՞նչ իմանանք։

ՌՈԶԱԼԻԱ.— Հիմա էլ «մենք»։ Այդ ի՞նչ տեսակի մարդիկ են, արքայական եղանակով են խոսում։ Ուրիշներին «դու», իսկ իրենց մասին «մենք»։

Եվ իսկապես, թագավորներն են իրենց մասին հոգնակի արտահայտվել, անգլիացիներն էլ ընդհանրապես դու եզակի դերանունը չեն գործածում, իսկ մենք՝ հայերս ընդհանրապես դու-ով ենք խոսում, եթե մտերմիկ, հարազատ, ոչ պաշտոնական միջավայրում ենք, մանավանդ եթե հավասարի կամ տարիքով ու դիրքով փոքրի հետ ենք խոսում։

Գրական բարձր ոճում էլ խոսողն իր մասին հոգնակի է ար-

տահայտվում, երբ դիմելով ճարտասանական կեղծիքի՝ «համեստաբար» չի ուզում իր ասը շեշտած լինել։ Այս «համեստության» մենք-ը հատկապես գիտական խոսքում, ինչպես և բանավեճում է գործառվում (մենք այս տեսակետն ընդունել չենք կարող)։ Վիրավորանք կամ արհամարհանք ենք արտահայտած լինում, երբ դիրքով կամ տարիքով ավագին, հատկապես օտար մարդուն, մանավանդ պաշտոնական կամ բարձր միջավայրում, դիմում ենք դու-ով։

Անձնական դերանունները սովորաբար ուղղականով, բայց նաև թեք հոլովներով, հատկապես կրկնվելիս, կարող են ստանալ բացառիկության նշանակություն։ Այս դեպքում դերանունը հատուկ ընդգծած հնչերանգով է արտասանվում, ինչպես տեսնում ենք հետևյալ հատվածներում.

— Է՛յ, խելքդ որտե՞ղ ա, տիրացու, ես քեզ ի՛մ հընկերը չինեցի, ի՛մ, ինձ չե՞ս հավանում։ (Պ. Պողոշյան)

Ածականի իմաստ ունեցող դերանուններից մի քանիսը միայն գրական լեզվում են գործածվում, ինչպես՝ նույն, նույնպիսի, նույնքան, նույնչափ, սույն, որպիսի, ինչչափ, համայն, ամենայն, ոմն, մի քանիսն էլ ունեն գրական և ժողովրդական զուգահեռ ձևեր։ Դրանք են՝

այս—էս	այսպիսի—էսպիսի	այսքան—էսքան	այսչափ—(էսչափ)
այդ—էդ	այդպիսի—էդպիսի	այդքան—էդքան	այդչափ—(էդչափ)
այն—էն	այնպիսի—էնպիսի	այնքան—էնքան	այնչափ—(էնչափ)

Սայաթ-Նովան գործածում է հենչափ ձևը։

Գրական ձևերի փոխարեն ժողովրդական ձևերի գործածությունը գեղարվեստական խոսքում, մի բան, որ հաճախ ենք տեսնում Հ. Թումանյանի ստեղծագործություններում, խոսքը դարձնում է հասարակ, անմիջական, ոչ պաշտոնական։ Այս է պատճառը, որ մեր ժողովուրդը առտնին խոսքում, առօրյա կյանքում ու կենցաղում գերադասում է գործածել ժողովրդական ձևերը։

Նույն բանը պետք է ասենք թվականի իմաստ ունեցող էսքան, էդքան, էնքան, մակբայի իմաստ ունեցող էսպես, էդպես, էնպես, էստեղ, էդտեղ, էնտեղ դերանունների մասին։ Սրանց հակառակ նույնպես, նույնտեղ, նույնչափ, երբևէ, երբևիցե, ինչևէ, ինչևիցե մակբայի իմաստ ունեցող դերանունները միայն գրական լեզվում են գործածվում։

Մերանունների մի առանձին խումբ են կազմում ստացական-ները, որ առավել խոսակցականում են գործածվում (իմը, ինը նրանը, իմոնի, ինոնի, մերոնի, ձերոնի և այլն)։

ԿԱՊԸ ԽՈՍՔՈՒՄ

Կապը երկբնույթ խոսքի մաս է։ Նախ՝ երկբնույթ է այն առումով, որ հակառակ նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերի՝ առանձին, ինքնուրույնաբար նախադասության անդամ չի դառնում, սակայն գոյականի, ածականի, բայի և մակբայի նման կարող է լրացում առնել։ Այնուհետև, երկբնույթ է այն առումով, որ եթե կապերի մի մասը քերականական փոփոխությունների չի ենթարկվում, ապա մի մասն էլ գոյականի պես հոլովվում է։

Կապերը միջոց են լրացումը իր լրացյալին քերականորեն կապելու համար։ Օբյեկտիվ աշխարհի իրերն ու երևույթները միմյանց նկատմամբ կարող են ունենալ բազմազան կարգի հարաբերություններ, որոնց մի մասը միայն կարող է արտահայտվել 7 հոլովով, որքանով էլ որ այդ հոլովներից յուրաքանչյուրն ունենա մի շարք նշանակություններ։ Այսպես, օրինակ, եթե հավը նստեց թառի վրա իմաստը կարելի է արտահայտել նաև հավը նստեց թառին հոլովական զուգահեռ ձևով, եթե թղթապանակը գտնվում է պահարանի մեջ միտքը կարելի է արտահայտել թղթապանակը գտնվում է պահարանում հոլովական ձևով, ապա անհնար է մենք կռվեցինք ֆաշիզմի դեմ նախադասության միտքն արտահայտել առանց դեմ, ընդդեմ կապերի, նույն ձևով՝ տոնի առթիվ հանդես կազմակերպվեց նախադասության միտքն անհնար է արտահայտել տոն գոյականի որևէ հոլովաձևով՝ առանց կապի օգնությանը դիմելու։ Յոթ հոլովների քերականական իմաստները բավական չեն արտահայտելու համար այն բազմազան հարաբերությունները, որ կան մեր գիտակցության մեջ՝ իբրև արտաքին աշխարհի իրերի ու երևույթների միջև գոյություն ունեցող հարաբերությունների արտացոլում։

Մեր բերած՝ կապով և դրան համազոր հոլովական համադրական զուգահեռ ձևերը վերաբերում են միայն մեկ-երկու կապերի. ընդհանրապես կապով կապակցություններն արտահայտում են հոլովական այնպիսի իմաստներ, որոնք չունեն պարզ հոլովական ձևերը։ Ճիշտ է՝ կապը քանակով աղքատ խոսքի մաս

է (շուրջ 100 կապ ունենք), սակայն դրանք հոլովական ձևերի բազմիմաստությունների հետ մեկտեղ լիովին բավարարում են առարկաների միջև գոյություն ունեցող բոլոր հարաբերություններն արտահայտելու համար, մանավանդ որ կապերի շուրջ 15 տոկոսը հոլովվում է և տարբեր հոլովական ձևերով ավելացնում նրանց ցույց տված հարաբերությունների քանակը։

Ծագումնաբանորեն մենք կապերը երկու խմբի ենք բաժանում՝ գոյականներից ծագած և ծագումով ոչ գոյականներ։ Գոյականից ծագած կապերը ևս իրենց հերթին երկու ենթախմբերի ենք բաժանում.

Ա. Կապեր, որ հոլովվում են։ Դրանք են՝ մեջ, վրա, տակ, մոտ, առաջ, առջև, դիմաց, դեմ, կողմ, կողմ, ներքև, վերև, հետև, ետև:

Բ. Կապեր, որոնք չեն հոլովվում, բայց ծագել են գոյականի այս կամ այն հոլովաձևից։ Այսպիսի կապեր են.

Տրական հոլովից.— միասին, միջոցին, պահին, հասցեին, օգտին:

Հայցական հոլովից.— հանդերձ, հանձին, հանձինս, հանուն, հօգուտ, համար, հետ, պես, տեղ, ժամանակ, ի հեռուկս, ի դեմս, դուրս, շուրջը, մով, չափ, ժամանակ:

Բացառական հոլովից.— ժամանակից, ձեռքից:

Գործիական հոլովից.— առթիվ, շնորհիվ, հետևանքով, նպատակով, պատճառով, գծով, ձեռքով, հիմամբ, կապակցությամբ, հիմունքով, միջոցով, նկատմամբ, վերաբերմամբ, ուղղությամբ, նայելով, չնայելով:

Ներգոյական հոլովից.— գործում, դեպքում, ընթացքում:

Գոյականներից չծագած կապերը կամ բուն կապեր են կամ ծագում են ածականներից, մակբայներից, բայերից, նաև դերանուններից։ Այսպիսի կապեր են՝ ի, ց, առ, առանց, ըստ, զերդ, բացի, դեպի, իբրև, մինչև, մինչ, անկախ, հակառակ, համապատասխան, հետո, ներքո, համընթաց, զուգընթաց, համաձայն, համեմատ, մոտիկ, նման, ընդդեմ, հանդեպ, փոխանակ-փոխարեն, որպես, ինչպես, նախքան, քան, քանց, միջև, առընթեր, ընդառաջ, կից, հավասար, հեռու, նայած, չնայած, անց, անցած, զատ, վերաբերյալ, ի վեր:

Ոճական լիցքավորման տեսակետից կապերը մեծ ակտիվություն հանդես բերել չեն կարող, քանի որ նախադասության մեջ ինքնուրույն անդամ չեն դառնում։ Դրանք կարող են միայն խմբավորվել ըստ գործառության ոլորտների։ Ըստ այսմ կապերը կարելի է բաժանել երեք ոլորտի՝ հասարակ, գրական և վերամբարձ։

Հասարակ *են հետևյալ կապերը՝* մեջ, վրա, տակ, մոտ, հետ, հետո, մասին, համար, պես, տեղ, տեղյակ, ֆով, ֆանց, առաջ, դիմաց, դեմ, կողմ, կողմ, ներքև, վերև, հետև, ժամանակ, դուրս, ժամանակից, չափ, հակառակ, նման, ֆան, հավասար, հեռու, առանց, բացի, դեպի, մինչև, անկախ, մոտիկ, նայած, նայելով, անցած: *Այսպիսի կապերը գործածվում են հասարակ ոճի խոսքում, առտնին զրույցում, մտերմիկ միջավայրում և խոսքին տալիս են անմիջականություն, ժողովրդականության երանգ։*

Գրական *նորմային են համապատասխանում հետևյալ կապերը՝* միջոցին, պահին, հասցեին, օգտին, շուրջը, հետև, առջև, հետևանքով, նպատակով, պատճառով, գծով, ձեռքով, կապակցությամբ, հիմունքով, միջոցով, նկատմամբ, վերաբերմամբ, ուղղությամբ, գործում, դեպքում, ընթացքում, իբրև, մինչ, համապատասխան, համընթաց, զուգընթաց, համաձայն, համեմատ, հանդեպ, փոխանակ, փոխարեն, որպես, ինչպես, նախքան, միջև, առընթեր, ընդառաջ, կից, չնայած, չնայելով, զուտ, վերաբերյալ, առթիվ, շնորհիվ, ըստ, ի վնաս:

Վերամբարձ *են հետևյալ կապերը՝* հանդերձ, հանձին, հանձինս, հանուն, հօգուտ, ի հեռուկս, ի դեմս, ի շահ, հիմամբ, ի, ց, առ, ի վեր, զերդ, ներքո, ընդդեմ, հանգույն:

Արդեն վերն ասվել է, որ մեկ-երկու կապեր կապակցության մեջ լրացմանը տալիս են այնպիսի իմաստ, ինչպիսին կարող է արտահայտվել նաև հոլովական պարզ ձևով։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում անել մի երկու դիտողություններ ևս։

Մի երկու կապեր զուգահեռներ են հանդես բերում իրենց հոլովական տարբեր ձևերով։ Այսպես, օրինակ, եթե մեջ *կապը զուգահեռ է պարզ հոլովական ձևերի հետ* (դաշտից||դաշտի միջից, դաշտով||դաշտի միջով, դաշտում||դաշտի մեջ), *ապա* վրա *կապը իր լրացումով զուգահեռներ է կազմում ոչ միայն պարզ հոլովական ձևերի հետ* (մարգագետնին||մարգագետնի վրա, մարգագետնից||մարգագետնի վրայից, մարգագետնով||մարգագետ-

նի վրայով), *այլև զուգահեռներ կարող է կազմել մի այլ հոլովական կապակցության հետ, ինչպես՝* ուսի վրայից *և* ուսի վրայով (Նետված քարն անցավ ուսի վրայով *և* ուսի վրայից): *Նույն ձևով՝* տակ *կապը կարող է զուգահեռներ կազմել.՝ ինչպես՝ անցավ* կամրջի տակից *և* կամրջի տակով, *անցավ* ձիու առջևից *և* ձիու առջևով, ձիու կողմից *և* կողմով, մոտից *և* մոտով *և այլն։ Ինչպես դժվար չէ նկատել, բացառական ձևերում կապերն ավելի ժողովրդական ոճ են ստեղծում, իսկ նույն իմաստով գործականները՝ գրական լեզվի նորման են կազմում։*

2. Որոշ կապեր հանդես են բերում բազմիմաստություն. Այսպես, համար *կապը որոշ բայերի ուղեկցությամբ նշանակում է նպատակ։ Օրինակ.* եկել եմ ջրի, եկել եմ ջրի համար, գնացի սովորելու, գնացի սովորելու համար: *Որոշ բայերի ուղեկցությամբ էլ այս կապով կառույցը կարող է ցույց տալ շահի գաղափար։ Օրինակ՝* քաղաքից ինչ ես բերել ինձ համար: Վրա *կապը ցույց է տալիս տեղ* (նկարը կախված է պատին||պատի վրա, ժ:ղիտ էր խաղում նրա դեմքին||դեմքի վրա, արծիվն իջավ քարին||քարի վրա), *բայց այն կարող է նշանակել նաև հանգում, ինչպես՝* սիրահարված եմ այս աղջկա վրա *(ժողովրդական ձև),* ձեր ուշադրությունը հրավիրում եմ այս խնդրի վրա, *վերաբերություն* (այս հարցի վրա շատ եմ մտածել), *նպատակ, օրինակ՝* այս խնդիրը լուծելու վրա ինչքա՜ն ժամանակ եմ կորցրել *և այլն։*

3. Կապերի մի մասը կազմում է համանիշների զույգեր։ Այսպես, համանիշներ կարող են դառնալ հետևյալ զույգերը՝ հանուն||համար, միասին||հանդերձ, համար||նպատակով, տեղ||տեղակ, բացի||զատ, անց||անցած, դեմ||ընդդեմ, մինչև||նախքան, ըստ||համապատասխան, ի շահ||հօգուտ, նման||պես||հանգույն, քան||քանց, մինչ||մինչև, համաձայն||համապատասխան, ժամանակ||պահին:

Պետք է ասել, որ կապերի կառույցները պարզ հոլովական և բառի քերականական ձևերի համեմատությամբ արտահայտում են ավելի կոնկրետ նշանակություն, այնինչ նրան հակադրվող ձևերը մեծ մասամբ լինում են բազմիմաստ կամ բազմանշանակ։ Այսպես է, օրինակ, ապակատար դերբայը, որը ժամանակային ընդհանուր իմաստ է արտահայտում, իսկ սրան զուգահեռ կապային կապակցությունն օժտված է ժամանակային կոնկրետ իմաստով։ Խոսելիս բառաձևը չմասնավորված ժամանակա-

յին իմաստ է արտահայտում, այն կարող ենք արտահայտել խոսելու պահին, խոսելու ժամանակ, խոսելու ընթացքում կապային հոմանիշ կառույցներով, որոնցից առաջինը և մյուս երկուսը նուրբ իմաստային տարբերություններ ունեն միմյանցից։

Յուրահատուկ կրկնապատկությամբ կապերը մասնակից են դառնում բազմալծություն—ճարտասանական ձևի կազմությանը (այս մասին տե՛ս սույն աշխատության երկրորդ գրքում)։

Կապերը կարևոր տեղ ու դեր ունեն պարբերավոր խոսքում. դրանք հաճախ են հանդես գալիս պարբերությունների կազմում՝ իբրև անդամների և հատվածների կրկնվող բաղադրիչներ։

ՇԱՂԿԱՊԸ ԽՈՍՔՈՒՄ

Շաղկապները չնայած իրենց փոքր քանակին (մի քանի տասնյակ բառ), շատ կարևոր դեր ունեն և՛ նախադասության և՛ խոսքի մեջ։ Ժամանակակից լեզվաբանությունը շաղկապ է համարում բառերի այն խումբը, որոնք կոչված են բարդ նախախասության կազմիչները և պարզ նախադասության համազոր անդամները միմյանց քերականորեն կապելու, բառերի ու նախադասությունների կապակցման խնդրին։ Շաղկապների բառային իմաստները համարելով քերականական իմաստներ, լեզվաբանները շաղկապները կապերի հետ միասին առանձնացնում են իբրև քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի խումբ։ Պետք է ասել, որ նախադասության և խոսքի մեջ շաղկապների դերի մասին ժամանակակից լեզվաբանությունն ունի թյուր ըմբռնում։ Այս թյուրըմբռնման հիմքը լայն տարածում գտած այն պատկերացումն է, համաձայն որի իբրև թե նախադասությունը սոսկ քերականական-շարահյուսական կառուցվածք է, իսկ նախադասության մեջ բառերի բոլոր տեսակի առնչությունններն ու հարաբերությունները քերականական հարաբերություններ են։ Այնինչ ինչպես խոսքը, այնպես էլ նախադասությունը կառուցվածքային առումով բարձրանում է երկու կարգի հարաբերությունների հիմքի վրա՝ քերականական և տրամաբանական։ Հետևաբար նախադասության մասին մեր պատկերացումը թերի կլինի այնքան ժամանակ, քանի դեռ նախադասությունը կդիտվի իբրև սոսկ քերականական միավորում։ Մինչդեռ լեզուն ստեղծել է ինչպես քերականական, այնպես էլ տրամաբանական կապի նաև բառային արտահայտման միջոց-

ներ նախադասությունը և խոսքը ձևավորելու համար, և սրանցից մեկի՝ տրամաբանական կապի անտեսումը անպայման աղավաղում է մեր պատկերացումը ինչպես նախադասության ու խոսքի կառուցվածքների, այնպես էլ մասամբ խոսքի մասերի, տվյալ դեպքում շաղկապների, էության մասին։

Շաղկապներն այն բառերն են, որոնց միջոցով տրամաբանական զանազան կարգի առնչություններ և հարաբերություններ են արտահայտվում, որ գոյություն ունեն ինչպես նախադասության կազմում բառ-հասկացությունների, բարդ նախադասության մեջ նրա կազմիչներով արտահայտված մտքերի, այնպես էլ խոսքի մեջ անկախ նախադասություններով արտահայտված մտքերի միջև։

Ինչպես խոսքում քերականորեն անկախ նախադասությունների, այնպես էլ պարզ ու բարդ նախադասությունների մեջ նրանց անդամների ու կազմիչների տրամաբանական առնչությունները կարող են արտահայտվել նաև առանց հատուկ բառերի՝ առանց շաղկապների ու հարաբերական բառերի։ Այսպես, օրինակ՝

ա. Խոսքի մեջ՝ անկախ նախադասություններում.

Դիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա։ Ամեն ինչ ընկղմվել էր խավարի մեջ։ (Դ. Դեմիրճյան)

բ. Պարզ նախադասության մեջ.

Ոչխարների անուշ բառանչը, արջառների ուրախ ձայնարկությունը կենդանացնում էին խոտավետ հովիտները խիստ ախորժելի աղմուկով։ (Բաֆֆի)

գ. Բարդ համադասական նախադասության մեջ.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ։ (Հ. Շիրազ)

դ. Բարդ ստորադասական նախադասության մեջ.

Կյանքում մի բան լավ հասկացա,

Մահվան ահը ծանր է մահից։ (Հ. Սահյան)

Այս օրինակներից առաջինում երկրորդ միտքը կապված է առաջինին։ Այդ կապը տրամաբանական է։ Երկրորդ միտքը հարաբերում է առաջինին կամ իբրև նրանից բխած հետևանք (որի հետևանքով ամեն ինչ ընկղմվել էր...) և կամ իբրև հավելում (խոժոռվել էր և ընկղմվել էր...)։ Երկրորդ օրինակում բառանչը և ձայնարկությունը ենթակաները թվարկման հարաբերությամբ են կապված միմյանց, որը նույնպես տրամաբանական հարա-

բերություն է (բառանշը և (ու) ձայնարկությունը...)։ Երրորդ օրինակում բարդ նախադասության կազմիչներով արտահայտված մտքերը ներհակ են (մենք խաղաղ էինք, բայց (իսկ) դուք խուժեցիք...)։ Չորրորդ օրինակում մահվան ահը ծանր է մահից միտքը հարաբերում է առաջինի մի բան հասկացությանը իբրև նրա բովանդակություն, իբրև քերականական շրջասություն (հասկացա մի բան, որ մահվան ահը ծանր է մահից)։ Սակայն միշտ չէ հնարավոր անհրաժեշտ տրամաբանական առնչություններն արտահայտել հստակ ու որոշակի, իսկ երբեմն էլ դրանք անհնար է արտահայտել առանց հատուկ բառերի օգնության։ Շաղկապներն այն բառերն են, որոնք ոչ միայն որոշակի են դարձնում նախադասության անդամների և նախադասությամբ արտահայտված մտքերի տրամաբանական կապերն ու առնչությունները, այլև ձևավորում են նախադասությունները տրամաբանական զանազան հարաբերություններ ու առնչություններ արտահայտելու համար։

Ավանդական քերականությունը շաղկապները բաժանում է երկու խմբի՝ համադասական և ստորադասական։ Համադասական շաղկապները (և, ու, էլ, ևս, նաև, այլև, թե, ինչպես և, ինչպես նաև, ոչ միայն... այլև, ոչ միմիայն... այլ նաև, իսկ, բայց, սակայն, այլ, մինչդեռ, միայն, միայն թե, այնինչ, ապա, և սակայն, բայց և այնպես, այնուամենայնիվ, թե չէ, եթե ոչ, ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե, եթե... ապա, ոչ թե... այլ, կամ, կամ թե, կամ թե չէ, և կամ և այլն) պարզ նախադասության կազմում հանդես գալիս արտահայտում են համազոր անդամների միջև եղած տրամաբանական հարաբերություններ, իսկ բարդ համադասական նախադասություններում՝ համազոր մտքերի տրամաբանական առնչություններ։

Ստորադասական շաղկապները (որ, ինչ, եթե, թե, թե որ, միայն թե, եթե, քանի դեռ, նայած, նայած թե, որովհետև, քանի որ, մինչ, մինչև, նախքան, քանի, քանի դեռ, քանի որ, մինչև որ, հենց, հենց որ, թե չէ, երբ որ, թեև, թեկուզ, թեկուզ և, թեպետ, թեպետ և, չնայած, չնայած որ, փոխանակ, զի, որպեսզի, ոնց որ, ինչպես որ, որպես թե, ինչպես որ և այլն) ծառայում են երկրորդական նախադասությամբ արտահայտված մտքի և գլխավորի կամ գերադասի որևէ գաղափարի միջև եղած հարաբերության արտահայտմանն ու պարզաբանմանը։

Չնայած որ շաղկապները նյութական իմաստից զուրկ են,

այնուամենայնիվ ոճական լիցքավորումից միանգամայն զուրկ չեն։ Ըստ գործածության ոլորտների դրանք կարող են լինել հասարակ կամ ժողովրդական, գրական և վերամբարձ։ Ժողովրդական են համադասականներից, օրինակ, ու, էլ, թե, բայց, թե չէ, կամ, կամ թե, կամ թե չէ, ուրեմն, այսինքն, իսկ ստորադասականներից որ, ինչ, թե որ, մանի, մինչև, մինչև որ, հենց, հենց որ, թէ չէ, երբ որ, թեկուզ, չնայած, ասես, ասես թե, ոնց որ, մանի թե շաղկապները, որոնք գործածվում են հասարակ ոճերում, հետևաբար և խոսքի մեջ հաճախ գործածվելիս հասարակ ոճ են ստեղծում։ Հասարակ ոճի շաղկապներին հակադրվում են վերամբարձ շաղկապները, որոնք շատ քիչ են (մինչդեռ, և սակայն, զի, մանզի)։ Այս երկու շերտերին էլ հակադրվում են միջին մակարդակի (գրական) շաղկապները՝ և, ևս, նաև, այլև, այլ ոչ թե, սակայն, այլ, եթե... ապա, ոչ թե... այլ, միայն թե, այնինչ, այնուամենայնիվ, բայց և այնպես, և ոչ թե, այլ ոչ թե, և կամ, այն է և այլն (համադասական), եթե միայն, մանի դեռ, որովհետև, մանավանդ որ, նամանավանդ որ, նախման, թեև, թեպետ, թեպետ և, փոխանակ, որպեսզի, ինչպես որ, որպես թե և այլն (ստորադասական)։

Ցույց տալու համար, թե ինչ դեր կարող է ունենալ խոսքում շաղկապի ինչ ոլորտին պատկանելը, բերենք մի երկու օրինակ։ Հ. Թումանյանը, որպեսզի «Անուշ» պոեմի լեզուն ավելի հարազատ դարձնի ժողովրդական ոգուն, վերամշակելիս բազմաթիվ տեղերում և շաղկապը փոխարինել է ու-ով՝ աշխատելով և գործածել պոեմի միայն այն հատվածներում, որ գրված են բարձր ոճով և հեղինակի մտորումներն ու միջնորդություններն են։ Եթե «Անուշի» 1892 թ. հրատարակության մեջ, ինչպես ասվել է, եղել է 35 ու և 110 և, ապա վերջին տարբերակում ու-երի քանակի աճել և դարձել է 117, իսկ և-ինը նվազել է և դարձել 15։ Եթե Ե. Չարենցն իր «Մաճկալ Սաքոյի պատմության» մեջ, որ գրված է ժողովրդական լեզվով, գործածել է 63 ու շաղկապ, և ոչ մի հատ և, ապա Ա. Խաչակյանը «Աբու-Լալա Մահարի» պոեմի միայն նախերգանքում մեկ ու-ի դիմաց գործածել է 11 և։

Չխոսելով բոլոր շաղկապների ոճական լիցքավորումների մասին, բավականանանք միայն դրանցից մի երկուսի ոճական արժեքները ներկայացնելով։

Եվ ու թե շաղկապները պարզ, միավորյալ և բարդ համադա-

սական նախադասություններում կրկնվելու դեպքում ստանում են շեշտ և առաջ բերում բազմալծության ճարտասանական ձև[30]։ Ահա մեկական օրինակներ.

Ե՛վ կվանեմ, և՛ կհաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս։
(Ա. Իսահակյան)

Եվ լավ օրում թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ ճանաչիր։
(Ա. Իսահակյան)

Բազմաշաղկապության դեպքում և-ն ստեղծում է հանդիսավորության պատրանք, խոսքին տալիս լրջության ու կարևորության տոն, ազդարարում նոր մտքի առարկայի գոյությունը (այս մասին տե՛ս բազմաշաղկապություն վերնագրի տակ)։

Որ շաղկապի միջոցով ստեղծվում է համաստիճանության ճարտասանական ձև, որով խոսքին տրվում է աշխուժություն, ստեղծվում հետաքրքրություն ասելիքի նկատմամբ։ Օրինակ՝

Նա կրակեց, ես զարկեցի, որ զարկեցի, փռվեց էսպես՝ ամեն թևը հինգ գազ ու կես։ (Հ. Թումանյան)

Գնաց-հասավ ճապաղջուրի դաշտ,
Որ եկավ-հասավ ճապաղջուրի դաշտ...
(Ա. Իսահակյան)

Մի քանի շաղկապներ (որովհետև, հետևաբար, քանի որ, եթե... ապա, այնպես, ինչպես... այնպես էլ) առավել գործածվում են գիտական խոսքում և պաշտոնական գրագրություններում, կազմում են մտահանգումներ, դատողական բնույթի խոսքեր և ծառայում խոսքի նյութին սրություն, գործողություններին լարվածություն հաղորդելու խնդրին։

Շաղկապները նկատելի տեղ ունեն ճարտասանական ձևերի կառուցվածքում։ Դրանց հատուկ կրկնությամբ ձևավորվում է բազմաշաղկապությունը, իսկ բացակայության դեպքում՝ անշաղկապությունը։ Շաղկապների միջոցով ձևավորվում է նաև բազմալծության ձևը։

---

[30] Հայ քերականության մեջ ոչ ժխտական բառ-մասնիկը հանդիպավի համարվում է շաղկապ։ Այս բանում անշուշտ դեր ունի այն հանգամանքը, որ ոչ-ը և, թե շաղկապների նման կազմում է բազմալծության ծարտասանական ձևը, ինչպես և հարադրվելով թե շաղկապին՝ կազմում է ոչ թե շաղկապը։

Բայի եղանակներն արտահայտում են խոսողի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքները գործողության նկատմամբ։ Ինչպես որ գոյականի յոթ հոլովները իրենց բազմազան հոլովական նշանակություններով բավական չեն արտահայտելու առարկաների միջև գոյություն ունեցող և մեր մտածողության մեջ արտացոլվող հարաբերությունները, որի պակասն էլ լրացնելու համար կյանքի են կոչված կապերը, այնպես էլ բայի հինգ եղանակները իրենց եղանակային այլևայլ իմաստներով բավական չեն արտահայտելու խոսողի օբյեկտիվ ու սուբյեկտիվ այն բոլոր վերաբերմունքները, որոնք արտահայտվում են խոսքում։ Ահա այս բացը լրացնում են մի խումբ բառեր, որոնք կոչվում են եղանակավորողներ (նոր անվանմամբ՝ վերաբերականներ)։ Ուրեմն՝ եղանակավորող բառերը խոսողի զանազան, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, վերաբերմունքներն արտահայտող բառեր են և մոտավորապես նույն դերն են կատարում բայի դիմավոր ձևերի համար, ինչ դեր որ կատարում են կապերը գոյականի թեք հոլովաձևերի համար. մեկը եղանակային իմաստ է արտահայտում, նաև այնպիսի եղանակային իմաստ, որ դիմավոր ձևը չի արտահայտում, մյուսը՝ հոլովական իմաստ է արտահայտում, նաև այնպիսին, որ հոլովական համադրական ձևը չի արտահայտում։ Այսպես օրինակ.

Ատում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց և քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ։ (Պուշկին)

Այս նախադասության պիտի տեսնեմ անհրաժեշտական եղանակով բայը արտահայտում է հեղինակի անհրաժեշտական, հարկադրական վերաբերմունքը, գործողության նկատմամբ. այդ վերաբերմունքն ուժեղանում է անպատճառ եղանակավորող բառով. այսինքն՝ առանց եղանակավորող բառի էլ բայն ունի իր ձևի մեջ համապատասխան եղանակավորությունը, սակայն դրան ավելանում է նաև անպատճառ բառի դարձյալ անպայմանականության, անհրաժեշտականության եղանակային նշանակությունը։ Անպատճառ բառը մյուս եղանակային ձևերի հետ էլ գործածվելիս նրանց տալիս է անհրաժեշտական եղանակի նշա-

նակություն. ինչպես՝ անպատճառ գնալու եմ, անպատճառ գնամ, անպատճառ կգնաս:

Վերցնենք ուրիշ օրինակներ.

Պատուհանիս տակ հնչում է կրկին
Թափառիկ երգչի երգը ցավագին,—
Տխուր այդ երգը վաղուց եմ լսել,
Կարծես թե ես եմ այդ երգը հյուսել,
Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,
Կարծես թե քեզ եմ կարոտով երգում...

(Վ. Տերյան)

Այս ոտանավորում հնչում է և լսել եմ սահմանական եղանակի բայերն արտահայտում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը գործողության նկատմամբ, և մենք դրանք ընկալում ենք իբրև իրապես գոյություն ունեցող գործողություններ: Սակայն այստեղ գործածված են նաև սահմանականով արտահայտված հյուսել եմ, լալիս եմ, երգում եմ բայերը, որոնք կարծես թե եղանակվող բառի պատճառով այլևս չեն ըմբռնվում իբրև իրապես կատարվող գործողություններ, եղանակի սահմանականության գաղափարը վերացված է: Կարծես թե-ն բային տալիս է այլ եղանակային իմաստ, և օբյեկտիվության եղանակավորությունից հիշյալ բայերը վերածվել են սուբյեկտիվության եղանակավորության: Սա եղանակային այնպիսի իմաստ է, որ չկա սովորական եղանակային ձևերի իմաստներում:

Պառկած է իբրև Թաթուլ իշխանը
Նազելի կնոջ գլուխն իր կրծքին,
Ու իբր ասում է՝ վեր կաց, իմ հրեշտակ,
Թող որ սպանեմ ես էդ հրեշին: (Հ. Թումանյան)

Այստեղ պառկած է և ասում է սահմանական եղանակի բայերը զրկվել են սահմանականության եղանակային իմաստից իբրև և իբր եղանակավորող բառերի պատճառով և ստացել խոսողի կողմից հնարավոր- ոչ հավանական, ոչ հավաստի, թեական գործողությունների նշանակություններ: Սպանեմ ըղձական եղանակի բայը ևս ունի եղանակավորող բառ՝ թող-ը, որը թեև բայի եղանակային իմաստը չի փոխում, սակայն նրան օժտում է լրացուցիչ (այստեղ կամքի ընդգծում) գաղափարով:

Այս բացատրություններից հետևում է, որ եղանակավորող

բառերը կապվելով բայի դիմավոր ձևերին՝ կա՛մ նրանց տալիս են եղանակային նոր նշանակություններ, մի եղանակային իմաստը փոխում են այլ եղանակային իմաստի, և կա՛մ բայի դիմավոր ձևերի եղանակային իմաստները օժտում են լրացուցիչ գաղափարներով։

Եղանակի գաղափարը հասկացական կարգ է։ Եղանակային միևնույն գաղափարը կարելի է արտահայտել զանազան միջոցներով։ Այսպես, օրինակ, թեականությունը, ոչ հավաստիականությունը կարելի է արտահայտել լեզվական մի շարք միջոցներով։ Նշենք դրանցից մի երկուսը.

ա. Հատուկ բառերի ու կապակցությունների օգնությամբ, ինչպես՝ կարող է եկած լինել, ամենայն հավանականությամբ եկած կլինի, պետք է ենթադրել, որ եկել է, հնարավոր է, որ եկած լինի։

բ. Միաժամանակ հաստատման ու ժխտման միջոցով, ինչպես՝ եկել է, չի եկել։ Ով գիտի՝ հասկացել է, չի հասկացել և այլն։

գ. Հարցական հնչերանգով, ինչպես՝

Ով գիտի՝ պարկում շնալի՞ր չկար,
Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձվաձե՞ղ ուտել,
Թե՞ նշանածին շատ էր կարոտել,
Ոչխարը թողել՝ գնացել է տուն։ (Հ. Թումանյան)

գ. Տրոհական նախադասություններով, ինչպես՝

Կամ հին գերեզման քանդող կլինի,
Կամ թե կհամրի ծմակի ծառերը... (Հ. Թումանյան)

Սակայն ոչ հավաստիականություն, թեականություն է արտահայտում եղանակավորող բառերի մի մասը՝ երևի, թերևս, կարծես, կարծես թե, գուցե, միգուցե, ըստերևույթին, կարծյոք, իբր թե, իբրև թե, ոնց որ թե, արդյոք, չլինի թե, մի՞թե, որոնք գործածվելով բայի դիմավոր ձևերի հետ՝ բայաձևին տալիս են ոչ հավաստիության, թեականության եղանակային իմաստ։ Ընդհակառակը, մի շարք եղանակավորող բառեր էլ, գործածվելով բայի դիմավոր ձևերի հետ՝ նրանց տալիս են հավաստիության եղանակավորություն։ Այսպիսի եղանակավորիչ բառեր են՝ անշուշտ, անկասկած, իհարկե, իսկապես, իրավ, իրոք, արդարև,

հիրավի, բաս, բարեբախտաբար, դժբախտաբար, ցավոք, ցավոք սրտի, ահա, ահավասիկ, հրես, հրեդ, հրեն, համենայն դեպս, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, *որոնք եղանակավորության գաղափարից բացի արտահայտում են նաև խոսողի գնահատանքը գործողության նկատմամբ։ Սրանք իրենց եղանակավորման իմաստի համապատասխան էլ ըղձական և հրամայական եղանակների հետ ընդհանրապես չեն գործածվում։ Ցանկալիության եղանակավորություն են արտահայտում* երանի, երանի թե, երնեկ թե, ահա թե, միայն թե, միայն, գոնե, *զանազան կամային (դժգոհություն, անբավականություն, վճռականություն) վերաբերմունքներ են արտահայտում* թող, դե *կամ* դեհ.

Դե *հեր օրհնած,* էսպես ասա,
էլ բարկանալդ ինչիս ա... (*Հ. Թումանյան*)

Դե ե՛կ վարդապետ ու մի խենթանա... *(Պ. Սևակ),* ապտ, հապա, էլի *(Բայց դու էլ խելոք մի մարդ ես դիտուն, Քո բարի աչքով* տեսնում ես, էլի... *Հ. Թումանյան),* հո *կամ* խոմ *(Եկեք նաև մեզ չզրկենք,— Առանց այն էլ քիչ զրկանքներ* հո չենք *կրել աշխարհում մենք... Պ. Սևակ),* ախր *կամ* ախար (Ախր *ես* ինչպես վեր կենամ գնամ, Ախր, *ես* ինչպես ուրիշ տեղ մնամ, Ախր *ես* ինչպես ապրեմ առանց ինձ... *Հ. Սահյան),* լոկ, գեթ, սոսկ *և մի քանի ուրիշները։*

Վերը ներկայացված բոլոր եղանակավորող բառերը հարում են դիմավոր բային՝ տալով նրան եղանակային այլևայլ նշանակություններ։

Կան մի քանի բառեր էլ, որոնք հարում են անվանական խոսքի մասերին ևս՝ առանց լրացում դառնալու։ Այսպիսի եղանակավորող բառերից են հենց, անգամ, իսկ, գեթ, լոկ *և այլն*[31]*։ Օրինակ.*

---

[31] Ակադեմիկոս Գ. Ջահուկյանն այս բառերը կոչում է **կամաբերական բառ-մասնիկներ** և բաժանում երկու ենթախմբի՝ սաստկական-ընդգծողական **(անգամ, իսկ, մանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ, նամանավանդ, նույնիսկ)** և զիջական-տեսանափակման **(գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն)**: Տե՛ս նրա «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», աշխատությունը (1974 թ., էջ 533):

Թե՛ գող, թե՛ գազան, հենց դատարկ վախից,
Հեռու են փախչում նրա փարախից։
(Հ. Թումանյան)

Դառնամ փառաբանեմ ձորից կաքավ թռցնող
զրնգոցը բահի,
Գերանդու խուլ երգը, որ դժվար է անգամ
նուագրել... *(Պ. Սևակ)*

Ամբողջն անգամ *սիրտ չուներ նրա հոտի շուրջը քարշ գալու։ (Վրթ. Փափազյան)*

Քանակով շուրջ 6 տասնյակի հասնող այս խոսքի մասը նկատելի ոճական լիցքավորում չունի։ Եղանակավորող բառերի մեջ էլ կան ժողովրդական խոսքոլորտին հատուկ բառեր (հենց, իբր բե, ոնց որ բե, իհարկե, հրես, հրեդ, հրեն, բաս, երանի, երանի բե, երնեկ բե, ախ բե, թող, դե *կամ* դեն, էլի, հո *կամ* խո, ախր *և այլն) և գրական ու վերամբարձ ոճին հատուկ բառեր* (թերևս, ըստերևույթին, կարծյոք, արդյոք, մի՞թե, իրավ, արդարև, հիրավի, ցավոք, անավասիկ, համենայն դեպս, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ, յոկ, գեթ, սոսկ *և այլն), որոնք խոսք են բերում համապատասխան ոլորտի ոճը։*

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՄԱՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ

Չայնարկություն.— *Մարդու բանական գործունեությունը, ինչպես ասվել է, ոմանք երկու բնագավառների են բաժանում՝ մտածողություն և զգացմունքներ, ոմանք էլ՝ երեք բնագավառների՝ մտածողություն, հույզեր ու զգացումներ և կամք։ Մտածողությունը, որ կազմում է բանական գործունեության հիմնական բնագավառը, տեղի է ունենում գաղափար նշանակող բառերով՝ նյութական խոսքի մասերով, որոնցով էլ կազմվում են լեզվամտածական նվազագույն միավորները՝ դատողությունները, նախադասությունները։ Այս պատճառով էլ նախադասության անդամ դառնում են միայն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը՝ գոյականը, ածականը, թվականը, բայը, մակբայը և դերանունը։ Այս խոսքի մասերը և նախադասության կազմիչները միմյանց կապելու դեր ունեն կապերն ու շաղկապները, իսկ բայը եղանակավորելու գործառույթամբ են հանդես գալիս*

եղանակավորող բառերը։ Վերջին այս երեք խոսքի մասերը զուրկ են նյութական իմաստից և նախադասության անդամ չեն դառնում։ Վերոհիշյալ բոլոր խոսքի մասերին հակադրվում են ձայնարկությունները, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ մարդու հոգեկան ապրումների, հույզերի ու զգացումների լեզվական, այսինքն՝ բառական արտահայտությունները։ Ի տարբերություն նյութական խոսքի մասերի, որոնք կամ հասկացությունների անվանումներ են կամ ցույց են տալիս հասկացություններ՝ առանց անվանելու դրանք, ի տարբերություն կապի, շաղկապի և եղանակավորող բառերի, որոնք տրամաբանական կամ քերականական հարաբերություններ են արտահայտում, ձայնարկությունները չեն անվանում ոչ հույզը, ոչ զգացմունքը, ոչ ապրումը և ոչ էլ որևէ հարաբերություն են արտահայտում։ Դրանք հենց զգացումների արտահայտություններն են։ Հույզերը, զգացումներն ու ապրումները ամենաբազմազան դրսևորումներ ունեն։ Դրանք ընդհանրապես բաժանվում են դրական և բացասական հույզերի, զգացումների և ապրումների։ Դրական հույզերը և զգացումներն են ուրախությունը (հրճվանք, ցնծություն, ոգևորություն), զմայլանքը (հիացում), գորովանքը, բավականությունը, հպարտությունը (պարծանք, ինքնագոհություն), զարմանքը։ Այսպիսի զգացություններ ու հույզեր են արտահայտում ա՜յ, ջա՜ն, ա՜յ ջան, է՜յ ջան, հե՜յ ջան, ուխա՜յ կամ օխա՜յ, ա՜, ո՜ւ, ո՜յ, օ՜հ, ո՜ւֆ, բա՜ կամ բա՜հ, պա՜ կամ պա՜հ, փիե՜ կամ պիա՜ և այլն։ Բացասական հույզերը, զգացումները և ապրումներն են ցավը (տառապանք, տանջանք), վիշտը (մորմոք, տրխրություն), բարկությունը, ատելությունը, արհամարհանքը, զրկվանքը, վախը (սարսափ), հուսահատությունը, սպառնալիքը, սրտնեղությունը, տհաճությունը, հանդիմանությունը, ափսոսանքը, ցավակցությունը, կարեկցանքը և այլն։ Այսպիսի հույզեր, զգացումներ ու ապրումներ են արտահայտում հետևյալ ձայնարկությունները՝ ի՜, է՜, ը՜, ա՜խ, վա՜, վա՜խ, վա՜յ, վո՜ւյ, վայ-վա՜յ, հայ-հա՜յ, ա՜հ, օ՜ֆ, ու՜ֆ, օ՜յ, ամա՜հ, օ՜հ, է՜հ, ը՜հ, ո՜ւհ, էհե՜, պահո՜, պա՜հ, պահ-պա՜հ, հայ-հա՜յ, վա՜հ, օհո՜, ավա՜ղ, վա՜շ, վաշ-վի՜շ, վուշ-վո՜ւշ, յա՜խկ, թյո՛ւ, փո՛ւհ, ի՜, իա՜ և այլն։

Ձայնարկությունները լինելով հույզերի, զգացումների և ապրումների արտահայտություն՝ խոսքը դարձնում են զգացմունքային, ունկնդրի և ընթերցողի հոգում առաջ բերում համա-

պատասխան ապրումներ ու զգայություններ։ Այս հանգամանքին նպաստում է համապատասխան հնչերանգությունը, որը միշտ անբաժան է ձայնարկությունից։ Ձայնարկությունները գերանունների պես իրադրական խոսքի մաս են, այդ պատճառով էլ բազմիմաստ են, և միևնույն ձայնարկությունը խոսքային տարբեր իրադրություններում, մանավանդ համապատասխան հնչերանգությամբ, տարբեր նշանակություններ կարող է ունենալ։ Այսպես, օրինակ, ա՜յ կարող է դրական հույզ արտահայտել, կարող է և արտահայտել վախի զգայություն (Հալալ է տղին, ա՜յ իգիթություն, Ահա թե ինչպես կփախցնեն աղջիկ։— Հ. Թումանյան և — Ա՛յ, ա՛յ, ա՛յ։ — Ինչ է պատահել։ — Քիչ մնաց մեքենան շուռ գար)։ Վա՜յ կարող է ցավի զգացմունք արտահայտել, կարող է արտահայտել հանդիմանություն (— Վա՛յ, քու մուխը չմարի, Մինաս ջան,— ասաց Մարիսյանը,— այդ ի՞նչ բազմակողմանի ընդունակությունների տեր մարդ ես եղել։ Նար-Դոս) և այլն։ Իհարկե, կարելի է յուրաքանչյուր ձայնարկության մասին որևէ յուրահատկություն նշել, սակայն դա ավելորդ ենք համարում, որովհետև հայերենում ամեն մի բառ ընդհանրապես իր գործածության և իմաստային յուրահատկությունն ունի, սակայն ձայնարկություններից մեկի մասին անհրաժեշտ ենք գտնում անպայման խոսել։ Այդ ջան-ն է, որ հայերենում դրական զգացմունքի արտահայտություն լինելով՝ յուրահատուկ գործածություն ունի։ Գործածելով կոչականի հետ ջան-ով սիրալիրության, քնքշանքի, մտերմիկության վերաբերմունք ենք արտահայտում խոսակցի նկատմամբ, իսկ երբեմն էլ այդ բառի մեջ դնում ենք անչափելի, անկշռելի հույզ ու զգացմունք, ինչպես՝

— Էդ ի՞նչ ես էլել, Գիքոr ջան,— մղկտալով վրա ընկավ Համբոն։ (Հ. Թումանյան)։

Այս բառի արտահայտած զգացմունքայնությունն ավելի է ուժեղանում բացադարձության ճարտասանական ձևում, ինչպես Հ. Թումանյանի «Մարո» և «Անուշ» պոեմներում (Ո՞վ քեզ ծեծեց, Մարn ջան... և այլն)։

Ձայնարկություններն ըստ գործածության ընդհանրապես հասարակ կամ ժողովրդական են և խոսքին տալիս են ժողովրդականության ոգի, խոսքը դարձնում հասարակ։ Գրական են և համեմատաբար բարձր ոճերում են գործածվում շատ քիչ ձայնարկություններ։ Այսպիսին է, օրինակ, ավաղ բառը (հնա-

ցած են **օն, օն անդր,** *որոնք նույնպես բարձր ոճերում են գործածվում՝ իբրև հնաբանություն)։ Լինելով զգացմունքային բառեր, ձայնարկությունները, համարյա տեղ չունեն դատողական խոսքերում (գիտական խոսք, պաշտոնական գրագրություն և այլն)։ Գեղարվեստական խոսքում էլ հանդես են գալիս այնտեղ, ուր անհրաժեշտ է զգացմունքներ ու հույզեր արտահայտել։ Օրինակ.*

Վուշ-վո՜ւշ, Անուշ, վաշ-վո՜ւշ, ջուրիկ,
Վո՜ւշ քո սերին, քու յարին,
Վուշ-վո՜ւշ, Սարո, վուշ-վո՜ւշ, իգիթ,
Վո՜ւշ քու սիրած սարերին... (Հ. Թումանյան)

...էլ ի՞նչ պատահի,— վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը։

— Վա՜հ,— բացականչեց բազազը։ (Հ. Թումանյան)

Կամային բառեր.— *Կամայինները, որ կոչվում են նաև կոչական ձայնարկություններ, կամքի արտահայտություն հանդիսացող բառեր են* (**է՜յ, հե՜յ, էհե՜յ, ա՛յ, տո՛, ո՜վ, քա՜, ադա՛, արա՛, հո՛, չո՛ւ, փի՛շտ, քուշի–քուշի՛**), *որոնք հազիվ են անցնում մեկ տասնյակից, նույնպես ժողովրդական միջավայրին հատուկ բառեր են, գործածվում են առտնին զրույցում, գեղարվեստական գրականության մեջ և տեղ չունեն դատողական բնույթի խոսքերում։*

ԲՆԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ

Ձայնարկություններից և կամային բառերից պետք է առանձնացվեն բնաձայնությունները, որոնք իրենց բնույթով տարբեր են դատողական խոսքի մասերից, նրանց սպասարկող խոսքի մասերից, ինչպես և ձայնարկություններից ու կամային բառերից, այն պատճառով, որ եթե առաջիններով խոսողն իր միտքն է արտահայտում, երկրորդով հույզերն ու զգացումները, իսկ վերջիններով կամքը, ապա բնաձայնությունները բանական գործունեության արտահայտմանը չեն մասնակցում, այդ պատճառով էլ լիարժեք բառեր չեն։ Խոսքի մեջ բնաձայնությունները՝ **վրզզ, վրշշ, թրշշ, բրխկ, չրխկ, կրղղ, դրմբ, դրոռ, հաֆ, միաու** *և այլն, նախադասության կապակցությունից դուրս են և խոսքի*

մեջ էլ մի տեսակ գաղափարի խորհրդանշային (սիմվոլիկ) արժեքով են հանդես գալիս։

2. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ

Շարահյուսական յուրաքանչյուր քերականական կարգ, յուրաքանչյուր իրողություն այս կամ այն չափով մասնակցում է խոսքի ոճի ձևավորմանը, այս կամ այն երանգն է բերում խոսք՝ համապատասխան այն բանի, թե ոճական ինչպիսի լիցքավորում ունի։ Հայերենն ունի հարուստ շարահյուսական համակարգ, և բառերի կապակցությունների օրինաչափությունների ընձեռած հնարավորություններով, նախադասությունների տեսակների ու տիպերի բազմազանությամբ և արտահայտման լայն հնարավորությունների ու միջոցների առատությամբ շարահյուսությունը դառնում է մեր լեզվի հարստության հարահոս ու անսպառ աղբյուր։

Շարահյուսությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մտքի արտահայտման լեզվամտածական կաղապարների մի համակարգ, կաղապարներ, որոնք լեզվում մտածական պարզ ու բարդ կառույցներ են, և սրանց համապատասխան էլ ձևավորվում և արտահայտում են մեր մտքերը, հույզերը և կամքը։

Խոսքի մեջ ձևաբանական կարգերի ունեցած տեղի ու դերի հարցերը քննելիս տեսանք, որ խոսքի մասերից յուրաքանչյուրը կոչված է խոսքի մեջ որոշակի գործառության համար։ Նախ տեսանք, որ դրանց մի մասը՝ գոյականը, ածականը, թվականը, բայը, մակբայը և դերանունը կազմում են կապակցություններ և նախադասություն՝ արտահայտելով միտք, դատողություն, հարցում մտքի ու դատողության մասին։ Կապն ու շաղկապը կապակցում են բառերը և նախադասությունները նախադասության մեջ, եղանակավորող բառերը եղանակավորում են դիմավոր բայերը։ Ձայնարկություններն ու կամային բառերը նախադասության կազմի մեջ չեն մտնում։ Դրանք արտահայտում են խոսողի հույզերն ու զգացումները և կամքը։ Վերջիններս դատողություններ չեն, այդ պատճառով էլ հարցում չունեն։ Սրանք տարբորոշված հասկացություններ չեն, ինչպես որ նյութական խոսքի մասերն են, հասկացություններ չեն անվանում, այդ պատճառով էլ կապակցության մեջ չեն մտնում ոչ մի հասկացության հետ և խոսքում էլ գործածվում են առանձնաբար, իսկ

եթե առանձնաբար չեն գործածված լինում, հնչերանգով ու կետադրությամբ բաժանվում են նախադասությունից։

Ուրեմն՝ հայերենի վեց խոսքի մասերն են միայն, որ նախադասության մեջ առաջ են բերում շարահյուսական կապակցություններ, այսինքն՝ մտնում են շարակարգային հարաբերության մեջ, միմյանց կապվում քերականորեն, կազմում կապակցված անդամների մի շղթա։ Այսպես, օրինակ.

Առանց հոգսերի ու առանց վշտի
Խաղում էինք մենք էն երազ հովտում։
(Հ. Թումանյան)

Այս նախադասության ենթական է մենք, ստորոգյալը՝ խաղում էինք, տեղի պարագան՝ հովտում, սրա որոշիչը՝ էն և երազ, ձևի պարագաները՝ առանց հոգսերի և առանց վշտի, որտեղ առանց կապը հոգսեր և վիշտ գոյականները կապելով խաղում էինք բային՝ դարձրել է ձևի պարագաներ, իսկ ու-ն էլ երկու ձևի պարագաներն է կապել միմյանց։

— Օ՜ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրավ մոծակներից։ (Հ. Թումանյան)

Այստեղ վրդովմունք արտահայտող օ՜ֆ ձայնարկությունը նախադասությունից բաժանված է ստորակետով, նախադասության կազմում չէ, որովհետև իբրև հույզ, զգացմունք արտահայտող բառ չի կապվում նախադասության անդամներին (որևէ հարցի չի պատասխանում)։

Նյութական իմաստ արտահայտող բառերը, որոնք դատողություններ են կազմում և կամ հարցում են արտահայտում, իրենց տարբեր շարահյուսական առանձնահատկությունների շնորհիվ նախադասության մեջ կատարում են որոշակի դեր, հանդես գալիս որոշակի գործառությամբ։

Արդի լեզվաբանությունը շարահյուսության մեջ 3 ենթաբաժին է առանձնացնում՝ բառերի կապակցություններ, պարզ նախադասություն և բարդ նախադասություն։ Այժմ քննենք դրանցից յուրաքանչյուրի ոճական արժեքները։

ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բառերի կապակցություն[32] ասելով այլ բան չենք հասկանում,

[32] Միշտ ենք հավատում այս ենթաբաժինն անվանել ոչ թե բառակապակցություն, ինչպես անվանվում է շարահյուսական աշխատություններում,

քան խոսքի մասերի կապակցելիություն, բառերը շարահյուսորեն միմյանց կապելու կանոններ։ Այդ կանոնները համառոտակի հետևյալներն են.

1. Գոյականն առնում է լրացում։ Գոյականի լրացում է դառնում ածականը (կարմիր *խնձոր*), *թվականը* (առաջին *ձյունը*), *գոյականը* (այգու *ծառերը*), *գոյականի, ածականի և թվականի իմաստ ունեցող դերանունները* (նրա *հայրը*, այսպիսի *կարգ*, քանի *տարի*), *հարակատար, ենթակայական և ապառնի (ապակատար) դերբայները* (ծաղկած *ծառ*, փորող *մեքենա*, խորովելու *միս*)։ *Գոյականը դառնում է նաև բայի լրացում* (դասը *պատրաստելիս*, ծաղիկ *քաղող և այլն*)։

2. Ածականը դառնում է գոյականի լրացում, սակայն ինքն էլ կարող է լրացում առնել, ընդ որում ածականի լրացում դառնում է գոյականը, գոյականի իմաստ ունեցող դերանունը, ածականը և մակբայը (դեպքին *ականատես*, նրանով *հպարտ*, վառ *կարմիր*, չափազանց *գեղեցիկ*)։

Որակական ածականը դառնում է նաև բայի լրացում (լավ *երգել*, գեղեցիկ *խոսել*)։

3. Թվականը դառնում է գոյականի լրացում, իսկ ինքը լրացում չի առնում։

4. Բայն առնում է լրացում։ Բայի լրացում են դառնում մակբայը (բարեկամաբար *խոսեցին*), *որակական ածականը* (հաջող *ավարտվեց*), *գոյականը* (խոտ *հնձելիս*, բարեկամությամբ *հեռանալ*, մկրատով *կտրել և այլն*), *բայը* (անցնելիս *նկատել*), *գոյականի, թվականի և մակբայի իմաստ ունեցող դերանունները* (նրանից *խնդրել*, ինչքան *համբերել*, այնպես *անել*)։

5. Մակբայը դառնում է բայի լրացում, բայց կարող է ինքը ևս լրացվել ածականով, մակբայով և գոյականով ու գոյականի իմաստ ունեցող դերանվամբ (շատ *դանդաղ*, անհերևակայելիորեն *արագ*, ինձնից *թաքուն*, գյուղից *հեռու*)։

6. Դերանուններից նրանք, որոնք ունեն գոյականի, ածականի, թվականի և մակբայի իմաստ, դառնում են գոյականի կամ բայի լրացում։ Դերանունները (չնչին բացառություններով) լրացում չեն առնում։

այլ **բառերի կապակցություններ**, բառակապակցություն տերմինը թողնելով բառերի այն կայուն կապակցություններն անվանելու համար, որոնք պատմության գոյություն ունեն լեզվի մեջ։

Բառերի շարահյուսական կապակցությունները ոչնչով չեն տարբերվում նախադասության անդամների կապակցություններից։ Խոսել անվանական թե բայական կապակցությունների մասին, նույնն է, թե խոսել նախադասության շղթայում այս կամ այն անդամի կապակցության մասին՝ իբրև նախադասության շղթայի օղակ։ Այդ պատճառով էլ անիմաստ համարելով նման վերլուծությունը, մենք անհրաժեշտ ենք գտնում մի երկու դիտողություններ անել միայն բառերի կապակցությունների որոշ առանձնահատուկ կողմերի մասին, որոնք չեն պայմանավորված նախադասության մեջ այս կամ այն անդամը լինելու հանգամանքով։

1. Նախ ասենք, որ բառը մի այլ բառի լրացում կարող է դառնալ ոչ միայն ըստ այն բանի, թե լրացումն ու լրացյալը ինչ խոսքի մասերի են պատկանում, այլև ըստ այն բանի, թե լրացյալն ինչ իմաստային ոլորտի է պատկանում, ինչ բովանդակություն ունի։ Այսպես, օրինակ, թվականը դառնում է գոյականի լրացում, սա օրինաչափություն է, սակայն եթե փորձելու լինենք քննել այս օրինաչափության դրսևորումը, ապա կպարզվի, որ բոլոր թվականները բոլոր գոյականների լրացում դառնալ չեն կարող։ Եթե համրելի գոյականների հետ կարելի է, օրինակ, դնել քանակական և դասական թվականներ, ապա ոչ համրելի գոյականների հետ ընդհանրապես հնարավոր չէ, իսկ բաշխական թվականներ անհնար է։ Չի կարելի կամք, սեր, նույնիսկ օվկիանոս, ջուր, ծով և այլ գոյականներ լրացնել թվային այնպիսի հասկացություններով, ինչպիսին են տասական, քսանական, հիսունական և այլն, ինչպես որ դրանք առնում են թվականներ, տարիներ գոյականները։ Նույն ձևով էլ ածականը դառնում է գոյականի լրացում, սակայն ոչ բոլոր ածականներն են դառնում ցանկացած գոյականի լրացում։ Խնձոր գոյականը կարող է ունենալ կարմիր, սպիտակ, քաղցր, հյութալի և այլ կարգի ածական լրացումներ, մինչդեռ գյուղ գոյականը այս ածականներից և ոչ մեկով չի լրացվի։ Թե ինչպիսի բառով կարող է լրացվել բառը, այդ կախված է լրացյալ բառի բնույթով, նրա իմաստաբանությամբ։ Օրինակ, դաշտ գոյականը կարող է բնութագրվել իր քանակով, ծավալով, արտաքին ու ներքին այլևայլ հանգամանքներով (առաջին դաշտ, մեծ դաշտ, ծաղկած դաշտ, կոլտնտեսային դաշտ, ցորենի դաշտ, գյուղի դաշտ և այլն), եղբայր գոյականը կարող է բնութագրվել ավագ,

կրտսեր, միջնեկ, փոքր, մեծ, հարազատ, խորթ, լավ, վատ *և այլ լրացումներով,* կտրել *բայը կարող է լրացվել* սղոցով, մրկ-ռատով, արագ, դանդաղ, ծայրից, միասին, առավոտյան, երե-կոյան, լավ, վատ *և այլ բառերով։ Սակայն այս հարցի մի կողմն է։ Բանն այն է, որ այնուամենայնիվ լրացնող բառերն էլ միա-տեսակ չեն կապվում լրացյալներին։ Բառերի մի մասը անհա-մեմատ շատ բառերի հետ է կապվում, իսկ մի մասը՝ անհամե-մատ քիչ բառերի հետ։ Այսպես, օրինակ,* լավ, վատ *ածական-ները կարող են կապվել համարյա ցանկացած գոյականին, նույն* լավ *և* վատ *ածականները կարող են կապվել համարյա բոլոր բայերին, սակայն սահմանափակ թվով գոյականների հետ կարող են կապվել* բարդ, վստահ, զուսպ, հանճարեղ *և բազմա-թիվ այլ ածականներ, և սահմանափակ բայերի հետ կարող են կապվել* ֆիզիկապես, դառնորեն, մեծապես *և այլ մակբայներ։ Այս նշանակում է, որ մյուս կողմից էլ կապակցության մեջ վճռական դեր ունի նաև լրացում հանդիսացող բառը։ Հայերե-նում ունենք բառեր, որոնք միայն սահմանափակ կապակցու-թյուններ են կազմում։ Այսպես, օրինակ, ունենք* ազատն *բա-ռաձևով՝* ազատն Մասիս, ազատն աստված, *ամլիկ բառով՝* ամ-լիկ գառ, *մատաղ բառով՝* մատաղ հասակ *և* մատաղ սերունդ, *շարմաղ բառով՝* շարմաղ աղջիկ, շարմաղ երես *և* շարմաղ ալ-յուր, *տապալել բայով՝* տապալել ցարի կարգերը, կառավարու-թյունը, գետնին տապալել, *գարշապար բառով՝* աֆիլլեսյան գար-շապար, *կանառ բառով՝* մտքի կանառ, *գեղմ բառով՝* ոսկե գեղմ, *նոխազ բառով՝* քավության նոխազ, *կնճռոտ բառով՝* կնճռոտ հարց, կնճռոտ երես *և մի քանի այլ նման կայունացած կապակ-ցություններ։*

Մեր ասածից կարելի է հանգել այն հետևությանը, որ բա-ռերը և՛ լրացում առնելու և՛ լրացում դառնալու տեսակետից միանման չեն և միանման հնարավորություններ չեն ընձեռում մեզ։

2. Տարբերում ենք կապակցության երկու եղանակ՝ սովորա-կան և ոչ սովորական։ Սովորականի դեպքում բառերը կապակց-վում են ըստ լեզվական սովորության, որ նշանակում է, թե լրացյալ բառը իր իմաստային կամ քերականական նշանակու-թյամբ պահանջում է լրացում ըստ առարկայական մտածողու-թյան։ Բերենք մի օրինակ.

Աշնան առատությունը թափվում էր այգիներում ու ճանա-

պարհներին, գնում էր ջրերի հետ, բայց այգիներում չկար այդ պահի սովորական կենդանությունը։ (Ստ. Զորյան)

Այստեղ առատություն *բառը լրացվել է* աշնան, թափվում էր *բայը՝* այգիներում *և* ճանապարհներին, գնում էր *բայը՝* ջրերի հետ, չկար *բայը՝* այգիներում *և* կենդանությունը՝ սովորական *և* պանի, *իսկ* պանը՝ այդ *բառերով։ Այս կապակցությունները սովորական են, որովհետև լրացումները համապատասխանում են առարկայական, սովորական մտածողությանը, իրական կյանքի առարկաների, իրերի ու երևույթների հարաբերություններ են արտահայտում։*

Կապակցության մյուս եղանակը ոչ սովորական՝ բանաստեղծական կապակցություններն են, բառերի այնպիսի կապակցությունները, որոնք միայն բանաստեղծական մտածողության դեպքում են հանդես գալիս, որովհետև առարկաների, իրերի ու երևույթների հարաբերությունները արտացոլված են լինում բառերի ոչ ինքնաբանական նշանակություններով։ Այսպես, օրինակ,

Մեղմ գիշերի գեղագանգուր երազում՝
Այն աստղերը որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին, երազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան։

(Վ. Տերյան)

Այստեղ գիշերի երազ, գեղագանգուր երազ, սրբազան մոմեր, առկայծում են կարոտագին, առկայծում են երազուն *բանաստեղծական կապակցություններ են, որովհետև սրանք իրականության մի այլ, ոչ սովորական կարգի արտացոլումներ են, արտացոլում հոգու պրիզմայի միջոցով։*

Վ. Տերյանի ընդամենը մի երկու ստեղծագործություններում միայն հանդիպում ենք այսպիսի կապակցությունների՝ անվախճան գիշեր, շոյող շող, հուսաբեկ մութ, հուսաբեկ մեզ, լռության գիշեր, ցնորք հուշ, խենթ հուզում, մթնշաղված լույսեր, եղեռնի խայթ, նրբակերտ մթնշաղ, կապույտ մութ, կապույտ մութի աշխարհ, մոռացումի անձավ, անսահման նինջ, սխուր խորհուրդ, անանց կարոտ, վառվում է կարոտ, հրաշք աղջիկ, գիշերների թագուհի, մութը հյուսում է, տրտմության ժանյակ (մութը հյուսում է տրտմության ժանյակ), անխոս զրույց (շարժումների անխոս զրույց), երեկոն փռեց թևերը, թևերը մութ,

հյուսել աստղացանց, ոսկեթել աստղացանց և այլն, որոնք սովորական կապակցություններ չեն։ Նույն բանը վերաբերում է նաև ենթակայի և ստորոգյալի կապակցությանը։ Ահա ենթակայի և ստորոգյալի ու նրանց լրացումների բանաստեղծական կապակցությունների մի օրինակ Վ. Տերյանի ստեղծագործությունից.

Ցերեկը լռեց... երկինքը վառեց ոսկե բուրվառներ,
Լույսերը քնքուշ գրկեցին անուշ երկինք, ծով ու հող...
Ա՜խ, եթե մեկը իմ հոգին այդ մեղմ լույսերին խառներ
Եվ փայփայեր իմ հոգնատանջ սրտի թախիծը մաշող։

Լքված իմ հոգին տանջում է կրկին տանջանքը մռայլ,
Եվ անուն չունի տանջանքը սրտիս, տենչանքը գաղտնի,
Ա՜խ, եթե մեկը իմ սրտին նետեր նոր հույսերի փայլ,
Մեղմաբար ասեր, քնքուշ համոզեր, որ նա կգտնի...

Այստեղ ընդգծված նախադասությունների ենթակա-ստորոգյալ կապակցությունները ևս բանաստեղծական են, քանի որ դրանցով արտահայտված մտքերը իրականության ուղղակի արտացոլումը չեն, այլ բանաստեղծական արտացոլումը։ Ավելորդ է ասել, որ բառերի կապակցությունների բանաստեղծական եղանակը խոսքի բանաստեղծականության կարևոր պայմաններից է։ Ավելացնենք նաև, որ եթե կապակցությունների մի տեսակը իրական առարկաների հարաբերությունները ճիշտ արտացոլելուն է ծառայում (այդպես է հատկապես գիտական խոսքը), ապա մյուսը՝ հոգեկան ապրումները, զգայություններն ու հույզերը ճիշտ արտացոլելուն։

Ստեղծագործության գեղագիտական արժեքի մեջ մեծ դեր ունեն բանաստեղծական կապակցությունները, որոնք մի տեսակ չափանիշ են գրողի ու բանաստեղծի լեզվական արվեստի, մյուս կողմից էլ՝ նրա ոճի յուրահատկության որոշիչներ։ Ահա,

Պարույր Սևակից բերվող մի քաղվածքի օրինակով կարելի է տեսնել, թե որքան տարբեր են միմյանցից Վ. Տերյանի և Պ. Սևակի ստեղծած բանաստեղծական կապակցությունները։

Կրակ կտրած կաղ դհոլչին
Հսկայական իր կոպալով
Եղանակը ետ է կծկում... (Պ. Սևակ)

Կարկտում է ամբողջ թափով
Կարկտում է կոպալը, տե՛ս,
Եվ հավքերի երամի պես
Թռչկոտում են թղթե փողեր։
Զուռնան գծում մանրիկ օղեր.
Ու ճարմանդով ելևէջի
Կապ է զցում, իրար հենում՝
Եղանակից շղթա շինում։ (Պ. Սևակ)

3. Տարբերում ենք կապակցությունների ժողովրդական և գրական երկու տեսակները միմյանցից։ Ժողովրդական և գրական կապակցությունները մեծ մասամբ նույնական են, սակայն որոշ դեպքերում ժողովրդականը հակադրվում է գրականին շարադասությամբ, երբեմն կառուցվածքի ու կազմության առանձնահատկություններով։

ա. Ժողովրդական խոսքին հատուկ է վերադայալ ենթակաստորոգյալ կապակցությամբ բարդ բառակապակցությունը, մի կապակցություն, որի լրացումը վերադված ենթակա և ստորոգելիական վերադիր են, և դրանք միասնաբար դառնում են մի այլ գոյականի լրացում։ Այսպես, օրինակ, ճակատը ծաղիկ ճորթ, կոթը երկար բահ, թևերը կարճ վերարկու կապակցություններում ճակատը ծաղիկ, կոթը երկար, թևերը կարճ զույգերը հանդես են գալիս իբրև վերադված ենթակա և ստորոգելիական վերադիր (ճակատը ծաղիկ է, կոթը երկար է, թևերը կարճ են) և միասնաբար դառնում են ճորթ, բահ, վերարկու գոյականների լրացումներ։ Այսպիսի բարդ կապակցությունները հատուկ են ժողովրդական մտածողությանը և գեղարվեստական գրականության մեջ էլ հանդիպում են ժողովրդական ոգի ունեցող ստեղծագործություններում։ Չարենցն իր «Բալլադ գեղջկականի» մեջ գրում է.

— Ընչի՞ համար էլ ես սիրեմ էն տղին,
Մազերը սև, աչքերը սև էն տղին...

Պ. Պռոշյանն էլ ահա այսպես էր գրում.

Կույսը նոր ծագելիս նա արտն է գնում յուր սիրելի բալաք (խայտաբղետ—Պ. Պռոշ.) եզի կամ պոչը ծաղիկ գոմեշի վրա իշխանավայել նստած՝ մի պարկ էլ շալակին կապած՝ երկու հաց, մի կտոր թել պանիր մեջը...։

բ. Գրական խոսքին հատուկ են (թեև ժողովրդականին ևս խորթ չեն) դերբայական դարձվածով կազմվող կապակցությունները։ Այսպես, օրինակ,

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին թոչելով,
Փերիները սարի գլխին
Հավաքվեցին գիշերով։ (Հ. Թումանյան)

Այստեղ ընդգծված դերբայական դարձվածներից առաջինը փերիները գոյականի, իսկ երկրորդը հավաքվեցին բայի հետ կազմում են բառերի ծավալուն կապակցություններ։

Ժողովրդական խոսքում առավել հատկանշական են անվանական կապակցություններով ծավալուն կապակցությունները։ Ահա մի երկու օրինակներ Պ. Պռոշյանից.

Թնդում էր Ալեքենց Բարսեղի կին Մարգարիտի սիրտը, նա աչքի պոչով նայում է յուր հոգու ճրագ դստեր վարդանման ու շառագունած դեմքին և ցնծում է ուրախությունից...

Մի կողմից էլ նա յուր կնոջ վրա էր գոռում.— աղչի՛ Եղսաբեթ, Ջհանի թո՛ռը, դե մի թեզ արա, իմ աղա աղպոր կառուցը քաղցրացրու մեր էն Գոգոթի ղոլի ծմակի ձագաց մեղրի հացովը։

— Կամաց-կամաց աստված սիրտդ գութ քցեց, սկսեցիր մի տարեն ճամփա հեռվից ջանղալների (խռիվ) արանքից գող կատվի պես մարաղ մտնել, ինձ մտիկ տալ...

Սակայն պետք է նկատել, որ հրապարակախոսության մեջ, գիտական խոսքում հանդիպում ենք վերառյալ որոշիչների, որ հատուկ չեն ոչ գեղարվեստական խոսքին, ոչ էլ ժողովրդական մտածողությանը։ Ահա մի օրինակ.

Երեկ Պալերմոյում արտակարգ նիստ գումարեց «70-ական թվականների միջերկրածովյան երկրներ՝ հանուն ժողովուրդների ինքնորոշման և առաջադիմության, ընդդեմ բլոկների հա-

ղամականության» միջազգային կոնֆերանսի նախաձեռնող կոմիտեն: («Խորհ. Հայաստան» օրաթերթ):

Եթե գեղարվեստական խոսքին և ժողովրդական մտածողությանը հատուկ որոշիչներն ունեն բնութագրող հատկանիշ և շատ հաճախ դնահատողական արժեք, ապա գիտական խոսքին և հրապարակայնությանը հատուկ այսպիսի որոշիչները ունեն միայն ճանաչողական դեր:

գ. Տարբեր են գրական և ժողովրդական փոխատեղական կապակցությունները: Ժողովրդական փոխատեղական կապակցությունները կազմվում են սեռական հոլովով, ինչպես, օրինակ, փոխանակ ասելու լավ տանձ ժողովուրդն ասում է տանձի լավը, նույն ձևով՝ հիմարի մեծը, նռան երկուսը, «չվանի երկարն է լավ, խոսքի կարնը» և այլն:

Սրան հակառակ գրական լեզվում փոխատեղումն արվում է գործիական հոլովով, ինչպես՝ սև աչքերով երեխա—աչքերով սև երեխա, աննման տեսքով աղջիկ—տեսքով աննման աղջիկ: Ռ. Պատկանյանը գրում է.

Մեզնից շատ առաջ կար մի թագավոր՝
Հոգով շատ արի, գլխով ալևոր:

Մի կողմից գրական և մյուս կողմից ժողովրդական կապակցական այս եղանակները դառնում են խոսքը ոճավորելու հետաքրքրական միջոցներ, նպաստում խոսքի բազմազանությանը, թարմություն մտցնում արտահայտման մեջ:

դ) Բազմահոլովական կապակցությունը ևս հատուկ է ժողովրդական լեզվամտածողությանը: Կապակցությունը բազմահոլովական է, երբ միևնույն բառի մի ձևը կապվում է մի այլ ձևի հետ: Օրինակ.

— Դու նորից լաց ես լինում, իմ նոգուս հոգի, բայց ինչո՞ւ: (Ա. Խաչատրյան)

Լեյլին ծամեր քանդեց,
Մոխիր լցավ ծամերու վրա:
Լաց լացեց, լաց լացեց ու մեռավ
Տնավեր Մեջլումի ոսկորների վրա:
(Ա. Խաչատրյան)

Պար է պարում հիմա արդեն
Մի շորորան-զրինգ պառավ: (Պ. Սևակ)

ե. Թեև և՛ ժողովրդական խոսքին և՛ գրականին հատուկ են հատկացման հարաբերությամբ սեռականով գոյականական կապակցություններ (օրինակ, թագավորի պալատ, աշակերտի տետր), *սակայն գրականում սրանց փոխարեն շատ հաճախ գործածվում են նույն հարաբերությունն արտահայտող որոշչային կապակցությունները (ածական+գոյական կաղապարով)։ Այսպես, օրինակ, ժողովրդական մտածողությանը հատուկ է միայն* թագավորի պալատ, ծնողի պարտք, աշակերտի տետր *տիպի կապակցությունը, այնինչ գրականն ունի սրանց հետ մեկտեղ նաև* թագավորական պալատ, ծնողական պարտք, աշակերտական տետր *տիպի կապակցություններ։*

4. Ընդհանրապես լրացում առնող բառից է կախված լրացման ձևավորումը կամ ինչպիսին լինելը, ընդ որում գոյականը կամ գոյականի իմաստ ունեցող դերանունը գոյականի լրացում դառնալիս դրվում է սեռական հոլովով (լեռան ստորոտը, նրա հայրը), *գոյականը կամ գոյականի իմաստ ունեցող դերանունը բայի լրացում դառնալիս դրվում է տրական* (դաշտին մոտեցող), *հայցական* (գյուղը մտնող), *բացառական* (գյուղից հեռացած), *գործիական* (ուրագով տաշած) *և ներգոյական* (գյուղում մեծացած) *հոլովներով, իսկ չթեքվող խոսքի մասերը գոյականի և բայի հետ կապվում են առանց ձևափոխության։ Սակայն, հակառակ այս կանոնի, կան դեպքեր, երբ լրացումն է գառնում լրացյալի ձևավորման պատճառը։ Կան դեպքեր էլ, երբ լրացումը լրացյալի հետ կապակցության մեջ մտնելիս հանդես է բերում յուրահատկություններ։ Ահա այդ դեպքերից կարևորները.*

ա. Կան գոյականներ, որոնք միայնակ, առանց լրացում առնելու այլ բառի լրացում չեն դառնում, այսինքն՝ կապակցության բաղադրիչ են դառնում իրենց լրացումով հանդերձ։ Այսպիսին են դասանիշ գոյականները՝ ժամանակի, տարածության, կշռի, տարողության, արժեքի գաղափար արտահայտող բառերը (օր, ժամ, սանտիմետր, մետր, գրամ, կիլոգրամ, լիտր, տոննա, կոպեկ, ռուբլի *և այլն), որոնք լրացում են դառնում որևէ թվի գաղափար արտահայտող լրացման հետ մեկտեղ՝ կազմելով բարդ բառակապակցություն, ինչպես՝* աշխատեց երկու օր, *գնեցի* երկու կիլոգրամ շաքար, *շորս* մետր կտոր, *ճինգ* լիտր կաթ, ստացա հարյուր ռուբլի *և այլն։ Ընդգծված կապակցություններում* օր *բառը* աշխատեց *բային և* կիլոգրամ *բառը*

շամար բառին կապվում են երկու լրացման հետ միասնաբար (նույն ձևով և մյուս կապակցությունները), որի համար էլ կապակցությունը բարդ բառակապակցություն ենք կոչում։

բ. Ցանկացած քանակական թվականի հետ ժամանակի դասանիշ գոյականները միասին ստանում են ական ածանցը և դառնում մի այլ գոյականի լրացում (հինգ ամսական գառ, տասը տարեկան երեխա), կազմելով բարդ բառակապակցություն։

Ցանկացած քանակական թվականի հետ չափի (տարածության, կշռի, տարողության, արժեքի) դասանիշ գոյականները ստանում են անոց ածանցը և դառնալով մի այլ գոյականի լրացում՝ կազմում են բարդ բառակապակցություն, ինչպես՝ չորս մետրանոց գերան, հարյուր կիլոգրամանոց ծանրաձող, երեք լիտրանոց բանկա, քառասունյոթ կոպեկանոց գիրք և այլն։

Քանակական թվականի հետ մի քանի գոյականներ (տեղ, կողմ, գլուխ, բև, աչք, մաս, ձեռք, ոտք, անկյուն, ատամ և այլն) միասին ստանում են անի ածանցը, նույնպես կազմելով բարդ բառակապակցություն, ինչպես՝ հազար տեղանի դաճլին, քառասուն գլխանի դև, չորս դռնանի սենյակ և այլն։

գ. Կան բառեր, որոնք իրենց բառային իմաստով պահանջում են, որ իրենց լրացյալը գործածվի հոգնակի թվով։ Այսպես, օրինակ, բազմաթիվ գյուղեր, անթիվ աստղեր, բոլոր մարդիկ, գույնզգույն մատիտներ, տարբեր կարծիքներ, պես-պես երանգներ, տեսակ-տեսակ մանյակներ, փունջ-փունջ աղջիկներ, տասնյակ տարիներ, հազարավոր աղբյուրներ, մեծամեծ գործեր և այլն։

դ. Մի խումբ բառեր պահանջում են, որ ուղղական, հայցական և տրական հոլովներով դրված իրենց լրացյալն անպայման լինի որոշյալ, ինչպես՝ այս գիրքը, այդ մարդը, այն տունը, մյուս կողմը, սույն գրությունը, նույն բանը, միևնույն կառուցվածքը, այսինչ տեղը, այնինչ օրը (բացառություն են կազմում Ք—Յ հոլովման բառերը, որոնք այս բառերի հետ էլ գործածվում են անորոշ)։ Ընդհակառակն, մի խումբ բառեր էլ պահանջում են, որ լրացյալը ուղղական, տրական և հայցական հոլովներով դրվելիս լինի անորոշ, ինչպես՝ ինչ-որ իշխան, որոշ ընկերներ, մի քանի երկրներ, մի թագավոր, ուրիշ բառեր և այլն։

ե. Բառերի մի խումբ էլ պահանջում է, որ լրացյալներն ունենան ժխտական ձև։ Այսպիսի բառերից են՝ ամենևին, այլևս,

երբեմ, իսպառ, բոլորովին, տակավին, էլ, ոչ ոմ, ոչ մեկը, ոչինչ և այլն։

զ. Կան ձևավորման զուգահեռ ձևեր՝ պայմանավորված կապակցության բաղադրիչների շարադասությամբ։ Այսպես, արդի գրական լեզվում ունենք հետևյալ կարգի կապակցական զուգահեռ ձևերը՝

ձևավորման պատճառ դառնալ||պատճառ դառնալ ձևավորմանը

նոր պոեզիայի հիմքը դնել||հիմք դնել նոր պոեզիային

կազմակերպման հիմքը հանդիսացավ||հիմք հանդիսացավ կազմակերպմանը

ստեղծելու պայմանը դառնալ||պայման դառնալ ստեղծելուն։

Այստեղ առաջին շարքում դառնալ, դնել, հանդիսանալ *բայերը ինքնուրույն միավոր են, իսկ երկրորդ շարքում ինքնուրույն են* պատճառ դառնալ, հիմք դնել, հիմք հանդիսանալ, պայման դառնալ *հարադրությունները։ Թեև սրանք իմաստային առումով տարբերություն չունեն, սակայն քերականական ձևավորումով տարբեր են, ըստ որում առաջին կաղապարը հայերեն է, երկրորդը՝ ռուսերենի պատճենում։*

Կարելի կլիներ կապակցությունները դասավորել նաև ըստ գործառական ոլորտների։ Եվ իսկապես, գործառական տարբեր ոլորտներում գոյություն ունեն տարբեր կարգի կապակցություններ, առանց որոնց տվյալ բնագավառին հատուկ մտքերը անհնար կլիներ արտահայտել։ Ուրեմն, ոչ միայն բառերը, այլև կապակցությունները ևս բնութագրում են լեզվի գործառական ոլորտները։ Այսպես, օրինակ, մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքին այժմ հատուկ են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ աշխատանքի տոն, հերթափոխի կանգնել, կոմունիստական շաբաթօրյակ, արտադրական պոտենցիալ, գիտատեխնիկական պոտենցիալ, գիտատեխնիկական առաջընթաց, գիտատեխնիկական հեղափոխություն, տեխնոլոգիական հեղափոխություն, առաջավոր փորձ, առաջավոր փորձի ներդրում, ստեղծագործական նախաձեռնություն, հասարակական բարիք, կոմպլեքսային ծրագիր, քաղաքական վերելք, քաղաքական վերելքի մթնոլորտ, ծանր ինդուստրիա, տեխնիկական մակարդակ, կապիտալ ներդրում, հարվածային ճակատ, գաղափարական ճակատ, արտաքին քաղաքականություն, բարձր բնագիծ նվաճել, եղբայրական ճանապարհություն, մարքսիզմ-լենինիզմի դր-

ռոչ, ինտերնացիոնալ պարտք, խորհրդային ժողովուրդ, սոցիալական առաջադիմություն, լարվածության թուլացում, սպառազինության մրցավազք, պատմական որոշում և այլն, որ քաղել ենք «Խորհրդային Հայաստան» օրաթերթի միայն մեկ առաջնորդողից։

Այսպիսի կապակցությունների մի զգալի մասը կայուն կապակցություն դառնալու ճանապարհին է, և դրանք կարող են իրենց բերած նոր հասկացություններով ոչ միայն խոսքի ճշտությանը ծառայել, այլև դառնալ լեզվական երևույթ՝ անցնելով կայուն կապակցությունների շարքը։

Ոչ միայն ըստ լեզվի գործառական ոլորտների են տարբեր կապակցությունները, այլև գրական լեզուն ունի սովորական դարձած կապակցություններ, որոնք տեղ չունեն առօրյա խոսակցական խոսքում։ Այսպես, օրինակ, հապճեպության կնիք կրել, բնության զրկում, վկայել ինչ-որ բանի մասին, խոսել ինչ-որ բանի մասին (այդ խոսում է այն մասին, որ...), իր կնիքը դնել մի բանի վրա, հաջողությամբ պսակվել, բուն դնել մի բանի մեջ, պատկանել մեկի գրչին, կյանքի ուղեգիր ստանալ, մի բանի մեջ գլուխ է բարձրացրել, մի բանի կողքով անտարբեր չանցնել, քար անտարբերություն, մտքերը թղթին հանձնել, իր լավագույն արտահայտությունը գտնել մի բանում: *Ահա մի օրինակ Բաֆֆու «Սամվելից»։*

«Մի քանի ամիսների սաստիկ կռիվներից հետո, Շապուհը յուր բաղձանքների մեջ *բոլորովին* հուսախաբ գտնվեցավ»:

Եթե շարահյուսական առումով մեզ հետաքրքրում է մի խոսքի մասի՝ մի այլ խոսքի մասի հետ կապակցվելու օրինաչափությունը, ապա ոճական առումով սրանցից բացի կարևոր է դառնում կապակցության իմաստային կողմը, այսինքն՝ իմաստաբանական, գաղափարային կողմը՝ տվյալ դեպքում այսպիսի կապակցություն կազմել կարելի՞ է, թե ոչ, հարմա՞ր է, թե ոչ, լա՞վ է, թե ոչ, համապատասխա՞ն է խոսքի միջավայրին, տեղին, ասողին, լսողին, թե ոչ, բավարարո՞ւմ է լսողի կամ կարդացողի կողմից ներկայացվող գեղագիտական պահանջներին, թե ոչ։

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Մինչև այժմ մեր քննած լեզվական միավորները՝ հնչյունն ու բառը, կայուն կապակցությունները, ինչպես շարահյուսական

ազատ կապակցությունները, շինանյութ են նախադասության համար, որը խոսքի բաղադրիչ է, հաղորդակցման նվազագույն միավոր։ Նախադասությամբ է ձևավորվում միտքը, և խոսքի մեջ է, որ մտքերը զանազան փոխհարաբերություններով արտացոլում են աշխարհը խոսողի տեսակետից, խոսողի տեսակետից մեկնաբանում, վերլուծում, գնահատում և արժեքավորում կյանքը իր երևույթներով, իր բազմազանություններով։

Նախադասությունն իբրև շարահյուսական միավոր ձևավորվում է նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի կապակցություններով և այնպիսի միավոր է, որն արտահայտում է մեր դատողական գործունեությունը, իբրև հաստատում, իբրև ժխտում կամ իբրև հարցում հաստատման կամ ժխտման մասին։ Նախադասություն հասկացությունը բարդ հասկացություն է երկու պատճառով։ Նախ այն պատճառով, որ հաստատում, ժխտում և հարցում կարելի է արտահայտել և մեկ բառով և բառերի կապակցություններով։ Օրինակ, Լուսացավ։ Արևի շողերը ոսկեզօծեցին Արամազդի կատարը։ Այս երկու նախադասություններից առաջինը մեկ բառով է արտահայտված, երկրորդը՝ հինգ բառերի կապակցություն է։ Նույն ձևով՝

Երևա՞ն։ Դու մարմնավորում մեր լույս երազների։

Այս երկու միավորները ևս նախադասություններ են, թեև առաջինը մեկ բառով է արտահայտված, իսկ երկրորդը՝ հինգ բառերի կապակցությամբ։

Բոլոր դեպքերում էլ մենք գործ ունենք նախադասությունների հետ, որովհետև արտահայտում են մտքի հաստատում և կարող են դառնալ հարց, հանդիսանում են հարցի պատասխան։ Այնուհետև, նախադասությունը բարդ հասկացություն է այն պատճառով, որ նրա մեջ կարող են լինել նաև այնպիսի միավորներ, որոնք քերականական կապակցության մեջ չեն շարակարգային հարաբերությամբ միմյանց կապված բառերի հետ և նախադասության կազմը պայմանավորող կապակցված բառերի շղթայից դուրս են։ Օրինակ,

Հե՜յ, նավավա՜ր, ի՞նչ ես անում,
Ո՞ւր ես նստում դու նավակ։ (Ալ. Ծատուրյան)

Այստեղ ընդգծված հե՜յ ձայնարկությունը և նավավար կոչականը դուրս են երկու նախադասություններից էլ, թեև շատ կարևոր դեր ունեն մտքի ու հույզի արտահայտման տեսակետից։ Ընդգծված բառերը նախադասության անդամ չեն, որով-

հետև մյուս բառերի հետ քերականական կապի մեջ չեն (հարցով չեն կապված մյուս բառերին, որոնք հարցով կապված են միմյանց), հաստատում կամ ժխտում չեն արտահայտում, դրանք հարցականի չեն վերածվի, այնինչ հարցականով արտահայտված նախադասությունը կարելի կլինի արտահայտել հաստատական հնչերանգով՝ իմաստը պահելով հանդերձ (ինչպես՝ ճիշտ չես անում, նավակ մի՛ նստիր)։

Նախադասություններն ունեն կառուցվածքային բազմազանություններ, կառուցվածքային բաղմաթիվ կաղապարներ։ Նախադասությունների կառուցվածքային այդ բազմազանությունները լեզվամտածական կաղապարներ են, որոնք մտքերի արտահայտման տարատեսակ հնարավորություններ լինելով հանդերձ, միաժամանակ խոսքը ոճավորելու մեծ լիցքավորում ունեն, հանդիսանում են խոսքի հարստության, պեսպիսության ու բազմազանության անսպառ աղբյուր։

Այժմ համառոտակի քննենք խոսքի մեջ նախադասություններից յուրաքանչյուրի ոճական դերը և հնարավորությունները։

Նախ, ըստ ստորոգումների քանակի նախադասությունները լինում են պարզ, միավորյալ և բարդ։

Պարզ նախադասությունները ըստ կազմի լինում են երկկազմ և միակազմ, ըստ եղանակավորման՝ պատմական, հարցական, հրամայական և բացականչական, ըստ ստորոգման կերպի՝ հաստատական և ժխտական։

ԵՐԿԿԱԶՄ ԵՎ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկկազմ նախադասությունը ենթակայով և ստորոգյալով նախադասությունն է, որն իր դրսևորման տարատեսակություններով մտքերի արտահայտման հիմնական եղանակն է։ Ընդհանրապես պատումը, եղելության, դեպքի, տեղի, ունեցածի, պատահածի նկարագրությունը տեղի է ունենում երկկազմ նախադասություններով։ Ահա մի օրինակ.

Երևում էր Սիմ լեռան կանաչազարդ շղթան՝ մեղմ ալիքներով և ձյունապատ գագաթներով, որոնք արևի ճառագայթների առջև փայլում էին վարդագույն ներկով։ Իսկ ավելի հեռու, դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը, մանիշակագույն ժապավենի նման, երևում էր Բզնունյաց ծովակի միայն նեղ շերտը։ Երևում էին Քարքե լեռան բարձրությունները իրենց մթին

ծմակներով և մռայլ անտառներով, որոնք իրենց անմատչելի թավուտների մեջ սնուցանում էին մի մռայլ ժողովուրդ։ Հիշյալ լեռների շրջանակի մեջ, որպես մի սքանչելի պատկեր, երևում էր Մուշի ընդարձակ դաշտավայրը, հարթ, հավասար, իբրև մի լայնածավալ, նախշուն գորգ։ (Բաֆֆի)

Երկկազմ նախադասություններով են ձևավորվում հրապարակախոսությունը, գիտական խոսքը, պաշտոնական գրագրությունը և այլն։ Երկկազմ նախադասությունն ունի այլևայլ արտահայտություններ։ Այն կարող է լինել լիակազմ, կարող է և լինել զեղչված անդամներով։ Նախադասությունը լիակազմ է, եթե առկա են և՛ գլխավոր անդամները և՛ պահանջվող երկրորդական անդամները։ Նախադասությունը զեղչված անդամներով է, եթե որևէ անդամը պակասում է և վերականգնելի է։ Զեղչվել կարող է նախադասության թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը, թե՛ սրանք երկուսը միասին և թե՛ երկրորդական որևէ անդամ։ Այսպիսի զեղչումները հնարավոր են խոսքում, հատկապես արրամախոսության մեջ.

— Պարսից զորաբանակը երևան հանեցինք, Սպարապետ,— ասաց նրանցից մեկը, որ ավագն էր երևում։

— Որտե՞ղ,— հանգիստ հարցրեց Վարդանը։

— Մեծ ավազուտներից այս կողմ։ Գալիս է մեծ հապշտապով, թանձր է, խոշոր զորաբաժիններ ունի հեծյալ և բերում է միայն մատյան գունդը հիսուն փղերով։

— Որքա՞ն կլինի թիվը։

— Երկու-երեք հարյուր բյուր։ (Դ. Դեմիրճյան)

Այստեղ առաջին նախադասության մեջ զեղչված է մեկ ենթական, երկրորդում և երրորդում զեղչված են նախադասության բոլոր անդամները, բացի տեղի պարագաներից (որտե՞ղ, Մեծ ավազուտներից այս կողմ)։ Այնուհետև զեղչված է պարսից զորաբանակը ենթական։ Հաջորդ նախադասության մեջ՝ թիվը գոյականի պարսից զորաբանակի հատկացուցիչը, իսկ վերջին նախադասության մեջ՝ պարսից զորաբանակի թիվը ենթական և կլինի հանգույցը։

— Անհնարի՞ն ես պահանջում,— ավելի զայրացավ Ներշապուհը...

— Անհնարի՞նը, այո՞ անհնարինը...

— Դու ամեն ինչ դնում ես վտանգի խաղի մեջ...

— Ո՞ղջ Հայոց աշխարհը... (Դ. Դեմիրճյան)

Այստեղ առաջին նախադասության մեջ զեղչված է դու ենթական, երկրորդ նախադասության մեջ՝ բոլոր անդամները, բացի ուղիղ խնդրից, հաջորդ նախադասության մեջ զեղչում չկա, սակայն նախադասությունը թերի է, ասելիքը չի ավարտված, ինչպես և դրա նախորդ նախադասության մեջ։ Երկու դեպքում էլ չասվածը վերականգնել անհնար է։ Վերջին նախադասության մեջ ևս միայն ուղիղ խնդիրն է արտահայտված, իսկ ենթական և ստորոգյալը զեղչված են։

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միակազմ նախադասություններում չի լինում ենթակա-ստորոգյալ գլխավոր անդամների հակադրությունը, և անհնար է լեզվամտածական այսպիսի կառույցի մեջ ենթակա կամ ստորոգյալ ավելացնել։ Միակազմ նախադասությունը բառ է կամ բառերի կապակցություն, որը հատուկ ստորոգման հնչերանգով բարձրանում է նախադասության մակարդակի և դառնում խոսքի միավոր։

Միակազմ նախադասությունները երեք ենթատեսակ ունեն՝ աննենթակա նախադասություններ, անդեմ նախադասություններ և բառ նախադասություններ։

Աննենթակա նախադասություն

Աննենթակա նախադասությունները աչքի են ընկնում իրենց համառոտությամբ։ Այսպիսի նախադասությունները (ամպեց, ցրտեց, հիմա կմթնի, լուսանում է, անձրևում է և այլն) սովորաբար արտահայտում են բայի եզակի, երրորդ դեմքի ձևով և մատնանշում են բնության երևույթներ։ Աննենթակա նախադասություններ են կազմվում նաև միադիմի բայերով, ինչպես՝ ...Այդ ոտի ամաններով վեր կելնրվի՞,—Հ. Պ.։ Այստեղ չի նստվում. Երկաթը տաք-տաք կծեծեն, ճտերն աշնանը կհամրեն, Զարություն չեն անի, խելոք կկենան։ Աննենթակա են նաև վաղ ժամանակներից եկած մի երկու արտահայտություններ, ինչպես՝ կողքս ծակում է, սիրտս խառնում է և այլն։

Աննենթակա նախադասությունները ժողովրդական լեզվամտածական կառույցներ են և խոսք են բերում հասարակ ոճի երանգներ։

Անդեմ նախադասություն

Անդեմ նախադասությունները երկու ենթատեսակ ունեն՝ անվանական և բայական։

Անվանական անդեմ նախադասությունը գոյական է կամ գոյականով և իր լրացումներով կազմված կապակցություն, որը հատուկ հնչերանգով դառնում է ինքնուրույն նախադասություն։ Այսպես, օրինակ,

Կայարան։
Զորքեր։
Զորքեր։
Զինվորներ կարմիր։ *(Ե. Չարենց)*

Անվանական անդեմ նախադասությունները մեծ մասամբ հուզական լիցքով հագեցած նախադասություններ են, կապվում են զանազան մտապատկերների հետ, արտահայտվում հատուկ հնչերանգով, անկախ այն բանից՝ խոսքի ընդհանուր հյուսվածքո՞ւմ են, թե առանձին խոսք են կազմում։ Օրինակ,

Ամեն ինչ զորշ առօրյա։
Ինչպես միշտ գորշ, փոշոտ փողոց։
Սառը ջուր։
Խաղող։
Գինի։
Մարդիկ։ Կառքեր։ Մարդիկ։
Եվ ոչ ոք չգիտեր, որ հիմա
Աստաֆյան փողոցի վրա
Հրաշք պիտի լինի։ (Ե. Չարենց)

Անվանական անդեմ նախադասությունները ծառայում են մտքերի արագ հաղորդումների, ժամանակների, պատկերների ու տեսիլների արագ փոփոխումներն արտահայտելու համար և առաջ են բերում ընդհատավոր ոճ։ Սա ճարտասանական զեղչման նման մի միջոց է դառնում մեկ-երկու բառի միջոցով ստեղծելու պատկեր, որն իր մեջ շատ բան ունի, բայց չի ասվում։ Այս միջոցին հաճախ է դիմում Ե. Չարենցը։ Ահա մի օրինակ ևս.

Երևան։
Քսան թվական։
Փետրվար։
Մարտ։

Մայիս...
Ողջույն, ընկեր Թավաքա՜լ,
Մուսայե՜լ:
Սարուխա՜ն:
Ավի՜ս...

Անվանական անդեմ նախադասությունները երբեմն արտահայտություն են ամենաուժեղ հուզական ապրումի։ Օրինակ՝ հրդե՜հ, մարդասպանությո՜ւն, օգնությո՜ւն *և այլն։ Անվանական անդեմ նախադասությունները խորթ չեն ժողովրդական լեզվամտածողությանը։ Ունենք այս ձևով կազմված բազմաթիվ առածներ, ասացվածքներ և շուտասելուկներ։ Ահա մի երկու օրինակ.*

Աշխարհն արոտ, մենք մեջը կարոտ. քողն երեսին, երնեկ փեսին. գեշ օրն ինձի, գեշ հարսը քեզի. խոսքը մեծին, ջուրը պուճուրին. սոխ ու հաց, սիրտը բաց. դուրսը քահանա, ներսը սատանա. շունը շանից, երկուսն էլ մի տանից. օձի սևին էլ նալլաթ, սպիտակին էլ. ջորին ջրին ջուլը ծուռ, ծիտը ծառին ճիտը ծուռ։

Անվանական անդեմ նախադասությունները շատ նման են զեղչված նախադասություններին, մինչև այն աստիճան, որ երբեմն դժվար է լինում որոշել դրանց սահմանը, և հեշտ չի լինում իմանալ՝ զեղչումով կառույց է, թե միակազմ նախադասություն։ Դրանք շատ հաճախ նարտասանական զեղչումներ են և հուզական խոսքի բաղադրիչ տարր, այդ պատճառով էլ հատուկ են ժողովրդական լեզվամտածողությանը։ Ահա մի երկու օրինակ Պ. Պռոշյանից.

Երկու շաբաթ ձեզ ժամանակ, *գնացեք, քարեքար դիպեք, թե կարացիք մաղի գլուխը մի բան քցել (հաջողացնել),* էս fn տունը, էս fn նշանածը, *արի դուս քաշի տար,* մորդ կաթի պես fեզ հալալ։ Թե չէ՝ դուf ձեզ համար, ես ինձ համար, *զոռով բան չի գլուխ գալ։*

«...Տղամարդին ինչ կսազի իր կնոջ հետ ատամները բաց անել, հանաքներ անել, ջան ասել, ջան լսել. տղամարդն ո՛վ, կանանց գործերի մեջ խառնվելն ո՛վ, նրանց հետ վեր ու նիստ անելն ո՛վ. *մարդը պետք է մարդ լինի, ինչ-որ մարդին կպատկանի»։*

Անվանական անդեմ նախադասությունները լայն կիրառություն ունեն նաև բանավոր խոսքում։ Կան հատուկ բանաձևեր՝

կազմված իբրև անվանական անդեմ նախադասություններ, ինչպես՝ fեզ ինչ, նրան ինչ, ա՛յ fեզ բա՞ն, գլխիս վրա, աչfիս վրա, աչfս լույս, վայ նրան (ինձ, fեզ), տունը մերը, խոսքը մերը, բարև ձեզ, բարին արևիդ, լույսը fեզ տեսնողին, *մի խոսքով՝* բարևից *մինչև* ցտեսություն: *Ժողովրդական խոսքին հատուկ կառուցվածքներ կան՝ կազմված անվանական անդեմ նախադասություններով։ Ահա մի երկու օրինակներ.*

Ամո՛թ fեզ, Մոսի, թո՛ւf ու նախատինք,
Ամո՛թ fեզ նման գոված իգիթին:

(Հ. Թումանյան)

Մի ժամանակ դրան (Մանուկ Վարոսյանին—Պ. Պ.) հանեցին պարտիայից, էդ Վասակ Ջոբանյանն ու Ղուկասը, թե տրոցկիստ է։ Ախպեր, ի՛նչ տրոցկիստ, ի՞նչ բան: *(Ն. Ջարյան)*

Փախչում ես, թողնում ինձ դարձյալ մենակ,
Էհ... տերը fեզ հետ, իմ տխուր ճամփեն
Առանց քեզ կանցնեմ... (Ալ. Ծատուրյան)

Վա՛յ fո օրին, ա՛յ ախպեր,
Քու սև օրին, հայ ախպեր... *(Ալ. Ծատուրյան)*

Անվանական անդեմ նախադասություններով կազմվում են ողջույնի, մաղթանքի, անեծքի խոսքեր, կոչեր, կոչական խոսքեր և այլն, քանի որ դրանք կարող են ստանալ հուզական մեծ լիցքավորում։ Ահա մի երկու օրինակներ՝

Անե՛ծf շահին, իրեն գահին... *(Հ. Թումանյան)*
Երեե՞կ նրան, *ով իր գործով*

Կապրի անվերջ, անդադար։ (Հ. Թումանյան)
Նզո՛վf շեյթանին,— *բացականչեց ներքնապետը։*

(Բաֆֆի)

Տարո՞ն, սրբավայր կրոնի և աստվածապաշտության: *Տարո՞ն,* բնագավառ հայոց աստվածների և աստվածուհիների: *Ահա կրկին երևաց Վեհափառ Արածանին-հայոց սրբազան Գանգեսը։ (Բաֆֆի)*

Փա՞ոf և երանի fեզ *քաջ սերմնացան,*
Որ մեր դաշտերը չես թողնում խոպան։

(Ա. Ծատուրյան)

Ողջո՜ւյն, *աշխարհաշեն արքա։*
Ողջո՜ւյն քեզ, *մեծ Արա։*
Քեզ հաշտ, *խարտյաշն Անահիտ։*
Ուրախությո՜ւն և փա՜ռք *հայոց Վարդավառին։*
(Ն. Զարյան)

Մա՛հ գերմանական օկուպանտներին:

Անվանական նախադասությունների կառույցներից մեկն էլ *կազմվում է* ահավասիկ, ահա և հրեն, այ *բառերով։ Օրինակ,*

Ահա նրանց տեղ-տները,
Լուռ-լուռ փոսեր ցիրուցան,
Ահա նրանց շիրիմները,
Մամոռտ, անշուք, աննշան:
Ահա մեծի ապարանքը
Ու ամրոցը կիսավեր... *(Հ. Թումանյան)*

Հրեն բանակը անխռով ու հաշտ
ուսանողների... *(Հ. Հակոբյան)*

Նկատելի է, որ անվանական նախադասությունների մեր գրողները դիմում են հակադրություններ ստեղծելիս։ Ահա օրինակներ.

*Տեսարանը նրան թելադրում էր մի հոդված, որ պիտի կրեր «Հակադրություն» վերնագիրը։ Նայում էր վար-*ողջի ու մերկության սոսկալի պատկեր, *ուր մարդիկ շներից չեն տարբերվում։ Նայում էր վեր-*կշտության ու անհոգության կենդանի մարմնացում: Այնտեղ կիսամերկ մարմիններ, կեղտոտ ու գրզգրզված մազերով ողորմելի գլուխների մի խստմնելի ճանիճ: Այստեղ՝ վերջին տարազի հագուստներ, ոսկե շղթաներ, թանկարժեք «բրելոկներով» աղամանդյա մատանիներ ու փողկապի հորոցներ: *(Շիրվանզադե)*

Վլադիկավկազից դուրս գալով, մի քանի ժամից հետո արդեն գտնվում եմ Դարիալի կիրճում։ Օդը մռայլ է, խոնավ, ցուրտ։ Աջ կողմ՝ ապառաժներ, ձախ կողմ՝ ապառաժներ, վերջապես շուրջս՝ ապառաժներ, *սրանցից մեկի ստորոտով գնում եմ և շարունակ նայում վեր... (Գ. Բաշինջաղյան)*

Անվանական անդեմ նախադասությունները հաճախ են դիմում զինվորականները, որոնց հրամաններում սովորական են այսպիսի արտահայտություններ՝ ի զեն, աջ դարձ, ձախ դարձ,

կրակ, ոտի, քայլով մարշ և այլն։ Անվանական անդեմ նախադասությունները որոշակի տեղ ունեն դրամատիկական ստեղծագործություններում՝ իրրև նախապատրաստություն, որ կոչվում է ռեմարկ։ Օրինակ.

Արար երկրորդ

Հայոց աշխարհ

Արմավիր։ Հրապարակ Արայի պալատի առաջ։ Խորքում պալատի կամարաձև շքամուտքը՝ զարդարված Վահագնի և Անահիտի արձաններով։ Հրապարակի երկու կողմը սաղարթախիտ ծառեր։ Աջակողմյան ընկուզենու կողքին հսկայական քարե ձուկ, որին փաթաթվել է խաղողի որթը և ճյուղերի միջից կախել իր սևագույն ողկույզները։ (Ն. Զարյան)

Այն պատճառով, որ դիմավոր բայի ճարտասանական ամեն մի զեղչում կարող է նախադասությունը վերածել անվանական միակազմի, այդ պատճառով էլ վերանում է անվանական և անհանգույց նախադասությունների միջև եղած սահմանը, իսկ անհանգույց (ճարտասանական զեղչումով) անվանական նախադասությունները կարող են դառնալ ճարտասանական ձևեր (տե՛ս ճարտասանական զեղչում և խոհականություն ճարտասանական ձևերը՝ «Ձևեր» վերնագրի տակ)։

Բայական անդեմ նախադասությունները ժողովրդական խոսքին խորթ՝ գրական երևույթ են։ Այսպիսի նախադասությունները բաղկացած են բայի անորոշ (հազվադեպ՝ նաև հարակատար) դերբայից, որը կարող է ունենալ լրացումներ ևս։ Բայական անդեմ նախադասությամբ կարելի է արտահայտել հրաման։ Օրինակ.

— Լռե՛լ,— գոռաց սպան։ (Շիրվանզադե)

Կարելի է արտահայտել տարակուսանք։ Օրինակ.

— Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ, ո՞րն է բարվոքը։ (Շիրվանզադե)

Բայական անդեմ նախադասությամբ կարելի է արտահայտել նաև վճիռ, հաստատ որոշում, որ միշտ խառն է լինում ըստ երևույթին չիրականանալի թվացող ցանկության հետ։ Օրինակ.

Ապրել, ապրել, այնպես ապրել,
Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ
ծանրությունը։
Ապրել, ապրել, այնպես ապրել,

Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական
մանրությունը։ (Պ. Սևակ)

Ընդհանրապես բայական անդեմ նախադասության արտահայտած մտքի երանգը շատ մոտ է եզակի երկրորդ դեմքով միադիմի բայերով կազմված անենթակա նախադասությունների մտքի երանգին։ Այդ ցույց տանք հետևյալ օրինակով.

Անհարմար է բոբիկ քայլել,
Այս կոշիկն էլ շատ է նեղում։
Ինչպե՞ս քայլել առանց ուղու,
Այս ճամփան էլ շատ է շեղում։
Դուփել տեղո՞ւմ։ *Բայց դրանից*
Ո՛չ կոշիկդ կլայնանա,
Ո՛չ էլ ցավը կմեղմանա...
Ցա՜վն է հաճախ առաջ մղում։ (Պ. Սևակ)

Այստեղ «Ինչպե՞ս քայլել առանց ուղու» *մտքի զուգահեռն է մի կողմից* «Ինչպես քայլես առանց ուղու» *անենթակա նախադասությունը, մյուս կողմից՝* «Ինչպե՞ս քայլեմ առանց ուղու» *երկկազմ նախադասությունը։ Նույնը վերաբերում է* «Դուփել տեղո՞ւմ» *նախադասությանը։ Անորոշ դերբայով բայական անդեմ նախադասությունը, որ նոր երևույթ է մեր լեզվում՝ արդյունք ռուսերենի ազդեցության, իբրև զուգահեռ արտահայտամիջոց՝ անշուշտ այն տարրերից է, որոնք մեծացնում են մեր լեզվի արտահայտման հնարավորությունները՝ դառնալով սոսկ գեղարվեստական խոսքի ոճի հարստացման աղբյուր։*

Բայական անդեմ նախադասությամբ կարելի է արտահայտել վճռականություն չդարձած ցանկություն, որ մոտ է ըղձականի նշանակությանը (այսպես է Վ. Տերյանի «Մոռանա՜լ, մոռանա՜լ ամեն ինչ» ոտանավորը), կարգադրություն, պահանջ, որ հաճախ ենք հանդիպում արձանագրություններում (այսպես է, օրինակ Ն. Զարյանի «Ռուշանի քարափից» 212—213 էջերում բերված հատվածում)։

Եթե բայական անդեմ նախադասությունների մեր բերած կառույցները արդեն դարձել են հարազատ, ապա կան կառույցներ էլ, որոնք խորթ են մեր լեզվի ոգուն, և չենք կարծում, որ դրանք երբևէ մերվեն մեր լեզվին։ Այսպիսի կառույցներ են, օրինակ, Պ. Սևակի հետևյալ կարգի բայական անդեմ նախադասությունները, որոնց մեջ անդեմ բայը նաև երկրորդական նախադասության գերադաս անդամ է.

ա. Ա՜յ թե ճանաչել,
Ա՜յ թե իմանալ ընդերքն ու հողը,
Բայց ոչ թե ինչ-որ երկրաբանի պես...
...Ա՜յ թե ճանաչել ընդերքն ու հողը,
Ինչպես, երևի, հողն են ճանաչում
Լոկ արմատները։

բ. Ա՜խ, թե երգելիս
Ջրեգալ, *ինչպես բահը ջրտուքի,*
Ինչպես մանգաղը ցորենի արտում,
Դղրդալ, *ինչպես ջաղացի ջրտուն,*
Եվ լռել, ինչպես ստվերը շոգին։
...Ա՜խ, եթե գտնել
Այսպես երգելու դյուրին հնարը...
...Իսկ թե տրորվել՝
Ավազի նման,
Եվ ոչ թե վազի...
Եթե գալարվել՝
ոչ թե օձի պես,
այլ շեկ բոցի պես։

Որքանով էլ որ խորթ ու օտար, այնուամենայնիվ իբրև արտահայտման նոր միջոցներ, սրանք ոչ միայն մեզ հնարավորություն են տալիս խոսքը դարձնել բազմազան, այլև թարմություն են բերում խոսք, հետաքրքրություն առաջ բերում ասածի նկատմամբ նաև խոսքի ձևով։

Բառ նախադասություն

Միակազմ նախադասությունների երրորդ տեսակը, որ բացառապես կիրառություն ունի միայն տրամախոսության մեջ, բառ նախադասություններն են՝ այո *և* ոչ *գրական և* հա *ու* չէ՝ *ժողովրդական։ Վերջիններս ժողովրդական ծագում ունենալու պատճառով հարմար են գործածվելու հասարակ ոճերում, ուստի հարմար չեն պաշտոնական, գիտական, հրապարակախոսական բնույթի խոսքերին։*

Բառ նախադասությունները կարճ լինելով հանդերձ՝ բավական մեծ դեր ունեն խոսքում։ Սրանցից մեկն արտահայտելով հաստատում, իսկ մյուսը՝ ժխտում, խոսքի մեջ հանդես են գալիս շատ կարևոր գործառությամբ. դրանք կարող են տրամա-

խոսության (երկխոսության) մեջ գործածվել ոչ միայն նախադասության անդամի, կապակցության, այլև ցանկացած մտքի ու մտքերի կապակցությունների փոխարեն։ Այս իմաստով այո (հա) և ոչ (չէ) բառերը խոսքի մեջ ունեցած իրենց իրադրական բնույթով նման են դերանուններին, քանի որ ամեն մի ցանկացած պահի նրանց մեջ կարող է դրվել ցանկացած ամեն մի իմաստ ու բովանդակություն։ Հենց սրա մեջ է բառ նախադասությունների ոճական արժեքը, բառեր, որոնց օգնությամբ խոսքը դարձնում ենք համառոտ, խուսափում ավելորդ կրկնություններից, խոսքին հաղորդում ենք կտրականություն, վճռականություն, դրանց միջոցով արտահայտում զանազան վերաբերմունքներ։

Սրան հակառակ, երբ բառ նախադասությունների փոխարեն խոսքում գործածում ենք երկկազմ նախադասություններ, առաջանում է հասարակ ոճ, ինչպես՝

— Դու է՞լ ես գնում Երևան։
— Ես էլ եմ գնում Երևան։
— Շա՞տ եք մնալու այնտեղ։
— Շատ ենք մնալու այնտեղ։
— Ինչո՞վ եք գնում։
— Ավտոբուսով ենք գնում։

ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համառոտ և ընդարձակ նախադասություններ

Հաղորդակցումը, մտքերի հաղորդումը, պատումը, նկարագրությունը, վերլուծությունը հիմնականում կատարվում է ընդարձակ նախադասությունների միջոցով։ Համառոտ նախադասությունները հարմար են հարցնելու, այլև մտքերը արագ հաղորդելու համար, այսինքն՝ զրույցի ու վեճի դեպքերում, բայց անհնար է թեկուզ և մի քանի կապակցված մտքեր արտահայտել միայն համառոտ նախադասություններով։ Եթե նույնիսկ նախօրոք պատրաստենք այսպիսի նախադասություններով կապակցված խոսք, այնուամենայնիվ, այն դժվար կլինի արտասանել, քանի որ հնչերանգում առաջ կգա կտրտվածություն։

Համառոտ նախադասությունները այդ պատճառով էլ հանդես են գալիս ընդարձակների հետ, առավելապես տրամախոսության մեջ, ընդհանրապես կազմելով խոսքում շնչին տոկոս։

Նախադասություններն ըստ եղանակավորության

Արդեն ձևաբանության բաժնում ասել ենք, որ մարդու բանական գործունեությունը տրամաբանական-հոգեբանական երեք ոլորտ է ընդգրկում՝ մտածողությունը, հույզերն ու զգացումները և կամքը։ Նախադասությունները կոչված են արտահայտելու մեր և՛ մտածողությունը, և՛ հույզերն ու զգացումները, և՛ կամքը։ Նախադասությունները բաշխվում են այս երեք բնագավառների վրա, որով և տարբերակվում են ըստ եղանակավորության։ Հետևաբար գոյություն ունի նախադասությունների երեք կարգի եղանակավորություններ։ Մտածողության գործունեությունն արտահայտվում է պատմողական նախադասություններով և սրանց մասին արվող հարցումով։ Ուստի պատմողական և հարցական նախադասությունները կազմում են դատողական խոսքը։ Մեր հույզերն ու զգայություններն արտահայտվում են բացականչական նախադասություններով, իսկ կամքը՝ հրամայական նախադասություններով։

Պատմողական նախադասություն

Պատմողական նախադասություններով է տեղի ունենում մտքերի հաղորդումը, հաղորդակցումը և ընդհանրապես հաղորդակցությունը։ Պատմողական նախադասություններով են գրվում գեղարվեստական, գիտական, պատմական, փիլիսոփայական, հրապարակախոսական երկերը, մի խոսքով՝ մտքի դատողական գործունեությունը դրսևորվում է պատմողական նախադասություններով։

Պատմողական նախադասություններով են կատարվում մրցահանգումները, նրանք են դառնում միջոց էվրիստիկական մտածողության համար։ Պատմողական նախադասության համեմատ մյուս եղանակավորություններով նախադասությունները չնչին տոկոս են կազմում։

Այսպիսի նախադասությունը տրված հարցի կամ ներքին հարցման պատասխանն է, այն միշտ ենթադրում է հարց։

Պատմողական նախադասությունը կազմվում է բայի բոլոր եղանակաձևերով, բացի հրամայականից։ Հարցում նույնպես կարելի է արտահայտել բոլոր եղանակաձևերով, բացի հրամայականից։

Հարցական նախադասություն

Հարցական նախադասությունների միջոցով ոչ միայն հարց ենք տալիս ցանկացած բանն իմանալու համար, այլև նրանով կարելի է արտահայտել զարմանք, երկընտրանք, նաև սովորական մտքեր, ինչպես որ արտահայտում ենք պատմողական նախադասությամբ։ Այսպիսի հարցումը, որ կոչվում է ճարտասանական հարց, միտքն արտահայտում է հույզերի ու զգացումների հետ խառն։ Այն սովորական հարցում չէ. ինքը՝ հարցումը իր մեջ պարունակում է հարցի պատասխանը, և եթե հարցումն արտահայտվել է բայի ժխտական ձևով, ապա արտահայտված միտքը հաստատական իմաստ ունի, իսկ եթե հաստատական ձևով է արտահայտված, ապա միտքը ժխտվում է (տե՛ս այս մասին հաջորդ գլխում)։ Ճարտասանական հարցը բանակռվի, վեճի ու բանավեճի ժամանակ կարևոր գործառություն է ստանում. այն խոսքը դարձնում է հուզական, հեգնական, մի բան, որի միջոցով խոսողը նվաստացնում է իր խոսակցին, նրան վիրավորանք ու բարոյական հարված հասցնում։ Բավական է, որ մեկը թշնամաբար է տրամադրված, խոսքի մեջ անմիջապես անցնում է ճարտասանական հարցման կամ ճարտասանական բացականչության։ Օրինակ, եթե թշնամաբար տրամադրված մեկին հարցնես՝ Երեկ դո՞ւ էլ նիր գնացել, *փոխանակ պատասխանելու՝ «այո» կամ* «այո, երեկ ես էլ էի գնացել». «այո, գնացել էի», «գնացել էի», *կպատասխանի՝* բա չէի՞ գնացել, չէ՛, չէի գնացել *(հեգնական) և այլն, որով մտքի հաստատման հետ միաժամանակ ընդգծված ձևով արտահայտած կլինի նաև իր անբարյացակամությունը, ոչ բարեկամական վերաբերմունքը հարց տվողի նկատմամբ։*

Այն պատճառով, որ ճարտասանական հարցը միջոց է միտք, դատողություն արտահայտելու համար, հեշտությամբ հյուսվում է պատմողական նախադասությանը։ Օրինակ.

Ո՞վ է իմացել էսպես հրաշք բան։
Էլ ի՞նչ թագավոր կամ էլ ի՞նչ իշխան,
Որ կռիվ չանի, ուրիշին չտիրի,
Մարդ չկոտորի, երկիր չավերի... (Հ. Թումանյան)

Սովորական հարցումը ևս կարող է խոր հույզ արտահայտել, հատկապես այն դեպքում, երբ հարց տվողը բացադարձության կամ այլ պատճառներով պատասխան չի սպասում։

խոր հուզականություն կա, օրինակ, Մարոյի մոր (Հ. Թումանյանի «Մարո» պոեմում) ողբում, որտեղ հարցումը բացադարձություն է։ Խոր հուզմունք կա Համբոյի խոսքի մեջ հետևյալ հատվածում.

— Էդ ի՞նչ ես էլել, Դիքոր ջան,— մղկտալով վրա ընկավ Համբոն։

— Էստեղ եմ, Դիքոր ջան, նանը ղարգել ա, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... Միկիչն ու Ջանին հրեն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում, ի՞նչ ես ասում, դե խոսա է, Դիքոր ջան...

Հարցական նախադասությունը մենախոսության մեջ, ներքին խոսքում և մտորումներում կարող է արտահայտել հոգեկան ծանր ապրումներ և տվայտանքներ։ Ահա մի օրինակ Շիրվանզադեի «Արամբի» վեպից.

Ծերունին բռնակալ է։

— Բռնակալ է, բայց ի՞նձ ինչ... գոչեց հանկարծ Ռոստոմյանը, ծանրացած գլուխը բարձի վրայից բարձրացնելով և աջ ձեռը ճակատին դնելով։

Եվ ճշմարիտ, նա ո՞վ է, ի՞նչ իրավունքով է դատապարտում այդ ծերունուն, և ո՞ւմ պատճառով։ Մի հասարակ ծանոթի, մի դրացի կնոջ պատճառով, որի հետ ընդամենը երկու ամիս չկա, որ ծանոթացել է։ Մի դրացի կի՞ն, մի հասարակ ծանո՞թ։ Այդպե՞ս է, արդյոք, ճի՞շտ է, որ Վարվառեն նրա համար սրանից ավելի մեծ և խորհրդավոր նշանակություն չունի։ Իսկ այն երկար խոսակցությունները, ախորժելի վիճաբանությունները, իսկ նրա իմաստալի հայացքները, ժպիտները, հառաչանքները։

Մտածողության ժողովրդական ձև է հա և չէ բառերի գործածությունը հարցական նախադասությունը ճարտասանական հարցման վերածելու նպատակով։ Օրինակ.

— Դուք լռում եք, հա՞,— շարունակեց Հեղինեն։ Լռում եք, որովհետև հաշիվներիդ չի գալիս, որ խոսեք, չէ՞։ Դուք ստիպված եք չտեսնելուն տալ այս զազրելի տիպը, որովհետև ձեր կուսակցության է պատկանում, չէ՞... (Նար-Դոս)

Բացականչական նախադասություն

Բացականչական նախադասությունն արտահայտում է խոսողի հույզն ու զգացումը, այդ պատճառով էլ այն դատողա-

կան խոսք չի կազմում, հարցումի պատասխան չէ և ինքն էլ հարցման վերածվել չի կարող։ Օրինակ.

Ափսո՜ս, Անուշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու յարին,
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչերին... (Հ. Թումանյան)

Բացականչական նախադասության կառուցվածքում կարևոր դեր ունեն ձայնարկությունները և ըղձական եղանակի բայաձևերը, որոնցով արտահայտվում են զանազան ցանկություններ ու զգացմունքներ՝ կոչ, զարմանք, հիացմունք, օրհնանք, մաղթանք, վրդովմունք, անեծք, հայհոյանք և այլն։

Հրամայական նախադասություն

Հրամայական նախադասությունը կոչված է արտահայտելու մարդու կամքը, որը դրսևորվում է իբրև հրաման, կարդադրություն, պահանջ, կոչ, հորդոր և այլն։ Հրամայական նախադասությունը ձևավորվում է հրամայական եղանակի բայաձևով, սակայն հրամանը, կարգադրությունը, պահանջը և այլն կարող են արտահայտվել նաև կամային բառերով ու լեզվական այլ միջոցներով։ Ինչպես բացականչական, այնպես էլ հրամայական նախադասության ձևավորման մեջ կարևոր դեր է խաղում հնչերանգը։ Հնչերանգից է կախված՝ հրամանը կարական պահանջ է, թե ցանկություն կամ խնդրանք։ Քանի որ հարցական, բացականչական և հրամայական նախադասություններն արտահայտում են մարդու հուզական աշխարհը, այդ պատճառով էլ դրանք խոսքն ավելի հուզական դարձնելու պահանջի թելադրանքով երբեմն հանդես են գալիս միասնաբար, ինչպես այդ տեսնում ենք հետևյալ հատվածում.

Բերում են, հրե՜ն,
Ամա՜ն մեր տան դեմ...
Վե՛ր դրեք, վրեն
Հյուսերս քանդեմ...

Ես էլ եմ գալի՜ս,
Էդ ո՞ւր եք տանում...
Ինձ էլ թաղեցեք
Իր գերեզմանում։ (Հ. Թումանյան)

Հաստատական և ժխտական նախադասություններ

Յուրաքանչյուր ստորոգում, որ նախադասության ձևավորման պայման է, միաժամանակ արտահայտում է կա՛մ հաս-

տատում, կա՛մ ժխտում[33]։ Հաստատական նախադասության ստորոգյալն արտահայտված է լինում բայի հաստատական, իսկ ժխտական նախադասության ստորոգյալը՝ ժխտական ձևով, որը ձևավորվում է չ, ոչ և մի մասնիկներով։

Հաստատական նախադասություններն անհամեմատ մեծ հաճախականություն ունեն խոսքում՝ անկախ նրա տեսակից։ Հաստատումն ու ժխտումը հասկացական կարգ են, այդ պատճառով էլ միշտ չէ, որ ամեն մի հաստատական նախադասություն մտքի հաստատում է նշանակում, և ամեն մի ժխտական նախադասություն՝ մտքի ժխտում։ Այսպես, հեգնական և ճարտասանական հարց արտահայտող նախադասություններում հաստատական նախադասությամբ արտահայտվում է ժխտում, իսկ ժխտական նախադասությամբ՝ հաստատում։ Օրինակ.

Աղջի՛, սևասիրտ, քու ահը կտրի,
Աղջիկը մենակ ձորը կմտնի՞...

Ինձ մի՛ սպանիր, ղամեդ տար հեռու,
Քո քույրը չե՞մ ես, իմ Մոսին չե՞ս դու...
(Հ. Թումանյան)

Բացի դրանից, կան շարահյուսական կառույցներ, որոնց մեջ թեև բայ-ստորոգյալը հաստատական ձև է ունենում, սակայն նախադասությունն արտահայտում է ժխտում։ Այդպես է լինում, երբ

ա. Բաժանում ճարտասանական ձևում ոչ մասնիկով ժխտվում են նախադասության ենթակաները, ստորոգյալն ունենում է հաստատական ձև, իսկ նախադասությունը՝ ժխտական բովանդակություն։ Օրինակ.

Ո՛չ շուն է հաչում, ո՛չ ճճին երգում,
Գորտն էլ է լռել, էլ չի կռկռում։ (Ղ. Աղայան)

բ. Ոչ մասնիկով ժխտվում են ստորոգյալի լրացումները, ստորոգյալն ունենում է հաստատական բայաձև, իսկ նախադասությունը՝ ժխտական իմաստ, ինչպես՝

---

[33] Ժխտական ձևով հազվադեպ են կազմվում ասվանական ասղեմ նախադասություններ։ Այդ լինում է բազմալծության ճարտասանական ձևում, ինչպես Վ. Տերյանի հետևյալ տողերում է.

Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ սգավոր,
Հեռացի՛ր. մոռացի՛ր ինձ հավետ։

Քայլում եմ մենակ անտառի խորքում,
Դեղին տերևը թափվում է վերաս,
Ո՛չ վիշտ եմ սգում, ո՛չ սեր եմ երգում,
Իմ հոգում չկա ո՛չ աստղ, ո՛չ երազ։

(Ա. Իսահակյան)

Հաստատական նախադասությամբ ժխտում կարելի է արտահայտել նաև համեմատությամբ։ Օրինակ՝ Այս այգուց ես այնման օգուտ եմ քաղում, որման որ դու (այսինքն՝ ոչ մի օգուտ չեմ քաղում)։

Ընդհակառակն, կան շարահյուսական կառույցներ էլ, որոնց մեջ բայ-ստորոգյալն արտահայտված է լինում ժխտական ձևով, սակայն նախադասությունն ունենում է հաստատական բովանդակություն։ Այդպես է լինում հետևյալ դեպքերում.

ա. Երբ բայ-ստորոգյալն իր վրա է առնում իր լրացման ժխտումը, ինչպես՝

Ծերունին միայն ժամկոչի դեր չէր կատարում, այլև տիրացություն էր անում։ (Նար-Դոս)

Այդ անսովոր էր, խիստ անբնական, և անտառն ամբողջ իզուր չէր հուզվել։ (Վրթ. Փափազյան)

բ. Երբ բարդ ստորադասական նախադասության կառուցվածքն այնպիսին է, որ գլխավորը ձևականորեն է գլխավոր, նրա ստորոգյալն էլ ձևական բովանդակություն ունի, անկախ բայի նյութական իմաստից հավասար է բոլոր կամ ամեն բառի նշանակությանը և ձևով ժխտական է։ Օրինակ.

Օր չէր պատահում, որ նրանք որևէ բանի մասին չվիճաբանեին միմյանց հետ։ (Նար-Դոս)

Էլ դեղ չմնաց, որ փորը չածեց, էլ հեքիմ չմնաց, որ ն չդիմեց։ (Նար-Դոս)

Ջանիս վրա էլ տեղ չմնաց, որ արինվիկ չարեց, էլ գլխիս վրա մազ չմնաց, որ չպոկեց։ (Նար-Դոս)

Համաշխարհային գրականության մեջ ոչ մի բանաստեղծ չկա, որ շատ կամ քիչ ազդված չլինի իր նախորդներից։ (Հ. Թումանյան)

գ. Երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալներն արտահայտված են բայի ժխտական ձևով, և գլխավորի մեջ կան ստորոգյալի այնման, այնպես, այնտեղ, այնպիսի, ժողովրդական հենց դերանուններով ու սրանց կապակցություններով արտահայտված բայական լրացումներ։ Օրինակ՝

Ես այնպես չսկսեցի և այնպես չվերջացրեցի, որ նա ինձ չհավատար։ (Նար-Դոս)

դ. Երբ պարզ նախադասության բաղադրյալ ստորոգյալի կազմում կա ժխտականով արտահայտված անորոշ դերբայ, ինչպես՝

Ես չէի կարող հաշվի չառնել այդ հանգամանքը։
Իրավունք չունես չզգաստանալու,
Թեկուզ դեռ հատուկ հրահանգ չկա։ (Հ. Սահյան)

Հաստատման և ժխտման տեսակետից յուրահատուկ պատկեր են ներկայացնում ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների անցյալները և սահմանական եղանակի անցյալի ապառնին։ Այս ժամանակաձևերի հաստատականներն արտահայտում են չկատարված, իսկ ժխտականները՝ կատարված գործողությունների գաղափարներ։

Լինելով մտքի արտահայտման լեզվական հակադրական եղանակներ՝ հաստատումը և ժխտումը խոսքը, հատկապես գեղարվեստական խոսքը, դարձնում են բազմազան ու ոչ միօրինակ։ Սակայն պետք է նկատենք, որ ժխտումը, որքանով էլ որ աշխարհը նեգատիվ կողմով ներկայացնելու հիմնական միջոցն է, այնուամենայնիվ գործածության ոլորտով ու հաճախականությամբ զգալիորեն զիջում է հաղորդման հաստատական եղանակին, մանավանդ գիտական խոսքում, որի նպատակն է տալ աշխարհի իրական պատկերն իր իրական երևույթներով ու օրինաչափություններով։

Միավորյալ նախադասություն

Միավորյալությունը նախադասության անդամների բազմակիության արտահայտություն է։ Միավորյալ նախադասությունը շարահյուսական հատուկ կառուցվածք է և կազմում է պարզ ու բարդ նախադասությունների միջակա օղակը։ Այն բարդին առնչվում է նրանով, որ իր մեջ միավորում է երկու և ավելի մտքեր, իսկ պարզին՝ նրանով, որ ձևավորումով նման է բազմակի անդամներով պարզ նախադասությանը։ Նկատի ունենալով ստորոգումների սոսկական քանակը, լեզվաբանների մի մասը ստորոգյալով միավորված նախադասությունները դիտում է պարզ, իսկ ենթականերով միավորվածները՝ բարդ նախադասություններ։ Սակայն քանի որ միավորյալ նախադասությունները լեզվամտածական հատուկ կառույցներ են, ուստի ճիշտ ենք

համարում դրանք պարզ ու բարդ նախադասություններից առանձնացնելը։

Միավորյալ նախադասությունների ոճական արժեքն այն է, որ լինելով մտքերը սեղմ արտահայտելու լեզվական հատուկ կառույց՝ մեծացնում են արտահայտման հնարավորությունները, խոսքը կառուցվածքով դարձնում բազմապիսի, բազմազան և բազմերանգ։

Թե ոճի համար ինչ նշանակություն կարող է ունենալ միևնույն մտքերի արտահայտումը պարզ, բարդ և միավորյալ նախադասություններով, ցույց տանք Հ. Թումանյանի «Անուշից» վերցրած հետևյալ հատվածը համապատասխան պարզ, բարդ և միավորյալ նախադասությունների հետ համեմատելու օրինակով.

Գարունը եկավ, հավքերը եկան, Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան...	(Բարդ նախադասություն՝ կազմված երկու պարզից և մեկ միավորյալից)
Գարունը եկավ։ Հավքերը եկան։ Սարերը ծաղիկներ հագան։ Ձորերը ծաղիկներ հագան։	(Անկախ չորս նախադասություններ)
Գարունը եկավ, հավքերը եկան, Սարերը ծաղիկներ հագան, Ձորերը ծաղիկներ հագան։	(Բարդ նախադասություն՝ կազմված չորս նախադասություններից)
Գարունը և հավքերը եկան, Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան։	(Բարդ նախադասություն՝ կազմված երկու միավորյալներից)

Այս և հնարավոր մյուս ձևափոխումները ցույց են տալիս, որ թեև միևնույն մտքերն են արտահայտված, սակայն տարբեր են դրանք ոճով. յուրաքանչյուր կառուցվածք համապատասխանում է հոգեբանական այս կամ այն լարվածությանը, շարվածքին ու ուղղվածությանը և խոսքի մի տրամադրություն է ստեղծում։ Միայն բարդ նախադասություններից կազմված խոսքը սովորաբար լինում է հանդիսավոր կամ վերամբարձ, երբեմն ծանրաշունչ, դժվար ընկալելի կամ ծանրալուր։ Միայն պարզ նախադասություններով կազմված խոսքը ունենում է թեթև շունչ, սակայն այն զուրկ է լինում հանդիսավորությունից։ Այսպիսի կառուցվածք ունենում են առտնին խոսքերը, իսկ գրավոր լեզվում՝

ընդհատավոր ոճը։ Պարզ, բարդ և միավորյալ նախադասությունների բարեխառնությունն առավել հարմար է ոչ միայն սովորական, այլև փարթամ ու ծաղկուն ոճերին։

Բարդ նախադասություն

Մտածությունն արտահայտում ենք տրամաբանորեն միմյանց կապված, բայց քերականորեն անկախ պարզ, բարդ և միավորյալ նախադասություններով։ Նար-Դոսի «Մինաս Փափախչյան» վերնագրով պատմվածքի հետևյալ հատվածի մտքերը ծավալվում են քերականորեն անկախ նախադասություններով, որոնցից 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ նախադասությունները պարզ են, 3-րդը՝ միավորյալ, իսկ 5-րդ, 7-րդ և 8-րդ նախադասությունները՝ բարդ (վերջինը ձևափոխության ենք ենթարկել).

(1) Խաղաղ երեկո էր։ (2) Մարիսյանն իր վերջին աշխատանքն էր կատարում այգում և փեթականոցում։ (3) Ես նստած էի պատշգամբում և գիրք էի կարդում։ (4) Ներքևը հաստաբուն ու լայնասփյուռ ընկուզենու տակ փոքրիկ, կողքը ջարդված հեշտաեռը ժանգոտ խողովակը գլխին ցցած՝ վատ այրված ածուխի և նավթի հոտած ծուխ էր արձակում։ (5) Արևը նոր էր մայր մտնում. երեկոյի զովը դեռ զգալ չէր տալիս իրեն։ (6) Շուրջը կատարյալ հանգստություն էր տիրում։ (7) Գյուղը դեռ չէր վերադարձել դաշտերից. հնձի ամենաեռուն ժամանակն էր։ (8) Այգու պահապան գամփռը շունը, որ նստել էր ընկուզենու տակ չորեքթաթ, իր ահագին խելացի աչքերով նայում էր ինձ։

Բարդ նախադասությունները ձևավորվում են սկզբունքորեն տարբեր երկու եղանակներով՝ համադասությամբ և ստորադասությամբ։ Համադասությունը միջոց է մտքերը ծավալելու համար, այսինքն՝ ծառայում է խոսք կազմելու նպատակին, այնինչ ստորադասությունը կոչված է նախադասությունը խորքով ծավալելու խնդրին, այսինքն՝ երկրորդական նախադասությունը գլխավոր նախադասության որևէ անդամը պարզաբանում, ճշտում է կամ պարզապես բովանդակավորում է ձևական կամ զեղչված անդամը, ուստի և չի ծառայում խոսքի ծավալման նպատակին։ Այդ երևում է վերը բերված օրինակից, որտեղ որ

նստել էր ընկուզենու տակ չորեքթաք երկրորդական նախադասությունը չի ծառայում խոսքի մեջ մտքերի ծավալման գործին։ Ահա այս պատճառով էլ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունները խոսքի համակարգում ունեն ոճական միանգամայն տարբեր գործառություններ։

Բարդ համադասական նախադասության կառույցն ավելի շատ ընդհանրություններ ունի պարզ ու միավորյալ նախադասությունների կառույցների հետ, քան բարդ ստորադասականը, այդ պատճառով էլ դրանց նման խոսք է բերում ոճի պարզություն ու թեթևություն։ Այն միջոց է նկարագրությունների համար։ Դրանով է բացատրվում բարդ համադասական նախադասությունների առատությունը ինչպես առօրյա խոսակցական ոճում, այնպես էլ գեղարվեստական խոսքում, հատկապես պոեզիայում։

Սրան հակառակ բարդ ստորադասական նախադասությունը, քանի որ ծառայում է հասկացությունների (և ոչ մտքերի) ծավալման գործընթացին և նախադասությունը ծավալում է խորքով, առավել հանդես է գալիս դատողական բնույթի խոսքերում։ Գեղարվեստական խոսքում (նաև հրապարակախոսության մեջ) այն միջոց է պարբերույթ կազմելու համար, որով խոսքին տրվում է հուզականության շեշտ ու հանդիսավորություն։ Բարդ ստորադասական նախադասությունները նման են դերբայական և անվանական կապակցություններով պարզ նախադասություններին, որոնց մեջ այս կապակցությունները ևս ծառայում են հասկացությունները ծավալելու խնդրին, միտքը դարձնում են հաղորդատարողունակ, համառոտ ու բազմաբովանդակ, սակայն դժվար ընկալելի, դժվարալուր և այս պատճառով քիչ պիտանի ինչպես գեղարվեստական խոսքի, այնպես էլ առօրյա հաղորդակցման ոճին։

Այստեղից հետևում է, որ ոճի թեթևության, ինչպես և բանաստեղծականության համար կարևոր գործոն է համադասական կառույցը, այնինչ ստորադասականը, որ առավել գրավոր ավանդույթի արտահայտություն է, խոսքին տալիս է կշիռ, հանդիսավորություն և լրջություն։ Որ այսպես է, դրանում կարելի է համոզվել՝ վերցնելով միայն Բաֆֆու «Սամվել» վեպի օրինակը։ Այս երկի լեզվի բանաստեղծականության պայմաններից մեկն էլ այն է, որ նրա մեջ զգալի տեղ ունեն համադասական կառույցները։

Բարդ ստորադասական նախադասության ոճական առանձնահատկություններն ավելի են խտացված ինչպես ենթաստորադասությամբ ծավալված, այնպես էլ բազմաբարդությամբ խճողված նախադասություններում։ Այսպիսի նախադասությունները ևս առավել գրավոր ավանդույթի արտահայտություն են և հատուկ են առաջին հերթին գիտական ոճին։

Ընդհանրապես եվրոպական, ռուս նաև հայ գրականության մեջ դեռևս անցյալ դարի կեսերից հետո նկատվում է միտում նախադասությունների ծավալման և կառուցվածքի բարդության ուղղությամբ, թեև անհատ որոշ հեղինակներ գիտական խոսքում մեզ տալիս են «երկարաբանության» և մտքերը բարդության մի քանի աստիճաններով խճողելու օրինակներ դեռևս ավելի վաղ ժամանակներից։ Այսպես, օրինակ, Խաչատուր Էրզրումեցին (17—18-րդ դարեր) տալիս է երկար նախադասությունների բազմաթիվ օրինակներ, իսկ Միք. Սալլանթյանը՝ (19-րդ դարի առաջին կես) հայ գրավոր խոսքում երբևիցե գործածված ամենաերկար նախադասությունը՝ կազմված 375 բառից։ Հայ գեղարվեստական գրականության մեջ բազմաբաղադրիչ ու բազմաբարդ շարահյուսական կառույցների են դիմել ամենատարբեր ոճերի հեղինակներ՝ Աբովյանը, Մուրացանը, Ստ. Զորյանը (հատկապես «Պապ թագավորը» վեպում) և ուրիշներ։ Ռուս քննադատությունը ժամանակին դիտողություն է արել Լև Տոլստոյին նախադասությունների երկարության համար, սակայն այս բանում ըստ երևույթին ռեկորդը պատկանում է հայ մեծ բանաստեղծ Նարեկացուն (672 բառ, բան ԿԳ) և ֆրանսիացի նշանավոր գրող Մարսել Պրուստին, որի «Սոդոմ և Գոմոր» գրքում կա մի նախադասություն՝ բաղկացած 814 բառից։

Եթե գեղարվեստական խոսքում սա ընդհանրապես խրախուսելի երևույթ չէ, ապա վարչագործարարական խոսքում երբեմն ճշտությունը և նյութի բովանդակությունը պահանջում են, որ նախադասությունները լինեն բազմաբաղադրիչ և բազմաբարդ։ Այսպիսի խոսքերում (որոշումներ, հայտարարություններ, դեկլարացիաներ, բանաձևեր և այլն) հաճախ ենք հանդիպում գերերկար նախադասությունների։ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 39-րդ նստաշրջանի 1984 թ. դեկտեմբերի 12-ին ընդունած բանաձևի հայերեն թարգմանության մեջ կա 817 բառից բաղկացած մի նախադասություն (տե՛ս «Խորհրդային Հայաստան» օ-

բաթերթի 1984 թ. դեկտեմբերի 15-ի համարը, էջ՝ 3), որը մեզ հայտնի ամենաերկար նախադասությունն է։

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Կան շարահյուսական կառույցներ, որոնք հատուկ են միայն գրական լեզվին, կան կառույցներ էլ, որ հատուկ են միայն ժողովրդախոսակցական լեզվին, և կան այնպիսի շարահյուսական կառույցներ էլ, որոնք հատուկ են միայն այս կամ այն լեզվին, որ կոչվում են հատկաբանություն։

1. Գրական լեզվին հատուկ շարահյուսական կառույցներ

Շարահյուսական մի շարք կառույցներ առավել գործածական են գրական լեզվում և գրավոր խոսքի արտահայտություն են։ Այսպիսի կառույցներից են տրոհվող դերբայական և անվանական կապակցությունները, որոնք համարյա տեղ չունեն ժողովրդական խոսքում։ Ահա լեզվամտածական այդպիսի կառույցներից մի քանիսը։

ա. Գրական լեզվում, հատկապես հեղինակային խոսքում, այդպիսի լեզվամտածական կառույց է անորոշ դերբայի գործիական հոլովով կազմված դերբայական կապակցությունը, որը շարահյուսական այլևայլ գործառություններով է հանդես գալիս (ժամանակի, ձևի, նպատակի պարագաներ և այլն), ինչպես՝

Սկուտեղը հարգանքով դնելով տախտի վրա հյուրերի առաջ, *նա կրկին դուրս գնաց։ (Ս. Զորյան)*

Լսելով իրենց ծանոթ եղանակն ու երգը, *հավաքված դվինցիների հոնքերն ակամա ետ գնացին, դեմքերը պարզվեցին, և նրանց աչքերում առկայծեց վաղուց մարած մի բան։ (Ս. Զորյան)*

Ապա հրամայեց սուրհանդակներ ուղարկել Նախջևան՝ սպարապետին և իշխան Կամսարականին նոր լուրը հայտնելու և նրանց կանչելու... *(Ս. Զորյան)*

Եվ մի առժամ նրանք գնում էին անխոս, ծերունին ցուպին հենվելով, երիտասարդն աչքերը խուփ ու երբեմն գայթելով։ *(Ս. Զորյան)*

Կառքը ճամփու դնելով, *մտանք բակը և մի կողմի վրա թեքված ճռճռան սանդուղքով բարձրացանք մի շատ նեղ պատշգամբ։ (Նար-Դոս)*

Տիկին Մարկոսյանը հետևելով նրան, *առավ աղջկա ձեռքը և տալով Կիրիլ Կարպիչին, հարեց.*

— *Էս էլ քու հարսը։ (Մուրացան)*

Տրոհված այսպիսի կապակցություններով նախադասությունները զուգահեռ կառույցներ են դառնում մի կողմից բարդ ստորադասական և մյուս կողմից միավորյալ նախադասությունների հանդեպ։ Մեր բերած օրինակներից առաջինի իմաստը կարելի է, օրինակ, արտահայտել ինչպես միավորյալ նախադասությամբ (Նա սկուտեղը հարգանքով դրեց տախտի վրա հյուրերի առաջ և կրկին դուրս գնաց), *այնպես էլ բարդ ստորադասական նախադասությամբ* (Երբ սկուտեղը հարգանքով դրեց տախտի վրա հյուրերի առաջ, նա կրկին դուրս գնաց)։

Հետևյալ օրինակներում անորոշի գործիականով դերբայական կապակցությունը կարելի է ասել նույնիսկ պարագայական հարաբերություն էլ չի ցույց տալիս, այլ գործողություն՝ միավորյալ նախադասության արժեքով, ինչպես՝

Մեծ դժվարությամբ Մուշեղին հաջողվեց համոզել թագավորին, որ վերադառնա Դվին, պարսից հետապնդումը թողնելով իրենց։ *(Ս. Զորյան)*

Այստեղ ընդգծված դերբայական դարձվածը հավասար է՝ ...որ վերադառնա Դվին և պարսից հետապնդումը թողնի իրենց։ *Այդպես են նաև հետևյալ օրինակներում ընդգծված դերբայական կապակցությունները.*

— *Զարմանում եմ, որ դաշնամուր չես պահում,— ասաց նա,* աչքերը հեռացնելով ջահից և մաս ածելով ընդարձակ հյուրասենյակի մեջ։ *(Նար-Դոս)*

— *Ա՞յդ ինչ սպառնալիք է,— կանչեց Հեղինեն,* առաջ վազելով, բայց չհամարձակվելով մոտենալ նրան... *(Նար-Դոս)*

բ. Գրական լեզվում տրոհված դերբայական կապակցություն է կազմում նաև հարակատար դերբայը, որը նույնպես հանդես է գալիս շարահյուսական երկու տարբեր գործառություններով (որոշիչ և պարագա) և լեզվամտածական զուգահեռ ձև է դառնում բարդ և միավորյալ նախադասությունների համեմատությամբ։ Օրինակ՝

Ախոռի սուր, անախորժ հոտը, տոգորված ավելի ևս անախորժ ջերմությամբ, *դիպավ նրա քթին։ (Մուրա-*

Շրջապատված երեխաներով ու պարսիկ զինվորներով՝ *գուսանները երգում էին պարսկերեն երգեր։ (Ս. Զորյան*

գ. Գրական լեզվին հատուկ շարահյուսական կառույց են ստեղծում տրոհված անվանական այնպիսի կապակցությունները, որոնց գերադաս անդամը սովորաբար լինում է գործիական հոլովով դրված գոյականը և կամ ածականը։ Ահա մի երկու օրինակ.

Ներս մտավ մի կին՝ միջին տարիքով, սև հագուստով, կարմիր, *ֆրանցիսկյան* դեմքով, *մի սև շալ ձեռքին։ (Նար-Դոս)*

Դա քառասունի մոտ գունատ մարդ էր՝ սև ոլորվող բեղ ու մորուքով և սպիտակ, բարակ ձեռքերով, *որ հազիվ կիսով չափ դուրս էին գալիս նրա հնամաշ կապայի լայն թևքերի միջից։ (Նար-Դոս)*

Երևում էին նաև վրանների շրջագիծը հսկող պահակներ՝ նմանապես զրահավոր ու սպառազեն բայց գրեթե նույնպես լուռ ու անշարժ։ *(Ս. Զորյան)*

դ. Գրական լեզվին հատուկ շարահյուսական կառույցներից մեկն էլ կազմում է ծավալուն նկարագրական բացահայտիչը, որը զուգահեռ է դառնում բարդ ստորադասական նախադասությանը։ Օրինակ.

Սերգեյ Ստեփանիչը, խոշոր արտաքինով, խոշոր բեղերով, *մոտ հիսուն տարեկան մի տղամարդ, սև ատլասի արխալուղով, որի վրա հուրհրատին էր տալիս ժամացույցի հաստ շղթան,— նստած էր մի նոր հսկայական շինության բակում... (Նար-Դոս)*

Զինագործ Ասատուրը,— հնամաշ արխալուղով, կաշե գոտիկով, արբեցողությունից ուռած-կարմրած դեմքով *մոտ* քառասուն *տարեկան մի մարդ, որ ամբողջ թաղում հայտնի էր Հոպոպ մականունով,— երեկոյան... տուն էր գնում։ (Նար-Դոս)*

ե. Գրական լեզվին հատուկ շարահյուսական կառույցներից է նաև գեղարվեստական խոսքում գործածվող այնպիսի բարդ ստորադասական նախադասությունը, որի գլխավոր նախադասությունը միակազմ է։ Օրինակ.

Մեծ ու փարթամ քաղաքի ծայրամասերից մեկը։ Հավիտենական աղբով ծածկված ծուռտիկ-մուռտիկ

փողոցներ, *որոնք նեղլիկ անցքերով գնում խաչաձևվում են իրար կամ դեմ առնում մի պատի՝ կույր մուրացկանի պես։* Իրար վրա թափված, իրար հենված տնակներ, *որոնց խարխուլ լաբիրինթները թվում է թե ամեն րոպե պատրաստ են թափվելու անցորդի գլխին։* Փոքրիկ պատուհաններ՝ կեսը ապակի, կեսը թղթած, փտած դռներ, հողածածկ տափակ կտուրներ, *որոնք ձմեռը տնքում են ձյունի ծանրության տակ, գարնանը ծածկվում փարթամ կանաչով... (Նար-Դոս)*

2. Ժողովրդախոսակցական հայերենին հատուկ շարահյուսական կառույցներ

Կան շարահյուսական կառույցներ էլ, որոնք հատուկ են միայն ժողովրդախոսակցական հայերենին և գործածվելով գեղարվեստական խոսքում՝ բերում են իրենց հետ հասարակ ոճի երանգներ։ Այսպիսի շարահյուսական կառույցներից են զուգադասությունը և շարահյուսական սերտաճումը։

ա. Զուգադասությունը *լեզվամտածական ժողովրդական մի այնպիսի շարահյուսական կառույց է, որը ձևավորվում է առնվազն երկու դիմավոր բայեր մեկ պարզ նախադասության մեջ գործածվելու հետևանքով։ Օրինակ՝* Տեսան չի կարողանում ծառայի, խանութ տարան Գիքորին։ *Ընդգծված բաղադրիչում* տեսան, չի կարողանում *և* ծառայի *դիմավոր բայերը միասնաբար ձևավորում են նախադասությունը իբրև մի պարզ միտք։ Դրան չի խանգարում նույնիսկ այն հանգամանքը, որ այս բայերից առաջինն արտահայտված է հոգնակի թվով և ունի այլ ենթակա։*

Զուգադասությունները բաժանվում են երկու խմբի՝ համապատասխան այն բանի՝ դիմավոր բայերը նույն դեմքն ունեն, այսինքն նո՞ւյն ենթակային են վերաբերում, թե՞ տարբեր են դեմքով, այսինքն՝ տարբեր ենթակաների են վերաբերում։ Հետևյալ օրինակներում զուգադասության մեջ տարբեր են բայերի դեմքերը.

Ձեմ թույլ տա *Սմբատին իմ գլխին* իշխանություն բանեցնի։ *(Շիրվանզադե)*

— *Տղե՛րք,— ասում է,—* ի՞նչ կտաք մտնեմ *մի բաժակ օղի* կոնծեմ։ *(Նար-Դոս)*

— *Դե հերիք է ճղճաս, ա՛յ կնիկ, թե չէ,* մեկ էլ տեսար տվի երկու կես արի *էդ քաշալ գլուխդ։ (Նար-Դոս)*

Ա՛յ վարդ, լսիր աղաչանքիս,
Թույլ տուր թփից քեզ պոկեմ: (Ա. Ծատուրյան)

Զուգադասությունների մյուս խմբում դիմավոր բայերն ունենում են միևնույն դեմքը, այսինքն բայերը վերաբերում են միևնույն ենթակային: Այսպես, օրինակ, ՈՒԶՈՒՄ ԵՄ ԱՍԵՄ, բայց չեմ կարողանում նախադասության մեջ ընդգծված մասում բայի դիմավոր ձևերը միասնաբար մի պարզ միտք են արտահայտում՝ դառնալով ես զեղչված ենթակայի ստորոգյալը: Այսպիսի զուգադասություններում դիմավոր բայերից մեկը, որ իմաստաբանորեն կարևորն է (այստեղ՝ ասեմ), քերականորեն լրացական հարաբերությամբ է կապված մյուսին (այստեղ՝ ուզում եմ՝ ի՞նչ—ասել), այնինչ քերականորեն կարևորը, որ իմաստաբանորեն կարևորը չէ (այստեղ՝ ուզում եմ), եղանակավորության արժեք ունի: Նման զուգադասություններում եղանակավորության դերով են գործածվում սկսնական և մի քանի այլ բայեր՝ սկսել, պատրաստվել, ջանալ, ձգտել, աշխատել, ուզենալ, կարողանալ, գալ, գնալ և այլն: Օրինակ.

Նստած եմ մի օր ու միտք եմ անում,
Միտք եմ անում, մի՞տք, ու չեմ կարենում
Մի հնար գտնեմ՝ ցավերս հոգամ...
Վեր կենամ, ասի, մեկի մոտ գնամ...
(Հ. Թումանյան)

Շապուհը դարձվորել է շիրիմից, գալիս է Հայոց աշխարհի արմատը հանի: (Դ. Դեմիրճյան)

Զուգադասությունը կարող է դիտվել բարդ ստորադասական նախադասությունների այլափոխություն՝ արդյունք շաղկապների զեղչման, մանավանդ որ ժողովուրդն ընդհանրապես խուսափում է շաղկապավոր կառույցներից: Այսպես, օրինակ, գընամ և ասեմ, որպեսզի գա և տանի, որ տա նրան գրական շարահյուսական կառույցի դիմաց ժողովրդախոսակցականը կունենա՝ գնամ ասեմ գա տանի տա նրան, որի մեջ առաջինի համեմատ պակասում են շաղկապները: Հնարավոր է և հակառակ ենթադրությունը: Սակայն այդ չէ կարևորը, այլ այն, որ մեր լեզվում գոյություն ունեն լեզվամտածական զուգահեռ կառույցներ, որոնցից մեկը (գրականը) աչքի է ընկնում ձգձգվածությամբ ու հանդիսավորությամբ, իսկ մյուսը (ժողովրդախոսակցականը) համառոտ է, զեղչական և հասարակ:

Զուգադասություններն ընդհանրապես ժողովրդական լեզ-

վամտածական կառույց լինելու պատճառով խոսք են բերում պարզ ու հասարակ ոճ և նրան տալիս ժողովրդական ոգի։ Խոսքի ժողովրդայնության պահանջով է, անշուշտ, Թումանյանն իր «Գիքորը» մշակելիս ենթադասությունները փոխել զուգադասություններով։ Ահա մի երկու նախադասություն «Գիքորի» 1907 թ. հրատարակությունից՝ 1909 թվականի մշակումով, որտեղ ընդգծված նախադասությունները վերածված են զուգադասությունների։)

1907 թ. օրինակը	1909 թ. մշակումը
Տեսան տանը **չի կարողանում ծառայել,** խանութ տարան Գիքորին... Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմից։ Գիքորն էլ վազեց։ **Աշխատեց** կանգնած ժողովրդի **արանքը մտնել, առաջ անցնել, չկարողացավ**։ Վիզը ձգեց, պծեղների վրա կանգնեց **ու ձգնում էր** անպատճառ **տեսնել,** թե ինչ է կատարվում մեջտեղը։	Տեսան տանը **չի կարողանում ծառայի,** խանութ տարան Գիքորին... Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմից։ Գիքորն էլ վազեց։ **Աշխատեց** կանգնած ժողովրդի **արանքը մտնի, առաջ անցնի,** չկարողացավ։ Վիզը ձգեց **ու ձգնում էր անպատճառ տեսնի,** թե ինչ է կատարվում մեջտեղը։

բ. Շարահյուսական սերտաճում—*Ժողովրդական մտածողությանը հատուկ երևույթ է սերտաճումը։ Նախադասության մեջ իբրև մեկ անդամ միմյանց հետ հաճախ գործածվող և միմյանց հետ իմաստաբանորեն առնչվող բառերի կապակցությունն առնվում է իբրև մեկ գաղափար և միասնաբար էլ ենթարկվում քերականական փոփոխության։ Այսպես, օրինակ.*

— *Ի՞նչ կա քաղաքում, դե՛ պատմիր տեսնեմ,*
Իմանամ, ես էլ ուրիշին ասեմ.
Մեռնող-ապրողից, բանգ ու էժանից,
Կամ նոր դուրս եկած գազեթից, բանից...
— *Է՛հ, աստված սիրես, թո՛ղ դրանց, պապի՛,*
Ես շատ եմ զզվել քաղքից, գազեթից,
Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր or ու կյանքից, *ձեր* ցավ ու դարդից։
(Հ. Թումանյան)

Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կտրվեց ահ ու վախից... *(Հ. Թումանյան)*

Հրապարակի բոլորքը ծառերի տակ նստարանների վրա նստած էին կենտ ու կենտ կանայք, որոնց առջև

խաղում էին նրանց երեխաներն իրենց հատուկ ճիշ ու ծղրտոցով: *(Նար-Դոս)*

Բերված օրինակներում մեռնող և ապրող, թանկ ու էժան, or ու կյանք, ցավ ու դարդ, ճիշ ու ծղրտոց *առնչակից (հականիշ կամ հոմանիշ) գաղափարներ են, որի հետևանքով բառերը սերտաճել, դարձել են նախադասության մեկ անդամ և ձևավորվել քերականական մեկ վերջավորությամբ։ Քանի որ հայ լեզվաբանության մեջ այսպիսի սերտաճումները հանիրավի բառ են համարվում, ուստի անհրաժեշտ ենք գտնում ավելացնել, որ կան նաև այնպիսի սերտաճումներ, որոնք շատ հեռու են բառային-իմաստային միություն դառնալու որևէ հնարավորությունից ու հեռանկարից։ Ահա մեկ օրինակ.*

Ջանձրացե՞ք եք խաղաղ ու հաշտ
Հողագործի or ու կյանքից,
Թե՞ դլվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից:

(Հ. Թումանյան)

Եթե նույնիսկ or ու կյանք *կապակցությունը բարդ բառ համարենք այն հիմունքով, որ կապակցությունը վերաիմաստավորված է, մի բան, որ մենք ճիշտ չենք համարում, ապա* հանդ ու դաշտ, հունձ ու փունջ *և* վար ու ցանք *այս երեք առանձին կապակցություններն անհնար է համարել մեկ հարադրություն, մեկ բարդ բառ։ Այս այն պատճառով, որ ո՛չ իմաստային միություն են, ո՛չ արտասանական ամբողջություն և ո՛չ էլ լեզվում պատրաստի գոյություն ունեցող միավոր։ Ինչպես* հանդ ու դաշտ, հունձ ու փունջ, վար ու ցանք, *այնպես էլ վերը բերված օրինակներում ընդգծված կապակցությունները շարահյուսական սերտաճումով միավորված նախադասության անդամներ են, այս պատճառով էլ միասնաբար են ենթարկվում քերականական ձևափոխության։*

Շարահյուսական սերտաճումը նման է կապակցությունների ածանցմանը և նրա հետ միասին հայերենին հատուկ լեզվական հետաքրքրական իրողություններից է։

3. Հատկաբանություն

Դարերի ընթացքում ժողովուրդն ստեղծում է լեզվամտածական կաղապարներ, որոնք հատուկ են միայն իր լեզվին, և դրանք չունեն ուրիշ, նույնիսկ ցեղակից լեզվով խոսող ժողո-

վուրդները։ Լեզվամտածական այսպիսի կաղապարները կոչվում են հատկաբանություն[34]*։ Յուրաքանչյուր լեզու ունի իր հատկաբանությունները։ Այսպես, ռուսերենն ունի իր հատկաբանությունները, որոնք ռուսերենին հատուկ շարահյուսական կառույցներ են և չկան հայերենում։ Ահա այդպիսի կառույցներից մի երկուսը.*

Слова эти **запали Хосрову в сердце.** /От Ахикара до Джано, М. Л., 1960, стр. 168).

Вдруг в то ущелье, где Уж свернулся, **пал с неба Сокол** с разбитой грудью, **в крови на перьях. (М. Горький,** Песня о соколе).

Вот они, сыны кубинской революции, **готовые с оружием в руках** защищать ее правое дело. («Правда», 20, 4, 1961, стр. 3).

Народ с Петей в середине бросился к балкону. (**Л. Толстой,** Война и мир).

Ընդգծված արտահայտաձևերը իբրև կապակցական կառույց գոյություն չունեն հայերենում. սրանք հատուկ են ռուսերենին։ Հայոց լեզուն էլ ունի իր հատկաբանությունները (մենք ուսումնասիրել ենք շուրջ 400 հատկաբանություն), որոնցից այստեղ ներկայացնում ենք մի քանի կառույց միայն.

ա. Բարդ նախադասություն, որի թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալներն ունեն ժխտական ձև և միասին արտահայտում են որևէ մտքի հաստատում։ Օրինակ,

Մի խոսքով, էլ **բան չմնաց, որ չասացի**։ *(Բաֆֆի)*

էլ **դեղ չմնաց, որ փորը չածեց, էլ ճեֆիմ չմնաց, որին չդիմեց**։ *(Նար-Դոս)*

Որ չէր պատահում, որ *նա վերևից իրենց պատշգամբից դեպի բակը խոնարհված ամբողջ ժամերով* **չկվեր** *այնտեղ՝ ներքևում ապրող կանանց հետ* **և անեծքակոխ չաներ** *նրանց երեխաներին։ (Նար-Դոս)*

բ. Զուգադասական պարզ նախադասություն, որի ժխտականով արտահայտված բայ-ստորոգյալը ունի հաստատական նշանակություն։ Օրինակ,

---

[34] Հատկաբանությունները ևս լեզվական մյուս տարրերի նման ժամանակի ընթացքում իբրև փոխազդեցության արդյունք մի լեզվից կարող են անցնել մի այլ լեզվի։ Հատկաբանությունները լեզվաբանության մեջ ամենևին չեն ուսումնասիրված։

Ի՞նչ երանելի հույսեր ասես չէր խոստանում *այն վայելչագեղ շնորհալի երիտասարդը։ (Ռաֆֆի)*

Ի՞նչ զվարճություններով ասես չէին շրջապատում *նրանք քեզ։ (Մուրացան)*

գ. Կազմությամբ բարդ համադասական, բայց իմաստով բարդ ստորադասական նախադասություն։ Օրինակ,

Մի թույլ շփում բոցի, և նավթամբարը պիտի պայթեր, *օդը ցնդելով քառասուն մարդկային դիակներ։ (Շիրվանզադե)*

Մի երկու ամիս ևս և մենք կթողնենք այս տաճարները, *որոնց հարկերի տակ մեր սրտերում ցանեցին գիտության ու բարվո, ճշմարտի ու դեղեցիկի լավագույն սերմերը,* մի երկու ամիս ևս, և մենք կբաժանվենք իրարից ով գիտե, գուցե հավիտյան։ *(Մուրացան)*

Մի ակնարկ, միայն մի ակնարկ Ընկերության հիմնադիրների, Ընդհանուր ժողովի, թե Վարչության կազմի ցուցակին՝ *ասում եմ՝* միայն մի ակնարկ, և բավական է, *որ ամեն մարդ համոզվի, թե ինչ անորակելի անբարեխղճության են հասցնում գործը էդ անտանելի հակառակորդները իրենց չար ու փոքրիկ կրքերով։ (Հ. Թումանյան)*

դ. Ենթակայի կամ խնդրի շարք բարդ ստորադասական նախադասություն, որ իմաստով համադասական նախադասություններ են։ Օրինակ,

Երկուսի մենամարտը դարձավ ընդհանուր պատերազմ, որի մեջ չէր երևում ո՛վ էր հարձակվում և ո՛վ պաշտպանվում։ Ձեռքեր էին, որ բարձրանում էին և իջնում շրմփոցով, քիթ ու պռունկ էր, որ ջարդվում էր, սուր-սուր եղունգներ էին, որ ցցվում էին մարմինների մեջ, շորեր էին, որ ծվիկ-ծվիկ էին լինում, գլխի փաթաթաններ էին, որ տրորվում էին ոտների տակ, մազեր էին, որ փունջ-փունջ պոկվում էին գլուխներից և ցրիվ գալիս գետնին։ *(Նար-Դոս)*

Եթե այստեղ ձեռքեր էին, որ բարձրանում էին *և իջնում... նշանակում է ձեռք-ձեռքի ետևից բարձրանում էր,* քիթ ու պռունկ էր, որ ջարդվում էր *նշանակում է իրար ետևից քիթ ու պռունկ էին ջարդվում և այլն, այսինքն՝ ենթակաների շարք*

գոյություն ունի, ապա հետևյալ օրինակում նույն կառույցի մեջ գոյություն ունի ուղիղ խնդիրների շարք.

Սատանի կամքով բերքն էլ կատաղեց,
Հաց էր, որ բերին դիզեցին կալում: (Ն. Զարյան)

ե. Հատկանշականության իմաստով համադասական կառույց, որի մեջ հաջորդ նախադասությամբ այնպիսի գործողություն է արտահայտվում, որը հատուկ է առաջինի ենթակային: Օրինակ,

Զենով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դրավ գլխի տակ, ճանգիստ խոմփաց:
(Հ. Թումանյան)

Այ օձ, անօրեն, ես ի՞նչ եմ արել:
Աղջիկ էր, շուզեց, աչք էր, շմտավ:
Դուք եք էսպիսի օրենք հնարել,
Ես կարո՞ղ էի զոռով աղջիկ տալ: (Ն. Զարյան)

զ. Միևնույն խոհականությամբ արտահայտված ներքուստ անհամատեղելի հակադիր մտքեր: Օրինակ,

— Լսո՞ւմ եք, պարոն Սուլյան, այս է աշխարհը, ա՛յ: Փողը տվողը ես, նեղությունից ազատողը ես, անազնիվը ես, էլ աստծու արդարությունը որտե՞ղ մընաց: (Շիրվանզադե)

է. Երկու հակադիր մտքերի համատեղում խոհականությամբ արտահայտված նախադասության մեջ, որից բխում է անմիջապես կատարվող մի այլ գործողություն, օրինակ,

— Զմեռվա ցուրտ օր, մրսած անասուններ. հենց գոմի դռանն են հասնում թե չէ, իսկույն ներս են թափում: (Հ. Թումանյան)

Ամառվա շոգ օր, գազազած ճանճեր, ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի, ճանճերը գալիս են սրա քիթ ու պռնգին վեր գալի, լցվում: (Հ. Թումանյան)

ը. Գործողության անմիջականության արտահայտում բայի ժխտական ձևով, օրինակ,

Գեր դմակը որ չլսեց՝
Գելի բերնի ջուրը վազեց: (Հ. Թումանյան)

Էս շորերը հագին Մոխրոտը որ չի հայտնվում խրնջույֆում, շափաղը պալատի պատերովն է տալիս, հան-

դիսականները մնում են բերանները բաց։ (Հ. Թումանյան)

Թ. Միևնույն բայի հաստատական և ժխտական ձևերով գործողության հնարավոր բոլոր տարբերակների ընդգրկում։ Օրինակ,

Բայց ինչ անում են, ինչ որ չեն անում,
Չեն կարում էլ տուն բերեն Դառնիկին։
(Հ. Թումանյան)

Մենակ Դավիթը, ինչ արին, չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թրին։
(Հ. Թումանյան)

Ժ. Հարցման հաստատում և ժխտում, որտեղ ժխտումը ձևական բնույթ ունի։ Օրինակ,

— Ինչպե՞ս եք, ինչպե՞ս չեք։

— *Ավելի լավ է քո մասին պատմես։* Ի՞նչ ես անում, ի՞նչ չես անում։ *(Նար-Դոս)*

Ժա. Հաստատում և ժխտում, որ միասնաբար երկընտրանք են արտահայտում, օրինակ,

Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս։ Ի՞նչ անի, ի՞նչ չանի։ *(Հ. Թումանյան)*

Ու մնում է խեղճ մարդը շվարած, հուսահատված կանգնած մեջտեղը։ Մի կողմը ընկած արնաշաղախ կինը, մյուս կողմը ծվատված երեխաները։ Չգիտի ինչ անի, ինչ չանի։ *(Հ. Թումանյան)*

Ժբ. Նույն բառի կրկնում այն նպատակով, որ հաջորդ նախադասությամբ մերժվի արդեն առաջ քաշված գաղափարը, ինչպես՝

— *Միտքդ բարի, տիկին, բայց պատերազմ է հիմի, օրե՞նք է, որ ուրախություն անենք։*

— *Պատերազմ է, որ ուրախությունն էլ օրենք է,— պնդեց խոխոռունյաց տիկինը,—* պատերազմ, պատերազմ, պսակ անենք, ուրախանանք։ *(Դ. Դեմիրճյան)*

Նույն ձևով՝

Աղքատ՝ աղքատ, քիթդ սրբի՛ր, էլի աղքատ։
(Ասացվածք)

Ժգ. Այնպիսի գործողություն, որի կատարելը կամ չկատարելը կախված է ենթակայի կամքից, ընդդեմ որի անկարող ենք որևէ բան անել։ Օրինակ՝

Կարգ ու կանոն պահանջելու մտքից մղված՝
Ընդդեմ գոռոզ-անկարգապահ անհատների՝
Ջեմ ստիպի ճնճղուկներին ու ծտերին
Աշնան վերջին չվել հարավ,—
Էհ, ի՞նչ դառավ.
Միտը ես եմ՝ չեմ կամենում... (Պ. Սևակ)

Ներկայացնելով արդի հայերենի հատկաբանությունների շուրջ մեկ երրորդը, ավելացնենք, որ ընդհանրապես հատուկ լինելով այս կամ այն լեզվին՝ անթարգմանելի են։ Դրանք այլ լեզվից թարգմանվելու ժամանակ պետք է փոխադրվեն տվյալ լեզվի շարահյուսական հարազատ կառույցների։ Եվ թեև այդպես, այնուամենայնիվ հատկաբանությունների մի մասը հաճախ ենք տեսնում մի լեզվից մի այլ լեզվի բառացի թարգմանված, որի հետևանքով էլ լեզվում առաջանում են նորանոր շարահյուսական կաղապարներ (այս մասին տե՛ս «Խոսքի թերությունները» վերնագրի տակ)։

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔՈՒՄ

Նախադասության կազմում արտակարգ կարևոր դեր ունի բայի դիմավոր ձևը. նրա վրա է ծանրանում ոչ միայն ենթակային հատկանիշ վերագրելու, հետևաբար և միտք ձևավորելու և մտքի ավարտվածությունը ցույց տալու գործառությունը, այլև նախադասության իմաստային կոնկրետացման կարևոր դերը։ Խոսքից դուրս, նախադասությունն առանձին վերցրած կարող է լինել բազմիմաստ և բազմապլան։ Ո՞ւր ես գնում *նախադասությունը մի պլանով կարող է նշանակել ուր գնալու մասին հարցում, իսկ մի այլ պլանով՝ արգելվում է գնալ, չի կարելի գնալ և այլն։* Սա նախադասության բազմապլանությունն է:

Այդ պատկերը խլեց նրա հանգստությունը: *(Բաֆֆի) Հինգ բառից բաղկացած այս նախադասությունը կարող է լինել հինգ տարբեր հարցումների պատասխաններ, որոնք տարբեր հաղորդումներ են։*

Այդ *պատկերը խլեց նրա հանգստությունը (...ո՞ր պատկերը...)։.*

Այդ պատկերը *խլեց նրա հանգստությունը (...ի՞նչը խլեց...)*

Այդ պատկերը խլեց *նրա հանգստությունը (...պատկերն ի՞նչ արեց...)։*

Այդ պատկերը խլեց նրա հանգստությունը (...ո՞ւմ հանգըստությունը...)։

Այդ պատկերը խլեց նրա հանգստությունը (...խլեց ի՞նչը...)։

Այս տարբեր հաղորդումները բառերի միևնույն շարադասությամբ մենք կարողացանք արտահայտել տրամաբանական շեշտով։ Սա նախադասության բազմիմաստությունն է, որը կարող է արտահայտվել (այսինքն՝ նախադասության իմաստային կոնկրետացումը կարող է տեղի ունենալ) նաև շարադասության փոփոխության միջոցով։ Ինչպես՝

Այդ պատկերը նրա հանգստությունը խլեց։
Նրա հանգստությունը խլեց այդ պատկերը։
Խլեց նրա հանգստությունը այդ պատկերը։
Խլեց այդ պատկերը նրա հանգստությունը։
Նրա հանգստությունը այդ պատկերը խլեց։

Նախադասության անդամները հեշտությամբ կարող են իրենց դիրքերը փոխել, ըստ որում ենթական իր լրացումներով ոչ միայն կարող է լինել ստորոգյալից առաջ, այլև հետ, այլև կարող է ընկնել ստորոգյալի և նրա լրացումների միջև, ինչպես տեսնում ենք ընդգծված՝ 4-րդ և 5-րդ նախադասություններում։ Հայերենն իր հարուստ քերականության շնորհիվ ունի բառերի համեմատաբար ազատ շարադասություն։ Նախադասության անդամների շարադասության ազատությունը թույլ է տալիս նրա մեջ ըստ հաղորդման նպատակի շարադասության այնքան փոփոխություններ կատարել, որքան բառերի քանակի ֆակտորյալն է։ Այսինքն՝ եթե պարզ և միավորյալ նախադասության մեջ ունենք 3 միավոր, ապա հնարավոր է $1\times2\times3=6$ շարադասության փոփոխություններ, եթե ունենք 4 միավոր, ապա կունենանք $1\times2\times3\times4=24$, եթե ունենք 5 միավոր, ապա $1\times2\times3\times4\times5=120$ շարադասական փոփոխություններ և այլն։ Նույն բանը վերաբերում է նաև բարդ նախադասություններին, թեև այստեղ հիշյալ բանաձևն այնպես ազատ չի գործում, ինչպես պարզ ու միավորյալ նախադասությունների համակարգում։

Եվ թեև այսպես, այնուամենայնիվ բայ-ստորոգյալն ավելի ճկուն է և ազատ կարող է գտնվել բոլոր դիրքերում, նույնիսկ ենթակայի և նրա լրացման միջև և առաջ բերել ճարտասանական ձև (տե՛ս «Միջարկում» վերնագիրը)։ Սակայն առավել ճկուն է օժանդակ և հանգույց եմ բայը, որը կարող է հանդես գալ նախադասության բոլոր անդամներից հետո և ցանկացած

անդամին տալ տրամաբանական շեշտ, որով և նախադասությունը կստանա այս կամ այն կոնկրետացումը։ Այսպես, օրինակ,

Բայց ձին դժվարությամբ էր հետևում նրան։ *(Բաֆֆի)*

Այս նախադասության մեջ էր օժանդակ բայի դիրքի պատճառով տրամաբանական շեշտ է կրում դժվարությամբ *բառը, և նախադասության իմաստն էլ հենց ձիու դժարությամբ հետևելն է։ Սակայն այլ հաղորդումներ կունենաք օժանդակ բայի դիրքերի հետևյալ փոփոխությունների դեպքում.*

Բայց ձին էր դժվարությամբ հետևում նրան։
Բայց ձին դժվարությամբ հետևում էր նրան։
Բայց ձին դժվարությամբ նրան էր հետևում։
և Բայց ձին դժվարությամբ նրան հետևում էր։

Եթե նկատի ունենանք դիմավոր բայի դիրքի, տրամաբանական շեշտի և ընդհանրապես շարադասության զանազան փոփոխությունների հետևանքով առաջ եկած հաղորդումների բազմազանությունը՝ միևնույն մտքի արտահայտման առկայությամբ հանդերձ, պետք է ասենք, որ լեզվի արտահայտման հնարավորություններն աներևակայելիորեն հարուստ են, համարյա անըսպառ։ Սրա հետ միաժամանակ և՛ անսպառ և՛ հարուստ են նաև շարահյուսության ընձեռած ոճական հնարավորությունները, որոնց մեջ կարևոր տեղ ունի նախադասության անդամների շարադասությունը։ Նախադասության անդամների շարադասությունը ևս երկանդամ հակադրություն է ներկայացնում՝ սովորական և շրջուն։ Տարբերում ենք գլխավոր և երկրորդական անդամների շարադասության այս երկու եղանակները։

Գլխավոր անդամների շարադասությունը սովորական է, եթե նախ ենթական է, ապա ստորոգյալը։ Այսպես, օրինակ,

Ամրոցում կյանքը արդեն զարթնել էր, ամեն ինչ շարժողության մեջ էր։ Աղավնիները ցած էին իջել աշտարակների բարձրությունից, խումբերով պտտվում էին բակում և սիրաբորբոք տարփանքով քծնվում էին միմյանց շուրջը։ Իշխանական աղախինները, գույնզգույն հագուստներով, ուրախ, զվարթ, կատակներ էին անում միմյանց հետ, ծիծաղում էին և կուտ էին ցրում սիրելի թռչուններին։ (Բաֆֆի)

Գլխավոր անդամների սովորական շարադասությունը համապատասխանում է պատմելու, նկարագրելու, դատողություն-

ներ անելու սովորական եղանակին, այդ պատճառով էլ նույնիսկ այսպես կառուցված բազմաթիվ նախադասությունների կուտակումը որևէ չափով չի խախտում սովորականությունը։

Գլխավոր անդամների շրջուն շարադասության դեպքում նախ լինում է ստորոգյալը՝ իր լրացումներով, ապա ենթական՝ իր լրացումներով։ Օրինակ.

> Այն օրից անցան տարիներ. քարաժայռի անխորտակելի ամրության մեջ գործում էր անխոնջ վարպետի մուրճն ու քերիչը։ Գիշեր և ցերեկ լսելի էր լինում ծանր հարվածների անլռելի ձայնը։ (Ռաֆֆի)

Նկատելի է, որ ենթակայի և ստորոգյալի շրջուն շարադասությունը խոսքի ոճը դարձնում է անսովոր, նրան տալիս բանաստեղծականություն, եթե կա այսպիսի շարադասության կուտակում։ Այդ այն պատճառով, որ նախադաս վիճակում ստորոգյալն ինքն է առնում տրամաբանական շեշտը, ընդգծում գործողության գաղափարը, սակայն առանց ցույց տալու մտքի ավարտը, մինչդեռ սովորական շարադասության դեպքում ստորոգյալն իր լրացումներով ոչ միայն ենթակային հատկանիշ է վերագրում, ոչ միայն միտք է ձևավորում, այլև արտահայտում մտքի ավարտվածությունը։

Ահա այն պատճառով, որ մտքի ավարտվածության հնչերանգը և ստորոգյալով արտահայտված գործողության տրամաբանական շեշտը տարբեր տեղերում են լինում, խոսքը ձեռք է բերում բանաստեղծականություն։ Բանաստեղծականություն մենք տեսնում ենք ոչ միայն չափածո ստեղծագործություններում, այլև արձակ խոսքում։ Հատկապես խոր դրամատիզմով հագեցված ստեղծագործություններում շատ կարևոր է դիմավոր բայ-ստորոգյալի նախադաս դիրքը, քանի որ գործողությունների արագ փոփոխությունները, դրանց կուտակումը, դրանց ընդգծումը տրամաբանական շեշտով՝ համապատասխանում է հոգեկան դրամայի ոգուն։ Ահա թե ինչու Հ. Թումանյանը «Թմկաբերդի առումը» պոեմում իր խոսքը կառուցում է՝ առավել հաճախ դիմելով շրջուն շարադասությանը։

Ահա մի երկու հատվածներ.

> ...Ու միշտ ուրախ հաղթանակով
> Իր ամրոցն է դառնում նա,
> Սպասում է էնտեղ կինը,
> Ջահել կինը սևաչյա։

Խնջույք է սարքել Թմկա տիրուհին,
Յերեկ է արել խավար գիշերը,
Հեղեղի նման հասում է գինին,
Ու քեֆ է անում Ջավախքի տերը։

Ու թնդում է Թմուկ բերդը—
Էն աղմուկից խնդության,
Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով հաղթական։

Նայում է շահը, նրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նայում է շահը անտեր գահույքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը...

Ահա մի հատված էլ Վրթ. Փափազյանի «Լուր-դա-լուրը» արձակ ստեղծագործությունից, որին քնարականություն տվող հանգամանքներից մեկն էլ ստորոգյալի նախադաս դիրքն է։

...Թնդաց սար ու ձոր, շարժվեցին ծառեր, դողացին քարեր։ Հուզվեց չար աղան, խելահեղ Ջալխեն քիչ մընաց թռներ ու ցած գնար, ոչխարի պես ընկներ Հասոյի ոտքերը։

...Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ եղավ Ջալխեն հուսահատությունից։

...Փոխեց Հասոն եղանակը։

...Շարժվեցին ոչխարները, գլորվեցին ձորերը։

Շարժվեց և Հասոն, կ՚ուացավ, տեսավ բացվածքը։

Հասկացավ ամեն ինչ, նայեց աղային։

Զգաց, որ Ջալխեն կորած է իր համար, ինքն էլ աշխարհի համար։

Այս ստեղծագործության մեջ, որը բաղկացած է 123 պարզ ու բարդ նախադասություններից, միայն 39 դեպքում ենթական նախադաս է. 52 նախադասություններում գլխավոր անդամների շարադասությունը շրջուն է, 32 նախադասություններում էլ ենթակա չկա կամ զեղչված է։

Ոչ միայն գլխավոր անդամները միմյանց նկատմամբ, այլև նախադասության երկրորդական անդամներն իրենց լրացյալների նկատմամբ երկու կարգի շարադասությամբ կարող են հանդես գալ՝ նախադաս և հետադաս։

Գոյականի լրացումները՝ հատկացուցիչը և որոշիչը, սովորական շարադասության դեպքում նախադաս են, և սա համապատասխանում է առարկայական մտածողության եղանակին։ Սակայն և՛ հատկացուցիչը, և՛ որոշիչը կարող են դրվել գոյականից հետո, որի հետևանքով խոսքը բանաստեղծականություն է ձեռք բերում։ Այդ տեսնում ենք հենց հետևյալ օրինակներում.

Ձեր օրենքները,—լուծ ու խարազան և անելք մի
ցանց խոլական սարդի,
Եվ որոնց ժահրով թունավորում եք երգը բլբուլի,
անուրջը վարդի։ (Ա. Իսահակյան)

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում։ (Ե. Չարենց)

Ծանոթություն. Բացահայտիչը մենք գոյականի լրացում չենք համարում (տե՛ս մեր «Հայոց լեզու, ուսումնական ձեռնարկ» աշխատությունը, 1976, էջ 219—222), այլ տվյալ գոյականի իմաստն այլ ձևով կրկնող բառ կամ կապակցություն, որը քերականական նույն պաշտոնն է կատարում նախադասության մեջ, ինչ որ իր բացահայտյալը, և ծավալուն լինելու դեպքում դառնում է քերականական ձև՝ քերականական շրջասություն։ Բացահայտիչը միշտ հետադաս դիրք ունի։

Անհամեմատ շարադասությամբ ազատ են բայական լրացումները, թեև այնուամենայնիվ գոյություն ունեն շարադասության որոշակի կանոններ։ Ընդհանրապես խնդիր բոլոր լրացումները բայի նկատմամբ նախադաս են (հմմտ. սարին նայիր, օրացույցից պոկել, գիրք եմ կարդում, մուրճով խփիր)։ Շրջուն շարադասություն ունենալու դեպքում նկատվում է որոշ գրքայնություն, որոշ վերամբարձություն (հմմտ. նայիր սարին, կարդում եմ գիրք, հարվածեց մուրճով և այլն)։

Բայի պարագա լրացումները ևս նույն շարադասությունն ունեն բայի նկատմամբ, ինչ որ խնդիրները, այսինքն՝ դրանք

ևս բայից առաջ են դրվում (հմմտ. տանը նստիր, դաշտով անցավ, մեկ օրում կկարդամ, շատ ուտելուց և շատ խոսելուց մարդ միշտ տուժում է, արագ եկ, պատվով կկատարենք *և այլն)։ Շրջուն շարադասության դեպքում նկատվում է որոշ գրքայնություն ու վերամբարձություն, ի հակադրություն սովորական շարադասության, որը հասարակ ու մտերմիկ ոճ է ստեղծում (հմմտ.* նստիր տանը, անցավ դաշտով, կկարդամ մեկ օրում, տնքում է շատ ուտելուց, եկավ արագ, կկատարենք պատվով *և այլն)։ Այս կանոնից բացառություն է կազմում նպատակի պարագան, որը հակառակ շարադասություն ունի, այսինքն՝ սովորական շարադասությամբ նպատակի պարագան դրվում է բայից հետո, իսկ շրջուն շարադասությամբ դրվում է բայից առաջ (հմմտ.* գնացի փայտի և փայտի գնացի, եկել եմ սովորելու և սովորելու եմ եկել)։ *Նկատենք, որ շրջուն շարադասության դեպքում նպատակի պարագան շեշտ է ստանում. սա ևս հաստատում է, որ նրա սովորական դիրքը բայից հետո գտնվելն է։*

Սովորական և շրջուն շարադասության հակադրություն գոյություն ունի նաև բարդ նախադասությունների համակարգում։ Բարդ համադասական նախադասություններում կազմիչները միմյանց հետ կապված են լինում տրամաբանական կապով, ուստի նախադասությունների հետևառաջությունը պայմանավորված է մտքերի հարաբերությամբ, սակայն մեկնական, մասնական, մակաբերական և սահմանափակող բնույթի միտքկազմիչները ունեն կայուն շարադասություն և միշտ վերջադաս են լինում։

Բարդ ստորադասական նախադասությունը ծագումնաբանորեն պարզ ընդարձակ նախադասության որևէ անդամի (բացառությամբ ստորոգյալի) ծավալումն է երկրորդական նախադասությամբ։ Այն մի բարդ կառույց է, որի երկրորդականը հարաբերում է գլխավոր նախադասության որևէ անդամին, հանդես գալիս այդ անդամի գործառությամբ։ Երկրորդական նախադասությունները գլխավորի նկատմամբ իբրև կանոն միշտ վերջադաս են. բացառություն են կազմում միայն ժամանակի և պայմանի պարագա երկրորդական նախադասությունները, որոնք սովորական շարադասությամբ նախադասվում են բային և բայստորոգյալին։ Այդ կարող ենք ցույց տալ հետևյալ աղյուսակով.

Նախադաս	Վերջադաս
	Ենթակա երկրորդական նախադասություն
	Ստորոգելիական —»—
	Որոշիչ —»—
	Հատկացուցիչ —»—
	Բացահայտիչ —»—
	— —»—
	Ուղիղ խնդիր —»—
	Հանգման անուղղակի խնդիր —»—
	Անջատման —»—
	Միջոցի —»—
	Վերաբերության —»—
	Տեղի պարագա երկրորդական նախադասություն
	Ձևի —»—
	Չափի —»—
	Պատճառի —»—
	Հիմունքի —»—
	Նպատակի —»—
	Զիջական բնույթի պարագա —»—
Ժամանակի պարագա երկրորդական նախադասություն	
պայմանի պարագա —»— —»—	

Այս ընդհանուր կանոնը նշելով, միաժամանակ ասենք, որ երկրորդական նախադասությունների շարադասությունը խառն պատկեր է ներկայացնում՝ կախված այն բանից, թե ինչ կառուցվածք ունի տվյալ բնույթի երկրորդականը, ինչ շաղկապներով կամ հարաբերական բառերով է կազմված, կառույցը ժողովրդակա՞ն է, թե գրական։

Այսպես, օրինակ,

Ինձ թվաց, որ իսկույն հասկացավ, *թե ինչ է կատարվում իմ մեջ։ (Նար-Դոս)*

Այս ընդգծված մասում երկրորդականը վերջադաս է։ Ենթակա երկրորդականները սովորական շարադասությամբ վերջադաս կլինեն բոլոր այն դեպքերում, եթե գլխավորն ունենա այս նախադասության նման կառույց (պարզվեց, որ..., հասկանալի է, որ..., երևում է, որ..., զարմանալի է, որ..., հայտնի

է, որ..., բանից դուրս է գալիս, որ... և այլն)։ Սակայն ենթակա բնույթի երկրորդական նախադասությունը սովորական շարադասությամբ առաջադաս է լինում ով հարաբերական դերանվամբ ենթակա ունեցող հետևյալ կառուցվածքի բարդ նախադասություններում.

Ով ալարի, ոչ դալարի։ (Ասացվածք)
Ով չուստ, նա կուշտ։ (Ասացվածք)
— Ով սուտ ասի, զետինը մտնի... (Հ. Թումանյան)
— Ով քնած եք, արթուն կացեք... (Հ. Թումանյան)
Ով եկել էր գյուղից հեռու—նա թողել էր հողը խոնավ։
(Ե. Չարենց)

Այսպիսի կառույց ունեցող նախադասություններն առավել ժողովրդական խոսքին են հատուկ։

Տեղի պարագա երկրորդական նախադասությունն ընդհանրապես վերջադաս է սովորական շարադասությամբ, սակայն ժողովրդա-խոսակցականում որտեղ բառով կազմված կառույցներում սովորական շարադասությունը նախադաս դիրքն է, ինչպես՝

Որտեղ հաց, այնտեղ կաց։ (Առած)
Որտեղ սիրուն կին կտեսնեմ,
Կնորանան դարդերս։ (Ա. Խսահակյան)

Եթե նկատի չունենանք բացահայտիչ, ստորոգելիական, որոշիչ, մասամբ նաև հատկացուցիչ բնույթի երկրորդական նախադասությունները, ապա պետք է ասենք, որ խնդիր և պարագա բնույթի բոլոր երկրորդական նախադասությունները հանդես են գալիս նաև շրջուն շարադասությամբ, որով և բազմապատկվում են մեր լեզվի արտահայտման հնարավորությունները, այնքանով, որքանով որ երկրորդական նախադասության շարադասության յուրաքանչյուր շրջում ոչ միայն փոխում է հնչերանգությունը, այլև իր համապատասխան երանգն է բերում խոսք՝ մերթ բարձր, գրական ոճի, մերթ էլ ժողովրդականի, հասարակի, մերթ գիտական ոճի, մերթ էլ բանաստեղծականության երանգներ։ Դրանում համոզվելու համար վերցնենք հետևյալ զուգահեռները.

Սովորական շարադասություն	Շրջուն շարադասություն
1. **Երբ քեզ տեսնում եմ,** ուրախանում եմ:	Ուրախանում եմ, **երբ քեզ տեսնում եմ:**
2. Եկել եմ այստեղ, **որ քեզ տեսնեմ:**	**Որպեսզի քեզ տեսնեմ,** եկել եմ այստեղ:
3. Չեմ կարողացել գալ, **որովհետև գյուղ էի գնացել:**	**Որովհետև գյուղ էի գնացել,** չեմ կարողացել գալ:

Առաջին նախադասության մեջ ընդգծված է ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը, որը սովորական շարադասությամբ նախադաս է, և շրջուն շարադասության դեպքում բերում է բարձր ոճի երանգ: Սրան շարադասությամբ հակառակ են 2-րդ (նպատակի) և 3-րդ (պատճառի) երկրորդական նախադասություններով կառույցները, որոնք ևս երկրորդականների սովորական շարադասության դեպքում հասարակ են հընչում, այնինչ շրջուն շարադասության դեպքում՝ բարձր, հանդիսավոր, որ կարող են վերածվել փքունի և ճոռոմի:

Այսպիսին է շարադասությունը պատմողական նախադասություններում: Այսպիսին է նաև հարցական նախադասության մեջ, որ լիովին համապատասխանում է պատմողականին: Սակայն շարադասությունն այլ պատկեր է ներկայացնում հրամայական և բացականչական նախադասություններում: Քանի որ սրանք սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտման հետ են կապված, այդ պատճառով էլ այս տիպի նախադասություններում բայը սովորաբար կա՛մ նախադաս է լինում և կա՛մ անմիջապես հետևում է շեշտվող բառին:

Ոճի տեսակետից մեծ կարևորություն է ներկայացնում օժանդակ բայի շարադասությունը: Բաղադրյալ ժամանակների կազմության մեջ օժանդակ բայն ունի որոշակի դիրք. երբ դերբայն է շեշտ կրում, օժանդակ բայը հաստատական խոնարհման դեպքում միշտ վերջադաս է, իսկ ժխտական խոնարհման դեպքում, այս թվում և պայմանական եղանակի ժխտականը՝ միշտ նախադաս: Բացառություն են կազմում միայն հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակները, որոնք հաստատականի պես հետադաս են:

Բարբառներում և ժողովրդախոսակցականում օժանդակ բայը թե՛ հաստատական և թե՛ ժխտական խոնարհման ժամանակ միշտ վերջադաս է. նույնիսկ պայմանական եղանակի ժխտականն էլ է այսպես կազմվում: Օրինակ՝

— Էդ բանը ես գիդեմ ոչ, աղա, ասում եմ։ (Ս. Զորյան)

— Չէ, ասում եմ, արևս վկա, ասիլ չեմ։ (Ս. Զորյան)

Եվ դեռ ականջումս է նրա հոր ձենը, որ կանչում էր. «Կա ոչ, կա ոչ, այ ոչ ու փուչ, ո՞րտեղից տամ...»։ (Հ. Թումանյան)

Շարադասությունը հզոր միջոց է նախադասության մեջ բառհասկացությանը հատուկ կարևորություն տալու համար։ Նախադասության մեջ բառի համապատասխան տեղադրումը կարող է ինչպես թուլացնել, այնպես էլ մեծացնել նրա ներգործության ուժը, նրան տալ հնչեղություն ու փայլ։

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐ

Կապակցության եղանակներից և տեսակներից յուրաքանչյուրը ոճավորման իր հնարավորություններն ունի։ Այստեղ համառոտակի ներկայացնելու ենք դրանցից առավել կարևորները՝ համաձայնությունն ու խնդրառությունը՝ պարզ նախադասության մեջ, և շարահարությունն ու զոդվածով կապակցությունը, ինչպես և համադասությունն ու ստորադասությունը՝ բարդ նախադասության համակարգում։

1. Կապակցությունը պարզ նախադասության մեջ. Պարզ նախադասության անդամների քերականական կապի երկու եղանակ կա՝ համաձայնությունը և խնդրառությունը։

ա. Համաձայնությունը քերականական կապի տեսակ է, որով արդի գրական հայերենում իրացվում է ենթակայի և ստորոգյալի կապակցումը։ Համաձայնության դեպքում կապակցվող անդամները դրվում են միևնույն քերականական կարգերով։ Գրական լեզվում ենթական և ստորոգյալը դրվում են միևնույն թվով և միևնույն դեմքով, այսինքն՝ նախադասության գլխավոր անդամները համաձայնվում են թվով և դեմքով։ Սա գրական լեզվի համար օրենք է։ Սակայն ժողովրդախոսակցական լեզվում այս կանոնի նկատմամբ հետևողական վերաբերմունք չկա։ Հատկապես հետևյալ մի երկու դեպքերում ուշադրության չի առնվում ենթակայի թիվը, որով խախտվում է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը։

Երբ ստորոգյալը շրջուն շարադասությամբ դրվում է ենթակայից առաջ, և մտքի կենտրոն է դառնում բայով հաղորդված գաղափարը, ստորոգյալը դրվում է եզակի նաև բազմակի ու

հոգնակի ենթակաների հետ գործածվելիս, այսինքն՝ ուշադրության չի առնվում ենթակայի թիվը, ինչպես՝

Սուտ էր։ Ու միշտ քանի որ կա
Շահ ու գերի, ստրուկ ու տեր,
Չի լինելու երկրի վրա
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր։
(Հ. Թումանյան)

Պարզ եղանակին այս լեռան գագաթից երևում է Արցախի, Գանձակի, Թիֆլիսի դաշտավայրերը։ (Շիրվանզադե)

Նրան դուր էր գալիս Համազասպի հեզ ու խելացի բացատրությունները։ (Դ. Դեմիրճյան)

Այսպիսի անհամաձայնություն առավել հաճախ է լինում այն դեպքում, երբ բազմակի ենթակաները իմաստով առնչակից են, ինչպես՝

...էկան ասին թե՝ ողջ ըլես,
Չկա էլ թագ ու թագավոր։ (Ե. Չարենց)
Այժմ գործում է նիզակն ու սուրը։ (Բաֆֆի)

Մեր գյուղը որբացավ, նրա զարդն ու գեղեցկությունը կոցավ։ (Մուրացան)։ Կաշին ու ոսկորն է մնացել։ (Դ. Դեմիրճյան)

Այս ձևով ժողովուրդն ունի ձեռ ու ոտ՛ր թուլացավ, բան ու գործը կտրվե՞լ է, տունը-տեղը քանդվեց արտահայտությունները և այլն։

Ընդհակառակն, եզակի ենթակայի հետ հոգնակի թվով ստորոգյալ է դրվում այն դեպքում, երբ ենթական տրամաբանորեն հոգնակի է, հատկապես երբ կազմված է լինում մաս, կես, խումբ, բաժին (նաև մի քառորդ, մեկ երրորդ) բառերով, ինչպես՝ ներկաների մի մասը դեմ քվեարկեցին, խմբի կեսը քննությունից «հինգ» ստացան։

Լինելով ժողովրդական մտածողությանը հատուկ եղանակ, ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը կարող է գեղարվեստական խոսքում բներանգ ստեղծել, դառնալ խոսքին ժողովրդականություն տալու միջոց։

բ. Խնդրառությունը ևս քերականական կապի եղանակ է, որովհետև լրացյալ անդամը պահանջում է, որ իր լրացումն արտահայտված լինի որոշակի հոլովաձևով կամ կապով և իր խնդրով։ Գրական լեզվի խնդրառական կանոնները որոշակի են, սակայն այն բարդանում է երկու հիմնական պատճառով։ Նախ,

միևնույն բառը գրականում և ժողովրդախոսակցականում կարող է տարբեր խնդրառություններ ունենալ։ Օրինակ, գրականում կանոնական է սիրահարվել բայի խնդիրը տրական հոլովով (սիրահարվեց Ալվարդին), երբ ժողովրդախոսակցականում խնդիրը դրվում է վրա կապով և իր խնդրով (սիրահարվեց Ալվարդի վրա)։ Գրել բայը գրականում ևս պահանջում է տրական հոլովով խնդիր, այնինչ ժողովրդախոսակցականում՝ վրա կապն իր սեռական խնդրով (նամակ գրել ծնողների վրա)։ Նույն ձևով որոշ բայեր գրականում պահանջում են գործիականով խնդիր, այնինչ ժողովրդախոսակցականում խնդիրը դրվում է հետ կապով ու իր սեռական խնդրով (գիրքն ուղարկում եմ երեխայով||գիրքն ուղարկում եմ երեխայի հետ) և այլն։ Այնուհետև, գրական լեզվում նկատելի են միևնույն բառի երկակի ձևավորումներ։ Այսպես, օրինակ, դիմավորել, կարոտել, դավանանել, համակրել և մի քանի այլ բայեր նայած այն բանին՝ խնդիրը անձի է վերաբերում, թե իրի, կարող են ունենալ կրկնակի ձևավորումներով լրացումներ, ինչպես՝ դիմավորել հյուրերին||գարնանացանը, դավանանել ընկերներին||հայրենիքը, համակրել մեկին||նրա քայլը։ Մի քանի բայեր էլ կրկնակի հոլովաձևերով խնդիր են առնում առանց անձի և իրի տարբերակման պահանջի, ինչպես՝ տիրապետել զենքը||մեթոդներին, խոշընդոտել աշխատանքը||առաջադիմությանը, խթանել զարգացումը||բարձրացմանը, գրոհել հեռաստանները||քաղաքի վրա, գերազանցել ծախսերը||պլաններից և այլն։ Բայական մի շարք կապակցություններում լրացումների տարբեր ձևավորումները կախված են այն բանից՝ կապվում են կապակցության անվանակա՞ն բառի, թե ամբողջ կապակցության իմաստի հետ։ Օրինակ, «...ես իրավո՞ւնք ունեմ արդյոք, այդ հասկանալով հանդերձ, դեն հրել նրան ինձնից» (Նար-Դոս) նախադասության մեջ իրավունք ունենալ կապակցության լրացումը դրված է բացարձակ աներևույթով (այսինքն՝ անորոշ դերբայն անհոլով ձևով), իսկ «...և դու իրավունք ունես խլելու նրանից այն ամենը, ինչ որ հաճելի՞ է քեզ...» (Նար-Դոս) նախադասության մեջ խլելու խնդիրը իրավունք գոյականի հատկացուցիչ լրացումն է (խլելու իրավունք), թեև այն կարող է ըմբռնվել իրավունք ունես կապակցության խնդիր լրացում։ Երկակի (կամ եռակի) խնդրառություն ունեն առիթ ունենալ, սովորություն ունենալ, հույս ունե-

նալ, խնդիր դնել, պահանջ դնել, նպատակ դնել և այլ համանման կապակցություններ։

Վերջին տասնամյակներում այս հիմքի վրա (նաև ռուսերենի ազդեցությամբ) (դառնալ, հանդիսանալ, դնել և մի երկու այլ բայերով կազմված կապակցություններ օժտվել են նոր խնդրառություններով, որոնք հանդիպում են հատկապես հրապարակախոսության լեզվում, ինչպես՝ նոր ուղղության հիմք են դնում||հիմք են դնում նոր ուղղությանը, ձևավորման պատճառ է դառնում||պատճառ է դառնում ձևավորմանը, զարգացման պայման է հանդիսանում||պայման է հանդիսանում զարգացմանը և այլն։

2. Կապակցությունը բարդ նախադասություններում. Բարդ նախադասության կազմիչները միմյանց նկատմամբ ունենում են երկու կարգի հարաբերություն՝ համադասական կամ ստորադասական, որոնք արտահայտվում են կա՛մ շարահարությամբ, կա՛մ զոդվածով։

ա. Շարահարությունը կապակցության բնական եղանակ է, պատմականորեն նախնական եղանակ։ Շարահարության դեպքում բարդ նախադասության կազմիչները դրվում են միմյանց մոտ, և նրանց իմաստային հարաբերությունների արտահայտման համար չի պահանջվում ո՛չ շաղկապ, ո՛չ էլ շաղկապող որևէ բառ (հարաբերական բառեր)։ Օրինակ.

Ա՜խ, էսպես էլ գիժ ամի՜ս,
Մարդու հանգիստ չի տալիս։
Այսօր ուրախ օր կանի,
Վաղը՝ անձրև ու քամի,
Առավոտյան պայծառ օդ,
Կեսօրը մութ ու ամպոտ։

Մի հագնում է սպիտակ,
Մի կանաչին է տալիս,
Մի խնդում է, մի լալիս,
Մի օր ցուրտ է, մի օր տաք,
Ա՜խ, էսպես էլ գիժ ամի՜ս...
(Հ. Թումանյան)

Շարահարությունը ժողովրդական մտածողությանը հատուկ կապակցության եղանակ է, այդ պատճառով էլ այն հաճախ է հանդիպում գեղարվեստական ստեղծագործություններում, հատկապես ժողովրդական բովանդակություն ունեցող խոսքում՝ հեքիաթներում, առածներում, ասացվածքներում և այլն։ Ահա վերջիններից մի երկու օրինակ՝ Դուրսը քահանա, ներսը սատանա. Խելոքին մին, անխելքին՝ հազար ու մին. Օտարին մաշակար, ինքը բոքիկ. Արտը խախուտ, մահանան կարկուտ և այլն։

Իր էությամբ լինելով զեղչական, շարահարությունը ուղեկցվում է հատուկ հնչերանգով. այդ այն պատճառով, որպեսզի բարդ նախադասության կազմիչներով արտահայտված մտքերը դրվեն հարաբերության մեջ և ըմբռնվեն իբրև մեկ ամբողջություն։ Երբեմն այս հնչերանգը որոշ հուզականության շեշտ է տալիս խոսքին։

Գեղարվեստական գրականության մեջ շարահարական կապով մտքերը բարդ համադասական նախադասության համակարգում կապվում են հատկապես երկու դեպքերում՝ երբ նկարագրություն է, և երբ խոսքը կառուցվում է հակադրություններով։ Ահա նկարագրության մեկ օրինակ.

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ,
Վրան վրանի հետևից բուսավ
Ծաղիկների մեջ գույն-գույն սիզավետ.
Դաշտերից խանձված, սառ ջրի կարոտ՝
Գալիս են իջնում ամեն մի ամառ
Լոք, Լալվար, Լեջան աղբյուրների մոտ
Շոգերից ազատ ապրելու համար։
Ալաշուխ, դագա, անվերջ վրաններ,
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
Հենվում են մեկ-մեկ բարձր քարափին։

(Վ. Միրաքյան)

Թատերական ռեմարկները, քանի որ ծառայում են անկեղծան պատկերներ ստեղծելու խնդրին, հիմնականում կառուցվում են շարահարական բարդ համադասական նախադասություններով։

Հակադրություններում ավելի զգալի է դառնում հնչերանգի դերը։ Ահա մեկ օրինակ.

Իսկ հիմա անցան այն ժամանակները, անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգետ են, և մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ... (Հ. Պարոնյան)

Հակադրության մեջ շարահարությունն ասվածը վերածվում է

մի տեսակ անշաղկապ կառույցի, խոսքին հաղորդում թափ, նրան տալիս լարվածություն ու սրություն, ինչպես այդ կարելի է տեսնել նաև հետևյալ հատվածից.

> Նա հեռու էր ամբոխից, բայց աղաղակները հնչում էին նրա ականջներին, հրդեհը չէր տեսնում, բայց տարիների անթափանցելի քաոսը կանգնած էր նրա աչքերի առջև։ Այստեղ թանձր ծխերի մեջ անօգնական մերձավորները, այնտեղ մոր ու հորաքրոջ հուսահատ պատկերները։ Այնտեղ բոսորագույն կրակն իր բյուրավոր ճյուղերով ու ահարկու լեզուներով, այստեղ սև ուրվականներ, ինչ-որ վայրենի ճիչեր, ինչ-որ գոռում-գոչյուններ, հինգ կիսաչափ այրված դիակներ, մուր, ցեխ, նավթ, կեղտի ու խավարի, կյանքի ու մահվան մի զանգված։ (Շիրվանզադե)

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները ևս կարող են կապվել շարահարությամբ։ Օրինակ.

Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի ոտը խնդիրքով,
Ինչ ուզեց տվինք, հետն էլ խնդրեցինք՝
Բանը վերջացնի գեղական կարգով։

(Հ. Թումանյան)

Ընդգծված տողերում կան բարդ ստորադասական նախադասություններին համազոր երկու նախադասություններ։ Առաջինն է՝ Ինչ ուզեց տվինք, իսկ երկրորդը՝ Հետն էլ խնդրեցինք՝ բանը վերջացնի գեղական կարգով։

Շարահարությամբ ստորոդասական կապի արտահայտումը ևս ժողովրդական լեզվամտածության եղանակ է, որտեղից էլ մուտք է գործում գեղարվեստական գրականություն։ Այդպիսի բազմաթիվ օրինակներ մեզ տալիս են Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Ս. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, հներից՝ Աբովյանը, Պռոշյանը և շատ ուրիշներ։

Շարահարությամբ ստորադասական կապակցությունը վերածվում է շարահյուսական մի կառույցի, որ կոչվում է զուգադասություն։ Զուգադասությունը (տե՛ս էջ 374) տրամաբանորեն բարդ ստորադասական, իսկ կառուցվածքով պարզ նախադասություն է, որի կազմում համատեղվում են մեկից ավելի բայի դիմավոր ձևեր։ Ահա մի երկու օրինակ.

Համբոյի հողը մեր գլխին. տես նա իր տղային որ-
տեղ հասցրեց... (Հ. Թումանյան)

Նրա կյանքը դարձել էր մի տեսակ անասնական։
Չէր իմանում ինչ օր է լուսանում, ինչ օր մթնում...
(Նար-Դոս)

Ես ուզում էի իմանալ այգիս գո՞ղ է մտնում, թե ոչ։
(Ս. Զորյան)

բ. Զոդվածով կապակցություն է լինում այն դեպքում, երբ բարդ նախադասության կազմիչների իմաստային հարաբերություններն արտահայտվում են շաղկապներով կամ հարաբերական բառերով։ Զոդվածով կապակցությունը, որ առավել գրական լեզվին է հատուկ, խոսքը դարձնում է հանդիսավոր ու հռետորական (հատկապես բազմաշաղկապության դեպքում և պարբերությամբ), լուրջ ու ծանր, ինչպես լինում է գեղարվեստական խոսքում, կամ պատճառաբանված, հետևողական, աներկբա, ինչպես լինում է գիտական խոսքում։ Ահա զոդվածով կապակցության երկու օրինակ՝ քաղված գեղարվեստական և գիտական գրականությունից.

Այս թուղթը կարդալիս հիշեք անմահ այն
Մաշտոցին,
Որ լույս էր հավաքում երկրից երկիր
թափառական,
Եվ իբր արճիճ հալեց իր սեփական հոգին,
Եվ շիկացած երազի մեջ պայծառ երևացին
Հայոց գրերն ու ապագան։
Ապա հիշե՞ք դուք այն դարերը մեր բազմաբեղուն,
Մեր մատյաններն ստվարածալ,
Դպրանոցները շեն,
Երբ որ թևում էր համարձակ մեր հանճարի
մեղուն,
Երբ դարերի իմաստության գանձերն էին պեղում
Քաջախորհուրդ Եղնիկն ու Եղիշեն։ (Ն. Զարյան)

«Այսպիսի պատմական ուսումնասիրությունը հնարավոր է, սակայն այն ժամանակ միայն, երբ հայտնի են լեզվի վիճակները նրա զարգացման զանազան շրջաններում։ Ուստի մի լեզվի պատմական քերականությունից առաջ անհրաժեշտ է ունենալ նույն լեզվի մի շարք նկարագրական քերականություններ, որոնցով ցույց է տրվում, թե ինչպիսի բառական ու կապակցու-

թյան ձևեր են գործածական եղել մի լեզվի մեջ իրար հաջորդող զանազան շրջաններում։ Մեր ժամանակակից շրջանի, մեր խոսած լեզվի վիճակը կարող ենք նկարագրել նկատի ունենալով ոչ միայն ժամանակակից հեղինակների գրվածքները, այլև մեր կենդանի խոսած լեզուն իր բոլոր բարբառներով, որոնց նկարագրությունն ու դասավորությունը կազմում է մի առանձին բաժին—բարբառագիտություն (դիալեկտոլոգիա), իսկ նախորդ դարաշրջանների լեզվի նկարագրությունը կարող ենք հանել միայն հնությունից մնացած գրավոր հիշատակարաններից»։ (Մ. Աբեղյան)

ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես խոսքում, այնպես էլ նախադասության մեջ բառերն ու նախադասությունները երկու տեսակ հարաբերություն են ունենում՝ կամ առնչվում են կամ չեն առնչվում։ Օրինակ.

Է՜յ հին ծանոթներ, է՜յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսա, ու միտս ընկան,
Առաջս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դեմքեր, որ հիմի չկան։
Անցել են, ոնց որ ծաղկունքը պես-պես,
Որ անցած գարնան կային ձեր լանջում.
Անցել ձեր գլխի հերվան ձյունի պես,
Բայց եկել եմ ես՝ նրանց եմ կանչում։

Այստեղ էյ բառը չի կապված ոչ մի բառի հետ, հին բառը կապված է ծանոթներ բառի հետ, բայց ոչ մի առնչություն չունի մյուս բառերից և ոչ մեկի հետ։ Այդպես էլ կանաչ բառը կապված է միայն սարեր բառին, ձեզ-ը՝ տեսա բառին, օրեր և դեմքեր բառերը՝ միտս ընկան և առաջս եկան կապակցություններին միայն և ոչ մի առնչություն չունեն մյուս բառերի հետ։

Բառերի ու նախադասությունների առնչությունները երկու տեսակ են լինում՝ քերականական և տրամաբանական։ Եթե ես եկել եմ, ձեզ տեսա, ձեր գլխի բառերի կապակցությունները քերականական են, ապա կանաչ սարեր, երջանիկ օրեր, հիմի չկան բառերը տրամաբանորեն են կապված միմյանց։ Տրամաբանական կապ գոյություն ունի նաև անցել են և դեմքեր, ինչպես և նրանց և դեմքեր հասկացությունների միջև, թեև կապվող հասկացություններից մեկը վերջին նախադասության մեջ է, մյուսն՝

առաջին։ Քերականական և տրամաբանական առնչություններն առաջ են բերում բառերի ու նախադասությունների հարաբերությունների երկու մակարդակ՝ համադասություն, որը սոսկ տրամաբանական առնչության արտահայտություն է, և ստորադասություն, որ և՛ քերականական, և՛ տրամաբանական առընչությունների արտահայտություն է։

Համադասությունն արտահայտում է քերականական անկախության և տրամաբանական առնչության հարաբերություն։ Համադասությամբ կապվում են ինչպես պարզ նախադասության քերականորեն անկախ բաղադրիչներ, այնպես էլ բարդ համադասական նախադասության քերականորեն անկախ կազմիչներ։ Համադասությամբ են կապվում նաև խոսքի մեջ տրամաբանորեն առնչակից, բայց քերականորեն անկախ նախադասությունները։

Ի տարբերություն ստորադասության, որ միայն հասկացությունների ծավալման միջոց է, համադասությունը մտքերի ծավալման միջոց է՝ լինի այդ մեկ նախադասության կազմում, թե խոսքում։ Նախ ասենք, որ խոսքի մեջ տրամաբանորեն առնչակից մտքերը հյուսվում են միմյանց իբրև համադասություններ՝ կապվելով ինչպես շարահարությամբ, այնպես էլ շաղկապներով։ Օրինակ՝

Զմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի.
Գյուղն էին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից հետո լեն հրապարակ
Բաց արին մեջտեղն արձակ գլխատան.
Զուռնաչին փչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան։ (Հ. Թումանյան)

Այստեղ երկու բարդ նախադասություններից յուրաքանչյուրում կան երեքական նախադասություններ, որոնք միմյանց կապված են շարահարությամբ, իսկ անկախ երկու նախադասությունները՝ ու շաղկապով, որտեղ յուրաքանչյուր նախադասություն նոր հաղորդում է, և մտածությունը ծավալվում է մտքերը տրամաբանորեն միմյանց կապելու միջոցով։ Եվ սա համադասության էությունն է՝ որտեղ համադասություն, այնտեղ մրտքերի ծավալում, սակայն եթե բարդ համադասական նախադասության մեջ մտքերը ձևավորված են իբրև առանձին նախադա-

սություններ, ինչպես բերված օրինակում է, ապա միավորյալ ու պարզ նախադասություններում մտքերի առանձին ձևավորում չի լինում. դրանք հասկանում ենք տրամաբանորեն։ Հետևյալ օրինակում թեև ունենք մեկ նախադասություն, սակայն ախ քաշեմ, ավաղ կանչեմ ստորոգյալները բազմաթիվ պատճառի պարագաներից յուրաքանչյուրի հետ տրամաբանորեն մեկական մտքեր են կազմում, և ամբողջ նախադասությունն ընկալում ենք իբրև բազմաթիվ մտքերի ամբողջություն։

Ախ քաշեմ, ավաղ կանչեմ
Փուչ անցած օրերիս համար,
Մեր խոսքի համ ու հոտից
Դատարկված ձորերիս համար,
Թուխս նստած, ճուտ չհանած
Ջուրն ընկած լորերիս համար,
Մարախի բերանն ընկած
Կաթնամոմ ցորենիս համար,
Մի անհայտ զինվոր դարձած
Անշիրիմ զոհերիս համար։ (Հ. Սահյան)

Ստորադասությունն սկզբունքորեն տարբերվում է համադասությունից։ Եթե համադասությունը դուրս է գալիս նաև նախադասության ոլորտից, ապա ստորադասությունը միայն նախադասության մեջ է։ Եթե համադասությունը մտքերի ծավալման միջոց է, ապա ստորադասությունը ծառայում է միայն հասկացությունը ծավալելու խնդրին։ Վերցնենք հետևյալ օրինակը.

Ռշտունյաց նախարարի ամրոցը հազիվ էր երևցնում իր գրանիտե բուրգերը հսկայական և սաղարթախիտ սոճիների թանձրության միջից։ (Դ. Դեմիրճյան)

Այստեղ Ռշտունյաց բառը լրացնում է նախարար հասկացությանը, սա էլ ամրոց հասկացությանը, հազիվ, բուրգեր և թանձրություն հասկացությունները՝ երևցնում էր հասկացությանը, իր և գրանիտե հասկացությունները՝ բուրգեր հասկացությանը, հսկայական և սաղարթախիտ հասկացությունները՝ սոճիներ, իսկ սոճիներ հասկացությունը՝ թանձրություն հասկացությանը։ Այսինքն՝ նախադասության մեջ ծավալված են բոլոր այն հասկացությունները, որոնք ունեն ստորադասությամբ լրացումներ։ Ստորադասական կապն առաջ է բերում կապակցություններ։

Հասկացությունը ծավալելու նույն դերն ունեն նաև երկրորդական նախադասությունները։ Օրինակ.

Բայց դու, Մերուժան, անխնա ձեռքով քանդեցիր մեր նոր բույնը, որ այնքան դարեր մեծ խնամքով կազմել էինք, որը մեզ համար այնքան անդորր էր և ապաստան: *Դու ավերակ դարձրիր այն մեծափարթամ քաղաքները,* որ ամբողջ աշխարհի առջև պարծենում էին իրենց անբավ հարստությամբ: *(Բաֆֆի)*

Այս հատվածում ընդգծված երկրորդական նախադասությունները ստորադասությամբ կապված են գլխավոր նախադասությունների բույն *և* քաղաքներ *հասկացություններին և ծավալում են այդ հասկացություններն իմաստաբանորեն։*

Համադասությունն ու ստորադասությունը տարբեր են ոչ միայն քերականական գործառություններով, այլև ոճական իրենց արժեքներով։

Ընդհանրապես նկատելի է, որ նախադասության համակարգում համադասական կառուցվածքն առավել դառնում է պատումի, նկարագրության, իսկ ստորադասականը՝ վերլուծական բնույթի մտքեր արտահայտելու միջոց։ Ինչպես արդեն ասվել է, ժողովրդի խոսքի մեջ մեծ տեղ ունի համադասական կառույցը, այնինչ ստորադասական կառույցները, առավելապես բազմաբարդ նախադասությունները մեծ մասամբ գիտական խոսքի երևույթ են և գրական խոսքի արտահայտություն։ Ընդհանրապես առտնին զրույցը, սովորական, ոչ պաշտոնական հաղորդակցումը չեն ներկայացնում մտքերը բարդ շարահյուսական կառույցներով արտահայտելու պահանջ։ Թեև այսպիսի խոսքերին խորթ չեն նաև ստորադասական կառույցները, սակայն դրանք սովորաբար չեն անցնում մեկ-երկու աստիճանից այն կողմ։ Այսպիսի խոսքերում շարահյուսական կառույցները համեմատաբար պարզ են, նախադասությունները՝ սակավաբաղադրիչ։ Այնինչ հանդիսավոր տրամադրություն կամ վերլուծական, լուրջ բովանդակություն ունեցող գիտական կամ հրապարակախոսական երկերում, այլև նույնպիսի բնույթ ունեցող գեղարվեստական ստեղծագործություններում զգալի տեղ ունեն բարդ կառուցվածքի և բազմաբաղադրիչ նախադասությունները։ Համեմատության համար վերցնենք Ս. Զորյանի պատմվածքներն ու «Պապ թագավոր» պատմավեպը։ Պատմվածքներում, համապատասխան նյութի, բովանդակության, ծավալի և այլն, մեծ տեղ ունեն համադասությունն ու շարահյուսական պարզ կառույցները։ Այլ է պատկերը «Պապ թագավորում»։ Այս-

տեղ վեպի լուրջ բովանդակությանը, երկար շնչին ու ծավալուն նկարագրություններին ներդաշնակ են ինչպես ենթաստորադասություններով, այնպես էլ խառը բնույթի բազմաբաղադրիչ նախադասություններով շարահյուսական կառույցները, որոնց նրմանները համարյա չկան ոչ հեղինակի պատմվածքներում, ոչ էլ մեր բանավոր խոսքում։ Անշուշտ նյութի ծավալը, կարևորությունը կամ լրջությունը չէ միայն սրա պատճառը։ Կան և այլ հանգամանքներ, և սրանց մեջ հատկապես երկուսը, որ կարևոր են՝ մեկը հեղինակի ոճը, մյուսը՝ գրավոր խոսքի ստեղծած ավանդույթը։ Ընդհանրապես եվրոպական, ռուս և հայ գրականության մեջ վերջին դարում զգալիորեն խորացել է շարժումը նախադասությունների ծավալման ու կառուցվածքի խճողման ուղղությամբ։ Սա բացատրվում է այն բանով, որ ռեալիստական արձակը շատ կողմերով է հարում գիտական խոսքի ոճին։ Ահա այս երևույթն իր կնիքն է դրել մեր դարի հայ արձակի, հետևաբար և Ս. Զորյանի լեզվի վրա։

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏԱՄԻՋՈՑՆԵՐ

Լեզվի արտահայտման հնարավորությունները զգալի չափով մեծացնում են, ուստի և խոսողին կամ գրողին ընտրություն կատարելու մեծ հնարավորություն են ընձեռում քերականական արտահայտամիջոցները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ քերականական փոխակերպությունների և քերականական ձևերի։

Քերականական փոխակերպություններ

Քերականական փոխակերպություններ են փոխանցումը, փոխատեղումը և փոխակերպումը։

Փոխանցումը որևէ խոսքի մասի գործածությունն է գոյականի նշանակությամբ և, ընդհակառակն, գոյականի գործածությունը այլ խոսքի մասի նշանակությամբ։ Ոչ գոյական խոսքի մասերը (և ընդհանրապես ամեն ինչ, եթե կարելի է արտասանել կամ գրել) կարող են գոյականանալ և նախադասության մեջ գործածվել գոյականաբար (փոխանուն)։ Հետևյալ օրինակ-

ներում գոյականաբար են գործածված ածականը, թվականը, բայը և նախադասությունը.

Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նրա սիրովն է հարբած էն հսկան,
Նրա ժպիտն է քաջին ուժ տալիս,
Որ դաշտն է իջնում առյուծի նման։
(Հ. Թումանյան)

Երկուսն էլ հայ են, ունեն մի հավատ...
(Հ. Թումանյան)

Գրե՛լ, ասել է վատի դեմ կռվե՛լ,
Իսկ գրել կա, որ վատ է, քան լռել... (Գ. Էմին)

Հորն օղորմի կա, որ շան որդի ասելուց վատ է։ (Ասացվածք)

Գոյականն իր հերթին գործածվում է ածականի, մակբայի և կապի նշանակություններով։ Գոյականն ածականի է փոխանցվում իր ուղիղ և գործիական հոլովի ձևերով, ինչպես՝ քեռի խեչան, քավոր Հարութ, վարպետ Օհան, մարշալ Բաղրամյան, միրոմով մարդ, շնորհիքով կին, համով ճաշ և այլն։

Ծանոթություն. Ուղիղ ձևով գոյականը ածականաբար գործածվում է նաև իբրև մակդիր (ծաղիկ տիրուհի, հրաշք աղջիկ, ոսկի մարդ, և այլն), որը ոչ թե քերականական, այլ ոճական միջոց է։

Գոյականը գործիական հոլովի ձևով գործածվում է մակբայաբար, ինչպես՝ սիրով կկատարեմ, հաճույքով լսեցինք, ագահությամբ կերավ, զարմանքով տեսավ և այլն։ Մի քանի գոյականներ էլ (հետևանքով, պատճառով, նպատակով, ձևով, կերպով, ձեռքից, երեսից, ժամանակ և այլն) գործածվում են կապի նշանակությամբ։ Կան խոսքի մասերի և այլ փոխանցումներ (բայի փոխանցում գոյականի, կապի և այլն), որոնք նույնպես հարստացնում են արտահայտման հնարավորությունները։

Փոխատեղումը շարահյուսական հարաբերության փոփոխությունն է՝ արտահայտած մտքի պահպանումով հանդերձ։ Սրանք մտքի արտահայտման զուգահեռ ձևեր են, շարահյուսական հոմանիշ կաղապարներ, որոնք նույնպես միջոց են խոսքի արտահայտական հնարավորությունները մեծացնելու համար։ Փոխատեղման ենթարկվում են՝

ա. Բացահայտյալն ու բացահայտիչը, որոնք միևնույն գա-

դափարը, միևնույն իմաստն են արտահայտում, այսինքն՝ տրամաբանորեն միմյանց հավասար գաղափարներ են և նախադասության նույն անդամն են. բացահայտիչը նույն բացահայտյալն է՝ այլ բառով կամ բառերով կրկնված։ Օրինակ՝

Հայկը՝ իմ ընկերը *գյուղում ուսուցիչ է*||Իմ ընկերը՝ Հայկը *գյուղում ուսուցիչ է։*

Իմ ընկերոջ՝ Հայկի *հոդվածը կարդացի*||Հայկի՝ իմ ընկերոջ *հոդվածը կարդացի և այլն։*

բ. Ենթական և ստորոգելին, եթե առնված են իբրև տրամաբանորեն հավասար հասկացություններ, ինչպես՝

Իմ սիրած լեզուն հայերենն է||*Հայերենն իմ սիրած լեզուն է։*

Վարդը ծաղիկների թագուհին է||*Ծաղիկների թագուհին վարդն է։*

գ. Սահմանափակ թվով գոյականով, ածականով, թվականով, մասամբ նաև դերանվամբ ու դերբայով արտահայտված որոշիչով և նրա որոշյալով կապակցության բաղադրիչները։ Օրինակ.

Ապրա՜նք—անունը տալ չարժե, վարնո՜ց, կեղտոտ, տեսակները անհարիր, անսպասելի... զարմանալի տաղանդ ուներ գտնել մրգերի ստորնագույն տեսակը, կակալների կծված, խաղողի fացախած... (ստորնագույն տեսակի մրգերը, կծված կակալները, fացախած խաղողը.—Պ. Պ.)։ *(Դ. Դեմիրճյան)*

Նույն ձևով ունենք՝

Տիգրան արքան||*արքա Տիգրանը*

Հայկ նահապետը||*նահապետ Հայկը*

լավ տանձ||*տանձի լավը*

կարմիր խնձոր||*խնձորի կարմիրը*

մի փիլիսոփա||*փիլիսոփայի մեկը*

կես տարի||*տարվա կեսը*

Կամ՝

լավ ծառերը||*ծառերից լավերը*

երկու խնձոր||*խնձորներից երկուսը*

դ. Վերառված ենթական ու ստորոգելին և սրանց համարժեք գործիականով որոշյալն իր որոշիչով, ինչպես՝

կոթը կարճ||*կարճ կոթով*

ծայրը սուր||*սուր ծայրով*

թևքերը կարճ||կարճ թևքերով

Սասունցի Դավիթն ուներ մի քեռի,

Անունը Թորոս, *ահեղ, ածդահա։ (Հ. Թումանյան)*

ե. Ածական որոշիչն ու գործիական հոլովով դրված գոյական որոշյալը[35] *և սրան զուգահեռ ածականն իր գործիական հոլովով դրված գոյական խնդրով, ինչպես՝*

ալևոր գլխով||գլխով ալևոր

կարճ հասակով||հասակով կարճ

Մեզնից շատ առաջ կար մի թագավոր

Հոգով շատ արի, գլխով ալևոր։ *(Ռ. Պատկանյան)*

Փոխատեղմամբ առաջ եկած շարահյուսական այս կառույցները միևնույն գաղափարն արտահայտելու զուգահեռ միջոցներ են, հետևաբար և խոսքի մեջ բազմազանություն մտցնող, խոսքը ոճավորելու միջոցներ։

Փոխակերպումը *ծավալուն հասկացություն է և ունի բազմազան տարատեսակություններ։ Իբրև փոխակերպման տարատեսակություններ կարող են համարվել.*

ա. Ցանկացած բարդության և նրան իմաստով հավասար կապակցությունը։ Օրինակ, **ՀԽՍՀ||Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, բուն||բարձրագույն ուսումնական հաստատություն, առբաժվար||առողջապահության բաժնի վարիչ, կոլտնտշուկա||կոլեկտիվ տնտեսության շուկա, հացուբաց||հաց ու բաց, բացուխուփ||բաց ու խուփ, մեծամեծ||մեծ և մեծ, հորեղբայր||հոր եղբայր, մորաքույր||մոր քույր, ժամացույց||ժամը ցույց տվող, քարտաշ||քարը տաշող, մայրաքաղաք||մայր քաղաք, լեռնալանջ||լեռան լանջ, հանքափոր||հանք փորող, երկաթուղի||երկաթե ուղի, մեքենավար||մեքենա վարող**[36] *և այլն։*

բ. Որոշչային դաղափարի արտահայտումը գոյականի սեռական հոլովով և նույն հիմքից կազմված ածականով։ Օրինակ.

թագավորի պալատ||թագավորական պալատ

դաշտի վարդ||դաշտային վարդ

---

[35] Այս կառուցվածքում գործիական հոլովով որոշյալ գոյականը կարող է ընդունվել նաև ածականի խնդիր լրացում։

[36] Յուրաքանչյուր բարդություն պետք է իր հանրաժեք կապակցությունն ունենա, եթե չունի, նշանակում է բարդություն չէ, այլ կայուն կապակցություն։

գ. Շարահյուսական ներառումը և նրա իմաստային զուգահեռը։ Օրինակ.

կարմիր մատիտը||կարմիրը
մեծ դաշտը||մեծը
Հայկի աղեղը||Հայկինը
Հայկի աղեղի լայնքը||Հայկինինը

դ. Կապակցության գերադաս անդամի զեղչումը և նրա չզեղչված զուգահեռը։ Օրինակ, ստվարաթղթից տնակ||ստվարաթղթից պատրաստած տնակ, բդից գուլպա||բդից գործած գուլպա, ձավարով խաշովի||ձավարով եփած խաշովի, մսով կարկանդակ||մսով պատրաստած կարկանդակ, այդ մեքենայից մեր գործարանում կա||այդ մեքենայից մի քանի հատ մեր գործարանում կա, այս կտորից առանք||այս կտորից մի քանի մետր առանք, եկավ կուժը ուսին||եկավ կուժն ուսին դրած, չիբուխը ձեռին նստած էր քարին||չիբուխը ձեռին բռնած նստած էր քարին:

ե. Նախադասության անդամի զեղչումը և չզեղչված զուգահեռը, օրինակ.

— *Այսօր կարո՞ղ ես մեր տուն գալ։*
— Կարող եմ:||— Այսօր կարող եմ ձեր տուն գալ:
— *Մինչև ժամի քանի՞սը պիտի մնաք այստեղ։*
— Մինչև 12-ը:||— Մինչև ժամի 12-ը պիտի մնանք *այստեղ։*

զ. Միավորյալ նախադասությունը և նրա իմաստային զուգահեռը։ Օրինակ.

Վեց ամառ եկավ ու գնաց:||Վեց ամառ եկավ, վեց ամառ գնաց:

Սիրտս տխրում է ու լալիս:||Սիրտս տխրում է, ու սիրտս լալիս:

Հայկն ու Արամը եկան:||Հայկը եկավ, Արամը եկավ:

Հայկն ու Արամը եկան ու տեսան:||Հայկը եկավ ու տեսավ, Արամը եկավ ու տեսավ:

է. Միևնույն մտքի արտահայտման ներգործական ու կրավորական կառույցները, օրինակ.

Մենք կառուցում ենք նոր Երևանը:||Նոր Երևանը կառուցվում է մեր կողմից:

ը. Միևնույն մտքի արտահայտումը ուղղակի և անուղղակի խոսքերով, օրինակ.

Աբովյանն ասել է. «Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը»։||Աբովյանն ասել է, որ ազգը պահողը լեզուն է ու հավատը։

թ. Միևնույն մտքի արտահայտումը հաստատական և ժխտական նախադասություններով։ Օրինակ.

Ես պարտավոր էի գալ:||Ես չէի կարող չգալ:

Ինձ խանգարեցին արտահայտվել:||Ինձ թույլ չտվին արտահայտվել:

Ոչ թե դանակով են կտրում, այլ սղոցով:||Դանակով չեն կտրում, այլ սղոցով:

ժ. Միևնույն մտքի արտահայտումը պատմողական և հարցական նախադասություններով։ Օրինակ.

Ոչ ոք չի խնդրել քեզ այստեղ գալ:||Ո՞վ է քեզ խնդրել այստեղ գալ:

Այլևս չպետք է լռենք:||Հիմա է՞լ լռենք:

ժա. Միևնույն մտքի արտահայտումը պատմողական և բացականչական նախադասություններով։ Օրինակ.

Շատ մեծ գեղեցկություն և հրապույր ուներ||Ինչպիսի՜ գեղեցկություն և հրապույր:

ժբ. Միևնույն մտքի արտահայտումը պատմողական և հրամայական նախադասություններով։ Օրինակ.

Վեր ես կենում հիմա և գնում Աննային բերում։||Վե՛ր կաց և գնա Աննային բերդ

ժգ. Միևնույն մտքի արտահայտումը դիմափոխությամբ։ Օրինակ.

Ես այդպիսի բան չեմ ասել։||Ոչ ոք այդպիսի բան չի ասել։

— Մի՞թե այդքան վառ է քո մեջ սերը...— հարցրեց նա ժպտալով։

— Ո՞վ չի սիրի նրան, որ անմահների մեջ յուր հավասարը չունի... Ո՞վ չի սիրի նրան, որի շունչը կյանք է բաշխում, որի մի հայացքը պարգևում է հավիտենական երջանկություն... *Մի՞թե դու կարծում ես,* որ միշտ քարի ու քերիչի հետ զբաղված արհեստավորի սիրտը այն աստիճան քարացած է, *որ գեղեցկության համար տեղ չունի։ (Բաֆֆի)*

Այստեղ երկու անգամ դիմափոխության է ենթարկված խոսքը։ «Ո՞վ չի սիրի նրան»-ով կազմված նախադասություններում նրան-ը ասված է ինձ-ի փոխարեն, իսկ վերջում «արհեստավորի» երրորդ դեմքն ասված է իմ (առաջին) դեմքի փոխարեն։

Կամ՝ Քու քույրը չե՞մ ես... իմ Մոսին չե՞ս դու..., որտեղ Քու քույրը չե՞մ=իմ եղբայրը չե՞ս։

Ժդ. Միևնույն մտքի արտահայտումը երկկազմ և միակազմ նախադասություններով։ Օրինակ՝

Սա քեզ չի վերաբերում։||Քե՛զ ինչ։

Փառք տանք մայր հողին։||Փա՞ռք մայր հողին։

Ժե. Միևնույն մտքի արտահայտումը շարուն և պարբերավոր կառույցներով։ Օրինակ՝

Պարբերավոր	Շարուն
Մերթ ուրախ ճիչով, ասես կարոտով՝	Ուրախ ճիչերով, ասես կարոտով՝
Իրար են պարզում լխտիկ թևերը,	Իրար են պարզում լխտիկ թևերը
Ցուցադրում են, կարծես թե դիտմամբ,	Եվ ցուցադրում, կարծես թե դիտմամբ,
Փակ մարմինների բոլոր ձևերը,	Փակ մարմինների բոլոր ձևերը,
Որ... աբեղայի սիրտը խռովեն,	Որ... աբեղայի սիրտը խռովեն,
Որ... աբեղային անհուր խորովեն,	Եվ խեղճ աբեղան անհուր խորովվի,
Որ... աստված ու նա կռվեն-խռովեն։	Աստվածն ու ինքը կռվեն-խռովեն։
(Պ. Սևակ)	(Մեր վերաշարադրածը)

Ժզ. Միևնույն մտքի արտահայտումը բարդ ստորադասական և սրան զուգահեռ դերբայական կամ անվանական կապակցությամբ պարզ նախադասություններով։ Օրինակներ՝

Ենթակա երկրորդական նախադասություն.

Ով չի ցանկանում տրտմել, թող ուրիշին չտրտմեցնի։||Տրտմել չցանկացողը թող ուրիշին չտրտմեցնի։

Ով կբերի անշեջ հուրը, նա է ընտրած իմ փեսան։||Անշեջ հուրը բերողն է ընտրած իմ փեսան։

Ստորոգելական վերադիր երկրորդական նախադասություն.

Լավ բարեկամը նա է, ով առանց հանդիմանելու

սխալդ ուղղում է։||Լավ բարեկամը առանց հանդիմանելու սխալդ ուղղողն է։

Որոշիչ երկրորդական նախադասություն.

Մենք նստեցինք ծառի տակ, որ արդեն ծաղկել էր։||Մենք նստեցինք արդեն ծաղկած ծառի տակ։

Կարդացե՛ք այն գիրքը, որ սովորեցնում է ճիշտ ապրել։||Կարդացե՛ք ճիշտ ապրել սովորեցնող գիրքը։

Բերե՛ք այն սեղանը, որն ավելի լայն է։||Բերե՛ք ավելի լայն սեղանը։

Հովիվը գրկեց գառը, որի ճակատը ծաղիկ էր։||Հովիվը գրկեց ճակատը ծաղիկ գառը։

Հատկացուցիչ երկրորդական նախադասություն.

Բյորոն որոշել էր նրա հարցը քննել ժողովում, ով հաճախ է բացակայում դասերից։||Բյուրոն որոշել էր դասերից հաճախ բացակայողի հարցը քննել ժողովում։

Խնդիր երկրորդական նախադասություններ.

Հարցրո՛ւ նրան, ով իմանում է։||Հարցրու իմացողին։

Բերել եմ այն, ինչ ուզել ես։ Բերել եմ ուզածդ։

Հեռո՛ւ մնա նրանից, ով հարբեցող է։||Հեռու մնա հարբեցողից։

Գո՛հ մնա նրանով, ինչ ձեռք ես բերել կյանքում։||Գոհ մնա կյանքում ձեռք բերածովդ։

Պարագա երկրորդական նախադասություններ.

Գնացինք խանութ, որ երեխայի համար կոշիկ գընենք։||Գնացինք խանութ երեխայի համար կոշիկ գնելու։

Հասանք այնտեղ, որտեղ հիմնվում էր նոր այգին։||Հասանք նոր այգի հիմնվելու տեղը։

Անցանք այնտեղով, որտեղով հեշտ էր անցնել։||Անցանք հեշտ անցնելու տեղով։

Կգնանք, հենց որ լույսը բացվի։||Կգնանք լույսը բացվելուն պես։

Երբ զանգը տան, դուրս կգանք միջանցք։||Զանգը տալուց հետո դուրս կգանք միջանցք։

Այնպես գրիր, ինչպես ինքդ ես ուզում։||Քո ուզածի պես գրիր։

Այնքան կկարդաս, ինչքան դու ես ցանկանում։||Քո ցանկացածի չափ կկարդաս։

Գյուղ չգնացի, որովհետև զբաղված էի։||Գյուղ չգնացի զբաղված լինելու պատճառով։

Թեև եղանակը ամպոտ էր, մենք զբոսանքի գնացինք։||Եղանակը ամպոտ լինելով հանդերձ զբոսանքի գնացինք և այլն։

ժէ. Միևնույն մտքի արտահայտումը շարահարական և զոդվածական կապակցություններով։ Օրինակ.

Մուկը ծակը չէր մտնում, ցախավելն էլ պոչին կապեցին։||Մուկը ծակը չէր մտնում, այնինչ ցախավելն էլ պոչին կապեցին։

ժը. Միևնույն մտքի արտահայտումը համադասությամբ և ստորադասությամբ կամ զուգադասությամբ և ենթադասությամբ։ Օրինակներ.

Տվեք ինձ հենման կետ, և ես շուռ կտամ երկիրը։||Եթե ինձ տաք հենման կետ, ես շուռ կտամ երկիրը։

Տեսան տանը չի կարողանում ծառայի, խանութ տարան Գիքորին։||Տեսան տանը չի կարողանում ծառայել, խանութ տարան Գիքորին։||Տեսան, որ տանը չի կարողանում ծառայել, խանութ տարան Գիքորին։

ժթ. Միևնույն մտքի արտահայտումը պարզ կամ միավորյալ և բարդ նախադասություններով, օրինակ,

Գարունը եկավ։ Հավքերը եկան։
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան։
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շրջում է մոլոր։
Շրջում է մոլոր, խնդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս։
(Մեր վերաշարադրածը.—Պ. Պ.)

«Գարունը եկավ, հավքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան։
Մի աղջիկ եկավ, մի մենակ քաղվոր,
Գետի եզերքին շրջում է մոլոր.
Շրջում է մոլոր, խնդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս։
(Հ. Թումանյան)

Ինչպես փոխատեղումը, այնպես էլ փոխակերպումը, գաղափարներ ու իմաստներ, ինչպես և մտքեր արտահայտելու զուգահեռ ձևեր են, լեզվամտածական զուգահեռ կաղապարներ, որոնցով կազմվում է ոչ միայն խոսքի հենքը, այլև հյուսվածքը։ Դրանք արտահայտչամիջոցներ են և ամենատարբեր դերեր են կատարում խոսքի համար, հավասարապես ծառայելով ինչպես խոսքի հակիրճությանը, այնպես էլ ծավալունությանը, ինչպես խոսքի պարզությանը, այնպես էլ անպարզությանը, ինչպես ոճի բարձրությանը, այնպես էլ ցածրությանը և այլն։

Քերականական ձևեր

Ճարտասանության պատմության մեջ քերականական ձևերի մասին առաջին անգամ խոսել է Կվինտիլիանոսը։ Հայ լեզվաբանության մեջ միակ հեղինակը Արսեն Բագրատունին է, որ իր «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» (1852 թ., Վենետիկ) աշխատության մեջ երրորդ գլուխը (411—614 էջեր) նվիրել է քերականական ձևերին՝ խոսելով զեղչման, ավելադրության, բակառության, փոխառության *(այսինքն՝* փոխանվան*) և* արտուղության *(այսինքն՝* միջարկման*) մասին, միջոցներ, որոնց դիմելիս, հեղինակի արտահայտությամբ՝ «ոճը» դառնում է «ձևավոր և գերազանց»։* Զեղչումը, ավելադրությունը, բակառությունը *և* փոխառությունը *(այսինքն՝* փոխանունը*) ուսումնասիրվում են քերականության մեջ, սակայն ոչ իբրև ճարտասանական ձևեր, իսկ* «արտուղությունը» միջարկում *ճարտասանական ձևն է, որ սույն ձեռնարկում տրված է* «փոխակերպություններ և ձևեր» *բաժնում։ Այստեղ մենք կխոսենք քերականական մի երկու առավել կարևոր ձևերի մասին*[37]*։*

Ձևերը *(ֆիգուրա) ընդհանրապես լեզվական նյութը որոշակի նպատակով գործածելու հետևանքով առաջ եկած կառույցներ են։ Ձևերը լինում են ճարտասանական (ոճական) և քերականական։ Ճարտասանական ձևերը խոսքի գեղագիտության կարևոր գիտակարգերից են. դրանք արհեստական միջոցներ են խոսքին արտահայտչականություն և հուզականություն տալու, ունկնդրի մեջ զգայական այլևայլ մտապատկերներ արթնացնելու, կամ ընդհակառակն՝ զանազան հույզեր ու կրքեր մարելու, այս կամ այն ապրումն ու հույզը ուժեղացնելու համար (տե՛ս հաջորդ բաժինը)։ Քերականական ձևերը ևս արհեստական լեզվական կառույցներ են, սակայն զուրկ ճարտասանական ձևերին հատուկ լիցքավորումներից և ծառայում են խոսքի պարզության, պեսպիսության (բազմազանության), համառոտության և նման այլ նպատակների։ Քերականական ձևերը ձևավորվում են կամ հավելման, կամ զեղչման և կամ զանազան դրափոխությունների միջոցով։*

---

[37] Քերականական ձևերի մասին տե՛ս մեր «Հայոց լեզու, ուսումնական ձեռնարկ» աշխատությունը, Երևան, 1976, էջ 345—352։

Քերականական կրկնություն

Քերականական կրկնություն է առաջանում երկու եղանակով.

ա. Երբ նախադասության լրացում առնող որևէ անդամ կրկնվում է, սակայն կրկնվում է առնվազն մեկ (իսկ երբեմն շատ) լրացումով հանդերձ, որով և նախադասության այս անդամի իմաստն ավելի է հիմնավորվում, պարզաբանվում։ Օրինակ.

Ծանր, շատ ծանր էին խեղճ կնոջ քաշած օրերն արբեցող ամուսնու ձեռքին։ *(Նար-Դոս)*

...Պատահե՞լ էր մի օր, գեթ մի հատիկ օր, *որ բանի ժամանակ ձեռաց չվազեր մոտակա «պադվալը» բերանը մի քիչ թացացնելու... (Նար-Դոս)*

...Զգում էր ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ, *որից լեզուն ցամաքել էր բերանում։ (Նար-Դոս)*

Ջեմ հարգում շանն էլ, որին չար տերը
Անտեղի տեղը որքան ծեծում է,
Այնքան նա լիզում է տիրոջ ոտերը՝
Իրեն տրորող, ջարդող ոտերը,
Եվ կծելու տեղ լոկ կաղկանձում է։ (Պ. Սևակ)

բ. Քերականական կրկնության մի տեսակն էլ ունենում է այնպիսի կառուցվածք, երբ կրկնվող անդամը ստանում է երկրորդական նախադասությամբ արտահայտված լրացում։ Օրինակ,

Դա մի ուրիշ դրախտ էր, դրախտ, որ մարդն է ըստեղծում իր համար իր աշխատություններով և իր արդար վաստակով։ *(Բաֆֆի)*

Քերականական ավելադրություն

Քերականական ավելադրությունը քերականական որևէ միջոցի ավելադրաբար գործածությունն է, այնպիսի գործածությունը, որը որևէ իմաստաբանական կամ քերականական նորություն չի բերում իր հետ։ Քերականական ավելադրությունը մի շարք արտահայտություններ ունի։ Նշենք կարևորները։

ա. Քերականական ավելադրություն է միևնույն քերականական իմաստն ունեցող երկու մասնիկների միատեղ հանդես գալը։ Օրինակ, Բաֆֆին սիրում էր մարդ *բառի հոգնակին կազմել* մարդիկներ (իկ+ներ) *ձևով, ձի բառի հոգնակին՝* ձիաներ (ան+ +եր) *ժողովրդական ձևերով։*

— Տեսա, ինչպե՞ս չտեսա,— և նա սկսեց նկարագրել տեսած մարդիկներին: (Ռաֆֆի)

Քաղաքացիք նստած էին ձիաների կամ ջորիների վրա, իսկ գյուղացիք գնում էին ոտով: (Ռաֆֆի)

բ. Քերականական ավելադրություն է լինում այն ժամանակ, երբ տվյալ դեպքում համապատասխան մասնիկը չի պահանջվում, սակայն դրվում է նմանությամբ: Օրինակ.

— Այդ մարդիկը չեն վերադարձել: (Ռաֆֆի)

Այստեղ ավելորդ է ը հոդը: Այսպիսի ավելադրությամբ ժողովուրդը գործածում է շոսը, հինգը, վեցը, ութը (ութը տարի սպասել եմ և այլն):

գ. Քերականական ավելադրություն է օժանդակ բայի կրկնությունը միևնույն ենթակային վերագրվող բայ-ստորոգյալների կազմում, երբ անհրաժեշտաբար մեկը բավական է ստորոգման գործառության համար: Օրինակ.

Նրա վառվռուն աչքերը հառած էին դեպի այն մանր, հրեղեն բծերը, որ նշմարվում էին հեռվից, երբեմն հանգչում էին, երբեմն դարձյալ հայտնվում էին: (Ռաֆֆի)

դ. Քերականական ավելադրության սովորական ձև է, երբ ես և դու դերանունների եզակի սեռականը դրվում է ստացական u և դ հոդ ունեցող գոյականի հետ (ինչպես՝ իմ քույրս, քո ընկերդ): Այն դեպքում, երբ ստացական u հոդով հատկացյալը փոխանուն գոյականով արտահայտված կոչական է, հավելադրությունը վերածվում է քնքշանք, սիրալիրություն արտահայտելու միջոցի, ինչպես այդ տեսնում ենք հետևյալ օրինակներում.

Քաղքենուհին անգամ պակաս մեղավոր է,
Քան դու՝
Իմ անմեղս,
Իմ արդարս: (Պ. Սևակ)
Քոնն եմ իմ անցյալով,
Իմ ներկայով,
Երազներով բոլոր,
Ապագայով.
Քոնն եմ ամբողջովին,
Իմ սիրելիս: (Պ. Սևակ)

ե. Քերականական ավելադրության մի արտահայտությունն

էլ թարմատարն է։ Լինում են թարմատար բառեր, և բառեր, որոնք գործածվում են իբրև թարմատար։ Թարմատար բառեր են, օրինակ, որ, էլ, թե, բա, որոնք գործածվում են միշտ այլ բառերի հետ՝ առանց որևէ նոր իմաստ տալու նրան կամ արտահայտությանը։ Այսպես, ունենք ով հարաբերական դերանունը, որի հետ կարող են դրվել ավելադրարար որ և էլ բառերը՝ ով որ, ով էլ, ով էլ որ, նույն ձևով՝ ինչ որ, ինչ էլ, ինչ էլ որ, երբ որ, երբ էլ, երբ էլ որ, որտեղ, որտեղ էլ, որտեղ էլ որ, ուր որ, ուր էլ, ուր էլ որ, որքան որ, որքան էլ, որքան էլ որ, ինչքան որ, ինչքան էլ, ինչքան էլ որ, իբրև թե, ոնց որ թե, կարծես թե, ասես թե և այլն, որտեղ որ, էլ, թե բառերը թարմատարներ են։ Նույնն է ասել՝ Ով—Ով խաղա, նա կկաղա։ (Ասաց.)

Ով որ—Ով որ ուզում է, թող մոտ գա։
Ով էլ որ—Ով էլ որ լինես, բարով ես եկել։

(Հ. Թումանյան)

Չես գնո՞ւմ և բա չես գնո՞ւմ։

Իմաստային նորություն չբերելով հանդերձ թարմատար բառերը իմաստի որոշ խստացում են արտահայտում և խոսք են բերում ժողովրդականության երանգ։

Ոչ թարմատար բառերը ևս խոսքի մեջ կարող են գործածվել իբրև թարմատար։ Այս դեպքում թարմատարը վերածվում է խոսքի թեքության։ Բառերն իբրև թարմատար գործածվելու երևույթի մասին տե՛ս «Խոսքի թեքությունները» վերնագրի տակ (սույն աշխատության երկրորդ գրքում)։

Քերականական ծավալում

Քերականական ծավալում է առաջանում, երբ միավորյալությունը վերածվում է առանձին մտքերի։ Այս քերականական ձևին հաճախ է դիմում Համո Սահյանը, որի ստեղծագործություններից բերում ենք մի երկու օրինակ.

...Հովերը եկան, հովերը տարան,
Հողմերին տարան
Իմ երազների ծվեները տաք...

Քերականական ձևը վերացնելու դեպքում խոսքը կունենար հետևյալ տեսքը՝

Հովերը եկան հողմերին տարան
Իմ երազների ծվեները տաք։

Նույն ձևով՝

...Անձրևը եկավ, անձրևը տարավ,
Ծովերին տարավ
Իմ ծիծաղների ծփանքները տաք։

Ամեն մի զրույցը անգին մի խրատ է,
Պատգամ է բազմափորձ մարդու,
Պատմելում մի հատ է, խոսելում մի հատ է
Խոսքերը խելոք են, հատու։

Քերականական շրջասություն

Քերականական շրջասությունն արդյունք է որևէ գաղափարի անվանման փոխարեն նույն գաղափարը նշանակող բառերի կապակցության գործածության, որը առանձնաբար, ի տարբերություն ճարտասանական շրջասության, որևէ երանգ չի տալիս խոսքին։ Օրինակ.

Վրեժի, ցասման հրով բորբոքված
Նրանք բեմ ելան
Եվ բեմը դարձավ արյունով ներկված
Զոհերի սեղան։ *(Հ. Հակոբյան)*

Այստեղ զոհասեղան *գաղափարն անվանված է բաղադրության իմաստն արտահայտող* զոհերի սեղան *բառերի կապակցությամբ, այսինքն՝ բառային միջոցին փոխարինել է շարահյուսական միջոցը։ Նույն բանն է տեղի ունենում, երբ մեկ գաղափար նշանակող բացահայտյալը բացատրվում է բառակապակցությամբ արտահայտվող բացահայտիչով կամ բառով արտահայտված բացահայտիչն ունենում է կապակցությամբ արտահայտված բացահայտյալ։ Օրինակ.*

Օրեցօր գեղեցկանում է Երևանը՝ Հայաստանի տասներկուերորդ մայրաքաղաքը։

Բացահայտյալն ու բացահայտիչն այս կապակցության մեջ տրամաբանորեն հավասար առնված հասկացություններ են, և բացահայտիչը, առանց լրացում դառնալու, Երևանը *գաղափարի կրկնությունն է՝ արտահայտված բառերի կապակցությամբ։ Նույն ձևով բացահայտյալը կարող է դառնալ քերականական շրջասություն, եթե նրա բացահայտիչը արտահայտված է նույն գաղափարն արտահայտող մեկ բառով, օրինակ.*

Օրեցօր գեղեցկանում է Հայաստանի տասներկուերորդ մայրաքաղաքը՝ Երևանը։

Այստեղ քերականական շրջասություն է բացահայտյալը, որովհետև երևան բացահայտչի իմաստն արտահայտել է երեք բառերի կապակցությամբ։

Քերականական զեղչում

Նախադասության անդամների զեղչումը սովորական երևույթ է և ուսումնասիրվում է քերականության (լեզվի տեսության) մեջ։ Քերականական սովորական զեղչումները ձևեր, այսինքն՝ հատուկ շարահյուսական կառույցներ չեն առաջացնում։ Քերականական զեղչում ենք կոչում յն զեղչումները, որոնց առաջ են բերում ձևեր։ Այս ձևերը ևս ոճական լիցքավորումներ չեն ունենում, սակայն աչքի են ընկնում իրենց անսովորությամբ։

Քերականական զեղչում ունեն հետևյալ արտահայտությունները.

ա. Հարակատար դերբայը, երբ բացառական կամ գործիական հոլովով խնդիր լրացում է ունենում, գոյականի որոշիչ լրացում դառնալիս կարող է զեղչվել. այս դեպքում նրա խնդիր լրացումը գալիս բռնում է դերբայի շարահյուսական դիրքը և առաջ բերում անսովոր կապակցություն։ Օրինակ, երբ բրդից գործած գուլպա կապակցությունը դերբայի զեղչումով դարձնում ենք բրդից գուլպա, ապա առաջ է գալիս քերականական զեղչում։ Նույն ձևով՝ կաշվից ձեռնոց, սատենից վզկապ, փայտից մահճակալ, մսով կարկանդակ, ձավարով փլավ, հավով հարիսա և այլն քերականական զեղչումներ են։ Ունենք՝ փայտից մաշա, բրդից փաշա ժող. ասացվածքը։

բ. Հարակատար դերբայը զեղչվում է նաև այն դեպքում, երբ միասնաբար ունենում է ուղիղ խնդիր և տեղի պարագա լրացումներ և կամ կողմնակի ենթակա և սրա հետ՝ տեղի պարագա լրացում։ Այսպես, օրինակ.

Գիշերը
Նադիր շահը
Նստել էր թախտին
Թագը՝ գլխին։ (Ա. Խաչակյան)

Այստեղ զեղչված է դրած դերբայը (թագը գլխին դրած նըստել էր)։ Նույն ձևով՝ խոնարհ ու հեզ
Մի հոգնած եզ
Արոտն ուսին,

Ճաներ պոզին
Մի իրիկուն
Գալիս էր տուն։ (Աթ. Խնկոյան)

Կապարեր թիկունքին, աղեղը ուսին, երկար նիզակը ձեռին, *նստած յուր սիրուն Կարմիրի վրա, գնում էր Սամվելը... (Ռաֆֆի)*

գ. Անգամ *բառի քերականական զեղչման հետևանքով բացարձակ թվական անունն է կապվում բայի հետ՝ դառնալով պարագա լրացում։ Օրինակ՝* հազար ասա, էլի իրենն է անելու։

դ. Քերականական զեղչման են ենթարկվում նաև բացառական հոլովով լրացում ունեցող ոչ որոշակի չափ ու քանակի գաղափար արտահայտող որոշ բառեր՝ ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոնում լինելիս. օրինակ՝ Այդ մեքենաներից մեր քաղաքում էլ կա *(զեղչված է՝ մեքենաներից մի քանի հատ, մի քանիսը, մի երկուսը և այլն)։*

Այդ մատիտներից ես էլ եմ գնել (մատիտներից մի երկու հատ, 5 հատ *և այլն)։*

ե. Բարդ համադասական նախադասությունների կազմում սովորության թելադրանքով զեղչվում է մի բան, այդ մի բան է *նախադասությունը, որի տեղը գրավում է սրան լրացնող երկրորդական նախադասությունը։ Օրինակ,*

Հայկը երբեք ժողովում ելույթ չէր ունենում, բայց այս անգամ առաջինը ձայն խնդրեց, որը բոլորիս զարմացրեց։

***

Վերը շարադրվածից դժվար չէ եզրակացնել, որ մեր լեզուն իր մեջ ունի արտահայտման բազմաղան միջոցների ու ձևերի վիթխարի հնարավորություններ։ Այդ հնարավորությունները ոչ միայն հնչյունային համակարգում են, բառապաշարում և բառակապակցություններում, այլև մեր լեզվի քերականական հարուստ համակարգում։ Դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ արտահայտման հոմանիշ միջոցներ, որոնք երկակի բեռնավորվածությամբ ու լիցքավորումներով են հանդես գալիս՝ իմաստային ու ոճաբանական։ Ոչ միայն բա՛ոը բառի հետ ունի իմաստային և ոճական առնչություն, այլև քերականական յուրաքանչյուր կարգ ունի այդ երկկողմ լիցքավորումը, որը մեզ մտածե-

լու, խոսելու և գրելու ընթացքում հնարավորություն է ընձեռում կատարել ընտրություն։ Ուրեմն լեզուն ունի ոչ միայն հականիշ բառեր, որոնց ընտրությունը խոսքը ոճավորում է այս կամ այն կերպ, այլև հոմանիշ քերականական ձևեր, հոմանիշ քերականական միջոցներ, որոնք խոսքի (հետևաբար և լեզվի) հարստության հորդահոս ու անսպառելի աղբյուր են։ Ահա այս առումով էլ հոմանշությունը, որ ոճագիտության առանցքային հասկացություն է, մենք ըմբռնում ենք ավելի լայն նշանակությամբ, մանավանդ որ այն չի սահմանափակվում նաև բառերի ու քերականական ձևերի ու կառույցների ոլորտում։ Հոմանիշ միջոց են նաև այսպես կոչված ոճական հնարանքները, այսինքն՝ զուգացումը, բառերի, արտահայտությունների ու նախադասությունների փոխակերպություններն ու ձևերը, որոնք լեզվի արտահայտման հնարավորությունները կարող են մեծացնել բազմապատիկ անգամ, և որոնց քննությունն էլ կազմում է սույն աշխատության հաջորդ գրքի մի մասի նյութը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Խոսքի տեսության ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները 3

Խոսքի տեսության և լեզվաբանական ու հարակից ոչ լեզվաբանական գիտությունների ու արվեստների սահմանությունները 5

Խոսքի ուսումնասիրության պատմության համառոտ ակնարկ 18

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԽՈՍՔՆ ԻԲՐԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ. ՆՐԱ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ. ԽՈՍՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 48

1. Լեզու և խոսք 48

2. Լեզվագործածություն. Նորմա. Նորմավորում 62

3. Խոսքի տրամաբանական և հոգեբանական հիմունքները 71

4. Արտահայտություն և բովանդակություն 81

5. Խոսքի դրսևորումները 84

6. Բանահյուսվածք 113

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԽՈՍՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 114

Հնչյունային համակարգը և հնչերանգը խոսքում 115

Բարեհնչունություն 116

Նվագայնություն և ներդաշնակություն 126

Հնչերանգ և ելևէջում 131

Բառապաշարը խոսքում 142

Բառապաշարի ոճաբանական շերտավորումը 149

I. Տարածամանակյա հայեցակետից 149

1. Գործածական բառեր 149

2. Անգործածական բառեր 160

Հնաբանություններ 160

Բառային նորաբանություններ 160

Դիպվածական բառեր 161

Օտարամածություններ 161

Հեղինակային նորաբառեր 162

II. Համաժամանակյա հայեցակետից 163

1. Ըստ գործածության ոլորտների 164

2. Ըստ գործառության ոլորտների 172
3. Ըստ հարազատության 178
4. Ըստ գործածության հաճախականության 179
5. Ըստ իմաստների քանակի 181
6. Ըստ իմաստային առնչությունների 182
7. Ըստ խոսողի կամ գրողի արտահայտած վերաբերմունքի 198
8. Ըստ կազմության առանձնահատկությունների 202
Բառերի ընտրությունը խոսքում. բառագործածություն 205
Բառակապակցություններ 211
1. Կրկնավորներ 212
2. Հարադրավորներ 213
3. Բաղադրավորներ 215
4. Դարձվածներ 217
Քերականական հատակարգ 221
1. Հնաբանական կարգերը խոսքում 221
Գոյական անունը խոսքում 223
Հոլովման թվի կարգը 229
Ուղղակցման կարգը 230
Հոլովը և հոլովումը 233
Ածական անունը խոսքում 244
Թվական անունը խոսքում 250
Բայը խոսքում 251
Դերբայական ձևերը խոսքում 255
Անորոշ դերբայը խոսքում 255
Անկատար (համակատար) դերբայը խոսքում 258
Ապառնի (ապակատար) դերբայը խոսքում 259
Հարակատար դերբայը խոսքում 259
Ենթակայական դերբայը խոսքում 260
Դիմավոր ձևերը խոսքում 261
Եղանակաժամանակային կիրառություններ 261
Սահմանական եղանակի ներկա ժամանակ 263
Անցյալի անկատար 267
Ապառնի 269
Անցյալի ապառնի 270
Վաղակատար 271
Անցյալի վաղակատար 274
Հարակատար 274
Անցյալի հարակատար 276
Անցյալ կատարյալ 276
Ըղձական եղանակ 279
Ըղձականի ապառնի 279
Ըղձականի անցյալ 283
Պայմանական եղանակ 285
Պայմանականի ապառնի 286

Պայմանականի անցյալ 288
Հարկադրական եղանակ 289
Հարկադրականի ապառնի 290
Հարկադրականի անցյալ 291
Հրամայական եղանակ 291
Եղանակաձևերի համաձայնությունը 294
Դեմք և թիվ 298
Ժխտումը բայի դիմավոր ձևերում 303
Մակբայը խոսքում 307
Դերանունը խոսքում 311
Կապը խոսքում 317
Շաղկապը խոսքում 321
Եղանակավորող բառերը կամ վերաբերականները խոսքում 326
Զայնարկությունները և կամային բառերը խոսքում 330
Բնաձայնությունները խոսքում 333
Շարահյուսական կարգերը խոսքում 334
Բառերի կապակցությունները 335
Պարզ նախադասություն 347
Երկկազմ և միակազմ նախադասություններ 349
Միակազմ նախադասություններ 351
Անենթակա նախադասություն 351
Անդեմ նախադասություն 352
Բառ նախադասություն 358
Երկկազմ նախադասություններ 359
Համառոտ և ընդարձակ նախադասություններ 359
Նախադասություններն ըստ եղանակավորության 360
Պատմողական նախադասություն 360
Հարցական նախադասություն 361
Բացականչական նախադասություն 362
Հրամայական նախադասություն 363
Հաստատական և ժխտական նախադասություններ 363
Միավորյալ նախադասություն 366
Բարդ նախադասություն 368
Շարահյուսական հատուկ կառույցներ 371
1. Գրական լեզվին հատուկ շարահյուսական կառույցներ 371
2. Ժողովրդական հայերենին հատուկ շարահյուսական կառույցներ 374
ա. Զուգադասություն 374
բ. Շարահյուսական սերտաճում 376
3. Հատկաբանություն 377
Շարադասությունը խոսքում 382
Կապակցության եղանակներ և տեսակներ 392
Համադասություն և ստորադասություն 396
Ներականական արտահայտչամիջոցներ 401

Քերականական փոխակերպություններ 403
Փոխանցում 403
Փոխատեղում 404
Փոխակերպում 406
Քերականական ձևեր 412
Քերականական կրկնություն 413
Քերականական ավելադրություն 413
Քերականական ծավալում 415
Քերականական շրջասություն 416
Քերականական զեղչում 417

ՊՈՂՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ ՄԻՔԱՅԵԼԻ

ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

(խոսքի տեսություն)

Գիրք առաջին

Հրատարակության է երկայացրել համալսարանի
հայոց լեզվի ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Ս. Արզումանյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխնիկական խմբագիր՝ Գ. Վ. Նալբանդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարյան

ԻԲ 915

Հանձնված է շարվածքի 04. 01. 1990 թ.: Ստորագրված է տպագրության 07. 06. 1990 թ.: Չափը՝ 84×108 1/32: Թուղթ № 1: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական 20,8 մամուլ: Տպագրական 13,25 մամուլ=22,26 պայմանական մամուլի: Տպաքանակ 1000: Պատվեր 64: Գինը՝ 1 ռ. 60 կ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна, № 1.

Երևանի համալսարանի տպարան, Աբովյան փ. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна, № 52.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
24	1 Ն.	լեզվական	միանման լեզվական
27	13 Ն.	զբաղմունքը	զգացմունքը
32	2 Ն.	դասի	դարի
46	12, 14 Ն.	Ադոնց	Ագոնց
46	14 Ն.	Հոլոր	Հոլով
59	7 Ն.	լեզուն, մտածողությունն	լեզուն, մտածությունն
63	2 Ն.	Востник	Вестник
74	12 վ.	առնչվում է	առնվում է
80	18 Ն.	հոգեկանական	հոգեբանական
81	16 վ.	իսկ	/ իսկ
102	3 Ն.	անձնը տաք, դեմ	անձրևը տաք,
108	17 Ն.	կտրոնների	կտորների
145	13 Ն.	— кнуть	— кинуть
151	13 Ն.	ապագացուցիչ	արագացուցիչ
162	10 Ն.	հեղինակային կարող են	հեղինակային նորաբառերը տարածվելու, համագործածական դառնալու տվյալներ ունեն, սակայն կարող են
166	1 վ.	բրոնիկա	բիոնիկա
190	15 Ն.	քնել	քննել
192	2 Ն.	կոչվի	կկոչվի
213	11 Ն.	մոզած-ճոզած, ուռած-փքված	տխուր-տրտում, չոր ու ցամաք
336	15 Ն.	բարեկամությամբ	բարկությամբ
346	4 վ.	արգի	արդի
349	16 Ն.	պատմական	պատմողական
354	9 Ն.	ներքնապետ	ներքինապետ
357	9 Ն.	212—213 էջերում	256 էջում
367	8 Ն.	շարվածքին	սարվածքին
370	16 վ.	գրավոր	գիտական
378	20 վ.	400	40
383	15 Ն.	ֆակտորյալ	ֆակտորիալ
386	14 Ն.	ձորերը	շառերը
393	17 վ.	կոցավ	կորավ
395	13 Ն.	Մի խնդում է, մի լալիս,	Մի օր ցուրտ է, մի օր տաք,
	12 Ն.	Մի օր ցուրտ է, մի օր տաք,	Մին խնդում է, մին լալիս,
414	9 վ.	ին զեղչումները, որոնց	այն զեղչումները, որոնք